

ԱԿՄԵԼ ՊՈՏՈԽԱՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԵՍՏԵՍՎԱԿԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱԿՄԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(բուհական դասագիրք «Աշխարհագրություն»
մասնագիտությամբ սովորողների համար)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2022

ՀՏ 911(075.8)

ԳՄ 26.8g73

Պ 876

Հրատարակության է երաշխավորել
ԵՊՀ գիտական խորհուրդը:

Մասնագիտական խմբագիր՝

աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Արամ Ավագյան

Գրախոսներ՝

աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Կարինե Դանիելյան
աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ Վոլոյյա Մանայան

Պոտոսյան Ա. Հ.

Պ 876 Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական
աշխարհագրություն/Պոտոսյան Ա. Հ.: -Եր., ԵՊՀ հրատ., 2022,
546 էջ:

Հասագրքում, ըստ բուհական ուսումնական ծրագրի, փաստական և
վիճակագրական նորագույն տվյալների հիման վրա տրված է ՀՀ տարածքի,
սահմանների, աշխարհագրական դիրքի, բնառեսուրսային ու ժողովրդա-
գրական ներուժի, տարաքնակեցման համակարգի, տնտեսության ճյուղային
ու տարածքային կառուցվածքի, ինչպես նաև արտաքին տնտեսական կա-
պերի սոցիալ-տնտեսաշխարհագրական նկարագիրը:

Հասագիրը նախատեսված է «աշխարհագրություն» մասնագիտու-
թյամբ սովորող ուսանողների համար: Այն կարող է օգտակար լինել նաև
«տնտեսագիտություն», «սերվիս», «քարտեզագրություն» և կադաստրային
գործ», «երկրաբանություն», «ժողովրդագրություն», «պատմություն» և այլ
մասնագիտությունների ուսանողներին, մագիստրանտներին, ասիլիանտ-
ներին, ինչպես նաև ՀՀ տնտեսության զարգացման ու տարածքային կազմա-
կերպման խնդիրներով գրաղվող մասնագետներին ու կառավարման համա-
կարգի աշխատողներին համար:

ՀՏ 911(075.8)

ԳՄ 26.8g73

ISBN 978-5-8084-2546-0

© ԵՊՀ հրատ., 2022

© Պոտոսյան Ա. Հ., 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	6
ԳԼՈՒԽ 1	
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ	
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ	10
1.1. Տարածքը, սահմանները և աշխարհագրական դիրքը	10
1.2. Պետական կարգը, վարչատարածքային բաժանումը և տարածքային կառավարումը	17
ԳԼՈՒԽ 2	
ՀՀ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲՆԱՒԹԱԳԻՐԸ ԵՎ	
ԲՆԱՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ	23
2.1. Մակերևույթի բնույթը և տարածքի ռեսուրսային զնահատականը.....	23
2.2. Կլիմայական պայմանները և ռեսուրսները	33
2.3. Ընդերքի ռեսուրսները	42
2.4. Հողային ռեսուրսները	51
2.5. Ջրային ռեսուրսները	58
2.6. Կենսաբանական ռեսուրսները.....	66
2.7. Ուկրեացիոն-զբոսաշրջային ռեսուրսները.....	75
2.8. Բնօգտագործումը և շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրը.....	82
ԳԼՈՒԽ 3	
ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ	
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ	110
3.1. ՀՀ տարածքի բնակեցման պատմաաշխարհագրական ակնարկ.....	110
3.2. ՀՀ տարածքի բնակեցման գործոնները, տարաբնակեցման ձևավորումը	119
3.3. Բնակչության թվի շարժընթացը, վերաբռտադրությունը	125

3.4. Բնակչության մեխանիկական շարժը	135
3.5. Բնակչության կազմը, կառուցվածքը և աշխատանքային ռեսուրսները.....	141
3.6. Բնակչության տեղաբաշխման առանձնահատկությունները.....	154
3.7. Տարաբնակեցումը	165
3.7.1. Քաղաքային տարաբնակեցումը.....	168
3.7.2. Գյուղական տարածքները և տարաբնակեցումը	181
ԳԼՈՒԽ 4	
ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ.....	198
4.1. Տնտեսության ձևավորման և զարգացման պատմաաշխարհագրական ակնարկ	198
4.2. ՀՀ ժամանակակից տնտեսության ընդհանուր բնութագիրը.....	206
4.3. Արդյունաբերության ընդհանուր բնութագիրը	211
4.4. Վառելիքակներգետիկ տնտեսությունը	216
4.5. Մետաղաձուլությունը	230
4.6. Մեքենաշինությունը	236
4.7. Քիմիական արդյունաբերությունը	241
4.8. Շինանյութերի արդյունաբերությունը	246
4.9. Թեթև արդյունաբերությունը	252
4.10. Սննդի արդյունաբերությունը.....	257
4.11. Արդյունաբերության նորագույն ձյուղեր.....	266
4.12. Գյուղատնտեսությունը	270
4.13. Տրանսպորտը	308
4.14. Տնտեսության ոչ արտադրական ոլորտը	327
4.15. Զբոսաշրջային ինդուստրիան	349

ԳԼՈՒԽ 5

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ	359
5.1. ՀՀ սոցիալ-տնտեսական շրջանացումը	359
5.2. Արագածոտնի մարզը	369
5.3. Արարատի մարզը	383
5.4. Արմավիրի մարզը	396
5.5. Շիրակի մարզը	409
5.6. Լոռու մարզը	424
5.7. Կոտայքի մարզը	438
5.8. Գեղարքունիքի մարզը	453
5.9. Սյունիքի մարզը	468
5.10. Վայոց ձորի մարզը	485
5.11. Տավուշի մարզը	496
5.12. Մայրաքաղաք Երևանը	508

ԳԼՈՒԽ 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻԶԱՋԳԱՅԻՆ ԱՇԽԱՌԱԳՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	529
Օգտագործված գրականություն և սկզբնադրյուրներ	541

ԱՌԱՋԱԲԱՆ

«Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն» բուհական դասընթացը «Աշխարհագրություն» մասնագիտության հիմնարար և առանցքային առարկաներից է: Այն ուսանողներին զինում է մեր երկրի տարածքի, սահմանների, աշխարհագրական դիրքի, վարչատարածքային կառուցվածքի և տարածքային կառավարման, բնառեսուրսային և ժողովրդագրական ներուժի, բնակչության ու բնակավայրերի (տարաբնակեցման համակարգի), տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքի, ինչպես նաև արտաքին տնտեսական կապերի վերաբերյալ սոցիալ-տնտեսաաշխարհագրական հիմնական գիտելիքներով: Դրանց լիարժեք տիրապետումը հնարավորություն կտա ճշգրտորեն գնահատելու ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման արկա իրավիճակը, հնարավորություններն ու հեռանկարները, որոշելու ՀՀ տեղն ու դերը տարածաշրջանային և համաշխարհային զարգացման գործընթացներում, ինչպես նաև լիարժեք պատկերացում ունենալու ինչպես ՀՀ ամբողջ տնտեսության, այնպես էլ նրա առանձին բաղադրիչների՝ արտադրական և ոչ արտադրական ոլորտների, բնակչության ու բնակավայրերի տարածքային համակարգերի վերաբերյալ: Զեռք բերված գիտելիքների միջոցով հնարավոր կլինի վեր հանել ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման արդի միտումները և բացահայտել հեռանկարային զարգացման ուղիները: Այդ իմաստով սույն առարկան ունի նաև կիրառական կարևոր նշանակություն, քանի որ այն հնարավորություն կտա տիրապետելու ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման այնպիսի հարցերի, ինչպիսիք են բնառեսուրսային և ժողովրդագրական ներուժի օգտագործման, բնապահպանական, տարաբնակեցման համակարգի և տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման ու տարածքային կազմակերպման

հիմնախնդիրները: Դասընթացի միջոցով վեր կհանվեն նաև ՀՀ մարզերի սոցիալ-տնտեսաաշխարհագրական առանձնահատկությունները, դրանց տեղն ու դերը ՀՀ միասնական տնտեսական համալիրում, ինչպես նաև առկա տարաբնույթ հիմնախնդիրները:

Անկախության անցած երեք տասնամյակի ընթացքում ՀՀ-ում տեղի են ունեցել հասարակական-քաղաքական, ժողովրդագրական, սոցիալ-տնտեսական և այլ կարգի նշանակալից փոփոխություններ, որոնք իրենց անմիջական և միջնորդավորված ազդեցությունն են թողել ՀՀ սոցիալ-տնտեսաաշխարհագրական նկարագրի վրա: Սույն դասագրքի գլխավոր խնդիրներից է նաև ցույց տալ այդ գործընթացների ազդեցությունը ՀՀ տնտեսության զարգացման և տարածքային կազմակերպման վրա՝ բացահայտելով ՀՀ սոցիալ-տնտեսաաշխարհագրական նկարագրի վրա այդ գործընթացների ազդեցությունն ու առկա հիմնախնդիրը:

Դասագրքի ստեղծման համար հիմք են ծառայել վերջին ավելի քան երկու տասնամյակի ընթացքում մեր կողմից կատարված գիտահետազոտական աշխատանքների նյութերը, վիճակագրական տարբեր տեղեկագրերի և ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակած և էլեկտրոնային նյութերի տվյալների հիման վրա կատարած մշակումների արդյունքները (դրանց սկզբնաղբյուրները՝ մարդահամարների տվյալներ, ՀՀ բնակչության և բնակավայրերի վերաբերյալ տարբեր վիճակագրական ժողովածուներ, ՀՀ վիճակագրական տարեզրբեր, շրջակա միջավայրի վերաբերյալ վիճակագրություն, ՀՀ տնտեսության տարբեր ոլորտների վերաբերյալ վիճակագրական սկզբնաղբյուրներ և այլ նյութեր, տրված են գրականության ցանկում), Հայաստանի սոցիալ-տնտեսաաշխարհագրական հարցերին նվիրված, նախկինում հրատարակված դասագրքերը, ուսումնական ձեռնարկները և այլ նյութեր: ՀՀ ժամանակակից սոցիալ-տնտեսաաշխարհագրական պատկերի վերլուծությունը իրականացվել է հնարավորինս թարմ

վիճակագրական տվյալների հիման վրա և համեմված է տարածաժամանակային համեմատական-աշխարհագրական վերլուծությամբ: Դասագրքի նյութն ավելի ընկալելի և խորությամբ յուրացնելու համար բոլոր բաժինները հագեցած են փաստական, առյուսակային, գծապատկերային և քարտեզագրական հարուստ նյութերով: Ուսանողների ինքնուրույն աշխատանքներն ավելի բովանդակալից դարձնելու համար դասագրքում՝ յուրաքանչյուր ենթագլիք հետո, մեծ կարևորություն է տրվել նաև հարցերին և առաջադրանքներին: Բացի այդ, քանի որ «ՀՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն» առարկան բովանդակային առումով անընդհատ զարգանում և փոփոխություններ է կրում, ուստի ժամանակին համընթաց գնալու համար խորհուրդ է տրվում լայնորեն օգտագործելու նաև ընթացիկ վիճակագրական նոր տվյալները, կատարելու համեմատություններ, վերլուծելու նոր իրողությունները ու կատարելու եզրահանգումներ: Այդ ամենը հնարավորություն կստեղծի ստեղծագործաբար յուրացնելու դասագրքի նյութը:

Հարկ է նաև նշել, որ 2020 թ. նոյեմբերի 9-ին Հայաստանի, Ռուսաստանի և Ադրբեյջանի միջև եռակողմ համաձայնագրի ստորագրումից հետո մեր երկիրը հայտնվել է աշխարհաքաղաքական նոր իրավիճակում, որը, անկասկած, իր ազդեցությունն է թողնելու առաջիկա տարիներին ՀՀ սոցիալ-տնտեսաաշխարհագրական նկարագրի և այլ գործընթացների զարգացման վրա: Ուստի պետք է հաշվի առնել նաև նշված իրողությունները և դրանց ազդեցությունը ՀՀ-ում սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացների վրա:

Դասագրքում օգտագործված 8-11-րդ, 14-րդ, 16-րդ, 18-րդ, 21-րդ քարտեզները մեր հեղինակությամբ են, 2-4-րդ, 15-րդ, 17-րդ, 22-23-րդ, 28-րդ, 32-րդ քարտեզները՝ Վ. Միսիթարյանի, 12-13-րդ, 19-20-րդ քարտեզները՝ Վ. Պոտոսյանի, իսկ 36-45-րդ

քարտեզները վերցված են «Հայաստանի ազգային ատլասից» (Ահատոր, Եր., 2007): Դասագրքում ներառված բոլոր նկարները վերցված են համացանցից, 7-րդը՝ ըստ Է. Աղջոյանի, 1-ինը՝ asbarez.com-ի: Օգտագործված բոլոր նկարները համացանցից են:

Դասագրքում կիրառվել են հետևյալ հապավումները.

1. ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
2. ԱՀ – Արցախի Հանրապետություն
3. ԱԱԲ – աշխատանքի աշխարհագրական բաժանում
4. ԱՄԱԲ – աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանում
5. ԱՀԱ – արդյունաբերության համախառն արտադրանք
6. ԳՀԱ – գյուղատնտեսության համախառն արտադրանք
7. ԳԱԱ – Գիտությունների ազգային ակադեմիա
8. ԳՏՀ – գիտատեխնիկական հեղափոխություն
9. ԳՏԱ – գիտատեխնիկական առաջընթաց
10. ԽՍՀՄ – Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
11. ԽԵԿ – խոշոր եղերավոր կենդանիներ
12. ՄԵԱ – մանր եղջերավոր անասուններ
13. ՄԱԿ – Միավորված ազգերի կազմակերպություն
14. ՀՆԱ – համախառն ներքին արտադրանք
15. ՀՏԿ – հասարակության տարածքային կազմակերպում
16. ՀԱԷԿ – Հայկական ատոմային էլեկտրակայան
17. ՉԵԿ – Չերմակեկտրակայան
18. ՉՐԵԿ – Չրակեկտրակայան
19. ՏԱԴ – տնտեսաաշխարհագրական դիրք
20. ԵԱՏՄ – Եվրասիական տնտեսական միություն

ԳԼՈՒԽ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1.1. Տարածքը, սահմանները և աշխարհագրական դիրքը

Տարածքը և սահմանները: Հայաստանի Հանրապետությունը գրաղեցնում է 29.743 կմ² տարածք: Տարածքի մեծությամբ ՀՀ-ն զիջում է հարևան չորս երկրներին: Մեր երկրի ժամանակակից տարածքը կազմում է պատմական Հայաստանի ընդամենը 1/9 մասը: Այն հավասար է Եվրասիա մայրցամաքի 0,076 և աշխարհի ցամաքային տարածքի 0,028 %-ին: ՀՀ-ն ընկած է հյուսիսային կիսագնդի միջին լայնությունների հարավային հատվածում (հս. լայնության $38^{\circ}50'$ և $41^{\circ}18'$ միջև) և արևելյան կիսագնդի առաջին և երկրորդ քառորդների սահմանում (արլ. երկայնության $43^{\circ}27'$ և $46^{\circ}37'$ միջև), երրորդ ժամային գոտում¹:

ՀՀ-ն ընկած է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան հատվածում և ընդգրկում է Արաքս գետի միջին հոսանքի ձախափնյա մասը՝ Փոքր Կովկասի կենտրոնական ու հարավարևելյան լեռնային շրջանները: ՀՀ տարածքի ձևն անկանոն է: Այն ունի հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք ուղղությանը 360 կմ ձգվածություն, կենտրոնական մասում՝ արևմուտքից արևելք ուղղությամբ՝ 200 կմ լայնություն: Դեպի հարավ-արևելք տարածքն աստիճանաբար նեղանում է և առաջացնում ելուստ, որի ամենանեղ մասում լայնությունն ուղիղ գծով չի հասնում 30 կմ-ի [28]: ՀՀ-ն ներկայիս պետական տարածքը և սահմանները ժառանգել են

¹ Քանի որ դեռևս 1930 թ. նախկին ԽՍՀՄ-ում մտցված էր դեկրետային ժամանակ, և ժամացույցի սլաքը գոտիական ժամանակի համեմատությամբ մեկ ժամ առաջ է տարված, ՀՀ-ում ժամանակի տարբերությունը Գրինվիչից ոչ թե երեք, այլ չորս ժամ է:

Խորհրդային Հայաստանից, որը կազմավորվել էր Առաջին հանրապետության տարածքի մի մասում: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ բոլշևիկյան Ռուսաստանի թելադրանքով գծեցին Աղբբեջանի, Վրաստանի և Հայկական ԽՍՀ-ի սահմանները: Հայաստանը չստացավ Սկրի պայմանագրով նախատեսված Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթները, որոնցով ելք էր ստանում դեպի Սև ծով: Մեր երկիրը մեծ կորուստ ունեցավ նաև 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրով, երբ առանց Հայաստանի մասնակցության Թուրքիային հանձնվեցին **Կարսի մարզը** և **Երևանի նահանգի Սուրմալուի գավառը**, որոնք մինչև 1918 թվականը գտնվում էին Ռուսաստանի տիրապետության տակ: ՀՀ այժմյան տարածքը ձևավորվել է ցարական Ռուսաստանի մեջ մտնող հետևյալ միավորներից՝ **Երևանի նահանգը**, առանց Նախիջևանի և Սուրմալուի գավառների, **Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի** և **Ղազախի գավառների** մեծ մասը, **Թիֆլիսի նահանգի Քորչալու գավառի** մեծ մասը և **Կարսի մարզի ծայրաքանելյան փոքրիկ հատվածը** (Ախուրյան գետի և ներկայիս պետական սահմանի միջև) [33]:

ՀՀ-ն դեպի ծով անմիջական ելք չունի: Նրա հեռավորությունը ուղղի գծով Սև ծովից 163 կմ է, Կասպից ծովից՝ 193 կմ, Միջերկրական ծովից՝ 750 կմ, Պարսից ծոցից՝ մոտ 1000 կմ: ՀՀ տարածքի երկրաշափական կենտրոնն ընկած է Երևանից արևելք՝ Գառնի գյուղի մոտ, ըստ որի էլ կատարվում է երկրի տարածքի տրոհումը հորիզոնի կողմերի նկատմամբ: ՀՀ սահմանների երկարությունը կազմում է մոտ 1431 կմ: Հյուսիսում սահմանակցում է Վրաստանին (211 կմ), արևելքում՝ **Աղբբեջանին** (893.6 կմ, որից 190.7-ը՝ Նախիջևանի հետ) և **Արցախի Հանրապետությանը** (380 կմ), արևմուտքում՝ **Թուրքիային** (289 կմ), հարավում՝ **Իրանին** (37 կմ) և հարավ-արևմուտքում՝ Նախիջևանին: Թուրքիայի հետ

սահմանն անցնում է Ախուրյան և Արաքս գետերով, Իրանի հետ՝ Արաքս գետով:

«Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ պետական սահմանագծից ՀՀ տարածքի խորքը, մինչև 5 կմ լայնությամբ ծավալվող տարածքը կոչվում է **սահմանային գոտի**, իսկ դրա՝ պետական սահմանին հարող մի մասը՝ մինչև 1 կմ լայնությամբ՝ **սահմանային շերտ**: ՀՀ սահմանային գոտին ձգվում է 9 մարզերի տարածքով (բացառությամբ Կոտայքի): Սահմանամերձ շերտը կազմում է 1431 կմ², իսկ սահմանային գոտին՝ 7155 կմ² կամ ՀՀ տարածքի 24 %-ը [27]:

Աշխարհագրական դիրքը: Մեզ նման աշխարհաքաղաքական իրավիճակում գտնվող երկրների համար առանձնահատուկ դեր ունեն տնտեսաաշխարհագրական և քաղաքաաշխարհագրական դիրքերը, որոնք յուրաքանչյուր երկրի տնտեսական և քաղաքական զարգացման վրա ազդող արտաքին կարևորագույն գործոններից են: Մեր երկրի համար լայն առումով **բացասական հանգամանք** է այն, որ երկիրը զրկված է ծովային արտաքին հաղորդակցության էժան ու կարևորագույն միջոցից և չի կարող օգտվել օվկիանոսի բարիքներից: Տնտեսաաշխարհագրական առումով **աննպաստ** է նաև այն, որ ՀՀ-ն համեմատաբար հեռու է ընկած զարգացած երկրներից և հզոր տնտեսական կենտրոններից: Այդ հանգամանքը որոշակիորեն խոչընդոտում է ՀՀ տնտեսության զարգացումը: Աննպաստ է նաև **ՀՀ հարեանային աշխարհագրական դիրքը**, որը ՏԱՌ-ի կարևորագույն բաղադրիչներից է: Անկախացումից հետո ստեղծված նոր իրավիճակում ՀՀ-ն դիվանագիտական պաշտոնական հարաբերություններ ունի հարևաններից Վրաստանի ու Իրանի հետ, որոնց տարածքով էլ իրականացվում է արտաքին ցամաքային հաղորդակցությունը: Իսկ Աղրբեջանն ու Թուրքիան իրականացնում են ՀՀ տնտեսական ու տրանսպորտային շրջափակումն ուժեղացնելու գործըն-

թացներ: Բացասական է նաև այն հանգամանքը, որ ՀՀ-ն անմիջական սահման չունի ռազմավարական ու տնտեսական գլխավոր դաշնակից Ռուսաստանի հետ:

Ներկայում առանձնակի կարևորություն ունի ՀՀ ռազմավարական (ռազմաաշխարհագրական) դիրքը, այսինքն՝ դիրքը հնարավոր ռազմական գործողությունների թատերաբեմում (ՈԳԹ), ինչպես նաև ռազմական խմբավորումների, հակառակորդների և եենակետերի նկատմամբ: Թեև մեր օրերում գերժամանակակից ռազմական տեխնիկան որոշակիորեն նվազեցրել է ռազմական գործողությունների ժամանակ աշխարհագրական դիրքի դերը, սակայն այն կարևոր դեր ունի դրանց կազմակերպման ու ռազմավարական ու մարտավարական խնդիրները լուծելիս: Բարենպաստ ռազմավարական դիրքը ստեղծում է հնարավորություններ՝ նպատակին հասնելու համար, անբարենպաստ դիրքը նպաստում է վտանգի առաջացմանը: Այսպես՝ ՀՀ ցամաքային երկիր լինելու հանգամանքը նրան զրկում է ամբողջ ուժով օգտագործելու իր ռազմական ներուժը: Բացի դրանից՝ պատերազմական երկարատև գործողությունների ժամանակ թշնամի կամ հակառակորդ երկրների կողմից խոչընդոտներ են ստեղծվում՝ երկրի տնտեսական, հետևաբար նաև ռազմական ներուժը թուլացնելու համար: Արդեն երեք տասնամյակից ավելի է՝ Աղբքեջանի և Թուրքիայի կողմից իրականացվող տրանսպորտային շրջափակման գլխավոր նպատակը ՀՀ տնտեսական և ռազմական ներուժի թուլացումն է՝ Արցախի խնդիրն իրենց նպատակահարմար ձևով լուծելու համար: Հետևաբար առանձնակի նշանակություն ունի ՀՀ և ԱՀ սահմանային տարածքների ռազմաաշխարհագրական իրավիճակի ձիւտ գնահատումը՝ հաշվի առնելով այդպիսի տարածքների ռելիեֆի և տեղային ռազմավարական դիրքի առանձնահատկությունները: Ասվածի վառ ապացույցներն են 2016 թ. ապրիլյան և 2020 թ. հուլիսյան հայ-աղբքեջանական կարձատե

պատերազմները: Երկու դեպքում էլ թշնամին ձգուում էր բարելավել ռազմավարական դիրքը և շահավետ իրավիճակ ստեղծել հետագա գործողությունների համար:

ՀՀ ՏԱԴ-ն առանձնանում է նաև դրական որոշ կողմերով: Հայաստանն ընկած է Եվրոպան Կենտրոնական ու Հարավային Ասիային, Ռուսաստանը՝ Մերձավոր ու Միջին Արևելքին կապող միջազգային ուղիների խաչմերուկում, որը պատմական անցած ժամանակաշրջանում դրական դեր է կատարել Հայաստան աշխարհի տնտեսական զարգացման վրա: Հայաստանի տարածքով էին անցնում արևմուտքից արևելք և հյուսիսից հարավ անցնող միջազգային նշանակության առևտրական մի շարք կարևոր ճանապարհներ: Լինելով ցամաքային և լեռնային բարդ ռելիեֆ ունեցող երկիր՝ պատմական Հայաստանում առավել կարևոր նշանակություն ունեցող ճանապարհները ցամաքային էին, իսկ նրանց ուղղությունները և հարմար լինելը մեծապես կախված էին տվյալ շրջանի ռելիեֆից ու տեղական պայմաններից: Պատմական Հայաստանի մի զգալի մասն էլ՝ Արցախ, Սյունիք, Գուգարք, Սասուն, Սովոր, Չորրորդ Հայքի որոշ շրջանները և այլն, գրեթե գուրկ են եղել հաղորդակցության հարմար ուղիներից [35]: Իր աշխարհագրական դիրքի շնորհիվ հնագույն ժամանակներից ի վեր Հայաստանը եղել է կապող օղակ և կամուրջ Հնդկաստանի ու Պարսկաստանի և Սև ու Միջերկրական ծովերի, ինչպես նաև Միջագետքի և Սև ու Կասպից ծովերի միջ: Այժմ էլ ՀՀ տարածքը, կափված աշխարհաքաղաքական իրավիճակից, կարող է կապող օղակի դեր խաղալ՝ տարածաշրջանային տարբեր մակարդակներով հաղորդակցություն ապահովելու համար:

Հարկ է նաև նշել, որ անցած դարաշրջաններում Հայաստանի խաչմերուկային-տարանցիկ դիրք ունենալն իր դրական կողմերով հանդերձ թողել է նաև բացասական ազդեցություն, քանի որ Հայաստանի՝ որպես ռազմավարական և տնտեսական խոշոր

նշանակություն ունեցող օբյեկտի տարածքը մշտապէս եղել է պատերազմի թատերաբէմ աշխարհակալ պետությունների միջև։ Հայոց աշխարհը մի բնական խոշոր միջնաբերդ էր, որն իշխող դիրք ուներ Մերձավոր Արևելքի նկատմամբ։ Ոչ ոք չէր կարող ապահով կերպով նվաճել Միջագետքը, Պարսից ծոցը, Ասորիքը, Փոքր Ասիան՝ առանց նախօրոք Հայկական լեռնաշխարհում ամրանալու [35]։ Մեր օրերում ևս ՀՀ-ն ամրող Կովկասի և Մերձավոր Արևելքի հետ միասին գտնվում է Ռուսաստանի, Ամերիկայի Միացյալ Նահանգների, Թուրքիայի և Իրանի տնտեսական ու քաղաքական շահերի բախման կիզակետում։ Վերջինս իր անմիջական և միջնորդավորված ազդեցությունն է թողնում մեր երկրի տնտեսական զարգացման ու քաղաքական գործընթացների վրա։

ՀՀ ՏՏ-ի առանձնահատուկ կողմերից մեկն էլ այն է, որ մեր երկիրը գտնվում է արևմուտքի ու արևելքի քաղաքակրթությունների փոխազդեցության ու շփման գոտում։

Ցանկացած տարածքի կամ օբյեկտի ՏՏ-ն արտահայտում է վերջինիս զարգացման հնարավորությունը, հավանական ուղղությունը։ Այսինքն՝ ՏՏ-ն ունի ներուժայնության հատկանիշ։ Առանձին երկրների, տարածքների կամ բնակավայրերի ՏՏ-ը օժտված է որոշակի քանակական ներուժով։ Վերջինիս «մեծությունը» պայմանավորված է առաջին հերթին աշխարհագրական տվյալ օբյեկտի ժողովրդավական ներուժով և ՀՀ-ի մեծությամբ։ Հետևաբար չպետք է բացարձակացնել այս կամ այն օբյեկտի բնականորեն առկա նպաստավոր կամ աննպաստ ՏՏ-ը։ Այն գործառույթ է՝ կախված օբյեկտի զարգացումից, այդ զարգացման ուղղությունից, կարող է բարելավվել և հակառակը։ Այս իմաստով ՀՀ ՏՏ-ի բարելավման գործում, բացի աշխարհաքաղաքական հանգամանքներից, կարևորվում է նաև ՀՀ ՏՏ-ի քանակական ներուժի մեծացումը։ Այսինքն՝ առաջիկա տարիներին ՀՀ տնտեսական արագ զարգացումն ու ժողովրդագրական ներու-

Ժի ավելացումն իրենց դերը կունենան ՀՀ ՏԱԴ-ի քանակական ներուժի մեծացման գործում. կնպաստեն ՀՀ ՏԱԴ-ի և ռազմաաշխարհագրական դիրքի բարելավմանը, ինչը շատ կարևոր է:

2020 թ. 44-օրյա պատերազմից հետո ՀՀ-ն հայտնվել է աշխարհաքաղաքական միանգամայն նոր իրավիճակում, և ՀՀ ՏԱԴ-ն իր բաղադրիչներով կրել է որոշակի փոփոխություններ, որոնք իրենց ազդեցությունը կունենան մեր երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքաաշխարհագրական և այլ գործընթացների հետագա զարգացման վրա:

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերլուծե՛ք ՀՀ ֆիզիկաաշխարհագրական դիրքը մակրոմակարդակով, մեզոմակարդակով և միկրոմակարդակով:

2. Վերլուծե՛ք Հայաստանի երրորդ հանրապետության պետական տարածքի ձևավիրման գործընթացը:

3. Կատարե՛ք ՀՀ սահմանների վերլուծություն: Տվե՛ք ՀՀ հարևանային աշխարհագրական դիրքի գնահատականը:

4. Գնահատե՛ք ՀՀ քաղաքաաշխարհագրական և տրանսպորտաաշխարհագրական դիրքերը:

5. Կազմե՛ք ՀՀ աշխարհագրական դիրքը բնութագրող քանակական և որակական ցուցանիշների գծապատկերը:

6. ՀՀ ՏԱԴ-ի դիրքի քանակական ներուժի մեծացման ի՞նչ հեռանկար եք տեսնում:

7. Կատարե՛ք ՀՀ ռազմաաշխարհագրական դիրքի և ռազմաաշխարհագրական իրավիճակի վերլուծություն:

1.2. Պետական կարգը, վարչատարածքային բաժանումը և տարածքային կառավարումը

ՀՀ պետական անկախության հոչակագիրն ընդունվել է 1990 թ. օգոստոսի 23-ին, անկախության հոչակման հանրաքվեն՝ 1991 թ. սեպտեմբերի 21-ին: Նույն թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ-ն դարձել է ԱՊՀ, 1992 թ. մարտի 2-ին՝ ՄԱԿ-ի, 2001 թ. հունվարի 25-ին՝ Եվրախորհրդի, 2003 թ. փետրվարին՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության անդամ: 2015 թ. հունվարից ՀՀ-ն ԵԱՏՄ անդամ է: 2017 թ. նոյեմբերին ՀՀ-ի և ԵՄ-ի միջև ստորագրվեց համագործակցության համաձայնագիր:

Հստ պետական կարգի՝ մեր երկիրը **հանրապետություն** է, ըստ պետական կառուցվածքի՝ միասնական պետություն: ՀՀ-ում պետական լեզուն հայերենն է, ազգային արժույթը դրամն է, որը շրջանառության մեջ է դրվել 1993 թ. նոյեմբերին:


ՀՀ-ն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է: ՀՀ-ում իշխանությունը պատկանում է ժողովրդին: **ՀՀ-ն խորհրդարանական հանրապետություն** է: ՀՀ օրենսդիր իշխանության բարձրագույն մարմինն Ազգային ժողովն է, որն ընտրվում է հինգ տարի ժամկետով: Բնակչությունն իր իշխանությունն իրականացնում է ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով՝ սահմանադրությանը և օրենքներին համապատասխան:

Երկրի տարածքային բաժանման միավորները պետք է լիովին համապատասխանեն երկրի առջև ծառացած տնտեսական, սոցիալ-քաղաքական, պաշտպանական և համապետական այլ խնդիրների արդյունավետ լուծմանը:

Պետության ներքին բաժանումը կարող է լինել **տարածքային-քաղաքական** (երբ երկիրը դաշնային է) կամ **վարչատարածքային**, եթե պետությունը միասնական է: ՀՀ ներքին բաժանումը վարչատարածքային է, քանի որ այն միասնական պետություն է: Յուրաքանչյուր երկրում տեղի ունեցող հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխություններին համապատասխան՝ վարչատարածքային բաժանումը կարող է ենթարկվել բարեփոխման, քանի որ այն ածանցյալ է վերը նշված գործընթացներից և կռչված է նպաստելու դրանց իրականացմանը: Հարյուրամյակների ընթացքում ՀՀ տարածքը, հայտնվելով տարբեր պետական-քաղաքական իրավիճակներում, կրել է վարչատարածքային բաժանման համակարգի զգալի փոփոխություններ:

Հայաստանի առաջին հանրապետության տարիներին գործում էր **Խահանգ-շրջան-գյուղ** վարչատարածքային բաժանման համակարգը: Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո՝ 1921 թ. հուլիսի 20-ին ընդունված դեկրետով ՀՀ-ում հաստատվեց **գավառ-գավառամաս** (գավառակ) - **գյուղ համակարգը** (առանձնացվեցին 9 գավառ և 38 գավառակ) [28]:

1929-1930 թթ. ԽՍՀՄ-ում անցկացվեց վարչատարածքային ռեֆորմ, որը նպատակ ուներ երկրի վարչատարածքային բաժանումը հարմարեցնելու նոր ձևավորվող համայնավարական հասարակարգի պահանջներին: Վարչատարածքային միավորների առանձնացման ու սահմանազատման գլխավոր պայմանը տարածքի բնական, ժողովրդագրական, էքսումշակութային, տնտեսական հատկանիշների և տրանսպորտային ապահովածության բազմակողմանի հաշվառումն էր:



**Քարտեզ 1. Հայաստանի Հանրապետության և
Արցախի Հանրապետության վարչական քարտեզ**

1929 թ. հուլիսի 26-ի որոշմամբ հանրապետությունը բաժանվեց 5 գավառի (օկրուգի), 31 շրջանի և շրջանի կարգավիճակ ունեցող մեկ քաղաքի: Շրջանացման ստորին աստիճանը (միավո-

թը) բնակավայրն էր (քաղաք, գյուղ): 1930 թ. օգոստոսի 5-ի որոշմամբ գավառները վերացվեցին, և հաստատվեց վարչատարածքային բաժանման երկաստիճան համակարգ՝ շրջան և գյուղական (քաղաքային) խորհուրդ [28], որը պահպանվեց մինչև 1995 թվականը: Մինչ այդ ՀՀ-ն բաժանված էր առաջին կարգի 59 միավորի (37 գյուղական վարչական շրջան և իրավական առումով դրանց հավասարեցված հանրապետական ենթակայության 22 քաղաք): Երկրորդ աստիճանի միավորները գյուղինորդուրդներն են (թվով 479), շրջանային ենթակայության քաղաքները (5) և քաղաքատիպ ավանները (31), Երևանի (8) և Գյումրիի (2) քաղաքային շրջանները՝ ընդամենը 525 միավոր [19]:

ԽՍՀՄ փլուզումից հետո Հայաստանում անկախության վերականգնումը, սոցիալ-քաղաքական և տնտեսական նոր հարաբերությունների հաստատումը վարչատարածքային ռեֆորմը դարձրին անհրաժեշտություն: **1995 թ. դեկտեմբերի 4-ին ընդունված օրենքով ՀՀ-ն բաժանվեց վարչատարածքային նոր միավորների՝ մարզերի:** Ստեղծվեցին վարչատարածքային առաջին կարգի տասնմեկ միավորներ՝ տասը վարչական մարզեր, իսկ Երևան քաղաքը դարձավ տասնմեկերորդ միավորը և ստացավ վարչական մարզի կարգավիճակ (2009 թ. մայիսից Երևանն ունի համայնքի կարգավիճակ): Երկրորդ կարգի վարչական միավորները գյուղական և քաղաքային համայնքներն են: ՀՀ-ում ստեղծվեցին 866 գյուղական և 48 քաղաքային համայնքներ: 2006 թ. Այրում բնակավայրը գյուղականից դարձավ քաղաքային համայնք: Վերջին տարիներին ՀՀ-ում իրականացվում է համայնքների խոշորացման գործընթաց, որի պատճառով փոփոխվում է վարչատարածքային երկրորդ կարգի միավորների՝ համայնքների թիվը: Համայնքների խոշորացման գործընթացը պայմանավորված է ստեղծված բազմաթիվ համայնքների միջև մարդկային, ֆինանսական, տարածքային և այլ ռեսուրսների մեծ տարբերություննե-

րով և մաժամանակ դրանց հավասար լիազորություններով օժտվածությամբ: Դրա հետևանքով հանրապետությունում մեծ թվով փոքր գյուղական համայնքներում հանրային ծառայություններ իրականացվում էին ցածր մակարդակով կամ չեն իրականացվում [27]: Համայնքների խոշորացման առաջին փուլը սկսվել է 2015 թ. ընդունված և 2016 թ. ուժի մեջ մտած ՀՀ համապատասխան օրենքով [նույն տեղում]: Ըստ այդմ՝ ձևավորվեցին Թումանյանի (7 բնակավայր), Դիլիջանի (7 բնակավայր) և Տաթևի (8 բնակավայր) բազմաբնակավայր համայնքները: Համայնքների խոշորացման 2-րդ և 3-րդ փուլերը իրականացվել են 2016 և 2017 թթ.՝ գուգակցելով փնջային ու շրջանային մոտեցումները:

Մեր կարծիքով Արարատյան հարթավայրի, Շիրակի և Լոռի վա դաշտերի, ինչպես նաև հարթավայրային մակերևույթ ունեցող այլ տարածքներում, համայնքների խոշորացումը կարելի է համարել նպատակահարմար, եթե չկան դրան խանգարող տեղային առանձնահատկություններ, և բնակավայրերի բնակչությունը դեմ չէ: Մյուս կողմից հարկ է նաև նկատել, որ լեռնային և սահմանամերձ տարածաշրջաններում, հաշվի առնելով տեղային աշխարհագրական առանձնահատկությունները, համայնքների միավորման շրջանային տարբերակը նպատակահարմար չէ: Այդպիսի տարածքներում առավել նպատակահարմար է համայնքների խոշորացումն իրականացնել առավելապես փնջային մոտեցման:

2021 թ. սեպտեմբերին տեղի ունեցավ համայնքների խոշորացման վերջին փուլը, և դրանց թիվը դարձավ 78, որից 71-ը խոշորացված, 6-ը՝ ազգային փոքրամասնություններով բնակեցված գյուղեր և Երևանը: ՀՀ-ն ունի 1003 բնակավայր՝ 49 քաղաք, 954 գյուղ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ծանոթացե՛ք ՀՀ Սահմանադրության այն հոդվածներին, որոնք վերաբերում են ՀՀ պետական կարգին, կառուցվածքին, օրենսդիր և դատական մարմինների ձևավորմանը:

2. Ինչպիսի՞ վարչատարածքային կառուցվածք ունի ՀՀ-ն, երբվանի՞ց է այն գործում և ի՞նչ միավորներից է բաղկացած:

3. Պետական տարածքային կառավարման ի՞նչ համակարգ է գործում ՀՀ-ում:

4. Տեղական ինքնակառավարման ի՞նչ համակարգ է գործում ՀՀ-ում:

5. ՀՀ կառավարման համակարգում ի՞նչ գործառույթներ են իրականացնում մարզերն ու համայնքները:

6. Կազմե՛ք ՀՀ մարզերը բնութագրող աղյուսակ-սխեմա՝ նշելով տարածքի չափը, դրանց մեջ մտնող տարածաշրջանները, բնակչության թիվը, քաղաքային և գյուղական բնակավայրերի թիվը, համայնքների թիվը, քաղաքային բնակավայրերը, ուրբանացման մակարդակը, բնակչության խտությունը, գյուղական բնակչության խտությունը: Կատարե՛ք աղյուսակ-սխեմայի վերլուծություն:

7. Ինչպէ՞ս եք գնահատում վերջին տարիներին ՀՀ-ում իրականացվող համայնքների խոշորացման գործընթացը, նշե՛ք դրա դրական ու բացասական կողմերը: Ձեր մարզի կամ տարածաշրջանի օրինակով բերե՛ք խոշորացված համայնքների օրինակներ և կատարե՛ք համապատասխան վերլուծություն:

ԳԼՈՒԽ 2

ՀՀ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԲՆԱՌԵՍՈՒՐՍԱՅԻՆ ՆԵՐՈՒԻԺԸ

2.1. Մակերևույթի բնույթը և տարածքի ռեսուրսային գնահատականը

ՀՀ-ն հարակից տարածքների նկատմամբ ավելի բարձր դիրք ունի: ՀՀ տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից ավելի քան 1800 մ է: Այն տիպիկ լեռնային երկիր է: ՀՀ-ում դաշտավայրեր չկան, և տարածքը գրեթե ամբողջությամբ ընկած է ծովի մակարդակից 375 մ-ից, իսկ ավելի քան 41 %-ը՝ 2000 մ-ից բարձր (Աղ. 1):

ՀՀ տարածքի մակերևույթի հաջորդ կարևոր առանձնահատկությունը բարձրաշափական նիշերի մեծ տարբերություններն են: Ամենաբարձրը Արագած լեռն է՝ 4090 մ, ամենացածրը՝ 375 մ՝ Դեբեդի հովիտը ստորին հոսանքում և Արաքսի հովիտը՝ Մեղրու շրջանում: Այսինքն՝ բարձրաշափական նիշերի տարբերությունը կազմում է 3715 մ: ՀՀ տարածքի ընդամենը 10.4 %-ն է գտնվում ծովի մակարդակից մինչև 1000 մ բարձրության վրա, իսկ կեսից ավելին (58 %-ը) ընկած է 1400-2500 մ բարձրությունների վրա: Ավելի բարձրադիր գոտուն (2500 մ-ից բարձր) բաժին է ընկնում ՀՀ տարածքի ավելի քան 17 %-ը: «Եթե վերանանք մասնավոր դեպքերից, ապա ՀՀ աշխարհագրական լայնություններում մարդու կյանքի և աշխատանքի համար առավել նպաստավոր պայմաններ կան մինչև 1400 մ բացարձակ բարձրություն ունեցող գոտում, որից հետո դրանք նկատելիորեն վատանում են: Ակսած 2000 մ-ից՝ այդ պայմանները դառնում են անբարենպաստ: Ինչպես նշում է պրոֆեսոր Վալեսյանը, երևան են գալիս նաև ար-

տաղրական բնույթի դժվարություններ¹: Սակայն ժամանակակից ԳՏՀ պայմաններում մարդու կյանքի և տնտեսական գործունեության կազմակերպման համար համեմատաբար բարենպաստ հնարավորություններ կարելի է ստեղծել նաև ՀՀ տարածքի ծովի մակարդակից 1400 մ-ից բարձր շրջաններում:

Լեռնային տարածքներում մակերևույթի բնույթը բնութագրող կարևոր ցուցանիշ է նաև **հարաբերական բարձրությունը:** Վերջինս արտահայտվում է մակերևույթի **ուղղաձիգ կամ խորքային մասնատվածությամբ:** ՀՀ տարածքի մոտ 2/3-ում խորքային մասնատվածությունը գերազանցում է 100 մ-ը՝ որոշ դեպքերում հասնելով մինչև 900 մ-ի, և միայն տարածքի 1/3-ում է այդ ցուցանիշը հաշվվում տասնյակ մետրերով: Բավական մեծ են նաև հորիզոնական մասնատվածության ցուցանիշները: Ցամաքային տարածքի շուրջ 90 %-ի վրա այդ ցուցանիշը գերազանցում է 400մ/կմ²-ը, իսկ տարածքի մոտ 30 %-ի վրա այն կազմում է 1000 մ/կմ² [41]: Այդ ամենի հետևանքով ՀՀ-ում մշակելի հողերի մոտ 60 %-ն ունի մինչև 5h ա մակերես (Եղեգնաձորի, Կապանի և Մեղրու տարածաշրջաններում՝ 70 %-ը): Հողատարածքների նման կառուցվածքը դժվարացնում է դրանց մշակումը, մեքենայացումը և ինտենսիվացումը, ինչպես նաև հաղորդակցությունը բնակավայրերի և մշակելի հողատարածքների միջև: Տարածքի այդպիսի մասնատվածությունը խոշնդոտում է նաև տեղական ինքնակառավարման կազմակերպմանը:

Տեղանքի մակերևույթը բնութագրող քանակական և որակական ցուցանիշների շարքում առանձնահատուկ դեր ունեն նաև մակերևույթի **թերությունները և դիրքադրությունները:** Դրանք զգալիորեն դժվարացնում են արտադրության կազմակերպման, ճանապարհաշինության, կապի և հեռահաղորդակցության սար-

¹ Տե՛ս Լ. Հ. Վայեսյան, Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, 1988, էջ 22:

քավորումների տեղադրման ու շահագործման աշխատանքները։ Մակերևույթի թեքությունը, պատճառական կապի մեջ գտնվելով տարածքի ֆիզիկական մյուս հատկանիշների հետ, որոշ իմաստով բնութագրում է նաև այդ հատկանիշները, ուստի թեքությունների գնահատականը տնտեսության վրա նրա ազդեցության տեսանկյունից որոշ իմաստով կարող է դիտվել որպես տարածքի մակերևութային պայմանների ամփոփիչ ընդհանրական գնահատական [28]:

Աղյուսակ 1

Հայաստանի Հանրապետության տարածքի բարձրաշափական գոտիների մակերեսները¹

Գոտիները՝ ըստ ծ. մ. ունեցած բարձրության (մ)	Բարձրաշափական գոտու մակերեսը	
	(կմ ²)	%-ով
մինչև 400	30,0	0,1
400-600	240,00	0,8
600-800	337,34	1,2
800-1000	2347,46	8,3
1000-1200	1774,64	6,2
1200-1400	2348,44	8,3
1400-1600	2687,08	9,4
1600-1800	2961,10	10,4
1800-2000	3653,22	12,8
2000-2250	4148,98	14,6
2250-2500	3034,95	10,7
2500-2750	2106,85	7,4
2750-3000	1511,56	5,3
3000-3250	877,70	3,1
3250-3500	269,82	1,0
3500-3750	88,42	0,3

¹Տե՛ս Դ. Ա. Պօգոսյան, Сельскохозяйственная оценка природных ресурсов тертииории Арм. ССР, Изд-во АН Арм. ССР, Е. 1986, с. 16:

3750-1000	37,39	0,1
4000- ից բարձր	9,35	0,0
Ընդամենը	28464,30*	100

- Առանց Սևանա լճի մակերեսի՝ 1278,29 կմ² (4,3%)

Աղյուսակ 2

ՀՀ տարածքի բաշխումը՝ ըստ բարձրության գոտիների և դրանց համեմատական գնահատականը՝ մարդու կյանքի և հասարակական արտադրության կազմակերպման տեսանկյունից (ըստ՝ [28]-ի)

Գոտիների բացարձակ բարձրությունը (մ)	Տարածքը		Համեմատական գնահատականը
	հազ. կմ ²	%	
375-500	0,02	0,1	առավել բարենպաստ
500-800	0,53	1,8	
800-1000	2,37	8,0	
1000-1400	4,33	14,5	
Ընդամենը՝ 375-1400	7,25	24,4	
Ընդամենը՝ 1400-2000	10,40	35,1	բարենպաստ
2000-2500	7,29	24,5	անբարենպաստ
2500-3000	3,80	12,6	ծայրահեղ անբարենպաստ
3000-4090	1,00	3,4	
Ընդամենը՝ 2500-4090	4,80	16,0	
Հայաստանի Հանրապետություն	29,74	100,0	

Քարտեզաշափական նյութերի և տնտեսության տարբեր ճյուղերի կողմից տարածքի յուրացմանը ներկայացվող պահանջների բազմակողմանի հաշվառման հիման վրա ՀՀ տարածքում, ըստ թեքությունների աստիճանների, առանձնացվել են գրադացիաներ, և տրվել է դրանց տնտեսաաշխարհագրական ընդհա-

նուր բնութագիրը¹: 1. Տափարակ և մեղմաթեք հարթություններ կամ մինչև 3^º թեքություն ունեցող տարածքներ: Սրանք կազմում են ՀՀ ցամաքային տարածքի ավելի քան 18 %-ը: Այսպիսի տարածքներում մակերևութային պայմանները տնտեսության պահանջների տեսանկյունից համարվում են լավագույնը: Սակայն, տեղանքի բարձրության հետ մեկտեղ, պայմանները վատանում են: Առավել բարենպաստ և բարենպաստ բնական պայմաններ ունեցող բարձրության գոտիներին (մինչև 2000 մ) բաժին է ընկնում հարթությունների կեսից ավելին միայն, մնացածը, գտնվելով 2000 մ-ից բարձր, մասամբ է միայն ընդգրկված տնտեսական շրջանառության մեջ և օգտագործվում է իբրև սեզոնային արդտավայր:

2. Մեղմաթեք լանջեր (3^º-8^º): Սրանք գտնվում են նախալեռնային և լեռնային սարավանդերի վրա: Զբաղեցնում են ՀՀ ցամաքային տարածքի ավելի քան 26 %-ը: Տնտեսական օգտագործման և տարաբնակեցման համար պայմաններն ընդհանուր առմամբ լավ են, սակայն դժվարանում են գյուղատնտեսական մեքենաների օգտագործումը, արդյունաբերական և տրանսպորտային շինարարության պայմանները: Այս տարածքների 47 %-ն ընկած է 2000 մ-ից բարձր՝ անբարենպաստ բարձրադիր գոտիներում, որի հետևանքով նվազում են դրանց օգտագործման հնարավորությունները:

3. Մթջին թեքության լանջեր (8^º-16^º): Սրանց օգտագործման և յուրացման պայմանների ընդհանուր գնահատականը բավարար է: Կազմում են ՀՀ ցամաքային տարածքի 26.6 %-ը: Այսպիսի տարածքներում տարածված են բավականին ինտենսիվ էրոզիոն գործընթացները: Տնտեսական նպատակներով օգտագործելու

¹ Թեքությունների գրադացիաները և գնահատականները տրված են ըստ Լ. Վալեյանի առանձնացրած սխեմայի: Տե՛ս Լ. Վալեյան, Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, 1988, էջ 27-30:

համար կարիք ունեն մեծ ծախսեր պահաջվող միջոցառումների: Նախորդի համեմատությամբ այքի են ընկնում ավելի փոքր հողակտորներով: Սահմանափակ են տարաբնակեցման հնարավորությունները: Նկատի ունենալով ՀՀ սահմանափակ հողային ռեսուրսները՝ ժամանակակից տեխնիկայի օգտագործման պայմաններում հնարավոր է մինչև 16⁰ թեքության լանջերն ընդգրկել տնտեսապես նպատակահարմար արտադրական օգտագործման ոլորտ:

4. Զարիթափ լանջեր (16⁰-30⁰): Սրանք միայն մասամբ են պիտանի մասսայական բնակեցման և բազմակողմանի արտադրական օգտագործման համար: Զբաղեցնում են ՀՀ ցամաքային տարածքի 25 %-ը, ընդ որում՝ դրա կեսն էլ գտնվում է 2000 մ-ից բարձր գոտիներում: Խիստ սահմանափակ են զյուղատնտեսության զարգացման հնարավորությունները, Վտանգավոր չափերի են հասնում հողմահարման, էրոզիայի և տեղատարման գործընթացները: Առավել պիտանի են խոտհարքների ու արոտների համար:

5. 30⁰-ից բարձր թեքություններ: Դիտանի չեն ոչ բնակեցման և ոչ էլ մասայական կապիտալ շինարարության համար: Օգտագործվում են միայն արոտների, մասամբ նաև խոտհարքների համար, սկսած 40⁰ թեքություններից՝ դրանց հնարավորությունները ևս բացառվում են: Միայն հարավահայաց լանջերին, որոնք բնութագրվում են բարձր ջերմաստիճանով, խրամատային դարավանդների և բնային եղանակի միջոցով կարելի է զբաղվել խաղողագործությամբ և ջերմասեր պտղաբուծությամբ: Առավել նպատակահարմար է զարգացնել թարմային խաղողագործությունը: Սրանք զբաղեցնում են ՀՀ ցամաքային տարածքի 4.5 %-ը:

ՀՀ բնակչության կեսից ավելին (մոտ 55 %-ը) ապրում է 801-1000 մ բարձրության գոտում, որտեղ ընկած են ՀՀ հարթավայ-

բային հիմնական տարածքները: Նշված գոտում 0-3⁰ թեքություն-ները գրավում են ամբողջ տարածքի ավելի քան 62 %-ը (Աղ. 3):

Այսպիսով՝ տեղանքի թեքությունների, մասնատման խորության և խտության, հարաբերական բարձրությունների պատճառով ՀՀ տարածքի տնտեսական յուրացման և բնակեցման պայմանները փոփոխվում են: ՀՀ-ում արտադրության կազմակերպման ու տարաբնակեցման համար առավել նպաստավոր, նպաստավոր և բավարար պայմաններ ունեցող տարածքը սահմանափակվում է մոտավորապես 16⁰ թեքությունների և մինչև 2000մ բացարձակ բարձրությունների սահմաններում, որը կազմում է 1.2 մլն հա կամ ՀՀ տարածքի 42 %-ը [6; 28]:

Տարածքի մակերևույթը բնութագրող ռելիէֆային հաջորդ գործոնը դիրքադրությունն է: Այն հողատարածքների տնտեսական օգտագործման և տարաբնակեցման բնույթի վրա ազդում է ոչ թե անմիջականորեն, այլ միջավայրի մյուս բարադրիչների՝ արեգակնային ռադիացիայի, խոնավության հաշվեկշռի, հողաբուսական ծածկի, մակերեսային ջրերի հոսքի, տեղատարման և այլ գործոնների միջոցով: Վերջիններիս կախվածությունը դիրքադրությունից նկատելի է դառնում սկսած 5⁰ թեքությունից: Հանրապետության տարածքի 22 %-ը կազմում են հարթությունները: Մնացած տարածքի բաշխումն ըստ դիրքադրությունների ունի հետևյալ պատկերը՝ հյուսիսային լանջեր՝ 10.5 %, հարավահայաց՝ 11.6 %, արևելահայաց՝ 6.1 %, արևմտահայաց՝ 8.6 %, հյուսիսարևելյան՝ 10.0 %, հյուսիսարևմտյան՝ 9.0 %, հարավարևելյան՝ 11.2 %, հարավարևմտյան՝ 10.5 % [41]: Լանջերի նման դիրքադրման պատճառով տարբեր են դրանց ջերմային ռեժիմը և ազդուկնենսաբանական մյուս պայմանները: ՀՀ-ում, նկատի ունենալով նրա աշխարհագրական լայնությունը և դրանով պայմանավորված արեգակնային ձառագայթման մեծությունը, ֆիզիկաաշխարհագրական տարրերի համալիրը մարդու համար ա-

ռավել նպաստավոր բնական կենսապայմաններ է ստեղծում հյուսիսային և դրան մոտիկ (հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան) համեմատաբար խոնավ և բուսական ծածկով հարուստ դիրքադրության լանջերում, որոնք գրաղեցնում են ՀՀ ընդհանուր տարածքի մոտ 29.5 %-ը: Առավել չորային և մարդու կենսագործունեության համար պակաս նպաստավոր կենսապայմաններ ունեցող հարավահայաց և դրան մոտիկ լանջերը կազմում են հանրապետության տարածքի 30 %-ը [28]:

ՀՀ-ում տնտեսության զարգացումը և հատկապես կապիտալ շինարարությունն ուղղակիորեն կապված են նաև տարածքի ճարտարագիտաերկրաբանական ու սեյսմիկ հատկանիշների հետ: Հայաստանի տարածքն ամբողջովին գտնվում է 8-9-բալանց սեյսմիկ գոտում: Տարածքի 1/4-ը, որտեղ կենտրոնացված է ամբողջ բնակչության 1/3-ից ավելին, սեյսմիկ տեսանկյունից համարվում է վտանգավոր: Այդ տարածքը մտնում է 8-բալանց գոտու մեջ: Սեյսմիկ ակտիվությամբ աշքի են ընկնում Շիրակի դաշտը, Արարատյան գոգավորությունը, Փամբակի լեռնաշղթան և Զանգեզուրը: Միայն XX դարի ընթացքում ՀՀ-ում տեղի են ունեցել ավերիչ ուժի մի քանի երկրաշարժեր (1926 թ.՝ Գյումրիի, 1931 թ.՝ Զանգեզուրի, 1937 թ.՝ Երևանի և 1968 թ. Քաջարանի երկրաշարժերը): Ընդգրկած տարածքով (ՀՀ տարածքի 10 %-ը) և կործանարար հետևանքներով աննախադեպ էր 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժը, որը խլեց ավելի քան 25000 մարդկային կյանք, ավերակույտերի վերածվեցին Սպիտակ և Գյումրի քաղաքները, լինվին ավերվեց 58 գյուղական բնակավայր: ՀՀ տարածքի առանձին շրջաններում տնտեսության զարգացման և տարածքային կազմակերպման համար անրարենպաստ պայմաններ են ստեղծում սողանքները, սեղավները, երկրի մակերեսույթին մոտ գտնվող գրունտային ջրերը և ակտիվորեն գործող ֆիզիկաաշխարհագրական այլ գործընթացներ:

Աղյուսակ 3

ՀՀ տարածքի, բնակավայրերի և բնակչության բաշխության բաշխության գոտիների / 26/

(ը) ըմբռ -վտած դութեամցմբց	Բնակչության բաշխությ. %-ով	Բնակավայրերի բաշխությ.				Անականացման խոսքունկ		Անականացման մասնակիությունը	
		Ընսպյուն	Դութեամց	Ենթա-ըմբռ	Ենթա-ըմբռ	Ընսպյուն	Դութեամց	Ենթա-ըմբռ	Ենթա-ըմբռ
Մինչ 800	2,1	2,7	1,8	4,0	51	5,3	5	10,2	46
801-1000	8,3	54,5	67,2	34,9	208	21,6	11	22,5	197
1001-1400	14,5	14,7	13,0	17,3	165	17,2	13	26,5	152
1401-1800	19,8	17,0	13,7	22,3	288	30,0	12	24,5	276
1801-2000	12,8	8,8	4,1	15,9	152	15,8	7	14,3	145
2001-2250	14,6	2,3	0,2	5,5	93	9,7	1	2,0	92
2250-2500	10,7	0,0	-	0,1	4	0,4	-	-	4
2500-hg >	17,2	-	-	-	-	-	-	-	-
Ընդամենը	100	100	100	100	961	100,0	49	100,0	912 ¹
									100,0
									43,0
									38686
									1154

Կատարված մանրակրկիտ ուսումնասիրություններից պարզվել է, որ ՀՀ-ում տարածված բազմաթիվ սողանքները և փլվածքները առաջանում ու զարգանում են ակտիվ տեկտոնական խզվածքային գոտիներում՝ մեծ թեքությունների լեռնալանջերում։ Ողջաբերդի լեռնաշղթայի, Ուրծի, Վայոց ձորի, Վարդենիսի զարդարակի լեռնալանջերի ստորոտներում տեղադրված բազմաթիվ գյուղական բնակավայրեր դարերի և տարիների ընթացքում տուժել են սողանքային երևույթներից, նրանց մի զգալի մասը տեղափոխվել է ավելի ապահով վայրեր՝ թռողնելով իրենց բնակավայրերի ավերակները։

Հարցեր և առաջադրանքներ

1. Մակերևույթի ո՞ր հատկանիշներն են ազդում ՀՀ տարածքի բնակեցման և տնտեսական գործունեության վրա։
2. Կատարե՛ք ՀՀ տարածքի բարձրության տարբեր գոտիների տնտեսաշխարհագրական վերլուծություն և գնահատում։
3. Տվե՛ք ՀՀ տարածքի լանջերի թեքությունների տնտեսական գնահատականը։
4. Տվե՛ք ՀՀ տարածքի դիրքադրությունների տնտեսական գնահատականը։
5. Առանձնացրե՛ք ՀՀ տարածքի առանձին միավորներ, կատարե՛ք դրանց մակերևույթի տարրերի վերլուծություն ու գնահատում։

2.2. Կլիմայական պայմանները և ռեսուրսները

Մարդու կյանքի և տնտեսության տարբեր ոլորտների ու ճյուղերի ձևավորման, զարգացման և տարածքային կազմակերպման վրա կլիմայի ազդեցությունը դրսորվում է օդի շերմաստիճանի և խոնավության, մթնոլորտային տեղումների, քամիների, մթնոլորտային ձնշման և օդերևութափանական այլ տարրերի միջոցով:

ՀՀ-ն կլիմայական հակառարությունների երկիր է: Այստեղ ամենափոքր տարածքների վրա անգամ նկատվում են կլիմայի զգալի տարբերություններ: Տարածքի փոքրության պատճառով ՀՀ ծայրհյուսիսային և հարավային շրջանների միջև արեգակի բարձրության, ինչպես նաև օրվա տևողության տարբերություններն այնքան չնշին են, որ կարելի է անտեսել: Տարվա ընթացքում արեգակի բարձրությունը հորիզոնի նկատմամբ ՀՀ-ում տատանվում է $27^{\circ}27'$ -ից (դեկտեմբեր) մինչև $74^{\circ}04'$ (հունիս): Դրանով պայմանավորված՝ փոխվում է նաև ցերեկվա տևողությունը՝ համապատասխանաբար 9 ժամ 33 րոպեից 15 ժամ 9 րոպե (Դեկտեմբեռ օդը. կայան) [10]:

ՀՀ-ն ունի մերձարևադարձային գոտուն բնորոշ արևոտ, չոր ցամաքային կլիմա, որը, սակայն, լեռնային ռելիեֆի պատճառով զգալիորեն փոփոխվում է: Արևափայլի տարեկան միջին տևողությունը ՀՀ-ում տատանվում է 1924-ից (Իջևան) 2779 (Մարտունի) ժամի սահմաններում: Կլիմայի արևոտությունը բնորոշող կարևոր բնութագիր է նաև անարև կամ ամպամած օրերի թիվը: ՀՀ-ում տարվա ընթացքում ամպամած օրերն ամենից շատ են Իջևանում (64 օր), իսկ նվազագույնը՝ Մարտունիում (18 օր) [նույն տեղում]:

Հայաստանում արեգակնային էներգիայի լարվածությունը մեծ է և աճում է ըստ բարձրության: Գործնական տեսանկյունից կարևոր են գումարային ձառագայթման մեծությունները (ուղիղ և ցրված ձառագայթման գումարը): Դրանց նվազագույն մեծությունը տարեկան կազմում է 120, առավելագույնը՝ ավելի քան 160 կյալ/սմ² [նույն տեղում]:

Արեգակնային էներգիայի առատությունը ՀՀ տարածքում բարենպաստ պայմաններ է ստեղծում զյուղատնտեսական արժեքավոր մշակաբույսերի աճեցման համար, սակայն միայն ոռոգման պայմաններում: ՀՀ-ում բարենպաստ պայմաններ կան արեգակնային էներգիայի անմիջական օգտագործման համար, հատկապես, եթե հաշվի առնենք արեգակնային էներգիայի օգտագործման ժամանակակից տեխնիկական հնարավորությունները: Արեգակնային էներգիայի առատությունը կարևոր նախադրյալ է նաև առողջարանային ու ռեկրեացիոն գործի զարգացման տեսանկյունից:

Լեռնային ռելիեֆը պայմանավորում է ՀՀ կլիմայի տարրերի՝ ջերմաստիճանի, խոնավության, տեղումների և ձևածածկույթի խայտարդետություն:

Հայտնի է, որ առանձին տարածքներում բնական համալիրի առանձնահատկությունների ձևավորման համար առաջնային նշանակություն ունեն ջերմությունն ու խոնավությունը: Դրանց տարրեր զուգակցությունները որոշիչ դեր ունեն լանդշաֆտի առաջացման գործընթացում: ՀՀ տարածքում ամենաբարձր տարեկան միջին ջերմաստիճանը 14.3° է (Մելրի), ամենացածրը՝ -2.7° (Արագած բարձրլեռնային կայսան, թի): Օդի ամենացածր ամսական միջին ջերմաստիճանը (հունվարին՝ -12.9°) դիտվում է Արագած թի կայանում, սակայն լեռնային գոգավորություններում նույնպես այն բավական ցածր է լինում: Պաղակնում՝ Վերին Ախուրյանի գոգավորությունում (2027 մ), հունվարին միջին ջերմաստիճանը -12.5° է: Հունվարյան ամենաբարձր միջին ջերմաստիճանը՝ 0.6° , դիտվել է Դեբեղաշենում [10]: ՀՀ-ում օդի առավելագույն ջերմաստիճանի և տեղանքի՝ ծովի մակարդակից ունեցած բարձրության միջև կապն ավելի ցայտուն է: Ամենաբարձր ջերմաստիճանը՝ $+43.6^{\circ}$, դիտվել է Արաքսի հովտի ցածրադիր մասում (Մեղրիում), իսկ բարձր լեռնային գոտում առավելագույնը եղել է 21° (Արագած թի) [10]: 2020 թ. ՀՀ-ում միջին հունվարյան ջերմաստիճանը կազմել է -5.4°C (շեղումը 1961-1990թթ.՝ $+1.4^{\circ}\text{C}$), հունիսայն միջինը՝ $+15.6^{\circ}\text{C}$, շեղումը 1961-

1990 թթ.՝ $+2.2^{\circ}\text{C}$ [44]:

ՀՀ-ում ամենացածր ջերմաստիճանը՝ -42° , դիտվել է Պաղակնում, Արագածի բարձր լեռնային կայանում՝ -39° : Այսպիսով՝ ՀՀ-ում բացարձակ առավելագույն և բացարձակ նվազագույն ջերմաստիճանների լայնութքը կազմում է 85.6° , որն իր բացասական ազդեցությունն է թուղնում տնտեսության տարբեր ոլորտների, մասնավորապես՝ գյուղատնտեսական արտադրության զարգացման և տեղաբաշխման վրա:


Օդի ջերմաստիճանի արտադրական նշանակություն ունեցող հատկանիշներից կարևոր են միջին օրական ջերմաստիճանների 0° -ից անցնելու ժամկետները և 0° -ից բարձր միջին օրական ջերմաստիճանը: Այս իմաստով ամենաբարենպաստ պայմաններն առկա են ՀՀ ծայրինուսիսարելյան և ծայրհարավարելյան ցածրադիր շրջաններում, որտեղ նշված ցուցանիշը տևում է հունվարի վերջից կամ փետրվարի սկզբից մինչև դեկտեմբերի սկիզբը: ՀՀ տարածքի մեծ մասում՝ 800-2000 մ բացարձակ բարձրության գոտում, այն տևում է $7-8$ ամիս (մարտից նոյեմբեր), բարձր լեռնային գոտում՝ 4-5 ամիս (մայիսի վերջից մինչև հոկտեմբերի կեսը) [28]:

Գյուղատնտեսական և արտադրական տեսանկյունից շատ կարևոր են օդի միջին ջերմաստիճանների 10° -ից անցնելու ժամկետները: Վերջինս ՀՀ-ում գարնանը սկսվում է ապրիլի (հովտային շրջաններում) կամ մայիսի վերջերին (բարձր լեռնային գոտում), իսկ աշնանը՝ համապատասխանաբար հոկտեմբերին և սեպտեմբերին: Այսպիսով՝ 10° -ից բարձր միջին օրական ջերմաստիճաններով ժամանակաշրջանը ՀՀ-ում տևում է յոթից երեք ամիս [նույն տեղում]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ-ում զարնան «բարձրացումը» դեպի լեռները տեղի է ունենում յուրաքանչյուր 3-4 օրը 100 մ արագությամբ, իսկ օդի $0^{\circ}, 5^{\circ}, 10^{\circ}$ և 15° միջին օրական ջերմաստիճաններով օրերի տևողությունը յուրաքանչյուր 100 մ-ի վրա կրճատվում է 5-10 օրով [28]:

Հայաստանի նման լեռնային մակերևույթ ունեցող երկրներում,

հատկապես զյուղատնտեսական արտադրության համար կարևոր նշանակություն ունի սառնամանիքային ժամանակաշրջանի կանխագուշակումը: Ցրտահարությունների սկզբելու և վերջանալու ժամկետները, հետևաբար նաև առանց ցրտահարությունների ժամանակամիջոցի տևողությունը զգալիորեն կախված են նաև ռելիէֆի ձևից:



Քարտեզ 2.ՀՀ կլիմայական վերընթաց գոտիները

Սովորաբար ռելիէֆի գոգավոր ձևերում՝ փակ և բաց հովիտներում, բաց լանջերի համեմատությամբ առաջին սառնամանիքները դիտվում են շուտ, իսկ վերջիններում՝ ուշ: **Անսառնամանիք ժամանակամիջոցի միջին տևողությունը ՀՀ-ում տատանվում է 66-ից (Արագած ք/լ) -253 (Մեղրի) օրվա սահմաններում [10]:** Վաղ սառնամանիքները բարձր լեռնային գոտում միջին հաշվով լինում են սեպտեմբերի առաջին, ցածրադիր գոտում՝ նոյեմբերի երկրորդ տասնօրյակում:

Սառնամանիքները ցածրադիր գոտում դադարում են մարտի երրորդ, միջին լեռնային գոտում՝ ապրիլի երկրորդ տասնօրյակում, բարձրադիր գոտում՝ հունիսի վերջերին [նույն տեղում]: **Ցրտահարությունները զրեթե ամեն տարի զգալի վնաս են հասցնում ՀՀ գոտողատնտեսությանը:**

Բացի օդի ջերմաստիճանից՝ կարևոր ցուցանիշ է նաև **հողի ջերմաստիճանը**, որը բնութագրում է ոչ միայն բույսի միջավայրը, այլև սառեցման կետն անցնելիս ազդում է նաև շինարարական աշխատանքների վրա: ՀՀ ծայրհարավարենեյան և ծայրհյուսիսարենեյան հովտային շրջաններում ամբողջ տարին հողը գործնականում չի սառչում, միջին լեռնային գոտում այն սառչում է 2-3 ամիս՝ կես մետր խորության վրա, բարձր լեռնային գոտում՝ 6 ամիս (1.5 մ խորության վրա) [28]:

ՀՀ տարածքում մեծ տատանումների է ենթակա օդի խոնավության ցուցանիքը, որը որոշակի դեր ունի ինչպես մարդու ու բուսական օրգանիզմների, այնպես էլ որոշ արտադրությունների համար: **ՀՀ-ում օդի բացարձակ խոնավության ընթացքը համբնկնում է ջերմաստիճանի ընթացքին.** այն, ըստ բարձրության, նվազում է և համեմատաբար քիչ է կախված ռելիէֆի ձևերից: Բացարձակ խոնավության միջին ամսական մեծությունները հուլիսին տատանվում են 7.4-ից (Արագած ք/լ) 17 մը (Մեղրի), հունվարին՝ 1.9-4.8 մը սահմաններում [10]:

ՀՀ-ում հարաբերական խոնավության տարեկան ընթացքը հակառակ է ջերմաստիճանի ընթացքին և մեծապես կախված է վայրի բարձրությունից ու ռելիէֆի բնույթից: Այն մեծ է միջին ու բարձր լեռնային

գոտիներում և զիշերվա ժամերին հասնում է 80-90 %-ի: Ամռանը ցածրադիր գոտում, հատկապես ցերեկվա ժամերին, հարաբերական խոնավությունը մեծ չէ՝ 40-50 %, հաճախ՝ 30 %-ից էլ ցածր, առանձին դեպքերում այն իջնում է մինչև 10 % [նույն տեղում]: Վերջինս արդեն շատ ցածր ցուցանիշ է և անբարենպաստ է մարդու առողջության համար:

Հայաստանն ընդհանրապես չորային երկիր է: ՀՀ-ում առավելագույն տեղումներ թափվում են Արագածի ու Զավախիքի լեռնավահանների և մյուս լեռների արևմտյան բարձրադիր լանջերին՝ 900-1000 մմ, նվազագույնը՝ 200 մմ, թափվում են Արարատյան գոգավորության ամենացածրադիր մասերում [10]: Հստ բարձրության գոտիների՝ տեղումների բաշխումն ունի հետևյալ պատկերը՝ ցածրադիր գոտի՝ 200-300 մմ, միջին բարձրության գոտի՝ 300-600 մմ, բարձր լեռնային գոտի՝ 600-1000 մմ: 2020 թ. ՀՀ-ում տեղումների միջին քանակը կազմել է 538 մմ, շեղումը՝ 1961-1990 թթ.՝ 54 մմ[44]:

ՀՀ տարածքի իրական խոնավացման պատկերը, բացի մթնոլորտային տեղումներից, պայմանավորված է նաև գոլորշունակությամբ, որը տարածքի մեծ մասում գերազանցում է թափվող մթնոլորտային տեղումներին, որի հետևանքով դիտվում է խոնավության պակաս: Գոլորշունակության մեծությունը ՀՀ տարածքում փոփոխվում է ըստ բարձրության: Վերջինս մեծ է հատկապես ցածրադիր ու նախալեռնային գոտում: Բարձր ջերմաստիճանների հետ մեկտեղ դրան նպաստում են նաև քամիները: Տեղումների քանակն ավելանում է ստորոտից դեպի բարձրադիր գոտիները, մինչեւ գոլորշունակությունն աճում է հակառակ ուղղությամբ: Հետևաբար տեղանքն ինչքան ցածրադիր է, այնքան ավելի մեծ է խոնավության պակասը [28]: Բարձրադիր գոտում գոլորշունակությունը 600 մմ-ից պակաս է, տեղումների առավելագույն քանակը՝ 800-900 մմ, միջին լեռնային գոտում գոլորշունակությունը հասնում է 700-800 մմ-ի, տեղումների քանակը՝ 400-500 մմ-ի: Ստորին գոտում գոլորշունակությունը հասնում է առավելագույնին՝ 1000-1250 մմ-ի, տեղումների քանակը՝ նվազագույնին՝ 200-300 մմ-ի: **Խոնավու-**

թյան առումով ՀՀ-ում գյուղատնտեսության համար ամենաանբարենպաստ պայմաններն առկա են ստորին գրտում, որտեղ առանց ոռոգման անհնար է երկրագործությամբ գրադարձ [նույն տեղում]:

ՀՀ-ում գյուղատնտեսության համար կարևոր հանգամանք է նաև մընոլորտային տեղումների բաշխումը տարվա ընթացքում: Այն ընդհանուր առմամբ գնահատվում է որպես բարենպաստ: **Տեղումների առավելագույնը թափվում է մայիսին, իսկ նվազագույնը՝ օգոստոսին:** Աշնանը (հոկտեմբեր-նոյեմբերին) նկատվում է տեղումների երկրորդ առավելագույնը: Գարնանային և ամառային տեղումները մեծ մասամբ տեղատարափ բնույթ ունեն և ձնհալքի հետ համընկնելու դեպքում հաճախ առաջացնում են վարարումներ, հաճախակի է կարկուտը, որը զգալի վնաս է պատճառում գյուղատնտեսությանը: Ամռանը ՀՀ-ում ամենուրեք տեղումները թափվում են անձրևի ձևով, իսկ տարվա ցուրտ կեսին՝ ձյան: Որոշ վայրերում (3500մ բարձր) ռելիեֆի նպաստավոր ձևերում ձյունը մնում է ամբողջ տարին [10]:

Ցածրադիր վայրերում, կախված ռելիեֆից բնույթից (մինչև 1000-1200 մ), հաստատուն ձնածածկույթ առաջանում է ոչ ամեն տարի, ընդորում՝ ձյան շերտի հզորությունը ՀՀ տարրեր մասերում տատանվում է 5 սմ-ից մինչև ավելի քան 2 մ-ի սահմաններում: Ձնածածկույթով օրերի առավելագույն թիվը դիտվում է բարձր լեռնային գոտում (մոտ 270 օր), նվազագույնը՝ ցածրադիր գոտում (50 օր): Որոշ վայրերում մշտական ծածկույթ չի գոյանում [10]: Ձնածածկույթի աճն ըստ բարձրության կարևոր է գյուղատնտեսության համար. այն խոնավության բավարար պայմաններ է ստեղծում լեռներում, հատկապես անտառային ու ալպյան գոտիներում: Մյուս կողմից առատ ձնածածկույթը նկատելի դժվարություններ է հարուցում շինարարության համար և որոշ լեռնանցքներում տրանսպորտային հաղորդակցության համար ժամանակավոր ընդհատման պատճառ է դառնում:

ՀՀ լեռնային ռելիեֆի անհավասարաշափ տաքացման պատճառով սկիզբ է առնում օդային զանգվածների տեղական շրջանառություն:

Դրանք տիպիկ են արտահայտվում տարվա տաք կեսին, հատկապես ներքին գոգավորություններում: Լեռնային քամիները փշում են զիշերները դեպի գոգավորություններ, հովտային քամիները՝ ցերեկը և հակառակ ուղղությամբ: Լեռնահովտային քամիները շատ լավ են արտահայտված Արարատյան գոգավորությունում և հասնում են առավելագույն արագության՝ մինչև 20 մ/վրկ:

ՀՀ մեծ մասում քամիների արագությունը չի գերազանցում 7.5 մ/վրկ-ը: Սակայն շատ շրջաններում հաճախակի են 10-15մ/վրկ արագության ուժեղ քամիները: Միսիանի լեռնանցքում այդպիսի քամիները լինում են մոտ 86 օր, Երևանում՝ 67, Սևանում՝ 28, Գյումրիում՝ 22 օր և այլն [28]:

Առանձին երկրների կամ տարածքների կլիմայական պայմանների և ռեսուրսների առավել ամբողջական բնութագրման համար պետք է իրականացնել կլիմայի համալիր գնահատում, ստացված արդյունքների հիման վրա՝ **տարածքի կլիմայական շրջանացում:** Վերջինս հնարավորություն կտա գնահատելու երկրի կամ նրա առանձին տարածքների կլիմայական պայմաններն ու ռեսուրսները մարդու կյանքի և տնտեսական գործունեության վրա կլիմայի ազդեցության տեսանկյունից: Առ այսօր ՀՀ տարածքի կլիմայական պայմանների և ռեսուրսների համալիր գնահատում չի իրականացվել, թեև կան արտադրության առանձին ճյուղերի և մարդու կենսագործունեության առանձին կողմերի պահանջների համար այդպիսի շրջանացման առանձին սխեմաներ, օրինակ՝ պրոֆեսոր Ռ. Մկրտչյանը կատարել է ՀՀ տարածքի ազդողիմայական շրջանացում:

ՀՀ տարածքն աչքի է ընկնում տարվա բոլոր եղանակների ցայտուն արտահայտվածությամբ, որը պայմանավորված է ՀՀ միջին լայնություններում գտնվելու հանգամանքով: **ՀՀ-ում տարվա ընթացքում դիտվում են ցուրտ, չափավոր ցուրտ, զով, չափավոր զով, չափավոր տաք, տաք, շատ տաք և շոգ եղանակային պայմաններ:** Զմռանը ՀՀ տարածքի մոտ 62 %-ն ունի ցուրտ և չափավոր ցուրտ եղանակային

պայմաններ, 38 %-ը՝ չափավոր տաք և տաք եղանակային պայմաններ: Գարնան ընթացքում տարածքի 52 %-ն ունի զով, 40 %-ը՝ չափավոր տաք և տաք, 8 %-ը՝ ցուրտ պայմաններ: Ամռանը տարածքի 59 %-ն ունի չափավոր տաք և տաք, 17 %-ը՝ շատ տաք և շոգ, 2 %-ը՝ զով եղանակային պայմաններ: Աշնանը ՀՀ տարածքի 78 %-ն ունի չափավոր տաք և տաք, 19.5 %-ը՝ զով, 2 %-ը՝ ցուրտ, 0.5 %-ը՝ շատ տաք եղանակային պայմաններ (ցուցանիշները հաշվարկվել են ըստ թիվ 28 գրականության Աղ. 3-ի տվյալների):

Այսպիսով՝ ՀՀ կիման բնութագրող օդերևութարանական ցուցանիշները խիստ բազմազան են և իրենց անմիջական ու միջնորդավորված ազդեցությունն են քողնում մարդկանց կյանքի, հասարակական արտադրության ձևավորման ու զարգացման և ողջ հասարակության տարածքային կազմակերպման տարբեր կողմերի վրա:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ է ՀՀ-ն համարվում կիմայական հակադրությունների երկիր:
2. Տվե՛ք ՀՀ կիմայի օդերևութարանական հիմնական տարրերի ռեսուրսային գնահատականը:
3. Ինչպե՞ս են արտահայտվում տարվա եղանակները ՀՀ-ում և տարածական ինչպիսի բաշխվածություն ունեն:
4. Կատարե՛ք ՀՀ առանձին մարզերի ազրոկիմայական ռեսուրսների վերլուծություն և գնահատում:
5. Տվե՛ք ՀՀ կիմայական ռեսուրսների ռեկրեացիոն բնութագիրը:
6. Կատարե՛ք Ձեր մարզի, տարածաշրջանի, բնակավայրի կիմայական պայմանների և ռեսուրսների վերլուծություն և գնահատում:

2.3. Ըսդերքի ռեսուրսները

ՀՀ տարածքն աչքի է ընկնում երկրաբանական կառուցվածքի բարդությամբ և մետաղային ու ոչ մետաղային հանքային հանածոների տարածման բացառիկ բարենպաստ պայմանների առկայությամբ: ՀՀ բնական ամենաբազմազան հարատուրժուններից տնտեսական առավել խոշոր նշանակություն ունեն մետաղային օգտակար հանածոները, որոնց թվում առաջատար տեղ են զբաղեցնում գունավոր, հազվագյուտ, սև ու ազնիվ մետաղները: Մետաղների որոշ տեսակներ (պղինձ, կապար, ցինկ, երկաթ, ոսկի) հայերի և նրանց նախնիների կողմից օգտագործվել են դեռևս հնագույն ժամանակներից:

ՀՀ-ում հայտնաբերված են 30 տարբեր մետաղների ավելի քան 900 հանքավայրեր և երեսակումներ, որոնք գրեթե բոլորն ել առավել կամ պակաս չափով տնտեսական արժեք են ներկայացնում [28]: Հայտնաբերված են պղինձ, ալյումինի հումք (նեֆելինային սիենիտներ), կապար և ցինկ, մագնեզիում, սև մետաղներից՝ երկաթ, քրոմ, մանգան, հազվագյուտ մետաղներից՝ մոլիբդեն, վոլֆրամ, տիտան, անագ, վանադիում, մկնդեղ, ծարիր, սնդիկ, կորալտ, նիկել և այլն, հազվագյուտ և ցրված մետաղներից՝ ռենիում, սելեն, թելուր, կադմիում, բիսմուտ և այլն, ազնիվ մետաղներից՝ ոսկի, արծաթ, պլատին և այլն:

Գունավոր մետաղներից ՀՀ-ում հատկապես շատ տարածված են պղինձի հանքավայրերը (շուրջ 40), որոնք գտնվում են գլխավորապես Զանգեզուրում (պղնձամոլիբդենային) և Դեբեղի ավազանում (պղնձահրաբարային): Պղնձամոլիբդենային հանքավայրերին բաժին է ընկնում ՀՀ պղնձի պաշարների ավելի քան 80 %-ը (նույն տեղում): Խոշորագույններից են Քաջարանի և Ազարակի հանքավայրերը: Մասամբ պահպանվում է նաև Դաստակերտի հանքավայրի դերը: Պղնձահրաբարայիններից հայտնի են Կապանի, Ալավերդու, Շամլուլի հանքավայրերը: Պղնձի հանքեր կան նաև Հանքավանում:

ՀՀ ընդերքը շատ հարուստ է նաև **մոլիբդենի** պաշարներով: Խոշորագույններից են Քաջարանի, Ազարակի Լիճքի և Թեղուտի հանքավայրերը, մասամբ՝ Դաստակերտը: Այս հանքավայրերում, բացի մոլիբդենից, հանդիպում են նաև պղինձ, ոսկի, հազվագյուտ և ցրված մետաղներ: Մոլիբդենի հեռանկարային պաշարներ են հայտնաբերվել նաև Հանքավանում, Եղեգիսի վերնագավառում և Վարդենիսի լեռնաշղթայում:

ՀՀ գունավոր մետաղների շարքում կարևոր դեր ունեն **բազմամետաղային՝ կապար-ցինկային հանքավայրերը**: Այդպիսիք երբեմն պարունակում են որոշ քանակությամբ պղինձ, արծաթ, ոսկի: Հայտնի են Շահումյանինը, Ախբալայինը, Ղազմայինը (Եղեգնաձորի տարածաշրջանում) [24]:

ՀՀ-ն **ունի նեֆելինային սիենիտների** հարուստ հանքավայրեր: Դրանցից լավ ուսումնասիրված են **Թեժ լեռան** խոշորագույն հանքավայրը, որի լեռնահանքային և տրանսպորտային պայմանները բարենպաստ են՝ արդյունավետ շահագործում կատարելու համար: Սակայն բնապահպանական նկատառումներով այս հանքավայրի շահագործումն առաջմ նպատակահարմար չէ: Հեռանկարում արդյունաբերատնտեսական կարևոր նշանակություն կարող է ունենալ Մեղրու շրջանի Շվանիձորի հանքավայրը [նույն տեղում]:

ՀՀ-ում հայտնաբերված ազնիվ **մետաղների** շարքում առանձնակի նշանակություն ունեն Սոտքի և Մեղրաձորի ոսկու արմատային հանքավայրերը: **Արծաթի ու պղատինի** պաշարները ՀՀ-ում աննշան են: Դրանք հանդես են զալիս համալիրային հանքավայրերում: Արծաթը հանդես է զալիս բազմամետաղների, պղնձի, մոլիբդենի և այնի հետ միասին, իսկ պղատինի որոշակի նշաններ նկատվում են սև մետաղների ուսումնասիրված հանքավայրերում [24]:

Մեր երկրի ընդերքը հարուստ է նաև **հազվագյուտ և ցրված մետաղներով**: Դրանցից ՀՀ-ում կան ռենիումի, կադմումի, սելենի, թելու-

րի, սկանդիումի, բխմուտի, գերմանիումի, զալիումի և ինդիումի հանքավայրեր:

Ըսդհանուր առմամբ ՀՀ մետաղային հանքերը համալիրային են. հանքանյութում, հիմնական մետաղից բացի, կան նաև մեծ արժեք ներկայացնող ուղեկից տարրեր: Հանքանյութի համալիրությամբ աչքի են ընկնում Կապանի, Քաջարանի, Ազարակի, Շամլուղի, Ախթալայի գունավոր մետաղային հանքավայրերը:

ՀՀ-ում հայտնաբերված են նաև սև մետաղների՝ երկաթաքարի միքանի հանքավայրեր, որոնք մետաղի պարունակությամբ, պաշարներով և շահագրծման հնարավորություններով համարժեք չեն: Դրանցից արդյունաբերական նշանակություն ունեն Կապուտանի, Հրազդանի և Սվարանցի հանքավայրերը [1, 28]: Երկաթաքարի պաշարներ կան նաև Մեղրու տարածաշրջանում, Բագումի լեռնալանջերին, Նոյեմբերյանի տարածաշրջանում և այլ վայերում:

Բացի երկաթաքարից՝ ՀՀ-ում հայտնաբերված են նաև մանգանի և քրոմի պաշարներ: Մանգանի պաշարներ կան շատ վայրերում, սակայն արդյունաբերական նշանակության հանքավայրեր դեռևս հայտնաբերված չեն: Համեմատաբար լավ են ուսումնասիրված Կարմրաշենի, Մարտիրոսի, Մեղրուտի, Սվարանցի, Սևքարի, Սարիգյուղի, Ղալաչայի, Կորթիի հանքավայրերը [24]: Մանգանի պաշարները հայտնաբերված են նաև Սևանի ավագանում և այլ վայրերում: Հայտնաբերված քրոմի երկու տասնյակից ավելի հանքավայրերից և երեակումներից գործնական նշանակություն կարող են ունենալ Զիլի ու Շորժայի հանքավայրերը:

ՀՀ ընդերքը հարուստ է ոչ մետաղային հանածոների ամենաբազմազան տեսակներով: Դրանցից բնական շինանյութերը, քիմիական և ինդուստրիալ հումքը ՀՀ-ում ներկայացված են խոշոր և միջին չափերի բազմաթիվ հանքավայրերով: Առավել մեծ տարածում ունեն քարանյոթերի տարրեր տեսակները, որոնք գրեթե ամբողջությամբ համատարած շերտ են կազմում ՀՀ ողջ տարածքում: ՀՀ-ում կան գիտությանը

հայտնի համարյա բոլոր քարատեսակները: Միայն XX դարի ընթացքում ՀՀ-ում հայտնաբերվել են տարբեր տեսակի քարանյութերի ավելի քան 700 հանքավայրեր [24]:

ՀՀ քարանյութերի ընդհանուր պաշարների մեջ իրենց նշանակությամբ առանձնանում են **տուֆաքարերը**, որոնք ունեն ֆիզիկամեխանիկական և դեկորատիվ լավագույն հատկանիշներ: Դրանց երկրաբանական պաշարները գնահատվում են 2-2.5 մլրդ մ³ [նույն տեղում]: **ՀՀ-ում հայտնաբերված են տուֆաքարերի ավելի քան 110 հանքավայրեր:** Առանձնացվում են հանքավայրերի 14 դաշտեր ու խմբեր, որոնցից են Արթիկինը, Թալինինը, Անիպեմզայինը, Բյուրականինը, Ազարակինը, Մերձերևանյանը և այլն: **Գերակշռություն կարդագույն, կարմրավուն, դեղնադարչնագույն և սև տուֆերը:** Զգալի են նաև ֆեղիտային տուֆերի պաշարները (Նոյեմբերյան, Եղեգնաձոր և այլուր): Իրենց պէտրոգրաֆիական և ֆիզիկամեխանիկական հատկանիշներով **Հայաստանի տուֆերը բաժանվում են Արթիկի, Երևանյան, անիպական, Բյուրականի և ֆեղիտային տիպերի:** ՀՀ տուֆի հանքավայրերի մեծ մասը գտնվում է անմիջապես երկաթուղուն մոտ կամ դրանից 10-20 կմ հեռավորության վրա, ապահովված է խճուղային ճանապարհով [28]: Պակաս նպաստավոր չեն նաև լեռնարդյունահանման վերգետնյա աշխատանքային պայմանները, որոնք ապահովում են հանքավայրերի օգտագործման շահավետությունը:

ՀՀ-ում հրաբխային ապարատեսակներից ամենալայն տարածումն ունեն բազալտները և դրանց տարատեսակները: Դրանք հզոր շերտով տարածված են ՀՀ հյուսիս-արևմուտքում, Գեղամա լեռնաշղթայում, Արագածի լանջերին, Վարդենիսի լեռնաշղթայի հյուսիսարևելյան մասում և Որոտան գետի ձախափնյա ավազանում: Երկրաբանական պաշարները (անդեղիտների և անդեղիտաբազալտների հետ միասին) գնահատվում են 125 մլրդ խմ [28]: **Բազալտն արժեքավոր շինանյութ է, ձուլման միջոցով նրանից ստանում են նաև էլեկտրական մեկուսիչներ, հրակայուն անոթներ:** Այն անհիշելի ժամանակներից Հայաստանում

օգտագործվել է բնակավայրերի, անառիկ բերդերի, պարիսպների, եկեղեցական շինությունների կառուցման համար: ՀՀ-ում ընդարձակ տարածում ունեն (Անիի, Արգնու, Կապուտանի, Մեղրուտի, Վանաձորի, Խնձորուտի) նաև **անդեգիտներն ու անդեզիտաբազալտները**, որոնք բազալտներից տարբերվում են համեմատաբար թերթությամբ, ծակոտվենությամբ և բարձր թթվայնությամբ:

Հայաստանի քարանյութերի շարքում առանձնահատուկ տեղ ունեն **գրանիտները**, որոնց պաշարները գնահատվում են ավելի քան 30 մլն խմ [24]: Հայտնի են **Փամբակ-Դեբեղի ավազանի**, **Մեղրու**, **Կապանի**, **Սիսիանի**, **Հրազդանի տարածաշրջանների հանքավայրերը**: Շահագործվող խոշոր հանքավայրը Փամբակի հանքավայրն է, որի գրանիտը դասվում է բարձրորակ դեկորատիվ գրանիտների շարքին: **Հեռանկարային մեծ նշանակություն ունի Լերմոնտովի գրանիտի հանքավայրը**: Հնուց ի վեր գրանիտը Հայաստանում օգտագործվել է հուշարձանների պատրաստման համար: Ներկայումս դրանք լայնորեն օգտագործվում են նաև շինարարական նպատակների համար:

ՀՀ քարանյութերի շարքում ուրույն տեղ ունեն **մարմարները**: Սրանք դեկորատիվ և ֆիլիկամեխանիկական հատկությունների շնորհիվ յուրահատուկ տեղ ունեն բնական քարանյութերի մեջ և հանդիսանում են գեղազարդային արժեքավոր շինանյութ: **Հայտնի են Աղվերան-Արգարանի հանքավայրերը**, որոնց մարմարը բնութագրվում է բազմերանգ գույներով (սպիտակ, վարդագույն, դեղնավուն) [1]: Բարձրորակ և նրբագեղ մարմարով աչքի է ընկնում **Խորվիրապի հանքավայրը**, որի պաշարները համեմատաբար փոքր են: Արժեքավոր են նաև **օնիքսանման մարմարները**, որոնք հանդիպում են Մարմարաշեն, Արևշատ (Արտաշատի տարածաշրջան) և Հանքավան գյուղերի մոտ [1]: Այժմ գործնական նշանակություն ունեն Արարատի, Խորվիրապի, Իջևանի, Ենոքավանի և Աղվերանի հանքավայրերը: Հայկական մարմարը լայնորեն օգտագործվել է Երևանի, Սոսկվայի և Խորիրդային Միության բազմաթիվ խոշոր քաղաքների ճարտարապետական շատ կառույցնե-

թի ներքին հարդարման համար: Բացառիկ շինանյութ է նաև ներքին հարդարման աշխատանքներում օգտագործվող **հայկական կոնգլոմերատը**: Առավել հայտնի է Իջևանից ոչ մեծ հեռավորության վրա գտնվող հանքավայրը:

Հայաստանը հարուստ է տարբեր տեսակի և որակի **կրաքարի** պաշարներով: Մեծ նշանակություն ունի **Արարատի հանքավայրը**, որի հումքի վրա հենված են ՀՀ-ում ցեմենտի, կրի ու կարբիդի արտադրությունները: Նշանակալից են **Զազուտի, Սպիտակի, Հրազդանի և Իջևանի հանքավայրերը**:

ՀՀ տարածքը հարուստ է նաև հրաբխային ծագման թերև լցանյութերի՝ հրաբխային խարամների, պեմզայի ու պեղլիտների պաշարներով: ՀՀ-ում հայտնաբերված և հետազոտված են հրաբխային խարամների 30-ից ավելի հանքավայրեր [24]: Հայտնի են Ախուրյանի, Բաղրամյանի, Թալինի, Արթիկի, Գորիսի, Սիսիանի, Վայքի, Գավառի տարածաշրջանները: Շահագործվող հանքավայրերից խոշորագույնը **Կարմրաշենին** է: Նշանավոր են նաև Քարահունջի, Շինուհայրի, Գավառի, Լճաշենի, Պեմզաշենի ու այլ հանքավայրեր: Հրաբխային ժայթքման արդյունք է նաև **պեմզան**: Այն լայն կիրառություն ունի նաև կաշվի, ռետինի, ապակու, ձենապակու արդյունաբերության մեջ:



Քարտեզ 3. ՀՀ օգտակար հանածոները

Տարբեր բնագավառներում օգտագործվում է նաև որպես արժեքավոր հղկանյութ: **ՀՀ-ում հայտնաբերված են պեմզայի շուրջ 70 հանքավայր** [նույն տեղում]: Հայտնի են **Անիպեսզայի** և **Պեմզաշենի** հանքավայրերը: Հակայական պաշարներ կան նաև Ախուրյանի, Աբովյանի, Աշտարակի, Գուգարքի տարածաշրջաններում:

Հայաստանում ավելի խոշոր պաշարներ ունեն **Լիթոփիդային պեմզաները**, որոնք ավելի քիչ ծակոտվեն են, ավելի կարծր ու ամուր: Օգ-

տագործվում են երկաթբետոնյա հավաքովի կոնստրուկցիաների արտադրության համար:

Մեծ պահանջարկ ունեցող քարանյութերից են նաև **պեղիտները**, որոնք արտաքուստ նման են օբյեկտային, հանդես են զալիս ավագի և խճի տեսքով: Կիրառվում է շինանյութերի արդյունաբերության մեջ և ամենատարբեր բնագավառներում: Մեծ պահանջարկ է վայելում միջազգային շուկայում: ՀՀ-ում հայտնաբերված են պեղիտների տասնյակ հանքավայրեր, որոնք հիմնականում գտնվում են Արովյան-Հրազդան հանգույցում ու Արագածի լեռնալանջերին: Աշխարհում ձանաչում ունի **Արագածավանի** հանքավայրը:

Ապակենման, բազմերանգ լեռնային ապար է **օբյեկտիանը**: Ժողովուրդն այն կոչում է «սատանայի եղունգ»: Սրանց պաշարները հանդիպում են պեղիտի հետ միասին: Դրանք հիմնականում սև գույնի են, սակայն կան նաև շատ այլ երանգներ ունեցող օբյեկտիան:

Ոչ մետաղային հանածոներից ՀՀ-ում հայտնաբերվել են նաև **ռիատումիտի**, **բենտոնիտների** ու **բարիտի** հարուստ պաշարներ, որոնք կիրառություն ունեն արդյունաբերության և գյուղատնտեսության ամենաբազմազան բնագավառներում: Դիատոմիտը, բացի ցեմենտի արդյունաբերության մեջ օգտագործվելուց, լայն կիրառություն ունի քիմիական և սննդի (շաքարի) արդյունաբերությունում՝ որպես լավագույն գտիչ: Գլխավոր հանքավայրերն են Փարպին և Նուռնուսը: Արժեքավոր են Իջևանի տարածաշրջանի **բենտոնիտային կավերը**: Սրանք լայն կիրառություն ունեն նավթարդյունաբերության և երկրաբանության մեջ, ինչպես նաև օգտագործվում են որպես մաքրազարդող նյութ: Տնտեսական մեծ արժեք են ներկայացնում նաև ՀՀ տարբեր շրջաններում հայտնաբերված քիմիական արդյունաբերության համար լավ հումք ծառայող **հանքային ներկանյութերը**, որոնցից աշքի են ընկնում Մեծավանի և Տանձուտի հանքավայրերը:

Քիմիական կարևոր հումք է նաև **քարաղը**, որն ունի խոշոր պաշարներով երկու հանքավայր (Երևան և Արմավիր):

ՀՀ-ում կան նաև **գունագեղ արժեքավոր քարերի** (ազար, հասպիս, օնիքս) պաշարներ (Իջևանի, Տավուշի և Տաշիրի տարածաշրջաններում), որոնց արդյունահանումն ու արդյունաբերական մշակումը կարող են մեծ օգուտ բերել:

ՀՀ-ում բացակայում են արդյունաբերական նշանակության վառելիքային ռեսուրսները, ինչը, անկասկած, տնտեսական զարգացմանն արգելակող գործոն է: Այդուհանդերձ, ՀՀ-ում հայտնաբերվել են տորֆի, գորշ ածխի, քարածխի և այրվող թերթաքարերի պաշարներ: Գորշ ածխի հայտնաբերված 32 հանքավայրերից ուշադրության արժանի են Զաշոտի և Շամուտի, քարածխի՝ Իջևանի և Ջերմանիսի, այրվող թերթաքարերի՝ Դիլիջանի, Արամուսի ու Բանդիվանի հանքավայրերը:

Այսպիսով՝ ՀՀ-ում հայտնաբերված հանքային հարստությունները և դրանց բազմազանությունը բնատեսութասային կարևորագործ ներուժ են ոչ միայն արդյունաբերության տարբեր ճյուղերի ձևավորման ու զարգացման, այլ նաև ամբողջ տնտեսության զարգացման և տարածքային կազմակերպման համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ բաշխվածություն և ի՞նչ տնտեսական նշանակություն ունեն ՀՀ-ում առկա մետաղային ռեսուրսները:

2. Կատարե՛ք ՀՀ մետաղային ռեսուրսների վերլուծություն և քարտեզագրում:

3. Ինչպիսի՞ բաշխվածություն և ի՞նչ տնտեսական նշանակություն ունեն ոչ մետաղային ռեսուրսները ՀՀ տնտեսության մեջ:

4. Կատարե՛ք ՀՀ ոչ մետաղային ռեսուրսների վերլուծություն և քարտեզագրում:

5. ՀՀ մարզի օրինակով կատարե՛ք ընդերքի ռեսուրսների վերլուծություն և գնահատում:

6. Ձեր կարծիքով ՀՀ-ն ընդերքի ռեսուրսների օգտագործման ի՞նչ ուազմավարություն պետք է վարի:

2.4. Հողային ռեսուրսները

Հայաստանը սակավահող երկիր է: ՀՀ-ում առանձնացված են հողերի 15 գենետիկական տիպեր, տասնյակ ենթատիպեր, բազմաթիվ սեռեր, տեսակներ ու տարատեսակներ: Առանձնացված 15 հողատիպերից 8-ն ունի գոտիական բնույթ և զբաղեցնում է ՀՀ ընդհանուր տարածքի 91 %-ը, ինտրազոնալ հողերի տարածքը չի անցնում 9 %-ից [10]:

Սահմանափակ անտառապատվածության պայմաններում անտառյին ծագում ունեցող հողերը ՀՀ-ում զբավում են զգալի տարածք՝ 632 հազ. հա կամ ցամաքի 22.4 %-ը: Այս փաստը թույլ է տալիս հաստատել պատմական հիշատակարաններում հանդիպող վկայություններն այն մասին, որ ոչ վաղ անցյալում Հայաստանի տարածքի զգալի մասը ծածկված է եղել անտառներով [նույն տեղում]:

Առավել մեծ տարածում ունեն լեռնային սևահողերը, անտառյին դարչնագույն, լեռնային շագանագույն, լեռնամարգագետնային և լեռնային մարգագետնային-տափաստանային հողերը՝ զբաղեցնելով մեր երկրի տարածքի 85 %-ը:

«Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն» սկզբնադրյուրի նյութերի հիման վրա ներկայացնենք ՀՀ-ում առավել մեծ տարածում և կարևորություն ունեցող հողատիպերի բնութագիրը՝ տալով դրանց գույղատնտեսական գնահատականը:

1. **Վիսահանապատային գորշ հողեր:** Մրանք զբաղեցնում են Կարմրաշենի և Եղվարդի սարավանդների ցածրադիր, փոքրաթեք բլրաափավոր հարթությունների, Երանոսի և Ուրծի լեռների ստորին ձյուղավորությունների 800-1050 մ բարձրության տարածքները: Առանձին կողյակներով տարածվում են նաև Արարատյան դաշտում՝ Արմավիր, Խոր Վիրապ և Դահնա ժայռապատ բլուրների շրջանում: Զբաղեցնում են սահմանափակ տարածություն (շուրջ 65 հազ. հա) և զուրկ են զրունակային սնուցումից:

Մրանք հումուսից աղբատ են (1-2 %), բայց հարուստ են կրով, մեծ մասամբ քարքարոտ են և սովորաբար լինում են փոշիացած: Ինտենսիվ պարարտացման ու ոռոգման շնորհիվ այս տիպի հողերը երկարատև մշակման և ոռոգման հետևանքով փոխել են իրենց բնական հատկանիշները, հարստացել են հումուսով, ձեռք են բերել կնձիկային կառուցվածք և վերածվել են արգավանդ կուլտուր-ոռոգելի հողերի: Արարատյան դաշտի առանձին հատվածներում գրունտային ջրերը գոլրշանալով առաջացնում են **աղուտներ**, որտեղ աճում են միայն աղասեր բույսեր: Շամիրամի և Կարմրաշենի սարավանդներում առանձնանում է կիսաանապատային հողերի հատուկ տիպ, այսպես կոչված՝ «դրեր», որոնք առաջացել են հիմնականում լավաների վրա:

Աղուտակ 4

Հայաստանի Հանրապետության տարածքում առանձնացված հողատիպերն ըստ տարածքի¹

Հողատիպը	Տարածքը	
	հազ. հա	%-ով
Լեռնամարգագետնային	368	13,0
Մարգագետնային-տափաստանային	360	12,8
Անտառային գորշ	93,0	3,3
Հումուսային-կարբոնատային	8,5	0,3
Անտառային դարչնագույն	531,0	18,8
Լեռնային սևահողեր	730,0	25,9
Մարգագետնային-սևահողային	12,8	0,4
Լեռնաշագանակագույն	423,0	15,0
Կիսաանապատային գորշ	64,7	2,3
Ոռոգելի կիսաանապատային (կուլտուր-ոռոգելի)	81,5	2,9
Ամորֆ-ալկալի	7,6	0,3
Աղուտ-ալկալի	25,0	0,9
Գետահովտային-մարգագետնային	35,2	1,2

¹ Տե՛ս Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխահագրություն, Երևան, 1971, էջ 222:

Գետահովտային-ձահճային	17,6	0,6
Սևանա լճի հողագրունտներ	16,4	0,6
Խիստ քարքարոտ էրոզիայի ենթարկված հողեր՝ ապարների կրմալեքսով	48,0	1,7
Զրածածկ տարածքներ	152,0	-
Ընդամենը հողեր	2822,0	100

2. Ոռոգելի մարգագետնային կիսաանապատային (կուլտուր-ոռոգելի) հողեր: Սրանք ձևավորվել են Արաքս գետի և նրա ձախակողմյան վտակների բերվածքների վրա մարդու դարավոր ակտիվ ներգործության պայմաններում: Հիշյալ հողերը գրավում են Արարատյան դաշտի 800-900 մ բարձրության՝ Արաքս գետի և Արմավիրի, Ներքին Հրազդանի ու Արտաշատի ջրանցքների միջև պարփակված տարածքը (81,5 հազ. հա), բայց հանդես են զալիս համեմատաբար խոշոր զանգվածներով: Իրենց բնական վիճակով, առավելապես բազմադարյան ոռոգման ու պարարտացման պայմաններում աչքի են ընկնում բարձր բերքատվությամբ: Այստեղ մելիորացման ու ոռոգման դեպքում ստացվում է խաղողի, կորիզավորների, բանջարաբռատանային և ջերմասեր այլ մշակաբույսերի բարձր բերք:

3. Լեռնաշագանակագույն հողեր: Տարածված են հանրապետության նախալեռնային գոտում (հյուսիս-արևելքում մինչև 800, իսկ հարավում՝ 1300-1700 մ բարձրությունների վրա): Մեծ զանգվածներով հանդիպում են Արագած-Գեղամա լեռնալանջերում, Վայրում և Զանգեզուրում, Թալինի, Աշտարակի, Արովյանի, Արարատի, Եղեգնաձորի, Վայքի և Սիսիան տարածաշրջանների տարածքներում: Սրանք լեռնային սևահողերի հետ միասին կազմում են հանրապետության երկրագործության հիմնական բազան, գրավում են շուրջ 423 հազ. հա (15 %-ը), գուրկ են գրունտային խոնավացումից:

Պիտանի են հացահատիկայինների մշակման, արհեստական ոռոգման դեպքում՝ ծխախոտագործության, պտղաբուծության ու այգե-


գործության համար, հյուսիս-արևելքում՝ թզենու, նոենու, ձիթենու, արևելյան խուրմայի աձեցման համար:

4. Լեռնային սևահողերը: Առավելապես տարածված են Արարատյան գոզավորության, Շիրակի և Լոռիա դաշտերի, Սևանի ավազանի և Զանգեզուրի փոքրաթեք սարավանդների և համեմատաբար մեղմ թեքության լեռնալանջերի 1300-2400 մ բարձրությունների վրա: Ոռոգելի մարգագետնային հողերից հետո լեռնային սևահողերը առավել իրացված տիպն են, որոնք զյուղատնտեսությունն արդյունավետորեն օգտագործում են: Դա պայմանավորված է ոչ միայն գոտու բիոկիմայական նպաստավոր պայմաններով, այլև ուշիեթի համեմատաբար թույլ մասնատվածությամբ և հենց այդ հողերի բարձր բերրիությամբ: **Զբաղեցնում** են ՀՀ հողային ծածկույթի գրեթե 26 %-ը (կամ 730 հազ. հա): Բնութագրվում են հումուսի զգալի պարունակությամբ (4-11 %), կավավազային կամ թեթև կավային մեխանիկական կազմով, գիպսի բացակայությամբ: **Հողաշերտի հզրությունը հասնում է մինչև 75 սմ-ի:** Սևահողային շրջաններում առավել լավ բերք են տալիս հացահատիկի, ճակնդեղի, կարտոֆիլի, կերային մշակաբույսերի, ծխախոտի, ինչպես նաև որոշ պտղասունների մշակությունը:

5. Անտառային հողեր: Մարգագետնացված և տափաստանացված հողատեսակների հետ միասին գրավում են շուրջ 632 հազ. հա տարածք և ներկայացված են երեք գենետիկական տիպերով՝ դարչնագույն, գրշ և հումուսակարբոնատային: **Անտառային դարչնագույն հողերը** մեծ զանգվածներով հանդիպում են Փոքր Կովկասի հյուսիսային և հարավային կտրտված լեռների մինչև 1500 մ բարձրության տարածքում և գրաղեցնում են 531 հազ. հա: Սևահողերի համեմատությամբ սրանց բերրիությունը նկատելիորեն պակաս է: **Անտառային բուսականությունից գերծ տարածություններում համեմատաբար լավ բերք են տալիս պտղուղները, ծխախոտը, հացահատիկը:**

6. Մարգագետնատափափաստանային հողերը: Տափաստանային և լեռնամարգագետնային հողերի փոխանցման շրջանում՝ 1800-2400 մ

բարձրության տարածքների մարզագետնատափաստանային բուսական ծածկույթի տակ, զարգանում է հիշյալ հողային տիպը: Խոշոր զանգվաճներով հանդիպում է Հայկական հրաբխային բարձրավանդակի ու Փոքր Կովկասի լեռնաշղթաների միջին գոտում և գրավում է 360 հազ. հա (տե՛ս Քարտեզ 4-ը):



Այս հողերը բնութագրվում են հումուսի համեմատաբար բարձր պարունակությամբ՝ 8-13 %, կրագերծությամբ, մանր կավաշավազային կամ կավային մեխանիկական կազմով: Հարմար են հացահատիկների և որոշ խոտարույսերի մշակման համար:

7. Լեռնամարգագետնային հողերը ձևավորվում են Փոքր Կովկասի և հրաբխային բարձրավանդակի 2000-2400 մ վեր տարածվող սարահարթերի ու մասնատված լեռնալանջերի շրջանում (տե՛ս Քարտեզ 4-ը) կարճատև գով ամառներով և խոր ձյունածածկ ունեցող երկարատև դաժան ձմեռներով կլիմայի պայմաններում: Զբաղեցնում են շուրջ 370 հազ. հա մակերես (ՀՀ տարածքի 13 %-ը): **Այս տիպի հողերը երկրագործության մեջ գրեթե չեն օգտագործվում,** բայց սրանց բաժին է ընկնում ամառային արոտավայրերի ու խոտհարքների մեծ մասը: Բերիխության բարձրացման կարևոր միջոցառումներից են կրայնացումը, պարարտացումը և հակաբռնդին միջոցառումների կիրառումը: Այս գոտին ՀՀ ամառային արոտավայրերի գլխավոր շրջանն է:

8. Գետահովտային հողեր: Լեռնային գետերի հովիտների, նրանց դարավանդների և Սևանա լճի առափնյա տարածքների այսուվիալ, այսուվիալ-պրոյուսվիալ և այսուվիալ-լճային նստվածքների վրա զարգանում են խոնավացման տարբեր ռեժիմներ ունեցող հողեր, որոնք դասվել են գետահովտային մեկ ընդհանուր խմբի մեջ: Սրանք զբաղեցնում են շուրջ 52 հազ. հա տարածք և սովորաբար ոչ մեծ զանգվածներով հանդիպում են բոլոր գետերի հովիտներում: Սակայն գետահովտային հողերը մեծ զանգվածներով տարածված են Սևանա լճի հարավային և հարավարևելյան առափնյա թեք հարթություններում: Այդ հողերը օգտագործվում են հացահատիկի, բանջարանոցային և տեխնիկական մշակաբույսերի աճեցման համար:

9. Արարատյան դաշտի, ինչպես նաև Մասրիկի հովտի որոշ տարածքներում, որտեղ հանքայնացված գրունտային ջրերը մոտ են հողի մակերեսին (1-3 մ), երկրագործության համար բարենպաստ չերմային ռեժիմի պայմաններում զգալի հետաքրքրություն են ներկայացնում

ավտոմոբիլ-ալկալի և աղուտ-ալկալի (ալկալի-աղակալած) հողատիպերը, որոնց մակերեսը հասնում է 25 հազ. հա-ի: Բնական վիճակում սրանք պիտանի չեն ո՞չ դաշտավարության և ո՞չ էլ այգեգործության համար, սակայն աղազերծումից հետո դառնում են օգտակար: Այստեղ աճում են մի շարք ջերմասեր արժեքավոր մշակաբույսեր: Ալկալի հողերի աղազերծումն ու յուրացումը կատարվում են գիպսացման և գործարանային թթու թափուկների՝ ծծմբական թթվի կամ երկաթի սուլֆատի օգնությամբ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ է հողը համարվում գյուղատնտեսության զիսավոր արտադրամիջոցը:
2. ՀՀ հողատիպերի բազմազանությունը տնտեսական ի՞նչ նշանակություն ունի:
3. Տվե՛ք ՀՀ հիմնական հողատիպերի գյուղատնտեսական գնահատականը:
4. Կատարե՛ք ՀՀ առանձին տարածքների հիմնական հողատիպերի վերլուծություն:
5. Հողային ռեսուրսների օգտագործման ի՞նչ հիմնախնդիրներ կան ՀՀ-ում:

2.5. Զրային ռեսուրսները

ՀՀ զրային ռեսուրսները հիմնականում ձևավորվում են նրա տարածքում և կազմում են մոտ 47 մլրդ խմ, որից ազգային պաշարները՝ 35.86 խմ [44]: Ուելեֆի բնույթը պայմանավորում է խոնավության անհավասարաչափ բաշխումը նրա տարածքում. համեմատաբար խոնավ շրջանների կողքին հանդիպում են չորային շրջաններ: **Խոնավության հորիզոնական տեղաբաշխման տեսանկյունից Հայաստանի տարածքը բաժանվում է երկու մասի:** Դրանց միջև սահմանն անցնում է մոտավորապես Շիրակի, Փամբակի, Արեգունու և Սևանի լեռնաշղթաների գծով [33]: Այդ սահմանից հյուսիս ՀՀ համեմատաբար խոնավ շրջաններն են, իսկ հարավ՝ չորային: Արարատյան և Սևանի գոգավորություններում կան առանձին շրջաններ, որտեղ չորությունը հասնում է իր բարձր աստիճանին:

ՀՀ-ում տեղումներից ստացվող ջրի ամբողջ քանակի կեսից ավելին՝ 10.0 կմ³ (54.1 %-ը), գոլորշանում է, իսկ 45.9 %-ը (8.5 կմ³) առաջացնում է ստորերկրյա ու մակերևությային հոսք: Գերակշռում է ստորերկրյա հոսքը [10]: Զրային հաշվեկշռի այս տվյալներն արտահայտում են միայն միջին մեծություններ: Դրականում ՀՀ տարրեր ֆիզիկաաշխարհագրական շրջաններում շրային հաշվեկշռի կառուցվածքի ցուցանիշները և նրա առանձին տարրերի բացարձակ մեծությունները խիստ տարրերվում են միջիններից:

ՀՀ-ում կան 1700-ից ավելի գետեր և գետակներ, այդ թվում՝ նաև երրորդ և չորրորդ կարգի վտակները: Դրանց մեծամասնությունը փոքր է (մինչև 10կմ) և մշտական հոսք չունի: **Համեմատաբար մեծ գետերի** (10 կմ-ից ավելի) թիվը հասնում է 203-ի, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է ավելի քան 5000 կմ [10]: Գետերը կարծ են, շրահավաք ավագանները՝ փոքր: Եթե չհաշվենք Արաքս և Ախուրյան սահմանային գետերը, ապա ՀՀ գետերից ամենաերկարներն են Դեբեդ (Փամբակի հետ միասին), Հրազդանը, Որոտանը: Մնացածներից յուրաքան-

յուրք ՀՀ սահմաններում ունի 100 կմ-ից պակաս երկարություն: Առավել ընդարձակ ջրահավաք ավագանով աչքի են ընկնում Դեբեղը, Ախուրյանը (առանց Թուրքիայի մասի), Սևջուրը (Քասաղի հետ միասին) և Հրազդանը: ՀՀ-ում բացակայում են կենտրոնացված, շատ թե քիչ հզոր ջրահոսքերը: Ամենաջրառատը Սևջուրն է, որը սնվում է Արազածի ստորոտներում փոված, հրաբխային լավաների տակից բխող հզոր աղբյուրներից առաջացած Մեծամոր լճից, ծախսը 33.1 խոր. մ/վրկ է:

Աղյուսակ 5

Հայաստանի Հանրապետության ջրային հաշվեկշիռը¹

Ներկայացնելու ժամանակաշրջան	Կառավարության կողմանից ստորագրությունը	Հոսքը		Վետակացնելու դաշտական համարը	Վետակացնելու դաշտական համարը	Անդամական գործադրությունը		
		Ասորելելիքայի առավելագույն համարը	Մակերեսային առավելագույն համարը					
		Ասորելելիքայի առավելագույն համարը	Մակերեսային առավելագույն համարը					
620 18,5	285 8,5	145 4,3	51	140 4,2	49	335 10,0	480 14,3	0,30

Ծանոթություն. համարիչը՝ մմ, հայտարարը՝ կմ³:

Արան հաջորդում են Արփան, Որոտանը, Հրազդանը, Աղստևը [10]:

ՀՀ գետերի մեծ մասում, որտեղ սնումը ձևահալքային-անձրևային է, առավելագույնը հոսքը (տարեկանի հոսքի 50-70 %-ը) անցնում է

¹ Տե՛ս Հայկական ՍՍՌ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1971, էջ 201:

գարնան երեք ամիսներին, իսկ նվազագույնը՝ ձմռանը՝ 7-13 %: Գետերի գումարային տարեկան հոսքի այդպիսի բաշխվածությունը տնտեսական օգտագործման տեսանկյունից բարենպաստ չէ: Վարարման երեք ամիսներին (ապրիլ, մայիս, հունիս) բաժին է ընկնում ամբողջ մակերեսային հոսքի շուրջ կեսը, մինչդեռ ջրի ամենամեծ պահանջի ժամանակ՝ ամռանը և աշնան սկզբին՝ ընդամենը 20 %-ը: Նոյնիսկ միջին խոնավության տարիներին ամռանը ՀՀ-ում ջրի պակասը մոտենում է 1 մլրդ մ³-ի [28]: Առաջիկայում օգտագործման աճի պայմաններում այդ պակասն ավելի կմեծանա: ՀՀ գետերի մեծ մասի ռեժիմը խփառ անկայուն է: Անհրաժեշտ է կառուցել արհեստական ջրամբարներ և դրանցում կուտակել խոնավ շրջանի ջրերը:

ՀՀ-ում գետերի բազմամյա միջին տարեկան հոսքը կազմում է 7.1 մլրդ մ³ [33], որի մեծագույն մասը հոսում է գարնան ամիսներին: Սակայն տարեկան և սեզոնային կարգավորման համար խոշոր ջրամբարների կառուցումը պահանջում է ընդարձակ գետահովիտներ, որոնք ՀՀ-ում շատ չեն: Առկա հարմարավետ գետահովիտների հատակային մասերը, որպես կանոն, զբաղված են արթերավոր մշակովի հողերով, որոնք ՀՀ սակավահողության պայմաններում ջրի տակ թողնելը նպատակահարմար չէ: Բացի այդ՝ գլխավոր գետերի հոսքի տատանումները տարվա ընթացքում տեղի են ունենում գրեթե միաժամանակ, որն անհնար է դարձնում հոսքի միջավագանային կարգավորումը: Առավել մեծ են Հրազդանի հնարավորությունները, որի հոսքը Սևանի շնորհիվ ունի տարեկան և բազմամյա կարգավորում [28]:

ՀՀ ջրային ռեսուրսների ընդհանուր պաշարում կարևոր դեր ունեն **ստորերկրյա ջրերը**: Հայտնաբերված են 11 ջրավագաններ՝ 50 մլրդ մ³ ջրի ստատիկ պաշարներով: Մի քանի միլիարդ մ³-ի են հասնում դինամիկ պաշարները, որոնք տնտեսական օգտագործման առումով առաջնահերթ կարևորություն են ներկայացնում: **Առավել խոշոր են Արարատի, Լոռի, Մասիսի և Փամբակի ստորերկրյա ջրավագանները** [նույն տեղում]: Մեծագույն հարստություն են հանքային բուժիչ ջրերը, որոն-

ցով բավական առատ է ՀՀ-ն: Այստեղ հանդիպում են հանքային ջրերի տարրեր բաղադրության 250 խմբեր (մոտ 700 աղբյուրներ), որոնց օրական ընդհանուր դեբիտը կազմում է 60 մլն լ [նույն տեղում]:

Արյունական 6

*Հայաստանի Հանրապետության գյուղական գետերի
հիմնական ցուցանիշները [44]*

Գետի անվանումը	Երկարու- թյունը ՀՀ- ում, կմ	Ջրահա- վաք մակերե- սը, քլմ	Միջին տարե- կան ել- քը, մ³/վ	Միջին տարե- կան հոսքը, մլրդ մ³	Միջին թերու- թյունը, %
Արաքս	192	22100	73.5	2.33	-
Ախուրյան	186	9650	13.9	0.44	5.7
Դեբեղ	154	3790	26.5	0.84	11.0
Հրազդան	141	2560	5.96	0.19	7.6
Որոտան	111	2000	12.7	0.40	21.0
Արփա	92	2080	13.5	0.43	24.0
Քասախ	89	1480	3.79	0.12	29.0
Փամբակ	84	1370	10.1	0.32	13.0
Աղստև	81	1730	7.74	0.24	31.0
Չորագետ	67	1460	8.17	0.26	22.0
Գետիկ	58	586	3.34	0.11	29.0
Վեղի	58	633	1.59	0.05	33.0
Արգիծի	51	384	4.34	0.14	12.0
Գավառագետ	50	480	3.85	0.12	25.0
Մասրիկ	45	685	3.45	0.11	22.0
Ողջի	43	788	7.29	0.23	68.0
Ազատ	40	572	3.84	0.12	31.0
Մեղրի	36	336	2.11	0.06	63.0

Առավել տարածված են ածխաթթվային (հիդրոկարբոնատային) ջրերը, որոնք կազմում են հանքային ջրերի ընդհանուր պաշարների կեսը: Դրանց են պատկանում Ջերմուկի, Տաթևի, Դիլիջանի, Արարատի և Բջնիի աղբյուրները: Պաշարների շուրջ 1/4-ը բաժին է ընկնում հիդրոկարբոնատարլորդային և քլորիդահիդրոկարբոնատային ջրերին: Հայտնի են Արգնու, Հանքավանի, Լիճքի, Եղեգիսի աղբյուրները:

Իրենց բուժիչ հատկություններով առանձնապես աչքի են ընկնում Ջերմուկի և Արգնու հանքային ջրերը: Առաջինն իր բաղադրությամբ և բուժիչ հատկություններով հիշեցնում է Շեխիայի հանրահոշակ Կարլովի Վարիի ջրերը: Ջերմուկում կան 36 բնական հանքային աղբյուրներ, որոնք մեծ մասամբ ունեն $50\text{--}64^0$ ջերմություն: Բարձր ջերմությունը ունեն նաև Արգնու ($18\text{--}20^0$), Տաթևի ($24\text{--}25^0$), Հանքավանի ($30\text{--}35^0$), Արարատի ($24\text{--}25^0$) հանքային ջրերը: ՀՀ տարածքում գտնվող հանքային ջրերը հնարավորություն են տալիս ստեղծելու հզոր առողջարանային բազա և մեծ չափով ավելացնելու շահլցումը:

Իրենց պաշարներով ստորեկրյա ջրավազաններին զգալիորեն վիճում են վերգետնյա ջրային կուտակումները՝ լճերը: Մոտավոր հաշվարկներով ՀՀ տարածքում կան 300 լճեր, որոնց մի մասը պարերաբար չորանում է: Մշտական լճերի թիվը հասնում է 95-ի [10]: Սևանից բացի՝ հայտնի են Արփի, Մեծամոր, Ալ լճերը, որոնք քիչ թե շատ նշանակալից մեծություն ունեն: Մյուսները բարձր լեռնային փոքր լճակներ են՝ մեծ մասամբ անանուն, ցրված են ՀՀ տարբեր լեռնազանգվածների և լեռնաշղթաների վրա:

Ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս ու մոտ ապագայում համահանրապետական նշանակություն ունեն միայն Սևանի ջրային պաշարները: Ախուրյանի վերնազավառի գյուղատնտեսական ջրամատակարարման համար որոշ նշանակություն ունի Արփի լիճ-ջրամբարը: ՀՀ տարածքի մնացած լճերի դերը չնշին է: Դրանք ունեն լրկ սահմանափակ տեղական նշանակություն: ՀՀ տարածքում կան նաև հարթավայրային լճեր՝ ցածրադիր ու բարձրադիր: Ցածրադիր հարթավայ-

բային լճեր կարելի է համարել Մեծամոր լիճն Արարատյան դաշտում: Բարձրադիր հարթավայրային լճերից են Ղարաբաղի լեռնավահանի լճերի մեծ մասը, մի քանի մանր լճեր, մեծ մասամբ չորացող լճակներ Լոռու դաշտում, նույնատիպ լճեր նաև եռաբլրի սարավանդի վրա [10]:

Աղյուսակ 7

ՀՀ ինշոր ջրամբարները [16]

Անվանումը	Գետավագանը	Ծավալը (մ³ խմ)
Ախուրյանի	Ախուրյանի	525
Սպանդարյանի	Որոտանի	257
Արփի լճի	Ախուրյանի	105
Տոլորսի	Որոտանի	96
Ապարանի	Քասաղի	91
Ազատի	Ազատի	70
Բերքաբերի	Ոսկեպարի	45
Հերհերի	Արփայի	26
Կեչուտի	Արփայի	25
Կառնուտի	Ախուրյանի	24.7
Մարմարիկի	Հրազդանի	24.2
Գեղիի	Որոտանի	15
Շամբի	Որոտանի	13.6
Հախումի	Հախումի	12
Մանթաշի	Մանթաշի	8.2

Հայաստանի լեռնային լճերը թեպետ փոքր են, բայց ունեն որոշակի ջրաբանական նշանակություն: Ավելի մեծ է լեռնային լճերի նշանակությունը ոռոգման և ջրաբբիացման տեսանկյունից՝ որպես բարձր արոտավայրերի ջրամատակարարման աղբյուրներ: Նույնիսկ չորացող լճերն իրենց նշանակությունը չեն կորցնում: Նրանց գոգավորությունները կարող են հանդիսանալ պատրաստի ջրամբարներ՝ ձնհալքի և անձրևային ջրերը կուտակելու համար [նույն տեղում]:

ՀՀ գետերի հոսքը կարգավորելու, ոռոգման հարցերը լուծելու համար կառուցվել և գործում են ավելի քան 80 ջրամբարներ: **Առավել խոշորներից են Ախուրյանի, Սպանդարյանի, Արփի լճի, Տոլորսի, Ապարանի, Ազատի, Բերքաբերի, Հերհերի, Վեչուտի, Կառնուտի, Մարմարիկի, Գեղիի, Շամբի և Հախումի ջրամբարները:**

Տեսանելի ապագայում տնտեսության բազմակողմանի զարգացման և քաղաքային ու գյուղական բնակավայրերի ջրամատակարարումը բավարար մակարդակով կազմակերպելու համար անհրաժեշտ է ջրի ամենախնայողական ու արդյունավետ օգտագործում: ՀՀ-ում ամենաշատ ջուր օգտագործող գյուղատնտեսությունն է:

ՀՀ ջրային ռեսուրսները հիմնականում բավարար են՝ բոլոր արտավայրերը ջրարբիացնելու հեռանկարային ծրագիրն իրականացնելու համար:

ՀՀ լեռնային մակերևույթի պատճառով առկա են ջրային ռեսուրսների օգտագործման առանձնահատկությունների ակնառու շրջանային տարբերություններ, որի պատճառով կատարվել է **ջրատնտեսական շրջանացում**: Առանձնացվել է ութ ջրատնտեսական շրջան [28].

1. Արարատյան գրգավորություն (Քասաղի, Հրազդանի, Սևքի, Ազատի, Վեղիի, Մաստարա սելավի գետավազաններ),
2. Ախուրյանի ավազան,
3. Սևանա լճի ավազան,
4. Դեբեղի ավազան,
5. Հյուսիսարևելյան (Աղստևի, Հախումի, Տավուշի գետավազաններ),
6. Վայքի (Արփայի ավազան),
7. Հյուսիսային Զանգեզուր (Որոտանի ավազան),
8. Հարավային Զանգեզուր (Ողջիի, Շամբի, Մեղրու, Նոնաձորի ավազաններ):

Նշված ջրատնտեսական շրջաններից յուրաքանչյուրի տարածքում ակնհայտ են տեղանքի հիպսոմետրիայով պայմանավորված ներ-

քին տարբերություններ, որոնք ուղղաձիգ գոտիականության բնույթ ունեն:

Զրատնտեսական հիմնավորված շրջանացումը նպաստում է զրային ռեսուրսների միջավագանային վերաբաշխման հարցերի բազմակողմանի, համալիրային և արդյունավետ լուծմանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ զրային ռեսուրսներն ունեն բազմակողմանի տնտեսական նշանակություն:

2. Կատարե՛ք ՀՀ զրային ռեսուրսների և հաշվեկշռի վերլուծություն:

3. Կատարե՛ք ՀՀ մակերևութային հոսքի, ստորերկրյա ջրերի և լճերի զրային պաշարների գնահատում:

4. ՀՀ-ում զրային ռեսուրսների օգտագործման տարածքային ի՞նչ տարբերություններ կան:

5. Կատարե՛ք ՀՀ առանձին տարածաշրջանների կամ մարզերի զրային ռեսուրսների վերլուծություն և գնահատում:

2.6. Կենսաբանական ռեսուրսները

ՀՀ համեմատաբար փոքր տարածքն առանձնանում է կենսաբանական ռեսուրսների խիստ բազմազանությամբ: Բուսականության տիպերի աշխարհագրական տարածումը ՀՀ-ում ենթակա է ուղղաձիգ գոտիանակության օրենքին: Առավել ցածր դիրք են գրավում անապատները և կիսաանապատները, իսկ առավել բարձր վայրերը ծածկված են ալպյան բուսականությամբ: Դրանց միջև տարածված են տափաստանները, մարգագետինները, անտառները և բուսականության այլ տիպեր:

Բացի բուսատեսակների մեծ բազմազանությունից՝ հանրապետության տարածքն աչքի է ընկնում նաև Էնդեմիկ բուսատեսակների բազմազանությամբ: ՀՀ բուսական աշխարհի ներկայացուցիչներից 120 տեսակը էնդեմիկ են: Դրանցից շատերը համաշխարհային գիտությունը կոչում է մեր երկրի և նրա առանձին մասերի անուններով, օրինակ՝ պատուտակ հայկական, ոզնաբռուփ հայկական, օշինդր հայաստանյան, «Հայաստանի արմատ», տորոն, սզնի Զանգեզուրի, կաղնի արարայան և այլն [33]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ տարածքում աճող բնական բուսատեսակների զգալի մասն ունի բուժիչ նշանակություն, և հնուց ի վեր մեր նախնիներն օգտագործել են դրանք այդ նպատակներով:

ՀՀ ցածրադիր մասերում անապատային բուսականությունը գրավում է աննշան տարածություններ. հանդիպում են անապատային տիպի բուսականության մի քանի փոքր կղզյակներ [10]: Առավել տարածված է աղասեր բուսականությունը, որը շատ բնորոշ է Արարատյան դաշտի այսուվիալ տարածություններին: Միջին արաքսյան գոգավորության առավել ցածրադիր վայրերում տարածված է աղուտային և ջրասեր բուսականությունը [նույն տեղում]: Չնայած բուսական ծածկոցի ոչ մեծ խտությանն ու տեսակային կազմի համեմատական աղքատությանը՝ անապատային բուսականության մեջ կան որոշ հազվա-

գյուտ տեսակներ, որոնք մեծ արժեք են ներկայացնում գիտության համար:

Անապատային հողերի զանգվածային հողաբարելավման հետևանքով որոշ տեսակներ իսպառ վերացել են, մի քանիսն էլ գտնվում են անհետացման եզրին: Վերջիններիս թվին է պատկանում **բորակաթուփը**, որն աճում է Երասխահուն գյուղի մոտ գտնվող խիստ աղակալված հողերում: Սա անապատային բուսականության հնաբնակներից է: Ունի տնտեսական խոշոր նշանակություն: Անապատային բուսականության յուրահատուկ տիպ է **ֆրիգանային բուսականությունը**, որին հաճախ անվանում են նաև **լեռնատափաստանային**: Հանդիպում է Վայրում, Մեղրիում (Ուրծի և Երանոսի լեռներ): Հիմնական թփատեսակներն են նշենին և **Պալլասի դժնիկը** [10]:

Արարատյան դաշտի այն շրջաններում, ուր բարձր ջերմային ռեժիմը գուգորդվում է անբավարար խոնավությամբ, կազմավորվում է **կիսաանապատային բուսականությունը**: Ի տարբերություն անապատների՝ այստեղ բուսական համակեցություններում զգալի տոկոս են կազմում կարճակյաց-վաղանցիկ (Էֆեմեր) ձիմ առաջացնող հացազգիները: Կիսաանապատների հսկայական տարածություններ վերածվել են կուլտուրական լանդշաֆտների, իսկ Թալինի և Արովյանի տարածաշրջաններում առ այսօր օգտագործվում են որպես ձմեռային արոտներ: Կիսաանապատային բուսականության կազմում բավականին շատ են **ուտվող (սիրեխ, թրթնջուկ, կապառ), դեղատու (կուսածաղիկ)** բույսերը: Հատկապես ուշադրության արժանի են Արովյանի, Գեղադիրի, Գառնիի, Մուշավանի և Աղավնաձորի կիսաանապատները, որտեղ հանդիպում են վայրի ցորենի, զարու և աշորայի բոստաններ: **Վայրի ցորենի համաշխարհային ֆոնդի 650 այլատեսակներից 230-ն աճում է Հայաստանում** [10]:

Հայաստանի բուսական ծածկույթի ամենատարածված և բնորոշ լանդշատային տիպերից մեկը **տափաստանային բուսականությունն** է, որը տնտեսական առավել մեծ արժեք է ներկայացնում: Դրանք գրա-

վում են միջին լեռնային գոտին՝ ծովի մակարդակից 1200-2000 մ, իսկ եղակի դեպքերում՝ 500-2700 մ բարձրությունները՝ զբաղեցնելով ՀՀ տարածքի գրեթե կեսը: ՀՀ-ում ամենատիպիկ տափաստանային լանդշաֆտները հանդիպում են Շիրակում և Սևանի ավազանում: Այստեղ հիմնականում գերիշխում են փետրախոտային տափաստանները և դրանցից առաջացած այլ տիպերը [10]: Ավելի բարձր գոտիներում հանդիպում են մարգագետնատափաստանային ֆորմացիաները: Տափաստանները մեր գյուղատնտեսության ոսկե ֆոնդն են, սակայն դրանց տարածքները տարեցտարի կրծատվում են: Դրանք դեռևս պահպանվում են Սյունիքում, Շիրակում, Արովյանի, Վայրի և Աշոցքի տարածաշրջաններում:

ՀՀ տարածքի 25 %-ը զբաղեցնում են մարգագետինները, որոնք բաժանվում են երկու մեծ խմբի՝ մերձալայյան և ալայյան [24]: Սրանց տեսակային կազմը չափազանց հարուստ է և անցնում է 10-ից:

Հյուսիսային Հայաստանի անտառային գոտու վերին սահմաններում հանդիպում են մերձալայյան մարգագետինների արտակարգ փարթամ բուսազանգվածներ, որոնք «բարձրախոտ» անվանումն են ստացել:

Ալպյան մարգագետինները սկսվում են լեռնազանգվածների 2700-2800 բարձրություններից: Դրանց ամենաուշագրավ և արժեքավոր այլատեսակը **գորգերն են**, որոնք հանդիպում են համեմատաբար հարք տարածություններում և խոնավ լանջերում: **Ալպյան մարգագետինները զբաղեցնում են շուրջ 88 հազ. հա տարածություն կամ ՀՀ տարածի 3 %-ը:** Բուսական այս համակեցությունը էնդեմիկ երևույթ է և որպես բնության պարզ արժանի է խնամքի ու պահպանության:

Հայաստանի բուսական ռեսուրսների շարքում առանձնահատուկ տեղ են գրավում **անտառները**: Պատմական փաստերը վկայում են, որ Հայաստանի տարածքը հարուստ է եղել բնական սաղարթախիտ անտառներով: Առանձնապես անտառապատ էին Արցախը, Գուգարքը, Սյունիքը, Տայքը և այլ գավառներ: **Միայն վերջին 200 տարվա ընթաց-**

քում անտառների ընդհանուր տարածքը կրճատվել է ավելի քան երկու անգամ [24]: Հետազոտությունները հաստատում են այն կարծիքը, որ Սևանի ավազանը նախկինում համատարած կերպով ծածկված է եղել սաղարթախիտ անտառներով:

Ներկայումս մեր երկիրը համարվում է երկրագնդի անտառազուրկ շրջաններից մեկը և բնակչության մեկ շնչին ընկնող անտառային տարածությամբ գրավում է վերջին տեղերից մեկը: XX դարի 90-ական թվականների սկզբի դրությամբ մեր երկիրի անտառների ընդհանուր տարածությունը կազմում էր 411.3 հազ. հա, որից գուտ անտառներով ծածկված էր 288.5 հազ. հեկտարը, կամ անտառային բուսականությունը գրաղեցնում էր երկրի տարածքի մոտ 12 %-ը: ՀՀ անտառապատվածությունը խիստ անհավասարաշափ է: Հյուսիս-արևելյում անտառապատվածությունը կազմում է 28-30 %, Զանգեզորում՝ 13.2 %, կենտրոնական մասում (առանց Սևանի ավազանի)՝ 20 %, Սևանի ավազանում՝ 0.8 %:

Ընդհանուր առմամբ ՀՀ անտառապատ տարածքի մոտ 37 %-ը և անտառափայտի ընդհանուր պաշարների 55 %-ից ավելին բաժին են ընկնում **հաճարենուն** [28]: Հաճարենու անտառների ներսում և եզրերին լայն տարածված են կաղնու ու կաղնու հետ խառը այլ տեսակների կամ նրանից առաջացած համակեցությունների օջախները: Հյուսիսարևելյան անտառներում, հաճարենուց և կաղնուց բացի, առավել հանդիպող ծառատեսակներից է **բոխին**: Առանձին տիպ են կազմում ստորին լեռնային գոտում տարածված **դաժու** կաղնուտները, նրանք հատուկ են հարավարևմտյան լանջերին և հանդիպում են 750-ից մինչև 1100-1200մ բարձրություններում: Կաղնու և դաժու վեջնական անհետացման դեպքում առաջանում են **շիբյակի տիպի թփուտային մացառուտներ**: ՀՀ հյուսիսային շրջաններում տեղ-տեղ հանդիպում են **սոճու** անտառների ոչ մեծ տեղամասեր: Դրանք սովորաբար գտնվում են 1000-1600 մ բարձրության վրա կամ հազվադեպ բարձրանում են վեր (հայտնի են **Գյուղագարակի և Շահալիի սոճուտները**) [10]:

Զանգեզուրի ներկայիս անտառները պատմականորեն հարևան Ղարաբաղի անտառների հետ միասին ներկայացնում են **հնագույն** վրկանյան անտառների **ածանցուկ**, որը խիստ կերպարանափոխվել է չոր կլիմայի ազդեցությամբ: Ռելիկտային շատ ծառատեսակներ, ինչպես, օրինակ, ձելկովան, մինչև այժմ պահպանվել է Զանգեզուրի անտառային շրջաններում: Զանգեզուրի միջին լեռնային գոտու արմատական բուսականությունը **վրացական կաղնուց** կազմված անտառներն են: Կաղնուտներն աչքի են ընկնում այլ ծառատեսակների մեջ խառնուրդով: Ամենից հաճախ հանդիպում են բոխին, հացենին, վրկանյան թխկին, կովկայան տանձենին, խնձորենին, թեղին, կեռասենին, արևելյան կաղնին [նույն տեղում]: Ծավ գետի ավազանում պահպանվել է **սոսու պուրակը**, որը միակն է ՀՀ-ում: 1000-1900 մ բարձրության վրա, զիսավորապես հյուսիսային դիրքադրման լանջերում տարածված են կաղնու-բոխու և զուտ բոխու **մեզոֆիլ անտառներ**: ՀՀ հարավային մնացած շրջաններում պահպանվել են արևելյան կաղնու անտառների, մեծ մասամբ շատ փոքր կղզիներ (Ապարանում, Բյուրական գյուղից վերև, Սևանի Արեգունու լճեզերին, Վեդի գետի ավազանում և Վայրում) [10]:

ՀՀ անտառներում հանդիպող մյուս ծառատեսակներից առավել աչքի են ընկնում գիհին, հացենին, սոճին, թխկին, լորենին, կեշին:

ՀՀ ընդհանուր անտառային տարածքների մոտ 90 %-ը և ընդհանուր պաշարների 96 %-ը բաժին են ընկնում երեք հիմնական ծառատեսակի՝ հաճարենուն, կաղնուն և բղյուն [24]:

Հայաստանի անտառները պատկանում են **առաջին խմբին**, այսինքն՝ ունեն առանձնահատուկ պաշտպանական նշանակություն, այդ իսկ պատճառով ՀՀ-ում հիմնականում արգելված են հաստումները: Սակայն իրենց նշանակությամբ և տնտեսության վարման ռեժիմով անտառները տարասեր են: Առաջին խմբին են պատկանում քաղաքների, խոշոր արդյունաբերական կենտրոնների, բնակավայրերի, պետական պահպանության տարածքների, դաշտապաշտպան, հողապաշտ-

պան և առողջարանային տնկարկները, ինչպես նաև գետերի, լճերի և ջրամբարների շուրջն ու ափերին գտնվող անտառային զանգվածները: **Այդպիսով՝ ՀՀ անտառների ավելի քան 80 %-ն ունի գուտ պաշտպանական նշանակություն:** Այդպիսի անտառներում թույլատրվում են միայն խնամքի, սանիտարական և անտառավերականգնման նպատակով կատարվող հատումները: Այնուհանդերձ, 1990-ական թվականների առաջին կեսին, ելնելով ՀՀ ստեղծված վառելիքաէներգետիկ ծանր կացությունից, անխնա կերպով հատվել է մեր անտառների զգալի մասը: ՀՀ կառավարությունը և համապատասխան մարմիններն ամեն ինչ անում են անօրինական ծառահատումներին վերջ տալու և կրծատված անտառազանգվածները վերականգնելու ուղղությամբ:

Անտառային ռեսուրսներով առավել հարուստ են Նոյեմբերյանի, Իջևանի, Տավոշի, Կապանի, Թումանյանի և Գուգարքի տարածաշրջանները: Զգալի տեղ է զբաղեցնում նաև Հրազդանի տարածաշրջանը: Թփուտային անտառներ կան Արագածի լանջերին, Արարատյան գոգավորության լեռնալանջերին, Վայրում և այլ վայրերում: Սևանա լճի մակարդակը իջնելու հետևանքով ջրից ազատված ամբողջ տարածքը այժմ զբաղեցնում են արհեստական անտառաշերտերը [24]:

Բացի հիմնական ծառատեսակներից՝ Հայաստանի անտառներում լավ աճում են և տարածված են վայրի պտղատու բազմազան ծառեր՝ ընկույզնի, տանձենի, խնձորենի, սալորենի, հռնի, զկեռենի, սզնի, տկողնի: Անտառներում ամենուրեք տարածված են մասրենու և մոշի թփերը: Սևանի ավազանի արհեստական անտառներում լավ արմատավորվել է փշարմավը [նույն տեղում]: Անտառի ստորին և տափաստանի վերին սահմանների միջև հանդիպում են չորասեր (քսերոֆիլ) նոսր անտառները, հատկապես ասեղնատերև զիհին, որը տեղ-տեղ կազմում է զիհուտներ:

ՀՀ մի շարք բուսատեսակներ ունեն դեղագործական մեծ արժեք, որոնք դեռևս հին ու միջին դարերում և այժմ էլ լայնորեն կիրառվում են ժողովրդական ու պաշտոնական բժշկության մեջ: Դրանք զիհավորա-

պես ալկալոհիդներ, գյուկոզա, եթերայուղեր, պոլիսախարիդներ և բուժական մի շարք այլ նյութեր պարունակող բույսեր են:

Թեև ՀՀ-ն ունի փոքր տարածք, սակայն աչքի է ընկնում կենդանական աշխարհի բազմազանությամբ: Ողնաշարավորների տեսակները ՀՀ-ում հասնում են 451-ի, որից 75-ը կաթնասուններ են, 302-ը՝ թռչուններ, 43-ը՝ սողուններ, 25-ը՝ ձկներ, 6-ը՝ երկկեցաղներ [10, 28]: ՀՀ կենդանական աշխարհի որոշ տեսակներ բնորոշ են միայն Հայկական լեռնաշխարհին և մեր երկրի բուն տարածքին (հայկական վայրի ռջխարք, հայկական եղջերավոր օձը, բեզոարյան այծը, կովկասյան փասխանը և այլն): Իրենց շարժունակության շնորհիվ ՀՀ-ում հանդիպող որոշ կենդանատեսակներ (աղվես, գայլ, նապաստակ, գորշ արջ, ճնձուկ և այլն) տարածված են մեր երկրի գրեթե բոլոր շրջաններում: Սակայն ընդհանուր գծերով կենդանական աշխարհի տարածումը ևս ՀՀ-ում հիմնականում համապատասխանում է լեռնային երկրներում բնական համալիրների փոփոխության վերնթաց գոտիականության օրինաչափությանը:

Վերջին տասնամյակներին ՀՀ-ում բնական միջավայրի վրա մարդու ներգործության բացասական ազդեցությունից գերծ չի մնացել նաև կենդանական աշխարհը: Տարածների տնտեսական յուրացման, ինչպես նաև բնական համալիրի վրա մարդու ներգործության աստիճանի մեծացման պատճառով հանրապետության կենդանական աշխարհը զգալի փոփոխություններ է կրել: Դրան նպաստել են նաև կենդանիների առանձին տեսակների համար կիրառված չհամակարգված որսը և որսագողությունը: Այդ ամենի հետևանքով մեծարժեք շատ կենդանատեսակներ (վայրի ցուլը, ազնիվ եղջերուն, սամույրը, անտիլոպը, մանր ձիերը և այլն) վերացել են, փոխարենը ավելացել են վնասակար մի շարք կենդանիներ (կրծողներ, պարազիտներ, վնասակար միջատներ և այլն) և ավելի մեծ տարածում են ստացել [28]: Կենդանիների առանձին տեսակներ (հայկական մուֆլոնը, ընձառյուծը, բեզոարյան այծը, ցախաքլորը, քարարծիվը, լեռնային հնդկահավը, անտառային կատուն,

գառնանգղը, սև արագիլը, արջը և այլն) հայտնվել են վերացման վտանգի տակ՝ ընդգրկվելով «Կարմիր գրքում»: Անվերահսկելի որսի և ձկնագողության պատճառով վերացել են նաև Սևանի «փշխան» ձկան արժեքավոր տեսակներից: Տասնամյակներ առաջ Լադոզա լճից բերվել և Սևանում կլիմայավարժեցվել է սիզ ձկնատեսակը, որը ներկայումս դարձել է Սևանա լճի հիմնական ձկնատեսակը: Արժեքավոր ձկնատեսակներ են նաև կողակը, Արփի լճի ծածանը, խրամուկին, լեռնային լճերում բազմացող կարմրախայտը, Արաքսի լոքոն, բեղլուն, սպիտակաձուկը:

Վերջին տասնամյակներին ՀՀ տարբեր շրջաններում մարդու տնտեսական գործունեության խիստ մեծացման պատճառով կենդանատեսակներն առավելապես տեղաբաշխվել են լեռնային ու անտառային տարածքներում և դրանց մերձակայքում, զյուղատնտեսական գործունեությունից դուրս շրջաններում: Բացի ՀՀ-ին բնորոշ կենդանատեսակներից՝ Դիլիջանի ազգային պարկում և Խոսրովի անտառներում կլիմայավարժեցվել է դրսից բերված ուսուրական թծավոր եղջերուն, Մեծամորի Ճահճուտներում՝ Ճահճակուլքը: Անապատային և կիսաանապատային շրջանների «կուլտուրականացման» պատճառով զգալիորեն տուժել են նաև այդ տարածքներին բնորոշ կենդանատեսակները, հատկապես սողունները: ՀՀ-ում հաշվում են 30 տեսակի օձեր, որոնցից թունավոր են զյուրզան, եղջերավոր իժը, հայկական իժը և տափաստանային իժը:

Ինչպես ՀՀ բնական համալիրի մնացած տարրերի, այնպես էլ կենդանական աշխարհի պահպանության ու դրանք որպես արժեքավոր ռեսուրսներ օգտագործելու հարցերը խիստ արդիական են:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞վ է պայմանավորված ՀՀ կեսարանական ռեսուրսների բազմազանությունը, և ո՞րն է դրանց տնտեսական նշանակությունը:

2. Գնահատե՛ք ՀՀ բուսական ռեսուրսների հիմնական տեսակները:
3. Գնահատե՛ք ՀՀ կենդանական ռեսուրսների հիմնական տեսակները:
4. Կատարե՛ք ՀՀ անտառային ռեսուրսների վերլուծություն և գնահատում:
5. Կենսաբանական ռեսուրսների պահպանության ի՞նչ աշխատանքներ են տարփում ՀՀ-ում:
6. Կենսաբանական ռեսուրսների օգտագործման ի՞նչ հիմնախնդիրներ կան ՀՀ-ում:

2.7. Ռեկրեացիոն-զբոսաշրջային ռեսուրսները

Վերջին տասնամյակներին աշխարհի շատ տարածաշրջաններում և երկրներում մեծ կարևորություն է տրվում ռեսուրսների այն խմբին, որոնք նպաստում են մարդու առողջության վերականգնմանը (առանձին դեպքերում նաև բուժմանը), հանգստի կազմակերպմանը, հոգեբանափիզիոլոգիական իրավիճակի բարելավմանը, ինչպես նաև զբոսաշրջային պահանջարկի բավարարմանը: Այդպիսի ռեսուրսները, չմասնակցելով նյութական արտադրության գործընթացներին, այդուհանդերձ, էական դեր են խաղում յուրաքանչյուր երկրի տնտեսության զարգացման գործում: Ռեսուրսների այդ խումբը հայտնի է **ռեկրեացիոն-զբոսաշրջային ռեսուրսներ** անունով:

Էկամուտների ավելացումը, բարեկեցության և կրթական մակարդակի բարձրացումը, ինչպես նաև ազատ ժամանակի ավելացումն ավելի ու ավելի շատ մարդկանց հնարավորություն տվեցին ներգրավելու ռեկրեացիոն գործունեության մեջ: Այս ամենի հետևանքով բնակչության ռեկրեացիոն գործունեությունը դարձավ ավելի բազմազան՝ ընդգրկելով նորանոր տարածքներ ու շրջաններ: Մյուս կողմից ուրբանացման աննախադեպ տարածման և զարգացման պայմաններում մարդն ավելի է ձգտում շփվել բնության հետ, փոխել միջավայրը, ազատվել առօրյա հոգսերից և ֆիզիկական ու հոգևոր հոգնածությունից: Մարդկանց մոտ առաջանում է ձգտում և պահանջ՝ շնչելու մաքուր օդ, լինելու բնական լանդշաֆտներում, զգալու տափաստանի ու անտառի անդորրը, զմայլվելու բնության գեղատեսիլ պատկերներով, խմելու սառնորակ աղբյուրների ջուրը և վայելելու լանդշաֆտի բաղադրիչների գրավչությունն ու հրապուրիչ այլ հատկանիշներ:

Ժամանակակից հասարակական առաջնորդացի պայմաններում ռեկրեացիոն-զբոսաշրջային ռեսուրսներն ունեն կենսական նշանակություն, և դրանց օգտագործումը դարձել է կյանքի որակի բարելավման կարևորագույն գործոններից մեկը: Համաշխարհային տնտեսու-

թյան բուռն զարգացման ժամանակակից պայմաններում, երբ առաջին պլան են մղվել շրջակա միջավայրի պահպանության և Էկոլոգիական համամոլորակային հիմնախնդիրները, ուեկրեացիոն ռեսուրսների պահպանումը, վերականգնումն ու արդյունավետ օգտագործումը դարձել են հրատապ:

Ռեկրեացիոն ռեսուրսները բնական և մարդածին օբյեկտներ են, որոնք ունեն եզակիություն, պատմական կամ գեղարվեստական արժեք, գեղագիտական գրավչություն, առողջարարական-կազորության և կարող են օգտագործվել հանգստի ու զբոսաշրջության կազմակերպման համար։ Այդ ռեսուրսները բաժանվում են չորս գլխավոր տեսակի՝ 1. ռեկրեացիոն-բուժիչ, օրինակ՝ հանքային ջրերով բուժում, 2. ռեկրեացիոն-կազորության, օրինակ՝ լողափային շրջանները, 3. ռեկրեացիոն-մարզական, օրինակ՝ լեռնադահուկային բազաները, 4. ռեկրեացիոն-ճանաչողական, օրինակ՝ պատմական հուշարձանները։ Առաջին երկու տեսակներն անվանում են նաև վերականգնողական ռեսուրսներ։

Ռեկրեացիոն ռեսուրսները բաժանվում են երկու խոշոր խմբի՝ բնական և պատմամշակութային։ Բնական-ռեկրեացիոն ռեսուրսներ են ծովափերը, գետերի և լճերի ափամերձ շրջանները, լեռները, անտառները, հանքային ջրերի ելքերը։ Բնական լանդշաֆտները հնարավորություն են ստեղծում հանգստի, սպորտով, որսորդությամբ և ձկնորսությամբ զբաղվելու համար։ Պատմամշակութային ռեսուրսներ են պատմական, հնագիտական, ճարտարապետական, քանդակագործական հուշարձանները։ 1972 թվականից շրջանառվում է համաշխարհային մշակութային և բնական ժառանգություն հասկացությունը։ Այդ ժառանգության ցուցակը լրացվում է տարեցտարի։ ՀՀ-ից այդ ցուցակում ընդգրկվել են Հաղպատի և Սանահինի վանական համալիրները, Ազատ գետի հովիտը և Գեղարդի վանքը, Էջմիածնի Մայր տաճարը և Զվարթնոցի տաճարը։ Առաջիկայում այդ ցուցակում կընդգրկվեն նաև այլ օբյեկտներ։

ՀՀ լեռնային տարածքն իր բազմազան լանդշաֆտներով ռեկրեացիոն-զբուաշրջային գործունեության համար լայն հնարավորություններ է տալիս: **Մեր երկիրն ունի բնական և մարդածին ռեկրեացիոն ռեսուրսների բազմազան տեսակներ:** Բնական ռեսուրսներից կլիման, բուսական ու կենդանական աշխարհը, մակերևութային ջրերը և լանդշաֆտի մի շարք տարրեր ունեն նաև ռեկրեացիոն նշանակություն և կարող են օգտագործվել որպես ռեսուրս:

ՀՀ բնական ռեկրեացիոն ռեսուրսներից գործնական կարևոր նշանակություն ունեն հանքային ջրերի աղբյուրները: Դրանցից լայն ճանաչում ունեն **Ջերմուկի** հանքային տաք աղբյուրների խումբը, **Բջնու, Արգնու, Դիլիջանի, Հանքավանի, Արարատի, Լիճքի աղբյուրները:** Հանքային և թթու աղբյուրներ կան նաև ՀՀ այլ շրջաններում: Բուժման համար օգտագործվող տորֆի պաշարներ կան Լոռու մարզում և Սևանի ավազանում:



Նկ. 1. Զորագետի կիրճը

Նշված հանքային աղբյուրների ջրերը, լեռնային մաքուր օդը, ուլտրամանուշակագույն ձառագայթների բավարար քանակը, բուժիչ տորֆերը և լանդշաֆտի հրապուրիչ տարրերը ստեղծում են բավարար նախադրյալներ կուրորտային տնտեսության ձևավորման և զարգացման համար: Այդպիսի ռեսուրսներով աշքի են ընկնում Հրազդան գետի միջին ավագանը՝ Մարմարիկի հետ միասին, Դիլիջան-Վանաձոր-Ստեփանավան գոտին, Սևանի մերձափնյա շրջանները, Արագածի միջին բարձրության լեռնալանջերը, Բարգուշատի լեռնաշղթայի անտառապատ լանջերը, Արփայի վերին և միջին հոսանքի շրջանը [28], Աղստևի հովտի առանձին տարածքները:

Առանձնակի նշանակություն ունեն նաև ՀՀ կյիմայական ռեկրեացիոն ռեսուրսները, որոնք նպաստում են ոչ միայն ռեկրեացիոն տարածքների ձևավորմանը և բնակչության հանգստի կազմակերպմանը, այլև զբոսաշրջության տարբեր ձևերի զարգացմանը: Զբոսաշրջության առանձին ուղղությունների զարգացման համար բացառիկ հնարավորություններ են ընձեռում նաև ՀՀ լանդշաֆտների ուղղաձիգ գոտականությունը, ռելիեֆի բազմազանությունը՝ գեղատեսիլ ձորերի, կիրճերի, հովվանների, երաթխային կոների ու լեռնագագաթների, լեռնային լճերի, ջրվեժների և բնության այլ հուշարձանների առկայությունը: Թվարկվածները հնարավորություն են տալիս ՀՀ-ում զարգացնելու հկողոգիական, արկածային և էքստրեմալ զբոսաշրջության ձևերը: ՀՀ տարածքի տարբեր հատվածներում կան բացառիկ հնարավորություններ ձմեռային ամիսներին բնակչության հանգստի և զբոսաշրջային երթուղիների կազմակերպման համար: Այս տեսանկյունից աշքի են ընկնում Կոտայքի, Շիրակի Լոռու, Գեղարքունիքի, Արագածոտնի և Վայոց ձորի մարզերի տարածքները:

Բացի բնառեկրեացիոն հսկայական ներուժից՝ ՀՀ-ն առանձնանում է նաև մարդածին ռեկրեացիոն-զբոսաշրջային ռեսուրսներով: Դրանք մեր բազմադարյան պատմության ընթացքում ստեղծված ճարտարապետական և պատմամշակութային հազարավոր հուշարձաններն են,

Եկեղեցական համալիրներն ու վանքերը՝ հայ ժողովրդի նյութական ու հոգևոր մշակույթի խոսուն վկաները: Դրանցից շատերն ունեն համաշխարհային ձանաշում և տասնամյակներ շարունակ համարվում են դեպի մեր երկրի ներգնա զբոսաշրջային հոսքերի կարևորագույն գրավչություններից (ըստ մարզերի՝ կազմե՛ք այդպիսի զբավշությունների ժամանակագրական ցանկ):

Մեր երկիրն աչքի է ընկնում նաև ժամանակակից զբոսաշրջային շուկայի արագ զարգացող ուղղություններից մեկի՝ գյուղական և ագրոզբոսաշրջության զարգացման հնարավորություններով:



Նկ. 2. Գեղարդի վանական համալիրը

ՀՀ հարյուրավոր գյուղերում պահպանվել են բազմադարյան ավանդույթներ, ծեսեր ու սովորույթներ, ազգագրական բազմաթիվ խաղեր, որոնք բացառիկ դեր ունեն գյուղական զբոսաշրջային շուկայի

ձևավորման ու գարզացման համար: Մեր գյուղերն ունեն նաև կենցադավարման իրենց առանձնահակությունները և համայնքային կյանքի կազմակերպման ինքնատիպ գծեր, որոնք ևս պակաս կարևոր չեն գրոսաշրջային գրավչությունների առումով: Այդ ամենի հետ միասին գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման և գյուղմթերքի մշակման ավանդական ձևերն ու տեխնոլոգիաները բավար նախադրյալներ են մեզանում ազրողոսաշրջության գարզացման համար:

Զբոսաշրջային գրավչությամբ աշքի է ընկնում նաև հայկական ազգային խոհանոցը: Ազգային մի շարք ուստեստներ, մրգեր, կարնամթերքի, մսամթերքի բազմազան տեսակներ (խորովածը, խաշլաման, տոլման, դափաման, բաստուրման, սուօշուղը), կռնյակները, զինիները, մածունը, տեսակային պանիրները, լավաշը, խնոցու կարագը, թանը և այլ պարենամթերքներ մեծ պահանջարկ են վայելում ներգնա զբոսաշրջիկների կողմից:

ՀՀ զբոսաշրջային ռեսուրսների մեջ իրենց ուրույն տեղն ու դերն ունեն նաև **ազգային մշակույթի տարրերը՝** ազգային երգն ու պարը, երաժշտությունը, մշակութային տարրեր փառատոններն ու միջոցառումները:

Այսպիսով՝ ՀՀ տարածքի բնաաշխարհագրական պայմանների խիստ բազմազանությունն ու ինքատիպ գծերը, պատմամշակութայինն և հոգևոր մշակութային հարուստ ժառանգությունը, ինչպես նաև ազգագրական առածնահատկությունները մեր երկրի ռեկրեացիոն-զբոսաշրջային ռեսուրսների հիմնական տարրերն են:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է ռեկրեացիոն-զբոսաշրջային ռեսուրսների դերն ու տեղը տնտեսության ոլորտում և մարդու կյանքում:

2. Բնութագրե՛ք ՀՀ բնական ռեկրեացիոն ռեսուրսները: Կազմե՛ք այդպիսի ռեսուրսների քարտեզ-սխեմա՝ ըստ մարզերի:

3. Կազմե՛ք ՀՀ մարզերի պատմական և հոգևոր-մշակութային ռեսուրսների գործառնությունները:

բի քարտեզ-սխեմա:

4. Կատարե՛ք ՀՀ առանձին մարզերի ռեկրեացիոն-զբոսաշրջային ռեսուրսների համեմատական-աշխարհագրական վերլուծություն:
5. Կատարե՛ք ՀՀ-ում գյուղական և ագրոզբոսաշրջության զարգացման նախադրյալների վերլուծություն:
6. Կատարե՛ք ՀՀ-ում եկոլոգիական, արկածային և էքստրեմալ զբոսաշրջության ձևերի զարգացման նախադրյալների վերլուծություն:
7. Ռեկրեացիոն-զբոսաշրջային ռեսուրսների օգտագործման ի՞նչ հիմնախնդիրներ կան ՀՀ-ում:

2.8. Բնօգտագործումը և շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրը

ՀՀ-ում, որն առանձնանում է սահմանափակ տարածքային ռեսուրսներով, համեմատաբար խիտ բնակեցվածությամբ, տարածքի յուրացվածության քիչ թե շատ բարձր աստիճանով, բնական տարրեր ռեսուրսների օգտագործումը, բնական հավասարակշռության և շրջակա միջավայրի պահպանության հարցը խիստ արդիական է, քանի որ բնական ռեսուրսների տարրեր տեսակների արդյունավետ օգտագործումը, վերականգնումը և ընդլայնված վերարտադրությունը պետք է ծառայեն ոչ միայն ներկա, այլև մեր գաղիք սերունդներին [28]:

ՀՀ տարածքի լեռնային մակերևույթը, մասնատվածությունը, թեքությունները, տարրեր դիրքադրությունները և, որ ամենակարևորն է, սեյսմիկությունն իրենց անմիջական ազդեցությունն են թողնում առանձին տարածքների յուրացման, արտադրական ձեռնարկությունների տեղաբաշխման, տրանսպորտային ուղիների անցկացման, բնակավայրերի տեղադիրքի ընտրության, կառուցապատման և քաղաքաշինական այլ գործընթացների վրա: Ուշինեֆի և երկրաբանական կառուցվածքի առկա տարրերն իրենց ազդեցությունն են թողնում տարաքնակեցման համակարգի ձևավորման, ինչպես նաև հասարակության տարածքային կազմակերպման ու զարգացման վրա: ՀՀ տարածքի տարրեր շրջաններում գյուղատնտեսության ձյուղային կառուցվածքը, տեղաբաշխումը, մասնագիտացումը և տարածքային կազմակերպումն առաջին հերթին պայմանավորված են առկա կլիմայական պայմաններով ու ռեսուրսներով, ջրային ու հողային ռեսուրսներով, բնաաշխարհագրական այլ պայմաններով:

Մի կողմից անտառապատվածության համեմատաբար ցածր մակարդակը, մյուս կողմից վերջին տասնամյակներին կլիմայի գլոբալ փոփոխմանն առնչվող երևույթներն այս կամ այն կերպ իրենց ազդե-

ցությունն են թողնում ՀՀ տարածքի լանդշաֆտների վրա՝ առաջացնելով էկոլոգիական տարրեր խնդիրներ:

Այսպիսով՝ ՀՀ տարածքի առանձին հատվածներում բնական համալիրի, այսպես կոչված, անդառնալի փոփոխությունները երբեմն կարող են պայմանավորված լինել միմիայն բնածին գործոնների ներգործությամբ:

Վերջին տասնամյակներին ՀՀ բնական միջավայրում տեղի ունեցած փոփոխություններն առավել մեծ չափով առաջացել են **մարդածին ներգործության պատճառով**: Խորհրդային տարիներին ՀՀ-ում տեղի են ունեցել տնտեսության քիչ թե շատ արագ զարգացում և ինդուստրացում, ինչի հետևանքով զգայիրեն մեծացել է բնական միջավայրի վրա մարդածին ներգործության աստիճանը: Երկրում իրականացված մի շարք արտադրատնտեսական մեծամաշտար ծրագրերը, Արարատյան գոգավորությունում և այլ տարածքներում գյուղատնտեսական նոր հողատարածքների յուրացումը և շուրջ ինը տասնյակ նոր բնակավայրերի հիմնումն եական և լուրջ փոփոխություններ են առաջացրել ընդարձակ տարածքների բնական համալիրներում: Քաղաքային բնակավայրերում և դրանց հարող տարածքներում ձևավորվել են ինդուստրիալ լանդշաֆտներ (անտրոպոգեն լանդշաֆտներ), չորացվել են ճահիճներ, ընդարձակ չորային կիսաանապատային և չոր տափաստանային տարածքները վեր են ածվել կուլտուրական լանդշաֆտերի, ստեղծվել են ծառաստաններ և պուրակներ, ջրարդիացվել են տասնյակ հազար հեկտար արոտավայրեր և խոտհարքներ [28]: Այդ ամենը նպաստել է հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը, երկրի հզորացմանը, բնակչության բարեկեցության բարձրացմանը և կյանքի որակի բարելավմանը: Դրա հետ միաժամանակ տնտեսական զարգացման գործընթացներն ուղեկցվել են նաև բնական միջավայրի ոչ ցանկալի փոփոխություններով: Շատ դեպքերում չի ապահովվել բնական միջավայրի մաքրության և էկոլոգիական հավասարակշռու-

թյան պահպանությունը, արդյունավետորեն չեն օգտագործվել ռեսուրսների տարրեր տեսակներ:

1. Հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և պահպանության հիմնախնդիրը: Սակավահող մեր երկրում հողածածկույթը մարդու տնտեսական գործունեության և բնական ազդակների ներգործության հետևանքով անընդհատ ենթարկվել է փոփոխությունների: Խորհրդային տարիներին ոռոգելի հողատարածքները ՀՀ-ում ավելացել են գրեթե հինգ անգամ, սակայն դրա հետ միաժամանակ բազմաթիվ շրջաններում վտանգավոր չափերի են հասել հողերի երողիան, աղակալումը, ճահճացումը, սողանքային երևույթները, հողերի աղտոտումը արդյունաբերական թափոններով, քիմիկատներով և նավթամթերքով: Այդպիսի երևույթները շարունակվում են նաև մեր օրերում:

Հողային ռեսուրսների պահպանությունն ու դրանց արդյունավետ օգտագործումը շարունակական գործընթաց են: Հողաբարելավման գործընթացն ընդգրկում է հողատարածքները քարերից մաքրելը, խախտված տեղամասերի վերականգնումը, վարելաշերտի խորացումը, տարածքների հարթեցումը, մեքենայացման և ոռոգման համար հարմար տեղամասերի ստեղծումը, արտավայրերի և խոտհարքների մակերեսային բարելավումը [28]: Նշված գործընթացների շնորհիվ անցած տասնամյակների ընթացքում մեր երկրում բարելավվել և զյուղատնտեսական շրջանառության մեջ են ընդգրկվել տասնյակ հազարավոր հեկտար հողատարածքներ: 2019 թ. ՀՀ մարզպետարանների և Երևան քաղաքի տնօրինած հողատարածքներում հողաբարելավման կարիք ունեին 163.2 հազ. հա հողեր, որից 99.5 %-ը բաժին էր ընկնում զյուղատնտեսական նշանակության հողերին: Հողաբարելավման կարիք ունեցող զյուղատնտեսական նշանակության վերը նշված հողերում առավել մեծ մակերես են զբաղեցնում քարքարոտ հողերը (79.4 %), երկրորդ և երրորդ տեղերում են ջրից (8.2 %) և քամուց հողատարված (5.4 %) հողերը: Հողաբարելավման կարիք ունեցող զյուղատնտեսական հողերի 2.1 %-ը անապատացված հողերն են, 1.5 %-ը՝

խախտված, 1.3 %-ը՝ աղակալված հողերը: Անհամեմատ փոքր բաժին ունեն գերխոնավացած (0.6 %), երկրորդային աղակալված (0.3 %) և ճահճացած (0.2 %) հողերը [44]: Հողաբարելավման կարիք ունեցող գյուղատնտեսական նշանակության հողերից առավել մեծ մակերես են զբաղեցնում արոտավայրերը (72.6 հազ. հա), այլ հողատեսքերը (53.2 հազ. հա) և խոտհարքները (23.3 հազ. հա):

Հողածածկույթի համար մեծ վտանգ են ներկայացնում ջրային և հողմային էրոզիան: Էրոզիայի դեմ պայքարի գործիքներից արդյունավետ են դարավանդավորումը, ազրտուեխնիկական, մարզագետնային և անտառամեխորատիվ, եկորոտեխնիկական և այլ միջոցառումները [28]: ՀՀ-ում ավելի քան 12 հազ. հա բարելավման կարիք ունեցող վարելահողերից 47 %-ը կարիք ունեն քարամաքրման և թափոններից մաքրման, իսկ ավելի քան 72 հազ. հա արոտավայրեր և խոտհարքներ՝ քարերից ու թափոններից մաքրման:

Բացի նշվածներից՝ ՀՀ-ում հողային ռեսուրսների պահպանման և արդյունավետ օգտագործման գործում իրենց դերն ունեն նաև հակասողանքային և հակասելավային միջոցառումների իրականացումը, աղակալած հողերի վերականգնումը և դրանք գյուղատնտեսական շրջանառության մեջ վերադարձնելը:

2. Հանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրը: ՀՀ տարբեր շրջաններից արդյունահանվող գումավոր մետաղային հանքանյութերում, բացի հիմնական հանքատեսակից, կան նաև բազմաթիվ այլ թանկարժեք ու հազվագյուտ մետաղներ: Բացի այդ՝ ՀՀ-ում գործող մետաղուրգիական ձեռնարկություններում առկա տեխնոլոգիական գործընթացները դեռևս հնարավորություն չեն տալիս հանքանյութի միջից կորզելու ոչ միայն բոլոր օգտակար տարրերը, այլ նաև հանքանյութի մեջ եղած հիմնական տարրերն ամբողջությամբ: 2019 թ. արդյունահանված պղնձի հանքանյութից կորզվում էր միայն 84.7, մոլիբդենից՝ շուրջ 86 %-ը: Մնացածը, ինչպես նաև հանքանյութում առկա բազմաթիվ օգ-

տակար տարրեր (թելուր, սելեն, բիսմութ, ռենիում, գալիում և այլն), հավաքվում են պոչամբարներում: Այդպիսի մի խոշորագույն պոչհանք (ծածկված) կա Ողջի գետի հովտում, շարունակվում է Արծվանիկի պոչամբարի լցումը:

Աղյուսակ 8


ՀՀ հողային հաշվեկշիռը [44]

Հողերը՝ բատ նշանակության	Ընդամենք, հազ. հա	Այդ թվում՝ ոռոգվող
1.Գյուղատնտեսական, որից՝	2044.2	155.2
վարելահողեր	444.8	118.2
բազմամյա տնկարկներ	36.4	35.5
խոտհարք	121.1	1.5
արոտավայրեր	1051.1	-
այլ հողատեսքեր	390.8	-
2.Բնակավայրերի	151.9	53.1
3.Արդյունաբերության, ընդերքի օգտագործման և արտադրական այլ նշանակության	38.6	-
4.Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ էնթակառուցվածքների օբյեկտների	13.1	-
Հատուկ պահպանվող տարածքների, որից՝	335.6	-
բնապահպանական	317.7	-
որից՝ արգելոցներ	35.2	-
ազգային պարկեր	234.5	-
առողջարարական	0.2	
հանգստի	2.8	
պատմական	14.9	
հատուկ նշանակության	30.5	
անտառային	334.0	0.4
ջրային	25.8	
պահուստային	0.6	
Ընդամենք	2974.3	208.7

Հստ պաշտոնական վիճակագրության՝ 2015-2019 թթ. ընթացքում հանքաբետոնությունում արդյունահանվել է ավելի քան 148 մլն տ պղնձամոլիբդենային հանքանյութ, մետաղային մյուս հանքանյութերի արդյունահանումն այդ ընթացքում կազմել է ավելի քան 608 հազ. տ, բազմամետաղների արդյունահանումը՝ 7.5 մլն տ:

Գծապատկեր 1

Բարելավման կարիք ունեցող հողերը՝ ըստ դրանց նպատակային նշանակության և որակական բնութագրիների, 2020 թ. [44]



Հանքային մետաղային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և շրջակա միջավայրի պահպանության հրամայականը պահանջում է կատարելազործել ՀՀ մետաղուրգիական արդյունաբերության մեջ կիրառվող տեխնոլոգիական գործընթացները և արտադրական մշակույթը: Արտադրության տեխնոլոգիական գործընթացների կատարելազործումն էական նշանակություն կունենա մետաղների արդյունահանման և դրանց վերամշակման ձեռնարկությունների մերձակա տարածքներում հկողողիական հավասարակշռության պահպանման

համար: Նշված գործընթացները կնպաստեն ՀՀ-ում անթափոն արտադրության կազմակերպմանը և մետաղային ռեսուրսների խնայողաբար, համալիր ու արդյունավետ օգտագործմանը:

Աղյուսակ 9

*Օգտակար հանածոնների օգտագործումը ՀՀ-ում
հանքահարստացման ժամանակ, 2019 թ. [45]*

Փաստացի վերամշակված օգտակար հանածոններ և դրանցում պարունակվող բաղադրիչներ (մետաղները՝ հանքաքարում)		Ստուգված է հարստացված արտադրանք, հանված են օգտակար բաղադրիչներ (մետաղները՝ խտանյութում)		
Անվանումը	Փաստացի վերամշակված	Անվանումը	Փաստացի ստուգված	%-ով վերամշակումից
Պղնձամոլիբդենային հանքաքար, հազ. տ	29284.9	Պղնձի և մոլիբդենի խտանյութ, հազ. տ	400,0	1.4
որտեղ՝		որտեղ՝		
պղինձ, տ	105503.4	պղինձ, տ	89367.3	84.7
մոլիբդեն, տ	8317.2	մոլիբդեն, տ	7136.5	85,8
այլ մետաղներ, տ	19.4	այլ մետաղներ, տ	2.0	10.4
ծծումբ, հազ. տ	36.1	ծծումբ, հազ. տ	10.5	29.0
Բազմամետաղային հանքաքար, հազ. տ	1 616.8	Մետաղը՝ բազմամետաղային խտանյութում		
որտեղ՝				
պղինձ, տ	1 989.9	պղինձ, տ	1846.3	92.8
ցինկ, տ	8 078.7	ցինկ, տ	7161.9	88.6
այլ մետաղներ, տ	35.7	այլ մետաղներ, տ	24.2	67.9

ՀՀ տարածքի տարբեր շրջաններում շրջակա միջավայրին տասնամյակներ շարունակ զգալի վնաս են հասցրել նաև ոչ մետաղային մի շարք հանքանյութերի արդյունահանումը, դրանց ոչ արդյունավետ օգտագործման կազմակերպումը: Ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ վերջին երեք տասնամյակներին ՀՀ տարածքում արտադրական շրջանառությունը ներառել է վերը նշված ոչ մետաղային հանքանյութերի մի քանի տասնյակ հանքավայրեր, սակայն դրանցից շատերում դրսւորվել է առավելապես սպառողական վերաբերմունք: Մեր սակավահող երկրում տարբեր շինանյութերի (հատկապես տուֆի) արդյունահանման հետևանքով շարքից դրւու են եկել մոտ 4.5 հազ. հա սևահողային գյուղատնտեսական արժեքավոր հողատարածքներ [24]:

2015-2019 թթ. ՀՀ-ում արդյունահանվել է 380 հազ.մ³ տուֆ, տուֆավազաքար և դացիտային տուֆ, 1253,5 հազ. մ³ տրավերտին, 1.8 մլն մ³ բազալտ, բազալտի խիճ, դոլերիտ և դոլերիտային խիճ, 248 հազ. մ³ պեղիտ և պեղիտային ավագ, 359 հազ.մ³ պեմզա և լիտոհիդային պեմզա, 2.2 մլն մ³ ավազակոպճային խառնուրդ, ավագ և խիճ, 171 հազ. մ³ հրաբխային խարամ և այլն: Այս ամենը վկայում են այն մասին, որ պետք է արդյունավետ և խնայողաբար օգտագործել ընդերքից արդյունահանված յուրաքանչյուր տոննա կամ խորանարդ մետր հանքանյութը՝ նվազագույն վնաս պատճառելով բնական միջավայրին: Այդ խնդիրը լուծման արդյունավետ ձանապարհն անթափուն արտադրության կազմակերպումն է, որը ժամանակակից ԳՏԱ-ի պայմաններում միանգամյան իրագործելի խնդիր է:


Հարկ է նկատել, որ հատկապես վերջին 2-3 տարիներին՝ 2018 թվականից սկսած, ՀՀ բնապահպանական շարժման խիստ ակտիվացման պայմաններում նկատելի աշխատանքներ են տարվում հանքային հումքի տարբեր տեսակների արդյունահանման, արդյունավետ օգտագործման և բնապահպանական նորմերի պահպանության առումով (Ամուլսար, Ախթալա, Ալավերդի, Զանգեզուր և այլն):

2019 թ. ՀՀ-ում կազմակերպությունների գործունեության ընթացքում առաջացել են ավելի քան 67.4 մլն տ (ընդհանուրի 99.3 %-ը) արտադրական թափոններ, որը 1 բնակչի հաշվով կազմել է 22.8 տ, իսկ 1կմ²-ի հաշվով՝ 2368.5 տ: Թափոնների առավել մեծ քանակ առաջացել է Գեղարքունիքի (53.5 մլն տ) և Սյունիքի (13մլն տ) մարզերում: 2019 թ. ՀՀ համայնքային աղբավայրեր են տեղափոխվել մոտ 473 հազ. տ կոչտ կենցաղային թափոններ, որից ավելի քան 323 հազ. տ-ն բաժին է ընկնում միայն Երևան քաղաքին: Տարեկան այդպիսի զանգվածով կենցաղային թափոնների կուտակումն առաջացնում է բնապահպանական լուրջ հիմնախնդիրներ: Վերջինիս լուծման միակ ճանապարհը աղբավերամշակման գործարանի կառուցումն է:

3. Օդային ավազանի պահպանության հիմնախնդիրը: Վնասակար նյութերի արտանետումը մթնոլորտ տեղի է ունենում շարժական ու անշարժ աղյուրներից: ՀՀ-ում մթնոլորտային ավազանի արտանետումներով աղտոտման պատճառ են դառնում հանքագործական արդյունաբերությունը և բացահանքերի շահագործումը, մշակող արդյունաբերությունը, կեկտրաէներգիայի արտադրությունը, կեկտրամատակարարումը և ջրամատակարարումը, արտանետումները շարժական աղբյուրներից (ավտոտրանսպորտ և այլն) և տնտեսական գործունեության այլ տեսակներից: 2015-2020 թթ. ՀՀ-ում մթնոլորտ են արտանետվել տարեկան միջին հաշվով 279.1 հազ. տ վնասակար նյութեր, որից 158.6 հազ. տ-ն՝ շարժական աղբյուրներից: 2020 թ. մթնոլորտ արտանետված 295.4 հազ. տ մթնոլորտային արտանետումներից 70.8 %-ը բաժին է ընկել շարժական աղբյուրներին, 29.2 %-ը՝ շարժական աղբյուրներին:

Գծապատկեր 2

Մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի
քանակը, 2015-2020 թթ. [44]



Անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի 64.8 %-ը բաժին է ընկել ածխաջրածիններին, 25.1 %-ը՝ ծծմբային անիդրիդին (SO₂), 5.2-ը՝ փոշուն, 2.8 %-ը՝ ածխածնի օքսիդին, 1.6 %-ը՝ ազոտի օքսիդներին, 0.03 %-ը՝ ծանր մետաղներին, 0.4 %-ը՝ ցնդող օրգանական միացություններին, 0.1 %-ը՝ այլ նյութերի: Արտանետման անշարժ աղբյուրներից ՀՀ-ում 2019 թ. դրությամբ առավել աղտոտվող քաղաքներ են համարվել Ալավերդին, Երևանը, Վանաձորը, Քաջարանը, Արարատը, Հրազդանը, Գյումրին, Կապանը:

2015-2020 թթ. շարժական աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը ավելացել է 26.7 հազ.տ.-ով, որը նախևառաջ պայմանավորված է վերջին տարիներին ավտոմեքենաների քանակի անընդհատ ավելացմամբ: 2019 թ. ՀՀ 1 բնակչի հաշվով մթնոլորտային արտանետումներն անշարժ աղբյուրներից կազմել են ավելի քան 30.3 կգ, 2020՝ 29.1 կգ: Այդ ցուցանիշը ՀՀ միջինից ավելի քան

1.5 անգամ բարձր է Լոռու մարզում, 5.3 անգամ՝ Տավուշում, 2.7 անգամ՝ Կոտայքում, 2.5 անգամ՝ Սյունիքում: ՀՀ միջինի համեմատ առավել փոքր ցուցանիշներ ունեն Արագածոտնի, Շիրակի, Վայոց ձորի, Արմավիրի և Արարատի մարզերը: Երևան քաղաքում մթնոլորտային արտանետումները մեկ բնակչի հաշվով ՀՀ միջինից ավելի քան 2.4 անգամ պակաս են: Մթնոլորտային արտանետումների տեսակաբար մյուս ցուցանիշը 1 կմ²-ին բաժին ընկնող արտանետումներն են: 2020 թ. ՀՀ-ում այն միջին հաշվով կազմել է ավելի քան 3.03 տ: Այս ցուցանիշով առավել աղտոտված է համարվում Երևանը, որը ՀՀ միջինը գերազանցում է ավելի քան 19 անգամ:

Աղյուսակ 10

Որսված վնասակար նյութերի մասնաբաժինն արտանետման անշարժ աղյուրներից անշատված նյութերի մեջ՝ ըստ ՀՀ մի քանի քաղաքների, 2019 թ. [44]

Քաղաքները	Անշատված նյութերի քանակը, տ	Որսված նյութերի մասնաբաժինը անշատվածի նկատմամբ, %	Արտանետման անշարժ աղյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի քանակը, տ
Երևան	13538.2	0.1	13532.0
Արարատ	120958.9	98	2390.5
Ալավերդի	15.4	-	15.4
Հրազդան	2980.3	89.0	328.9
Վանաձոր	8988.7	-	8988.7
Գյումրի	759.7	-	759.7
Կապան	385.2	43.6	217.3
Քաջարան	1 432.4	-	1 432.4


ՀՀ միջին ցուցանիշը գերազանցում են նաև Կոտայքի (3.2 անգամ), Լոռու (0.8 անգամ) և Տավուշի (2.3 անգամ) մարզերը: Այս ցուցանիշով առավել մաքուր են Վայոց ձորի Արագածոտնի և Շիրակի մարզերը:

Բացի նշվածներից՝ մթնոլորտ արտանետվում են նաև ջերմոցային գազերը: Դրանց մեջ առավել մեծ մասնաբաժին ունեն ածխածխնի եր-

կօրսիդը և մեթանը, իսկ ազոտի ենթօքսիդը և հիդրոքլորածխածինը համեմատաբար փոքր բաժին ունեն: Զերմոցային գազերի արտանետումների մեջ առավել մեծ բաժին ունեն էներգետիկան ու գյուղատնտեսությունը:

Գծապատկեր 3

Արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերը ՀՀ-ում [18]



ՀՀ օդային ավագանի աղտոտիչներից է նաև մթնոլորտ արտանետված փոշին: 2015-2019 թթ. ՀՀ մթնոլորտային ավագան է արտանետվել միջին հաշվով ավելի քան 5300 տ փոշի, որից 144 տ-ն՝ օրգանական ծագման, մնացածը՝ անօրգանական: Առավել մեծ քանակությամբ փոշի արտանետվում է Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում, դրանց հաջորդում են Երևան քաղաքը, Արարատի, Կոտայքի և Լոռու մարզերը: Փոշու արտանետումներն ամենից քիչ են Արմավիրի և Վայոց ձորի մարզերում:

4. Զրային ռեսուրսների օգտագործումը և պահպանությունը: ՀՀ շրային ռեսուրսների քանակի և որակի պահպանությունը, ինչպես

նաև արդյունավետ օգտագործումը բնօգտագործման և բնապահպանական առումով գերակա առաջնահերթություն է: 2014-2020 թթ. ընթացքում ՀՀ-ում ջրառի միջին ցուցանիշը կազմել է ավելի քան 2.9 մլրդ մ³, որի ավելի քան 86.5 %-ը օգտագործվել է գյուղատնտեսության, ձկնաբուծության և անտառատնտեսության մեջ: Ջրառի առավել բարձր ցուցանիշներով առանձնանում են Արարատի և Արմավիրի մարզերը, որտեղ գտնվում են ՀՀ ոռոգելի հողատարածքների հիմնական զանգվածները, առավել փոքր մասնաբաժին ունեն Տավուշի, Վայոց ձորի, Գեղարքունիքի և Լոռու մարզերը, իսկ Երևան քաղաքը, Արագածոտնի, Կոտայքի և Շիրակի մարզերը միջին տեղ են զբաղեցնում: 2016-2020 թթ. ընթացքում Սևանա լճից տարեկան միջին հաշվով քաց է թռողնվել 188.2 մլն մ³ ջուր: 2020 թ. կատարվել է 777.1 մլն մ³ կեղտաջրերի հեռացում: Ջրավազանների մաքուր պահպանության գլխավոր երաշխիքը շրջանառու ջրօգտագործման համակարգի ստեղծումն է: Վերջինս ենթադրում է կենցաղային և արտադրական մշակույթի բարձրացում, ջրօգտագործող բոլոր սուբյեկտների կեղտաջրերի մեկուսացում, մաքրում և վերադարձ սպառողներին: Դեռևս խորհրդային վերջին տասնամյակներին մեր երկրում իրականացվել են ջրապաշտպան մի շարք միջոցառումներ, որոնք նվազեցրել են ջրային ավագանների աղտոտումն արդյունաբերական թափոններով և կեղտաջրերով, կառուցվել են ջրամաքրման կայաններ: Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով կառուցվել են Ապարանի, Արփիի, Տողրսի, Կեչուտի, Ախուրյանի, Ռազմիկի, Անդրանիկի, Տավուշի Բենիկի և այլ ջրամբարները, որոնք հնարավորություն են տվել ՀՀ-ում ամբարվող ջրի ծավալը հասցնելու 1.1 մլրդ մ³-ի: Այդպիսի աշխատանքներ իրականացվել են նաև վերջին երեք տասնամյակներին:

ՀՀ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման գործում կարևորագույն խնդիր են երկրում առկա ոռոգման համակարգերի օգտակար գործողության գործակցի ու ջրապահովածության բարելա-

վումը, մասնավորապես տարբեր կարգի ջրանցքների ցանցի վերակառուցումը և ռոռոգման առավել նոր մեթոդների՝ անձրևացման և կարիլային ռոռոգման ներդրումը:

Աղյուսակ 11


Զրատն ու ջրօգտագործումը ՀՀ-ում (2014-2020 թթ. մին մ³) [18, 44]

	2014	2016	2017	2020
Զրատը, ընդամենը	2860.2	3181.9	2865.4	2829.8
Այդ թվում՝ ստորերկրյա աղբյուրներից	1312.0	1136.3	1154.5	1294.3
Ընդամենը օգտագործվել է ջուր	2112.8	2469.9	2040.0	2176.3
Այդ թվում՝ ըստ կարիքների				
Խմելու	122.3	107.7	107.6	165.4
Արդյունաբերության, կոմունալ տնտեսության և շինարարության	180.6	145.4	225.2	190.4
Գյուղատնտեսության, ձկնաբուծության և անտառտնտեսության	1809.9	2216.8	1702.2	1820.5
Ընդհանուրի նկատմամբ, %	100	100	100	100
Այդ թվում՝ ըստ կարիքների				
Խմելու	6	4	5	7.6
Արդյունաբերության, կոմունալ տնտեսության և շինարարության	8	6	11	8.8
Գյուղատնտեսության, ձկնաբուծության և անտառտնտեսության	86	90	84	83.6

ՀՀ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և պահպանության գործում առանձնահատուկ տեղ է զրադեցնում Սևամին ջրային պաշարների պահպանության հարցը: Շուրջ ինը տասնամյակ այս հարցը գտնվում է ոչ միայն մասնագետների, այլև հասարակության ու շահրության կենտրոնում:

Գծապատկեր 4

Զրոգուագրործումն ըստ նշանակության, 2020 թ. [44]



Լճի ջրահավաք ավագանում տնտեսական գործունեության ակտիվացման պատճառով զգալիորեն մեծացավ լիճ թափվող կեղտաջրերի ծավալը, իսկ ՀՀ բնակչության թվաքանակի աստիճանական ավելացումն ու ռեկրեացիոն ակտիվության մեծացումն իրենց հերթին ավելացրին լճի ու հարակից տարածքների վրա մարդածին ազդեցության չափը: Դրանք հանգեցրին Սևանի Էկոլոգիական հավասարակշռության խախտմանը. փոխվեց լճի ջերմային ռեժիմը (ցուրտ տարիներին լիճն ամբողջովին սառցակալում է), ջրում ավելացավ օրգանական նյութերի քանակը:

Եռուս 1961 թվականից սկսվեց լճի մակերեսի «կանաչացման» երևույթը կամ կապտականաշավուն ջրիմուռների տարածումն ամառային որոշակի ժամանակահատվածում [նույն տեղում]:

1960-ական թվականներից ՀՀ-ում աշխատանքներ են տարվել Սևանի Էկոլոգիական հավասարակշռության վերականգնման ուղղությամբ: Այդ նպատակի համար կառուցվեցին **Արփա-Սևան և Որոտան-Արփա ստորգետնյա թունելները**, որոնք հնարավորություն ունեն լիճ

հասցնելու տարեկան 270 և 165 մին մ³ լրացուցիչ ջուր: Խնդիր դրվեց լճի մակարդակը բարձրացնելու 6 մ-ով, որը հնարավորություն կտար վերականգնելու լճի էկոլոգիական հավասարակշռությունը, բարելավելու ջրի որակը, պայմաններ ստեղծելու ձկնային պաշարների վերականգնման համար: Խնդիրի լուծման համար կարևոր նշանակություն էին տրվում նաև Սևանից բաց թողնվող ջրի քանակի նվազեցմանն ու Արարատյան դաշտի ոռոգման համար ստորերկրյա ջրերի և այլ պաշարների օգտագործմանը:


Դեռևս խորհրդային տարիներին լճի ջրի որակի պահպանման նպատակով նախատեսված էր կառուցել լիճը գոտևորող օդակաձև կոլեկտոր, որի մեջ կհավաքվեին լիճ թափվող կեղտաջրերը, և Քաղսի գյուղի մոտ կառուցվելիք մաքրիչ կայանով անցնելուց հետո ջրերը նոր միայն բաց էին թողնվելու Հրազդան գետ [24]:

Թեև վերջին տասնամյակներին զգալի աշխատանքներ են տարվել Սևանի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման ուղղությամբ, սակայն առ այսօր այն մնում է ՀՀ բնապահպանական թիվ 1 խնդիրներից մեկը: 2021 թ. մարտի վերջի դրությամբ Սևանա լճի հայելու մակարդակի նիշը գտնվում էր 1900.63 մ բարձրության վրա: Առաջիկա տարիների համար կարևորագույն խնդիր է դարձել լճի՝ ջրով ծածկված առափնյա հատվածները մաքրել բուսականությունից և թափուններից, որոնք մեծ վնաս են հասցնում լճի ջրի որակին:

Կարևոր խնդիր է նաև լճի ափամերձ տարածքում մինչև 1905 մ բարձրության նիշին հասող տարածքներն ազատելն ավելի քան 4500 տարբեր չափերի շինություններից, քանի որ նախատեսված է մինչև 2030 թ. լճի ջրի մակարդակը հասցնել 1903.5 մ բարձրության:

Գծապատկեր 5

Սևանա լճի մակարդակի նիշը և հայելու մակերեսը, 1940-2020 թթ. [44]



Սևանի էկոլոգիական հավասարակշռության վերականգնման համար պետք է իրականացնել անհետաձգելի միջոցառումներ, որոնք հնարավորություն կտան ավելացնելու լիձ մուտք գործող ջրի քանակը, և կապակասի բաց թողնվող ջրի տարեկան քանակը կամ չի գերազանցի օրենքով նախատեսված չափը (170մլն մ³): 2019 թ. լճից բաց է թողնվել 143.6 մլն մ³, 2020 թ. 162.39 մլն մ³ ջուր, 2021 թ. տարեսկզբից մինչև օգոստոսի վերջը՝ 192.4 մլն մ³:

ՀՀ ջրային պաշարների մեջ կարևոր դեր ունեն նաև ստորերկրյա ջրերը, որոնց պաշարները գնալով նվազում են:

ՀՀ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման պահպանության գործում մեծ դեր կարող է ունենալ նաև ոռոգման համակարգի կատարելագործումը ջրօստագործման ամենամեծ բաժին ունեցող ոլորտում՝ զյուղատնտեսության մեջ: Տարիներ շարունակ հսկայական քանակությամբ ջուր է կորչում ոռոգման ցանցում և ոռոգման ընթացքում: Այժմ աշխատանքներ են տարվում ՀՀ ոռոգման համակարգի բա-

բեկարգման ուղղությամբ և առավել արդյունավետ ու գիտականորեն հիմնավորված եղանակներով այն իրականացնելու համար:

5. Բուսական և կենդանական աշխարհի պահպանության և արդյունավետ օգտագործման հիմնախնդիրը: ՀՀ տարածքի համեմատաբար խիստ բնակեցումը և տնտեսության տարբեր ոլորտների զարգացումը զգալիորեն նեղացրել են բնական լանդշաֆտների տարածման արեալները: **Միայն վերջին 5-6 տասնամյակների ընթացքում զգալիորեն ադրատացել է ՀՀ բուսական ու կենդանական աշխարհը:** Անկախության հատկապես առաջին երկու տասնամյակի ընթացքում հատկապես տուժեց ՀՀ անտառային ֆոնդը չվերահսկվող անտառահատումների և անտառվերականգնման աշխատանքների ոչ պատշաճ մակարդակով կազմակերպման պատճառով: **Ներկայումս, թեև անտառային տարածքները ՀՀ-ում կազմում են մեր տարածքի 11.2 %-ը, սակայն անտառածածկ տարածքները կազմում են ընդամենը 289.2 հազ. հա կամ ՀՀ տարածքի ընդամենը 9.7 %-ը:** Դա նշանակում է, որ միայն վերջին երեք տասնամյակում ՀՀ անտառածածկ տարածքը նվազել է 3 %-ով (Հայկական ԽՍՀ անտառածածկ տարածքը կազմել է 12.7 %):

Տասնամյակներ շարունակ հազարավոր հեկտարների վրա ՀՀ-ում յուրաքանչյուր տարի կատարվել են անտառատնկումներ, սակայն անտառապահպանման աշխատանքների ցածր արդյունավետության և չվերահսկվող անտառահատումների հետևանքով անտառային ֆոնդը ոչ միայն չի պահպանվել, այլև նվազել է: **Միայն 2015-2019 թթ. միջին հաշվով տարեկան հանրապետությունում հաստել է մոտ 1800 հա անտառ, որից մոտ 1200-ը՝ սանհիտարական հատումներ:** Թեև ՀՀ-ում արդյունաբերական անտառահատումները չեն թույլատրվում, սակայն վերջին երեք տասնամյակներին, հատկապես Տավուշի և Լոռու մարզերում, ապօրինի կատարվել են հսկայածավալ անտառահատումներ: **Աշխատանքներ են տարվում 2021 թ. ընթացքում ՀՀ-ում 10 մլն հատ ծառ տնկելու ուղղությամբ:** ՀՀ անտառային տարածքներին որոշակի վնաս են պատճառում նաև հրդեհները: **Միայն 2017-2018 թթ. գրանցվել**

Են այդպիսի 100 հրդեհներ, որոնց հետևանքով հրդեհվել են մոտ 2950 հա անտառներ և անտառային հողեր: Աննախաղեալ էր 2017 թ. Խոսրովի արգելոցում բռնկված հրդեհը, որի հրդեհաշիջման աշխատանքների համար օգնություն հրավիրվեց Ռուսաստանից:

Բացի անտառային բուսականությունից՝ առանձնակի կարևորություն ունեն նաև ՀՀ-ում անհետացման եզրին գտնվող շատ բուսատեսակների և բուսական ֆորմացիաների պահպանությունը և դրանց վերաբերության կազմակերպումը: Դրանց մի շարք տեսակներ մտցված են «Կարմիր գրքում»: Անտառային ռեսուրսների պահպանման համար իրենց դերն ունեն անտառային վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումները: Վերջին տարիներին անտառային վարակված օջախների ընդհանուր մակերեսը ՀՀ-ում կազմել է ավելի քան 12,6 հազ. հա, որից 8.8 հազ. հա անտառները վարակված են եղել անտառային հիվանդություններով:

ՀՀ-ում բնապահպանական կարևոր խնդիր են նաև կենդանական ռեսուրսների վերաբերությունն ու պահպանությունը: Կենդանիների առանձին տեսակներ (վայրի ոչխարը, բեզոարյան այծը, Սևանի ձկնատեսակները, առաջավոր ասիական ընձառյուծը և այլն) ՀՀ-ի համար համարվում են եզակի, և առանձնակի հոգածություն է տրվում դրանց քանակի ավելացման ու պահպանման ուղղությամբ:

Բնության հատուկ պահպանվող տարածքները: Աշխարհի բնակչության թվաքանակի անընդհատ աճը, համաշխարհային տնտեսության զարգացումը և բնական միջավայրի վրա դրանով պայմանավորված մարդածին ներգործության աստիճանի մեծացումն ու այդպիսի շրջանների աշխարհագրական ընդլայնումը խիստ արդիական ու հույժ կարևոր են դարձնում բնական լանդշաֆտների առանձնահատուկ պայմաններ ունեցող տարածքների պահպանությունը: Այդ նպատակի իրագործման համար աշխարհի տարբեր երկրներում ստեղծվել են և շարունակում են ստեղծվել բնության հատուկ պահպանվող տարածքներ: Այս իմաստով բացառություն չէ նաև մեր հանրապետությունը:

Բնության հատուկ պահպանվող տարածքները պետությունների կողմից երկրի տարածքի այս կամ այն շրջանում սահմանափակում կամ արգելում են որևէ տնտեսական գործունեություն կենսաբազմազանության և կողհամակարգերի պահպանության նպատակով: Դա հնարավորություն է տալիս ապահովելու եզակի կողհամակարգերի, հազվագյուտ, ահետացման եզրին գտնվող, էնդեմիկ, ռեկլիտացիյան տեսակների պահպանությունը և վերարտադրությունը: ՀՀ-ում բնության հատուկ պահպանվող տարածքների կատեգորիաներն են արգելավայրը, պետական արգելոցը, ազգային պարկը, բնության հուշարձանը և պահպանվող լանդշաֆտը:

Արգելոցի նպատակն է պահպանել տվյալ շրջանին բնորոշ կենսաբազմազանությունը, ընդերքի հարստությունները, բուծել և բազմացնել հազվագյուտ և անհետացող վայրի կենդանիներ և բռչուններ, ուսումնասիրել բնության զարգացման օրինաչափությունները: Այն գիտահետազոտական հիմնարկ է և ունի գիտական, մշակութային, հողապաշտպան, ջրապաշտպան և պատմական նշանակություն:

ՀՀ-ում բնության հատուկ պահպանվող առաջին տարածքը ստեղծվել է դեռևս 1923 թ. (Արեգունու լեռներում՝ գիհու նոսրանտառի պահպանության նպատակով): Այնուհետև այդ գործընթացը շարունակվել է 1958 թվականից, երբ ստեղծվեցին **Դիլիջանի և Խոսրովի արգելոցները**, **Գյուլազարակի**, **Արջատիլենու**, **Հերենի**, **Ջերմուկի** արգելավայրերը: 1959 թ. ստեղծվել են Ախնաբաղի կենու, Բաքսի սոճուտի, Սևանից ազատված հողագրունտների, Արագածի ալպյան, Գոռավանի ավագուտների, սոսու, մրտավարդների արգելավայրերը: 1970-1990 թթ. ՀՀ-ում ստեղծվել են **Էրեբունու**, **Շիկահողի** և «**Սև լիճ» արգելոցները, «**Սևան**» ազգային պարկը, **Մարգահովտի**, **Գանձաքարի**, **Արգական-Մելրաձորի**, **Իջևանի**, **Գետիկի**, **Եղեգնաձորի**, **Գորիսի**, **Հանքավանի** ջրաբանական, «**Որդան կարմիր» և **Բողաքարի** արգելավայրերը:****


1996 թ. ՀՀ հատուկ պահպանվող տարածքները (5 պետական արգելոց, 21 արգելավայր և մեկ ազգային պարկ) գրադացնում էին 291 հազ.

հա տարածք (ՀՀ տարածքի 9.8 %-ը), 2016-2020 թթ. ՀՀ հատուկ պահպանվող տարածքների հիմնական ցուցանիշները փոփոխության չեն ենթարկվել: 2020 թ. դրանց ընդհանուր մակերեսը կազմել է 383.1. հազ. հա, որը հավասար է ՀՀ տարածքի 11.3 %-ին:

1. «Խոսրովի անտառ» արգելոցը զբաղեցնում է 23.2 հազ. հա տարածք: Կազմավորվել է 330-338 թթ. Խոսրով Բ Կոտակ թագավորի կողմից ստեղծված անտարի տարածքի մի մասի վրա չոր նոսրանտառների, ֆրիզանային և կիսաանապատային լանդշաֆտների, բուսական և կենդանական եզակի համակեցությունների պահպանության նպատակով: Ըսկած է Արարատի մարզի հյուսիսարևելյան մասում՝ Ազատ և Վեդի գետերի ջրահավաք ավազաններում՝ 800-2315 մ բարձրությունների սահմաններում՝ Գեղամա լեռնավահանի և Մերձարաքայան ծալքաբեկորավոր լեռնաշղթաների միջև: Տարածքի մոտ 50 %-ը զբաղեցնում է 1500-2300 մ բարձրության միջին լեռնային գոտին:

Գծապատկեր 6

*Հատուկ պահպանվող տարածքները՝ ըստ տեսակի (հազ. հա), 2016-2020 թթ.
միջինը/18,44]*



ՀՀ տարածքի 1 %-ը կազմող արգելոցի տարածքում աճում է բույսերի 1849 տեսակ (ՀՀ բուսական աշխարհի ավելի քան 50 %-ը, Կովկասի ֆլորայի 1/3-ը), որոնք ներկայացված են 588 ցեղերով ու 107 լընտանիքներով: Բույսերից 80-ը գրանցված է Հայաստանի «Կարմիր գրքում»,


24-ը Էնդեմիկ են: Հանդիպում են 283 տեսակ՝ ողնաշարավորներ, որից 192 տեսակը՝ թռչուններ, 44 տեսակը՝ կաթնասուններ, 33 տեսակը՝ սողուններ, 9 տեսակը՝ ձկներ, 5 տեսակը՝ երկկենցաղներ: Ողնաշարավորներից 58 տեսակ գրանցված է Հայաստանի «Կարմիր գրքում», իսկ 51 տեսակ՝ Բնության պահպանության միջազգային միության «Կարմիր գրքում»: Արգելոցի տարածքը հարուստ է նաև պատմամշակութային հուշարձաններով: Այստեղ հաշվառված է այդպիսի 312 հուշարձան, որոնցից 29-ը՝ վանքեր, եկեղեցիներ և մատուռներ:

2. Շիկահողի արգելոցը գտնվում է Կապանի տարածաշրջանում՝ Ծավ գետի ջրահավաք ավազանում՝ ծովի մակարդակից 700-2800 մ բարձրությունների վրա՝ Խուստուկի լեռնազանգվածի հարավարևելյան և Մեղրու լեռնաշղթայի հյուսիսարևելյան լանջերին: Զբաղեցնում է 10.3 հազ. հա մակերես, որի 94 %-ը անտառապատ է: Արգելոցը ստեղծվել է կադուու, բոխու, հաճարենու, սովորական կենու, սոսու անտառների և կենդանիների (արջ, այծյամ, նապաստակ, ընձառյուծ և այլն) պահպանության նպատակով: Բուսատեսակներից (1100) 70-ը գրանցված է ՀՀ «Կարմիր գրքում»: Այստեղ է գտնվում **արևելյան սոսու՝ Կովկասում միակ պուրակը**: Շատ են վայրի պտղատու ծառատեսակները: Կենդանիներից շատերը նույնպես գրանցված են ՀՀ «Կարմիր գրքում»:

3. Էրեբունու արգելոցը գրաղեցնում է 89 հա տարածք: Ընկած է Երևանից հարավ-արևելք ընկած բլրապատ կիսաանապատային տարածքում՝ Գեղադիր գյուղի մոտ՝ ծովի մակարդակից 1300-1450 մ բարձրությունների վրա: **Ստեղծվել է դաշտավլուկազգիների վայրի ազգակիցների՝ վայրի ցորենների՝ աշխարհում եզակի գենոֆոնդի պահպանման նպատակով**:

Ազգային պարկը գիտահետազոտական հիմնարկ և հատուկ պահպանվող տարածք է, որը ստեղծվում է տվյալ տարածքի բնական պաշարների, լանդշաֆտների, բնության ու պատմամշակութային հուշարձանների պահպանության, ճանաչողական, ռեկրեացիայի, գրուաշրջության ու տնտեսական գործունեության նպատակով:

«Սևան» ազգային պարկն ընդգրկում է լճի ամբողջ տարածքը, լիճն օղակող ցամաքի մի մասը, ինչպես նաև լիճ թափվող գետերի հուները: Ազգային պարկի ընդհանուր մակերեսը 147.3 հազ. հա է, առանց լճի հայելու՝ 22.6 հազ. հա: Բնապահպանական գոտու տարածքը կազմում է 343 հա: Պարկը հիմնադրվել է Սևանա լճի ջրային և մյուս բնական ռեսուրսները, ինչպես նաև պատմական և մշակութային հուշարձանները պահպանելու համար: Ազգային պարկի գործառույթ է նաև զիտահետազոտական՝ տարածքի տնտեսական օգտագործման զիտական հիմունքները ուսումնասիրելու և մշակելու գործունեությունը՝ պահպանելով շրջակա միջավայրի էկոլոգիական հավասարակշռությունը: Ազգային պարկի տարածքը բաժանվում է **4 տարածքային-գործառական գոտիների՝** արգելոցներ, արգելավայրեր, ռելիեացիոն և տնտեսական: Պարկի տարածքում են գտնվում Նորաշենի, Լիճք-Արգիձիի, Գիլի և Արտանիշի արգելոցները (7.5 հազ. հա մակերեսով), Գավառագետի և Գիհի-կաղնուտային ռելիկտային արգելավայրերը (2.6 հազ. հա մակերեսով): Ռելիեացիոն գոտին կազմում է 4.7 հազ. հա, տնտեսական գոտին՝ 11.3 հազ. հա:



Ազգային պարկեր

- | | |
|--|--|
| <ul style="list-style-type: none">1. «Ամերիկա»2. «Դիմոկրատ»3. «Արքային»4. «Արևիկ» <p>Արգելություն</p> <ul style="list-style-type: none">1. «Հայոց անդամակցություն»2. «Հայոց անդամակցություն»3. «Հայոց անդամակցություն»4. «Հայոց անդամակցություն»5. «Հայոց անդամակցություն»6. «Հայոց անդամակցություն»7. «Հայոց անդամակցություն»8. «Հայոց անդամակցություն»9. «Հայոց անդամակցություն» | <ul style="list-style-type: none">1. «Ամերիկա»2. «Դիմոկրատ»3. «Արքային»4. «Արևիկ» <p>Արգելություն</p> <ul style="list-style-type: none">1. «Հայոց անդամակցություն»2. «Հայոց անդամակցություն»3. «Հայոց անդամակցություն»4. «Հայոց անդամակցություն»5. «Հայոց անդամակցություն»6. «Հայոց անդամակցություն»7. «Հայոց անդամակցություն»8. «Հայոց անդամակցություն»9. «Հայոց անդամակցություն» |
|--|--|

Արգելավայրեր

10. «Գիյամ»
 11. «Օրբելյանավի»
 12. «Պուստիկի»
ավագութեղեց
 13. «Վարդիկ»
 14. «Եղիշևանոնի»
 15. «Իշխանի»
 16. «Լուսակապ»
 17. «Ասմաւանի»
ջրառանձնված
 18. «Հոգհեղի Յուր
ամուսնակի»
 19. «Սաքամուխի»
 20. «Մրցալուրդուն»
 21. «Դրիմա Կամփի»
 22. «Ֆենունի»
 23. «Ֆենոնի ի ջրառանձնված»
 24. «Սուսա պրուսի»
 25. «Ալ լին»
 26. «Շատրվանը»
 27. «Զիկստուր»

Քարտեզ 5.ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներ

«Դիլջան» ազգային պարկը կազմավորվել է համանուն արգելոց հիման վրա 2002 թ.: Տարածվում է Աղստև և Գետիկ գետերի ջրահավաք ավազաններում, Փամբակի հյուսիսարևելյան, Արեգունու հյուսիսային, Մշափորի հարավային, Իջևանի հարավարևմտյան, Հալաբի արևելյան լանջերին, ծովի մակարդակից 1100-2800 մ բարձրությունների վրա: Ստեղծվել է հաճարենու և կաղնու անտառների բուսական ու կենդանական աշխարհի, ինչպես նաև Կովկասում հազվագյուտ հատապտղային կենու համակեցությունների պահպանության նպատակով: Զբաղեցնում է ավելի քան 28 հազ. հա տարածք: Բուսական աշխարհն ընդգրկում է 902 տեսակ ծաղկավոր բույսեր, որից 40-ը՝ հազվագյուտ,

իսկ 29 տեսակ գրանցված է ՀՀ «Կարմիր գրքում»: Այստեղ են գտնվում երրորդական դարաշրջանի մնացորդ կարմրածափ (մահիկի) պուրակները, որոնցից Աղնաբաթինը (Գետիկի ավագանում) ամենախոշորն է Անդրկովկասում: Կան շատ դեղաբույսեր, սննդային բույսեր և կերաբույսեր: Արգելոցում հանդիպում են գորշ արջ, այծյամ, գրշուկ, քարակզարիս, անտառային կատու, լուսան, աղվես, բազմաթիվ սողուններ ու երկկենցաղներ: Կլիմայավարժեցվում են ուսուրական բծավոր եղջերուն, ազնվացեղ եղջերուն և վայրի խոզը:

«Արփի լիճ» ազգային պարկը գտնվում է ՀՀ հյուսիս-արևմուտքում՝ Ամասիայի և Աշոցքի տարածաշրջանում: Ընդգրկում է Եղնախաղի լեռնաշղթայի արևելյան և Զավախիքի լեռնաշղթայի հարավարևմտյան լանջերը: Վերջիններս ունեն լեռնատափաստանային և մերձալպյան լանդշաֆտներ: Հատուկ պահպանության տակ են Զավախիք-Շիրակի բարձրավանդակի ուրույն կենսաբազմազանությունը, հատկապես որորի ամենամեծ գաղութը աշխարհում և գանգրափետուր հավալուսնի միակ բնակավայրը Հայաստանում: Տարածքում կան մոտ 670 տեսակի բույս, որոնցից 25-ը ներառված է ՀՀ «Կարմիր գրքում», իսկ 22-ը էնդեմիկ են:

«Արևիկ» ազգային պարկը գտնվում է Սյունիքում՝ Մեղրի լեռնաբազուկի հարավային լանջին, ինչպես նաև Աստղաձոր և Նյուվադի գետերի ջրահավաք ավագանում: Ստեղծվել է Մեղրի գետի բուսական և կենդանական աշխարհի պահպանության նպատակով: Զբաղեցնում է 34.4 հազ. հա տարածք: Ազգային պարկի տարածքում միմյանց են հաջորդում կիսաանապատային, անապատային, լեռնային տափաստանների և ալպյան մարգագետինների լանդշաֆտները: Հարուստ կենսաբազմազանությունից կարելի է առանձնացնել առաջավորասիական ընձառյուծը, բեզոարյան այծը, հայկական մուֆլոնը, միջերկրածովյան կրիան, հայկական իժը, կովկասյան ջրասամույրը, կասպիական հնդկահավը, կովկասյան մայրահավը: Կան նաև ՀՀ «Կարմիր գրքում» գրանցված մի շարք բուսատեսակներ:

ՀՀ պետական արգելավայրերը օրենքով սահմանված, մշտապես կամ ժամանակավորապես առանձնացված բնության հատուկ պահպանվող տարածքներ են՝ չափանմուշային, գիտական, կրթական, պատմամշակութային և տնտեսական արժեք ներկայացնող բնական էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների արդյունավետ պահպանման, նպատակային օգտագործման և բնական վերարտադրության նպատակով։ ՀՀ-ում ներկայում գործում են 27 պետական արգելավայրեր, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 103 հազ. հա, որը ՀՀ տարածքի 3.5 % է։ Արգելավայրերում բնական միջավայրի մյուս բաղադրիչների օգտագործումը թույլատրվում է։

ՀՀ տարածքը հարուստ է բնության կենդանի և անկենդան հուշարձաններով։ ՀՀ կառավարության 2008 թ. որոշմամբ առանձնացված է 230 բնության հուշարձան, դրանցից 109-ը՝ երկրաբանական (Աժդահակ և Արմաղան հրաբուխները, Ազատի, Արփայի և Հրազդանի կիրճերի բազալտե այունածն և ճառագայթածն մերկացումները, հրաբխային մի շարք կոներ, Գորիսի և Խնձորեսկի ժայռաբուրգերը, բարձր լեռնային լճակները, Սատանի կամուրջը), 48-ը՝ ջրաերկրաբանական՝ ստալակտիֆներով և ստալագմիտներով զարդարված Մողրովի և Մագիլի կարստային քարանձավները, 38-ը՝ ջրագրական (Շաքիի ջրվեժը, Գեղամա լեռների «Վիշապալիճը» և այլն), 16-ը՝ բնապատմական, 19-ը՝ կենսաբանական։ ՀՀ տարածքում կան նաև հինգ բուսաբանական այգիներ (Սոճուտ բուսաբանական այգին Լոռու մարզում, Իջևանի դենդրոպարկը, Երևանի, Վանաձորի և Սևանի բուսաբանական այգիները)։

Կենսաբանական ռեսուրսների սահմանափակ պաշարներ ունեցող մեր երկրի համար կենսաբազմազնության պահպանությունը բնապահպանական առավել արդիական խնդիրներից է։ Թեև ՀՀ հոչակած է բույսերի և կենդանիների հազվագյուտ տեսակներով, սակայն վերջին 4-5 տասնամյակերի ընթացքում մեր բնաշխարհից անհետացել կամ անհետացման եզրին են հայտնվել դրանց մի շարք տեսակներ։ Պահպանության կարիք ունեն ՀՀ բուսական աշխարհի տեսակնե-

րի գրեթե կեսը, ձկների 11 %-ը, երկկենցաղների 17 %-ը, սողունների 24 %-ը, թռչունների 23 %-ը և կաթնասունների 24 %-ը: Խնդրի լուծման համար պետության կողմից ստեղծվել են բնության հատուկ պահպանվող տարածքներ, և կազմվել են բույսերի ու կենդանիների «Կարմիր գրքեր»: ՀՀ բույսերի «Կարմիր գրքում» ընդգրկված է 494 տեսակ, որը կազմում է մեր ֆլորայի ավելի քան 15 %-ը, կենդանիների «Կարմիր գրքում՝ 317 տեսակ, որը կազմում է ողնաշարավորների ընդհանուր թվի շուրջ 70 %-ը: ՀՀ կենդանիների «Կարմիր գրքից» միջերկրածովյան կրիան, գանգրափետուր հավալուսանը, առաջավորասիական ընձայուծը, սպիտակապոչ արծիվը, հայկական իժը և մի քանի այլ կենդանիներ ներառված են միջազգային «Կարմիր գրքում»:

ՀՀ բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության թվարկված հիմնախնդիրների լուծման գործում կարևոր դեր ունեն պետության կողմից բնապահպանական տարբեր ոլորտների համար կատարված ծախսերը: 2019 թ. ՀՀ-ում բնապահպանական ընթացիկ ծախսերը կազմել են ավելի քան 9.5 մլրդ դրամ, որի 34.5 %-ը ծախսվել է արտադրական թափուններից և այլ վնասակար նյութերից հողերի պահպանության, 43.1 %-ը՝ ջրային պաշարների պահպանության և արդյունավետ օգտագործման, 20.9 %-ը՝ մթնոլորտային օդի պահպանության, 1.5 %-ը՝ հողերի ռեկուլտիվացիայի համար [45]:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչո՞ւ է բնական ռեսուրսների արդյունավետ ու լիարժեք օգտագործման հարցը ՀՀ-ում դարձել խիստ արդիական:

2. Բնութագրե՛ք ՀՀ հողային ռեսուրսների օգտագործման և պահպանության հիմնախնդիրը:

3. Ո՞րն է ՀՀ հանքային ռեսուրսների օգտագործման և պահպանության հիմնախնդիրի էռլույնը:

4. Վերլուծե՛ք ՀՀ օդային և ջրային ավագանների պահպանության հիմնախնդիրները:

5. Կատարե՛ք ՀՀ ժամանակակից եկողոգիական իրավիճակի վերլուծություն և գնահատում:

6. Հիմնավորե՛ք ՀՀ-ում բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության առավել հրատապ հիմնախնդիրները:

7. Ո՞րն է բնության հասուլ պահպանվող տարածքների դերը ՀՀ շրջակա միջավայրի պահպանության գործում:

8. ՀՀ-ում բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության տարածաշրջանային ի՞նչ առանձնահատկություններ կան: Պատասխանը հիմնավորե՛ք առանձին մարզերի օրինակով:

9. Առաջիկա տարիներին ՀՀ-ն բնօգտագործման ու շրջակա միջավայրի պահպանության ի՞նչ ռազմավարությամբ պետք է առաջնորդվի: Պատասխանը հիմնավորե՛ք համապատասխան փաստարկներով և տնտեսակողոգիական վերլուծությամբ:

ԳԼՈՒԽ 3

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՈԵՍՈՒՐՄՆԵՐԸ

3.1. ՀՀ տարածքի բնակեցման պատմաաշխարհագրական ակնարկ

ՀՀ պատմաաշխարհագրական տարրեր մարգերում տարաբնակեցման ժամանակակից ձևերի բազմազանությունն արդյունք է ոչ միայն բնական տարրերի բազմազանության, այլև անցյալի պատմական իրադարձությունների: Ավերիչ պատերազմների հետևանքով կործանվել և ավերվել են բազմաթիվ բնակավայրեր, նվազել են բնակավայրերի թիվը և մարդաշատությունը, փոխվել են բնակչության ազգային կազմը, կենցաղն ու տնտեսությունը, բնակավայրերի արտաքին տեսքը:

Հայաստան աշխարհում անհիշելի ժամանակներից գրադարձել են հողագործությամբ և ընդերքի հարստությունների օգտագործմամբ. Ք.ա երկրորդ հազարամյակում հիմնվել են գյուղական, իսկ Ք.ա. առաջին հազարամյակի սկզբում՝ քաղաքային բնակավայրերը [28]:

Թեև հարյուրամյակների ընթացքում հայ ազգի տարաբնակեցման շատ փոփոխություններ են եղել օտար նվաճողների անընդմեջ հարձակումների ու հալածանքների հետևանքով (ընդհուպ մինչև 1915 թ. եղենը), այնուհանդերձ տեղաբնակների կորիզը դարերի ընթացքում համայնքների ձևով պահպանել ու սերունդներին է փոխանցել գենետիկորեն ընտրված և տվյալ լանդշաֆտին բնորոշ ապրելակերպի առանձնահատկությունները: ՀՀ տարածքում կարելի է առանձնացնել հինգ խոշոր գոտիներ, որոնք միմյանցից տարբերվում են տարաբնակեցման բնապատմական առանձնահատկություններով: Դրանք են [26].

1. Փոքր Կովկասի արտաքին, ծալքաբեկորավոր, գետահովիտներով մասնատված, անտառային լանջերով լեռնաշղթաների գոտին, որի մեջ են մտնում Աղստևի, Հախումի, Տավուշի, Խնձորուտի, Միափորի, Մոավի, Խաչենի, Ղարաբաղի, Բարգուշատի, Խուստուկի շղթաները և դրանցից տարածակվող լեռնաբազուկները,

2. Փոքր Կովկասի ներքին, ծալքավոր, չափավոր մասնատված, անտառներով աղքատ, մարգագետնային լանջերի և լեռնաշղթաների գոտին, որը ներառում է Վիրահայոց, Բագումի, Փամբակի, Ծաղկունյաց և Արեգունու շղթաները,

3. Իրաբիսային լեռնավահանների, բարձրադիր սարավանդների և միջլեռնային գոգավորությունների մարգագետնատափաստանային գոտին, որի մեջ են մտնում Խոնավ, Արագածի, Գեղամա, Վարդենիսի, Սյունիքի լեռնավահանները՝ շրջակա սարավանդներով, ինչպես նաև Աշոցքը, Շիրակի և Սևանի գոգավորությունները,

4. Արարատյան դաշտի և հարակից ցածրադիր սարավանդների կիսաանապատային գոտին,

5. Փոքր Կովկասի մերձարաքայան խիստ մասնատված, ծալքաբեկորավոր շրթաների, անտառազուրկ կամ ֆրիգանաքսերոֆիլ բուսականությամբ լանջերի գոտին, որը ներառում է Ուրծի, Երանոսի, Հայոց ձորի և Մեղրու շղթաները:

Հայաստանն իր աշխարհագրական դիրքի պատճառով հարյուրամյակներ շարունակ եղել է պատերազմների թատերաբեմ: Պետականության կորուստը և օստարերկրյա զավթիչների բազմիցս կրկնվող ասպատակությունները Հայաստան երկիրը և հայ ժողովրդին հասցրել են կործանման եղրին: Հարյուրամյակներ շարունակ չի աձել երկրի բնակչությունը:

Հայաստանի ներկայիս տարածքում բնակչության տարաբնակեցման ընթացքը տեղի է ունեցել քաղաքական և սոցիալ-տնտեսական որոշակի գործուների ազդեցության տակ:

XIX դարի ոռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները

և դրանց հաջորդած հաշտության պայմանագրերն առաջ բերեցին Արևմտյան Հայաստանի և Պարսկահայքի հայ բնակչության, ինչպես նաև քրիստոնեաղավան այլազգի ճնշված խավի զանգվածային տեղաշարժը և գաղթը դեպի ոռուսական զորքի կողմից գրավված տարածքներ: Պարսկահայության իիմնական զանգվածները Խոյի, Սալմաստի, Մարանդի խանություններից և Թավրիզից, Գյուլիստանի (1813 թ.) և Թուրքմենչայի (1828 թ.) պայմանագրերի համաձայն, հաստատվեցին Արարատյան ու Շարուրի դաշտերում և կից սարավանդներում, Քեշիշքենդում (Եղեգնաձոր), Շուշիում և որոշ չափով նաև Զալալօղիում (Ստեփանավան) [26]:


Ռուս-թուրքական պատերազմների ժամանակ՝ Ադրիանապոլսի հաշտության պայմանագրից հետո, Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան և Վրաստան տեղափոխվեց հայ ժողովրդի մի ստվար զանգված, Էրզրումի, Գյումուշխանեի, Արդահանի ու Տրավիզոնի հայ բնակչության հոծ զանգվածներ տեղափոխվեցին ու հաստատվեցին Զավախքի և Ախալցխայի փաշայություններից գրաված տարածքներում: Բաբերդ-Արդվինից մի հոսանք տեղափոխվեց Բոլիսի-Խաչեն: Էրզրումից, Կարսից, Բասենից, Խնուսից տեղափոխված ժողովուրդը տեղափոխվեց Շիրակի և Ապարանի դաշտերում, Բայազետից, Ալաշկերտից ու Բասենից տեղափոխվածները՝ Շաղկաձորում և Սևանի ավազանում (Գավառ, Մարտունի, Վարդենիս) և այլն [6]: Միայն 1828-1830 թթ. Արևմտյան Հայաստանից և Պարսկահայքից Արևելյան Հայաստան են տեղափոխվել 130-140 հազ. հայեր՝ տեղափորվելով վերը նշված շրջաններում: Արդեն 1831 թ. ՀՀ ներկայիս տարածքում հաշվվում էին 710 բնակեցված գյուղ և մեկ քաղաք, իսկ բնակչության թիվը կազմում էր 161747 մարդ [8, 40]: Բնակչության թիվը համեմատաբար մեծ էր Արարատյան դաշտում, Շիրակում, Ապարանի սարահարթում և Սևանի ավազանում, որտեղ էլ գտնվում էին առավել մարդաշատ գյուղեր: Գյուղական բնակավայրերի ցանցն առավել նոսր էր Աշոցքում, Լոռում և Տավուշում: Ամասիայի, Աշոցքի և Տաշիրի նախկին վարչական շրջանները 1831 թ. ունեին ընդամենը 13 բնակեցված գյուղ, իսկ 4050

մարդ դեռևս անօթևան էր: Գյուղական բնակչության խտությունը համեմատաբար բարձր էր մերձերևանյան շրջանում, Ախուրյանի և Արքիկի տարածաշրջաններում [40]:

Ներգաղթի երկրորդ խոշոր հոսքը կատարվեց 1877-1878 թթ. ոռութուրքական պատերազմից հետո (Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի համաձայն): Նույն փաշայություններից, ինչպես նաև հետագայում Համբյյան հայկական ջարդերի պատճառով մինչև 1896 թվականը ներառյալ Բարերդից, Երզնկայից, Բիթլիսից, Շապին-Գարահիսարից, Խարբերդից, Սեբաստիայից, Մուշից, Սասունից, Վանից և այլ վայրերից հայ բնակչության մի ստվար զանգված տեղափոխվեց Ռուսաստանի կողմից գրավված Կարսի, Կաղզվանի և Օլրիի շրջանները, ինչպես նաև Այրարատ, Շիրակ և Սևանի ավազան՝ ստեղծելով իրենց համայնքային տիպի գյուղական բնակավայրերը: Մինչ երկրորդ խոշոր ներգաղթը՝ 1831-1878 թթ. ընթացքում, Արևելյան Հայաստանում բնակչության թվաքանակը ավելացավ ավելի քան 3 անգամ՝ հասնելով 496140 մարդու [26]:

Վերաբնակեցվեցին նախկինում ավերված տասնյակ գյուղական բնակավայրեր, միաժամանակ հիմնվեցին բազմաթիվ նոր գյուղեր: Մոտ քառասուն տարվա ընթացքում գյուղական բնակավայրերի թիվն ավելացավ 279-ով՝ 1873 թ. կազմելով 989 գյուղ: Զիմնվեցին երկու քաղաքներ՝ Գյումրին (Ալեքսանդրապոլ) և Նոր Բայազետը (Գավառ): Առանձնապես նկատելի էր Գյումրիի արագ աճը. 1831-1873 թթ. վերջինիս բնակչությունն ավելացավ 5,8 անգամ (1873 թ.՝ 19976 մարդ):

Առաջին համաշխարհային պատերազմը և Մեծ եղեռնը վերջնականապես հայաթափեցին Արևմտյան Հայաստանը, ներառյալ նաև Թուրքիային զիջված Կարսի, Օլրիի, Կաղզվանի և Սուրմալուի գավառները: Վերջիններիս բնակիչներն արդեն կրկնակի և եռակի տեղահանման պայմաններում ցրվեցին ներկայիս ՀՀ տարբեր մասերում, Վրաստանում, Հյուսիսային Կովկասում և այլուր՝ աշխատելով պահպանել իրենց էթնիկաբարբառային և տարաբնակեցման ինքնատիպությունն առանձին գաղթօջախներում:



**Քարտեզ 6. ՀՀ գյուղական բնակավայրերի թիվը և միջին մարդաքանակը
1831 թ.՝ ըստ տարածաշրջանների**


Մինչև Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելը՝ 1897-1914 թթ. ընթացքում շարունակվող ներգաղթի ու բնական աճի շնորհիվ Արևելյան Հայաստանի բնակչությունը հասավ նախախորհրդային ժամանակաշրջանի առավելագույն թվին (1014255 մարդ) [8]: Ցավոք, հետագա մի քանի տարիները դաժան և մահաբեր եղան Հայաստանի համար: Համաշխարհային պատերազմի, թուրքական զարդերի, քաղա-

քացիական կոփվների, սովի ու համաձարակների հետևանքով ընդամենը 6 տարվա ընթացքում բնակչության թիվը 1914 թ. համեմատությամբ նվազեց ավելի քան 29 %-ով, ավերվեցին ու դատարկվեցին հարյուրավոր գյուղեր (1919 թ. դատարկ էին 241, ավերակ վիճակում՝ 63 գյուղեր) [6]: Բացի հայ բնակչությունից՝ այդ ընթացքում Հայաստան ներգաղթեցին նաև քրիստոնեադավան այլազգիներ և ռուս աղանդավորների տարբեր խմբեր:

Աղյուսակ 12

*ՀՀ բնակչության և բնակավայրերի թվի շարժնթացը,
1831-1926 թթ. [26, 40]*

Տարեթվեր	Բնակչության թիվը			Գյուղերի թիվը	Գյուղերի միջին մարդաքանակը
	Ընդամենը	քաղաքային	գյուղական		
1831	161747	11920	149827	710	211
1873	496140	37277	458863	989	464
1897	797853	69558	728295	1287	566
1914	1014255	95320	918935	1170	785
1922	782052	101960	680092	1114	610
1926	881290	135644	745646	1286	580



Քարտեզ 7. ՀՀ գյուղական բնակավայրերի թիվը և միջին մարդաքանակն ըստ տարածաշրջանների (1897 թ.)

Քրիստոնեական՝ նեստորաքաղկեդոնական դավանանքին պատկանող ասորիների մի խումբ, օգտվելով Թուրքմենչայի պայմանագրից, 1830 թ. տեղափոխվեց Հայաստան՝ բնակություն հաստատելով Արտաշատի տարածաշրջանի Վ. Դվին (Ասորի), Դիմիտրով (Ղույլասար) գյուղերում և Արգնիում: Թուրքական հալածանքներից պաշտպանվելու համար 1828 թվականից մինչև 1915 թվականը ներառյալ Հայա-

տան ներգաղթեցին եղիներ (քրիստոնեական և այլ աղանդավորական դպրանքի պատկանող իրանալեզու ժողովուրդ), որոնք բնակություն հաստատեցին Արագածի լանջերում և ցածրադիր սարավանդներում (Ապարանի, Արագածի, Թալինի, Էջմիածնի և Արմավիրի տարածաշրջաններում), որտեղ կային նպաստավոր պայմաններ եղիների ավանդական գրադմունքի՝ ոչխարաբուծության զարգացման համար:

Սկսած IX դարի 40-ական թվականներից՝ ոռուսական իշխանություններն աղանդավորականների մի ստվար բազմություն վերաբնակեցրին Անդրկովկասում (Տամբովի, Տուլայի, Մարատովի և Վորոնեժի մարզերից) [6]: Ռուս աղանդավորականները բնակություն հաստատեցին Վրաստանի հարավում (Զավախը և Ծալկա) և Հայաստանի հյուսիսի ազատ տարածքներում, ներառյալ նաև Կարսի շրջանը: Լոռի-Փամբակի շրջաններում հաստատվեցին մոլոկանները: Նրանք այստեղ հիմնեցին կանոնավոր գծային հատակագծերով հարմարավետ և ընդարձակ գյուղեր (Նիկոլաևկա, Պոկրովկա, Գյառզյառ, Վորոնցովկա, Նովո Միխայլովկա, Պրիվոլոնյե, Վոսկրեսենովկա, Նիկիտին): Սևանի ավագանում և Զանգեզուրում հյուսիսում տեղաբաշխվեցին հիմնականում իկոնոբորները և մոլականների մի մասը (Նարեթինո, Ելենովկա, Միխայելովկա, Սեմյոնովկա, Կոնստանտինովկա, Բազարչայ, Բարիսովկա):

Օգովելով իշխանությունների կողմից տրված արտոնություններից՝ ոռուսական գյուղերն արագորեն զարգանում էին: Միաժամանակ ոռուսական գյուղական բնակավայրերի հիմնումն ու զարգացումը բարերար ազդեցություն ունեցան բնակեցված այդ շրջաններում ցեղային տավարաբուծության, ձիաբուծության և թռչնաբուծության զարգացման համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպե՞ս է տեղի ունեցել ՀՀ ժամանակակից տարածքի բնակեցման պատմական ընթացքը:
2. Ի՞նչ իրադարձություններ են պայմանավորել ՀՀ ժամանակակից տարածքի բնակեցումն ու բնակավայրերի ցանցի ձևավորումը:
3. Կատարե՛ք ՀՀ տարածքի բնակեցման 1830-1920-ական թթ. պատմաշխարհագրական վերլուծություն:
4. Կատարե՛ք Ձեր մարզի, տարածաշրջանի և բնակավայրի բնակեցման պատմաաշխարհագրական վերլուծություն:

3.2. ՀՀ տարածքի բնակեցման գործոնները, տարաբնակեցման ձևավորումը

Ռուսաստանին միանալուց հետո սոցիալ-տնտեսական որոշակի գործոնների ազդեցության տակ ձևավորվում և զարգանում էր ՀՀ ժամանակակից տարածքի տարաբնակեցումը: Արևմտյան Հայաստանից գաղթած քաղաքաբնակ արհեստագործական խավն իր հետ բերեց և սկսեց զարգացնել արհեստագործական ավանդական ճյուղերը բնակչությունից լրված ու ամայացած գյուղերում, ավաններում և քաղաքներում: Սկսեցին զարգանալ քաղաքներին հատուկ կյանքի բոլոր բնագավառները: Առանձին վայրերում, փաստորեն, կառուցվում էին նոր քաղաքներ (Ալեքսանդրապոլ, Նոր Բայազետ):

Արարատյան դաշտում և հարակից շրջաններում վերակառուցվում է պարսկական ժամանակաշրջանից մնացած ոռողիչ ցանցը, պարբերաբար յուրացվում են կիսաանապատային հողատարածքները: Ընդարձակվում են խաղողի, մրգատու այգիների, տեխնիկական մշակաբույսերի (բամբակ), յուղատու բույսերի ցանքատարածքները (կտավատ, կանեփ, քունջութ) և նրանց սպասարկող ճյուղերի ցանցը: Զգալի զարգացում է ապրում նաև անասնապահությունը.

Քաղաքային բնակավայրերում և խոշոր գյուղերում զարգանում էր արհեստագործությունը՝ իր բազմազան կառուցվածքով: Առևտրի զարգացումն իր հերթին նոր խթան է դառնում գյուղատնտեսական բնակավայրերի զարգացման համար: Ստեղծվում են կոնյակային տեսակի բարձրորակ խաղողի նոր այգիներ՝ Շուտովի կոնյակի կոմբինատի հարածուն պահանջները բավարարելու համար: Զուգահեռաբար զարգանում էր նաև բարձրորակ գինիների արտադրությունը:

Հայկական մարզում արագորեն սկսեց զարգանալ նաև հանքարդյունաբերությունը Ալավերդու, Շամլութի, Կապանի պղնձահանքերի և Կողբի բարձրորակ աղիանքի շահագործմամբ, որը ստեղծեց մասնագիտացված հույն հանքագործների նոր օջախներ շրջակա վայրերում:

Արդյունաբերական օջախների շուրջը ստեղծվում էին նրանց սպասարկման համար նոր բնակավայրեր, բանվորական ավաններ:

Ռազմավարական բնույթի ձանապարհների շինարարությունը (Երևան-Գյումրի-Ախալքալաք, Երևան-Ապարան-Ղարաքիլիսա-Զալալօղի-Բոլնիս-Թիֆլիս, Երևան-Ելենովկա-Դիլիջան-Խչնան-Թիֆլիս, Երևան-Բայազետ-Մարտունի-Քեշիշքենդ, Գյումրի-Ղարաքիլիսա-Դիլիջան-Թիֆլիս, Կարս-Արդահան-Ախալցիխ, Կարս-Մարիղամիշ-Էրզրում, Երևան-Քեշիշքենդ-Գորիս-Շուշի), ինչպես նաև բազմաթիվ այլ բանուկ ձանապարհների վերակառուցումն անգնահատելի դեր խաղացին բնակավայրերի ձևափորման ու զարգացման համար [26]: Մի կողմից ձանապարհաշինությունը պահանջում էր մեծ չափերի բանվորական ուժ, որն ապահովվում էր հիմնականում գյուղական բնակչության հաշվին, մյուս կողմից կառուցվող ձանապարհների հանգուցային (խաչմերուկային) հարմար վայրերում ստեղծվում էին իջևանատներ (քարվանսարաններ) և բանվորական ավաններ:

Բացի ձանապարհաշինությունից՝ բնակավայրերի ցանցի ձևավորման ու զարգացման համար մեծ դեր ունեցավ նաև երկաթուղագծերի շինարարությունը: 1899-1900 թթ. կառուցվեց Թիֆլիս-Գյումրի-Կարս երկարգիծը, 1908 թ.՝ Գյումրի-Երևան, 1898 թ.՝ Ուլու-Խանլի-Զուլֆա, 1913 թ.՝ Կարս-Մարիղամիշ գիծը [1]: Կենդանացավ Թիֆլիսից մինչև Երևան ձգվող քարքարոտ ու ամայի տարածքների կյանքը՝ բազմաթիվ գյուղերով ու մշակելի նոր հողատարածություններով:

Այսպիսով՝ ՀՀ ժամանակակից տարաբնակեցումը, որն ունի պատմական խորը արմատներ՝ պայմանավորված բնապատմական ու սոցիալ-տնտեսական գործուններով, հիմնական գծերով սկսել է ձևավորվել IX դարի 30-40-ական թվականներից: Դրան հաջորդած հետագա տասնամյակների (1830-1926 թթ.) ընթացքում շարունակվող ներզադի, բնակչության ավելացման, նոր բնակավայրերի ստեղծման և նախկինում ավերված ու բնազրկված բնակավայրերի վերականգնման շնորհիվ հիմնական գծերով ձևավորվում է ՀՀ ժամանակակից տարա-

բնակեցման համակարգի հիմքը:


Խորհրդային իշխանության տարիներին սեփականության համայնավարական ձևը նպաստում էր խոշոր զյուղային տարաբնակեցման առաջացմանը, իսկ երկրում ձևավորված միասնական տարածքաարտադրական համալիրը՝ միասնական տարաբնակեցման համակարգի ձևավորմանը:

Վերջին երեք տասնամյակում տեղի ունեցած քաղաքական և սոցիալ-տնտեսական փոփոխությունները՝ հողի և գյուղատնտեսական արտադրության այլ միջոցների սեփականաշնորհումը, միանգամայն նոր տնտեսական պայմաններ են ստեղծել ՀՀ բնակավայրերի զարգացման համար: Բայց քանի որ տարաբնակեցումն արտադրության համեմատ ավելի իներցիոն և պահպանողական է, ոչ միանգամից և ոչ բոլոր դեպքերում է համարժեքորեն հետևում արտադրության մեջ և արտադրական հարաբերություններում տեղի ունեցած փոփոխություններին:

Բացի զուտ տնտեսական գործոններից՝ **ՀՀ տարաբնակեցման ձևավորման համար որոշակի դեր են ունեցել նաև սոցիալ-ժողովրդագրական գործոնները՝ բնակչության ազգային կազմը, ազգային, մշակութային ու կենցաղային առանձնահատկությունները, բնակչության շարժունակության մակարդակը, ժողովրդագրական վարքը, մարդկային հարաբերությունների և կապերի բնույթը: Մասնագետների կարծիքը հայերի սոցիալական կազմակերպման հիմնական ձևել է համայնքը: Հայ բնակչության էթնոժողովրդագրական առանձնահատկությունները՝ ծնելիության և բնական աճի ավանդաբար բարձր մակարդակը, բազմանդամ ընտանիքների գերակշռությունը, ազգացական կապերի մեծ դերը և այլ գործոններ, հայկական գյուղն ու քաղաքը դարձել են հասարակության տարածքային կազմակերպման սկզբնական և հիմնական բջիջը:**

Հայաստանում համայնքային կյանքը մի նոր բովանդակություն է ստացել խորհրդային տարիներին: Ընդհանուր նպատակների ու շահերի և համատեղ աշխատանքի պայմաններում համայնքը՝ որպես

միասնական սոցիալական օրգանիզմ, ստանում է իրական տնտեսական բռվանդակություն։ Վերջինս նպաստում էր բնակավայրի տնտեսական բազայի ամրապնդմանը, բնակչության թվի ավելացմանը և գյուղերի խոշորացմանը։



Քարտեզ 8. ՀՀ գյուղական բնակչության խտությունը և գյուղերի թիվը (1926 թ.)

ՀՀ բնակավայրերի զարգացման համար խորհրդային տարիներին բացառիկ նշանակություն է ունեցել ավտոմոբիլային տրանսպորտը: Մինչև 1990-ական թվականներն արմատապես վերափոխվեց ՀՀ ավտոճանապարհային ցանցը, կառուցվեցին նորերը, ստեղծվեցին ժամանակակից ավտոճանուղիներ: Եթե նախկինում բազմաթիվ գյուղական

բնակավայրեր ուղղակի ելք չունեին դեպի գլխավոր ճանապարհները, և նրանց հետ կապվում էին Աղրբեջանի տարածքով (Սյունիքում և Տավուշում), ապա 1980-ական թվականներից հանրապետության ավտոմոբիլային ճանապարհները միացված էին միասնական ցանցի մեջ, որն ընդգրկում էր նույնիսկ ամենահեռավոր գյուղերը:

Խորհրդային վերջին տարիներին ՀՀ հարյուրավոր գյուղական բնակավայրեր ապահովված էին գազամուղներով և ստանում էին բնական գազ: Դեռևս 1960 թ. առաջինը ԽՍՀՄ-ում էլեկտրականություն ստացան ՀՀ բոլոր գյուղերը, իսկ 1973 թ. ավարտվեց քաղաքային ու գյուղական բնակավայրերի էլեկտրիֆիկացումը [28]:

Տարաքնակեցման գործընթացների վրա հական ազդեցություն են բողնում սոցիալական ենթակառուցվածքի առանձին ոլորտներ և ճյուղեր: Դրանք, անմիջապես կապված լինելով բնակչության թվի, տեղաբաշխման և կազմի հետ, որոշակի դեր են խաղում բնակավայրերի զարգացման և տարաքնակեցման համակարգաստեղծ գործընթացներում:

1945 թվականից հետո ՀՀ տնտեսական արագ զարգացումը, բնակչության եկամուտների և պահանջմունքների աճը պայմանավորեցին սոցիալական ենթակառուցվածքի զարգացումը: Կրթության մակարդակով հանրապետությունը դուրս եկավ միջազգային չափանիշի առաջավոր բնագծեր: Քաղաքային և գյուղական բնակավայրերում ստեղծվեցին կենցաղային սպասարկման, առևտրի, մշակութալուսավորչական, առողջապահական, սպորտային ու զբոսաշրջային օբյեկտներ: Արմատապես բարելավվեց բնակչության բուժսպասարկման գործը:

Բոլոր ժամանակներում աշխարհաքաղաքական գործոնները նպաստել կամ էլ խոշրնդուել են Հայաստան աշխարհում բնակավայրերի զարգացմանը: Այս իմաստով հարկ է նշել խորհրդային և հետխորհրդային տարիներին ՀՀ վարչատարածքային փոփոխությունների ազդեցությունը տարաքնակեցման ու առանձին տարածքների տնտե-

սական յուրացման վրա, օրինակ՝ 1982 թ. վերջերին նոր կազմավորված Բաղրամյանի վարչական շրջանն ուներ ընդամենը 8 գյուղ, իսկ հետագայում դրանց թիվն ավելացավ 6-ով: Նոր բնակավայրերի ստեղծման և հետագա զարգացման գործում իր դերն է ունեցել այդ տարածքին վարչական միավորի կարգավիճակ տալը:

ՀՀ ՏԱԴ-ը, մասնավորապես սահմանամերձ գոտու տարածքները նախկինում որպես տարաբնակեցման գործոն չունեին էական նշանակություն: Այժմ ՀՀ արտաքին սահմանների ձգվածությունը զգալիորեն մեծացել է, և անհրաժեշտ է սահմանամերձ գոտում ստեղծել երկրի անվտանգության ու տնտեսական գործունեության ենթակառուցվածքներ, որոնք իրենց դերը կունենան սահմանամերձ բնակավայրերի պահպանման և սոցիալ-տնտեսական զարգացման գործում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Սոցիալ-տնտեսական ի՞նչ գործընթացներ են պայմանավորել ՀՀ ժամանակակից տարաբնակեցման ցանցի ձևավորումը:
2. Գնահատե՛ք ենթակառուցվածքային առանձին տարրերի դերը ՀՀ բնակավայրերի ցանցի ձևավորման գործում:
3. Աշխարհաքաղաքական ի՞նչ գործընթացներ են իրենց ազդեցությունը թողել ՀՀ տարաբնակեցման համակարգի ձևավորման ու զարգացման վրա:
4. ՀՀ առանձին մարզերի օրինակով կատարե՛ք տարաբնակեցման ձևավորման սոցիալ-տնտեսական գործոնների վերլուծություն:
5. Աշխարհաքաղաքական ի՞նչ գործընթացներ են իրենց ազդեցությունը թողել ՀՀ տարաբնակեցման ձևավորման ու զարգացման վրա:

3.3. Բնակչության թվի շարժնթացը, վերաբռնդությունը

Պատմական Հայաստանի ամբողջ տարածքում, ինչպես նաև ՀՀ ժամանակակից տարածքում, բնակչության թվի, կազմի և տեղաբաշխման անընդհատ փոփոխություններ են եղել: 1828 թ. Արևելյան Հայաստանի Շուսաստանին միացմամբ թեև տնտեսական շահագործումն ու ձնշումը չվերացան, սակայն հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման վտանգը գոնե վերացվեց, որն ապացուցվեց հետագա ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած իրադարձություններով:

Աղյուսակ 13

ՀՀ մշտական բնակչության թվաքանակի փոփոխության բաղադրիչները, հազար մարդ (1990-2020 թթ.) [15; 42]

Տարեթիվ	Բնակչության թվաքանակը (տարեկան վերաբերյալ)	Հնարինությունը (+,-)	Բնակչության փոփոխությունը (+,-)	Միգրացիոն փոփոխությունը	Արտվածական փոփոխությունը	Ըստ կախության դիրքորոշում
1990	3514.9	59.6	57.9	1.7	3574.5	1.70
1991	3574.5	58.8	54.4	4.4	3633.3	1.64
1992	3633.3	-169.6	44.7	-214.3	3463.7	-4.67
1993	3463.7	-107.0	31.6	-138.6	3356.7	-3.09
1994	3356.7	-96.4	26.5	-122.9	3260.3	-2.87
1995	326.3	-11.5	24.1	-35.6	3248.8	-0.35
1996	3248.8	-2.8	23.2	-26.0	3246.0	-0.09
1997	3246.0	-7.8	20.0	-27.8	3238.2	-0.24
1998	3238.2	-6.1	16.2	-22.3	3232.1	-0.19
1999	3232.1	-5.2	12.4	-17.6	3226.9	-0.16
2000	3226.9	-11.6	10.3	-21.9	3215.3	-0.36
2001	3215.3	-7.0	8.1	-15.1	3208.3	-0.22
2002	3208.3	-17.1	6.7	-23.8	3191.2	-0.53

2003	3191.2	-17.4	9.8	-27.2	3173.8	-0.55
2004	3173.8	-17.8	11.8	-29.6	3156.0	-0.56
2005	3156.0	-19.2	11.1	-30.3	3136.8	-0.61
2006	3136.8	-19.4	10.4	-29.8	3117.4	-0.62
2007	3117.4	-20.1	13.3	-33.4	3097.3	-0.64
2008	3097.3	-20.5	13.8	-34.3	3076.8	-0.66
2009	3076.8	-21.6	16.8	-38.4	3055.2	-0.70
2010	3055.2	-20.7	16.9	-37.6	3034.5	-0.68
2011	3034.5	-13.1	15.4	-28.5	3021.4	-0.13
2012	3021.4	5.5	14.9	-9.4	3026.9	0.18
2013	3026.9	-9.8	14.6	-24.4	3017.1	-0.32
2014	3017.1	-6.5	15.3	-21.8	3010.6	-0.22
2015	3010.6	-12.0	13.9	-25.9	2998.6	-0.40
2016	2998.6	-12.4	12.4	-24.8	2 986.1	-0.42
2017	2 986.1	-13.4	10.6	-24.0	2 972.7	0.45
2018	2 972.7	-7.4	10.6	-18.2	2965.3	-0.25
2019	2965.3	-5.6	9.8	-15.4	2959.7	-0.19
2020	2959.7	4.4	1.1	3.3	2964.1	0.15

1850-ական թթ. ամբողջ պատմական Հայաստանում հաշվվել է մոտավորապես 3.5 մլն բնակիչ: Ռուսաստանին միանալու պահին ՀՀ ներկայիս տարածքում բնակչության թիվը կազմում էր ընդամենը 97.4 հազ. մարդ [28], որից հետո սկսվեց բնակչության կայուն աճի մի տևական ժամանակաշրջան: Այդ գործընթացում էական դեր են ունեցել նաև միզրացիոն հոսքերը, որոնք ունեցել են առավելապես քաղաքական դրդապատճառներ:

Եթե Արևելյան Հայաստանում ստեղծված ուազմաքաղաքական իրավիճակը նպաստում էր ներգաղթին, ապա շուկայական հարաբերությունների աստիճանական ներթափանցումը տնտեսության մեջ հանգեցնում էր թաքնված գերբնակեցվածության, որի պատճառով առաջանում էր զյուղական բնակչության արտագաղթ դեպի արդյունա-

բերական շրջաններ՝ Բաքու, Բարսում, Թիֆլիս, Ռուսաստանի արդյունաբերական այլ կենտրոններ ու արտասահման: Առաջին համաշխարհային պատերազմին նախորդող տարիներին արտագնացների միջին տարեկան թիվը հասնում էր մի քանի հազարի: Թուրքական կրկնակի օկուպացիայի (1918 և 1920 թթ.) և 1918-1920 թթ. սովոր ու համաձարակների հետևանքով մեծաքանակ զոհեր տվեց նաև Արևելյան Հայաստանը, և 1914 թ. համեմատությամբ բնակչություն թիվը 1920 թ. նվազեց 29 %-ով՝ կազմելով ընդամենը 720 հազ. մարդ [28]: Դրանց թվում էին նաև այն տասնյակ հազարավոր գաղթականները, որոնք հաստատվել էին Երևանում, Էջմիածնում և այլ բնակավայրերում:

Աղյուսակ 14

ՀՀ բնակչության թվաքանակի շարժը (1926-2021 թթ.) [15;43]

Տարեթիվ	Բնակչության թվաքանակը, հազ. մարդ	Այդ թվում՝		Տոկոսը՝ ընդհանուրի նկատմամբ	
		քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական
1926 ¹	881,3	167,1	714,2	19,0	81,0
1930	993,3	245,8	753,5	24,6	75,4
1939 ²	1282,3	366,4	915,9	28,4	71,6
1940	1320,3	375,0	945,0	28,4	71,6
1945	1186,9	411,4	775,5	34,7	65,3
1950	1347,2	566,3	780,9	42,0	58,0
1959 ¹	1765,3	873,1	892,2	49,5	50,5
1970 ¹	2492,6	1472,7	1019,9	59,1	40,9
1979 ¹	3037,3	1985,7	1051,6	65,4	34,6
1985	3323,2	2235,0	1088,2	67,6	32,4
1988	3463,6	2356,1	1107,5	68,0	32,0
1989 ¹	3304,7	2222,2	1082,5	67,2	32,8
1989	3455,2	2361,7	1093,5	68,4	31,6
1990	3514,9	2416,8	1098,1	68,8	31,2

1991	3574,5	2473,6	1100,9	69,2	30,8
1992	3633,3	2503,3	1130,0	68,9	31,1
1995	3260,3	2166,4	1093,9	66,4	33,6
2000	3226,9	2095,8	1131,1	64,9	35,1
2001 ¹	3213,0	2066,1	1146,9	64,3	35,7
2005	3215,8	2062,3	1153,5	64,1	35,9
2010	3249,5	2080,6	1168,9	64,0	36,0
2011	3018,9	1911,3	1107,6	63,0	37,0
2012 ⁰	3021,4	1912,7	1108,7	63,0	37,0
2013 ⁰	3026,9	1917,5	1109,4	63,0	37,0
2014	3017,1	1914,1	1103,0	63,4	36,6
2015	3010,6	1912,6	1097,7	63,5	36,5
2017	2986,1	1901,4	1084,7	63,7	36,3
2018	2 972,7	1 895,8	1 076,9	63,8	36,2
2019	2965,3	1894,9	1070,4	63,9	36,1
2021	2964,1	1896,2	1067,9	64,0	36,0

ՀՀ բնակչության թվաքանակը համեմատաբար արագ աճել է 1920-ական թվականներից սկսած, երբ երկրում գրանցվեց խաղաղ շինարարության ու տնտեսական առաջընթաց, հաստատվեց ժողովրդագրական նոր իրավիճակ: Ավելացավ ծնելիության ցուցանիշը, նվազեց մահացությունը, և արդյունքում բարելավվեց բնական վերարտադրության ցուցանիշը: Բացի դրանից՝ բնակչության թվաքանակի ավելացմանն էապես նպաստեցին նաև ներգաղթի ու հայրենադարձության մեծացող ծավալները: Հարկ է նաև նշել, որ խորհրդային իշխանության առաջին երեք տասնամյակներին ՀՀ բնակչության թվի ավելացումն ավելի մեծ կլիներ, եթե չինեին ստալինյան տարիների քաղաքական հալածանքները, աքսորը, հազարավոր մարդկանց գնդակահարությունը, ինչպես նաև Երկրորդ համաշխարհային պատերազմը, որի ժամանակ զոհվեց ավելի քան 300 հազ. մարդ:

Հետպատերազմյան (1945 թվականից հետո) տարիներին ՀՀ-ում

դիտվել է բնակչության թվի կայուն աճ: **Մեր երկրում բնակչության թվի համեմատաբար բարձր աճ գրանցվել է 1959-1979 թթ.:** Քսան տարվա ընթացքում բնակչության թիվն ավելացել է 1272 հազարով կամ ավելի քան 72 %-ով: Այս տարիներին բնակչության թվի միջին տարեկան աճը կազմել է 63.6 հազար: Հետագա տասը տարիների ընթացքում՝ **1979-1989 թթ., բնակչության թվաքանակի աճը կազմել է 417.9 հազ. մարդ** կամ տարեկան միջին հաշվով մոտ 42 հազ. մարդ:

ՀՀ-ում բնակչության թվաքանակի ավելացման հիմնական աղբյուրը բավական երկար ժամանակ եղել է համեմատաբար բարձր բնական աճը, որը պայմանավորված էր բարձր ծնելիությամբ և համեմատաբար ցածր մահացությամբ: Մինչև 1960-ական թվականները, շհաշված առանձին բացառություններ, ծնելիության գործակիցը բարձր է եղել 40 %-ից, իսկ 20-ական թթ. վերջերին հասել է ռեկորդային ցուցանիշի՝ 56 %-ի: Ծնելիության և մահացության ցուցանիշների բարելավման շնորհիվ բնակչության բնական աճը նախախորհրդային 10-15 %-ի փոխարեն խորհրդային տարիներին (բացառությամբ առանձին տարիների) տատանվել է 16.3-33,3 %-ի սահմաններում:

Ինչպես ցույց են տալիս Առյուսակ 15-ի տվյալները, 1960-1970 թթ. ընթացքում ՀՀ-ում ծնելիության և բնական աճի գործակիցները կտրուկ նվազել են: Խորհրդային վերջին տասնամյակում ծնելիության գործակիցը 1981 թ. 23.4 %-ից նվազել է 21.6 (1991թ.): Այդ ընթացքում ծնելիության առավել բարձր գործակից գրանցվել է 1984 և 1986 թթ.: **ՀՀ պատմության ընթացքում ծնելիության ամենամեծ բացարձակ ցուցանիշը գրանցվել է 1986 թ.՝ 81192 մարդ:** Ընդհանուր առմամբ 1980-1991 թթ. ընթացքում մեր երկրում ծնելիության բացարձակ թիվը կազմել է 922088 մարդ, որն աննախադեալ երևույթ էր **ՀՀ պատմության մեջ:**

ԽՍՀՄ փլուզումից հետո մեր երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, հասարակական-քաղաքական և տարածաշրջանային իրավիճակն իրենց անմիջական ազդեցությունը թողեցին **ՀՀ բնակչության բնական շարժի ցուցանիշների** վրա: **1990-2001 թթ.**

ընթացքում ծնելիության բացարձակ ցուցանիշը նվազեց 2.49, իսկ մահացության բացարձակ ցուցանիշն ավելացավ 1.1 անգամ, կամ մահացության գործակիցը 1990-2001 թթ. 6.2-ից հասել է 7.5 %օ-ի: Չնայած 2001-2010 թթ. ՀՀ-ում աստիճանաբար դիտվել է ծնելիության բացարձակ և հարաբերական ցուցանիշների ավելացում, սակայն մահացության բացարձակ ու հարաբերական ցուցանիշների աճման պատճառով բնական հավելաձը դեռևս մնում էր ցածր: ՀՀ-ում բնական հավելաձի ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2002 թ.՝ 2.1 %օ:

2010 թվականից հետո ՀՀ-ում արձանագրվել է ծնելիության բացարձակ ցուցանիշի նվազում, իսկ մահացության դեպքում՝ բացարձակ և հարաբերական ցուցանիշների ավելացում: Այդ ընթացքում տեղի է ունեցել նաև բնական հավելաձի նվազում:

Հստ մարզերի և Երևան քաղաքի՝ 2020 թ. դրությամբ ՀՀ-ում բնակչության վերաբերության ցուցանիշներն ունեին հետևյալ պատկերը:

Աղյուսակ 15

*ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները
(1960-2020 թթ.)/[15:47]*

Տար	Ծննդներ	Մահացություն	Բնակչություն	Գործակիցը, %օ		
				Ծննդների թիվն	Մահացություն	Բնակչություն
1960	74825	12675	62150	40,1	6,8	33,3
1970	55694	12844	42850	22,1	5,1	17,0
1980	70324	17124	53200	22,7	5,5	17,2
1984	79767	19043	60724	24,2	5,8	18,4
1985	80306	19581	60725	24,1	5,9	18,2
1986	81192	19410	61782	24,0	5,7	18,3
1990	79882	21993	57889	22,5	6,2	16,3
1995	48960	24842	24118	15,0	7,6	7,4

2000	34276	24025	10251	10,6	7,5	3,1
2001	32065	24003	8062	10,0	7,5	2,5
2002	32229	25554	6675	10,1	8,0	2,1
2005	37499	26379	11120	11,7	8,2	3,5
2008	41185	27412	13773	12,7	8,5	4,2
2010	44825	27921	16904	13,8	8,6	5,2
2011	43340	27963	15337	13,3	8,6	4,7
2012	42480	27599	14881	14,0	9,1	4,9
2014	43031	27714	15317	14.3	9.2	5.1
2016	40592	28226	1366	13.5	9.4	4.1
2017	37 700	27 157	10 543	12.6	9.1	3.5
2018	36574	25751	10823	12.3	8.7	3.6
2020	36448	35371	1077	12.3	11,9	0.4

ՀՀ միջինից ծնելիության բարձր ցուցանիշները ունեցել են միայն Երևանը (12.9 %) և Արարատի մարզը (12.7 %), Կոտայքի մարզում այն հավասար է եղել ՀՀ միջին ցուցանիշին (12.2 %), Լոռու մարզում՝ 12.0 %: Ծնելիության գործակիցն ամենացածրը եղել է Շիրակի մարզում՝ 9.8 %, Սյունիքում՝ 10.3 %, մնացած մարզերում ծնելիության գործակիցը տատանվել է 10.9-11.7 %-ի սահմաններում: Մահացության գործակիցն ամենից բարձրը եղել է Լոռու մարզում՝ 12.1 %, երկրորդ և երրորդ տեղերում այդ ցուցանիշով եղել են Տավուշի և Շիրակի մարզերը (10.6 %), Վայոց ձորում այն կազմել է 9.9 %, Արագածոտնում՝ 9.4 %, Կոտայքում՝ 9.2 %: Մահացության ամենացածր գործակից գրանցվել է Գեղարքունիքի մարզում՝ 7.8 %, մնացած մարզերում այն տատանվել է 8.2-8.8 %-ի սահմաններում: Երևանում բնակչության մահացության գործակիցը բարձր է եղել միայն Գեղարքունիքի մարզից և կազմել է 8.0 %, որը ՀՀ համապատասխան միջինից ցածր է 0.9-ով: ՀՀ-ում 2019 թ. բնական հավելածի ամենաբարձր գործակից գրանցվել է Երևանում՝ 4.9 %, երկրորդն այդ ցուցանիշով եղել է Արարատի մարզը՝

4.3. Կոտայքի, Գեղարքունիքի և Արմավիրի մարզերում դա կազմել է 3.0-3.8 %: ՀՀ-ում միակ մարզը, որտեղ 2019 թ. բնական հավելածի գործակիցը եղել է բացասական, Լոռին է՝ -0.1 %, իսկ Տավուշի և Վայոց ձորի մարզերում այն կազմել է համապատասխանաբար 0.3 և 0.4, Սյունիքում՝ 1.0, Շիրակում՝ 1.6, Արագածոտնում՝ 2.1:

Բնական հավելածի ցուցանիշն անմիջականորեն կախված է ամուսնությունների թվից: 2019 թ. ՀՀ-ում ամուսնությունների գործակիցը կազմել է 5.3 %, Երևանում՝ 6.1, իսկ մարզերում այն տատանվել է 4.2-5.3-ի սահմաններում: Ամենացածրն այս ցուցանիշով Շիրակն է՝ 4.2, ամենաբարձրը՝ Կոտայքը՝ 5.3: ՀՀ-ում 2019 թ. ամուսնալուծությունների միջին ցուցանիշը կազմել է 1.3 %, ամենաբարձրը եղել է Երևանում՝ 1.8 %, ամենացածրը՝ Գեղարքունիքում՝ 0.6 %:

Վերջին երկու մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում ՀՀ առկա բնակչության թիվը նվազել է 130 823-ով (մոտ 4,4 %-ով): Բացի Արմավիրից և Կոտայքից՝ այն նվազել է բոլոր մարզերում և մայրաքաղաք Երևանում: ՀՀ-ում առկա բնակչությունը 1990-2011 թթ. նվազել է 496 հազարով կամ 14,1 %-ով: Նշված ժամանակամիջոցում մշտական բնակչության թիվը նվազել է բոլոր մարզերում և Երևան քաղաքում:

1960-2000 թթ. ՀՀ-ում բնական շարժի ցուցանիշները, ըստ գյուղական և քաղաքային բնակչության, ունեցել են նկատելի տարբերություններ: 1960 թ. գյուղական բնակչության ծնելիության գործակիցը քաղաքայինին գերազանցել է 12.8 %-ով, իսկ բնական հավելածին՝ 12 %-ով: Մկանած 2000 թվականից՝ քաղաքային ու գյուղական բնակչության ծնելիության և բնական հավելածի ցուցանիշների միջև տարբերությունը նվազել է (Աղ. 16), իսկ 2012 թվականից հետո ՀՀ-ում քաղաքային բնակչության ծնելիության գործակիցը գերազանցել է գյուղականին, որն անսահմանափակ երևույթ է: Այդ ընթացքում քաղաքային բնակչության բնական հավելածը ևս գերազանցել է գյուղականին: Այդ երևույթը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնցից հիմնականը քաղաքային

ու զյուղական բնակչության թվաքանակում տարիքային հիմնական խմբերի մասնաբաժինների հարաբերակցությունների տարրերությունն է: Վերջին երկու տասնամյակում ՀՀ հարյուրավոր զյուղերում զգալիորեն նվազել է երիտասարդ տարիքի բնակչության տեսակարար կշիռը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է ամուսնությունների թվի ու ծնելիության ցուցանիշի նվազմանը: Պակաս դեր չունեն նաև քաղաքային բնակավայրերի համեմատությամբ ՀՀ հարյուրավոր զյուղերում սոցիալ-կենցաղային համեմատաբար վատթար պայմանները և այլ գործոններ:


Աղյուսակ 16 ՀՀ քաղաքային և զյուղական բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշները (1960-2020 թթ.)[15; 47]

Տարի-ներ	Բնական շարժի գործակիցները 1000 բնակչի հաշվով %					
	Քաղաքային բնակչություն			Գյուղական բնակչություն		
	Ծննդյանք.	Մահացուք.	Բնական աճ	Ծննդյանք.	Մահացուք.	Բնական աճ
1960	33,8	6,4	27,4	46,6	7,2	39,4
1970	21,1	4,9	16,2	23,7	5,4	18,3
1980	21,5	5,1	16,4	25,1	6,3	18,8
1984	22,1	5,3	16,8	28,6	6,7	21,9
1985	21,8	5,3	16,5	28,8	7,0	21,8
1986	21,8	5,2	16,6	28,7	6,9	21,8
1990	20,5	6,0	14,5	27,0	6,7	20,3
1995	13,5	7,8	5,7	18,1	7,4	10,7
2000	10,3	7,5	2,8	11,4	7,3	4,1
2001	9,8	7,6	2,2	10,3	7,3	3,0
2002	10,1	8,1	2,0	10,0	7,7	2,3
2008	12,6	8,4	4,2	12,9	8,6	4,3
2010	13,6	8,6	5,0	14,1	8,6	5,5
2011	13,2	8,5	4,7	13,4	8,6	4,8

2012	14,2	9,2	5,0	13,8	9,0	4,8
2013	14.0	9.1	4.9	13.6	8.9	4.7
2015	14.2	9.3	4.9	13.4	9.3	4.1
2017	13.0	9.2	3.8	12.1	9.0	3.1
2018	12.8	8.8	4.0	11.5	8.5	3.0
2019	12.5	8.9	3.6	11.5	8.7	2.8
2020	13.4	13.0	0.4	10.3	10.8	-0.5

Գծապատկեր 7

ՀՀ բնակչության բնական շարժը բնութագրող ցուցանիշները (հազար մարդ) [17, 47]



Բնակչության բնական շարժի հաջորդ ցուցանիշը՝ մահացությունն ըստ զյուղական և քաղաքային բնակչության, նկատելի տարրերություններ չի ունեցել: 1960-1993 թթ. ընթացքում զյուղականի համեմատ քաղաքային բնակչության մահացության գործակիցն ավելի ցածր է եղել: Սկսած 1994-1995 թթ. դրանք գրեթե հավասարվել են, իսկ առանձին տարիների քաղաքային բնակչության մահացության գործակիցը եղել է ավելի բարձր:

3.4. Բնակչության մեխանիկական շարժը

Խորհրդային տարիներին ՀՀ բնակչության աճի կայուն աղբյուր է եղել նաև մեխանիկական շարժը՝ **ներգաղթը**: Խորհրդային առաջին տարիներից սկսվել է սփյուռքահայության կազմակերպված հայրենադարձությունը: Այդ երևույթն առավել զանգվածային է եղել 1922-1924, 1935-1936 և 1946-1948 թթ.: **Արդեն 1921-1926 թթ. հատկապես Իրաքից և Հունաստանից Հայաստան է ներգաղթել 19.7 հազ. մարդ, որոնք տեղափորվել են հիմնականում Արարատի, Արտաշատի, Վարդենիսի և Անիի վարչական շրջաններում [1, 2]: Հետագայում՝ **1926-1936 թթ., հայրենիք է վերադարձել 22.6 հազար հայ բնակչություն**, որոնք հիմնել և տեղափորվել են Նոր Մալաթիա, Նոր Սեբաստիա, Նոր Խարբերդ, Նորաշեն, Նոր Կեսարիա, Նոր Տիգրանակերտ, Նոր Տարոն, Նոր Երզնկա, Նոր Արմաշ և այլ բնակավայրերում, Երևանում, Վանաձորում, Գյումրիում, Ակիպեմզայում, Իջևանում, Ստեփանավանում, Բագրատաշենում (Լամբալու սովորող և այլուր) [նույն տեղում]:**

Հետպատերազմյան տարիներին ներգաղթած բնակչությունը հիմնականում բնակեցվել է Երևանում և նրա շուրջը ատեղծված նոր քաղաքասերում (Կիլիկիա, Մարաշ, Զեյթուն, Կամարակ և այլն): Գյուղական բնակավայրերից ներգաղթած բնակչությունը (զիսավորապես Իրանից) հաստատվեց Արարատյան դաշտի գյուղերում: **Պատերազմի ավարտից հետո՝ 1946-1948 թթ., Հունաստանից, Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Ռումինիայից, Բուլղարիայից, Իրանից, Ֆրանսիայից, ԱՍՍ-ից և այլ երկրներից ՀՀ ներգաղթեց 100 հազ. հայ [նույն տեղում]:** Հետագա տարիներին ներգաղթածների թիվն աստիճանաբար նվազել է, սակայն այդ երևույթը պահպանվել է ընդհուպ մինչև 1980-ական թվականների սկիզբը:

Խորհրդային տարիներին հայրենադարձների ընդհանուր թիվը կազմել է 240-250 հազ. մարդ:

1960-ական թվականներից հետո ներգաղթածների զգալի մասը

բնակեցվել է զիսավորապես քաղաքներում՝ բացառությամբ Երևանի (Գյումրիում, Վանաձորում, Արտվանում, Հրազդանում, Արմավիրում, Արարատում և Արտաշատում): Գյուղական վարչական շրջաններից հայրենադարձների գգայի մասը բնակեցվել է Աշտարակի, Արմավիրի, Էջմիածնի, Արարատի, Նախիջևանի, Արտաշատի և Թալինի զիսավորապես նոր կազմակերպված սովորություններում:

Խորհրդային տարիներին ՀՀ բնակչության մեխանիկական աճի աղբյուր է եղել նաև միջհանրապետական միզրացիան:

Աղյուսակ 17

*ՀՀ առկա բնակչության թվաքանակը՝ ըստ մարզերի և Երևանի քաղաքի
(2001 և 2011 թթ. մարդահամարների տվյալներով) [12; 15]*

Մարզերը և Երևանը	2001			2011		
	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը	Քաղաքային	Գյուղական	Ընդամենը
ՀՀ	194514	1057080	3002594	1847124	1024647	2871771
1. ք. Երևան	1091235	-	1091235	1054698	-	1054698
2. Արագածոտն	29607	96671	126278	29161	96378	125539
3. Արարատ	73496	179196	252665	69224	177636	246880
4. Արմավիր	88866	166995	255861	82837	173802	256639
5. Գեղարքունիք	70858	144513	215371	66690	145138	211828
6. Լոռի	148684	104667	253351	130508	86595	217103
7. Կոտայք	131382	109985	241337	132506	112818	245324
8. Շիրակ	161298	95944	257242	137482	95826	233388
9. Սյունիք	88010	46051	134061	80604	39269	119873
10. Վայոց ձոր	18328	34902	53230	16834	30825	47659
11. Տավուշ	43807	78156	121963	46560	66360	112920

Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ մյուս հանրապետությունների հետ գրեթե միշտ ունեցել է միզրացիոն կապեր՝ իր համար դրական սալդոյով արդյունք: **Միայն 1926-1939 և 1959-1970 թթ. ՀՀ բնակչություն-**

Նը միջհանրապետական ներհոսքի շնորհիվ ավելացել է 208.8 հազարով [1]: Այդ ժամանակ ՀՀ-ի համար դրական ելքով միջհանրապետական միզբացիան պայմանավորված էր մի շարք պատճառներով, որոնցից առավել մեծ դեր են ունեցել երկուսը [1].

1. Խորհրդային տարիներին ՀՀ արդյունաբերության զարգացման համեմատաբար բարձր տեսման պահանջում էին մեծ թվով աշխատուժ, որը մասամբ բավարարվում էր նաև միութենական մյուս հանրապետություններից հայ բնակչության ներհոսքի շնորհիվ:

2. Խորհրդային Միությունում ապրող հայ բնակչության մի զգալի զանգված ապրում էր հայրենիքից դուրս, և նրանց զգալի մասը ձգտում էր բնակություն հաստատել Հայաստանում: Բացի դրանից՝ մայրենի լեզվով բարձրագույն կրթություն ստանալու նպատակով Հայաստան եկած երիտասարդների զգալի մասը մնում էր այստեղ: Հայկական ԽՍՀ-ն միջհանրապետական միզբացիոն առավել արդյունավետ կապեր ուներ հարևան Վրաստանի ու Ադրբեյջանի հետ, որտեղ ապրում էր Հայաստանից դուրս ԽՍՀՄ սահմաններում ապրող հայ բնակչության մոտ 70 %-ը: Մյուս հանրապետություններից այդ ժամանակաշրջանում Հայաստանի բնակչության մեխանիկական աճի մեջ որոշակի բաժին են ունեցել Թուրքմենիան, Ուզբեկստանը և Ռուսաստանը, որոնցում կար զգալի թվով հայ բնակչություն:

Խորհրդային տարիներին, բացի ներգաղթից, ՀՀ-ում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական գործընթացների վրա զգալի ազդեցություն են թողել ներքին միզբացիաները: Դրանք ՀՀ-ում ունեցել են հիմնականում զյուղից քաղաք, փոքր քաղաքներից մեծ քաղաքներ ուղղություն: Խորհրդային գրեթե ողջ ժամանակահատվածում տեղի է ունեցել ՀՀ լեռնային, բարձրլեռնային և սահմանամերձ տարածքներից բնակչության միզբացիա դեպքի մայրաքաղաք և Արարատյան դաշտի նոր յուրացվող տարածքներում ստեղծված տասնյակ զյուղեր, ինչպես նաև Երևանյան ազլումերացիայի քաղաքային բնակավայրեր (Աբովյան, Բյուրեղավան, Նոր Հաճն, Մասիս, Աշտարակ, Չարենցավան): Միզբա-

ցիոն ձգողականությամբ աչքի էին ընկնում նաև Գյումրին և Վանաձորը: ՀՀ-ում խորհրդային տարիներին ներհանքապետական միզպացիաները նպաստել են ուրբանացման մակարդակի բարձրացմանը, նոր քաղաքների ձևավորմանն ու զարգացմանը, ինչպես նաև հանրապետության տարաբնակեցման համակարգի ենթակարգային կառուցվածքի ձևավորմանը:

Աղյուսակ 18

*ՀՀ մշտական բնակչության թվաքանակի շարժնորացը՝
ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի (հազ. մարդ, 1990-2021 թթ.)/[14, 15, 42]*

Մարզեր և Երևանը	Տարեթիվ						
	1990	1995	2001	2011	2013	2015	2021
ՀՀ	3514.9	3260.3	3213.0	3018.9	3026.9	3010.6	2 963.3
1. ք. Երևան	1237.5	1113.2	1103.5	1060.1	1066.3	1071.5	1 091.7
2. Արագածոտն	139.3	138.7	138.3	132.9	133.0	131.3	124.5
3. Արարատ	271.7	269.8	272.0	260.4	261.4	260.1	256.6
4. Արմավիր	278.0	274.1	276.2	265.8	267.1	267.0	264.0
5. Գեղարքունիք	241.0	240.7	237.6	235.1	235.6	233.0	227.3
6. Լոռի	367.3	303.3	286.4	235.6	234.7	228.0	212.6
7. Կոտայք	294.6	282.4	272.5	254.4	255.3	255.0	251.2
8. Շիրակ	333.5	287.8	283.4	251.9	251.3	246.4	231.0
9. Սյունիք	146.7	150.8	152.7	141.8	141.7	140.2	135.8
10. Վայոց ձոր	59.6	60.8	56.0	52.3	52.2	51.4	48.1
11. Տավուշ	145.7	138.7	134.4	128.6	128.3	126.7	120.5

Խորհրդային տարիներին Հայաստան ներզադյածների գերակշիռ մասը (բացառությամբ Զավախքի և Արցախի) քաղաքաբնակներ են եղել և հիմնականում տեղափորվել են Երևանում, Արովյանում, Աշտարակում, Գյումրիում, Վանաձորում և այլ տարածքներում: Այս ճանապարհով ևս տեղի էր ունենում ՀՀ ուրբանացման մակարդակի բարձրացում: Ներազադյածների փոքր մասը տեղավորվել է Երևանյան ազլումերացիայի մերձակա գյուղերում [2]:

Խորհրդային տարիներին Հայաստան ներգաղթածների մեջ գերակշռում էր երիտասարդ և աշխատանքային տարիքի բնակչությունը: Այս հանգամանքն իր ազդեցությունն է թողել մեր երկրի բնակչության սեռատարիքային կառուցվածքի վրա՝ նպաստելով ծնելիության մակարդակի բարձրացմանը:

1980-ական թթ. կեսերից ՀՀ-ում ստեղծված սոցիալ-տնտեսական պայմանները (մասնավորապես աշխատումի ավելցուկը) իրենց ազդեցությունն են թողել միզրացիոն գործընթացների վրա: Աստիճանաբար փոխվել է միզրացիայի մնացորդի հաշվեկշիռը: Բացի հարևան Վրաստանից և Աղբքեջանից՝ ԽՍՀՄ մնացած հանրապետությունների ու արտասահմանի հետ միզրացիայի հաշվեկշիռն աստիճանաբար դարձել է բացասական: Այս երևույթն առավել խորացել է, և արտագաղթի տեսպերը կտրուկ ավելացել են Սպիտակի 1988 թ. երկրաշարժի և դրան նախորդած դարաբաղյան իրադարձություններից հետո: **1988-1991 թթ. ՀՀ-ից արտագաղթել են շուրջ 180 հազար աղբքեջանցիներ և քրդեր, իսկ Հայաստան են ներգաղթել հարյուր հազարավոր հայեր:** Նրանց մի մասը տեղափորվել է նախկին աղբքեջանաբնակ բնակավայրերում և ՀՀ այլ շրջաններում: Ցավոք, այդ տարիներին Աղբքեջանից Հայաստան ներգաղթած բնակչության մի զգալի զանգված Հայաստանի ծանր սոցիալ-տնտեսական պայմանների պատճառով 1990-ական թթ. սկզբներին Հայաստանից արտագաղթեց առավելապես Շուսաստանի հայաշատ շրջաններ, ԱՄՆ, Եվրոպական երկրներ: **Հաշվարկները ցույց են տալիս, որ 1992-2019 թթ. ընթացքում ՀՀ-ից արտագաղթել է ավելի քան 1119 հազար մարդ** (գործազրկության աճի, տնտեսական ճգնաժամի և սոցիալ-տնտեսական ու կենցաղային առկա դժվարությունների պատճառով): Արտագաղթի հիմնական ուղղություններ են եղել Շուսաստանը, ԱՄՆ-ն, Եվրոպական երկրները: Արտագաղթել են ՀՀ բոլոր մարզերից: Արտագաղթն առավել մեծ ծավալների է հասել Շիրակի ու Լոռու մարզերում, Գյումրի ու Վանաձոր քաղաքներից, արդյունաբերական կենտրոններ Չարենցավան, Հրազդան, Սպիտակ և գրեթե բոլոր մնա-

ցած քաղաքներից: Միայն 1992-1994 թթ. ՀՀ-ից արտազադքել է ավելի քան 475 հազար մարդ, իսկ 2007-2018 թթ.՝ ավելի քան 320 հազար մարդ:

Անկախության տարիներին ՀՀ-ում ներքին միգրացիոն տեղաշարժերը զգալիորեն նվազել են: Բացի մայրաքաղաքից՝ մնացած գրեթե բոլոր քաղաքներն այս կամ այն չափով կորցրին նախկինում ունեցած «ձգողական» ներուժը, և իրենք ևս դարձել են միգրանտներ տվող հիմնական օջախներ: Բացի դրանից՝ գյուղական բնակավայրերը հողի սեփականաշնորհման շնորհիվ կարողանում են այս կամ այն չափով ապահովել կենսապահովման նվազագույն պայմանները, ինչը չուներ քաղաքային բնակավայրերի մեծ մասը: Այդ եր պատճառը, որ 1990-2000 թթ. տեղի էր ունենում քաղաքից գյուղ բնակչության միգրացիա, քանի որ քաղաքաբնակ բնակչության որոշ մասը հողի սեփականաշնորհման ժամանակ իր ծննդավայրում ստացավ սահմանված չափով հողեր և որոշակի ժամանակահատված այդ հողերը դարձան այդպիսի քաղաքաբնակների համար ապրուստի հայթայթման միջոցներից մեկը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Կատարե՛ք ՀՀ բնակչության թվի շարժնթացի վերլուծություն՝ ըստ բնակչության թվի փոփոխության քաղաքիների:

2. Կազմե՛ք ՀՀ բնակչության թվի շարժնթացի գծապատկերներ՝ ըստ առանձին քաղաքիների 1991-2020 թթ. համար:

3. Կազմե՛ք ՀՀ ընդհանուր, քաղաքային և գյուղական բնակչության բնական շարժի գործակիցներն արտահայտող գծապատկերներ:

4. Ինչպիսի ազդեցություն է թողել հայրենադարձությունը ՀՀ բնակչության շարժնթացի վրա:

5. Գնահատե՛ք ՀՀ մարզերի բնակչության թվի շարժնթացը՝ ընդհանուր, քաղաքային և գյուղական բնակչության կտրվածքով:

6. Ի՞նչ ազդեցություն է ունեցել միգրացիան ՀՀ բնակչության շարժնթացի վրա:

3.5. Բնակչության կազմը, կառուցվածքը և աշխատանքային ոլեսուրսները

Ցանկացած երկրի աշխարհագրական ու ժողովրդագրական կարևոր բնութագրիչներից են բնակչության կազմը և կառուցվածքը: Բնակչության կազմի տարրերն են ազգային, կրոնական, լեզվական ու սեռային հատկանիշները, իսկ բնակչության կառուցվածքի տարրերը՝ տարիքային, սոցիալական ու մասնագիտական հատկանիշները:

ՀՀ բնակչությունն առանձնանում է կազմի ու կառուցվածքի որոշակի առանձնահատկություններով:

Ազգային կազմը: Բնակչության ազգային կազմով ՀՀ-ն ոչ միայն նախկին խորհրդային, այլև աշխարհի առավել միատարր երկրներից է: Հայկական լեռնաշխարհի բնիկները՝ հայերը, կազմում են ՀՀ բնակչության 98,1 %-ը (ըստ 2011 թ. մարդահամարի տվյալների): Հայերն ավելի բարձր թիվ են կազմում քաղաքային, ցածր՝ գյուղական բնակչության մեջ: Ի տարրերություն պատմական Հայաստանի՝ 1920 թվականից հետո ՀՀ-ում հայերի միատարրության աստիճանը գնալով ավելացել է: 1926 թ. մեր երկրում հայերը կազմել են 84.0 %, 1959 թ.՝ 86.0 %, 1970 թ.՝ 88.6 %, 1979 թ.՝ 89.8 %, 2001 թ.՝ 97.89 %, 2011 թ.՝ 98.1 %:


Ինչպես բոլոր հին ժողովուրդները, այնպես էլ հայերը, պատմական զարգացման ընթացքում միշտ չեն, որ պահպանել են մարդաբանական միատիպությունը և ներկայումս աչքի են ընկնում ներքին մեծ բազմազանությամբ: Մեզ՝ արմենոհիններիս, բնորոշ են միջին կամ միջինից բարձր հասակը, զիսի կլոր ձևը, ամրակուր կազմվածքը, թիսավուն մաշկը, լայն ձակատը, ընդհանրապես խոշոր, հաճախ արծվային քիթը, մուգ, սև ալիքավոր մազերը, խոշոր խած կամ սև երկար թարթիչներով աչքերը՝ խիտ, հաճախ իրար միացած հոնքերով:

Ներկայումս ՀՀ-ում թվաքանակով երկրորդ ազգությունը եղդիներն են, որոնց թիվը 2011 թ. մարդահամարի տվյալներով 35.3 հազար է: Հարկ է նշել, որ գիտական դասակարգման համաձայն՝ եղդիները չեն

համարվում առանձին ազգ: Նրանք քուրդ ազգի բաղադրամասն են, խոսում են նույն քրդերենով, բայց տարբերվում են ինքնատիպ կրոնական հավատքով:

1980-ական թթ. վերջերից ՀՀ-ում պաշտոնական վիճակագրությունը եզրիներին առանձնացնում է քրդերից և դիտում որպես առանձին ազգ: Վերջիններս առավելապես բնակչության մեջ Արագածոտնի և Արմավիրի գյուղական բնակավայրերում, իսկ տնտեսական գործունեության հիմնական գրանցունքը ոչխարաբուծությունն է: Եզրիները սովորաբար առանձնանում են ծննդյան և բնական աճի համեմատաբար բարձր ցուցանիշներով, սակայն վերջին երկու տասնամյակում տեղի ունեցած արտագաղթի պատճառով նրանց թիվը 2001 թ. մարդահամարի համեմատությամբ 2011 թ. նվազել է ավելի քան 5 հազարով:

Գծապատկեր 8



Թվաքանակով երրորդ ազգությունը ՀՀ-ում **ռուսներն** են, որոնց թիվը ևս վերջին երկու տասնամյակում էապես նվազել է և 2011 թ. կազմում էր 11.9 հազ. մարդ: Բավական է նշել, որ 1959 թ. մարդահամարի

ժամանակ ոռուսները կազմել են ՀՀ բնակչության 3.2 %-ը, 2001 թ.՝ 0.46 %-ը, իսկ 2011 թ.՝ 0.4 %-ը: Ոռուս բնակչությունն առավելապես քաղաքարնակ է. ապրում է Երևանում, Գյումրիում, Վանաձորում և այլ քաղաքներում: Մինչև ԽՍՀՄ վերացումը ոռուս աղանդավորական բնակչությամբ էին բնակեցված Տաշիրի, Գուգարքի, Կրասնոսելսկի (Ճամբարակի) տարածաշրջանների մի շարք գյուղական բնակավայրեր (Լերմոնտովո, Ֆիոլետովո, Միխայլովկա, Պուշկինո, Բլագոդարունյե, Պրիվոլոնյե, Սվերդլով և այլն):


ՀՀ-ում ապրող մյուս ազգային փոքրամասնությունների ընդհանուր թիվը չի գերազանցում 10 հազարը: Առավել մեծաքանակ են **ասորիները, քրդերը, ուկրախնացիները, հույները**: Նրանցից յուրաքանչյուրի թիվը 3 հազարից էլ պակաս է, և միասին 2011 թ. մարդահամարի տվյալներով կազմել է շուրջ 7 հազ. մարդ: Մնացած ազգային փոքրամասնությունների ընդհանուր թիվը կազմել է ավելի քան 2700 մարդ: Ասորիները հիմնականում ապրում են Արտաշատի տարածաշրջանի Վերին Դվին և Դիմիտրով գյուղերում, հույների մեծ մասը՝ Ալավերդի, Ախթալա, Շամլուր պղնձարդյունաբերական քաղաքներում: Քրդերն ապրում են Արագածի, Աշոտարակի, Թալինի, Էջմիածնի, Արմավիրի և Մասիսի տարածաշրջաններում: ՀՀ-ում ապրող ուկրախնացիները հիմնականում քաղաքարնակներ են:

Ոչ միայն ՀՀ սահմանադրությամբ, այլև իրական կյանքում ՀՀ բոլոր քաղաքացիները, անկախ ազգային, կրոնական և ռասայական պատկանելիությունից, ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Ազգային փոքրամասնություններից նրանք, որոնք կոմպակտ բնակեցված են այս կամ այն բնակավայրում, կարող են ունենալ ազգային դպրոց, զարգացնել մշակույթը, պահպանել իրենց ազգային սովորույթներն ու ավանդույթները: Ազգային փոքրամասնություններից թվաքանակով առավել մեծաթիվ առաջին չորսը՝ եղջիները, ոռուսները, քրդերը և ասորիները, իրենց ներկայացուցիչներն ունեն ՀՀ Ազգային ժողովում:

Սեռային կազմը: Արտադրության տարբեր ճյուղերի տեղաբաշխման ու գարգացման համար կարևոր դեր են խաղում ոչ միայն տվյալ շրջանի բնակչության ու աշխատանքային ռեսուրսների թվաքանակը, այլև սեռատարիքային կազմին վերաբերող ցուցանիշները։ Սովորաբար բնակչության սեռային կազմը տարբեր տարիքային խմբերում տարբեր է։ Ինչպես աշխարհում, այնպես էլ ՀՀ-ում տղաներ ավելի շատ են ծնվում, քան աղջիկներ։ Այս է պատճառը, որ ցածր տարիքային խմբերում՝ մինչև 20-25 տարեկանը, գերակշռում են տղաները։ Բայց քանի որ տղաների մահացությունն ավելի բարձր է, ապա հետագայում դրանց թիվը հավասարակշռվում է, իսկ մոտ երեսուն տարեկանից սկսած՝ գերակշիռ են դառնում կանայք։ Բարձր տարիքային խմբերում կանանց գերակշռությունն ավելի է մեծանում։

Գծապատկեր 9

ՀՀ բնակչությունը՝ ըստ սերի և տարիքի, 2020 թ. հունվարի 1-ի դրությամբ [17]



Հարկ է նկատել, որ ՀՀ-ում մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը տղամարդկանց թիվն ավելի մեծ է եղել (Աղ. 19): Իսկ 1989-2019 թթ. ընթացքում տղամարդկանց մասնաբաժինը նվազել է 1.7 տոկոսային կետով, և 2019 թ. այն կազմել է 47.3 %:

ՀՀ-ում բնակչության սեռային կազմի հարաբերակցությունն ըստ քաղաքային և գյուղական բնակչության նույնական տարրեր է: Քաղաքային մշտական բնակչության կազմում կանայք գերակշռում են 53.2 % / 46,8 % հարաբերակցությամբ, իսկ գյուղական բնակչության մեջ կանանց տեսակարար կշիռը կազմում է 50.1 %: Կանանց գերակշռությունն առավել մեծ է Երևան քաղաքում, Լոռու, Շիրակի և Արարատի մարզերում:

Տարիքային կազմը: Ընդունված է բնակչության տարիքային կազմն արտահայտելու համար առանձնացնել հետևյալ ընդհանրական խմբերը՝ **մինչաշխատունակ, աշխատունակ և հետաշխատունակ, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին բաղկացած է տարիքային մի քանի խմբերից, օրինակ՝ մինչաշխատունակ կամ աշխատունակ տարիքից ցածր խմբում առանձնացվում են 0-4, 5-9, 10-15 տարիքային խմբերը:** Բնակչության բաժանումն ավելի փոքր տարիքային խմբերի թույլ է տալիս որոշել մեծահասակների, թոշակառուների, դպրոցականների, զինապարտների և աշխատանքային տարիքի բնակչության թվաքանակները: Դրանք հարկավոր են նաև երկրի տնտեսական և ժողովրդագրական ներուժը որոշելու համար: Վերջին երկու տասնամյակում երկրում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացների պատճառով մինչաշխատունակ բնակչության ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշն անընդհատ նվազել է, իսկ աշխատունակ և հետաշխատունակ բնակչության բաժիններն ավելացել են: 2020 թ. ՀՀ-ում աշխատունակ բնակչության բացարձակ թիվը կազմել է 1889.5 հազ. մարդ կամ ընդհանուր բնակչության 63.9 %-ը, աշխատունակ բնակչությունից ցածր տարիքը՝ 635.6 հազ. մարդ (21.4 %), իսկ աշխատունակ տարիքից բարձրը՝ 436.4.2 հազ. մարդ (14.7 %):

ՀՀ բնակչության տարիքային կազմի գծապատկերը ցույց է տալիս, որ մեզանում դեռևս գերակշռում է միջին տարիքային խմբի բնակչությունը, սակայն ակնհայտ է բնակչության ծերացման միտումը:

ՀՀ-ում կյանքի սպասվող միջին տևողությունը 2019 թ. տվյալներով տղամարդկանց համար 73.1 տարի էր, կանանց համար՝ 79.5:

Աղյուսակ 19

ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշները՝ ըստ սերի [15; 16]

Տարի	Ընդամենը, տարեսկզբի դրությամբ հազ. մարդ	Այդ թվում՝		Տոկոսով՝ ընդհանուրի նկատմամբ	
		տղամար- դիկ	կանայք	տղամար- դիկ	կանայք
1926 ¹	881.3	449.1	432.2	51.0	49.0
1939 ¹	1282.3	648.6	633.7	50.6	49.4
1959 ¹	1765.3	846.6	918.7	48.0	52.0
1970 ¹	2492.6	1217.5	1275.1	48.8	51.2
1979 ¹	3037.3	1477.9	1559.4	48.7	51.3
1989 ¹	3304.8	1619.3	1685.5	49.0	51.0
2001 ¹	3213.0	1542.0	1671.0	48.0	52.0
2005	3156.0	1515.1	1640.9	48.0	52.0
2011 ¹	3018.9	1448.1	1570.8	48.0	52.0
2015	3010.6	1439.1	1571.9	47.8	52.2
2016	2998.6	1429.1	1569.5	47.7	52.3
2017	2 986.1	1 418.8	1 567.3	47.5	52.5
2020	2 959.7	1 397.0	1 562.7	47.2	52.8

1. Ըստ մարդահամարների

Այսպիսի ցուցանիշ մեր երկրում գրանցվել էր 1980-ական թթ., որից հետո այն նվազել էր:

Տղամարդկանց և կանանց մահացության տարբեր մակարդակներով պայմանավորված՝ տարբեր են նաև տղամարդկանց ու կանանց կյանքի սպասվող միջին տևողության ցուցանիշները ծննդյան պահից:

Քաղաքային բնակչության կազմում այդ ցուցանիշը տղամարդկանց համար կազմել է 72.5, կանանց համար՝ 79.2 տարի, իսկ գյուղական բնակչության համար՝ համապատասխանաբար 70.0 և 78.6 տարի: ՀՀ մշտական բնակչության միջին տարիքը 2019 թ. տարեսկզբի դրությամբ կազմել է 36.7 տարի, տղամարդկանց համար՝ 34.6, կանանց համար՝ 38.5:

Բնակչության բաշխումը՝ ըստ բնակավայրերի: Ինչպես ամբողջ բնակչության, այնպես էլ աշխատանքային ռեսուրսների բնութագրման կարևոր ցուցանիշը է նրանց բաշխումը քաղաքի ու գյուղի միջև: Ըստ որում՝ դա ոչ միայն ժողովրդագրական, այլև կարևոր տնտեսական ցուցանիշը է և բնութագրում է երկրի կամ տարածաշրջանի զարգացման, մասնավորապես **ուրբանացման** մակարդակը:

Հայաստանն առաջին հանրապետության տարիներին տիպիկ ագրարային երկիր էր, և բնակչության 90 %-ն ապրում էր գյուղերում: Հետագա տասնամյակների ընթացքում տնտեսության արմատական վերակառուցումը և երկրի ինդուստրիալ զարգացումն էապես փոխեցին նրա սոցիալ-տնտեսական դեմքը. Հայկական ԽՍՀ-ն դարձավ ինդուստրիալ ագրարային երկիր: 1980-ական թթ. վերջերին և 1990-ական թթ. սկզբներին ուրբանացման մակարդակը հասավ 68-69 %-ի (1991թ.՝ 69.2 %): Քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցության այդպիսի արագ փոփոխությունը պայմանավորված էր չորս հիմնական գործոններով [2].

1) գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության բարձրացման և ինտենսիվացման պատճառով գյուղական բնակչությունը «հոսել է» քաղաքներ,

2) քաղմաթիվ գյուղեր մտել են քաղաքային բնակավայրերի շրջագի մեջ կամ դարձել են քաղաքային բնակավայր,

3) հիմնվել են նոր քաղաքներ:

4) քաղաքային բնակչության թվաքանակի ավելացումն ապահովել է բնական աճի բացարձակ թվի ավելացում,

Աղյուսակ 20

*ՀՀ մշտական բնակչության թվաքանակի բաշխումը՝ ըստ տարիքային խմբերի
տարեսկզբին, 1000 մարդ (2001-2020 թթ.)[15;16]*

Տարիքը	2001	2011	2013	2014	2015	2020
Ամբողջ Բնակչությունը, որից	3213.0	3018.9	3026.9	3017.1	3010.6	2 959.7
0-4	196.1	207.6	211.0	211.7	209.9	191.2
5-9	258.5	179.9	187.4	192.0	199.5	209.6
10-14	325.4	178.6	172.3	172.0	173.2	198,8
15-19	313.6	233.1	214.4	201.2	190.5	167.7
20-24	267.6	292.2	285.6	271.1	254.6	174.3
25-29	222.6	271.9	278.0	278.0	276.6	235.6
30-34	204.6	223.0	234.0	242.2	250.0	262.4
35-39	244.3	187.4	191.9	195.5	201.4	239.1
40-44	276.1	177.0	176.9	175.5	175.8	191.8
45-49	211.5	211.1	197.6	186.7	176.7	165.4
50-54	153.8	234.5	235.0	229.3	221.5	162.9
55-59	80.1	177.8	187.1	198.7	207.0	204.9
60-64	147.3	127.6	136.2	142.5	150.8	191.0
65-69	118.7	65.4	72.7	83.4	95.7	136.3
70-74	107.1	107.7	95.7	81.0	67.3	82.2
75-79	55.1	75.4	79.4	83.6	88.1	55.4
80+	30.6	68.7	71.7	72.7	72.0	91.1
Ամբողջ Բնակչությունից						
մինչաշխատունակ	845.9	609.2	609.8	611.8	616.8	635,6
աշխատունակ	1928.4	2047.3	2051.5	2034.0	2015.1	1 889.5
հետաշխատունակ	438.7	362.4	365.6	371.3	378.7	434.6

Վերջին երեք տասնամյակում ՀՀ արդյունաբերության մեջ ճգնաժամի հետևանքով քաղաքային բնակավայրերից (հատկապես Գյումրիից և Վանաձորից) արտազաղթն ավելի մեծ չափերի հասավ, որի պատճառով ՀՀ-ում ուրբանացման մակարդակը նվազել է մոտ 6 տոկոսային կետով և 2019 թ. կազմել է 63.9 %:

Աշխատանքային ռեսուրսները: Աշխատանքային ռեսուրսների օգտագործման վիճակը բնութագրող քանակական ու որակական ցուցանիշներ են նրանց ընդհանուր թիվը, սեռային կազմը, տնտեսապես ակտիվ բնակչության թիվը, զբաղվածների ընդհանուր թիվը, զբաղվածների թիվը՝ ըստ ոլորտների և ճյուղերի, սոցիալ-դասակարգային կազմը և կրթական ու մշակութային մակարդակը:

Տվյալ պահին երկրում, շրջանում կամ առանձին բնակավայրում ձևավորվում է աշխատանքային ռեսուրսների որոշակի հաշվեկշիռ, որը ցույց է տալիս բոլոր աշխատանքային ռեսուրսներն ու դրանց կազմը, ինչպես նաև նրանց օգտագործման վիճակը: Այդպիսի հաշվեկշիռները կարևոր նշանակություն ունեն սոցիալ-տնտեսաաշխարհագրական ուսումնասիրություններ կատարելու և տնտեսության հեռանկարային ու ընթացիկ պլանավորման համար: Աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռները կազմվում են մարդահամարների և բնակչության ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա:

Աշխատանքային ռեսուրսների քանակական ցուցանիշների վրա ազդող գլխավոր գործոններն են բնակչության ընդհանուր թիվը և սեռատարիքային կազմը, որոնք, ըստ երկրների և տարիների, նկատելի փոփոխություններ են կրում: Աշխատանքային ռեսուրսների տեսակարար կշիռն ավելի բարձր է Երևանում և առավել քաղաքաբնակ Շիրակի, Լոռու և Կոտայքի մարզերում: Դրանց ցուցանիշները սոցիալ-տնտեսական նորմալ պայմաններում կտրուկ փոփոխություններ չեն կրում, իսկ ժողովրդագրական իրավիճակում տեղի ունեցած կտրուկ փոփոխություններն էականորեն ազդում են աշխատանքային ռեսուրսների ցուցանիշների վրա: Յուրաքանչյուր տարի ՀՀ-ում աշխատան-

քային տարիք է մուտք գործում բնակչության որոշակի քանակ: Ելնելով այդ ցուցանիշից՝ ստեղծվում են լրացուցիչ աշխատատեղեր՝ զանգվածային գործազրկություն թույլ չտալու համար:

Աշխատանքային ռեսուրսները բնութագրող կարևոր ցուցանիշներ են բնակչության կրթական ցենզը, մասնագիտական կազմը (որակները) և մշակութային մակարդակը: Դրանցից առաջին երկուսը ցույց են տալիս, թե ինչ որակի, արտադրական և մասնագիտական պատրաստվածության ինչ կադրեր կան, և ինչպիսին է տվյալ տարածաշրջանի ինտելեկտուալ ներուժը:

XX դարի սկզբներին Հայաստանի բնակչության ընդամենը 10-12 %-ը գրագիտություն ուներ [28]: 1914-1915 թթ. ուստարում դպրոցահասակ երեխաների մի փոքր մասն էր ընդգրկված հանրակրթական կամ մասնագիտական այլ դպրոցներում: Աշխատանքային ռեսուրսների հիմնական մասն ուներ կրթական շատ ցածր մակարդակ: Խորհրդային տարիներին բնակչության կրթության դրվածքն արմատապես փոխվեց: Խիստ բարձրացավ գրագիտության միջին ցենզը: Հազար մարդուն բաժին ընկնող ոչ լրիվ միջնակարգ, միջնակարգ և բարձրագույն կրթություն ունեցողների թվով Հայաստանը դարձավ ԽՍՀՄ հանրապետությունների շարքում առաջատարներից:

2011 թ. մարդահամարի տվյալներով ՀՀ-ում 15 տարեկան և բարձր տարիքի բնակչության 96.8 %-ն ունեցել է բարձրագույն, միջին և նախնական մասնագիտական, միջնակարգ ու հիմնական կրթություն, ինչը խոսում է ՀՀ աշխատանքային ռեսուրսների որակական բարձր ցուցանիշների մասին:

Նրանք ի վիճակի են լայնորեն օգտագործել գիտատեխնիկական առաջընթացի նորագույն նվաճումները և կազմակերպել բարձր տեխնոլոգիաներով ժամանակակից բարդ արտադրություններ:

2019 թ. դրությամբ ՀՀ աշխատումի 25.0 %-ն ուներ բարձրագույն և հետքուհական կրթություն, 23.4 %-ը՝ միջին մասնագիտական և նախա-

մասնագիտական, 42.1%-ը՝ միջնակարգ, 9.5 %-ը՝ հիմնական, ընդհանուր և ցածր:

Աղյուսակ 21

*ՀՀ աշխատանքային ռեսուրսների միջին տարեկան ցուցանիշները
(2014-2019 թթ.) [17]*

	2014	2015	2016	2017	2019
Աշխատանքային ռեսուրսներ, ընդհանուր՝ 1000 մարդ, որից՝	2180.2	2106.6	2011.4	2021.3	2201.1
աշխատուժ	1375.7	1316.4	1226.3	1230.7	1318.1
զբաղվածներ, ընդհանուր	1133.5	1072.6	1006.2	1011.7	1012.9
վարձու աշխատող	632.9	613.5	584.0	603.3	673.7
գործատու	16.0	9.7	10.5	12.3	15.8
ինքնազբաղված	398.0	370.5	351.2	372.2	315.0
այլ	86.6	78.9	60.4	23.9	8.4
գործազուրկներ	242.1	243.7	220.2	219.0	240.8
աշխատուժից դուրս բնակչություն	804.5	790.3	785.1	790.6	883.0
սովորող, ուսանող	160.7	148.1	142.0	138.0	144.9
տնային տնտեսություն վարող	260.0	263.5	260.9	249.0	250.9
կենսաթոշակառու, հաշմանդաւ	183.9	177.0	176.3	188.1	215
աշխատանք չունեցող այլ անձինք	200.0	201.7	206.0	215.6	272.3
տնտեսական ակտիվության մակարդակը, %	63.1	62.5	61.0	60.9	59.9
զբաղվածության մակարդակ	52.0	50.9	50.0	50.1	47.7
ոչ ֆորմալ զբաղվածության մակարդակ, %	49.9	47.7	46.4	44.5	40.1
գործազրկության մակարդակ, %	17.6	18.5	18.0	17.8	19.0

ՀՀ տնտեսական զարգացման տարբեր փուլերում բնակչության զբաղվածության հիմնախնդիրը տարբեր բովանդակություն է ունեցել:

1920-ական թթ. սկզբներին հիմնական խնդիրն էր բոլոր ցանկացողներին աշխատանքով ապահովել և գործազրկությունը վերացնել: Այդ հիմնախնդիրը լուծվեց 1930-ական թթ. սկզբներին: Զարգացման հաջորդ փուլում ՀՀ տնտեսության բոլոր ճյուղերի բուռն զարգացումը հանգեցրեց նոր աշխատատեղերի ստեղծման, և աշխատող ձեռքի պահանջը մեծացավ: Այդ ժամանակ զիսավոր խնդիրը նոր աշխատատեղերը որակյալ մասնագետներով ապահովելն էր [28]: Ներկայումս մարդկանց աշխատանքով ապահովելը և զանգվածային գործազրկության վերացումը կրկին հրատապ խնդիրներ են դարձել:

Աշխատանքային ռեսուրսների այն մասը, որն ունի (կամ կարող է ունենալ) եկամուտ, համարվում է **տնտեսապես ակտիվ բնակչություն** (աշխատուժ), որն ընդգրկում է բոլոր աշխատողներին և աշխատանք վնասողներին: Տնտեսական ճգնաժամի պատճառով աշխատանքային ռեսուրսների մի զգալի մասը կայուն վաստակ չունենալու պատճառով դարձել է **գործազուրկ:** ՀՀ աշխատանքային ռեսուրսների մաս են կազմում նաև **աշխատուժից դուրս բնակչությունը (տնտեսապես ոչ ակտիվ բնակչությունը)**¹ ուսանողները, տնային տնտեսություն վարողները, կենսաթոշակառուները, հաշմանդամություն ունեցողները և աշխատանք չունեցող այլ անձինք: Զբաղվածներն ըստ տնտեսական գործունեության բնույթի 2020 թ. ունեին հետևյալ պատկեր՝ արդյունաբերություն՝ 13.8 %, գյուղատնտեսություն՝ 21.8 %, շինարարություն՝ 7.1 %, ծառայություններ՝ 57.2 %:

Վերջին հարյուրամյակում արմատական փոփոխություններ է կրել ՀՀ բնակչության սոցիալ-դասակարգային կազմը: Մինչև 1920-ական թթ. վերջը բնակչության կազմում գերակշռում էին միջակ գյուղացիությունը և քաղաքի մասը սեփականատերերը, այսինքն՝ բնակչությունն իր սոցիալ-դասակարգային բնույթով մասը սեփականատիրական էր:

1930-ական թթ. ՀՀ-ում արտադրության միջոցները կենտրոնացան հիմնականում մեկ սեփականատիրոջ՝ պետության ձեռքում: Ամբողջ

աշխատունակ բնակչությունը դարձավ բանվոր, ծառայող և կոլտնտեսական: Այս վիճակը պահպանվեց մինչև 1991 թվականը, երբ բնակչության սոցիալ-դասակարգային կազմի 85 %-ը բանվոր ծառայողներ էին և նրանց ընտանիքի անդամները, 15 %-ը՝ կոլտնտեսականներ:

Երրորդ հանրապետության տարիներին ՀՀ բնակչության սոցիալ-դասակարգային կազմը հականորեն փոխվել է: Հասարակությունը դարձել է բազմակացութածն, առկա են սեփականության բոլոր ձևերը՝ պետական, մասնավոր, կոլեկտիվ և խառը: Հողի սեփականաշնորհման պատճառով կոլտնտեսություններն ու սովորողները վերացել են, և զյուղական բնակչության գերակշիռ մասը դարձել է մենատնտես զյուղացի, խոկ փոքր մասը միավորված է կոլեկտիվ զյուղացիական տնտեսություններում: Առաջացել են բնակչության սոցիալական նոր խմբեր՝ խոշոր սեփականատերեր ու ձեռնարկատերեր, բանկիրներ, ֆերմերներ, վարձու աշխատողներ և այլն: Վերջին տարիներին ավելանում է մասնավոր սեփականատերերի՝ փոքր ու միջին բիզնեսով զբաղվածների բաժինը:

Առաջիկա տարիներին ՀՀ տնտեսության ձյուղային կառուցվածքում համամասնությունների փոփոխությունը կարող է որակական նոր փոփոխություններ մտցնել բնակչության զբաղվածության և սոցիալ-դասակարգային կառուցվածքում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Կատարե՛ք ՀՀ բնակչության ազգային կազմի և սեռատարիքային կառուցվածքի վերլուծություն:

2. Ի՞նչ գործնթացներ են պայմանավորել ՀՀ ուրբանացումը: Կազմե՛ք ՀՀ մարզերի բնակչության՝ ըստ քաղաքային և զյուղական բաշխվածության քարտեզ-սխեմա:

3. Կատարե՛ք ՀՀ աշխատուժի քանակական և որակական ցուցանիշների վերլուծություն:

3.6. Բնակչության տեղաբաշխման առանձնահատկությունները

Ցանկացած տարածքի բնակեցվածության աստիճանը պայմանավորված է փոխադարձորեն միմյանց հետ կապված սոցիալ-տնտեսական ու բնաաշխարհագրական գործուներով, պատմական անցյալով, յուրացվածության աստիճանով և այլ գործուներով:

ՀՀ համեմատաբար փոքր տարածքում բնակչության տեղաբաշխման ու խտության զգալիորեն մեծ տարբերություններ կան: Բնակչության միջին խտությունը 2020 թ. կազմում էր մոտ **100 մարդ/կմ²**: Ամենախտաբնակը Արմավիրի մարզն է՝ 213, ամենանոսրը՝ Վայոց ձորի մարզը՝ 21 մարդ/կմ²: ՀՀ-ում միջինից բնակչության բարձր խտություն ունեն նաև Արարատի (123 մարդ/կմ²) և Կոտայքի (122 մարդ/կմ²) մարզերը: Գեղարքունիքի, Տավուշի և Արագածոտնի մարզերում այն տատանվում է՝ 43-46 մարդ/կմ²-ի սահմաններում: Սյունիքում բնակչության միջին խտությունը ՀՀ միջինից պակաս է 3.2 անգամ, Լոռիում՝ 1.7, Շիրակում՝ 1.1:

ՀՀ-ում բնակչության և բնակավայրերի հիմնական մասը կենտրոնացված է նախալեռնային հարթություններում, գետահովիտներում, լեռնային զոգավորությունների ցածրադիր հատվածներում և սարահարթերում: Երևան քաղաքում է ապրում երկրի բնակչության ավելի քան 36.6%-ը: Բնակչության առավել մեծ թվով առանձնանում են Արարատյան դաշտը և այն եզրավորող նախալեռնային գոտին, Սևանի մերձափնյա շրջանները, Շիրակի և Լոռվա սարահարթերը: Միայն Արարատյան դաշտում և այն եզրավորող նախալեռնային գոտում ընկած Արարատի, Արմավիրի, Արտաշատի, Աշտարակի, Էջմիածնի, Քաղամյանի, Մասիսի, Կոտայքի և Նախիրի տարածաշրջաններում տեղաբաշխված է ՀՀ զյուղական բնակչության 45 %-ը, այն դեպքում, եթե այդ շրջաններին բաժին է ընկնում ՀՀ ցամաքային տարածքի ընդամենը 17.8 %-ը: ՀՀ հարավում, ուր ընկած են Սյունիքի ու Վայոց ձորի մարզե-

բը և զրադեցնում են երկրի ցամաքային տարածքի 24.3 %-ը, ապրում է ՀՀ բնակչության 6.3 և զյուղական բնակչության 7.3 %-ը:

Բնակչության միջին խտությունը, ընդհանուր պատկերացում տալով բնակեցվածության աստիճանի մասին՝ չի արտացոլում բնակչության տեղաբաշխման իրական պատկերը: Բնակչության խտության ֆիզիկական ցուցանիշը, արտահայտելով տարածքի բնակեցվածության ընդհանուր պատկերը, չի կարող գործնական նշանակություն ունենալ, մանավանդ, որ պիտանի հողատարածքները խփառ անհավասարաշափ են բաշխված մարզերի ու տարածաշրջանների միջև: Այդպիսիք, Մեղրու, Իջևանի, Կապանի և Վայքի տարածաշրջաններում կազմում են համապատասխանաբար ընդհանուր տարածքի 19, 24, 25 և 26 %-ը, իսկ Էջմիածնի, Գորիսի, Գավառի, Տաշիրի, Արմավիրի ու Նախիջի տարածաշրջաններում՝ 67-72 %, Ախուրյանում՝ 75 %, Մասիսում՝ 81 %: Այսպիսով՝ գիտածանաչողական և գործնական նկատառումներով անհրաժեշտ է նաև որոշել տվյալ երկրի կամ տարածաշրջանի բնակչության խտությունը՝ ըստ զյուղատնտեսական հողատարածքի մեծության:


Աղյուսակ 22

*ՀՀ մշտական բնակչության թվաքանակը՝ ըստ մարզերի և ք. Երևանի
(01.01.2021 թ., հազ. մարդ) [42]*


ՀՀ և մարզեր	Ընդամենը	Քաղաքային	Գյուղական
ՀՀ	2 963.3	1 895.6	1 067.7
ք. Երևան	1 091.7	1 091.7	-
Արագածոտն	124.5	26.6	97.9
Արարատ	256.6	72.0	184.6
Արմավիր	264.0	82.5	181.5
Գեղարքունիք	227.3	66.2	161.1
Լոռի	212.6	125.4	87.2
Կոտայք	251.2	136.8	114.4
Շիրակ	231.0	135.2	95.8

Սյունիք	135.8	91.8	44.0
Վայոց ձոր	48.1	16.8	31.3
Տավուշ	120.5	50.6	69.9

ՀՀ բնակչության խտությունը գյուղատնտեսական հողատարածքների հաշվով կազմում է մոտ **145 մարդ/կմ²**, որը նախկին ԽՍՀՄ հանրապետությունների մեջ ամենաբարձր ցուցանիշն է: Սա նշանակում է, որ այդ երկրների մեջ մեկ շնչի հաշվով ամենաքիչ գյուղատնտեսական հողատարածք բաժին է ընկնում ՀՀ բնակչությանը: Լեռնային երկրների համար բնակչության խտությունն արտահայտում են նաև **քառ վարելահողերի գրաված տարածքի**, քանի որ բարձրաշափական նիշերի մեծ տարբերությունների, մակերևույթի խիստ կտրտվածության, լեռնալանցերի մեծ թեքությունների և այլնայլ պատճառներով այդպիսի տարածքներում զգալի շրջաններ դուրս են մնում տնտեսական ակտիվ օգտագործումից:



**Քարտեզ 9. ՀՀ գյուղական բնակչության խտությունը և գյուղերի
միջին մարդաքանակը**




**Քարտեզ 10. ՀՀ լեռնային և բարձր լեռնային բնակավայրերի վարչական
տարածքները**

Բացի դրանից՝ լեռնային երկրներում գյուղատնտեսական հողատարածքների կազմում տեսակարար մեծ կշիռ ունեն սեղոնային արոտավայրերը, որոնք օգտագործվում են միայն տարվա մի քանի ամիս: Հետևաբար բնակչության խտության հաշվարկն ըստ վարելահողերի արտահայտում է տվյալ երկրի կամ տարածքի բնակչության առավել իրական պատկերը: ՀՀ-ում բնակչության խտության այդ ցուցանիշը հավասար է **664 մարդ/կմ²**:


Լեռնային երկրներում խիստ կարևոր է նաև բացահայտել բնակչության տեղաբաշխման և խտության պատկերը՝ ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության, քանի որ լեռնային մակերևույթի պատճառով, ըստ բարձրության, տեղի է ունենում բնական համալիրի տարրերի փոփոխություն, ինչն իր ազդեցություն է թողնում բնակավայրերի տեղադիրքի, չափերի, բնակչության թվաքանակի ու տնտեսական գործունեության վրա: ՀՀ-ում բնակեցման համար առավել նպաստավոր և նպաստավոր պայմաններ ունեցող հարթավայրային ու սարահարթա-սարավանդային) տարածքները գտնվում են տարբեր բարձրությունների վրա (800-2000 մ), սակայն առանձնանում են բնակչության ու բնակավայրերի առավել բարձր խտությամբ: Այդ պատճառով խախտվում են բնակչության տեղաբաշխման համաշափությունը՝ ըստ բարձրության բնակչության թվի, և խտության աստիճանական նվազումը կամ ավելացումը:

ՀՀ-ում բնակեցված տարածքը սկսվում է մոտ 400 մ-ից և հասնում մինչև 2340 մ բարձրություն: Սակայն բնակչության գրեթե 54 %-ը կենտրոնացած է 800-1000 մ բարձրությունների միջև, որին բաժին է ընկնում երկրի ցամաքային տարածքի ընդամենը 8.3 %-ը:



Քարտեզ 11. ՀՀ սահմանամերձ բնակավայրերի վարչական տարածքները


Այստեղ է գտնվում ՀՀ բնակավայրերի ընդհանուր թվի 21 %-ը: **Բնակչության** խտությունն այս գրտում կազմում է շուրջ 750, իսկ միայն գյուղական բնակչության խտությունը՝ 170 մարդ/կմ²: Այս գրտում են ընկած մայրաքաղաք Երևանը և ևս 10 քաղաք, որոնց բաժին է ընկնում ՀՀ քաղաքային բնակչության ավելի քան 65 %-ը:



Քարտեզ 12. ՀՀ գյուղական բնակավայրերի խտությունը

Այս գրտում է ապրում մեր երկրի գյուղական բնակչության 34 %-ը: 1970 թ. համեմատությամբ այս գրտու մասնաբաժինը ՀՀ

Բնակչության մեջ բարձրացել է գրեթե 7 տոկոսային կետով՝ 47.1-54: ՀՀ-ում մինչև 1000 մ բարձրության տարածքներում ապրում է ամբողջ Բնակչության 56 %-ից ավելին (քաղաքային բնակչության մոտ 67, գյուղական բնակչության 38 %-ը):



Քարտեզ 13. ՀՀ բնակչության խտություն՝ ըստ վերընթաց գոտիների

Բնակչության կուտակման հաջորդ գոտին, որը զբաղեցնում է ՀՀ ցամաքային տարածքի 17.7 %-ը, 1200-1600 մ բարձրության շրջաններն են, որտեղ բնակվում է ՀՀ բնակչության 20 %-ից ավելին, ավելի ցածրադիր՝ 1000-1200 մ բարձրության գոտուն բաժին է ընկնում ՀՀ բնակչության ընդամենը 4.4 %-ը: Վերջինս բացատրվում է

այդ գոտում մակերևույթի խիստ մասնատվածությամբ և լանջերի մեծ թեքությամբ, որոնք բնակեցման ու տնտեսական գործունեության համար հարուցում են լրացուցիչ դժվարություններ:

Հստ բարձրության՝ բնակչության տեղաբաշխման 4-րդ գոտուն՝ 1600-2000 մ բարձրության շրջաններին բաժին է ընկնում ՀՀ տարածքի 23.2 %-ը, որտեղ բնակվում է երկրի բնակչության շուրջ 17 %-ը: Այդ տարածքներում բնակչության թվաքանակի այդպիսի կուտակումը պայմանավորված է նշված բարձրության շրջաններում հարթավայրային ընդարձակ տարածքների ու բերրի սևահողերի առկայությամբ: Պատահական չէ այն փաստը, որ 1600-2000 մ բարձրության տարածքներին բաժին է ընկնում ՀՀ քաղաքային բնակչության ընդամենը 11, զյուղական բնակչության՝ 27 %-ը:

Բնակչության տեղաբաշխման ամենաբարձրադիր գոտում՝ 2001-2250 մ բարձրության շրջաններում, ապրում է ՀՀ բնակչության ընդամենը 2,2 %-ը, չնայած որ բարձրության այս գոտին զբաղեցնում է երկրի ցամաքային տարածքի 14,6 %-ը: Այստեղ ևս ամբողջ բնակչության համեմատ զյուղական բնակչության մասնաբաժինը համեմատաբար բարձր է՝ 5,5 %: 2250 մ-ից բարձր շրջաններում կա մշտական բնակչություն ունեցող 3 զյուղ, որոնցում միասին 2019 թ. ապրում էր 426 մարդ:

1998 թ. նոյեմբերին ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով առանձնացվել են սահմանամերձ բնակավայրեր, և բնակավայրերը դասակարգվել են ըստ բարձունքային նիշերի: Հստ այդմ՝ սահմանամերձ են ՀՀ մշտական բնակչություն ունեցող բնակավայրերի 20.4 %-ը՝ 9 քաղաք և 191 զյուղ (ՀՀ զյուղերի 20.6 %-ը), որտեղ 2018 թ. ապրում էր ՀՀ բնակչության 8.2 %-ը: ՀՀ-ում լեռնային և բարձր լեռնային տարածքներին (1700-2000 մ՝ լեռնային, 2000 մ-ից բարձր՝ բարձր լեռնային) բաժին է ընկնում ՀՀ տարածքի համապատասխանաբար 18 և 42.5 %-ը: Այդպիսի շրջաններում են գտնվում 13


քաղաք և մշտական բնակչություն ունեցող 347 գյուղ, դրանց 2018 թ. բաժին էր ընկնում ՀՀ բնակչության 17.3 %-ը:

ՀՀ բնակչության՝ ըստ բարձրության տեղաբաշխման տվյալները եականորեն տարբերվում են հարեւան Վրաստանից, որը ևս տիպիկ լեռնային երկիր է: Դրա հիմնական պատճառն այն է, որ Վրաստանում շատ են ցածրադիր համեմատաբար ընդարձակ, հարթ տարածքները (Կոլխիդա, Ալազանի հովիտ, Կուրի հովիտը Թբիլիսիից ներքև), և լեռնաշղթաներն իշնում են առանց սարահարթային ընդարձակ տարածքների: Դրա փոխարեն ՀՀ-ում ցածրադիր, հարթ տարածքները շատ քիչ են, որոնց փոխարեն հանդես են զալիս աստիճանաձև դասավորված սարահարթերը, որտեղ էլ հիմնականում կուտակվել է բնակչությունը: Եթե ՀՀ-ում մինչև 800 մ բարձրություն-ներում ապրում է բնակչության 2,5, ապա Վրաստանում՝ 80 %-ից ավելին:

3.7. Տարաբնակեցումը

Տարաբնակեցումը երկրի տարածքի բնակեցման պատմական գործընթացն է, որն ուղեկցվում է բնակավայրերի և դրանց համակարգերի առաջացմամբ և փոփոխություններով։ Հասարակության զարգացման ամեն մի նոր փուլ իր ներգործությունն է ունենում թե՝ առանձին բնակավայրերի և թե՝ բնակավայրերի տարածական համակարգի ու ցանցի տարաբնակեցման բոլոր կողմերի վրա։

ՀՀ տարաբնակեցման միասնական համակարգը բաղկացած 1003 բնակավայրից՝ 49 քաղաք, մնացածը՝ գյուղ։ Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ ժամանակակից տարաբնակեցման համակարգը հիմնական գծերով սկսել է ձևավորվել XIX դարի 30-ական թվականներից։



Քարտեզ 14. ՀՀ գյուղական բնակչության և բնակավայրերի խտությունն ըստ
գյուղատնտեսական հողատարածքների

Հետագա շուրջ 190 տարվա ընթացքում մեր երկրում տեղի ունեցած տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական, վարչաքաղաքական, տարածաշրջանային և այլ գործընթացներն իրենց դերն են ունեցել բնակավայրերի զարգացման, տարածքների յուրացման, միջքնակավայրային կապերի ձևավորման, զարգացման և վերջապես տարաբնակեցման հենքի ամրապնդման ու կայունացման գործում:

ՀՀ բնակավայրերի ցանցի ամրապնդման ու տարաբնակեցման հենքի կայունացման համար առանձնահատուկ դեր է ունեցել խորհրդային շուրջ յոթ տասնամյակը: Այս ընթացքում մեր երկրում տեղի են ունեցել սոցիալ-տնտեսական արմատական փոփոխություններ: Պատմական կարճ ժամանակահատվածում Հայաստանը հետամնաց ազրարային երկրից վերածվեց ինդուստրիալ-ազրարային երկրի: Վերջինս արտահայտվեց նաև տեղի ունեցած ուրբանացման գործընթացներով. 1920-ական թթ. երկրում առկա 6 քաղաքների փոխարեն 1980-ական թվականներից դրանց թիվը հասավ 58-ի: Այդ ժամանակահատվածում տեղի է ունեցել նաև ՀՀ գյուղական բնակավայրերի ցանցի կայունացում: 1920-ական թվականներից մինչև 1970-ական թվականները ՀՀ գյուղական բնակավայրերի ցանցից վերացան ավելի քան 360 գյուղական բնակավայր, ժամանակավոր բնակելի կետեր և գյուղական տիպի այլ բնակատեղեր:

Խորհրդային տարիներին տարաբնակեցման համակարգի զարգացման վրա, բացի արտադրատնտեսական գործուներից, կարևոր դեր են ունեցել նաև ձևավորված վարչատարածքային կառուցվածքն ու քածանումը: 1929-1930 թթ. ձևավորված ու մինչև 1995 թ. վերջը գյուղատեսած վարչատարածքային կառուցվածքը հիմք հանդիսացավ վարչական շրջանների կտրվածքով տարաբնակեցման տեղական կենտրոնների ու տարաբնակեցման շրջանային համակարգերի ձևավորման համար: Իսկ երկրի մասշտաբով միասնական տարածքային արտադրական համալիրի ձևավորումն ու զարգացումը պայ-

մանավորեցին տարաբնակեցման միասնական համակարգի առաջցումը:

ՀՀ տարաբնակեցման միասնական համակարգն ունի ինչպես ուղղաձիգ, այնպես էլ հորիզոնական (տարածքային) կառուցվածք: ՀՀ տարաբնակեցման ենթակարգային կառուցվածքի զագաթում մայրաքաղաք Երևանն է, երկրորդ աստիճանում՝ մարզկենտրոնները և դրանց համարժեք ներուժ ունեցող քաղաքային բնակավայրերը, երրորդ աստիճանում՝ տարածաշրջանային կենտրոնները, չորրորդ աստիճանում՝ գյուղական խոշոր բնակավայրերը, որոնք հարակից գյուղերի համար տեղական կենտրոններ են, ենթակա գյուղերի համար տեղական կենտրոններ են, ենթակա գյուղերի համար տեղական կենտրոններ են: ՀՀ մարզական գյուղական համակավայրերը (փոքր քաղաքները և գյուղական բնակավայրերը):

ՀՀ տարաբնակեցման տարածքային կառուցվածքի միավորներ են մարզային տարաբնակեցման համակարգերը, որոնք ձևավորվել ու զարգացել են ՀՀ խոշոր բնատնտեսական միավորների սահմաններում:

ՀՀ տարաբնակեցման ենթակարգային ու տարածքային կառուցվածքի միավորները ՀՀ տարաբնակեցման միասնական օրգանիզմի (համակարգի) փոխկապակցված բաղադրիչներ են:

Հարցեր և առաջադրանքներ

1. Նշե՛ք ՀՀ բնակչության տեղաբաշխման վրա ազդող հիմնական գործուները:

2. Բնո՞ւշ առանձնահատկություններ և բնորոշ գծեր ունի ՀՀ բնակչության և բնակավայրերի տեղաբաշխումը:

3. Կատարե՛ք ՀՀ բնակչության տեղաբաշխման տարածաշրջանային վերլուծություն:

4. Բնութագրե՛ք ՀՀ բնակչության տեղաբաշխումն ըստ բարձրության գոտիների:

5. Բնութագրե՛ք ՀՀ տարաբնակեցման համակարգը: Առանձնացրե՛ք ՀՀ տարաբնակեցման համակարգի ենթակարգային և տարածքային կառուցվածքի միավորները:

3.7.1. Քաղաքային տարաբնակեցումը

Հայկական լեռնաշխարհում Ք.ա. III-II հազարամյակում ձևավորված ցեղային միությունների տարածքներում և դրանց հաջորդած մյուս ցեղային-պէտական միավորումներում գոյություն են ունեցել տասնյակ բերդեր ու բերդաբաղաքներ, որոնք ցրված էին երկրի տարբեր կողմերում և ունեին հիմնականում ռազմական ու վարչական նշանակություն: Ուրարտական պէտության ձևավորման գործում էական դեր է ունեցել մեծ թվով բերդերի, ավանաբերդերի և բերդաբաղաքների գոյությունը: Ուրարտական ժամանակներում (Ք.ա. IX-VI դդ.) հիմնադրվել են պէտության մայրաքաղաք Տուշպան, Մելիտեն, Ախուրիանին, Աշտուխինին (Կարսի շրջանում), Մանագկերտը, Արձեշը, Էրեբունի-Երևանը, Արգիշտիխինվին: Ք.ա. III-I դարերում՝ հելլենիզմի դարաշրջանում, մեծ վերելք են ապրել նաև Հայաստան աշխարհի քաղաքները [36]:

Տեղայիշմի դարաշրջանում Հայաստանի հելլենիստական քաղաքներն աստիճանաբար հետադիմեցին, մի մասը, աստիճանաբար նվազելով, V-VI դարերից դադարեց գոյություն ունենալ: I-V դարերում Հայաստանում առաջացել են մի շարք քաղաքներ (Արգն, Բաղեշ, Խլաթ, Կարին, Ոստան, Աղամակերտ, Սպեր, Նախճավան, Մուշ և այլն), որոնցից առավել հայտնի էին Վաղարշապատը, Դվինը և Արշակավանը:

Հայաստանի քաղաքները, սկսած V դարից, աստիճանաբար հետադիմել են, իսկ VII-IX դարերում տեղի է ունեցել քաղաքների համբուղանուր անկում: Դրանց մի մասը IX-X դարերում կորցրեց իր տնտեսական նշանակությունը, իսկ որոշ քաղաքներ ել ընդմիշտ դադարեցին գոյություն ունենալ (օրինակ՝ Արտաշատը):

Հայաստանում քաղաքային կյանքն աննախադեպ վերելք է ապրել քաղաքական անկախության շրջանում՝ IX-XI դարերում: Վերելք են ապրել հին քաղաքներ Դվինը, Վանը, Նախճավանը, Բաղեշը

(Բիթլիս), Հերք (Խոյ), Բազարանը և այլ քաղաքներ: Հիմնադրվել են նոր քաղաքներ՝ Անի, Կարս, Արծն, Խլաթ, Մուշ, Լոռի, Կապան, Երազգավորս: Այս ժամանակաշրջանի քաղաքներից Անին, Դվինը, Արծնը և Կարսն ունեցել են մինչև 100 հազար բնակիչ [36]:

XVI-XVIII դարերում Հայաստանի քաղաքներից համեմատաբար նշանավոր էին Երևանը, Էրզրումը, Վանը, Երզնկան, Կարսը, Բայազետը, Խլաթը, Բիթլիսը, Մուշը, Արձեշը, Սեբաստիան, Մալաթիան, Դիարբեքիրը: Սակայն բացառությամբ Երևանի, Էրզրումի, Վանի և Երզնկայի՝ դրանցից յուրաքանչյուրի բնակչության թիվը չէր անցնում 10 հազար մարդուց [35]:

XIX դարի 30-ական թվականներից սկսած, հատկապես Արևելյան Հայաստանում, տնտեսական զարգացումը նպաստեց քաղաքային բնակավայրերի զարգացմանը: Արհեստագործության հայտնի կենտրոններ դարձան Երևանը, Ալեքսանդրապոլիս, Ախալցիան, Կարսը, Նախիջևանը, Շուշին, Էրզրումը, Վանը, Երզնկան, Բիթլիսը, Սեբաստիան, Մալաթիան, Մուշը, Շատախը: 1850-ական թվականներից մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Հայաստանում քաղաքների զարգացումը և գոյությունը պայմանավորված էին ինչպես արհեստագործությամբ, այնպես էլ նոր-նոր ձևավորվող արդյունաբերությամբ: Այս ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքները խոշոր ու մարդաշատ չէին: Դրանք դեռևս սերտորեն առնչվում էին գյուղատնտեսական զբաղմունքներին, և արհեստներն ու առևտուրը գերազանցապես միայն տեղական նշանակություն ունեին: Երևանի նահանգում կար միայն 5 խոշոր քաղաք՝ Երևան, Ալեքսանդրապոլ, Նախիջևան, Օրդուբադ և Նոր Բայազետ [35]:

Խորհրդային տարիներին (1962 թվականից) ընդունված օրենսդրական ակտի համաձայն՝ բնակավայրը քաղաքային համարելու գլխավոր չափանիշներ են եղել բնակչության ընդհանուր թվաքանակում բանվոր-ծառայողների տոկոսը՝ 66 % (ընտանիքի անդամների թիվը ներառյալ), և արդյունաբերական ձեռնարկությունների, կա-

ոույցների, տնտեսական այլ կարևոր օբյեկտների և պետական բնակելի ֆոնդի առկայությունը, բարեկարգվածության որոշակի մակարդակը: Բնակչության նվազագույն թիվը պետք է լիներ 3000 մարդ: Բացառություն էին կազմում առողջավայրերը, որոնք քաղաքներ էին համարվում նույնիսկ 2000 բնակչի դեպքում (եթե բուժման և հանգստի նպատակով եկվորների թիվը մշտական բնակչության թվի 50 %-ից պակաս չէր) [28]: Հստ 1995 թ. ընդունված վարչատարածքային բաժանման օրենքի՝ ՀՀ-ում քաղաքային բնակավայրի կարգավիճակ ուներ 48 բնակավայր: Նախկինում քաղաքների շարքին դասվող Ազատամուտ, Այրում, Ամփեմզա, Արզնի, Արազած (Թալինի տարածաշրջան), Նոր Խարբերդ, Գագարին, Լուսակերտ, Զորագետավան, Պեմզաշեն բնակավայրերը դասվեցին գյուղերի շարքին, իսկ Եղվարդ գյուղը դարձավ քաղաք: 2006 թ. Այրումը նորից դասվեց քաղաքների շարքին:

Ինչպես աշխարհի բոլոր երկրներում, Հայաստանում ևս քաղաքները միշտ ել եղել են ոչ գյուղատնտեսական գործառույթ կատարող բնակավայրեր:

ՀՀ քաղաքային բնակավայրերի ներկայիս ցանցը ձևավորվել է ոչ միանգամից: Նախախորհրդային Հայաստանում քաղաքային բնակավայրի կարգավիճակ ունեին Երևանը, Գյումրին (Ալեքսանդրապոլը), Գավառը (Նոր Բայազետը) և Գորիսը (Կյորեսը): Դրանցում 1914 թ. դրությամբ ապրում էր մոտ 104 հազ. մարդ (կամ Արևելյան Հայաստանի բնակչության 10.4 %-ը) [նույն տեղում]: Այդ ժամանակ բնակչության թվով առավել խոշոր էին Գյումրին ու Երևանը:

Մեր երկրում քաղաքային բնակավայրի թվի և դրանց բնակչության թվաքանակի արագ աճ տեղի է ունեցել խորհրդային տարիներին: Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, ինդուստրացման և ուրբանացման միասնական գործընթացների շնորհիվ ՀՀ-ում ձևավորվեցին բազմաթիվ նոր քաղաքներ նախկին գյուղական բնակավայրերի խոշորացման և նոր գործառույթների կատարման շնորհիվ

(Հրազդան, Վանաձոր, Արթիկ, Կապան, Արտաշատ, Աբովյան, Աշտարակ և այլն): Դրա հետ միաժամանակ ձևավորվեցին մի շարք նոր քաղաքներ արդյունաբերության այս կամ այն ճյուղի զարգացման կամ նոր հանքավայրերի շահագործման շնորհիվ (Չարենցավան, Քաջարան, Ազարակ, Նոր Հաճն, Բյուրեղավան): **Խորհրդային վերջին տարիներին Հայկական ԽՍՀՄ-ում կար 58 քաղաքային բնակավայր, որոնցից 22-ն ուներ հանրապետական, 5-ը՝ շրջանային ենթակայության կարգավիճակ:** Մնացած 31 բնակավայրերը եղել են քաղաքատիպ ավաններ [19]: Հանրապետական ենթակայության քաղաքներն ունեին ավելի բարձր կարգավիճակ և երկրի տարածքային կառավարման համակարգում հավասարեցված էին գյուղական վարչական շրջաններին: Մրանք, որպես կարգ, ունեին զարգացած արդյունաբերություն ու կոմունալ տնտեսություն և հարակից շրջանների համար իրականացնում էին տնտեսական և մշակութային գործառույթներ, բնակչության թիվն անցնում էր 50 հազարից: Իսկ եթե բնակչության թիվը 50 հազարից պակաս էր, ակնհայտ էին բնակավայրի արդյունաբերական ու մշակութային աճող նշանակությունը և տնտեսական զարգացման բարենպաստ հեռանկարները [28]: Շրջանային ենթակայության քաղաքը նվազագույնը պետք է ունենար 8 հազար բնակիչ, և բանվոր ծառայողները կազմեին 2/3-ից ավելին [նույն տեղում]: Շրջանային ենթակայության քաղաքներ էին Քաջարանը, Սիսիանը, Տաշիրը, Մեղրին, Ծաղկաձորը: Ավելի ցածր ցենզի դեպքում բնակավայրը համարվում էր քաղաքատիպ ավան:

Աղյուսակ 23

*ՀՀ քաղաքային բնակչության թվի շարժընթացք՝ ըստ մարզերի, 1000 մարդ
(1990-2021 թթ.) [12, 14, 15, 42]*

	1990	1995	2001	2011	2013	2015	2021
ՀՀ	2416.8	2166.4	2066.2	1911.3	1917.5	1901.4	1 895.6
ք. Երևան	1237.5	1113.2	1103.5	1060.1	1066.3	1075.8	1 091.7
Արագածոտն	36,9	35.3	32.9	30.6	30.6	28.3	26.6
Արարատ	86.5	85.1	79.9	74.1	74.5	72.7	72.0
Արմավիր	111.7	104.5	98.3	85.1	85.3	84.0	82.5
Գեղարքունիք	91.0	88.2	78.9	71.4	71.3	68.4	66.2
Լոռի	251.3	195.2	169.9	137.8	137.2	130.8	125.4
Կոտայք	185.5	170.5	154.0	137.5	138.2	137.5	136.8
Շիրակ	233.0	186.0	174.3	146.9	146.3	139.9	135.2
Սյունիք	100.7	105.9	104.2	95.2	95.3	93.9	91.8
Վայոց ձոր	23.5	25.1	19.6	18.4	18.4	17.6	16.8
Տավուշ	58.3	56.8	50.7	54.2	54.1	52.5	50.6

ՀՀ-ն քաղաքային բնակչության առավելագույն բացարձակ ցուցանիշը ունեցել է 1992 թ.՝ 2503.8 հազ. մարդ (ընդհանուր բնակչության **68.9 %**-ը):

Խորհրդային տարիներին քաղաքների թվի արագ աճը հանգեցրեց երկրում քաղաքային բնակավայրերի ցանցի բոլորովին նոր պատկերի ձևավորման՝ քաղաքային տարաբնակեցման համակարգի ստեղծմանը և քաղաքային բնակավայրերի ցանցի աննախադեպ խտացմանը: Եթե նախախորհրդային տարիներին քաղաքային բնակավայրերի միջև ֆիզիկական հեռավորությունը կազմում էր մոտ 100 կմ, ապա 1980-ական թթ.՝ ընդամենը 20 [28]:

ՀՀ քաղաքային բնակավայրերի ցանցը ձևավորվել է մեր երկրի տարբեր շրջանների բնական, տնտեսական ու ժողովրդագրական կոնկրետ պայմանների ազդեցության տակ, որոնք զգալիորեն տարբերվում են միմյանցից և միանգամայն տարբեր ազդեցություն են թո-

դել քաղաքների ձևավորման ու զարգացման վրա:

ՀՀ քաղաքային բնակավայրերի զարգացման մեջ որակական նոր երևույթ էր խորհրդային վերջին տասնամյակներին քաղաքային ազլումերացիաների ձևավորման գործընթացը [28]: Այն բնակավայրերի խմբավորում էր, որն արտադրական, աշխատանքային և այլ ոլորտների ներքին սերտ կապերի ու ենթակառուցվածքային տարրերի միասնականության շնորհիվ դառնում է ՀՏԿ ինքնուրույն օդակ: Տայաստանում խորհրդային իշխանության վերջին տարիներին ձևավորվել և ձևավորման փուլում են Երևանի, Հրազդանի, Գյումրիի, Վանաձորի և Ալավերդու ազլումերացիաները: Առավել ձևավորվածը և այժմ իր գործառույթները կատարողը Երևանի ազլումերացիան է: Մրա մեջ մտնում են 25-30 կմ շառավղով խմբավորված և միմյանց հետ տարածական համակարգ կազմող մեկուկես տասնյակ միջին ու փոքր քաղաքային բնակավայրեր [նույն տեղում]: Խորհրդային տարիներին ձևավորման փուլում գտնվող Գյումրու, Վանաձորի, Հրազդանի և Ալավերդու ազլումերացիաները վերջին երեք տասնամյակի ընթացքում էականորեն կորցրել են իրենց ազլումերացիոն ներուժը: Նշված քաղաքներում արտադրական նախկին հզորությունների վերականգնումը և զարգացումը կնպաստեն քաղաքային տարաքնակեցման այդ խմբային ձևի՝ ազլումերացիայի ակտիվացմանն ու տարածմանը:

Քաղաքային բնակավայրերի աշխարհագրական ուսումնասիրման կարևոր խնդիրներից են քաղաքների տիպարանությունն ու դասակարգումը: Քաղաքները կարելի է խմբավորել և դասակարգել քանակական ու որակական տարրեր ցուցանիշների հիման վրա: Աշխարհագրական առումով քաղաքների դասակարգման ցուցանիշներ են՝ 1) մարդաշատությունը, 2) տնտեսական գործառույթները, 3) ՏՏ-ը, 4) աշխատանքի տարածքային բաժանման մեջ բնակավայրերի մասնակցության աստիճանը, 5) ծագումնաբանական ցուցանիշները [28]:

Մարդաշատությունը քաղաքների դասակարգման առավել ընդհանրական և հեշտ ընկալվող ցուցանիշ է և իրենով պայմանավորում է մի քանի այլ ցուցանիշներ ևս: 2020 թ. ՀՀ քաղաքներն ըստ մարդաշատության ունեն հետևյալ պատկերը՝

- **միլիոնանց մեկ քաղաք՝ Երևան,**
- **խոշոր մեկ քաղաք՝ Գյումրի,**
- **միջին մեծության (20-100 հազ. բնակիչ) տասնմեկ քաղաք՝**


Աբովյան, Արարատ, Արմավիր Կանաձոր, Գորիս, Իջևան, Վաղարշապատ, Կապան, Մասիս, Հրազդան, Չարենցավան:

Փոքր քաղաքները (10-20 հազ. բնակիչ) տասնչորսն են՝ Ալավերդի, Աշտարակ, Արթիկ, Արտաշատ, Գավառ, Վեդի, Վարդենիս, Դիլիջան, Եղվարդ, Մարտունի, Սիսիան, Սպիտակ, Ստեփանավան, Սևան:

Մանր քաղաքները քսաներկուսն են:

ՀՀ-ում չկա խոշորագույն քաղաք, քաղաքների կեսից ավելին (25-ը) կազմում են միջին ու փոքր քաղաքները:

Քաղաքը բնութագրող գլխավոր ցուցանիշներով ՀՀ-ում առաջինը Երևանն է: Դառնալով երկրի մայրաքաղաք՝ կարճ ժամանակաշրջանում այն դարձավ ՀՀ քաղաքական, տնտեսական, մշակութային և առևտրաֆինանսական խոշորագույն կենտրոնը: Ներկայումս Երևանի բնակչության թիվը 1914 թ. մակարդակը գերազանցում է ավելի քան 35 անգամ: Երևանի բնակչության միջին տարեկան աճն առավել բարձր է եղել 1970-ական թթ., երբ այն կազմում էր 30 հազար մարդ: Ներկայումս միայն Երևանում է ապրում ՀՀ բնակչության 36.6, քաղաքային բնակչության՝ ավելի քան 57.3 %-ը: Սա բավականին հազվադեպ երևույթ է ոչ միայն մեր տարածաշրջանում, այլև աշխարհում: Եթե խորհրդային տարիներին այդ երևույթը նպաստել է մեր երկրի արդյունաբերական զարգացմանը, սոցիալ-տնտեսական և մշակութային առաջընթացին, ապա ժամանակակից պայմաններում և ապագայի չափանիշներով մեկ քաղաքում բնակչության նման կենտրոնացումը ծնում է բազմաթիվ խնդիրներ:



Քարտեզ 15. ՀՀ քաղաքները

ՀՀ-ում մարդաշատությամբ երկրորդ քաղաք **Գյումրին**, եթե 1988 թ. Երևանին զիջում էր մոտ 5, ապա՝ ներկայումս 9.6 անգամ։ Չնայած Գյումրին 1914 թ. բնակչության թվով ավելի քան 21 հազարով ավելի էր Երևանից, սակայն ՀՀ տարածքում նրա եզրային, սահմանամերձ և ոչ այնքան էլ նպաստավոր ՏՏ-ը, ինչպես նաև բնական ու տնտեսական պայմանները խոչընդոտել են Գյումրու զարգացմանը և բնակչության թվաքանակի առավել բարձր տեմպերով աճին։ 1988 թ. Սպիտակի երկրաշարժը և դրան հաջորդած տնտեսական ճգնաժամը վերջին երեք տասնամյակում էականորեն խոչընդո-

տել են Գյումրու տնտեսական զարգացմանը, որի հետևանքով 1988 թվականից հետո քաղաքի բնակչությունը նվազել է գրեթե 120 հազարով:

Խորհրդային տարիներին աճի ու զարգացման նպաստավոր պայմաններ է ունեցել **Վանաձորը** (Վիրովական), որի բնակչությունն այդ ընթացքում ավելացել է ավելի քան 25 անգամ (Աղ. 24):

Քաղաքի տնտեսական գործառույթները ձևավորվում են արտադրական, ժողովրդագրական, պատմական և ֆիզիկաշխարհագրական գործուների ազդեցության տակ և որոշում են քաղաքի դերը շրջակա տարածքի ու բնակավայրերի, դրանց հետ ունեցած արտադրական, տրանսպորտային, մշակութային և այլ կապերի զարգացման նկատմամբ [28]: Որպես կարգ՝ քաղաքներն իրականացնում են երկու խոշոր գործառույթ՝ տնտեսական և ոչ տնտեսական, որոնք կարող են սերտորեն շաղկապված լինել միմյանց հետ: Քաղաքաստեղծ առումով առավել մեծ նշանակություն ունեն տնտեսաարտադրական գործառույթները, որոնք դրսևորվում են արդյունաբերության, տրանսպորտի, առևտրի, մատակարարման և մթերման ձևով:

Իրենց հիմնական գործառույթներով ՀՀ քաղաքները բազմազան չեն: ՀՀ բոլոր մարզենտրոնները, մայրաքաղաք Երևանը և բնակչության թվով համեմատաբար մեծ քաղաքները բազմազործառութային քաղաքներ են և կատարում են արդյունաբերական, տրանսպորտային, վարչական, գիտական, կրթամշակութային, առևտրական, սպասարկման և այլ գործառույթներ:

Աղյուսակ 24

*Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների բնակչության թվաքանակը
(հազ. մարդ) [12, 14, 15, 29, 40, 42]*

Քաղաք-ներ	1897 թ.	1914 թ.	1922 թ.	1926 թ.	1939 թ.	1959 թ.	1979 թ.	1988 թ.	2001 թ.	2011 թ.	2021 թ.
Երևան	29.0	29.8	46.6	64.6	199.0	509.3	1033	1186	1103.5	1060	1091.7
Գյումրի	30.6	51.3	44.7	42.3	67.7	108.4	207.0	230.6	150.9	122.0	112.1
Վանաձոր	3.9	6.7	6.4	8.6	17.6	49.4	146.0	170.9	107.4	86.2	76.9

Մնացած քաղաքները, որոնք բնակչության թվով հիմնականում փոքր են, առավելապես միագործառութային են: ՀՀ նախկին վարչական շրջանների կենտրոններից շատերը մտնում են այս խմբի մեջ, որոնք նախկինում իրականացնում էին նաև վարչական ու սպասարկման գործառություններ իրենց շրջանների սահմաններում: Զերմուկը, Ծաղկաձորը Դիլիջանն առողջարանային կենտրոններ են:

Քաղաքի զարգացման համար առանձնահատուկ դեր ունի տնտեսաաշխագրական դիրքը: ՀՀ քաղաքների համար առավել մեծ դեր ունեն բնակավայրի ՏՏ-ը պայմանավորող հետևյալ պայմանները՝¹⁾ 1) քաղաքի (բնակավայրի) դիրքը տրանսպորտային ուղիների նկատմամբ, 2) քաղաքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, խոշոր տնտեսական կենտրոններից և զարգացած գյուղատնտեսական շրջաններից, 3) քաղաքի դիրքը կարևոր նշանակություն ունեցող հումքի աղբյուրների նկատմամբ, 4) տարածքի նկատմամբ քաղաքի կենտրոնական կամ ծայրամասային դիրքը, 5) քաղաքի տարածաշրջանային (դիրքն արտաքին սահմանների նկատմամբ) վիճակը [28]: Նշվածներից մի քանիսը կամ ամբողջը միասին ձևավորում են քաղաքի ՏՏ-ի և քաղաք-շրջապատ փոխհարաբերությունը: Քաղաքը ձևավորվում և զարգանում է որոշակի շրջապատում, կախված է նրանից և զարգանում է վերջինիս սոցիալ-տնտեսական գործոնների ու ենթակառուցվածքների ազդեցության տակ:

Հստ իրենց ՏԱԴ-ի՝ ՀՀ քաղաքները կարելի է բաժանել հետևյալ խմբերի [նույն տեղում]:

1. **Առավել նպաստավոր ՏԱԴ ունեցող քաղաքներ:** Սրանք այն քաղաքները, որոնք ապահովված են տրանսպորտի բոլոր տեսակներով, ՀՀ տարածքում ունեն կենտրոնական դիրք, շրջակայքում կան հումքի աղբյուրներ և ունեն մերձավոր հարևանություն տնտեսական այլ կենտրոնների հետ: Նշված պայմաններն ունեն Երևանը, Աբովյանը, Հրազդանը, Վանաձորը, Դիլիջանը, Սևանը և սրանց մերձակայքի այն քաղաքները, որոնք բավարարում են թվարկած պայմանները:

2. **Հարմար ՏԱԴ ունեցող քաղաքներ:** Սրանք նախորդից տարբերվում են նրանով, որ ՀՀ տարածքի նկատմամբ չունեն կենտրոնական դիրք (Գյումրի, Ալավերդի, Արարատ, Էջման, Արմավիր և այլն):

3. **Բավարար ՏԱԴ ունեցող քաղաքներ:** Սրանք կամ գտնվում են երկաթուղային փակուլում, կամ չունեն երկաթուղագիծ, սակայն ունեն ավտոճանապարհային բավարար հաղորդակցություն և տնտեսական կենտրոններից գտնվում են ոչ մեծ հեռավորության վրա (Արթիկ, Աշուարակ, Գավառ, Ստեփանավան, Ապարան):

4. **Աննպաստ ՏԱԴ ունեցող քաղաքներ:** Սրանք ՀՀ տարածքի նկատմամբ ունեն ծայրամասային դիրք, գուրկ են երկաթուղուց (Քաջարան, Զերմուկ, Տաշիր, Բերդ, Դաստակերտ և այլն):

Քաղաքների զարգացման ու տարաբնակեցման համակարգում նրանց տեղի ու դերի համար կարևոր նշանակություն ունի նաև ԱԱԲ-ի մեջ քաղաքի մասնակցության աստիճանը: Ինչպես ՀՀ տարաբնակեցման համակարգում, այնպես էլ ներհանրապետական աշխատանքի տարածքային բաժանման մեջ իրենց ունեցած դերով ու տեղով ՀՀ քաղաքները կարելի է բաժանել 3 խմբի [28]:

1) **Համահանրապետական կենտրոն:** Սա ոչ միայն ներհանրապետական, այլև արտաքին գլխավոր կապերի հանգուցակետն է: Այդպիսի դեր ունի մայրաքաղաք Երևանը:

2) Ուեզիոնալ (տարածաշրջանային) կենտրոններ: Գտնվում են ՀՀ խոշոր տարածքներն սպասարկող կապերի հանգուցակետում, երբեմն ունեն նաև ՀՀ սահմաններից դուրս գտնվող կապերը (Գյումրի, Վանաձոր, Կապան, Գավառ, Խօնան, Հրազդան, Արտաշատ, Եղեգնաձոր, Աշտարակ, Արմավիր):

3) Տեղական նշանակության կենտրոններ: Մրանք ունեն սահմանափակ տարածք, արտաքին կապերը թույլ են:

Քաղաքների ձևավորման ու զարգացման օրինաչափությունները բացահայտելու իմաստով կարևոր նշանակություն ունի նաև դրանց գենետիկական դասակարգումը:

ՀՀ քաղաքային բնակավայրերի համար բնորոշ է այն հանգամանքը, որ խորհրդային տարիներին ստեղծված քաղաքների մի մասը ծագել են լեռնահանքային արդյունաբերության (Արթիկ, Ազգարակ, Դաստակերտ, Քաջարան, Թումանյան, Ախրալա և այլն), ջրատեխնիկական շինարարության (Սևան, Չարենցավան, Նոր Հաճն և այլն) և գյուղատնտեսական հումքի վերամշակման շնորհիվ (Արմավիր, Աշտարակ, Վեդի, Բերդ, Նոյեմբերյան, Մեղրի, Սպիտակ, Վայք և այլն) [28]:

ՀՀ-ին բնորոշ են նաև ռեկրեացիոն կուրորտային ռեսուրսների օգտագործման շնորհիվ ստեղծված քաղաքները (Ջերմուկ, Ծաղկաձոր, Դիլիջան): Գենետիկական առումով խառը տիպի են Երևանը, Գյումրին, Վանաձորը, Գավառը, Արտաշատը, Մասիսը, Ստեփանավանը, Գորիսը, Էջմիածնինը և այլ քաղաքներ, որոնց առաջացումը տեղի է ունեցել մի շարք գործոնների ազդեցությամբ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ինչպիսի՞ն է եղել ՀՀ-ում քաղաքների առաջացման և զարգացման պատմական ընթացքը:

2. Վերջին հարյուրամյակում ՀՀ-ում ի՞նչ գործընթացներ են պայմանավորել քաղաքների թվի և քաղաքային բնակչության քանակի փոփոխու-

թյունները:

3. Ի՞նչ առանձնահատկություններ ունի ՀՀ քաղաքային տարարնակեցումը:

4. Կատարե՛ք ՀՀ քաղաքային բնակավայրերի խմբավորում և դասակարգում: Բնութագրե՛ք առանձնացված խմբերը:

5. Կատարե՛ք ՀՀ առանձին մարզերի ուրբանացման և քաղաքային տարարնակեցման համեմատական վերլուծություն:

3.7.2. Գյուղական տարածքները և տարաբնակեցումը

Երկրների ու շրջանների ամբողջ բնակելի տարածքը, որն ընկած է քաղաքային բնակավայրերից դուրս, իր բնական և վերափոխված լանդշաֆտներով, բնակչությամբ ու բնակավայրերով ընդունված է անվանել **գյուղական տարածքներ**: Գյուղական տարածքների գլխավոր տարրերը գյուղական բնակավայրերն են, որոնք իրենց գործառության բնույթով կարող են լինել գյուղատնտեսական, ոչ գյուղատնտեսական և խառը տիպի: Գյուղական բնակավայրերի ամբողջությունը կամ դրանց ցանցը և միջընակավայրային կապերի ընդհանրությունը որոշակի տարածքի սահմաններում առաջացնում են **գյուղական տարաբնակեցում**, որը տարաբնակեցման միասնական համակարգի գլխավոր օղակներից մեկն է: Ընդունված է համարել, որ գյուղական տարաբնակեցումը ոչ քաղաքային տարածքներում բնակչության կյանքի տարածքային կազմակերպման ձև է՝ տարրեր տիպի գյուղական բնակավայրերի ընդհանրության տեսքով, որոնք նախատեսված են մշտական կամ ժամանակավոր բնակության համար [26]:

Աշխարհի երկրների ու շրջանների մեծ մասում գյուղական տարաբնակեցման հիմնական մասը կազմում է **գյուղատնտեսական տարաբնակեցումը**, որը ներառում է այն բնակավայրերի ցանցը, որոնց գոյությունն անմիջականորեն պայմանավորված է գյուղատնտեսական արտադրությամբ: Այդպիսին է նաև ՀՀ-ն, ուր գյուղական բնակավայրերի ճնշող մեծամասնության հիմնական տնտեսական գործառույթը գյուղատնտեսությունն է, իսկ մնացած գյուղական բնակավայրերում գյուղատնտեսությունն ունի նշանակալից բաժին: Բացի դրանից՝ չնայած ՀՀ-ն ունի 64 % ուրբանացման մակարդակ, սակայն միայն մայրաքաղաքում կենտրոնացված է երկրի բնակչության 36.6 %-ը, իսկ բնակչության թվով հանրապետության առաջին յոթ քաղաքներում այլում է քաղաքային բնակչության շուրջ

76.5 %-ը: Ամասիայի, Աշոցքի, Արագածի և Բաղրամյանի տարածաշրջաններում չկան քաղաքային բնակավայրեր, իսկ Նոյեմբերյան, Վայք, Մեղրի, Մարալիկ, Տաշիր, Ճամբարակ, Թալին և Ապարան քաղաքային բնակավայրերում, որոնք համարվում են տարածաշրջանային կենտրոններ, մշտական բնակչության թիվը չի անցնում յոթ հազարից: Բերված փաստերն ապացույցն են այն իրողության, որ ՀՀ տարաքնակեցման միասնական համակարգում գյուղական տարածքներն ու տարաքնակեցումն ունեն նշանակալից դեր, և դրանցում տեղի ունեցող փոփոխություններն իրենց անմիջական ազդեցությունն են թողնում ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման տարրեր գործընթացների վրա:

ՀՀ տարածքի խիստ արտահայտված լեռնային բնույթը, փոքր չափերը, հորիզոնական և ուղղաձիգ մասնատվածությունը, բացարձակ մեծ բարձրությունները և թեքությունները, կլիմայական խիստ պայմանները, ջրային ու հողային ռեսուրսների անհամաշափ բաշխումը, սեյսմիկ ակտիվությունը, մի շարք շրջաններում սողանքները, սելավները, երկրի մակերևույթին մոտ գտնվող գրունտային ջրերը և ակտիվ գործող բնաաշխարհագրական այլ երևույթներ, ինչպես նաև տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը պահպանելու անհրաժեշտությունը զգալիորեն նեղացնում են ՀՀ բնակեցման արեալը և իրենց ազդեցությունն են թողնում գյուղական բնակավայրերի ձևավորման ու հետազա զարգացման վրա:

1831-1926 թթ. ընթացքում ՀՀ ներկայիս տարածքում գյուղերի թիվն ավելացել է 575-ով, միջին մարդաքանակը 212-ից հասել է 579-ի, իսկ գյուղական բնակչության թիվն ավելացել է մոտ հինգ անգամ:

ՀՀ գյուղական բնակավայրերի ցանցը քանակական ու որակական նշանակալից փոփոխություններ է կրել խորհրդային տարիներին՝ 1920-1991 թթ.:

Արդյունաբերության ճյուղերի բազմազանությունը, ուրբագացման գործընթացները, բնակչության բարձր բնական աճը և միզրա-

ցիոն բարձր ակտիվությունը, զյուղատնտեսության զարգացման բնական սահմանափակ հնարավորությունները, երկրում տարվող ազրարային և տարածաշրջանային զարգացման քաղաքականությունը եղել են այն հիմնական ազդակները, որոնք խորհրդային տարիներին իրենց ազդեցությունն են թողել ՀՀ զյուղական բնակավայրերի և տարաբնակեցման զարգացման վրա՝ առաջացնելով ինչպես քանակական, այնպես էլ որակական ու տարածքային փոփոխություններ:

1926-1988 թթ. ընթացքում ՀՀ զյուղական բնակավայրերի թիվը նվազել է 361-ով: Այդ տարիների ընթացքում ՀՀ-ում վերացել են 274 զյուղ և 138 զյուղական տիպի ժամանակավոր բնակելի կետեր, 41 զյուղ դարձել է քաղաքային բնակավայր, իսկ 97 զյուղ միացել է այլ բնակավայրերի (քաղաքների կամ զյուղերի): Միաժամանակ այդ տարիներին երկրում ստեղծվել են 97 նոր և վերականգնվել նախկինում վերացած 2 զյուղ: Ակսած 1980-ական թթ. կեսից՝ ՀՀ զյուղական տարաբնակեցման մեջ ի հայտ է եկել նոր երևույթ. սկսել են վերականգնվել նախկինում բնազրկված ու վերացված զյուղական բնակավայրեր:

Աղյուսակ 25

Հայաստանի Հանրապետության զյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացը 1831-1926 թթ. [40]

Տարածաշրջաններ	1831 թ.		1897 թ.		1926 թ.		Մագիստրոսական մասնակիցների թիվը		
	Վահագությունը	Վահագությունը	Վահագությունը	Վահագությունը	Վահագությունը	Վահագությունը			
Անիի	13	2578	198	25	17696	708	26	16487	634
Վայքի	32	2775	87	53	18190	343	38	11729	309
Թումանյանի	10	2191	218	33	19138	580	54	29234	541
Ամասիայի	3	3446	149	37	12288	332	32	10270	321
Ապարանի	27	5394	200	28	20466	731	25	22099	884

Արտաշատի	39	7250	186	69	33334	483	59	27332	463
Արթիկի	24	4537	189	24	23555	981	24	26822	1118
Ախուրյանի	27	14969	489	34	29490	867	39	27779	712
Աշտարակի	30	5574	186	41	23975	585	34	24587	723
Վարդենիսի	21	4111	196	39	24812	636	38	22203	584
Արարատի	23	4335	188	81	35585	439	67	17340	259
Գորիսի	20	5039	244	32	25882	809	33	20672	626
Աշոցքի	7	1425	129	27	11830	438	27	11459	424
Եղեգնաձորի	38	3953	104	59	23890	405	43	18345	427
Իջևանի	15	5197 ¹	349	33	21033 ²	637	43	28124	654
Տաշիրի	3	827	100	19	11260	593	29	18671	644
Գավառի	12	5148	429	13	17336 ³	1334	13	21370	1644
Կապանի	49	3612	57	109	26317	241	102	23146	227
Գոլգարքի	14 ⁴	4172	123	21	16972 ⁵	808	28	22525	804
Կոտայքի	20	1985	99	52	22493	433	40	23447	586
Կրասնոսելսկի	7	1442	206	16	10684	668	24	17238	718
Մարտոնու	17	3811	224	25	25498	1020	26	36723	1412
Մեղրիի	20	2174	82	27	9866	365	30	8965	299
Նոյեմբերյանի	11	3942	358	15	11100	740	22	14354	652
Արմավիրի	22	5140	234	38	25291	666	38	25026	659
Հրազդանի	28	5346	191	32	25611	800	32	29507	922
Սևանի	12	3403	284	14	14173	1012	14	15720	1123
Սիսիանի	27	3207	100	45	25187	560	41	22410	547
Սպիտակի	16	2390	149	22	22086	1004	26	26858	1033
Ստեփանավանի	11	1550	86	22	15450	702	25	24279	971
Թալինի	20	1820	91	72	20641	287	56	16059	288
Տավուշի	10	3063	306	14	11268	805	35	20142	575
Էջմիածնի	27	8685	322	40	26639	666	39	19053	488
Մասիսի	28	10538	376	29	20437	705	33	15234	462
Արագածի	11	2857	260	25	13173	527	27	16484	610
Բաղրամյանի	3	692	231	3	1116	372	5	1043	209
Նահբեկի	5	633	127	10	6014	601	10	6574	657
ՀՀ-ում	702	149211	212	1278	719776	559	1277	739310	579

1. և 2. այդ թվում՝ նաև Դիլիջանի ենթակայության տակ գտնվող գյուղերի բնակչությունը,

3. առանց ք. Գավառի: 4. Այդ թվում՝ նաև ք. Վանաձորը, 5. առանց Վանաձոր քաղաքի բնակչության:

Իսկ 1988 թվականից հետո, պայմանավորված տարածաշրջանում տեղի ունեցած իրադարձություններով, 44 գյուղական բնակավայրեր գուրկ էին մշտական բնակչությունից:

Եթե 1926 թ. ՀՀ ամենանիստ և ամենանոր բնակեցված մարզերի միջև գյուղական բնակչության խտությունների տարբերությունը կազմում էր 2.8 (Արմավիրի և Վայոց ձորի մարզերի միջև), ապա 1988 թ.՝ 11 անգամ (Արմավիրի և Սյունիքի մարզերի միջև): Այդ տարբերությունն առավել մեծ է տարածաշրջանների միջև (1926 թ. Մասիսի տարածաշրջանի գյուղական բնակչության խտությունը Մեղրու տարածաշրջանին գերազանցում էր 6 անգամ, 1988 թ.՝ շուրջ 32): **1926-1988 թթ. ՀՀ գյուղական բնակչության տեղաբաշխման մեջ էապես բարձրացել է Արարատի, Արմավիրի և Կոտայքի մարզերի բաժինը: 1926 թ. այս երեք մարզերում ապրում էր ՀՀ գյուղական բնակչության ընդամենը 22, 1988 թ.՝ 39 %-ը: Իսկ Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում, եթե 1926 թ. ապրում էր ՀՀ գյուղական բնակչության մոտ 39 %-ը, ապա 1988 թ.՝ ընդամենը 25.3 %-ը: Խորհրդային տարիներին ՀՀ-ում տեղի է ունեցել գյուղական բնակավայրերի խոշորացման գործընթաց: Գյուղական բնակավայրերի միջին մարդաշտությունը 1926-1988 թթ. ընթացքում ավելացել է ավելի քան 2 անգամ (580-1180 մարդ): Այն տեղի է ունեցել ինչպես մանր և փոքր գյուղերի ու գյուղական տիպի այլ բնակավայրերի վերացման, այնպես էլ գյուղական բնակչության բացարձակ թվի ավելացման շնորհիվ: Գյուղական բնակավայրերի խոշորացման գործընթացը մեծ տարբերություններով է ընթացել ՀՀ տարբեր մարզերում ու տարածաշրջաններում: Արմավիրի և Արարատի մարզերում այն ավելացել է 3.0-4.9, իսկ Սյունիքի մարզում՝ ընդամենը 1.1 անգամ: Այստեղ 1970 թվականից հետո տեղի է ունեցել գյուղական բնակավայրերի միջին մարդաշտության նվազում: Այդ ընթացքում արմատական փոփոխություններ են կրել նաև ըստ մարդաշտության գյուղական բնակավայրերի տարբեր խմբերը և դրանց բնակչության թվաքանակը: ՀՀ**

գյուղական տարաբնակեցման մեջ զգալիորեն նվազել է մանր, փոքր և միջին մեծության (մինչև 1000 մարդ) գյուղական բնակավայրերի թիվը: Մինչև 2200 մ բարձրության բոլոր գոտիներում 1926-1988 թթ. ընթացքում գյուղական բնակչության թիվն ավելացել է: Սակայն գյուղական բնակչության թվի ավելացման մեծ մասը բաժին է ընկնում 800-1000 մ բարձրության գոտուն: 1926 թ. 800-1000 մ բարձրության գոտում ապրում էր ՀՀ գյուղական բնակչության ընդամենը 17.8 %-ը (ավելի քիչ, քան 1800-2000 մ գոտում), իսկ 1988 թ.՝ 32.3 %-ը: Դրա հետևանքով 1200 մ-ից բարձր բոլոր գոտիներում 1926 թ. համեմատությամբ 1988 թ. նվազել է գյուղական բնակչության մասնաբաժինը:

Աղյուսակ 26
**ՀՀ գյուղական բնակչության և բնակավայրերի թվի շարժնթացը
(1831-2021 թթ.) [12, 14, 15, 29, 40, 42]**


Տարեթվեր	ՀՀ բնակչության ընդհանուր թիվը	Գյուղական բնակչության բացարձակ թիվը	Գյուղական բնակչության մասնաբաժինը, %	Մշտական բնակչությամբ գյուղերը	Գյուղերի միջին մարդաքանակը
1831	161747	149827	92,6	710	211
1873	496140	458863	92,5	989	464
1897	797853	728295	91,3	1287	566
1914	1014255	918935	90,6	1170	785
1922	782052	680092	87,0	1114	610
1926	881290	745646	84,6	1286	580
1959	1765300	892200	50,5	1117	799
1970	2492600	1019900	40,9	931	1095
1979	3037300	1051600	34,6	916	1148
1988	3463600	1107500	32,0	909	1218
1992	3633300	1130000	31,1	910	1242
2001	3213000	1146858	35,7	903	1270
2011	3018900	1107567	36,7	913	1213
2015	3010600	1097670	36,5	912	1204
2018	2972700	1076900	36,2	912	1181
2021	2963300	1067700	36,0	912	1171

Հողի և գյուղատնտեսական արտադրության այլ միջոցների սեփականաշխնդիրումը միանգամայն նոր տնտեսական պայմաններ է ստեղծել մեր երկրի գյուղական բնակավայրերի զարգացման համար: Բայց քանի որ տարաբնակեցումն արտադրության համեմատ ավելի իներցիոն ու պահպանողական է, ոչ միանգամից և ոչ բոլոր դեպքերում է համարժեքորեն հետևում արտադրության մեջ և արտադրական հարաբերություններում տեղի ունեցած փոփոխություններին:

Գյուղական բնակչության առավել բարձր խտություն ունեն համեմատաբար հարթավայրային մակերևույթ ունեցող Արարատյան, Շիրակի և Լոռվա դաշտերը, Սևանի մերձլճային հարթությունները, չնայած որ ընկած են ծովի մակարդակից տարբեր բարձրությունների վրա: Բարձրության 1400-1600 և 1800-2000 մ գոտիներում գյուղական բնակչության ու բնակավայրերի թիվը և դրանց խտությունն ավելի բարձր են, քան համապատասխանաբար 1200-1400 և 1600-1800 մ բարձրության գոտիներում:

ՀՀ-ում ամբողջ բնակչության համեմատությամբ գյուղական բնակչության տեղաբաշխման անհամամասնություններն ավելի փոքր են: Եթե հանրապետության բնակչության 54 %-ն ապրում է 800-1000 մ բարձրության գոտում, ապա գյուղական բնակչության բաժինն այդ գոտում կազմում է 34%: Միաժամանակ, եթե 1800-2000 մ գոտուն բաժին է ընկնում ՀՀ ամբողջ բնակչության 8.8, ապա՝ գյուղական բնակչության 16 %-ը: ՀՀ-ն առանձնանում է գյուղական բնակավայրերի մարդաշատության խիստ բևեռացմամբ: Խոշոր և գերխոշոր գյուղերին (3000 մարդուց ավելի), որոնք կազմում են ՀՀ գյուղերի ընդհանուր թվի 11.7 %-ը, բաժին է ընկնում գյուղական բնակչության 40 %-ը, իսկ գյուղերի ընդհանուր թվի 34 %-ը կազմող մինչև 500 մարդ ունեցող գյուղերին՝ ընդհամենը 5 %-ը:

ԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊՐԵՍՏԻ ՎՐԱ 16. ՀՀ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՊՐԵՏԻ ՎՐԱ



Աղյուսակ 27

ՀՀ զբողական տարածքները բնութագրող մի քանից ցուցանիշներ՝ ըստ մարզերի (2021 թ.) [15,16,42,50]

Վարչական մարզեր	Ցվագրուն թվաքանակ (%)	Ցվագրուն թվաքանակ (%)	Ցվագրուն թվաքանակ (%)	Խոսություն			Բնակչություն (մասության մասության (բնակ./ 100քայլ)			
				Ա	Բ	Ա				
Արագածոտն	9.3	79	97.9	9.2	116	12.3	36	45	4.2	5.3
Արարատ	7.0	75	184.6	17.3	95	10.0	88	118	4.5	6.0
Արմավիր	4.2	78	181.5	17	95	10.0	147	189	7.6	9.8
Գեղարքունիք	18.0	65	161.1	15.1	93	9.8	39	60	1.7	2.6
Կոտայք	7.0	77	114.4	10.7	62	6.5	55	71	3.0	3.8
Շիրակ	9.0	86	95.8	9.0	128	13.4	38	42	4.8	5.6
Լոռի	12.7	66	87.2	8.2	122	12.8	23	35	3.0	4.6
Սյունիք	15.1	74	44.0	4.1	128	13.4	10	13	2.8	3.8
Վայոց ձոր	7.8	90	31.3	2.9	52	5.4	14	15	2.2	2.4
Տավուշ	9.1	41	69.9	6.5	61	6.4	26	63	2.2	5.4
Երևան	0.8	-	-	-	-	-	-	-	-	-
Շարամենք ՀՀ-ում	100	71	1067.7	100	953	100	36.0	52.0	3.1	4.4


Ա՝ ազրող տարածքի հաշվով, Բ՝ գյուղատնտեսական հողատարածքի հաշվով:

Աղյուսակ 28


ՀՀ մարզերի գյուղական բնակչափորերի և բնակչության թվի 2 ապրիլիքացը
(1831-2021 թթ.) [12, 14, 15, 26, 29, 40, 42]

Մարզերը	Գյուղական բնակչափորերի և բնակչության թվին բառ տարեթվերի																				
	1831			1897			1926			1970			1988			2001			2021		
	Ա.	Բ.	Ա.	Բ.	Ա.	Բ.	Ա.	Բ.	Ա.	Բ.	Ա.	Բ.	Ա.	Բ.	Ա.	Բ.	Ա.	Բ.	Ա.	Բ.	
Արագածոտն	88	15645	166	78255	142	78841	103	86284	106	93629	117	105437	117	105437	117	105437	117	105437	117	105437	117
Արարատ	90	22123	179	89356	159	59906	95	143245	90	166383	95	192131	95	192131	95	192131	95	192131	95	192131	95
Արմավիր	52	14517	81	53046	82	45122	84	123043	91	151523	95	177941	95	177941	95	177941	95	177941	95	177941	95
Գեղարքունիք	69	17915	107	92683	115	113254	96	160486	89	170359	93	158693	93	158693	93	158693	93	158693	93	158693	93
Լոռի	54	11130	118	88823	162	121567	119	125721	115	120292	122	116455	122	116455	122	116455	122	116455	122	116455	122
Կոտայք	53	7964	94	54118	82	59528	59	74165	61	100603	62	118488	62	118488	62	118488	62	118488	62	118488	62
Շիրակ	74	25196	147	94859	148	92817	128	101309	122	102495	128	109129	127	109129	127	109129	127	109129	127	109129	127
Սյունիք	116	14032	213	87252	206	75193	126	66418	122	48791	127	48537	131	48537	131	48537	131	48537	131	48537	131
Վայոց ձոր	70	6778	112	42080	81	30074	54	41122	49	40512	52	36392	52	36392	52	36392	52	36392	52	36392	52
Տավուշ	36	12201	62	43401	100	62620	63	84862	61	75625	61	63655	60	63655	60	63655	60	63655	60	63655	60
ՀՀ-ում	702	147452	1279	723643	1277	738922	927	1006655	906	1070212	952	1146858	954	1146858	954	1146858	954	1146858	954	1146858	954

Ա՝ բնակչափորերի թվիը, Բ՝ բնակչության թիվը:



**Քարտեզ 17. ՀՀ լեռնային և բարձրլեռնային գյուղերի մարդաքանակը և
տրանսպորտային մատչելիությունը տեղական կենտրոնից**



Քարտեզ 18. ՀՀ սահմանամերձ գյուղական բնակավայրերի մարդաբանակը և տրանսպորտային մատչելիությունը տեղական կենտրոնից

ՀՀ-ում գյուղական բնակավայրերի՝ ծովի մակարդակից բարձրության ավելացմանը համեմատ միջին մարդաշտության նվազման կամ ավելացման որոշակի օրինաչափություն չկա:

ՀՀ գյուղական բնակավայրերին բնորոշ է գործառության տիպերի միատարրությունը. գրեթե բոլոր գյուղերին բնորոշ է

զյուղատնտեսական գործառույթը: Դրա հետ միաժամանակ ՀՀ զյուղական բնակավայրերի մեծամասնությունն ունի արտադրական մասնագիտացման բազմազանություն: Հայաստանի զյուղական բնակավայրերի արտադրական տիպերի ողջ բազմազանությունից կարելի է առանձնացնել 9 բնորոշ տիպեր: ՀՀ-ում առավել տարածված են տավարաբուծական-ոչխարաբուծական, տավարաբուծական, տավարաբուծական-դաշտավարական, բանջարաբուծական, բանջարաբուծական-խաղողագործական, խաղողագործական և այգեգործական մասնագիտացման զյուղերը:

ՀՀ-ում, բացի բնաաշխարհագրական և տնտեսական գործուներից, զյուղական բնակավայրերի ձևաբանական (մորֆոլոգիական) բնութագրի վրա էական ազդեցություն են թողել նաև պատմական, ազգագրական և տեղային այլ գործոններ: Հայաստանի համար առավել բնորոշ է զյուղական բնակավայրերի ձևաբանական 17 տիպ: Գյուղերի ձևաբանական բնութագիրը ներառում է բնակավայրի տեղագրական ու հատակագծային առանձնահատկությունները: Արտաքին պայմանների ու բնակավայրերի ներքին կառուցվածքի միաժամանակյա փոխագրեցությամբ ձևավորվում են զյուղական բնակավայրերի ձևաբանական որոշակի տիպեր: Ի վերօն, զյուղական բնակավայրերի ձևաբանական այս կամ այն տիպն առաջանում ու զարգանում է կոնկրետ որոշակի բնաաշխարհագրական պայմաններում: Բնակավայրը կարծես թե հարմարվում է շրջակա միջավայրին. ոելիեֆի առանձնահատկություններին, միկրոկլիմայական պայմաններին, ջրագրական ու հողարուսական ծածկին: Հայաստանի բնապատմական շրջաններից մեկի՝ Զանգեզուրի զյուղերի մասին շատ դիպուկ է ասել նշանավոր ազգագրագետ և աշխարհագետ Ս. Լիսիցյանը. «... Զանգեզուրի զյուղերը խորը մտնում են ձորերի մեջ և կպչում նրանց կողերին: Այս զյուղերում տների մի խոշոր մասը ծիծեռնակի բների պես ծեփված է ձորի կողին առանց որևէ կանոնավո-

բության՝ քմահաճ ելեկջ շավիղներով իրար հետ միացած: Նրանցից շատերն իրենց ետևի կեսերով իրվում են մայր ժայռի մեջ որպես քարայրներ: Կան և ամբողջովին քարայրներ ներկայացնող բնակարաններ՝ քրատակներ» [26]:

Հայաստանի ոչ մեծ տարածքն աչքի է ընկնում նաև գյուղական տարաբնակեցման ձևերի և համալիրային (տեղական) տիպերի ու ենթատիպերի բազմազանությամբ, որը նախևառաջ պայմանավորված է տարածքի լեռնային բնույթով: Տարաբնակեցման ձևավորման և զարգացման բնաաշխարհագրական, սոցիալ-տնտեսական և այլ պայմանները ՀՀ-ում փոփոխվում են ոչ միայն մեկ լանդշաֆտային գոտուց մյուսին անցնելիս, այլև դրանցից յուրաքանչյուրի ներսում: Միևնույն բնալանդշաֆտային գոտու ներսում առանձնանում են գյուղական տարաբնակեցման մի քանի տիպեր և ենթատիպեր: ՀՀ-ում առանձնանում են գյուղական տարաբնակեցման 7 շրջան, 38 տեղական տիպ և 20 ենթատիպ [Քարտեզ 19]:

ՀՀ մարզերի գյուղական տարաբնակեցման առանձնահատկություններին կանդրադառնանք մարզերի բնութագրման ժամանակ:

ՀՀ գյուղական տարաբնակեցման մեջ վերջին երկու տասնամյակում տեղի ունեցող փոփոխություններից առավել հասկանալիք են.

1. բոլոր մարզերում և տարածաշրջաններում տեղի է ունեցել գյուղական բնակչության թվի նվազում,

2. բնակչության թվի նվազում է դիտվում ոչ միայն փոքր գյուղերում, այլև մեծ, խոշոր և խոշորագույն գյուղերում,


3) հարյուրավոր գյուղերում առաջացել է անբարենպաստ ժողովրդագրական իրավիճակ,

4) ըստ գերակշռող մարդաքանակի՝ գյուղական բնակավայրերի տարբեր խմբերի միջև տարբերությունն ավելի է խորացել,

5) գյուղական տարաբնակեցման համակարգում առաջացած հիմնախնդիրներն առավել սուր և տագնապալից բնույթ ունեն ՀՀ բարձրեռնային և սահմանամերձ շրջաններում:

Գյուղական տարաբնակեցման շարժընթացի նշված գործընթացները և դրանց հետագա խորացումն ամենևին չեն նպաստում ՀՀ գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական առաջընթացին, տարաբնակեցման կատարելագործմանը և հանրապետության բոլոր տարածաշրջանների համալիրային ու կայուն զարգացմանը:

ՀՀ գյուղական տարաբնակեցման հեռանկարային զարգացման և քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը պետք է լինի նախալեռնային ու լեռնային և սահմանամերձ շրջաններում փոքր ու մանր գյուղերի կայունացումը, աստիճանաբար խոշորացումը և տասնյակ լրկած գյուղերի վերականգնումը: Դա կնպաստի նշված շրջանների տարածքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը, մարզերի սոցիալ-տնտեսական համալիր զարգացմանը և բավարար նախադրյալ կիանովիսանա հասարակական կայուն զարգացման համար:



Քարտեզ 19. ՀՀ գյուղական տարաբնակեցման շրջանացումը

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերլուծէ՝ թ ՀՀ տարածքում գյուղական բնակչության ու բնակավայրերի առաջացման և գյուղական տարաբնակեցման ձևափորման պատմական ընթացքը:
 2. Քանակական ու որակական ի՞նչ փոփոխություններ է կրել ՀՀ գյուղական տարաբնակեցումը խորհրդային տարիներին:

3. Որպես լեռնային երկիր՝ ՀՀ գյուղական տարաբնակեցումն ի՞նչ քննրոշ գծեր և առանձնահատկություններ ունի:

4. Կատարե՛ք ՀՀ գյուղական տարածքների և տարաբնակեցման քանակական ու որակական ցուցանիշների վերլուծություն:

5.Ի՞նչ պայմաններ և գործոններ են պայմանավորել ՀՀ գյուղական տարածքների ու տարաբնակեցման տարածաշրջանային առանձնահատկությունները:

6. ՀՀ դրսէ մարզի օրինակով կազմե՛ք և կատարե՛ք գյուղական տարածքների ու տարաբնակեցման հետազոտություն:

ԳԼՈՒԽ 4

ՀՀ ՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Տնտեսության ձևավորման և զարգացման պատմաշխարհագրական ակնարկ

Դեռևս Ք. ա. II հազարամյակում երկրագործությունը մեր լեռնաշխարհի մարդկանց զյսավոր գրաղմունքներից մեկն էր: Այդ ժամանակաշրջանում են հիմնվել առաջին բնակավայրերը, ձուլվել են բրոնզ ու երկար: Առաջին հազարամյակի սկզբներին տարածում է գտել ոռոգելի երկրագործությունը, զարգացել են արհեստները, ձևավորվել են նոր բնակավայրեր:

Թեև մեր թվարկության առաջին դարերում Հայաստան աշխարհում տնտեսական վերելք չի արձանագրվել, սակայն հոգևոր-մշակութային ոլորտում եղել են նշանակալից ձեռքբերումներ. քրիստոնեությունը ընդունվել է պետական կրոն, ստեղծվել է հայկական այրութենք, զարգացել են գրականությունը, գիտությունը և ճարտարապետությունը, ձևավորվել է Հայաստանի երկաստիճան վարչատարածքային բաժանումը, որն արդյունք էր ոչ միայն տարբեր շրջանների ու տարածքների բնաաշխարհագրական առանձնահատկությունների, այլև դրանց պատմական և տնտեսական զարգացման պայմանների [28]:

VII-IX դարերի ընթացքում Հայաստանի տնտեսության մեջ առաջընթաց գրեթե չի եղել, որի պատճառը խալիֆայության ավերիչ արշավանքներն էին, հայերի տեղահանումը և արաբների բնակեցումը, ինչպես նաև ծանր հարկահանությունը: IX-XI դարերում քաղաքական անկախության վերականգնման շնորհիվ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին զուղատնտեսության, արհեստագործության և քաղաքների զարգացման համար: Կառուց-

վեցին ոռոգիչ ջրանցքներ, ավելի բանուկ դարձան Հայաստանի վրայով անցնող առևտրային ճանապարհները: Տնտեսական կապեր հաստատվեցին Սև և Միջերկրական ծովերի նավահանգիստների, Հնդկաստանի, Չինաստանի, Կիևյան Ռուսիայի և արաբական երկրների հետ: Մայրաքաղաք Անիից դուրս էին զալիս միջազգային քարավաննային մի քանի ճանապարհներ: Հայաստանի արտաքին առևտուրն ուներ դրական հաշվեկշիռ: Գրեթե մեկ դար տևած խաղաղ տնտեսական կյանքի պայմաններում նշանակալից առաջընթաց ունեցան Հայաստանի քաղաքները: XI դարի վերջերին Անիի, Դվինի, Արծնի և Կարսի բնակչության թիվը հասնում էր մինչև 100 հազարի [35]:

XIII-XV դարերում Հայաստանում տնտեսական կյանքը բոլոր ոլորտներում անկում է ապրել:

XVI-XVIII դարերում Հայաստանը ծայրահեղ հետամնաց երկիր էր: Թուրք-պարսկական պատերազմների և ներքին կոհիվների հետևանքով պարբերաբար ավերվում և ամայանում էին ոչ միայն բազմաթիվ գյուղեր և քաղաքներ, այլև ամբողջական շրջաններ, գավառներ, նահանգներ:

Հայաստանի զարգացման համար նոր ժամանակաշրջան սկսվեց XIX դարի 30-ական թվականներից, երբ Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին:

Ռուսաստանին միանալուց հետո Հայաստանում սկսեց ավելանալ բնակչության թիվը, ընդարձակվեցին մշակելի հողատարածքները, վերականգնվեցին լեռնահանքային արդյունաբերությունը և արհեստները [35]:

XIX դարի 70-ականն թթ. Արևելյան Հայաստանը դեռևս գտնվում էր արդյունաբերական զարգացման արհեստագործական-տնայնագործական մակարդակի վրա: 1850-ական թվականներից Զանգեզուրում շարք են մտնում Կավարտի, Ղաթարի, Հալիձորի և Ազարակի պղնձահանքերը [28]:

Արևելյան Հայաստանում շուկայական տնտեսական հարաբերությունները բափանցեցին նաև զյուղատնտեսության մեջ: Ապրանքային ձյուղ դարձան բամբակագործությունը, խաղողագործությունը և պտղաբուծությունը: Հայաստանի բամբակի հիմնական սպառողներն էին Սոսկվայի, Յարուլավիլի, Լոձի և Թիֆլիսի ֆաբրիկաները: XIX դարի վերջերին ապրանքային նշանակություն ձեռք բերած խաղողագործությունը և պտղաբուծությունը ևս արտադրանքի նշանակալի ավելացում ունեցան: Կապված Հայաստանում շվեյցարական պանրագործության զարգացման հետ՝ ապրանքային նշանակություն ձեռք բերեց նաև կաթնային տավարաբուծությունը:

Բարենպաստ նախադրյալներ ստեղծվեցին նաև ֆաբրիկագործարանային արդյունաբերության ձևավորման համար, որտեղ առաջատար դեր ուներ պղնձաձուլությունը: Մինչև XIX դարի վերջը Դեբեղի ավագանում և Զանգեզուրում հիմնվեցին մեկ տասնյակից ավելի նոր պղնձաձուլարաններ: Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Հայաստանում բոլոր պղնձահանքերն ու պղնձաձուլարանները գնեցին ֆրանսիացիները և Ալավերդում կառուցեցին առաջատար տեխնոլոգիայով աշխատող «Մանես» պղնձաձուլական գործարանը, որն օգտագործում էր ոչ միայն Ալավերդու, այլև Զանգեզուրի հանքաքարը: Ճյուղի զարգացմանը էապես նպաստեց նաև Թիֆլիս-Կարս երկաթուղու կառուցումը (1899-1900 թթ.), որը հնարավորություն տվեց այստեղ հասցնելու Դոնբասից բերվող կորսը: 1891-1913 թթ. ընթացքում պղնձի արտադրության ծավալը Հայաստանում ավելացել է 13 անգամ և հասել 343 հազ. փութի [28]:

Աղյուսակ 29

*ՀՀ ներկայիս տարածքում մշակովի հողատարածքների
կառուցվածքը 1913 թ. [28]*

Գյուղատնտեսական մշակաբույսեր	Զբաղեցրած տարածքը	
	հազ. հա	%
հացահատիկ	309	85
այդ թվում՝		
աշնանացան	105	29
տեխնիկական մշակաբույսեր	21	6
այդ թվում՝		
բամբակ	15	4
կարտոֆիլ և բանջարու- տանային մշակաբույսեր՝	12	4
կերային մշակաբույսեր	4	1
ընդամենը ցանքատարածություններ	346	96
խաղողի և պտղատու այգիներ	14	4
ընդամենը մշակովի հողատարածքներ	360	100

Արևելյան Հայաստանը դարձավ Ռուսական կայսրության պղնձի արտադրության երեք զիսավոր շրջաններից մեկը և տալիս էր կայսրությունում ձուլվող պղնձի 25, իսկ Անդրկովկասի պղնձի՝ 75 %-ը [28]:

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Հայաստանի արյունաբերության մեջ երկրորդ ճյուղը գինու-կոնյակի արտադրությունն էր: Այստեղ տիրապետողը ռուսական կապիտալն էր: Լորիում և Սիսիանում բարձր ապրանքայնություն ունեցող ճյուղ էր դարձել շվեյցարական պարնագործությունը:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին ՀՀ ներկայիս տարածքի արդյունաբերության համախառն արտադրանքի 50 %-ը տալիս էր պղնձաձուլությունը, 21-ը՝ գինու-կոնյակի, մնացած 29-ը՝ կաշվի, կոշիկի, մրգի պահածոների, մետաղամշակման, բրնձամաքրման և այլ ճյուղերը [նույն տեղում]: Կառուցվեցին առաջին էլեկտրակայանները, և սաղմնավորվեց երկրի հներգետիկ տնտեսությունը: 1913 թ. գործում էին 13 մանր էլեկտրակայաններ՝ 3.2 հազ. կՎտ գումարային հզորությամբ, որոնք տարեկան արտադրում էին 5.1 մլն կՎտ ժամ էլեկտրակներգիա [2, 28]:

Այս ժամանակաշրջանում ավելի նշանակալի էր տրանսպորտի զարգացումը: Շահագործվեցին Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Ղարս (1899-1900 թթ.), Ալեքսանդրապոլ-Երևան (1902 թ.) և Երևան-Նախիջևան-Ջուլֆա (1906 թ.) երկարուղագծերը: Բարեկարգվեցին Թիֆլիս-Սևան-Ջուլֆա, Նախիջևան-Գորիս, Շուշի-Եվլախ և այլն ճանապարհներ:

1914-1920 թթ. Հայաստանի ներքին ու միջազգային իրադարձությունները ի չիք դարձրին մինչ այդ ձեռք բերած դրական նվաճումները: Բնակչության թիվը, որը գաղթականների հաշվին հասել էր 1270 հազարի, նվազեց մինչև 720 հազար: Չորս անգամ կրճատվեցին ցանքատարածքները, մեծապես պակասել էր գյուղատնտեսական արտադրանքի ծավալը, կազմալուծվեց արդյունաբերությունը: Արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը 1913 թ. համեմատությամբ կրճատվել էր 12 անգամ: Շարքից դուրս էր եկել երկարուղային տրանսպորտը: Էջմիածինը, Երևանը և շատ այլ բնակավայրեր լցված էին ընչագուրկ ու սովորական գաղթականներով [28]:

Խորհրդային տարիներին (1920-1991 թթ.) թեև մեր երկիրը կորցրեց քաղաքական անկախությունը, սակայն խաղաղ աշխա-

տանքի, ծայրաստիճան քայրայված տնտեսությունը վերականգնելու և զարգացնելու ամնախաղեա հնարավորություն ստացավ:

Պահանջվեց շուրջ 8 տարի, որ վերականգնվեր տնտեսության զարգացման 1913 թ. մակարդակը: Արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը 1928 թ. կազմեց 1913 թ. ծավալի 114, զյուղատնտեսությանը՝ 93 %-ը: ՀՀ տնտեսությունը որակական նոր մակարդակի բարձրացավ ինդուստրացման տարիներին՝ 1929-1941 թթ.: 1928 թ. տնտեսության տարբեր ոլորտներում 1921 թ. համեմատ կատարվեցին 32 անգամ ավելի կապիտալ ներդրումներ: Շարք մտան Երևանի և Վանաձորի քիմիական և Արարատի ցեմենտի գործարանները, Ալավերդու պղնձարջասպի գործարանը, Արթիկում տուփի մեքենայացված հանքերը, Չորագետի և Քանաքեռի ջրակենակտրակայանները և մի շարք միջին ու փոքր ձեռնարկություններ ՀՀ տարբեր շրջաններում [2]: Այդ տարիներին վերականգնվեց, վերակառուցվեց և կառուցվեց թվով 200 արդյունաբերական ձեռնարկություն: Սկսվեց Սևանի ջրերի համալիրային օգտագործման ծրագրի իրագործումը: Սևան-Հրազդան կասկադի կառուցման հետ միաժամանակ սկսվեց նոր ջրանցքների շինարարությունը: Ոռոգելի հողատարածությունները 1921 թ. 60 հազարից 1940 թ. հասան 180 հազ. հա-ի, ներդրվեցին նոր տեխնիկական մշակաբույսեր (շաքարի ձակնողեղ, խորդենսի), ընդարձակվեցին ծխախոտի ու կերային մշակաբույսերի ցանքատարածքները: Դրա հետ մեկտեղ զյուղատնտեսության կոլեկտիվացումը, որն ընթանում էր բռնի մեթոդներով, մեծ հարված հասցեց զյուղատնտեսությանը [1, 2, 28]: ՀՀ տնտեսությունը նոր վերելք ապրեց հետպատերազմյան (1945 թվականից հետո) տարիներին: Ցուրացվեց 270 նոր արտադրատեսակների արտադրությունը: Կառուցվեցին միջիանրապետական զագամուղներ: Հայաստանը սկսեց գագ ստանալ դրախից [28]: Շահագործման հանձնվեցին նոր և հզոր ջրային ու ջերմային էլեկտրակայայաններ,

ստեղծվեց բարձր լարման գծերով միավորված միասնական էներգահամակարգ: Հայաստանը էներգիա ներմուծող էրկրից դարձավ էլեկտրաէներգիա արտահանող և համատարած էլեկտրիֆիկացված էրկիր:

Ինդրուստրացման և ուրբանացման մակարդակով ՀՀ-ն առաջավոր տեղ գրավեց ԽՍՀՄ-ում և Մերձավոր Արևելքում: Կառուցվեցին երկաթուղային ու ավտոմորիլային նոր ճանապարհներ, վերակառուցվեցին հները: Երկրի ճանապարհային ցանցը դարձավ միասնական: Ինդրուստրացումն ընդգրկեց Հայաստանի ամբողջ տարածքը:

1980 թ. ՀՀ արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալը 1913 թ. մակարդակը գերազանցեց 388, 1940 թ. մակարդակը՝ 45 անգամ: Գյուղատնտեսության արտադրանքի ծավալը աճեց համապատասխանաբար 7.1 և 4.6 անգամ: Երկրի տնտեսական ներուժը նոր վերելք ապրեց 1980-ական թթ.: 1981-1985 թթ. հանրապետության ազգային եկամուտը ավելացավ 31.3, հիմնական արտադրական ֆոնդերը՝ շուրջ 40 %-ով, ընդլայնվեց հաղորդակցության ճանապարհների ցանցը [28, 34]:

Խորհրդային տարիներին երկրի տարածքի նորանոր շրջաններ ընդգրկվեցին արդյունաբերության ոլորտ երկրում ձևավորվեցին միջազուղային ու ներձուղային համալիրներ, արդյունաբերական հանգույցներ ու գյուղատնտեսական մասնագիտացման գոտիներ: Երկրում ձևավորված միասնական տրանսպորտային ցանցը և էներգոհամակարգը հիմք հանդիսացան միասնական տարածքային արտադրական համալիրի ձևավորման համար:

Թեև Հայկական ԽՍՀ գյուղան վերջին տասնամյակում սոցիալ-տնտեսական զարգացման բնագավառում կային լուրջ խնդիրներ, սակայն պատմական կարծ ժամանակամիջոցում Հայաստանը Ռուսաստանին նախկին ազգարային ծայրամասից վերածվեց ժամանակակից արդյունաբերություն, մեքենայացված

խոշոր գյուղատնտեսություն, գիտատեխնիկական հզոր ներուժ և զարգացած գիտություն ու մշակույթ ունեցող երկրի: ԽՍՀՄ վերջին տարիներին Հայաստանը տալիս էր երկրի արդյունաբերական արտադրանքի 1.3, գյուղատնտեսության՝ 0.6 %-ը, ՀՆԱ-ում արդյունաբերության բաժինը կազմում էր մոտ 67, իսկ գյուղատնտեսությունն ու շինարարությունը՝ 10-11 %: Երկրում գործում էր ավելի քան 700 արդյունաբերական ձեռնարկություն, և արդյունաբերական արտադրանքն արտահանվում էր աշխարհի 80 երկիր [28, 34]:

ԽՍՀՄ փլուզմամբ մեր երկիրը հայտնվեց տնտեսական խորը ճգնաժամի մեջ: Հարյուրավոր գործարաններ ու ֆաբրիկաներ դադարեցին աշխատել, մեծ չափերի հասավ գործազրկությունը, ընկավ բնակչության կենսամակարդակը: Հետխորհրդային ամբողջ տարածքը համակած ճգնաժամը մեզանում ավելի խորացավ տարածաշրջանային ու տեղական իրադարձությունների պատճառով:

Հարցեր և առաջարրանքներ

1. Պատմական ի՞նչ ընթացք է ունեցել տնտեսության զարգացումը Հայաստան աշխարհում ին և միջին դարերում:

2. Ի՞նչ գործոններ են նպաստել Հայաստանի տնտեսության զարգացմանը XIX դարում:

3. Վերլուծե՛ք Հայաստանի տնտեսական զարգացման գործընթացը խորհրդային տարիներին:

4. ՀՀ որևէ մարզի օրինակով կատարե՛ք տնտեսության զարգացման պատմաաշխարհագրական վերլուծություն:

4.2. ՀՀ ժամանակակից տնտեսության ընդհանուր բնութագիրը

ԽՍՀՄ փլուզումը և քաղաքական անկախության հոչակումը միանգամայն նոր իրավիճակ ստեղծեցին ՀՀ տնտեսության զարգացման համար: ԽՍՀՄ միասնական տնտեսական համակարգի փլուզման պատճառով արագորեն վերացան կամ կրծատվեցին նախկին տնտեսաարտադրական կապերը, և աստիճանաբար սկսեցին ձևավորվել նոր կապեր: ՀՀ-ն սկսեց ինտեգրվել միջազգային տնտեսական գործընթացներում:

1991 թ. Հայաստանը ԽՍՀՄ-ից ժառանգեց անկենսունակ տնտեսություն: Ակսած 1986-1987 թվականներից՝ ՀՀ տնտեսության մեջ արդեն նշշմարվում էին տնտեսական անկման որոշակի դրսևորումներ՝ պայմանավորված արտադրության ոչ ճկուն կառուցվածքով: **Տնտեսության ներքին կոռավերացման աստիճանը կազմում էր ընդամենը 5-7 %** [37]: ՀՀ տնտեսության տարրեր ոլորտներում ճգնաժամային պայմանները պահպանվեցին մինչև 1990-ական թթ. կեսերը, որը, բացի զուտ տնտեսական գործուներից, պայմանավորված էր նաև մինչև 1994 թ. մայիսը շարունակվող դարաբարդա-աղբբեջանական պատերազմով: **ՀՀ-ն իր տնտեսության զարգացման համար առկա ռեսուրսների մի զգալի մասը հատկացում էր ԱՀ-ին և Աղբբեջանից Հայաստան ներգաղթած 100 հազարավոր հայ գաղթականներին:** 1990-1994 թթ. տնտեսական ցուցանիշների մեծ անկում տեղի ունեցավ արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ: Զգալիորեն կրծատվեց խոշոր ու մանր եղջերավոր անասունների գլխաքանակը, նվազեցին տարրեր մշակաբույսերի բերքատվության ցուցանիշները: **1994 թ. ՀՀ ՀՆԱ-ի ծավալը կազմում էր 1988 մակարդակի 10-15 %** [37]:

1995 թ. ՀԱԷԿ վերագործարկումն ու 1994 թ. մայիսին զինադադարի կնքումը նախադրյալներ ստեղծեցին ՀՀ տնտեսության


Ճգնաժամային իրավիճակի հաղթահարման համար: **1990-ական թթ.** Երկրորդ կեսը կարելի է անվանել ՀՀ տնտեսական ներուժի վերականգնման տարիներ: Թեև դանդաղ (6-7 %), սակայն կայուն կերպով տեղի էր ունենում տնտեսական աճ: ՀՆԱ-ի աճը գուգակցվում էր տնտեսության կառուցվածքում ծառայությունների ոլորտի և շինարարության մասնաբաժինների աճով, փոխարենը նվազում էին արդյունաբերության ու գյուղատնտեսության տեսակարար կշիռները: Սակայն անցումային մոտ երեք տասնամյակի ընթացքում ՀՀ-ում դեռևս չեն հաղթահավել այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են բնակչության ցածր կենսամակարդակը և եկամուտների գերբնեռացումը, գործազրկությունը, կոռուպցիոն ռիսկերը, բնակչության միգրացիան, տնտեսության ստվերայնության բարձր մակարդակը և սրանից ածանցվող բացասական միշտը երևույթներ [37]:

ՀՀ տնտեսության զարգացման առավել բարձր տեմպեր են գրանցվել 2000 թվականից հետո: 2001-2008 թթ. տնտեսության աճի միջին տարեկան ցուցանիշը կազմել է ավելի քան 12 %: Տնտեսության խիստ անբարենպաստ կառուցվածքով հանդերձ մինչև 2009 թվականը տնտեսական աճի տեմպերը թույլ տվեցին ապահովել ՀՆԱ-ի համեմատաբար բարձր ցուցանիշ: Սակայն ՀՀ տնտեսությունը չափազանց զգայուն էր արտաքին և ներքին գործունների ազդեցություններից: 2008-2009 թթ. գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի պատճառով ՀՀ-ում 14.1 % տնտեսական անկում գրանցվեց՝ անցումային տնտեսություն ունեցող երկրներ շարքում հայտնվելով երրորդ հորիզոնականում և զիջելով միայն Լիտվային (-18.4 %) ու Լատվիային (-16.0 %) [37]: 2013 թ. ՀՀ ՀՆԱ-ի ցուցանիշը (10.4 մլրդ դոլար) կազմել է 2008 թ. մակարդակի **88.9 %-ը** (11.7 մլրդ դոլար):

ՀՀ ժամանակակից տնտեսության զարգացման և ճյուղային կառուցվածքի համամասնությունների ձևակդրման վրա զգալի ազդեցություն են թողնում օտարերկրյա ուղղակի ներդրումները:

Գծապատկեր 10 [43]

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի, 2020 թ. հունվար-դեկտեմբեր



ՀՀ հիմնական սոցիալ-տնտեսական ցուցանիշները 2019 թ. ունեին հետևյալ պատկեր՝ ՀՆԱ-ն՝ 6569.0 մլրդ դրամ, ՀՆԱ-ն՝ մեկ շնչի հաշվով 1869.1 հազ. դրամ, արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ շուրջ 2104.0, զյուղատնտեսության արտադրանքի ծավալը՝ 852.8, շինարարության ծավալը՝ 434.6, առևտրի շրջանառության ծավալը՝ 3249.2, ծառայությունների ծավալը՝ 2062.4 մլրդ դրամ: Աշխատողների միջին ամսական աշխատավարձը 2019 թ. կազմել է շուրջ 183 հազ. դրամ, գործազրուկների միջին տարեկան քանակը՝ 219 հազ. մարդ, արտաքին առևտրաշրջանառությունը՝ 8154 մլն ԱՄՆ դոլար, որից արտահանումը՝ 2604.3 մլն ԱՄՆ դոլար [13]: Արդյունաբերության արտադրանքի կառուցվածքը, ըստ տնտեսական գործունեության բաժինների, 2019 թ. ունեցել է

հետևյալ պատկերը՝ մշակող արդյունաբերություն՝ 69.8, հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում՝ 16.9, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում՝ 12.1, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում ու վերամշակում՝ 17 %: 2019 թ. երկրում արտադրվել է 7632 մլն կՎտժ էլեկտրականէրգիա:

2018 թ. համեմատությամբ 2019 թ. ՀՀ-ում տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 7.8 %: Արդյունաբերական արտադրանքի ծավալն ավելացել է 9, գյուղատնտեսության արտադրանքը նվազել է 4.2 %-ով, շինարարության ծավալն աճել է 4.6, առևտրի շրջանառությունը՝ 8.9, ծառայությունների ծավալը՝ 15 %-ով: Միջին ամսական աշխատավարձն ավելացել է 5.8, սպառողական գների ինդեքսը՝ 1.4 %-ով: Արտաքին առևտրաշրջանառությունն ավելացել է 10.4 %-ով, որից ներմուծումը՝ 10.8, արտահանումը՝ 9.4 [13]:

ՀՀ-ն տնտեսության զարգացման մակարդակով և վերջինիս զարգացման պայմաններով առայժմ աշխարհում զբաղեցնում է միջինից ցածր տեղեր:

2018 թ. հեղափոխությունից հետո առաջնային կարևորագույն խնդիրներից մեկը ՀՀ տնտեսության զարգացման կառուցվածքային փոփոխությունների և ռազմավարական առաջնահերթությունների որոշումն էր: Աշխարհաքաղաքական ժամանակակից իրավիճակը և տնտեսության զարգացման առկա նախադրյալներն առաջնահերթ կարևորություն են դարձնում ՀՀ-ում արտահանման միտում ունեցող ճյուղերի և գիտելիքահենք տնտեսության զարգացումը՝ առանձնակի կարևորություն տալով նաև ռազմարդյունաբերական համալիրի ու զբոսաշրջության տարբեր ուղղությունների զարգացմանը:

Անկախության անցած տարիներին ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքի նախկինում գոյություն ունեցող մասնաքինները զգալի փոփոխություններ են կրել: 1990-ական թթ.

սկզբներին արդյունաբերության մեջ ճգնաժամային գործընթացների ավելի խորը դրսևուման պատճառով տնտեսության մեջ գերիշխող դիրք գրավեց գյուղատնտեսությունը, և 1993 թ. վերջինիս մասնաբաժինը ՀՀ ՀՆԱ-ի մեջ կազմեց ավելի քան 51 %: Հետագայում այն աստիճանաբար նվազել է: Այդ ընթացքում ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքում արագ տեմպերով ավելացել է շինարարության և ծառայությունների ոլորտի տեսակարար կշիռը:

Մինչև 2002 թվականը ՀՀ-ում գյուղատնտեսությունը համախառն արտադրանքի ծավալով գերազանցում էր արդյունաբերությանը: 2003 թ. դրանց ցուցանիշները եղել են գրեթե հավասար (410.1 և 412.6 մլրդ դրամ): Սկսած 2004 թվականից՝ արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալն ավելի արագ է աճել: 2003-2019 թթ. ՀՀ-ում արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալն աճել է 5.1, գյուղատնտեսությանը՝ մոտ 2.1 անգամ [17]:

Անկախության տարիներին ՀՀ տնտեսությունը զգալի տեղաշարժեր է կրել նաև տարածքային կառուցվածքի առումով: ԽՍՀՄ տարիներին մեր երկրում ձևավորվել էր միասնական տարածքային արտադրական համալիր, որի գլխավոր նախադրյալներն էին արտադրության զարգացման համար բնական պայմանների ու ռեսուրսների բազմազանությունը, երկրի մասշտաբով միանական տրանսպորտային ու արտադրական ենթակառուցվածքների ստեղծումը, Երևանի արդյունաբերական հանգույցի՝ որպես տնտեսական խոշոր կազմակերպչի կորիզի ձևավորումը: Ցավոք, տնտեսական ճգնաժամի տարիներին միասնական տարածքային համալիրի գոյության վերը նշված բաղադրիչները թուլացան: Հետխորհրդային տարիներին ՀՀ-ում էլ ավելի են մեծացել տնտեսության տարածքային կառուցվածքի առանձին բաղադրիչների միջև տարբերությունները: Արդյունաբերության, շինարարության, ծառայությունների և մանրածախ առևտրի ծավալներում էակա-

նորեն մեծացել է մայրաքաղաքի բաժինը: Միաժամանակ նվազել է մյուս տարածքների, հատկապես Շիրակի և Լոռու մարզերի տեսակարար կշիռները արդյունաբերության և ծառայությունների ոլորտներում: 2020 թ. առաջին վեց ամիսներին ՀՀ տնտեսության աճի ցուցանիշը 2019 թ. նույն ժամանակամիջոցի համեմատ նվազեց մոտ 3 %-ով՝ կապված աշխարհում, այդ թվում՝ նաև ՀՀ-ում վիրուսային համավարակի տարածման հետ:

4.3. Արդյունաբերության ընդհանուր բնութագիրը

2020 թ. արդյունաբերության արտադրանքը կազմել է 2070,3 մլրդ դրամ, որը կազմել է 2019 թ. ցուցանիշի 99.1 %-ը: 2014-2019 թթ. ՀՀ արդյունաբերության արտադրանքի ծավալը աճել է 31 %-ով: Արդյունաբերության մեջ աշխատողների միջին տարեկան քանակը 2014 թ. կազմել է 83.8 հազ. մարդ, 2019 թ.՝ 102.1 [17]: ՀՀ արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ տնտեսական գործունեության տեսակների 2014-2019 թթ. ուներ հետևյալ պատկերը [Աղ. 30]:

Աղյուսակ 30


ՀՀ արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը (%) [17,43]

Ամբողջ արդյունաբերություն	2014	2015	2017	2020
	100	100	100	100
Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում	13.4	14.7	18.6	19.5
Մշակող արդյունաբերություն	69.2	66.4	65.9	67.0
Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում	16.1	17.5	14.1	12.5
Զրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում	1.3	1.4	1.4	1.0

ՀՀ արդյունաբերության ճյուղային կառուցվածքն ըստ առանձին ենթաճյուղերի ունի հետևյալ պատկերը: Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ճյուղում մետաղական հանքերի արդյունահանմանը բաժին է ընկնում 96.1 %-ը, մնացածը՝ այլ ճյուղերին (3.7) և հարակից գործունեությանը (0.2): Վերամշակող արդյունաբերության մեջ առանձնացվում է 23 ենթաճյուղ: Այստեղ առավել բարձր մասնաբաժին ունեն սննդամթերքի (37.6 %), խմիչքների (11.3 %), ծխախոտային (13.5 %), հիմնային մետաղների (11.9 %), այլ ոչ մետաղային հանքային (4.7 %), ռետինե ու պլաստմասե (2.6 %), թղթի և թղթե արտադրատեսակների (2.7 %) արտադրությունները: Մնացած ենթաճյուղերի մասնաբաժինները համեմատաբար փոքր են (0.1-1.1 %):

Գծապատկեր 11

ՀՀ մշակող արդյունաբերությունը, 2020 թ. հունվար-դեկտեմբեր [43]



- 1-սննդամթերքի արտադրություն
- 2-խմիչքի արտադրություն
- 3-ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- 4-հագուստի պատարային
- 5-պոլիպրոֆիլակա գործունեություն, գրաված կրիչների բազմացում
- 6-քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների արտադրություն
- 7-այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- 8-հիմնային մետաղների արտադրություն
- 9-պատրաստի մետաղների արտադրատեսակների արտադրություն
- 10-էլեկտրական սարսափորությունների արտադրություն
- 11-ուկերչական արտադրատեսակների արտադրություն
- 12-գործունեության այլ տեսակներ

Աղյուսակ 31

*ՀՀ արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ ըստ մարզերի և ք. Երևանի
(2014-2019 թթ., մլն դրամ, ընթացիկ գներով և %-ով) [16]*

	2014		2016		2019	
ՀՀ	1440878.8	100	1573362.9	100	2091525.7	100
Ք. Երևան	5477054.3	38.0	588848.7	37.4	787492.9	37.7
Արագածոտն	45588.9	3.2	54212.4	3.4	45690.4	2.2
Արարատ	142404.6	9.9	190004.5	12.1	296758.9	14.2
Արմավիր	72576.4	5.0	70637.6	4.5	108408.0	5.2
Գեղարքունիք	44333.9	3.1	52246.3	3.3	69909.1	3.3
Լոռի	83206.3	5.8	143495.9	9.1	87222.8	4.2
Կոտայք	180515.7	12.5	148688.2	9.5	220011.3	10.5
Շիրակ	68273.0	4.7	58391.4	3.7	69423.7	3.3
Սյունիք	214473.3	14.9	222603.3	14.1	347469.6	16.6
Վայոց ձոր	22574.4	1.6	22929.1	1.5	27804	1.3
Տավուշ	18928	1.3	21305.5	1.4	31325.7	1.5

Զրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակման ճյուղում 70.8 %-ը բաժին է ընկնում չըի հավաքմանը, մշակմանն ու բաշխմանը, 19.0 %-ը՝ թափոնների հավաքման, մշակման, ոչնչացման, վնասազերծման ու նյութերի վերականգնման ենթաճյուղին, մնացած 10.2 %-ը՝ կոյուղուն: Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարման ճյուղում, որին 2019 թ. բաժին էր ընկնում արդյունաբերական արտադրանքի 12.1 %-ը, առանձին ենթաճյուղեր չի առանձնացվում:

Աղյուսակ 32

Մարզերի և ք. Երևանի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը՝ ըստ տնտեսական գործունեության տեսակների հաստվածների, 2019 թ. (ընդամենի նկատմամբ %) [16,17]

Ամբողջ արդյունաբերություն		Հայաստան	Հայաստան	Հայաստան	Հայաստան	Հայաստան
ՀՀ	100	17.1	69.6	12.1	1.2	
Ք. Երևան	100	0.6	86.1	11.5	1.8	
Արագածոտն	100	3.4	86.6	9.1	0.9	
Արարատ	100	0.4	95.9	3.2	0.5	
Արմավիր	100	0.5	71.5	26.9	1.1	
Գեղարքունիք	100	33.3	57.8	7.9	1.0	
Լոռի	100	10.8	48.0	9.7	1.5	
Կոտայք	100	1.8	68.6	28.5	1.1	
Շիրակ	100	0.4	89.6	8.1	1.9	
Սյունիք	100	81.6	9.7	8.4	0.3	
Վայոց ձոր	100	1.4	75.5	22.0	1.1	
Տավուշ	100	6.7	82.0	9.7	1.6	

2015-2019 թթ. ՀՀ-ում արդյունաբերությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների քանակը ավելացել է 375-ով և 2019 թ. կազմել է 3179: Դրանց մեջ գերակշռողը մշակող արդյունաբերության ենթաճյուղերին պատկանող ձեռնակություններն են:



Քարտեզ 20. ՀՀ արդյունաբերության տեղաբաշխումը

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ մարտահրավերների առաջ էր կանգնած ՀՀ տնտեսությունը ԽՍՀՄ վլուգումից հետո:

2. Բնութագրե՛ք ՀՀ տնտեսական իրավիճակի բնորոշ կողմերը 1990-ական և 2000-2010 թվականներն ընկած ժամանակահատվածում:

3. Զարգացման ի՞նչ ցուցանիշներ է արձանագրել ՀՀ տնտեսությունը 2010-2108 թվ.:

4. Ռազմավարական և մարտավարական ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել ՀՀ տնտեսության զարգացման մեջ 2018 թվականից հետո:

5. Վերջին տարիներին ՀՀ տնտեսության ճյուղային ու տարածքային կառուցվածքի ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել:

4.4. Վառելիքաէներգետիկ տնտեսությունը

Մեր օրերում յուրաքանչյուր երկրի զարգացման մակարդակը բնութագրող կարևորագույն ցուցանիշը է էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման չափը:

Վառելիքաէներգետիկ ռեսուրսները: ՀՀ-ում հանքային վառելիքի արդյունաբերական նշանակության պաշարներ չեն հայտնաբերվել: Հայտնաբերված են օրգանական վառելիքի միայն կարծր տեսակներ՝ տորֆ, գորշածուխ, քարածուխ, այրվող թերթաքարեր [24]: Տորֆի մոտ 75 հանքավայրերից միայն երեքն են (Վարդենիս, Տաշիր, Ստեփանավան) նպատակահարմար վառելիքի հանույթի համար: Գորշ ածիխի հայտնաբերված 32 հանքավայրերից ու երևակումներից ուշադրության են արժանացել միայն 6-ը, հատկապես Զաջուռի ու Շամուտի հանքավայրերը: **Քարածիխ 7 հանքավայրերից ուշադրության են արժանացել միայն Իջևանի և Ջերմանիսի հանքավայրերը:** Հայտնաբերված այրվող թերթաքարերի հանքավայրերի գերակշռող մասը հետազոտման շի ենթարկվել [24]: Հայաստանում հետազոտություններ են կատարվել նավթի ու գազի հայտնաբերման նպատակով, սակայն հայտնաբերվածները չունեն արդյունաբերական նշանակություն:

Զրակներգետիկ ռեսուրսները: ՀՀ-ի համար առաջնային և լուրջ նշանակություն ունեն ջրակներգետիկ ռեսուրսները: ՀՀ լեռնային գետերի գերակշիռ մասը բնութագրվում է անկումների զգալի մեծությամբ, միաժամանակ հոսքերի փոքր ծախսերով: ՀՀ տարածքի էներգոմոդուլն ըստ տեխնիկական պաշարների 300 հազ. կվտ. ժամ/կմ քառ. է, ըստ օգտագործման համար տնտեսապես արդյունավետ պաշարների՝ 150 հազ. կՎտ.ժամ/կմ քառ.: **Տնտեսապես հիմնավորված ջրակներգաներուժը կազմում է 4 մլրդ կՎտ.ժամ,** որի շուրջ 70 %-ը բաժին է ընկնում Հրազդան, Որոտան և Դեբեղ գետերին [28]: Զրակներգետիկ ռեսուրսների

ներուժով Հայաստանը զիջում է Աղբբեջանին և հատկապես Վրաստանին:

ՀՀ ամենամեծ հարստությունը լեռնային Սևանա լիճն է, որտեղ դարերի ընթացքում կուտակվել են քաղցրահամ ջրի մեծ պաշարներ:

Արեգակնային էներգետիկայի ներուժը: Աշխարհագրական պայմանների շնորհիվ Հայաստանն ունի արեգակնային էներգիայի զգալի ներուժ՝ արևափայլքի տարեկան մոտ 2500 ժամ տևողություն [10], և տարեկան միջին էներգամոդուլը կազմում է 1720 կՎտ/քմ (արեգակնային ձառագայթումը հորիզոնական մակերևույթի վրա): ՀՀ տարբեր մարզերում արեգակնային էներգիայի ներուժը տարբեր է: Սևանա լիճը շրջապատող տարածքն արևային ձառագայթման ներուժի տեսանկյունից համարվում է Հայաստանի լավագույն շրջաններից մեկը:

Հողմային էներգիայի ներուժը: ՀՀ այլրենտրանքային էներգետիկ հնարավորություններից քամու ներուժը զիջում է միայն արեգակնայինին: Դիտարկումները ցույց են տվել, որ ՀՀ-ում 5 մ բարձրության վրա քամիների միջին տարեկան արագությունը 6.9 մ/վրկ է, 10 մ բարձրությունում՝ 7.7 մ/վրկ, ավելի բարձր՝ ձմռան ամիսներին՝ 7.9-9 մ/վրկ: Լեռնանցքներից բացի՝ հողմակներգետիկայի պարամետրերին լիարժեք բավարարում է Սևանի ավագանը (Սևանա թերակղզի, Գավառագետի վերին ավագան, Վարդենիս), ինչպես նաև Արագածի և Եռաթմբի բարձրադիր շրջանները, որտեղ քամու արագությունը հասնում է 20-25 մ/վրկ-ի:

Երկրաջերմային էներգիայի ներուժը: ՀՀ այլրենտրանքային էներգետիկ ռեսուրսներից Զերմուկի, Արգնու, Բջնիի տաք աղբյուրները յուրաքանչյուր տարի մակերևույթ են արտադրում 8500 տ պվ-ին համարժեք էներգիա: ՀՀ տարածքում երկրաջերմային ռեսուրսները տեղաբաշխված են երկրի կենտրոնական մասով ձգվող բարձր ջերմային գոտում՝ մոտավորապես հյուսիս-

արևմուտքից հարավ-արևելք ուղղությամբ: Նշված գոտին համընկնում է չորրորդական հրաբխականության գոտու հետ:

Հայաստանն իր սեփական հներգետիկ պաշարներով բավարարում է երկրի պահանջարկի մինչև 8 %-ը (ատոմային հներգետիկայի ներառմամբ՝ 35 %) և խստ կախման մեջ է արտերկրյա հներգաղյուրներից: Մրա հետ մեկտեղ Հայաստանի տնտեսության հներգետիկ արդյունավետությունը մինչև 2010 թ. ապրիլ ամիսը¹ տեխնիկական ցուցանիշներով զիջում էր տարածաշրջանի և զարգացած երկրների համանման ցուցանիշին: Ուստի Հայաստանի վառելիքակներգետիկ արդյունաբերության ապագա զարգացումների համար գերինադիրը էներգետիկ անկախության բարձր աստիճանի ապահովումն է սեփական աղբյուրների զարգացման միջոցով, որը ենթադրում է տնտեսության հներգարդյունավետության նշանակալից բարձրացում և վերականգնվող հներգաղյուրների լայնամասշտար կիրառում:

Էլեկտրաներգետիկայի ձևավորումը և զարգացումը: Էներգետիկայի ձևավորումը ՀՀ-ում կապված է Կապանում պղնձի արդյունաբերության զարգացման հետ, երբ 1903 թ. գործարկվեց 2 դիգելային գեներատոր, իսկ Ողջի գետի վրա կառուցվեց ջրէկ՝ 75 կՎտ հզորությամբ: 1909 թ. ևս պղնձի արդյունաբերության համար Դեբեղի վրա կառուցվեց ջրէկ՝ 3360 կՎտ հզորությամբ: 1914 թ. ՀՀ-ում կար 13 փոքր էլեկտրակայան՝ 3165 կՎտ կարողությամբ, առավելագույն հներգիայի արտադրությունը՝ 10.2 մլն կՎտժ: 1914 թ. արտադրել են 5.1 մլն կՎտժ էլեկտրակներգիա [2]:

1922 թ. վերջերից վերականգնվեցին կործանված էլեկտրակայանները, և ընդլայնվեցին դրանցից մի քանիսի հզորություննե-

¹ 2010 թ. ապրիլին Երևանի ջերմակէկտրակայանում գործարկվեցին մեր տարածաշրջանում և Արևելյան Եվրոպայում նախարեալ չունեցող 271 հազ. Կվտ հզորության շոգեզազատուրբինային գեներատորներ, դրանց արդյունավետությունը 2-2.5 անգամ գերազանցում էր ջերմակէկտրակայանում 1960-ական թթ. տեղակայված էներգասարքավորումների ցուցանիշները:

թթ: Վերականգնվեցին Ալավերդու ջրէկները, և հզորությունը հասցվեց 1080 կՎտ-ի: Կապանում քանդված կայանի տեղում կառուցվեց Զրախորի Էլեկտրակայան՝ 2800 կՎտ կարողությամբ: Կառուցվեց ջերմակէլեկտրակայան՝ 2550 կՎտ կարողությամբ [1, 2]:

Տնտեսության արագ զարգացում ապահովելու համար երկիրը ձեռնամուխ եղավ նոր և ավելի խոշոր ջրէկների կառուցմանը՝ հաճախ միաժամանակ լուծելով ոռոգման խնդիրները: Այդպիսիք կառուցվեցին Երևանում, Գյումրիում, Ստեփանավանում, Գավառում և այլուր:

Վառելիքի անհրաժեշտ պաշարներ չունեցող Հայաստանում Էլեկտրակներգիայի արագ աճող պահանջը կարելի էր լուծել ջրաէներգետիկական ռեսուրսների օգտագործման ծավալների մեծացման միջոցով: Խնդիր որպէս լրիվ օգտագործելու Հրազդան գետի էներգետիկական ամբողջ կարողությունը: Այդպէս հարություն առավ Սևանա լճի դարավոր ջրերն օգտագործելու գաղափարը:

Սևան-Հրազդան կասկադի աշխատանքները սկսվեցին 1932 թ.: Կասկադը վերջին իրականացված տարրերակով ունի վեց կայան (Սևանի, Հրազդանի, Արգելի, Արգնիի, Քանաքեռի, Երևանի): Պատերազմի ավարտից հետո հաջորդաբար շահագործման հանձնվեցին Սևանի, Արգելի, Արգնիի, Հրազդանի և վերջապէս կասկադի վերջին աստիճանը՝ Երևանի ջրէկը (1920-ական թթ. կառուցված փոքր հզորության 2 ջրէկների փոխարեն 1962 թ. կառուցվեց 44 հազ. կՎտ հզորության Երևանի ջրէկը) [2]:

Կասկադի ամենահզոր Արգելի ջրէկը (224.0 հազ. կՎտ) գործարկվեց 1953 թ., և դրա շնորհիվ լճի ջրի դարավոր պաշարների օգտագործման գործակիցը հասավ մինչև 53 %-ի: Ընդհանուր առմամբ լճից 1 մ³ ջրի օգտագործումից պլանով նախատեսված 2 կՎտժ-ի դիմաց միջին հաշվով ստացվեց 5-6 անգամ քիչ Էլեկտրակներգիա [1]:

Սևանի ջրերը կենդանություն տվեցին Արարատյան դաշտի շուրջ 100 հազ. հա ամայի հողերին, հիմնվեցին մի քանի տասնյակ բնակավայրեր, ուր բնակություն հաստատեցին հայրենադարձվող հայերը, ինչպես նաև լեռնային գյուղերի բնակչության մի մասը:

ԽՍՀՄ-ից Հայաստանն առաջիններից էր, որտեղ ավարտվում էր համատարած կեկտրիֆիկացիան: Տնտեսական աճն ուղեցվում էր Սևանա լճի մակարդակի իջեցմամբ, արդյունքում լճի մակարդակն իջավ 18 մ-ով:

1958 թ. որոշում ընդունվեց վերանայելու Սևան-Հրազդան կասկադի աշխատանքային ռեժիմը՝ էներգետիկ-իոնիզացիոնից իոնիզացիոն-էներգետիկ ռեժիմի անցնելու: Դա նշանակում էր Սևանից նվազեցնել ջրի բացթողումը, ապա՝ մոտ 50 կմ երկարությամբ ջրատար թունելով Արփա գետի ու Որոտանի ջրերի մի մասը դեպի Սևանա լիճ ուղղումը և այլն [1]:

ՀՀ-ում ջրաէներգետիկ զգալի ռեսուրսներ ունի նաև Որոտան գետը, որի վրա խորհրդային վերջին երկու տասնամյակում կառուցվեցին Տաթևի Շամբի և Սպանդարյանի ջրէկները:

ՀՀ բնական զագ մուտք գործելուց հետո աճող արդյունաբերության կեկտրաէներգիայայի պահանջարկը բավարարելու նպատակով արագ տեմպերով կառուցվեցին Երևանի (550 հազ. կՎտ), Հրազդանի (1.1 մլն կՎտ) և Վանաձորի (99.0 հազ. կՎտ) ջէկերը: 1976 թ. շահագործման հանձնվեց Մեծամորի ՀԱԷԿ-ը՝ 816 հազ. կՎտ հզորությամբ [1, 2]:

Մինչև ԽՍՀՄ փլուզումը ՀՀ-ում գործում էին 18 կեկտրակայաններ, որոնք ունեին 3.5 մլն կՎտ տեղակայված հզորություն (13 ջրէկ՝ 945.9 հազ. կՎտ, 3 ջէկ՝ 1781.4 հազ. կՎտ և մեկ ատոմակայան՝ 816 հազ. կՎտ հզորությամբ): Այդ տարիներին ՀՀ-ում արտադրված կեկտրաէներգիան ոչ միայն բավարարում էր ներքին պահանջները, այլև արտադրված կեկտրաէներգիայի մինչև

15 %-ը փոխանցում էր Անդրկովկասի միացյալ հներգահամակարգին:

1980-ական թթ. վերջերին ՀՀ-ում էլեկտրաէներգիայի հիմնական սպառողը մնում էր արդյունաբերությունը: Վերջինս շինարարության հետ միասին օգտագործում էին երկրում արտադրվող էլեկտրաէներգիայի մոտ 75 %-ը: Տրանսպորտին և գյուղատնտեսությանը բաժին էր ընկնում 4-ական %-ը [28]:

Էլեկտրաէներգետիկ հզորությունների ստեղծմանը զուգահեռ ձևավորվել և զարգացել է նաև էլեկտրաէներգիայի բաշխիչ համակարգը: 1975 թ. ՀՀ բոլոր բնակչավայրերը միացված էին էլեկտրահաղորդման գծերի պետական ցանցին: ՀՀ-ում ստեղծվել էր էլեկտրահաղորդման բարձր լարման մայրուղային գծերի ու բաշխիչ ցանցի միասնական համակարգ: ՀՀ-ն Աղստաֆա-Խջևան-Սևան-Հրազդանի ջրէկ 330 հազ. և Հրազդան-Վանաձոր-Թբիլիսի 220 հազ. վոլտ լարվածության էլեկտրահաղորդման գծերով միացված էր Անդրկովկասյան միասնական հներգահամակարգին [28]: ՀՀ տարածքում առավել հզորներից են 220 հազ. վոլտ լարվածության Հրազդանի ջրէկ-Սևանի ավազան-Եղեգնաձոր-Շինուհայր-Քաջարան, Հրազդանի ջրէկ-Երևան-Եղեգնաձոր, Հրազդանի ջրէկ-Վանաձոր-Ալավերդի, Վանաձոր-Գյումրի գծերը: Նշված գծերից ՀՀ տնտեսական կենտրոններ են ճյուղավորվում 110 և 35 հազ. վոլտ լարվածության գծեր, որոնք իրենց հերթին սկիզբ են տալիս ավելի փոքր լարվածության գծերի [28]: Այդ բոլորը միասին կազմում են ՀՀ էլեկտրաէներգիայի բաշխման միասնական ցանցը: Հետագա տարիներին, մասնավորապես 2019-2020 թթ. ՀՀ-ում իրականացվել է բարձրավոլտ էլեկտրահաղորդման նոր գծերի շինարարություն: Ներկայումս ՀՀ-ն էլեկտրահաղորդման բարձրավոլտ գծերով կապված է նաև Իրանի Էլեկտրաէներգետիկ համակարգին: 2018 թ. ՀՀ-ից Իրան և Վրաս-

տան է արտահանվել 1.6 մլրդ կՎտ Ժ կեկտրաէներգիա, ներմուծվել է 0.2 մլրդ կՎտ Ժ:

ՀՀ կեկտրաէներգետիկ միասնական համակարգը կարգավորվում և աշխատում է տրանսֆորմատորային հարյուրավոր էնթակայանների միջոցով, որոնք ապահովում են կեկտրաէներգիայի համապատասխան լարվածություն և փոխանցում են սպառողին:

Անկախության առաջին տարիներից ՀՀ կեկտրաէներգետիկան հայտնվեց ճգնաժամային իրավիճակում: **1989 թվականից** դադարել էր գործել աստոմակայանը: ՀՀ ամբողջ տնտեսությունը և բնակչության ջերմամատակարարումը մնացել էին գործող ջրեկների հույսին: Մինչև **1995 թվականը ՀԱԷԿ մեկ էներգաբլոկի վերագործարկումը**, ՀՀ-ն հայտնվեց էներգետիկ խորը ճգնաժամի մեջ. կաթվածահար էր եղել երկրի ամբողջ տնտեսությունը: Հարյուրավոր ձեռնարկություններ էներգիա չինելու պատճառով դադարեցին գործել, չէր գործում բնակարանային ջեռուցման համակարգը, բնակչությունն էներգիա էր ստանում մի քանի ժամով, իսկ երեմն օրերով զրկված էին կեկտրաէներգիայից:

Բացի աստոմակայանի վերագործարկումից՝ ՀՀ էներգետիկ համակարգի համար կարևոր դեր ունեցավ նաև գազամատակարարման վերականգնումը, ինչպես նաև Վրաստանի տարածքում գազամուղի պարբերաբար պայթեցումների աստիճանաբար վերացումը:


Ներկայումս ՀՀ-ում արտադրված կեկտրաէներգիայի քանակն ավելի քան 2 անգամ պակաս է 1988 թ. ցուցանիշից, սակայն դա ոչ միայն բավարարում է երկրի ներքին պահանջները, այլև հնարավորություն է տալիս որոշ քանակությամբ արտահանելու, քանի որ էներգասպառման հիմնական բնագավառը՝ արդյունաբերությունը, կորցրել է իր նախկին արտադրական կարողությունների զգալի մասը, իսկ գործող արդյունաբերական որոշ

Ճեղնարկություններ և էլ աշխատում են ոչ լրիվ հզորությամբ: Նախկինում միայն «Նախրիտի» նման հսկան սպառում էր տարեկան մինչև 1.2 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա, չի գործում նաև Քանաքենի այումինի գործարանի ձուլման արտադրամասը և էներգատար այլ արտադրություններ:

2019 թ. ՀՀ-ում արտադրված էլեկտրաէներգիայի 23.5 %-ը ծախսվել է արդյունաբերության մեջ, 33.7 %-ը՝ բնակչության կողմից, 3.2 %-ը՝ զյուղատնտեսության մեջ, 1.8 %-ը՝ տրանսպորտում, 0.6 %-ը՝ շինարարության, 1.2 %-ը՝ կոմունալ տնտեսության մեջ, 4.4 %-ը՝ բյուջետային ֆինանսավորման կազմակերպություններում, 30.7 %-ը՝ այլ ճյուղերում: 2019 թ. ՀՀ-ում առկա բոլոր էլեկտրակայանների հզորությունը կազմել է 3589.1 հազ. կՎտ, որից շե�եր՝ 1826.6 հազ., ջրէկներ՝ 1340.0 հազ., ատոմակայան՝ 407.5 հազ, այլ աղբյուրներ՝ 15.0 հազ. [17]:

Գծապատկեր 12

Էլեկտրաէներգիայի արտադրությունը, հաղորդումը և բաշխումը ՀՀ-ում, 2020 թ. հունվար-դեկտեմբեր [43]



Աղյուսակ 33


Էլեկտրաէներգիայի արտադրությունը ՀՀ-ում (1988-2020 թթ.)

[17, 24, 34, 43]

Տարեթվեր	1988	1990	1995	1998	2001	2005	2015	2019	2020
մլրդ կՎտժ	15.3	15.0	5.6	6.2	5.7	6.3	7.8	7.6	7.7

Գծապատկեր 13

Էլեկտրաէներգիայի արտադրությունն ըստ էլեկտրակայանների ՀՀ-ում,
2020 թ. հունվար-դեկտեմբեր[43]



Խորհրդային տարիներին ՀՀ-ում ստեղծված զազամուղների ցանցը վերջին մեկուկես տասնամյակում էլ ավելի է ընդարձակվել, և բացառությամբ առանձին մարզերի լեռնային, բարձրեռնային և աննպաստ աշխարհագրական դիրք ունեցող փոքր զուդերի՝ մնացած բոլոր բնակավայրերը օգտվում են վառելիքի այս տեսակից:

ՀՀ-ի համար էներգետիկ տնտեսության զարգացումն ու տեխնիկական կատարելագործումը ռազմավարական նշանակության առաջնահերթ խնդիրներից են: Վերջին երկուտիկես տասնամյակում ՀՀ էլեկտրաէներգետիկ տնտեսության վերականգնման, վերակառուցման և տեխնիկական վերազինման ուղ-

դությամբ զգալի աշխատանքներ են տարվել: Կառուցվել է Հրազդանի ջէկի 5-րդ բլոկը, պարբերաբար վերանորոգվում է ՀԱԷԿ-ը, որի շնորհիվ երկարացվել է վերջինիս տեխնիկական շահագործման ժամկետը՝ մինչև 2026 թվականը, նոր էներգաբլոկի կառուցմամբ (271 հազ. կՎտ հզորությամբ) մեծացել են Երևանի ջէկի արտադրական կարողությունները: Աշխատանքներ են իրականացվում Մեղրի գետի վրա՝ Իրանի հետ համատեղ նոր ջրէկի և Շնողի ջրէկի կառուցման ուղղությամբ: Երևանում կառուցվում է 250 ՄՎտ հզորությամբ նոր ջէկ:

Դեռևս խորհրդային տարիներին ՀՀ տարբեր շրջաններում փոքր գետերի վրա կառուցվել և գործում էին շուրջ երեք տանյակ փոքր ջրէկեր: Սակայն խոշոր էլեկտրակայանների գործարկումից հետո անհիմն կերպով շահագործումից դուրս մղվեց այդպիսի փոքր ջրէկերի զգալի մասը: Դրանց անհրաժեշտությունը խիստ զգացվեց հատկապես 1990-ական թթ., երբ ՀՀ-ն հայտնվել էր Աղրբեջանի կողմից տրանսպորտային շրջափակման և վերջինիս պատճառով՝ էներգետիկ խորը ճգնաժամի մեջ:

Աղյուսակ 34

ՀՀ էլեկտրահաշվեկշիռը (2014-2019 թթ., մլն կՎտժ) [17]

	2014	2015	2016	2019
Արտադրվել է էլեկտրաէներգիա	7750	7798	7315	7642
Ներմուծվել է էլեկտրաէներգիա	206	174	275	293
Արտահանվել է էլեկտրաէներգիա	1314	1424	1229	1251
Ծախսվել է էլեկտրակայանների սեփական արտադրական կարիքների համար	361	369	327	334
Կորուստներ ընդհանուր օգտագործման ցանցերում	928	812	706	548
Օգտակար սպառումը, ընդամենը	5353	5367	5328	5802

Հաշվի առնելով հեռանկարում ՀՀ Էներգետիկ անկախության մեծացման ռազմավարական խնդիրը՝ **մշակվել և հաստատվել** է փոքր ջրէկների կառուցման ծրագիր, որոնց զգալի մասը արդեն տևական ժամանակ է՝ գործում է:



Քարտեզ 21. ՀՀ էլեկտրական էներգետիկան

Մասնագետների գնահատումներով ՀՀ-ում կարելի է կառուցել ավելի քան 215 փոքր ջրէկներ՝ 257 հազ. կՎտ ընդհանուր հզորությամբ, որը որոշակիորեն կբարձրացնի ՀՀ էներգետիկ հզորությունների մեջ սեփական ռեսուրսների մասնաբժինը [24]:

ՀՀ Էներգետիկ տնտեսության հեռանկարային զարգացման գործում իրենց դերը կարող է ունենալ նաև արևի, քամու և երկրաշերմային Էներգիայի ռեսուրսների օգտագործումը: ՀՀ-ում արևային էլեկտրակայանների ստեղծման համար առավել նպատակահարմար վայրեր են Արարատյան գոգավորության նախալեռնային գոտու քարքարոտ, զյուղատնտեսության մեջ չօգտագործվող և Սևանի ավազանի հարմար դիրքադրությունների տարածքները: Վերջին տարիներին արեգակնային էլեկտրակայաններ են կառուցվել Կոտայքի և Արմավիրի մարզերում, կառուցման աշխատանքներ են իրականացվում Վայոց ձորում:

Ներկայում գործում է Պուշկինի լեռնանցքի փոքր հզորության հողմակելեկտրակայանը: Սակայն ՀՀ տարածքում քամու ուժի Էներգետիկ հզորությունը զգալիորեն մեծ է, և ներկայիս տեխնիկական հզորությունների պայմաններում այդ ռեսուրսի օգտագործման ծավալները պետք է նշանակալիորեն ավելացել ՀՀ-ում Էներգետիկ պահանջների բավարարմանը կարող են նպաստել նաև երկրաշերմային հարուստ պաշարները:

ՀՀ-ում էլեկտրաէներգետիկայի ու ջերմաէներգետիկայի արտադրության ծավալները 2020 թ. ունեցել են հետևյալ պատկերը՝ Էլեկտրաէներգիայի ընդհանուր արտադրությունը կազմել է 7723.4 մլն կՎտժ, որից 3165.5 մլն-ը արտադրել են Չեկերը, 1778.4 մլն-ը՝ Զրբուները, 2756.3 մլն-ը՝ ՀԱԷԿ-ը, 1.9 մլն-ը՝ հողմային էլեկտրակայանները, 21.3 մլն-ը՝ արևային կայանները: 2020 թ. երկրում արտադրվել է 37.5 հազ. ԳԶ ջերմային Էներգիա [43]:

Առաջիկա տարիներին ՀՀ Էներգետիկ տնտեսության զարգացումն ու անվտանգության աստիճանի բարձրացումը պետք է տեղի ունենան մի քանի ուղղություններով [24].



Նկ. 5. Մեծամորի ատոմային էլեկտրակայանը

- 1) կառուցել ժամանակակից չափորոշիչներին համապատասխանող նոր ատոմակայան, իսկ մինչ այդ բարձրացնել գործող ՀԱԷԿ-ի տեխնիկական անվտանգության մակարդակը՝ շահագործման ժամկետի երկարացման նպատակով,
- 2) աշխատանքներ տանել գործող ջրային և ջերմային էլեկտրակայանների տեխնիկական վերազինման ու դրանց ՕԳԳ-ի բարձրացման ուղղությամբ,

3) պայմաններ ստեղծել ՀՀ փոքր գետերի ջրաէներգետիկ ռեսուրսներն առավել լիարժեք օգտագործելու համար՝ առավելագույն չափով պահպանելով շրջակա միջավայրի պահպանության խնդիրները,

4) մշակել և իրականացնել այլնտրանքային էներգետիկայի զարգացման համալիր ծրագիր,

5) միջոցներ ձեռնարկել էներգետիկ բաշխիչ ցանցում կորուստները նվազագույնի հասցնելու ուղղությամբ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Էներգետիկայի զարգացման ի՞նչ ներուժ ունի ՀՀ-ն:
2. Կատարե՛ք ՀՀ ժամանակակից էներգետիկ տնտեսության ձևավորման ու զարգացման վերլուծություն:
- 3.Ի՞նչ առանձնահատկություններ ունի ՀՀ ժամանակակից էլեկտրաէներգետիկ տնտեսությունը:
4. Մոտակա հեռանկարում ի՞նչ ուղղություններով պետք է զարգանա ՀՀ էլեկտրաէներգետիկ տնտեսությունը:
5. Կատարե՛ք Ձեր մարզի, տարածաշրջանի էներգետիկ ներուժի վերլուծություն ու գնահատում:

4.5. Մետաղաձուլությունը

Դեռևս Ք.ա. V-IV հազարամյակներում Հայաստանում ձուլվել է բրոնզ, երկրորդ հազարամյակի կեսերից՝ Երկար։ Հայատանը դեռ հնուց առավել հայտնի է եղել գունավոր մետաղների ձուլմամբ, որը պատմական անցյալում բազմիցս առաջադիմել և քայլավել է, երբեմն՝ նաև վերացել։

1760-1770 թթ. Կապանում և Ալավերդիում կառուցվեցին տեղական հումքով աշխատող պղնձաձուլական գործարաններ: XX դարի սկզբներին Հայաստանը մուսական կայսրության պղնձարդյունաբերության առաջատար շրջաններից էր: ՀՀ-ում 1913 թ. ձուլվել է 5633 տ չղտված պղինձ, որը կազմում էր կայսրությունում ձուլվող պղնձի շուրջ 20 %-ը, Հայաստանի ԱՀԱ-ի մոտ 60 %-ը [28]: 1914-1920 թթ. Հայաստանում շարքից դուրս եկան հանքախորշերը և պղնձաձուլարանները:

Լեռնահանքային արդյունաբերությունը և գունավոր մետա-
դաձուլությունը մեր երկրում նոր վերելք են ապրել խորհրդային
տարիներին:

Ալավերդիում պղնձի գործարանի վերակառուցման, Կապանում պղնձահարստացուցիչ նոր գործարանի կառուցման, իին հանքերի վերակառուցման, նորերի ստեղծման ու դրանց աշխատանքային գործընթացների մեքենայացման շնորհիվ զգալիորեն ավելացավ ՀՀ պղնձահաճույղայն արտադրանքը:

բանքի բազմազանությամբ դարձավ ԽՍՀՄ համանման խոշոր ձեռնարկություններից մեկը:

1989 թ. Էկոլոգիական նկատառումներով Ալավերդու լեռնամետալուրգիական հսկա գործարանը փակվեց, որը խորհրդային իշխանության վերջին տարիներին արտադրում էր 40-50 հազ. տ զտված պղինձ [24, 34]: Սակայն այն մեր երկրի համար ուներ ռազմավարական և տնտեսական նշանակություն: 1999 թ. Ալավերդու կոմբինատը վերաբացվեց՝ նախկին կոմբինատի փոխարեն սկսեց գործել «Մանես-Վալերս» ձեռնարկությունը, որը, բացի տեղական հումքից, հարստացված հանքանյութ էր ստունում նաև Քաջարանի, Կապանի, Ազարակի և Դրմբոնի (ԱՀ) ձեռնարկություններից: Լոռու մարզի Թեղուտի հանքավայրերի շահագործման շնորհիվ ՀՀ-ում պղնձի արտադրության ծավալներն ավելացան: 2019 թվականից Էկոլոգիական նկատառումներով Ալավերդու կոմբինատը չէր աշխատում:

Վերջին տարիներին ՀՀ-ում պղնձարդյունաբերության զարգացումը բնութագրում են հետևյալ թվերը. 2015 թ. արտադրվել է 315.6 հազ., 2020 թ.՝ 375.6 հազ. տ պղնձի խունյութ [43]: Պղնձի (կոմպուտամշակ) արտադրությունը 2015 թ. կազմել է 11.6 հազ., 2019 թ.՝ 8.8 հազ. տ [17]:

Պղնձաձուլության զարգացումը նպաստեց 1950-ական թվականներից հետո ՀՀ-ում էլեկտրատեխնիկական արդյունաբերության ձևավորմանը և զարգացմանը, իսկ Ալավերդին ու Կապանը դարձան արդյունաբերական խոշոր կենտրոններ: ՀՀ գունավոր մետաղաձուլության երիտասարդ ճյուղ է համարվում մոլիբդենի արտադրությունը: Վերջին տարիներին այս ճյուղն աշխատում է ավարտուն ցիկլով և ապահովված է տեղական հումքի հսկայական պաշարներով: 1952 թ. շարք մտավ Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատը, որը ԽՍՀՄ նմանատիպ ձեռնարկությունների մեջ խոշոր

բագույններից էր: Այն թողարկում էր մոլիբդենի, պղնձի, անագի, կապարի, ոսկու, արծաթի, սելենի և թելուրի խտանյութ: Հարստացված պղինձը մատակարարվում էր Ալավերդու կոմբինատին՝ ձուլման համար, իսկ մոլիբդենի խտանյութն արտահանվում էր՝ առաքվելով Ռուսաստանի վերամշակող ձեռնարկություններին:



Նկ.5. Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի շահագործվող հանքավայրը

1990-ական թթ. Քաջարանի կոմբինատի հզորություններն էականորեն նվազեցրին, իսկ վերջին երկու տասնամյակի ընթացքում կոմբինատի հզորությունը զգալիորեն մեծացել է: **Մոլիբդենի հարստացված խտանյութի մի մասից Երևանի փոշեմետալուրգիական գործարանում արտադրվում է ֆերոմոլիբդեն, և մոլիբդենի արտադրության ամբողջ շղթան իրականացվում է ՀՀ-ում: 2018 թ. երկրում արտադրվել է 11.1 հազ. տ մոլիբդենի խտանյութ, 7.3 հազ. տ ֆերոմոլիբդեն, 2020 թ.՝ համապատասխանաբար՝ 24.9 և 6.7 հազ. տ [17, 43]:**

1963 թ. շահագործվեց **Ազարակի պղնձամոլիբդենային կոմբինատը**: Այստեղ ստացվող պղնձի խտանյութը նույնպես վե-

րամշակվում էր Ալավերդու գործարանում, իսկ մոլիբդենի խտանյութը՝ Երևանի մաքուր երկարթի գործարանում:

Պղնձամոլիբդենային հանքահարստացուցիչ գործարան՝ փոքր հզորությամբ, 1963 թ. շահագործվեց **Դաստակերտում**, որը 1970 թվականից չի գործում ցածր արդյունավետության պատճառով:

Խորհրդային տարիներին ՀՀ գունավոր մետաղաձուլության մեջ էական դեր ուներ նաև **այլումինի արտադրությունը**: Դեռևս 1940 թ. ձեռնարկվեց այլումինի գործարանի շինարարությունը Քանաքեռում՝ արդեն գործող ամենահզոր ջրեկից ոչ հեռու: 1980-ական թթ. **Երևանի այլումինի գործարանը** ԽՍՀՄ համանման ձեռնարկությունների մեջ խոշորագույներից էր և տալիս էր որակյալ մետաղական այլումին, փայլաթիթեղ և այլն: Սակայն մեծ հեռավորությունից հումքի ներկրումը զգալիորեն բարձրացնում էր արտադրանքի ինքնարժեքը: Իրեն չարդարացրեց նաև տեղական նեֆելինային սիենիտներից արգնահող ստանալու ծրագիրը. Հրազդան քաղաքում կառուցված հզոր լեռնաքիմիական կոմբինատը բավարարվեց միայն ցեմենտի արտադրությամբ: Այլումինի գործարանը շարունակում էր հումք ստանալ Ռուբալից և Տիֆվինից [1, 2]:

Այլումինի արտադրությունը նպաստեց ՀՀ-ում էլեկտրատեխնիկական արդյունաբերության զարգացմանը, ձևավորվեց Երևան քաղաքի Արաքի ջրանք: Էկոլոգիական նկատառումներից ենելով՝ 1989 թ. վերջերից գործարանի այլումինի ձուլման արտադրամասը փակվեց: Ներկայումս գործարանը Ռուսաստանից ներմուծվող մետաղական այլումինի հիման վրա թողարկում է մետաղաթղթեր ու մետաղաթաղանթ՝ տեխնիկական զանազան բնագավառներում օգտագործելու և սննդամթերք փաթեթավորելու համար: Վերջիններիս արտադրությունը էկոլոգիական առումով անվտանգ է: 2020 թ. այլումինե նրբաթիթեղի արտադրանքը

(0.2 մմ-ից ոչ ավելի հաստությամբ) կազմել է 35.5 հազ. տ, այսումինե գլանվածքնը՝ 164 տ (2018 թ.):

ՀՀ մետաղաձուլության հեռանկարային ճյուղերից է **ոսկու արտադրությունը**, որն ունի ավարտուն արտադրական ցիկլ: Ներկայում ՀՀ-ում օգտագործվում են Սոթքի ու Մեղրաձորի ոսկու հանքավայրերը: Դրանցից արդյունահանվող հումքը տեղափոխվում և վերամշակվում է **Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում**: Որոշակի քանակությամբ ոսկի ստացվում է նաև գունավոր մետաղների հանքանյութերից: Արդեն մեկ տարուց ավելի է, ինչ քննարկվում է Ամուսարի ոսկու հանքավայրի շահագործման հարցը:

ՀՀ-ում **բազմամետաղային հանքանյութի** հարստացման ձեռնարկություններ կան **Ախրալայում և Կապանում**: Ախրալայում՝ Շամլուտից ոչ շատ հեռու հանքավայրից բերվող հանքաքարից ստացվում է կապարի ու ցինկի խտանյութ: 2014 թ. ՀՀ-ում արտադրվել է 14.7 հազ. տ ցինկի խտանյութ, 2020 թ.՝ 12.9 հազ. տ: ՀՀ բազմամետաղային հանքավայրերում կան նաև մի շարք այլ արժեքավոր մետաղներ, որոնք թափոնների հետ նետվում են շրջակա միջավայր:

Մետաղաձուլություն, որպես այդպիսին, ՀՀ-ում չկա: 1960-ական թթ. Չարենցավանում կազմակերպվեց **կենտրոնացված խոշոր ձուլարան** (**Կենտրոնաձույլ գործարանը**), որը կարևոր դեր ունեցավ ՀՀ-ում մերենաշինության և այլ ճյուղերի զարգացման համար: Բացի դրանից՝ Երևանում կազմակերպվեց փորձնական փոշեմետալուրգիֆական գործարան, որտեղ առկա ռեսուրսների հիման վրա, մետաղի ուղղակի վերականգնման մեթոդով ստանում էին սև մետաղ: ՀՀ-ում սև մետաղաձուլական ձեռնարկություն է համարվում նաև Թումանյան քաղաքի հրակայուն աղյուսի գործարանը, որի արտադրանքը խորհրդային տարիներին առաքվում էր մետաղաձուլական խոշոր գործարաններ:

2020 թ. ՀՀ-ում արտադրվել են 18.6 հազ. տ պողպատէ խողովակներ, սնամեջ տրամատներ և դրանց կցամասեր: Դեռևս խորհրդային տարիներին քննարկվում էր տեղի բարձրորակ հանքաքարի բազայի վրա ՀՀ-ում որակյալ պողպատի արտադրության կազմակերպման հարցը: ՀՀ-ում որակյալ պողպատի օրագուր աճող պահանջները բավարարելու խնդիրը մոտ ապագայում կստիպի ստեղծել այդ հանքավայրերի երկաթաքարը շահագործելու ձեռնարկություն:

Այսպիսով՝ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման թե՛ ժամանակակից և թե՛ հեռանկարային շահերը պահանջում են մետաղաձուլությունը դարձնել տնտեսության գերակա ուղղություններից մեկը, քանի որ այն նպաստում է ոչ միայն ընդհանուր տնտեսական առաջընթացին, այլ բավարար նախադրյալներ է ստեղծում ռազմարդյունաբերական համալիրի առանձին ճյուղերի զարգացման և մեր երկրի պաշտպանունակության ամրապնդման համար: Այդ խնդրի իրականացման համար ՀՀ-ում կան անհրաժեշտ ռեսուրսային նախադրյալներ ու պայմաններ:

Հարցեր և առաջարրանքներ

1. Ի՞նչ դեր և նշանակություն ունի մետաղաձուլությունը ՀՀ տնտեսության մեջ:

2. Կատարե՛ք ՀՀ մետաղաձուլության ճյուղային և տարածքային կառուցվածքի վերլուծություն:

3. Ի՞նչ հեռանկարներ և հիմնախնդիրներ ունի մետաղաձուլության զարգացումը ՀՀ-ում:

4. Կատարե՛ք ՀՀ-ում հանքարդյունահաման Էկոլոգիական խնդիրների վերլուծություն և գնահատում:

4.6. Մեքենաշինությունը

1913 թ. ՀՀ ներկայիս տարածքում մեքենաշինության տեսակարար կշիռը ծանր արդյունաբերության համախառն արտադրանքում կազմել է 2.5 % [1]: Խորհրդային առաջին տարիներից աստիճանաբար վերազինվեցին Երևանի և Գյումրու մեխանիկական գործարանները, Կապանի և Աղավերդու արհեստանոցները: 1930-ական թթ. վերջերին ՀՀ-ում իրական հնարավորություն կար հիմնելու բարդ, ճշգրիտ և խոշոր մեքենաշինության ձեռնարկություններ: Երևանի Էլեկտրամեքենաշինական գործարանը («Հայկեկտրագործարան») սկսեց արտադրանք տապ 1942 թ. վերջին [1, 2]:

Հետպատերազմյան տարիներին ՀՀ-ում հիմնադրվեցին մեքենաշինական նոր խոշոր ձեռնարկություններ, ընդլայնվեցին և հզորացան գոյություն ունեցող ձեռնարկությունները: Երևանից և Գյումրուց բացի՝ նոր գործարաններ կառուցվեցին Վանաձորում, Չարենցավանում, Հրազդանում, Գավառ, Ստեփանավան, Գորիս, Կապան, Սպիտակ, Սևան, Էջմիածին քաղաքներում և մասնաճյուղեր՝ քաղաքատիպ այլ վայրերում, խոշոր գյուղերում:

Հետպատերազմյան տարիներին իրար հետևեցի կառուցվեցին միջին ու խոշոր կարողության գործարաններ, որոնք մասնագիտացան տարբեր տեսակի մեքենաների արտադրության գծով և ձեռք բերեցին միութենական նշանակություն: **1970-1988 թթ. ՀՀ-ում մեքենաշինության արտադրանքի ծավալն աճել է 3.1 անգամ, իսկ ԽՍՀՄ-ում՝ 2.4:** Մեքենաշինության և մետաղամշակման տեսակարար կշիռն ՀՀ արդյունաբերության արտադրանքի ընդհանուր ծավալում 1988 թ. կազմել է 32.1 % [28]: Այդ ցուցանիշով այն առաջ անցավ թեթև ու սննդի արդյունաբերության ճյուղերից և դարձավ առաջինը: 1980-ականների վերջերին մեքենաշինությունն ու մետաղամշակումը ՀՀ արդյունաբերության մեջ առաջին էին գրավում նաև արդյունաբերականարտադրական

անձնակազմի թվով (1988 թ.՝ 43.0 %), հիմնական ֆոնդերի ծավալով (29.9 %), ֆոնդահատումամբ, աշխատանքի արտադրողականության աճի տեսմագերով [նույն տեղում]:

Խորհրդային իշխանության վերջին տասնամյակում մեքենաշինությունն ՀՀ-ում ուներ 9 ենթաճյուղ: Դրանցից կեկտրատեխնիկականը, հաստոցաշինությունն ու գործիքաշինությունը, սարքաշինությունը, ավտոմատացման միջոցների ու կառավարման համակարգերի արտադրությունը, ռադիոարդյունաբերությունը և կեկտրոնային արդյունաբերությունն ունեին մասնագիտացման նշանակություն և որոշում էին ՀՀ տեղն աշխատանքի միութենական մասնագիտացման համակարգում:

Մեքենաշինության ճյուղի համախառն արտադրանքի գրեթե կեսը 1980-ական թթ. բաժին էր ընկնում կեկտրատեխնիկական արդյունաբերությանը: Հայաստանը տալիս էր Անդրկովկասի կեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրանքի կեսից ավելին: Խոշոր ձեռնարկություններ գտնվում էին Երևանում ու Գյումրիում: Մասնաճյուղերն էին հիմնել Կապանում, Գագարինում, Սիսիանում, Մարտունիում և այլուր:

Հաստոցաշինական և սարքաշինական արդյունաբերությանը ևս բաժին էր ընկնում Անդրկովկասում այդ ճյուղի արտադրանքի կեսից ավելին: Խոշոր ձեռնարկություններ էին Երևանի հաստոցաշինական, ֆրեզերային հաստոցների, արհեստական ալմաստների ու ալմաստե գործիքների, Զարենցավանի հաստոցաշինական և գործիքաշինական, Գյումրու հղկող հաստոցների, դարբնամալիչ սարքավորումների, Վանաձորի ճշգրիտ հաստոցների ու Արմավիրի հաստոցաշինական գործարաններն իրենց բազմաթիվ մասնաճյուղերով:

ՀՀ-ում մեքենաշինության զարգացման հեռանկարային ենթաճյուղերից է սարքաշինությունը՝ ավտոմատացման միջոցների

ու կառավարման համակարգերի արտադրությունը: Արտադրանքի ծավալով այն ԽՍՀՄ-ում գրավում էր 4-րդ տեղը:

Հատուկ տեղ ուներ կենցաղային ու արտադրական ժամացուցների արտադրությունը, որի արտադրանքի ծավալով Հայաստանը երրորդն էր Ռուսաստանից և Բելառուսից հետո [28]: Ենթաճուղի հզոր կենտրոններ էին Երևանը, Գյումրին և Վանաձորը, իսկ մի շարք փոքր ու միջին քաղաքներում կային ոչ մեծ հզորության խնդնուրույն ձեռնարկություններ կամ մասնաճյուղեր:

ՀՀ-ում մեքենաշինության ամենաերիտասարդ ու արագ աճող ենթաճյուղերից է **ռադիոէլեկտրոնային արդյունաբերությունը**, որը մասնագիտանում էր արտադրական կիրառություն ունեցող էլեկտրոնային տեխնիկայի, համակարգիչների, ռադիոսարքերի, կապի միջոցների, էլեկտրոնային մեքենաների, կիսահաղորդիչների և տարբեր տեսակի էլեմենտների արտադրության գծով: Այս ենթաճյուղը ժամանակին նկատելի դեր ուներ նախկին Խորհրդային միության պաշտպանական համալիրի զարգացման մեջ: Ներկայումս կարևոր ինդիքներ են այդ ձեռնարկությունների վերամասնագիտացումը ու արտադրության ընդլայնումը: Հայտնի էին «Հրազդանմեքենան», Երևանի «Պոլիստրոն» և «Տրանզիստոր», «Բազալտ», «Մարս», «Սիրիոս» գործարաններն ու միավորումները:

ՀՀ-ում անցած տասնամյակների ընթացքում ձևավորվել և զարգացել են նաև ավտոմոբիլների ու ավտոբուսների, կոմպրեսորների ու դարբնամամլիշ հաստոցների, զողման հարմարանքների ու վերամբարձ կրունկների, վերելակների, ոչ ստանդարտ սարքավորումների և մի շարք այլ մեքենաների ու մեխանիզմների արտադրության ճյուղերն ու արտադրությունները:

Մեքենաշինությունն արագ տեմպերով զարգացման առաջին շրջանում այն գրեթե բացառապես կենտրոնացվել էր մայրաքա-

դաք Երևանում, որը պայմանավորված էր Երևանի ինժեներատեխնիկական կադրային ներուժով ու օրավոր ավելացող աշխատուժով: Այսուհետև մեքենաշինական և մետաղամշակման ձեռնարկություններ կամ արտադրամասեր հիմնադրվեցին նաև Կապան, Գորիս, Սիսիան, Մարտունի, Գավառ, Ստեփանավան, Սպիտակ, Արթիկ, Մարտվիլ, Արմավիր, Ապարան, Վաղարշապատ քաղաքներում և մի շարք խոշոր գյուղերում (Մաստարա, Շիրակամուտ, Գեղակերտ և այլն): Գյումրի, Վանաձոր, Չարենցավան, Աբովյան, Հրազդան քաղաքները դարձան մեքենաշինության և մետաղամշակման աչքի ընկնող կենտրոններ [24]:

Վերջին երեք տասնամյակում ստեղծած տնտեսական նոր իրավիճակի, տրանսպորտային շրջափակման, անհրաժեշտ հումքի ներկրման և պատրաստի արտադրանքի առարման խափանումների, այլ երկրներում գտնվող ձեռնարկությունների հետ արտադրական կապերի խզման և սպառման շուկայի բացակայության կամ նեղացման պատճառով ՀՀ մեքենաշինական ձեռնարկությունների զգալի մասն աշխատում է իր հզորության մի փոքր մասով, մի շարք գործարաններ էլ ընդհանրապես չեն գործում:

Ներկայումս ՀՀ տնտեսության և արտահանման մեջ եավես նվազել է մեքենաշինության և մետաղամշակման բաժինը: 2020 թ. ՀՀ մեքենաշինության և մետաղամշակման մեջ թողարկվող արտադրանքներից են պատրաստի մետաղե արտադրատեսակների, համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի, էլեկտրական սարքավորանքի և այլնի արտադրությունները: **Վերջին տարիներին ՀՀ մեքենաշինության արտադրանքի մեջ աստիճանաբար ավելանում է ռազմաարդյունաբերական արտադրանքի բաժինը:** Դա հնարավորություն կտա ոչ միայն դիվերսիֆիկացնելու մեքենաշինության արտադրանքը, այլև կնպաստի մեր բանակի մարտունակության բարձրացմանը, իսկ մոտա-

կա տարիներին այդպիսի արտադրատեսակների որոշ մասը կարող է նաև արտահանվել:

2015 թ. Եվրասիական տնտեսական միության անդամակցությունը նոր հնարավորություններ է ստեղծում վերականգնելու ՀՀ մեքենաշինական որոշակի հզորությունները: Նմանատիպ հնարավորություններ կարող է ստեղծել նաև Մերձավոր և Միջին Արևելք երկրների հետ ՀՀ տնտեսական համագործակցության ընդլայնումը: Մեքենաշինության ճյուղի զարգացման համար կարևոր դեր կունենա նաև ՀՀ-ում «Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության» նախարարության ստեղծումը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ տեղ և դեր է ունեցել մեքենաշինությունը ՀՀ տնտեսության մեջ:

2. Ի՞նչ նախադրյալներ են պայմանավորել մեքենաշինության զարգացումը ՀՀ-ում խորհրդային տարիներին:

3. Կատարե՛ք ՀՀ ժամանակակից մեքենաշինության տեղաբաշխման և ճյուղային կառուցվածքի վերլուծություն:

4. Մոտակա տարիներին ՀՀ-ում մեքենաշինության զարգացումն ի՞նչ ուղղություններով պետք է տեղի ունենա:

5. Ի՞նչ նախադրյալներ կան Ձեր մարզում մեքենաշինության նորագույն ճյուղերի զարգացման համար:

4.7. Քիմիական արդյունաբերությունը

Մինչև 1920 թվականը ՀՀ-ում տնայնագործական եղանակով գլխավորապես արտադրվում էին ներկանյութեր: 1920-ական թթ. վերականգնվեցին և ընդարձակվեցին նախկին ներկատները, Երևանում կազմակերպվեց կարբիդի արտադրություն, որը շատ մեծ պահանջարկ ուներ ԽՍՀՄ-ում: 1927 թ. գործարկվեց Երևանի կարբիդի գործարանը, որը հիմք ծառայեց ՀՀ-ում քիմիական արդյունաբերության ընդլայնման ու զարգացման համար [1]:

Մեր երկրում քիմիական արդյունաբերության ձևավորման ու հետագա զարգացման համար հիմք են ծառայել հետևյալ նախադրյալները [24].

1) կրաքարի՝ որպես հումքի խոշոր պաշարների առկայությունը,

2) պրոցեսարդյունաբերության թափոնները որպես հումք օգտագործելու մեծ հնարավորությունները,

3) Էժան Էլեկտրաէներգիան, որի ավելցուկ էր նկատվում Չորագետի ջրէկի և Սևան-Հրազդան Էլեկտրակայանների կասկադի գործարկման առաջին տարիներին,

4) կերակրի աղի և գունավոր տուֆերի պաշարները որպես հումք օգտագործելու հնարավորությունները:

Երևանի և Քանաքեռի ջրէկների էժան Էլեկտրաէներգիան և Արարատի կրաքարերը հիմք ծառայեցին Երևանում, իսկ Չորագետի ջրէկի էժան Էլեկտրաէներգիան, Ալավերդու գունավոր մետաղաձուլությունը, ինչպես նաև Արարատի կրաքարերը՝ Վանաձորում ու Ալավերդիում քիմիական արդյունաբերության զարգացման համար: Գրեթե միաժամանակ սկսեցին ձևավորվել քիմիական արդյունաբերության երեք խոշոր կենտրոններ՝ Երևանը, Վանաձորը և Ալավերդին [1]:

ՀՀ քիմիական արդյունաբերության զարգացման գործում վճռական նշանակություն ունեցավ սինթետիկ կառլչուկի ձեռնարկության կառուցումը (1932-1940 թթ.): Առաջին անգամ աշխարհում սկսեցին կառլչուկ ստանալ կրաքարերի վերամշակումից: Դա գիտարտադրական խոշոր նվաճում էր:

Հետպատերազմյան առաջին տասնամյակներին քիմիական արդյունաբերության զարգացման բարձր տեմպերի շնորհիվ 1950 թ. ՀՀ բաժինը Անդրկովկասի քիմիական արդյունաբերության մեջ կազմեց 90 %, իսկ 1970 թ.՝ Աղբբեջանում և Վրաստանում այդ ճյուղի առավել բարձր տեմպերով զարգացման պատճառով՝ 47 % [1]:

Հայաստանում հենց սկզբից զարգացել են քիմիական արդյունաբերության էներգատար, նյութատար և ջրատար ճյուղերը: Սակայն Սևանի ջրային ռեսուրսների օգտագործումը էներգետիկ նպատակներով սահմանափակելու որոշումից հետո արդյունաբերության էներգատար և ջրատար ուղղությունների հետագա զարգացման համար զգացվում էր էժան Էլեկտրաէներգիայի ու ջրի խիստ պակաս: Այդ նպատակի համար չէին կարող օգտագործվել նաև Արտարասյան դաշտի ստորերկրյա ջրային պաշարները, քանի որ դրանք նախևառաջ ունեին ոռոգիչ նշանակություն, իսկ ներկրովի վառելիքի հիման վրա արտադրված Էլեկտրաէներգիան էներգատար քիմիական արդյունաբերության մեջ օգտագործելն ամենահին արդյունավետ չէր: **Ստեղծված իրավիճակը պահանջում էր փոխել քիմիական արդյունաբերության զարգացման ուղղությունը՝ զարգացնել քիչ հումքատար, ոչ էներգատար և քիչ ջրատար ուղղությունները [1]:**

1960 թվականից բնական զագի մուտքը Հայաստան հնարավորություն տվեց փոխելու ՀՀ քիմիական արդյունաբերության նախկին տեխնոլոգիական գործընթացները և ացետիլենի, ամիակի ու ամիակային պարարտանյութերի արտադրությունը կազմակերպելու բնական զագի հիման վրա:

Խորհրդային վերջին երկու տասնամյակում ՀՀ քիմիական արդյունաբերությունն ընդգրկում էր շուրջ երկու տասնյակ ձեռնարկություններ, որոնք թողարկում էին հարյուրավոր անուն արտադրանք՝ սկսած մեծածավալ հանքային պարարտանյութերից, ավտոդրոդերից ու ծծմբաթթվից, ավարտած քիմիական ռեակտիվներով, որոնց ծավալը չափվում է ընդամենը կիլոգրամներով ու գրամներով։ Այն ուներ բարդ կառուցվածք և բնութագրում էր ներճյուղային և միջայուղային արտադրական ու տեխնոլոգիական, իրար լրացնող կայուն կապերով, որոնք նպաստում էին տարածքային արտադրական համալիրի ձևավորմանը։ Այդ ժամանակաշրջանում ՀՀ քիմիական արդյունաբերությունն ուներ ենթաճյուղային հետևյալ կառուցվածքը [28]՝

1. սինթետիկ կառուցվածքի արտադրություն,
2. պոլիմերային իրերի ու պլաստմասաների արտադրություն,
3. ազոտական պարարտանյութերի, ցինամիդի, ցինապլասի և այլ նյութերի արտադրություն,
4. ծծմբաթթվի և պոլիարօքասայի արտադրություն,
5. ավտոդրոդերի և ռետինատեխնիկական իրերի արտադրություն,
6. լաքերի, ներկերի և լվացքանյութերի արտադրություն,
7. սինթետիկ կորունդի և սինթետիկ թելերի արտադրություն,
8. քիմիական ռեակտիվների արտադրություն։

Խորհրդային վերջին տասնամյակում ՀՀ քիմիական արդյունաբերության մեջ տեղի ունեցան կառուցվածքային փոփոխություններ փոքր քիմիայի ձեռնարկությունների ստեղծման շնորհիվ։ Դրանք թողարկում են քիմիական ռեակտիվներ, վիտամիններ և քիմիական սինթեզի այլ արտադրանքներ։

Բացի Երևանից, Վանաձորից և Ալավերդուց՝ քիմիական ձեռնարկություններ կային նաև Սևանում (ապակե մեկուսաքելե-

թի), Էջմիածնում (պլաստմասաների), Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում (ուստինե կոշիկների), Սպիտակում (կաշվե փոխարինիչների):

Վերջին երեք տասնամյակներին Աղբբեջանի կողմից ՀՀ տրանսպորտային շշափակման պատճառով քիմիական արդյունաբերության արտադրանքի ծավալները մեր երկրում զգայիրեն նվազել են, առանձին արտադրություններ ընդհանրապես չեն գործում: Արդեն երեք տարի է՝ ընդհանրապես չի գործում ՀՀ քիմիական արդյունաբերության հսկան՝ «Նախր» գործարանը: 2020 թ. տարեսկզբից ՀՀ կառավարությունը աշխատանքներ է տանում այդ ձեռնարկության վերագործարկման ներդրումային ծրագրերը քննարկելու ուղղությամբ: Վերջին տարիներին «Վանաձորի քիմիական գործարան» և «Վանաձորի քիմմանրաթելերի գործարան» ՓԲԸ-ների հիմքի վրա ստեղծվել է «Պրոմեթեյ-Քիմպրում» ընկերությունը: Այստեղ արտադրվում են կարբիդ, կորունդ, ամոնիակ, ացետատային ժապավեն, ացետատային թելեր, մելամին և այլն: Նախատեսվում է արտադրել նաև ազոտական պարարտանյութեր: Առաջիկա տարիներին զարգացման ներուժ ունեն ՀՀ քիմիական համալիրի մեջ մտնող Երևանի «Վիտամինների գործարան», «Կենցաղքիմ», «Պոլիպլաստ», «Ռետինատեխնիկական իրերի գործարան», «Հայներկ», «Քիմիադեղագործական ֆիրմա», Սևանի «Ապակեմեկուսիչ», Վանաձորի «Պոլիմերսուսինձ» և «Քրաուն Քեմիքալ», «Արփիմեդ», «Ֆարմատեք» և «Լիկվոր», «Շեն Կոնցեռն» ընկերությունները:

2020 թ. ՀՀ-ում արտադրվել են 21.8 հազ.տ լաքաներկային նյութեր, 5 հազ. տ լվացքի և լվացող միջոցներ, 28.4 հազ.տ պոլիմերային արտադրատեսակներ [43]:

Թեև քիմիական արդյունաբերությունը չի համարվում ՀՀ-ում տնտեսության զարգացման գերակա ուղղություն, սակայն ժամանակակից ԳՏՀ պայմաններում այն կարող է զգալի դեր

ունենալ մեր երկրի տնտեսական առաջընթացի գործում: ՀՀ-ում քիմիական արդյունաբերության հեռանկարային զարգացումը պետք է տարվի այնպիսի ուղղությամբ, որ առավելագույնս պահպանվեն նաև բնապահպանական խնդիրները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ նախադրյալներ են պայմանավորել ՀՀ-ում քիմիական արդյունաբերության զարգացումը:
2. Ճյուղային կառուցվածքի ի՞նչ առանձնահատկություններ և ինչպիսի՝ տեղաբաշխում ունի ՀՀ քիմիական արդյունաբերությունը:
3. ՀՀ-ում քիմիական արդյունաբերության զարգացման ի՞նչ հեռանկարներ ու հիմնախնդիրներ կան:

4.8. Շինանյութերի արդյունաբերությունը

Շինանյութերի արդյունաբերությունը ՀՀ-ում սկսել է ձևավորվել 1920-ական թվականներից: Այդ տարիներին շահագործվեցին Զաջուռի և Արարատի կրի, Երևանի գաջի գործարանները: 1929 թ. սկսում է արտադրանք տալ Արթիկի տուֆի հանքավայրը, որը, Արթիկ-Գյումրի երկաթօճով միանալով ընդհանուր մայրուղուն, արտադրանքն առաքում էր նաև ԽՍՀՄ հեռավոր շրջաններ [2]:

ՀՀ-ում շինանյութերի արդյունաբերությունն աճի բարձր տեմպեր ունեցավ ինդուստրացման տարիներին: 1930-ական թթ. մեկը մյուսի հետևից գործարկվեցին Երևանի մարմարի կոմբինատը, Փամբակի գրանիտի և Արարատի ցեմենտի գործարանները: Երևանի, Գյումրիի, Վանաձորի, Դիլիջանի, Լոռի-Փամբակի և Գավառի տարածքներում գործարկվեցին կղմինդրի բազմաթիվ, Երևանում և Վանաձորում՝ աղյուսի գործարաններ: 1950 թ. ձյունի համախառն արտադրանքը 1940 թ. համեմատությամբ աճել է 3.3 անգամ [1]:

Հետպատերազմյան տարիներին զանգվածային հայրենադարձությունը, բնակչության բնական բարձր աճը և արդյունաբերության աճի բարձր տեմպերը խթանեցին շինանյութերի արդյունաբերության բուռն զարգացումը: Գյումրիում կազմակերպվեց քարհատ և տաշող մեքենաների արտադրություն:

Խորհրդային վերջին տասնամյակում շինանյութերի արդյունաբերության մեկ տասնյակից ավելի խոշոր ձեռնարկություններ գործարկվեցին միայն Երևանում, մի քանիսը՝ Գյումրիում և Վանաձորում: Աբովյանում, Չարենցավանում, Սիսիանում, Քաջարանում, Ազգարակում, Արզնիում և այլ քաղաքներում կառուցվեցին երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարաններ: Ընդայնվեց ձյուղի աշխարհագրությունը:

1988 թ. շինանյութերի արդյունաբերության տեսակարար կշիռը ՀՀ արդյունաբերության համախառն արտադրանքում կազմեց ավելի քան 6 %, նրանում գրաղված էր արդյունաբերության մեջ աշխատողների մոտ 8 %-ը [28]: Տարիներ շարունակ զգալի քանակությամբ տուֆ, պեղիստներ, մասամբ նաև մարմար առարվում էին ԽՍՀՄ ամենատարբեր շրջաններ, իսկ 1970-1980-ական թթ.՝ նաև արտասահմանյան երկրներ (մասնավորապես Իտալիա): ՀՀ-ում շինանյութերի արտադրությունը վերածվեց հզոր ինդուստրիայի՝ հետևյալ ենթաճյուղերով [24].

- 1) բնական քարանյութերից որմնանյութերի և երեսպատման իրերի արտադրություն,
- 2) բնական լցանյութերի արտադրություն,
- 3) կապակցող նյութերի արտադրություն,
- 4) երկաթքետոնե հավաքովի կոնստրուկցիաների արտադրություն,
- 5) ծածկանյութերի և ազբեստախողովակների արտադրություն,
- 6) հախճաղակու և ապակե իրերի արտադրություն:

Բնական քարանյութերից որմնանյութերի արտադրության ենթաճյուղում հիմնականը տուֆաքարից որմնանյութերի արտադրությունն է: Խոշորագույն ձեռնարկությունը եղել և մնում է «Արթիկտուֆ» կոմբինատը: Վերջինիս արտադրանքը զգալիորեն արտահանվել է Մոսկվա, Ս. Պետերբուրգ, Դոնի Ռոստով, Կիև, Տաշքենդ, Թրիլիսի և բազմաթիվ այլ քաղաքներ [24]: Տուֆաքար արդյունահանող ձեռնարկություններ են գործում նաև Պեմզաշենում, Անիվեսզայում, Թալինի, Ախուրյանի, Աշտարակի, Արմավիրի և Բաղրամյանի տարածաշրջանների հանքավայրերում: Դեկորատիվ յուրահատուկ հատկություն ունեցող ֆելզիտային տուֆ արդյունահանվում է Նոյեմբերյանի, Թումանյանի և Վայքի տարածաշրջանների հանքավայրերում [24]: 2020 թ. ՀՀ-ում ար-

տաղրվել է 89.5 հազ. տ հրաբխային տուֆ, որը 2019 թ. ծավալը գերազանցում է ավելի քան 21%-ով:

Իրենց նշանակությամբ և որմնանյութերի ընդհանուր ծավալում երկրորդ տեղը զբաղեցնում են **բազալտի քարատեսակները**: Դրանք օգտագործվում են շենքերի հիմքերի ստորին հարկերի կառուցման համար, իսկ առանձին շենքեր, կամուրջներ, պարիսպներ ամբողջությամբ կառուցվել են բազալտով: **Բազալտի քարանյութ** արդյունահանվում և արտադրվում են Գորիսի, Սիսիանի, Սևանի, Վարդենիսի, Գավառի, Մարտունու, Աբովյանի, Հրազդանի, Աշտարակի, Ախուրյանի, Գուգարքի տարածաշրջանների և այլ վայրերի հանքավայրերում [նույն տեղում]:

Մարմարի Արարատի, Խոր Վիրապի, Արգական-Աղվերանի, Մայմենի, Իջևանի, Մարմարաշենի, Արտավազոյի, Թեղուտի (Դիլիջանի տարածաշրջան) հանքավայրերից արդյունահանվող արժեքավոր տեսակները մշակվում են Նուռնուսի քարամշակման գործարանում:

ՀՀ-ում **գրանիտի** շահագործվող հանքավայրերից է **Փամբակի հանքավայրը**, հեռանկարային է Լերմոնտովոյի հանքավայրը: Գրանիտը ևս հիմնականում մշակվում է Նուռնուսի քարամշակման գործարանում:

Հանրապետության քար արդյունահանող և մշակող բազմաթիվ ձեռնարկություններում արտադրվում են **երեսպտման սալեր տուֆից, բազալտից և տրավերտինից**: **Բնական լցանյութերը** լինում են պինդ՝ բազալտից ու գրանիտից, և թեթև՝ պեմզայից, պեղլիտից, տուֆից, հրաբխային խարամից: Բացի այդ՝ պեղլիտը քիմիական վերամշակման ձանապարհով օգտագործվում է բյուրեղապակի ստանալու համար: Թեթև լցանյութեր արտադրող առավել նշանավոր կենտրոններ են Արագածը, Անիպեմզան, Պեմզաշենը [28]: Այդպիսի ձեռնարկություններ կան նաև Քարակերտի, Շինուհայրի, Քարահունջի, Գավառի, Լճաշենի, Ջրաբերի, Չարեն-

ցավանի հանքավայրերում: Արթիկում, Պեմզաշենում, Թալինի և Աշտարակի հանգույցներում և այլ վայրերում գտնվող տուֆի հանքավայրերում կատարվում է տուֆի լցանյութերի արտադրություն:

Կապակցող նյութերից ՀՀ-ում արտադրում են ցեմենտ, զագ, կիր: Ցեմենտի խոշոր ձեռնարկություններ կան Արարատում և Հրազդանում, որոնք աշխատում են Արարատի կրաքարի պաշարների հիման վրա: 2020 թ. մեր երկրում արտադրվել է մոտ 715 հազ. տ ցեմենտ, 28.5 հազ. տ զագ և 50 հազ. տ կիր: Գաջի արտադրությունը կենտրոնացված է Երևանում, որտեղ գործում են երկու գործարաններ, և Արգնիում: Կիր արտադրվում է հիմնականում Արարատի ցեմենտշիֆերի կոմբինատի համակարգում, Իջևանում, Կապանում, Երևանում, Զաջուռում: Ներկայումս կիրն առավելապես օգտագործվում է քիմիական արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ, ինչպես նաև այլ բնագավառներում [24]:

Երկարթետոնե իրերի և հավաքովի կոնստրուկցիաների արտադրությունը ՀՀ-ում սկսել է ձևավորվել 1950-ական թվականներից, սակայն բուռն զարգացում է ունեցել 1970-1980-ական թթ.: 1980-ական թթ. գործում էր երկարթետոնե հավաքովի կոնստրուկցիաների և իրերի 50-ից ավելի ձեռնարկություն Երևանում (թվով 25), Գյումրիում, Վանաձորում, Իջևանում, Արտաշատում, Հրազդանում, Սևանում, Կապանում և այլ քաղաքներում [նույն տեղում]: Այս ենթաճյուղի ձեռնարկությունները տեղաբաշխված են խոշոր ծավալի կապիտալ շինարարության շրջաններում: Ծածկանյութերի և ագրեստախողովակների արտադրությունը ՀՀ-ում կազմակերպվել է 1950-ական թվականներից Արարատի ցեմենտշիֆերի կոմբինատում: ՀՀ տարբեր վայրերում որպես ծածկանյութ արտադրվում և օգտագործվում է կղմինդրը: Ներկայումս այդպիսի դեր են կատարում նաև Քանաքեռի ալյումինի

գործարանի արտադրած թիթեղասալերը: 2020 թ. արտադրվել են 87.7 հազ. տ հավաքովի կոստրուկցիաներ:

Ապակու և հախճապակու արդյունաբերության ենթաճյուղի գլխավոր արտադրատեսակներից են ապակե շշերը, բանկաները, էլեկտրաշահերը, կենցաղային օգտագործման բյուրեղապակե և ձենապկե իրերը: Խոշոր ձեռնարկություններ կան Արգնիում, Բյուրեղավանում, Արտաշատում, կերամիկական իրերի գործարանը՝ Երևանում: 2020 թ. արտադրվել են 163.4 հազ. տ շշեր, բանկաներ, սրվակներ և ապակուց այլ տարաներ (բացի դեղասարվակներից):

Շինանյութերի արտադրությունը մեծ ազդեցություն է թողնում բնական միջավայրի վրա: Քանի որ դրանց հանույթը կատարվում է բաց հանքերում, որոնք ընդգրկում են փոքր խորության, բայց ընդարձակ տարածք: Այդ պատճառով գյուղատնտեսական ընդարձակ տարածքներ դուրս են մնում օգտագործումից:

Ներկայումս ՀՀ-ում շինանյութերի արդյունաբերության զարգացման հիմնական խնդիրը բնական միջավայրն անխարքար պահելու, բնական ռեսուրսները խնայողաբար և արդյունավետ օգտագործելն է: Այդ նպատակով անհրաժեշտ է կատարելագործել շինանյութերի տարբեր տեսակների արդյունահանման և մշակման աշխատանքները, լրիվ յուրացնել թափոնները և սպառված հանքավայրերը նախապատրաստել գյուղատնտեսական օգտագործման:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է շինանյութերի արդյունաբերության տեղն ու դերը ՀՀ տնտեսության մեջ:

2. Ի՞նչ պայմաններ ու գործոններ են պայմանավորել ՀՀ-ում շինանյութերի արդյունաբերության առանձին ճյուղերի զարգացմանը:

3. ՀՀ-ում շինանյութերի արդյունաբերությունը տեղաբաշխման ի՞նչ առանձնահատկություններ ունի:
4. Բնութագրե՛ք ՀՀ շինանյութերի արդյունաբերության հիմական ձյուղերը:
5. Շինանյութերի արդյունաբերության զարգացմանն առնչվող ի՞նչ հիմնախնդիրներ կան ՀՀ-ում:

4.9. Թեթև արդյունաբերությունը

Մեր երկրում թեթև արդյունաբերությունն ինդուստրիալ հիմքերի վրա է դրվել և բուռն զարգացում է ունեցել խորհրդային տարիներին: Ունենալով սեփական հումքային անհրաժեշտ բազա՝ թեթև արդյունաբերությունը 1920-ական թվականներից ունեցել է աճի բարձր տեմպեր և զգալի բաժին ՀՀ արդյունաբերական արտադրանքի մեջ: **1988 թ. ՀՀ թեթև արդյունաբերությանը բաժին էին ընկնում բամբակյա, բրոյա, մետաքսյա գործվածքների, բամբակյա մանվածքի, գուլպեղենի, տրիկոտաժեղենի, պատրաստի հագուստի, գլխարկների, ձեռնոցների, գորգերի, կաշվի, կոշկեղենի, գալանտերիայի և բազմաթիվ այլ արտադրանքների արտադրության ավելի քան 120 ձեռնարկություններ, որոնք թողարկում էին 260-ից ավելի ապրանքատեսակ: Ճյուղի արտադրանքից արտահանվում էր բոլոր տեսակի գործվածքների, տրիկոտաժեղենի, գուլպեղենի և կոշկեղենի շուրջ 75, պատրաստի հագուստի՝ 50 %-ից ավելին [նույն տողում]:**

Խորհրդային իշխանության վերջին տասնամյակներին ՀՀ թեթև արդյունաբերությունն ուներ շրջանային ապրանքայնության բարձր գործակից և ակտիվ մասնակցություն ԽՍՀՄ աշխատանքի տարածքային բաժանման համակարգում:

Տեքստիլ արդյունաբերության ենթաճյուղի առաջին ձեռնարկությունը գործարկվել է Գյումրիում 1924 թ. **բամբակեղենի** արտադրության և տեքստիլ կոմբինատի կազմակերպմամբ [1]: Բամբակեղենի արտադրության հայտնի ձեռնարկություններից էին նաև Գյումրիի մանվածքային ֆաբրիկան, Երևանի «Արագած» արտադրական միավորումը, դեկորատիվ գործվածքների ֆաբրիկան: Զգալի քանակությամբ բամբակյա գործվածքներ արտադրվում էին նաև Մարալիկի ու Ալավերդու ձեռնարկություններում:

Բրդեղենի արդյունաբերությունը մասնագիտացված էր բարձրորակ արտադրանքների գծով (նուրբ գործվածքներ, մահուղ): Խոշոր ձեռնարկությունները զտնվում էին Երևանում: Դրանցից էին նուրբ բրդյա և մահուղի ֆաբրիկաները: Այս ենթաճյուղին էին պատկանում նաև Խջեանի գորգագործական ֆաբրիկան և Երևանի «Հայգորգ» միավորումը՝ իր Մասիսի, Գյումրիի, Ստեփանավանի, Արթիկի, Գավառի, Վարդենիսի, Մարտունու, Մեծավանի, Եղեգնաձորի և Գորիսի և այլ բաժանմունքներով [2]:

ՀՀ տեքստիլ արդյունաբերության կարևոր ենթաճյուղերից էր **մետաքսյա գործվածքների** արտադրությունը: Հնում Հայաստանում զարգացած էր շերմապահությունը, որի արտադրանքից՝ բոժոժից, ստացվում էր մետաքսաթել: Այդ գործընթացը շարունակվում էր նաև խորհրդային առաջին տասնամյակներին: Երևանում գործում էր **մետաքսի խոշորագույն կոմբինատ** ներկրովի հումքի հիման վրա: Դրա հետ միաժամանակ Վանաձորում արտադրվում էր արհեստական մանրաթել, որը ևս օգտագործվում էր Երևանի մետաքսի կոմբինատում: Այդ կոմբինատն արտադրական կապերի մեջ էր Ստեփանավերտի մետաքսի կոմբինատի հետ, որտեղից ստանում էր կիսաֆաբրիկատ:



Նկ. 6. Տեսարան «Ալեքս տեքստիլ» ձեռնարկության արտադրամասից

ՀՀ-ն ու ԱՀ-ն ունեն բնական մետաքսի արտադրության հնարավորություններ և կարող են մետաքսի արտադրությունն ապահովել տեղական բնական հումքով [24]:

Խորիրդային տարիներին Հայաստանի տեքստիլ արդյունաբերության մեջ համախառն արտադրանքով առաջինը **տրիկոտածեղենի ու գուլպեղենի արտադրությունն էր**[1]: Խոշորագույններից էին Վանաձորի տրիկոտաժի և Գյումրիի գուլպեղենի արտադրական միավորումները, Երևանի և Արարատի տրիկոտաժի ֆաբրիկաները, Երևանի թիվ 1 և Նուբարաշենի տրիկոտաժի արտադրական միավորումները, Երևանի ձեռնոցների արտադրական միավորումը՝ իրենց բաժանմունքներով, Գորիսի տրիկոտաժի ֆաբրիկան և այլն:

2020 թ. ՀՀ-ում արտադրվել են 19.3 հազ. գույզ գուգագուլպա, գուլպա, կիսագրուլպա և տրիկոտաժե այլ արտադրանքներ: Խոկ տրիկոտաժե մնացած արտադրանքը կազմել է ավելի քան 8.9 հազ. տ:

Կարի արտադրության զարգացումը հետպատերազմյան ժամանակաշրջանում զգալիորեն կապված էր ներգաղթի հետ: Խոշոր ձեռնարկություններից էին Երևանի «Գարուն», «Գյումրիի» և Վանաձորի կարի արտադրական միավորումները՝ իրենց բաժանմունքներով, Ալավերդու, Արթիկի, Գավառի և Չարենցավանի կարի ֆաբրիկաները և այլն [2]: Խորհրդային տարիներին մեր երկրում թերև արդյունաբերության բարձր մակարդակի հասած ճյուղերից էր կաշվի-կոշկեղենի արդյունաբերությունը: Ենթաճյուղի զարգացման գործում մեծ դերն է ունեցել հայրենադարձությունը: ՀՀ-ում արտադրված կոշկեղենը մեծ պահանջարկ ուներ ԽՍՀՄ-ում և արտահանվում էր նաև տարբեր երկրներ: ՀՀ-ում ձևավորվել էր կաշվե-կոշկեղենի արտադրության երեք խոշոր միավորում («Մասիս», «Նախիջ», «Լյուրս»)՝ բազմաթիվ ձեռնարկություններով [24]: Կոշկեղենի արտադրության խոշոր կենտրոններ էին Երևանը, Գյումրին, Վանաձորը:

Հայաստանում հազարամյակների պատմություն ունեցող կաշեգործությունը գործարանային արտադրություն է ունեցել XIX դարի վերջերին: 1980-ական թթ. այս ենթաճյուղն ուներ արտադրական երկու խոշոր ձեռնարկություն՝ բազմաթիվ մասնաճյուղերով: Խոշորագույնը Երևանի կաշվի արտադրական միավորումն էր:

ՀՀ տնտեսական զարգացման ժամանակակից փուլում հույժ կարևոր խնդիր է վերականգնել թերև արդյունաբերության ձեռնարկությունների նախկին հզորությունները և բնակչությանն ապահովել տեղական որակյալ արտադրանքով:

Վերջին տարիներին ՀՀ թերև արդյունաբերության կառուցվածքում առավել զարգացած ենթաճյուղերից են հազուստի, կաշվի, կաշվե և մանածագործական արտադրատեսակների արտադրությունը: Միայն 2014-2019 թթ. հազուստի արտադրության ծավալը ավելացել է ավելի քան 3.8 անգամ և 2019 թ. կազմել է

27714 մլն դրամ, իսկ մանածագործական արտադրատեսակների արտադրության ծավալն այդ ընթացքում ավելացել է 2.5 անգամ և 2019 թ. կազմել է 1368 մլն դրամ: 2019 թ. ՀՀ-ում արտադրվել են մոտ 2000 մլն դրամի կաշի և կաշվե արտադրատեսակներ: Ներկայումս ՀՀ-ում գործող թերթն արդյունաբերական խոշոր ձեռնարկությունները տեղաբաշխված են Երևանում, Շիրակի, Լոռու, Կոտայքի և Տավուշի մարզերում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ կարենրություն ունի թերթն արդյունաբերությունը ՀՀ տնտեսության մեջ:
2. Ի՞նչ նախադրյաներ են պայմանավորել ՀՀ-ում թերթն արդյունաբերության զարգացումը:
3. Կատարե՛ք ՀՀ թերթն արդյունաբերության տեղաբաշխման և ճյուղային կառուցվածքի վերլուծություն:
4. Ի՞նչ գործոններ են պայմանավորել թերթն արդյունաբերությունը համարել ՀՀ տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը:

4.10. Մննդի արդյունաբերությունը

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին սննդի արդյունաբերությունը ՀՀ առավել զարգացած ճյուղերից էր: Դա պայմանավորված էր ճյուղի զարգացման համար կապիտալ ոչ մեծ ներդրումների պահանջով և Հայաստանում բարձրորակ խաղողի, պտուղների, ավելի ուշ՝ նաև բանջարեղենի մշակությամբ: Դրանց հիման վրա ձեւավորվեցին գինու, կոնյակի, պահածոների այն ժամանակվա համար խոշոր արտադրություններ: Դրանցից ամենախոշորը ուստի գործարար Շուտովի կոնյակի և գինու գործարանն էր Երևանում, որը 1887 թ. հիմնել էր Ն. Թափրովը: Հայաստանում և նրա սահմաններից դուրս մեծ համբավ ունեին «Սաղերա», «Սուսկաթ», «Կազոր», «Պորտվեյն», «Երևանի սպիտակ», «Դալմա» և այլ տեսակի գինիները [24]:

Բացի գինու-կոնյակի արտադրությունից՝ Հայաստանում XIX դարի վերջերից հիմնվեցին պահածոների տարբեր տեսակներ արտադրող ձեռնարկություններ (Մեղրում, Երևանում), գործարանային հիմքերի վրա դրվեց շվեյցարական պանրի արտադրությունը, հիմնադրվեցին գարեջրի գործարաններ, կազմակերպվեց հացի գործարանային արտադրություն:

80-ական թթ. սննդի արդյունաբերությունը Հայաստանում արդյունաբերության համախառն արտադրանքի ծավալով զիջում էր միայն մեքենաշինությանն ու թեթև արդյունաբերությանը: Այն միավորում էր գինու-կոնյակի, ալրադացային, հացարուկեղենի, հրուշակեղենի, կաթնամթերքի վերամշակման, մսի, մսամթերքի, պտղի ու բանջարեղենի պահածոների, սպիրտի, օղու, գարեջրի, ոչ ալկոհոլային խմիչքների, հանքային ու զովացուցիչ ջրերի, շաքարի, ձեթ-օճառի, կերակրի աղի, սողայի, ալյուրի, եթերայուղի, հանքային ջրերի, ծխախոտի և այլ արդյունաբերական ձեռնարկություններ: Դրանց մի զգալի մասը եղել է միութենական նշա-

նակության, աչքի ընկել տեխնիկական հազեցվածությամբ և արտադրական բարձր մակարդակով:

Ներկայումս ՀՀ-ում կան սննդի արդյունաբերության արտահանման նշանակություն ունենող ճյուղեր և ենթաճյուղեր, որոնք զարգանում են տեղական հումքային բազայի հիման վրա: Այդ ճյուղերը կազմում են արտադրությունների երեք խումբ՝ գինուկոնյակի, մրգի ու բանջարեղենի պահածոների և հանքային բուժիչ ջրերի:

ՀՀ-ում գինու-կոնյակի արդյունաբերության ձեռնարկություններ արտադրում են մի քանի տասնյակ անուն կոնյակներ, սովորական և թնդեցված գինիներ, շամպայն-գինիներ, օղուտարբեր տեսակներ, ալկոհոլային այլ խմիչքներ:

ՀՀ-ում գինու-կոնյակի արտադրության գլխավոր խնդիրն է զարկ տալ բարձրորակ կոնյակների ու գինիների արտադրությանը և ապահովել արտադրանքի մրցունակություն արտաքին շուկայում:

Գինու-կոնյակի ձեռնարկությունները տեղաբաշխված են հիմնականում հումքի արտադրության շրջաններում: Այդ առումով առանձնանում է Արարատյան դաշտը, որտեղ գտնվում են ՀՀ գինու-կոնյակի առավել խոշոր և հայտնի ձեռնարկությունները: Կոնյակի արտադրությունը կենտրոնացված է Երևանում, որտեղ կա այդ ապրանքատեսակի արտադրության երկու խոշոր գործարան: Գործարաններ կան նաև Եղվարդում, Արտաշատում և Ոսկեվագում: Գինիների արտադրություն կա Երևանում, Վաղարշապատում, Արտաշատում, Աշտարակում, Վեդիում, Արմավիրում, Այգավանում, Երասխում, Արտենիում, Օշականում:

Միջազգային ճանաչում ունեն «Նաիրի», «Հոբելյանական», «Հայաստան», «Ախթամար», «Նոյ» և այլ կոնյակներ:

Հանրապետության խաղողագործական մյուս շրջանների գործարաններն ավելի փոքր են: Այդպիսիք կան Բերդում, Իջևանում, Մեղրիում, Եղեգնաձորում, Գետափում, Արենիում:

Երևանի գինու կոմբինատում պահպում են 1890-ական թթ. մինչև այժմ արտադրված գինու բոլոր տեսակների նմուշները, իսկ Երևանի կոնյակի գործարանում՝ ավելի քան 120 տարվա հնություն ունեցող կոնյակ: 2020 թ. ՀՀ-ում արտադրվել են 39200 հազ. լիտր կոնյակ, 11000 հազ. լիտր խաղողի գինիներ, 5105.5 հազ. լիտր օղի, լիկյոր և սպիրտային այլ խմիչքներ: Միայն 2019 թ. կոնյակի արտադրությունը 2018 թ. համեմատությամբ ավելացել է 41, գինունը՝ 31.6 %-ով [17]:

Գարեջրի և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրությունը ՀՀ-ում հատկապես ավելացել է 1950-ական թվականներից հետո: Խորհրդային տարիներին գարեջրի խոշոր գործարաններ են կառուցվել Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Ալավերդիում, Գորիսում, Աբովյանում, Վարդենիսում: Ներկայումս առավել հայտնի են «Կիլիկիա», «Կոտայք», «Գյումրի», «Էրեբունի» ապրանքանիշներով գարեջրերը: 2020 թ. ՀՀ-ում արտադրվել է 23483.3 հազ. լիտր գարեջուր, իսկ ոչ ալկոհոլային խմիչքների արտադրությունը կազմել է 110907 հազ. լիտր: Կենտրոններն են Գյումրին, Երևանը, Աբովյանը, Սևանը, Դիլիջանը:



Նկ. 7. Երևանի «Արարատ» կոնյակի գործարանի հնեցման
արտադրամասը

Ոչ ալկոհոլային խմիչքներից ՀՀ քաղաքային բնակավայրերի մեջ մասում կա լիմոնադի արտադրություն: Երևանում գործում են զովացուցիչ «Ֆանտա», «Կոկա-Կոլա» և այլ ջրերի արտադրության ձեռնարկություններ: Կատարվում է «Ջերմուկ», «Բջնի», «Դիլիջան», «Արգնի» և «Արարատ» հանքային ջրերի շահագում: 2020 թ. կատարվել է 46 մլն լիտր հանքային ջրերի շահագում: Դրանց առավել խոշոր գործարանները գտնվում են Ջերմուկում, Արգնիում, Չարենցավանում, Դիլիջանում:

Մրգի ու բանջարեղենի պահածոների արտադրությունը մեր երկրում արագորեն սկսել է զարգանալ 1950-ական թվականների վերջերից, երբ ցանքաշրջանառությունից աստիճանաբար դուրս էր մղվում բամբակենին, և ազատված հողատարածքները զբանացվում էին պտղատու այգիներով ու բանջարաբուտանային մշակաբույսերով:

ՀՀ պահածոների արդյունաբերությունն արտադրում է մրգի և բանջարեղենի բազմազան պահածոներ՝ հյութեր, կռմպոտներ, շեմեր, մուրաբաներ, սմբուկի խավիար, վարունգի ու լոլիկի թթուներ, տոմատի մածուկ և այլ արտադրատեսակներ, որոնք առանձնանում են համայն լայն հատկանիշներով և արտահանվում են տարբեր երկրներ:

2019 թ. արտադրվել է 13532 հազ. լիտր, իսկ 2020 թ.՝ 11814 հազ. լիտր մրգահյութեր և բաջարահյութեր:

Պահածոների արտադրության կենտրոնները հիմնականում համընկնում են գինու-կրնակի արտադրության կենտրոններին (բացառություն է կազմում Նոյեմբերյանի շրջանը, որտեղ գտնվում էր պահածոների արտադրության խոշորագույն ձեռնարկություններից Այրումի գործարանը): Հայտնի ձեռնարկություններից են Արմավիրի, Երևանի, Մասիսի, Արտաշատի, Մեղրու, Իջևանի, Այրումի, Վանաձորի, Կապանի, Մարտունու, պահածոների գործարանները: Սննդի արդյունաբերության այս ենթաճյուղը զարգացման և ընդլայնման առավել բարենպաստ նախադրյաններ ու հեռանկար ունի: Դա պայմանավորված է որակայլ հումքային բազայի առկայությամբ և ԵԱՏՄ ՀՀ անդամակցությամբ՝ արտահանման շուկայի ընդլայնմամբ:

Կաթնեղենի կամ կաթնամթերքի տարբեր տեսակներից մեր նախնիները տնայնագործական եղանակով պատրաստել են մածուն, պանրի տարբեր տեսակներ, կաթնաշոռ, կարագ, յուղ: Դրանց մեջ առանձնապես աչքի են ընկել բարձրորակ պանիրները:

ՀՀ ներկայիս տարածքում գործարանային եղանակով կաթի մշակումը, պանրի ու կենդանական յուղի արտադրությունը կազմակերպվել են XIX դարի երկրորդ կեսերից: Առանձնապես հայտնի էին Լոռիում արտադրված պանիրներն ու կենդանական յուղը: Այստեղ 1913 թ. կային երկու տասնյակից ավելի գործա-

րաններ, իսկ Հայաստանի ամբողջ տարածքում այդպիսիք 60-ն էին: Հայկական պանրի շուրջ 80 %-ը արտահանվում էր [24]:

Խորհրդային տարիներին պանրագործական ձեռնարկություններ կային անասնապահական համապատասխան արտադրանքով աշքի ընկնող Տաշիրի, Սիսիանի, Ստեփանավանի, Մարտունու, Գորիսի, Թումանյանի, Ամասիայի, Աշոցքի, Վարդենիսի, Արագածի, Ապարանի, Կրասնոսելսկի, Գալատի, Սպիտակի, Վայքի, Եղեգնաձորի և այլ տարածաշրջաններում:

Ներկայումս ՀՀ-ում արտադրվող պանիրներից առավել հայտնի են «Լոռի», «Չանախ», «Եղեգնաձոր», «Հոլանդական», «Ռոկֆոր» տեսակները: 2020 թ. ՀՀ-ում արտադրվել է 223.5 հազ. տ պանիր, 1442.5 տ կարագ և կաթնային մածուկներ, 7755 հազ. լիտր հեղուկ, մշակված կաթ [43]:

Հրուշակեղենի և մակարոնեղենի արտադրությանը խորհրդային տարիներին բաժին էր ընկնում Հայաստանի սննդի արդյունաբերության համախառն արտադրանքի 7 %-ը, ձեռնարկությունները տեղաբաշխված էին բազմաթիվ բնակավայրերում: Ներկայումս ենթաճուրում խոշորագույնը «Գրանդ Քենտրի» ընկերությունն է: 2020 թ. երկրում արտադրվել է 9733 տ շոկոլադե և շաքարե հրուշակեղեն, 6468 տ՝ մակարոնեղեն և համանման այսուե արտադրատեսակներ:

Մսեղենի արտադրությունը Հայաստանում գործարանային հիմքերի վրա է դրվել 1930-ականներին, թեև շատ վաղ ժամանակներից տնայնագործական եղանակով արտադրվել են ապուխտ (բաստուրմա), սուզուխ, տհալ (դավուրմա) [1]:

Մսամթերքի առաջին խոշոր ձեռնարկությունները կառուցվել են Երևանում և Գյումրիում: 1950-ական թվականներից հետո մսի խոշոր կոմբինատներ են կառուցվել նաև Վանաձորում, Կապանում, Գավառում:

Մսեղենի արտադրության ձեռնարկությունների տեղաբաշխման վրա վճռական ազդեցություն են թողնում սպառման շուկայի մոտիկ գտնվելը և վայրի SUԴ-ը: Հայաստանում մսեղենի արտադրությունն առավելապես բավարարել է ներքին շուկան և ունեցել է սուլ հումքային բազա, կախվածություն ներմուծվող հումքային ռեսուրսներից:

Արդեն երկուտակես տասնամյակից ավելի է՝ ՀՀ-ում ստեղծվել են մսամթերքի արտադրության մասնավոր ընկերություններ, որոնք աշխատում են առավելապես ներմուծվող հումքի հիման վրա: Դրանցից առավել հայտնի են «Բարի Սամարացի», «Սուշ», «Աթեն» ընկերությունները: Ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ հիմա ՀՀ մսեղենի արտադրությունը չի բավարարում տեղական պահանջները: 2020 թ. արտադրվել է 85.3 հազ. տ թարմ կամ պաղեցված միս, 12.6 հազ. տ՝ երշիկեղեն:

Ալրադացի արդյունաբերությունը ՀՀ-ում կենտրոնացված է հարմար SUԴ ունեցող վայրերում՝ Երևանում, Լեռնազոգում, Սևանում, Արմաշում: Մինչև 1988 թ. երկրաշարժն ալրադաց-ձեռնարկություն կար նաև Սպիտակում, որը երկրաշարժից լիովին ավերվեց: Ներկայումս այստեղ կառուցվել է ալրադացի նոր գործարան: Ալրադաց-ձեռնարկություններից խոշորագույնը Երևանի կոմբինատն է, որը բավարարում է մայրաքաղաքի, հարակից շրջանների, ինչպես նաև Վայոց ձորի և Սյունիքի մարզերի հացի գործարանների պահանջները: Սևանի և Լեռնազոգի կոմբինատները բավարարում են ՀՀ մնացած շրջանների պահանջները: 2020 թ. ՀՀ-ում արտադրվել է 199.6 հազ. տ այլուր:

ՀՀ-ում արտադրվող հացահատիկը լավագույն դեպքում բավարարում է ներքին պահանջարկի մինչև 40 %-ը, մնացածը ներմուծվում է:

Ձերի (բուսական յուղի) արտադրությունը մեր երկրում մեծ ծավալներ չի ունեցել: Այն կազմակերպվել է Ռուսաստանից և

Ուկրաինայից ներմուծվող արևածաղիկի կիսաֆարբիկատի հիման վրա: Խոշոր ձեռնարկությունը Երևանի ձեթ-օճառի կոմբինատն էր, որը թողարկում էր նաև օճառ և այլ արտադրատեսակներ: Այժմ գործում են նաև ձեթի արտադրության այլ ձեռնարկություններ:

Եթերայուղերի արտադրությունը ՀՀ-ում հիմնված էր Արմավիրի և Էջմիածնի տարածաշրջաններում խորդենու մշակության վրա [2]: Ներկայումս ՀՀ-ում խորդենու մշակությունը դադարեցված է, սակայն առկա են բոլոր նախադրյալները՝ այն վերականգնելու և շահութաբեր արտադրություն դարձնելու համար:

Շաքարի արդյունաբերությունը ՀՀ-ում կազմակերպվել է Շիրակի դաշտում և Սալիտակի շրջանում մշակվող շաքարի ձակնդեղի հիման վրա: 1988 թ. երկրաշարժը փլատակների վերածեց նաև շաքարի գործարանը, որից հետո այն չի վերականգնվել: Ներկայումս Ախուրյանում շահագործման է հանձնվել շաքարի նոր գործարան: 2019 թ. երկրում արտադրվել է մոտ 60 հազ. տ շաքար:

Ծխախոտի արտադրությունը որոշ առումով նմանվում է սննդարդյունաբերության ճյուղերին: Ծխախոտի արտադրության խոշոր ձեռնարկությունները գտնվում են Երևանում և Մասիսում: 2019 թ. ՀՀ-ում արտադրվել են 33874 մլն սիզարետներ, սիզարներ, ծխազլանակներ և համանման արտադրատեսակներ, 2020 թ.՝ 28171 մլն հատ:

ՀՀ սննդի արդյունաբերության մեջ առանձնահատուկ տեղ ունի **կերակրի աղի** արտադրությունը, որի համար հումք է Երևանի տարածքում գտնվող Ավանի աղահանքը: Այստեղ կատարվում է քարաղի հանույթ, մաքրում և աղի լուծույթի թորման միջոցով բարձրորակ խոհանոցային աղի ստացում: Խորհրդային տարիներին մեծ քանակությամբ կերակրաղ սպառվում էր քլորոազե-

նային սինթետիկ կառչուկի արտադրության համար: 2020 թ. արտադրվել է 28159 տ սեղանի աղ:

Մննդի արդյունաբերության մյուս ենթաճյուղերը, որոնք բնակչությանն ապահովում են ամենօրյա սպառման սննդամթերքի տարբեր տեսակներով (թարմ կաթ, հաց, հացաբուլկեղին, ոչ ալկոհոլային խմիչքներ և այլն), տեղաբաշխված են բոլոր քաղաքային բնակավայրերում և զյուղական բնակավայրերի զգալի մասում:

Այսպիսով՝ սննդի արդյունաբերությունը զգալի տեղ է զբանացնում ՀՀ արդյունաբերության մեջ և բնութագրվում է բազմազանությամբ: Ինչպես ներկայումս, այնպես էլ հետագա տարիներին այն մնալու է ՀՀ տնտեսության զարգացման գերակա ձյուղերից մեկը:

Հարցեր և առաջարրանքներ

1. Բնութագրե՛ք ՀՀ սննդի արդյունաբերության զարգացման հումքային բազան:

2. Կատարե՛ք ՀՀ սննդի արդյունաբերության ձյուղային կառուցվածքի վերլուծություն:

3. Ի՞նչ առանձնահատկություններ ունի ՀՀ սննդի արդյունաբերության տեղաբաշխումը:

4. Հեռանկարում ինչպիսի՞ն պետք է լինի սննդի արդյունաբերության զարգացումը ՀՀ-ում:

4.11. Արդյունաբերության նորագույն ձյուղեր

1950-ական թթ. համաշխարհային տնտեսության մեջ տեղի են ունեցել արմատական տեղաշարժեր. տնտեսության տարբեր ոլորտներում սկսեցին ներդրվել ԳՏՀ նվաճումները, գիտության սրբնթաց զարգացման շնորհիվ այն դարձավ անմիջական արտադրողական ուժ, բացահայտումների ինդուստրիա, տեխնիկայի զարգացման հզոր խթան: Տնտեսապես զարգացած երկրներում սկսեցին ձևավորվել «գիտություն-արտադրություն», «կրթություն-գիտություն-արտադրություն» համակարգերը: Վերջիններիս շնորհիվ ինդուստրիալ զարգացած երկրներում ձևավորվել են գիտաարտադրական խոշոր կենտրոններ և տեխնոլոգիաներ, որոնք իրականացնում են գիտահետազոտական և նախազգափորձարարական խոշոր ծրագրեր: Նրանք մասնագիտանում են համակարգչային տեխնիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների, ռադիոէլեկտրոնիկայի, կենսատեխնոլոգիաների և լազերային տեխնիկայի ծրագրերի մշակման և դրանց արդյունքները տնտեսության տարբեր ոլորտներում ներդնելու ուղղությամբ:

Դեռևս խորհրդային տարիներին մեր երկրում կային բավարար նախադրյալներ գիտատար ու որակյալ աշխատուժ պահանջող, ոչ նյութատար և ոչ էներգատար ձյուղերի զարգացման համար: Այդ առումով կարևոր դեր ունեին Երևանի պետական համալսարանը և Պոլիտեխնիկական ինստիտուտը (Ճարտարագիտական համալսարանը), որոնք որակյալ կազմեր էին պատրաստում՝ այդ ոլորտները զարգացնելու համար: Այդ ամենի շնորհիվ Հայկական ԽՍՀ-ն խորհրդային տարիներին դարձել էր ռադիո և էլեկտրոնային արդյունաբերության հայտնի կենտրոններից: Արդյունաբերության այդ ձյուղերը մասնագիտացել էին էլեկտրոնային տեխնիկայի, ռադիոսարքերի և կապի միջոցների արտադրության գծով: Հայաստանում գործում էին ավելի քան մեկ տաս-

նյակ խոշոր գիտահետազոտական ինստիտուտներ՝ համապատասխան արդյունաբերական ձեռնարկություններով։ ԽՍՀՄ մասշտարով հայտնի ձեռնարկություն էր Ս. Մերգելյանի անվան մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը։ Այստեղ են արտադրվել հայկական առաջին հաշվիչ մեքենաները։

Արդեն երկու տասնամյակ է՝ արդյունաբերության նորագույն ճյուղերը, մասնավորապես տեղեկատվական և հեռահաղորդակցային ոլորտը ՀՀ կառավարության կողմից հայտարարվել է տնտեսության զարգացման գերակա ուղղություն։ Այս խնդրի լուծմանն էր ուղղված նաև 2019 թ. ՀՀ կառավարության կառուցվածքում բարձր տեխնոլոգիաների նախարարության ստեղծումը։ Արդեն մեկ տասնամյակից ավելի է՝ ՀՀ-ում ստեղծվել և գործում են «Թումո» կենտրոններ, հաստատություններ, որոնք նպատակ ունեն արդեն դպրոցական տարիքից նախապատրաստելու կադրեր՝ բարձր տեխնոլոգիական ոլորտներում աշխատելու համար։

Արդյունաբերության նորագույն ճյուղերից ՀՀ-ում առավել զարգացածը և աճի բարձր տեսմա ունեցողը **տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտն** է, որտեղ գերակշռում են հայ-ամերիկյան ընկերությունները։ Այս առումով խոշորագույնը «Սինոփսիս-Արմենիան» է, որը սերտ կապեր ունի Երևանի պետական և ճարտարագիտական համալսարանների հետ, վերջիններս մշակում և իրականացնում են «քուհ-արտադրություն» համատեղ ծրագրեր։

«Սինոփսիս Արմենիան» և տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառի ՀՀ այլ ընկերություններ մասնագիտանում են կիսահաղորդիչների և տեխնոլոգիական համակարգերի նախագծմամբ, ինչպես նաև համակարգչային ծրագրերի մշակմամբ և ինտեգրալ սիեմաների արտադրությամբ։ ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների հաստատություններն առավելապես

կենտրոնացված են Երևանում, մասամբ՝ Գյումրիում և Վանաձորում: Գյումրիում նախատեսվում է ստեղծել տեխնոպարկ, որը հնարավորություն կտա կրթության, գիտության և արտադրության սերտածմանը և կապահովվի տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը:

ՀՀ-ում արդյունաբերության նորագույն ձյուղերից զարգացման բավարար նախադրյալ և հեռանկար ունի նաև **լազերային տեխնիկայի արտադրությունը**, որի հիմքերը մեր երկրում դրվել են դեռևս խորհրդային տարիներին: Այս բնագավառը կենտրոնացված է բացառապես Երևանում: ՀՀ-ում առկա կառրային ներուժը թույլ է տալիս զարգացնել նաև **կենսատեխնոլոգիաների** գծով ծրագրերի մշակումը և վերջիններիս հիման վրա արտադրությունների կազմակերպումը:

Տարեցտարի ավելանում է արդյունաբերության նորագույն ձյուղերում զբաղվածների թիվը, որն անցնում է մի քանի հազարից: Առաջիկա տարիներին մեր երկրում արդյունաբերության նորագույն ձյուղերի զարգացման համար կարևորագույն խնդիր է դառնում որակյալ մասնագետների պատրաստման ու վերապատրաստման հարցը:

ՀՀ-ն ունի բոլոր նախադրյալները մոտ հեռանկարում արդյունաբերության նորագույն ձյուղերի, հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրության ուղղությամբ տարածաշրջանային կենտրոն դառնալու համար: Այդպիսի տեխնոլոգիաները լայնորեն կօգտագործվեն նաև մեր երկրի ռազմարդյունաբերական համալիրի տարբեր ձյուղերում: Կստեղծվի արդիական սարքավորումներով հազեցած զինտեխնիկա, ինչն էլ կրարձրացնի ՀՀ սահմանների պաշտպանունակությունը և բանակի մարտունակությունը: Դրա վառ ապացույցը 2020 թ. հուլիսի 12-16-ը Տավուշի մարզի հայ-ադրբեջանական սահմանին հակառակորդի ազրե-

սիային հայկական արտադրության անօդաչու թռչող սարքերով տանսկերի խոցումն էր:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է ԳՏՀ էռությունը, և ի՞նչ դեր ունի այն համաշխարհային տնտեսության մեջ:
2. Վերլուծն ք արդյունաբերության նորագույն ձյուղերի զարգացման արդի վիճակը ՀՀ-ում:
3. Արդյունաբերության նորագույն ձյուղերի տեղաբաշխման և տարածքային կազմակերպման ի՞նչ խնդիրներ եք տեսնում ՀՀ-ում:
4. Ձեր մարզում կամ բնակավայրում արդյո՞ք կան արդյունաբերության նորագույն ձյուղերի զարգացման համար նախադրյալներ, և ինչպես կարելի է դրանք օգտագործել:

4.12. Գյուղատնտեսությունը

Զարգացման պատմաաշխարհագրական ակնարկ: Հայաստանը երկրագործական մշակույթի ձևավորման առաջին երկրներից մեկն է աշխարհում: Հայաստանում գյուղատնտեսության զարգացման համար քիչ թե շատ բարենպաստ պայմաններ են ստեղծվել Ռուսաստանին միանալուց հետո, եթե ընդարձակվեցին ցանքատարածքները, ավելացավ բերքատվությունը, սկսեց զարգանալ անասնապահությունը, վերակենդանացան արհեստներն ու առևտուրը: Չնայած այդ ամենին՝ Հայաստանը շարունակում էր մնալ թույլ զարգացած, ազրարային երկիր: 1900-1913 թթ. ԳՀԱ-ն ՀՀ ներկայիս տարածքում ավելացել է 1.8 անգամ: Սակայն համաշխարհային պատերազմի և ազգամիջյան կոփվների տարիներին այն հիմնովին քայլայվեց, համախառն արտադրանքն այդ տարիներին պակասեց ավելի քան 82 %-ով [2]:

Մեր երկրում գյուղատնտեսության մեջ քանակական և որակական էական փոփոխություններ են եղել խորհրդային շուրջ 7 տասնամյակի ընթացքում: 1930-ական թթ. կեսերից ՀՀ-ում գյուղատնտեսական արտադրության կազմակերպական հիմնական օդակներ դարձան կոլտնտեսությունները և սովորությունները:

Չնայած խորհրդային յոթ տասնամյակների ընթացքում գյուղատնտեսության վարման գործում տեղ գտած թերություններին ու սիսալներին՝ ՀՀ ԳՀԱ-ի ընդհանուր ծավալը, այնուամենայնիվ, 1980 թ. 1913 թ. համեմատ ավելացել է 7.1, 1940 թ. համեմատ՝ 4.6 անգամ [28]: Գյուղատնտեսական աշխատանքների զգալի մասը մեքենայացված էր, զյուղը՝ կեկտրիֆիկացված: Հետևողական աշխատանք էր տարվում գյուղատնտեսությունը գիտական հիմունքներով կազմակերպելու ուղղությամբ: 1988 թ. գյուղատնտեսության մեջ հաշվում էին 13.4 հազ. տրակտորներ, 1.4 հազ. հացահատիկահավաք կոմբայններ, 10 հազ. բեռնատար ավտոմոբիլ-

ներ, մեծ թվով շարքացաններ, սիլոսահավաք, կարտոֆիլահավաք կոմբայններ, հացահատիկամաքրիչ մեքենաներ և այլն [2]:

Խորհրդային տարիներին ՀՀ գյուղատնտեսության անբաժան մասն էին կազմում գյուղացիների անձնական օժանդակ տնտեսությունները:

1990 թ. Հայաստանում կար ընդհանուր թվով 850 գյուղատնտեսական խոշոր ձեռնարկություն:

Թեև խորհրդային շուրջ յոթ տասնամյակի ընթացքում Հայաստանում գյուղատնտեսության կազմակերպման մեջ թույլ են տրվել որոշակի սխալներ, այդուհանդեռ այդ ժամանակաշրջանում մեր երկրում ձևավորվեց լեռնային տարածքներին բնորոշ գյուղատնտեսության մասնագիտացման և տարածքային կազմակերպման գիտականորեն հիմնավորված համակարգ:

Աղյուսակ 35


Գյուղատնտեսության նյութատեխնիկական բազան, տեխնիկայի առկայությունը (1000 հատ, 2008-2019 թթ.) [17]

	2008	2012	2015	2019
Տրակտորներ	14.7	14.7	15.1	15.4
Բեռնատար մեքենաներ	14.7	15.3	15.1	15.1
Տրակտորային գութաններ	3.7	3.8	3.9	4.0
Տրակտորային սերմնացաններ	1.8	1.9	1.9	1.9
Կուլտիվատորներ	2.0	2.2	2.3	2.3
Հավաքիչ մամլիչներ	1.4	1.5	1.7	1.8
Կոմբայններ, այդ թվում՝				
հացահատիկահավաք	1.4	1.4	1.4	1.4
սիլոսահավաք և կերահավաք				
տրակտորային խոտհնձիչներ	1.9	2.0	2.1	2.1

Ցածրադիր-հարթավայրային տարածքներում գյուղատնտեսության մասնագիտացման ճյուղեր դարձան այգեգործությունը,

խաղողագործությունը, բանջարաբուծությունը, բոստանային և եթերայուղատու մշակաբույսերի աճեցումը, ծխախոտագործությունը: Տարածքի միջին բարձրության շրջաններում զյուղատնտեսության առաջատար ճյուղեր էին հացահատիկային տնտեսությունը, կարտոֆիլի, շաքարի ճակնդեղի և կերային կուլտուրաների աճեցումը: Վերջիններս հանրապետության տարբեր շրջաններում գուգակցվել են անասնապահության երկու հիմնական ճյուղերի հետ: Հանրապետության բարձրադիր շրջաններում զյուղատնտեսության հիմնական ճյուղեր էին դարձել անասնապահությունը և կերային մշակաբույսերի աճեցումը: Գյուղատնտեսության՝ ըստ բարձրության գոտիների տեղաբաշխման և մասնագիտացման վերը նշված պատկերը հիմնականում պահպանվել է նաև վերջին երեք տասնամյակում: **ՀՀ-ում ԳՀԱ-ն 2008-2019 թթ. աճել է ավելի քան 35 %-ով:** Այդ տարիներին տեղի է ունեցել անասնաբուծության համախառն արտադրանքի գրեթե կրկնապատկում, իսկ բուսաբուծության համախառն արտադրանքը, թեև ունեցել է որոշակի աճ, սակայն կախված տարվա ագրոլիմայական պայմաններից՝ այն կայուն չի եղել: ՀՀ ԳՀԱ-ի մեջ առանձին մարզերի մասնաբաժինների վերաբերյալ պատկերացում են տալիս Աղյուսակ 36-ում, իսկ ԳՀԱ-ի կառուցվածքի վերաբերյալ՝ Գծապատկեր 11-ում բերված տվյալները: **ՀՀ գյուղատնտեսության ճյուղերից խաղողագործությունը, պտղաբուծությունը, ծխախոտագործությունն ու ջերմասեր բաջարաբուծությունն ունեն նաև արտահանման նշանակություն, մնացածները՝ տեղական ու օժանդակ:**

ԳՅՈՒՂԱՏՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՍՊԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ



Աղյուսակ 36
ՀՀ զուղատնառառության համախառն պրոտացիոնը (2014-2020 թվ., մլրդ դրամ, %-ով)/16, 50/

	Ընդամենը		Այդ թվում՝		Տևակարար կշիռը	
	Բնասարություն	Անսանաբուծություն	2020	2014	2020	2014
ՀՀ	2020	2014	2020	2014	2020	2014
Ք. Երևան	983	833.3	595.2	399.5	387.8	433.8
Արագածոտն	11.3	8.9	4.7	-	6.6	-
Արարատ	98.8	82.5	57.1	35.2	41.7	47.3
Արմարատ	141.4	125.0	113.3	94.0	28.1	31.0
Արմավիր	173.7	181.0	131.7	133.3	42.0	47.7
Գեղարքունիք	178.2	99.4	117.4	38.0	60.8	61.4
Լոռի	73.8	67.2	32.2	20.4	41.6	46.8
Վուայք	59.8	73.7	19.3	20.5	40.5	53.2
Շիրակ	109.0	83.5	57.5	29.2	51.5	54.3
Սյունիք	70.2	54.4	33.1	12.7	37.1	41.7
Վայոց ձոր	21.4	21.8	6.9	5.0	14.5	16.8
Տավուշ	45.4	35.9	20.0	9.2	23.4	26.7

ՀՀ-ում 1991 թ. գյուղատնտեսության կազմակերպական կառուցվածքում տեղի ունեցան կտրուկ փոփոխություններ. կազմալրութեցին կոլտնտեսություններն ու պետական գյուղացիական տնտեսությունները, և հողը բաժանվեց 340 հազ. գյուղացիական տնտեսությունների միջև:



Քարտեզ 22. ՀՀ գյուղատնտեսության տեղաբաշխումը և մասնագիտացումը

Աղյուսակ 37

*ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքն
բատ տնտեսությունների [17; 43]*

	Ընթացիկ գներով, մլրդ դրամ				
	2008	2012	2015	2017	2020
Ընդամենը գյու- ղատնտեսություն	628.1	841.5	945.4	908.1	833.3
Բուսաբուծություն	405.9	516.0	550.0	468.8	399.5
Անասնապահու- թյուն	222.2	325.5	395.4	439.3	433.8

Աղյուսակ 38

*ՀՀ գյուղատնտեսության արտադրանքի կառուցվածքն
բատ տնտեսությունների (ընթացիկ գներով, %)[17, 43]*

	2008	2012	2015	2017	2020
Ընդամենը	100	100	100	100	100
Այդ թվում՝					
առևտրային կազմակեր- պություններ	2.8	3.5	2.9	3.5	6.2
բնակչության տնտեսու- թյուններ	97.2	96.5	97.1	96.5	93.8

Հողային ֆոնդը: Հողային ֆոնդի կառուցվածքը և բաշխումը հողօգտագործողների միջև այն հիմնական ցուցանիշներն են, որոնցով պայմանավորված են գյուղատնտեսության տարած-քային տարբերությունները և զարգացման հնարավորությունները:

1989 թ. մեր երկրում գյուղատնտեսական օգտագործելի հո-
ղահանդակները կազմում էին ընդհանուր տարածքի 46.6 %-ը,
դրանց մեջ վարելահողերը՝ 35,6 %, խոտհարքները՝ 10,0 %, բազ-
մամյա տնկարկները՝ 6.2 %, արոտավայրերը՝ 48,2 % [2]:

Աղյուսակ 39

ՀՀ ընդհանուր հողային մակերեսը և գյուղատնտեսական նշանակության հողերն ըստ տեսակների [17,43]

	2008	2012	2015	2020
Ընդհանուր հողային մակերեսը, 1000 հա, որից՝	2974.3	2974.3	2974.3	2974.3
գյուղատնտեսական նշանակու- թյան հողեր	2121.2	2052.4	2045.7	2043,5
այդ թվում՝				
վարելահող	450.4	448.4	446.7	444.0
բազմամյա տնկարկ	31.6	33.4	34.4	37,3
խոտհարք	12.7	121.6	121.1	121.1
արոտ	1117.1	1056.3	1051.3	1050,6
այլ հողեր	394.8	392.7	392.2	390.6
գյուղատնտեսական նշանակու- թյան հողերի նկատմամբ, %				
գյուղատնտեսական նշանակու- թյան հողեր, այդ թվում՝	100	100	100	100
վարելահող	21.2	21.9	21.8	21.8
բազմամյա տնկարկ	1.5	1.6	1.7	1.8
խոտհարք	6.0	5.9	5.9	5.9
արոտ	52.7	51.5	51.4	51.4
այլ հողեր	18.6	191.1	19.2	19.1

1940-1988 թթ. ընթացքում գյուղատնտեսական հանդակների մակերեսը կրճատվել է ավելի քան 700 հազ. հեկտարով [2]: Երկրի ինդուստրացումը անխուսափելիորեն պետք է հանգեցներ գյուղատնտեսական հողերի որոշ կրճատման: Սակայն գյուղատնտեսական հանդակների նման կրճատման հիմնական պատճառը եղել է գյուղատնտեսական արտադրության անընդհատ համակենտրոնացման ու մեքենայացման պահանջներին

համապատասխան ռելիէֆային և այլ բնական անբարենպաստ պայմաններ ունեցող հողատարածքները զյուղատնտեսական օգտագործումից դուրս հանելը:

ՀՀ-ում հողագործության համար առավել բարենպաստ շրջաններ են Արարատյան դաշտը, Շիրակի և Լոռի սարահարթերը, Մարտունու, Գավառի, Վարդենիսի, Գորիսի, Սիսիանի տարածաշրջանների մեղմաթեք ոչ մեծ հարթավայրերը։ Անսանապահության զարգացման համար բարենպաստ հնարավորություններ կան նախալեռնային, լեռնային և բարձրլեռնային շրջաններում։ Վերջին տասնամյակում ՀՀ-ում ընդհանուր հողային մակերեսի և զյուղատնտեսական հողերի բաշխումն ըստ տեսակների տրված է Աղյուսակ 39-ում։

Երկրագործության ճյուղային կառուցվածքը և տեղաբաշխությունը։ Երկրագործության զարգացման հիմնական արտադրամիջոցը մշակովի հողերն են, որոնք հայտնի են նաև ակտիվ օգտագործվող գյուղատնտեսական հանդակներ անունով։ ՀՀ տարածքում հնարավոր է զբաղվել երկրագնդի մերձարևադարձային և ավելի ցուրտ գոտիներում տարածված գրեթե բոլոր մշակաբույսերի աճեցմամբ։

Դաշտավարությունը։ ՀՀ ռելիէֆային բարդ պայմանների պատճառով դաշտավարության զարգացման բնական հիմքը՝ վարելահողերի տարածները, տեղաբաշխված են խիստ անհավասարաչափ։ Առավել ընդարձակ տարածքներով աչքի են ընկնում Արարատյան գոգավորության հատակային ու նախալեռնային շրջանները, Շիրակի սարահարթը և Սևանի մերձակային հարթությունները։

Լեռնային տարածներում դաշտավարության տարածումը սահմանափակվում է տեղանքի ծովի մակարդակից ունեցած բարձրությամբ ու թեքություններով։ ՀՀ-ում դաշտավարությամբ զբաղվում են մինչև 2200 մ բացարձակ բարձրություն և առավելա-

գույնը 16^o թերություն ունեցող տարածքներում: ՀՀ վարելահո-
ղային տարածքների համար բնորոշ է խիստ մասնատվածու-
թյունը:

Աղյուսակ 40

*Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերի
ցանքատարածությունները (1000 հա) [5;17;46]*

	Բացարձակ թվերով			%-%ներով		
	2008	2015	2020	200 8	201 5	2020
Ամբողջ ցանքատարա- ծություններ	304.5	337.5	222,2	100	100	100
Հացահատիկային և հատիկաբնդեղեն մշա- կաբույսեր	172.8	193.1	121.3	56.7	56.0	54,6
Տեխնիկական Մշակաբույսեր	2.4	3.1	1.6	0.8	1.1	0.7
Կարտոֆիլ	34.3	27.8	20.5	11.3	9.7	9.2
Բանջարեղեն	24.2	28.4	21.3	8.0	8.0	9.6
Բուստանային մշակա- բույսեր	5.5	7.3	3,9	1.8	1.7	1.7
Կերային մշակաբույ- սեր	65.3	85.6	53,7	21.4	23.5	24.2

Մակերևույթի առավել կտրտվածության պատճառով հողա-
կտորները փոքր չափեր ունեն Եղեգնաձորի, Վայրի, Թումանյա-
նի, Կապանի, Արթիկի, Գուգարքի, Թալինի, Գավառի, համեմա-
տարար ընդարձակ՝ Տաշիրի Ստեփանավանի, Արմավիրի, Մա-
սիսի, Էջմիածնի տարածաշրջաններում: Դրանց խոշոր մակերես-
ներով առանձնանում են Վարդենիսի, Ախուրյանի, Թալինի, Սի-
սիանի և Մարտունու տարածաշրջանները: Ցանքատարածքների
մակերեսն ամենափոքրը Մեղրու տարածաշրջանում է, այստեղ
դրանց ընդհանուր մակերեսը չի անցնում 1800 հեկտարից [1, 2]:

Աղյուսակ 41

*Բուսաբուծության արտադրանքի հիմնական տեսակների
արտադրությունը (1000 տ) [5; 17; 46]*

	Բացարձակ թվերով		
	2008	2015	2020
Հացահատիկ և հատիկարնեղենն	415.4	601.5	246.0
Կարտոֆիլ	648.6	607.7	437.1
Բանջարեղեն	825.3	1007.6	692.8
Բուստանային մշակաբույսեր	182.2	268.8	126.0
Պտուղ և հատապտուղ	317.8	377.1	254.9
Խաղող	185.8	309.2	283.2

Հարյուրամյակներ շարունակ հայ բնակչությունը միշտ ձգտել է **հացահատիկի** սեփական արտադրանքով բավարարել ներքին պահանջները: Խորհրդային տարիներին Հայաստանում հացահատիկի ցանքատարածքները մեծապես աճել են՝ կազմելով առավելագույնը մոտ 400 հազ. հա (1952 թ.)[2]:

Հայաստանում հացահատիկի միջին բերքատվությունը մինչև 1950-ական թթ. եղել է ամենացածրերից մեկը ԽՍՀՄ-ում (6-9 գ/հա), մինչդեռ 1988 թ. այն կազմել է 28.1 գ/հա, միջինը ԽՍՀՄ-ում՝ 17.0 գ/հա[1]: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ Հայաստանում հացահատիկի մշակությունը կենտրոնացվել էր դրանց աճեցման համար ազրովիմայական նպաստավոր պայմաններ ունեցող տարածքներում: 1980-ական թթ. Հայաստանում կային կոլտնտեսություններ և սովորություններ, որոնք մեկ հեկտարից ստանում էին 40-50 գ հացահատիկի բերք: Աշնանացան հացահատիկային մշակաբույսերի միջին բերքատվությունը ՀՀ-ում 2020 թ. կազմել է 22.3 գ/հա, աշնանացան ցորենինը 22.6:

Անկախության առաջին տարիներին, երբ տրանսպորտային շրջափակման պատճառով լուրջ խնդիրներ առաջացան բնակչությանը հացով ապահովելու գործում, ՀՀ-ում հացահատիկի ցանքատարածությունները նորից ավելացան: 1990-ական թթ. վերջե-

թից, երբ ՀՀ ներկրվող հացահատիկի հարցերը կարգավորվեցին, հացահատիկի ցանքատարածքները աստիճանաբար սկսեցին նվազել:

ՀՀ-ում մշակվող հացահատիկայինների մեջ միշտ էլ գերակշռել են **ցորենը և զարին:** Սրանց 1988 թ. բաժին էր ընկնում հացահատիկայինների համախառն բերքի մոտ 97 %-ը: **Ցորենը զլիսավորապես աշնանացան** է: Հայաստանում հացահատիկ մշակում են ամենուրեք՝ ծովի մակարդակից 400-500 մ-ից մինչև 2200 մ բարձրություններում, իսկ զարու էկոլոգիական պայմանները հնարավորություն են տալիս առանձին նպաստավոր տարիներին բերք ստանալու նաև 2600-2700 մ բարձրության վրա [2]: **ՀՀ-ում հացահատիկի աճեցման, զարգացման և բերքատվության լավագույն պայմաններ կան 800-2000 մ բարձրության գոտիներում:** Նշված գոտիներում են կենտրոնացված ՀՀ հացահատիկի արտադրության զլիսավոր շրջանները (Շիրակ, Սևանի ավագան, Սյունիք, Արարատյան գոգավորություն): **ՀՀ-ում աշնանացան ցորենի մշակության լավագույն սահմանը 700-1600 մ բարձրությունների միջև է,** իսկ հարավահայաց լանջերին և պաշտպանված հովիտներում՝ մինչև 2200 մ բարձրություններ: **Գարնանացան ցորենի լավագույն գոտին գտնվում է 1500-2200 մ բարձրությունների միջև:**

Գարին ՀՀ լեռնային շրջաններում պարտադիր մշակվող հացահատիկային մշակաբույսերից է: Այն պահանջկուտ չէ հողի նկատմամբ, բայց լավ բերք է տալիս փուլիր ու խոնավ հողերում: Սովորաբար մշակվում է ցորենի գոտուց վերև՝ Ախուրյանի վերին հոսանքի ավագանում, Լոռու, Սևանի ավագանի և Արագածոտնի բարձրադիր շրջաններում [1]: Գարու միջին բերքատվությունը ՀՀ-ում կազմում է 18-19 g/hա:

ՀՀ-ում մշակվող հացահատիկայինների մեջ իր գրաված տարածությամբ և բերքատվությամբ ցորենից և զարուց հետո երրորդ

տեղը գրադեցնում է **հաճարք**: Այն մշակում են զիսավորապես Գորիսի, Սիսիանի, Հրազդանի, Կոտայքի, Սևանի և Մարտունու տարածաշրջաններում՝ 1300-2200 մ բարձրություններում: ՀՀ-ում նախկինում մշակվել են նաև բրինձ, կորեկ և տարեկան, եզիպ-տացորեն և վարսակ:

Տեխնիկական մշակաբույսերից տարբեր ժամանակներում Հայաստանում մշակել են բամբակենի, գանգրավուշ (կտավատ), քնչութ, արևածաղիկ, կանեփ, եւտագայում՝ ծխախոտ, շաքարի ձակնուեղ, ավելի ուշ՝ խորդենի: Լեռնաշխարհի շատ վայրերում աճեցվող կտավատի, քնչութի ու կանեփի բազայի վրա գործում էին բազմաթիվ ձիթհանքեր:

2019 թ. ՀՀ-ում մշակվող տեխնիկական մշակաբույսերի ցանքատարածքները կազմել են 1635 հա, որից 381 հա՝ ծխախոտ, 797 հա՝ արևածաղիկ, 188 հա՝ կտավատ, 269 հա՝ այլ մշակաբույսեր: Դրանց ցանքատարածքների ավելի քան 52 %-ը բաժին է ընկնում Արմավիրի մարզին:

Ծխախոտը մինչև խորհրդային տարիները ՀՀ-ում ապրանքային նշանակություն չի ունեցել: Նախախորհրդային շրջանում մշակվում էին ծխախոտի ցածրորակ տեսակներ («Ղոյալսար», «Ուշան» և այլն), որոնք սպառվում էին ներքին շուկայում: 1980-ական թթ. Հայաստանում ծխախոտ մշակում էին 23 վարչական շրջանի մոտ 300 կոլտնտեսություններում ու սովորական կազմում էր 1/4-3/5-ը [24]:

Խորհրդային տարիներին Աբովյանի, Աշտարակի, Վարդենիսի, Գավառի, Մարտունու, Իջևանի, Տավուշի և այլ վարչական շրջաններում ծխախոտագործությունը մասնագիտացման առաջատար ճյուղ էր, և հողագործության ապրանքային արտադրանքի կառուցվածքում դրա տեսակարար կշիռը կազմում էր 1/4-3/5-ը [24]:

Մեր հանրապետությունում արմատավորվել են ծխախոտի «Սամսուն» և «Տրապիզոն» տեսակները, որոնք աչքի են ընկնում

որակական բարձր հատկանիշներով:

1990-ական թթ. ՀՀ-ում ծխախոտի ցանքերը խիստ կրծատվեցին, իսկ վերջին մեկուկես տասնամյակում դրանք նկատելիորեն ավելացել են: Ներկայումս ՀՀ-ում ծխախոտագործական առավել հայտնի տարածաշրջանը Տավուշի մարզն է, որին բաժին է ընկնում ՀՀ-ում մշակվող ծխախոտի ցանքատարածքների մոտ 48 %-ը: Հաջորդը Արարատի մարզն է՝ 35 %: Ծխախոտ մշակում են նաև Արմավիրի, Արագածոտնի և Վայոց ձորի մարզերում: 2019 թ. ՀՀ-ում ծխախոտի միջին բերքատվությունը կազմել է 24.8 գ. հա (Արարատի մարզում՝ 37, Տավուշում՝ 19.4), արտադրվել է 946.6 տ համախառն բերք:

Կտավատի մշակությամբ հայտնի են Շիրակի և Կոտայքի մարզերը, մշակում են նաև Գեղարքունիքի, քիչ քանակությամբ՝ Սյունիքի, Վայոց ձորի, Արմավիրի և Արագածոտնի մարզերում: ՀՀ-ում մշակվող **արևածաղկի** ցանքատարածքների 76 %-ը բաժին է ընկնում Արմավիրի մարզին, մշակում են նաև Լոռու, Արարատի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերում: **Տեխնիկական այլ մշակաբույսերից** ՀՀ-ում մշակում են չաման, տրգո, շաքարի ճակնդեղ և այլն: Դրանց ցանքատարածքների 80 %-ը բաժին է ընկնում Արմավիրի մարզին, մնացած՝ Արարատին, Լոռուն և Շիրակին:

Այգեգործությունը: ՀՀ գյուղատնտեսության մեջ կարևորագույն դեր և տեղ ունի այգեգործությունը: Այն գրադպում է բազմամյա տնկարկների մշակությամբ, բաժանվում է **խաղողագործության** և **պտղաբուծության**:

Խաղողագործությունը միշտ է եղել և մեր լեռնաշխարհի համեմատաբար ցածրադիր շրջանների երկրագործական գլխավոր գրադմունքներից մեկը: **Մեր երկիրը գտնվում է հյուսիսային կիսագնդի խաղողագործական գոտու համարյա միջին մասում:** Քանի որ Արարատյան դաշտում տարվա բացարձակ նվազագույն

շերմաստիճանների միջինը ցածր է 15⁰-ից, խաղողի վազք ցրտահարվելուց պաշտպանելու համար ծածկում են հողաշերտով (թաղում են), մնացած շրջաններում՝ Զանգեզուրում, Արփայի հովտում և հյուսիս-արևելքում, չեն թաղում [2]: ՀՀ-ում խաղողի հասունացման վերին հնարավոր սահմանը չի անցնում ծովի մակարդակից 1700 մ-ից:

ՀՀ լեռնային մակերևույթի հետևանքով առաջացող ջերմաստիճաննային խիստ փոփոխությունները գարնանային ամիսներին (մարտի կեսերից մինչև ապրիլի առաջին տասնօրյակը), երբ արդեն բողբոջած են լինում խաղողի վազերը, հաճախ ցրտահարվում են: Ցրտահարվում են առավելապես Արարատյան հարթավայրի ցածրադիր վայրերի այգիները: Ցրտահարությունից անվտանգ շրջաններ են ՀՀ հյուսիսարևելյան մասի՝ ծովի մակարդակից մինչև 900-1000 մ բարձրություններում տեղադրված այգիները և Արարատյան դաշտին հարող 850-1200 մ բարձրության լանջերի առանձին հատվածները [1]:

ՀՀ-ում խաղողագործության զարգացմանն առանձնակի ուշադրություն է դարձվել դեռևս XIX դարի վերջին քառորդից՝ կապված կոնյակագործության և գինեգործության զարգացման հետ: Հայաստանի խորհրդայնացմանը նախորդող տարիներին տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով խաղողի այգիները կիսով չափով կրճատվել են, և 1913 թ. մակարդակը վերականգնվել է 1928 թ.: **1940 թ. մեր երկրում խաղողի այգիները կազմել են 16,3, 1960 թ.՝ 30,9, 1988 թ.՝ 31,7, 2020 թ.՝ 16,7 հազ. հա** [1,2,5]:

ՀՀ-ում խաղողի այգիների ընդարձակում տեղի է ունեցել Արարատյան գոգավորությունում նոր հողերի և ձմեռային արոտների յուրացման շնորհիվ: Նշված տարածքներում խորհրդային տարիներին ձևավորվել են շուրջ 100 նոր գյուղեր: **Խաղողագործության զարգացման համար պակաս կարևոր դեր չի ունեցել**

նաև Արմավիրի, Թալինի, Արգնի-Շամիրամի, Արտաշատի, Էջմիածնի և այլ ջրանցքների կառուցումը:

1922 թ. ՀՀ-ում խաղողի բերքատվությունը կազմել է 32.8g/հա, 1976-1988 թթ.՝ 75-96, 2020թ.՝ 189; 1913 թ. ՀՀ ներկայիս տարածքում արտադրվել է 58.5, 1988 թ.՝ 214, 2020 թ.՝ 283 հազ. տ խաղող [1, 2, 5]: ՀՀ-ում առավել մեծ տարածում ունեն «Ոսկետափ», «Ռեկացիթելի», «Մսխալի», «Գառան դմակ», «Կախեթի», «Արենի» խաղողի տեսակները: ՀՀ-ում խաղողագործության զարգացման գլխավոր խնդիրներից են առավել բերքատու ու արժեքավոր տեսակների ներդրումը և դրանք սննդարդյունաբերության համապատասխան ճյուղերում օգտագործելը:

Մեր երկրի հիմնական խաղողագործական շրջանը Արարատյան գողավորությունն է: Այստեղից ստացված խաղողն առավել շատ օգտագործվում է կրնյակագործության և գինեգործության մեջ: Պակաս նշանակություն չունեն նաև սեղանի բարձրորակ տեսակները, որոնք ունեն նաև արտահանման նշանակություն: Այստեղ խաղողի համախառն արտադրանքով առանձնանում են Արարատի, Արտաշատի, Մասիսի, Էջմիածնի, Արմավիրի, Աշտարակի և Բաղրամյանի տարածաշրջանները:

Խաղողագործական երկրորդ շրջանը ՀՀ հյուսիս-արևելքն է, որտեղ առավել շատ մշակում են սեղանի և փրփրագինիների սորտերը: Այստեղ խաղողագործական հիմնական շրջաններ են Նոյեմբերյանի և Տավուշի, մասամբ Իջևանի տարածաշրջանները: ՀՀ խաղողագործական երրորդ շրջանը Արփայի հովիտն է, որտեղ խաղողի այգիների զգալի մասը գտնվում է $10\text{--}15^{\circ}$ թերություններ ունեցող լանջերում: Չորրորդ խաղողագործական շրջանը Զանգեզուրն է, որտեղ առավել հայտնի է Մեղրու տարածաշրջանը: Այստեղ աճեցվում են առավելապես թունդ և կիսաքաղցր գինիների արտադրության համար խաղողի տեսակներ:



Նկ. 8. Խաղողի այգի Արարատյան դաշտում

ՀՀ-ում մշակում են պտուղների չորս հիմնական խմբեր՝ կորիզավորներ, հնդավորներ, ընկուզապտուղներ և մերձարեադարձային պտուղներ: Պտղաբուծությամբ զբաղվում են հանրապետության անխստիր բոլոր տարածաշրջաններում: Պտղաբուծությունը մեր երկրում արագ զարգացում է ունեցել խորհրդային տարիներին: Ստեղծվել են մասնագիտացված պտղաբուծական այգիներ՝ առանձին աշխատանքների մեջենայացմամբ:

Թեև պտղաբուծությամբ զբաղվում են ՀՀ գրեթե բոլոր տարածաշրջաններում, սակայն այն ապրանքային մեծ նշանակություն ունի Արարատյան դաշտում և Արարատյան գոգավորության նախալեռնային գոտում, հյուսիսարևելյան և Զանգեզուրի ցածրադիր-հովտային շրջաններում, Վայքում: 1960-ական թվականներից հնդավորների պտղաբուծությունը հաջողությամբ զարգանում է նաև Ախուրյանի, Միսիանի, Մարտունու և Վարդենիսի տարածաշրջաններում:

Աղյուսակ 42

*Խաղողի և պտղահատապտղային տնկարկների տարածքը
(ընդ.՝ 1000 ha) [5, 17, 46]*

	2008 թ.	2010 թ.	2012 թ.	2015 թ.	2020 թ.
Պտղահատապտղային տնկարկների տարածքը	36.7	37.7	39.3	40.3	43.8
այդ թվում՝ պտղատու հասակում	31.2	32.4	34.1	36.4	38.4
Խաղողի տնկարկների տարածքը	16.8	17.4	17.4	17.3	16.7
այդ թվում՝ պտղատու հասակում	14.4	14.6	15.7	16.4	14.9

Աղյուսակ 43

*Դոռուղների, հատապտուղների և խաղողի համախառն բերքը և
բերքատվությունը [17, 46]*

Տարիներ	Ընդամենը հասած խառն բերք (հազ.տ)	Այդ թվում՝		Բերքատվությունը, g/հա	
		Պատմական հաստիության ներկայացման դաշտականության վեհականության մեջ	Խառն բերք	Պատմական հաստիության ներկայացման դաշտականության վեհականության մեջ	Խառն բերք
2011	469.0	239.4	229.6	73.5	158.0
2013	578.9	338.1	240.8	95.0	149.8
2015	695.7	377.1	309.2	103.0	188.2
2017	571.6	361.6	210.0	93.5	141.4
2019	508.1	290.6	217.5	76.2	146.1
2020	557.5	274.3	283.2	71.4	189.3

ՀՀ պտղաբուծության մեջ տնտեսական առավել մեծ արժեք են ներկայացնում **ծիրանենին և դեղձենին՝** իրենց բարձրորակ տեսակներով: Վերջիններս դասվում են համաշխարհային լավա-

գույն տեսակների շարքին: ՀՀ-ում աճող ծիրանենու լավագույն տեսակներից են «Շալախը», դեղին և կարմիր «Նախիջևանիկները», կարմիր և սպիտակ «Նովրաստները», «Աղջանաբաղը», «Դեղին Սաթենին», «Սպիտակ» ծիրանը և այլն [2]: ՀՀ-ում աճեցվող դեղձենիները ևս բազմազան են, սակայն առավել արժեքավոր և տարածված են «Նարնջենի», «Լոձ», «Ճղովի» կանաչ և «Ճղովի» քաղցրակորիզ, «Հյութալի» սպիտակ տեսակները [նույն տեղում]:

Հնդավոր ծառատեսակներից խնձորենու այգիների գրաղեցրած տարածքներով առանձնանում են Աշտարակի, Նախիջևի և Կոտայքի տարածաշրջանները: Դրանց ընդհանուր մակերեսը ՀՀ-ում կազմում է 14.3 հազ. հա, որից 40 %-ը բաժին է ընկնում Արագածոտնի ու Կոտայքի մարզերին: 2020 թ. կորիզավորների ընդհանուր տարածքը ՀՀ-ում կազմել է շուրջ 24.3 հազ. հա, որից պտղատու հասակինը՝ 20.7 հազ. հա: Կորիզավորների մոտ 35 %-ը բաժին է ընկնում Արմավիրի, 28 %-ը՝ Արարատի, 13.4 %-ը՝ Արագածոտնի մարզերին:

Ընկուզապուղները և մերձարևադարձայինները կազմում են ՀՀ բոլոր տեսակի պտղատու այգիների մոտ 8 %-ը: Ընկուզապուղների տնկարկներն առավել մեծ մակերես են գրաղեցնում Արագածոտնի (23 %), Վայոց ձորի (17.6 %), Կոտայքի (15.1 %) և Սյունիքի (12.7 %) մարզերում: Այդպիսիք չկան Գեղարքունիքի մարզում:

Մերձարևադարձայինների ավելի քան 82 %-ը բաժին է ընկնում Տավուշի (43.6 %) և Սյունիքի մարզերին: Շիրակում, Վայոց ձորում և Գեղարքունիքում այդպիսիք չկան, մնացած մարզերում գրաղեցնում են փոքր մակերեսներ: Վերջին երկու տասնամյակում ՀՀ-ում ներդրվել են մերձարևադարձային նոր ծառատեսակներ՝ **արքայանարինջ և կիվի:**

Բանջարաբոստանայիններ Հայաստանում մշակել են հին ժամանակներից, սակայն դրանց զբաղեցրած տարածքներն ընդհուպ մինչև խորհրդային տարիները փոքր են եղել:

Աղյուսակ 44

Պտղատու այզիների, հատապտղանոցների և խաղողանոցների տարածությունները, համախառը բերքը և միջին բերքատվությունը (ընդամենը բոլոր տնտեսություններում, 2020 թ.)^[46]

Հավաքված բերքը, ց	Առաջնահամարը	Ապահովագույն համարը				
Հնդամենք պտուղ և հատապտուղ	43751	39397	2743496	2739893	71.4	
այդ թվում՝						
հնդավորներ	13877	13097	999420	999310	76.3	
կորիզավորներ	24256	20663	1466556	1463107	70.8	
ընկուզապտուղներ	2639	1958	53514	53491	27.3	
մերձարևադարձայիններ	1068	852	78099	78079	91.6	
հատապտուղներ	1797	1753	145707	145706	83.1	
այլ՝ ընդամենք	90	74	200	200	2.7	
տնկարաններ	24	-	-	-	-	
խաղող (ներառյալ տնկարան)	16681	14951	2832241	2830769	189.3	

Բանջարաբուտանայինների և կարտոֆիլի ցանքատարածքները 2020 թ. կազմել են 45.8 հազ. հա, որից 20.5 հազարը՝ կարտոֆիլի, 21.3 հազարը՝ բանջարանոցային, մնացածը՝ բոստանային մշակաբուլսեր:

Բանջարաբոստանային մշակաբույսերի աճեցման հիմնական շրջանն Արարատյան դաշտն է: Այստեղ հիմնական մշակա-

բույսերից են **ձմեռուկը, սեխը, լոլիկը, տաքդեղը, սմբուկը:** Դրանց մշակությամբ զբաղվում են նաև ՀՀ հյուսիսարևելյան և հարավարևելյան լեռնահովտային տարածքների հատակային շրջաններում: Պակաս ջերմասեր և ցրտադիմացկուն բանջարեղենի տեսակների (գազար, կաղամբ, սխտոր, սեղանի ձակնդեղ, սոխ, լոբի և այլն) մշակությամբ զբաղվում են 1500-2000 մ բարձրության տարբեր շրջաններում:

Բանջարանոցային ցանքատարածքների մոտ 64 %-ը (13.8 հազ. հա) բաժին է ընկնում **Արմավիրի (8.9 հազ. հա)** և **Արարատի մարզերին:** Այս մարզերում արտադրվում է ՀՀ բանջարանոցային մշակաբույսերի համախառն բերքի ավելի քան 78 %-ը: Ցանքատարածքներով և համախառն բերքով հաջորդ տեղերում են Գեղարքունիքի, Շիրակի Լոռու և Կոտայքի մարզերը: **Բոստանայինների հիմնական արտադրողները** ևս **Արմավիրի և Արարատի մարզերն են:** Արմավիրին բաժին է ընկնում բոստանային ցանքատարածքների ավելի քան 66 և հավաքված բերքի շուրջ 60 %-ը: Արարատի մարզում համապատասխան ցուցանիշները կազմում են 29 և 37 %: Բոստանային մշակաբույսերի ցանքատարածքներ չկան Գեղարքունիքի մարզում, իսկ մնացած մարզերում դրանք շատ քիչ են: **Բանջարեղենի պակաս ջերմասեր և ցրտադիմացկուն տեսակների մշակությամբ առավել հայտնի են Շիրակի, Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի և Սյունիքի մարզերը:**



Նկ. 9. Լոլիկի մշակությունը Արարատյան դաշտում

Կարտոֆիլի մշակությունը Հայաստանում տարածվել է XVIII դարի կեսերից: Մեր բնակլիմայական պայմաններում այս մշակաբույսն աճում է բոլոր ուղղաձիգ գոտիներում, սակայն առավել բարենպաստ պայմաններ կան 1500-2100 մ բարձրության շրջաններում: Արարատյան դաշտում և հյուսիսարևելյան շրջաններում կարտոֆիլի մշակությունը հնարավոր է միայն ոռոգման, մնացած տարածքներում՝ նաև անջրդի պայմաններում:

Խորհրդային տարիներին կարտոֆիլի ցանքատարածքները Հայաստանում տարեցտարի ավելացել են: Զուգահեռաբար տեղի է ունեցել նաև միջին բերքատվության և համախառն բերքի ավելացում: 1940 թ. մեր երկրում այս մշակաբույսի միջին բերքատվությունը կազմել է 73, 1978 թ.՝ 112 գ/հա [1]: 1980-ական թթ. կարտոֆիլի միջին բերքատվությունը Հայաստանում տատանվել է

140-160 ց/հա սահմաններում: Խորհրդային տարիներին կարտոֆիլագործությամբ առավել աշքի էին ընկնում Տաշիրի, Ստեփանավանի, Գուգարքի, Մարտունու, Վարդենիսի, Գավառի, Սևանի, Կրասնոսելսկի, Տավուշի, Վաղահաս կարտոֆիլի մշակությամբ՝ Մասիսի ու Էջմիածնի տարածաշրջանները: 2020 թ. կարտոֆիլի ցանքատարածքները ՀՀ-ում կազմել են 20.5 հազ. հա, միջին բերքատվությունը՝ 213 ց/հա, համախառն բերքը՝ ավելի քան 437 հազ. տ: Ներկայում կարտոֆիլ մշակում են ՀՀ բոլոր մարզերում, սակայն դրանց ցանքատարածքների ավելի քան 70 %-ը բաժին է ընկնում Գեղարքունիքի (39.8 %), Լոռու (16.3 %) և Շիրակի (14.6 %) մարզերին: Մրանց բաժին է ընկնում ՀՀ-ում արտադրված կարտոֆիլի համախառն բերքի շուրջ 70 %-ը: Մնացած մարզերից կարտոֆիլի ցանքատարածքներով և համախառն բերքով առանձնանում են Արմավիրի (Վաղահաս կարտոֆիլի բերքի 10.6 %-ը), Սյունիքի (բերքի 4.6 %-ը) և Արագածոտնի (բերքի 4.6 %-ը) մարզերը:

Վաղամբի ցանքատարածքները ՀՀ-ում կազմում են 2067 հա (2020 թ.): Ցանքատարածքների 49 և համախառն բերքի 54 %-ը բաժին է ընկնում Արմավիրի (Վաղահաս կաղամբ) և Գեղարքունիքի մարզերին: Այս մշակաբույսի համախառն արտադրանքում մոտավորապես հավասար բաժին ունեն Լոռին, Շիրակը և Արարատը (11-12 %): **Վարունգի** արտադրությամբ առաջատարը Արմավիրի մարզն է, որին բաժին են ընկնում ցանքատարածքների 48 %-ը և համախառն բերքի 65 %-ը: Երկրորդը Արարատի մարզն է, որը նախորդին համապատասխան ցուցանիշներով զիջում են մոտ 3 անգամ: **Լոլիկի** ցանքատարածքների 82 %-ը և համախառն բերքի ավելի քան 94 %-ը բաժին են ընկնում Արարատի ու Արմավիրի մարզերին: **Սմբուկի** մշակությամբ և համախառն բերքով առաջատարն Արմավիրի մարզն է: **Տարղեղի** մշակությամբ ևս առաջատարը Արմավիրի մարզն է, երկրորդը՝ Արարատը: **Սեղա-**

Նի ճակնդեղ մշակում են բոլոր մարզերում, սակայն դրանց ցանքատարածքների (658 հա) ավելի քան 61 %-ը բաժին է ընկնում Շիրակի և Լոռու մարզերին: ՀՀ-ում **զազարի** ցանքատարածքները կազմում են մոտ 780 հա: Աչքի են ընկնում Շիրակի (37 %), Կոտայքի, Լոռու և Գեղարքունիքի մարզերը: **Սոխի** մշակությունն առավել շատ կենտրոնացված է Արմավիրի մարզում: Հայտնի են նաև Արարատի, Տավուշի, Լոռու և Վայոց ձորի մարզերը: **Սիսոռքի** մշակություն կա բոլոր մարզերում: Սակայն գերակշիռ դեր ունեն Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Արարատի և Կոտայքի մարզերը: **Կանաչ լոքու** մշակությամբ առաջատար են Արմավիրի և Արարատի մարզերը: Միանց բաժին է ընկնում համախառն բերքի մոտ 75 %-ը: Հաջորդ տեղերում են Կոտայքի, Սյունիքի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերը: **Հատիկային լոքու** արտադրությամբ հայտնի են Գորիսի ու Կապանի տարածաշրջանները:

Կերային մշակաբույսերի ցանքատարածքները 1980-ական թթ. վերջին կազմում էին շուրջ 265 հազ. հա կամ ՀՀ բոլոր ցանքատարածքների 58.8 %-ը [2]: Դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ դաշտային կերարտադրությունը համարվում էր անասնապահության զարգացման կարևոր գործոններից մեկը: **Անասնակերի համար արտադրվում** էին գարի, վարսակ, եղիպտացորեն, տափոլոս, վիկ, սոյա, բազմամյա և միամյա խոտաբույսեր, լորազգիներ, արևածաղիկ, կերային կաղամբ, շաքարի ճակնդեղ և այլն: Մրանք որպես անասնակեր օգտագործվում էին խոտի, սիլոսի, սենաժի ու խոտայուրի ձևով:

2020 թ. կերայինների ցանքատարածքները ՀՀ-ում կազմում էին ընդամենը 220 հա: Ցանքատարածքների այդպիսի նվազումը պայմանավորված է ՀՀ-ում անասնապահության երկու հիմնական ճյուղերում գլխաքանակի խիստ կրծատմամբ, ինչպես նաև կոլտնտեսությունների և սովորությունների վերացմամբ: **Ներկայումս ՀՀ-ում կերային ցանքատարածքներն առավել մեծ մակերես են**

գրաղեցնում Շիրակում և Լոռիում: Առաջիկա տարիներին ՀՀ-ում տնտեսության զարգացման գերակա ճյուղ համարվող զյուղատնտեսության, մասնավորապես անասնապահության զարգացման համար առանձնահատուկ դեր պետք է ունենա կերային մշակաբույսերի ցանքատարածքների և համախառն արտադրանքի ավելացումը։ Դա հնարավորություն կտա ձմեռային մսուրային շրջանում անասնապահության համար ստեղծելու կերային բազա և անասնակերի մեջ ավելացնելու սպիտակուցային պակասը։

Անասնապահության զարգացման պայմաններից է բնական խոտհարքների գրաղեցրած տարածքը և դրանից ստացված համախառն բերքը։ Դրանց առավել մեծ մակերեսներն ընկած են Գեղարքունիքի (34.7 հազ. հա), Լոռվա (25.2 հազ. հա), Շիրակի (9.6 հազ. հա) և Կոտայքի (7.6 հազ. հա) մարզերում, իսկ Արմավիրի մարզում դրանք բացակայում են։ Բնական խոտհարքների արդյունավետությունը բարձրացնելու գլխավոր միջոցներն են դրանց պարարտացումը և ջրաբժիացումը, որոնք կբարձրացնեն դրանց բերքատվությունը։

ՀՀ-ում, ինչպես լեռնային այլ տարածքներում, մեծ տարածք են գրաղեցնում արոտավայրերը։ 2020 թ. արոտավայրերը կազմել են ՀՀ զյուղատնտեսական օգտագործելի հողատարածքների 51.5 %-ը։ Կերային ավելի բարձր արժեք ունեն հանրապետության լեռնային բարձրադիր շրջանների արոտավայրերը։

Անասնապահությունը

Լեռնային մակերեսույթ և բարձրադիր տարածք ունեցող երկրներում անասնապահության զարգացման համար առանձնահատուկ դեր ունեն կերային բազայի առկա վիճակը և անընդհատ ամրապնդումը։

ՀՀ-ում անասնապահության կերային բազան ունի ուղղաձիգ տարածում: Առավել ընդարձակ են ենթալպյան (2200-2800 բարձրության վրա) և տափաստանային (1200-2200 մ) տիպերը:

Ամառային պայյան և ենթալպյան արոտները տարածված են Զավախքի, Քարախաչի, Փամբակի, Բազումի, Գեղամա, Վարդենիսի, Զանգեզուրի լեռաշղթաների և Արագածի լեռնազանգվածի բարձրադիր մասերում: Սրանք առավելապես նպաստավոր են խոշոր եղջերավոր անասնապահության համար, իսկ ծովի մակարդակից 2500 մ-ից բարձր տարածքների արոտավայրերը պիտանի են բացառապես մանր եղջերավոր անասունների համար: Այդպիսի արոտավայրերն առավել մեծ մակերես են զբաղեցնում Զանգեզուրի, Վայքի, Վարդենիսի, Գեղամա, Արագածի և Զավախքի լեռներում:

ՀՀ տարածքն իր մակերևույթի բնույթով և խոտային կազմով մատչելի է ինչպես խոշոր, այնպես էլ մանր եղջերավոր անասունների համար: Կերային առավել մեծ արժեք ունի լեռնային բարձրադիր շրջանների բուսականությունը: Մեր երկրի ցածրադիր շրջաններում, հատկապես Արարատյան գոգավորության կիսաանապատային գոտում, որոշ չափով տարածված են եղել նաև ձմեռային արոտավայրերը: Սակայն դրանք, գտնվելով ոռոգիչ ջրանցքների ազդեցության ոլորտում, աստիճանաբար յուրացվել են երկրագործության կողմից, դարձել են վարելահողեր կամ բազմամյա տնկարկներ [28]:

2020 թ. ՀՀ զյուղատնտեսական հողատեսքերի մեջ արոտավայրերն ու խոտհարքները միասին կազմել են զյուղատնտեսական նշանակության հողերի 57.4 %-ը, որից արոտավայրերը՝ 51.6 (1051.6 հազ. հա), խոտհարքները՝ 5.9 % (121 հազ. հա):

Երկարատև ժամանակաշրջան ՀՀ ներկայիս տարածքում անասնապահությունն ունեցել է խիստ արտահայտված կրատեսակիվ բնույթ: Անասնապահության համախառն արտադրանքի ցու-

ցանիշների առավել մեծ աճ է գրանցվել 1960-ական թվականներից հետո: Այդ տարիների ընթացքում աճել են անասունների գլխաքանակը և մթերատվությունը:

1986 թ. դրությամբ ՀՀ-ում անասնապահության համախառն արտադրանքում առանձին ճյուղերի մասնաբաժինն ուներ հետևյալ կառուցվածքը. խոշոր եղջերավոր անասնապահություն՝ 45.6 %, մանր եղջերավոր անասնապահություն՝ 21.1 %, խոզաբուծություն՝ 11.5 %, թռչնաբուծություն՝ 19.2 %, մնացածը՝ այլ ճյուղերին [2]:

2009-2019 թթ. ՀՀ-ում անասնագլխաքանակի շարժն ունի հետևյալ պատկերը. ԽԵԿ-ի գլխաքանակը 2009-2015 թթ. ավելացել է շուրջ 104 հազարով, իսկ 2015-2019 թթ.՝ նվազել մոտ 117 հազարով: Նմանատիպ պատկեր է նաև կովերի գլխաքանակի շարժընթացում: 2009-2015 թթ. դրանց գլխաքանակը ավելացել է մոտ 11 %-ով (30.9 հազարով), իսկ 2015-2019 թթ.՝ նվազել մոտ 60 հազարով: ՄԵԱ-ի գլխաքանակը 2009-2015 թթ. ունեցել է ավելի քան 186 հազ. գլխի աճ (33 %), սակայն 2015-2019 թթ. դրանց գլխաքանակը նվազել է 107.5 հազարով: Անցած տասը տարում ՀՀ-ում տեղի է ունեցել խոզերի գլխաքանակի ավելի քան 2,3 անգամ ավելացում:

Աղյուսակ 45

*Անասնաբուծական հիմնական մթերքների արտադրությունը
(2008-2020 թթ.) [17; 43]*

Տարեթվեր	Միա (սպանդային քաշով) 1000 տ	Կաթ, 1000 տ	Չու, մլն հատ	Բուրդ (ֆիզ. քաշով, տ)
2008	70.9	661.9	576.1	1332
2010	69.5	600.9	702.2	1188
2012	73.9	618.2	658.1	1280
2015	100.4	728.6	659.8	1571
2016	106.1	754.2	694.6	1641
2017	109.1	758.2	683.0	1385
2019	107.3	667.9	720.6	981
2020	107.7	654.3	754.6	1048

Աղյուսակ 46

*Գյուղատնտեսական կենդանիների և թռչնի գլխաքանակը
(1000 հատ, 2009-2020 թթ.) [4,17;43]*

	2009	2013	2015	2020
Խոշոր եղջերավոր անասուն	584.8	661.0	688.6	579.3
այդ թվում՝ կովեր	283.0	303.3	313.9	251.7
Ոչխարներ և այծեր	559.2	674.7	745.8	662.5
Խոզեր	84.8	145.0	142.4	223.3
Զիեր	11.3	10.8	11.4	11.4
Թռչուններ	4188.2	4050.0	4145.5	4568.1

Աղյուսակ 47

*Գյուղատնտեսական կենդանիների և թռչնի մթերատվությունը
(2008-2019 թթ.)[4;17]*

	2008	2012	2015	2019
Մեկ կովի միջին կաթնատվությունը, լ	1992	2036	2144	2365
Մեկ ոչխարի միջին տարեկան բրդատվությունը, կգ	2.2	2.2	2.2	2.2
Ածան հավերի միջին տարեկան ձվատվությունը, հատ	198	181	241	258

Գյուղատնտեսական կենդանիների և թռչնի մթերատվության առումով վերջին տասը տարում, բացառությամբ մեկ ոչխարի միջին տարեկան բրդատվության ցուցանիշի, գոյություն ունի աճի միտում: Կովերի միջին կաթնատվությունն ավելացել է շուրջ 16 %-ով, հավերի միջին տարեկան ձվատվությունը՝ 37 %-ով:

ՀՀ անասնապահության գլխավոր ենթաճյուղը տակարարությունն է: Խորհրդային տարիներին ձեռնարկված միջոցառումների շնորհիվ մի կողմից տեղի էր ունենում ԽԵԿ-ի գլխաքանակի ավելացում, մյուս կողմից՝ ցեղի և նախիրի կազմի բարելավում:

1980-ական թթ. ԽԵԿ-ի գլխաքանակը տատանվում էր 860-870 հազարի սահմաններում [28]: Այդ տարիներին ՀՀ տավարի գլխաքանակի ավելի քան 96 %-ը «Կովկասյան գորշ» ցեղն էր, զարգանում էին կաթնամսատու, մասամբ՝ կաթնատու ուղղությունները: Տավարաբուծության զարգացման համար շատ կարևոր է նախիրի կառուցվածքը: Այս առումով շատ կարևոր է նախիրում կովերի տեսակարար կշիռը:

Կոլտնտեսությունների և սովորությունների վերացումից հետո ՀՀ-ում տավարաբուծությունը զգալի անկում ունեցավ: Դա պայմանավորված էր ճյուղի զարգացման համար միջոցների կազմալուծմամբ: 1990-ական թթ. վերջերին ԽԵԿ-ի գլխաքանակը տատանվում էր 450-455 հազ. սահմաններում, մեկ կովի միջին կաթնատվությունը՝ 1650-1700 լ [24]:

2000-2019 թթ. նկատվում են անասնապահության այս ենթաճյուղի թեև ոչ կայուն, սակայն զարգացման միտումներ: Չնայած 2008-2019 թթ. կովերի միջին կաթնատվության ցուցանիշն ավելացել է մոտ 16 %-ով, սակայն այն դեռևս շատ ցածր է եվրոպական երկրների միջին ցուցանիշից (8-10 հազ. լ): Նարկ է նշել, որ այս խնդրի լուծման ուղղությամբ ՀՀ-ում տարվում են աշխատանքներ:



Նկ. 10. Ժամանակակից տեխնոլոգիաներով կառուցված անասնագոմ ՀՀ-ում

Տավարաբուծական ֆերմերային տնտեսությունները ցածր մթերատվություն ունեցող կենդանիներին փոխարինում են բարձր մթերատվությամբ կենդանիների ցեղերով (շվից, հոլշտին, սեմինտալ): Այս հանգամանքով է բացատրվում նաև վերջին մի քանի տարիներին ԽԵԿ-ի գլխաքանակի նվազումը, քանի որ ֆերմերային տնտեսությունները ձգտում են ավելի փոքր գլխաքանակով ապահովել բարձր կաթնատվություն ու մթերատվություն: Այս գործընթացին զգալի աջակցություն է տրվում նաև պետական մակարդակով: Ցածր տոլկոսով վարկեր են տրվում տավարաբուծության ոլորտում բարեփոխումներ իրականացնելու համար (վարկի որոշակի մասը փակվում է պետության կողմից:) Իրականացվում են «Խելացի անասնագոմ» և այլ ծրագրեր:

Տավարաբուծությունը ՀՀ-ում ունի գրեթե համատարած տեղաբաշխում, սակայն անասնագլխաքանակով և կաթի արտադրությունում առաջ է գտնվում ՀՀ-ում առաջատար պետություն:

բությամբ առաջատար են Գեղարքունիքի և Շիրակի մարզերը: Այս երկու մարզին 2019 թ. բաժին էին ընկնում ԽԵԿ-ի գլխաքանակի 32 %-ը և կաթի արտադրության մոտ 34 %-ը: Տավարաբուծության զարգացած շրջաններ են նաև Լոռու, Արագածոտնի և Կոտայքի մարզերը: Լոռու մարզի Տաշիրի և Ստեփանավանի տարածաշրջաններում դեռևս խորհրդային տարիներից մասնագիտացել էին կաթնամսատու տավարաբուծությամբ և ունեին զարգացած տոհմաբուծական տնտեսություններ:

Մանր եղջերավոր անասնաբուծություն (ՄԵԱ): ՀՀ լեռնային արոտների զգալի տարածքներ պիտանի չեն տավարաբուծության համար և լիարժեքորեն կարող են օգտագործվել ՄԵԱ-ի համար: ՀՀ-ում ՄԵԱ-ն գործնականում նույնանում է **ոչխարաբուծության** հետ, քանի որ այծերի գլխաքանակը շատ քիչ է և փոքր նշանակություն ունի: Վերջին հարյուրամյակում Հայաստանում ՄԵԱ-ի գլխաքանակը զգալի փոփոխություններ է կրել: 1916 թ. այն կազմել է 1.2, 1920 թ.՝ 0.35, 1960 թ.՝ ավելի քան 2 մլն: Դրանց առավելագույն գլխաքանակը ՀՀ-ում եղել է 1970-ական թթ. կեսերին՝ 2.33 մլն [24]:

1990-ական թթ. ՀՀ-ում ՄԵԱ գլխաքանակը զգալիորեն նվազեց: Վերջին երկու տասնամյակներում դիտվում է ձյուղի աստիճանական վերականգնման և գլխաքանակի ավելացման միտում: Դա առաջին հերթին պայմանավորված է զառան մսի արտահանման ծավալների մեծացմամբ, ինչն իր հերթին նպաստում է ոչխարների գլխաքանակի ավելացմանը:

Աղյուսակ 48

Անասնազիտաքանակի բաշխվածությունն ըստ մարզերի [16]

Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը (ընդամենը 01.01.2020)	-մարզում և գյուղ մասնակիությունը	Խնդիրների համար կատարված աշխատանքների թիվ	Խնդիրների համար կատարված աշխատանքների թիվ	Գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակը (ընդամենը 01.01.2020)	Մարզի մասնակիությունը	Մարզի մասնակիությունը	Դրանք թիվը
Ք. Երևան	3569	829	25650	8818	8785	5	192850
Արագածոտն	68215	31270	200444	91435	88321	328	567660
Արարատ	40116	13275	22784	87872	85920	772	360917
Արմավիր	54255	16346	29416	114010	113788	103	1253420
Գեղարքունիք	97071	45268	16218	91009	89093	1417	2299971
Լոռի	72795	34755	15312	26969	25313	2575	272762
Կոտայք	52119	24037	28440	40554	38485	667	929146
Շիրակ	87095	40986	23676	64186	61926	310	230097
Սյունիք	52147	22753	16976	108292	105864	2150	181007
Վայոց ձոր	19699	8112	3695	14705	9687	260	107205
Տավուշ	32175	14085	21041	14672	12419	2780	173048
Ղնդամենը ՀՀ-ում	579256	251716	223252	662532	639598	11367	4568083

Պակաս դեր չունի նաև պետության կողմից տարվող քաղաքականությունը, որն ուղղված է ՄԵԱ-ի զարգացման խրախումանը:

Հայաստանում երկարատև ժամանակաշրջանում զարգանում էր ոչխարաբուծության բրդամսատու ուղղությունը, և բուծվում էին կիսանրբագեղմ ու նրբագեղմ ցեղի ոչխարներ: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ՀՀ-ում զորոտեխնիկական և տնտեսական առումով առավել նպատակահարմար է **մասարդակարնատու ոչխարաբուծության** զարգացումը, որն ապահովում է ավելի շատ մասի ու կայի արտադրություն և նպաստում է բնակչությանն անհրաժեշտ պարենամթերքի արտադրության ավելացմանը: Բացի այդ՝ **կիսանրբագեղմ և հատկապես կոպտաբուրդ** ոչ-

խարաբուծության զարգացումը նպաստում է գորգազործության զարգացմանը [28]: ՀՀ-ում բուծվում են մասքրդակաթնատու ոչխարների հետևյալ հիմնական ցեղերը՝ բալբաս, Արագածի ցեղախումբ և հյուսիսարևելյան: Ստեղծվել է նաև նոր տեսակ՝ «Մերինոս», որը տալիս են նրբագեղ բուրդ: Սա հնարավորություն է տալիս զարգացնելու նաև բրդամսակաթնատու ուղղությունը: Վերջին տարիներին մեր երկիր է ներկրվել ոչխարների ավելի մթերատու ցեղատեսակ ՀԱՀ-ից: Թեև ՄԵԱ-ն առավել զարգացած է ՀՀ նախալեռնային, լեռնային և բարձր լեռնային շրջաններում, սակայն այն առանց բացառության առկա է նախկին բոլոր վարչական շրջաններում: Դրանց ավելի մեծ զիսաքանակով առաջտար են Արմավիրի և Սյունիքի մարզերը: Գլխաքանակի ոչ շատ մեծ տարբերությամբ հաջորդ տեղերում են Արագածոտնի, Գեղարքունիքի և Արարատի մարզերը: Նախկին շրջաններից ոչխարաբուծությամբ առավել հայտնի էին Արագածի, Թալինի, Վարդենիսի, Սիսիանի, Մարտունու, Արմավիրի, Արարատի, Ապարանի, Աշոցքի, Ամասիայի, Գորիսի տարածաշրջանները:

ՀՀ-ում ոչխարաբուծության զարգացման վերաբերյալ կան հակասական կարծիքներ: Մեր կարծիքով ժամանակակից պայմաններում պետք է ստեղծել ՄԵԱ-ի զարգացման և տեղաբաշխման համար այնպիսի պայմաններ, որոնք թույլ կտան մի կողմից լիարժեք օգտագործել հանրապետության լեռնային ու բարձրլեռնային տարածքների արոտների զգալի տարածքները, մյուս կողմից՝ կթեթևացնեն առանձին տարածքների գերարածեցումը և կնպաստեն բնապահպանական խնդիրների լուծմանը: Խնդրի համակողմանի լուծման դեպքում ՄԵԱ զիսաքանակը ՀՀ-ում կարող է առաջիկա տասնամյակի ընթացքում հասնել 2.2-2.5 մլն զիսի: Դա հնարավորություն կտա ավելացնելու ՀՀ-ից արտահանվող մսի քանակը, ստեղծելու հազարավոր աշխատատեղեր, ավելացնելու ոչխարի պանրի և բրյու արտադրանքի ծավալները:

Խողաբուծությունն անասնաբուծության առավել ինդուստրացվող ճյուղերից է և մեծ հնարավորություն ունի մսի արտադրության ծավալների ավելացման համար: ՀՀ-ում խողաբուծությունը հիմնականում զարգացել է խորհրդային տարիներին, երբ ստեղծվեցին խոշոր համալիրներ Նորքարաշենում, Բարձրաշենում, Դալարիկում, Երևանի հարակից տարածքներում: Բացի այդ՝ այն զարգանում էր նաև այդ ճյուղի համար ավանդական համարվող Տավուշի, Նոյեմբերյանի, Իջևանի, Թումանյանի տարածաշրջաններում, Սյունիքի անտառաշատ շրջաններում:

1980-ական թթ. կեսերին ՀՀ-ում խողերի գլխաքանակը կազմում էր մոտ 345 հազ. [24]: Անկախության առաջին տասնամյակի ընթացքում զրեթե լիովին կազմալուծվեցին խոշոր խողաբուծական համալիրները: Վերջին երկու տասնամյակների ընթացքում աստիճանաբար տեղի է ունեցել ճյուղի վերականգման գործընթաց: **Միայն 2009-2020 թթ. ընթացքում խողերի գլխաքանակը ՀՀ-ում ավելացել է 2.6 անգամ:** Մերձերևանյան շրջանում, Տավուշի, Սյունիքի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերում ստեղծվել են ժամանակակից տեխնոլոգիաներով խոշոր խողաբուծական համալիրներ: Խողաբուծությամբ զբաղվում են նաև մնացած մարզերի գյուղացիական տնտեսություններում:

Առաջիկա տարիների ընթացքում խողաբուծության զարգացման աճի միտումները կպահպանվեն, քանի որ ճյուղի զարգացման համար պետականորեն ստեղծվել են առավել նպաստավոր պայմաններ: Դա հնարավորություն կտա ավելացնելու տեղական խոզի մսի արտադրության ծավալները, միաժամանակ նվազեցնելու ներմուծվող մսի քանակը:

Թոշնաբուծությունը ՀՀ-ում առավել արագ տեմպերով սկսել է զարգանալ 1960-ական թվականներից: 1980-ական թթ. այս ենթաճյուղը տալիս էր Հայաստանում արտադրվող մսի մոտ մեկ քառորդը: Հանրապետության բոլոր կարգի տնտեսություններում

հաշվում էր ավելի քան 12 մլն թև թոշուն [28]: 1990 թ. երկրում արտադրվել է մոտ 32 հազ. տ թոշնի միս, 640 մլն հատ ձու: **Խոշոր թոշնաբուծական տնտեսություններ** ստեղծվեցին մայրաքաղաքից ոչ հեռու՝ Նորբարձենում, Լուսակերտում, Արտաշատում, Վաղարշապատում, Ն. Չարբախում, Արգնիում, Գետամեջում, ինչպես նաև Կապանում, Սպիտակում, Գյումրիում, Դիլիջանում, Մեսանում և այլ տեղերում:

1990-ական թթ. վերջերից աստիճանաբար սկսեց վերականգնվել անասնաբուծության այս ճյուղը: Ներկայումս ՀՀ-ում խոշոր թոշնաբուծական տնտեսություններ են գործում Երևանում, Կոտայքի (Լուսակերտի և Արգնու թոշնաբուծական ֆաբրիկաները), Արագածոտնի, Շիրակի, Սյունիքի և Արմավիրի մարզերում:

Եթե 1995 թ. ՀՀ-ում հաշվում էր 2.0 մլն թև թոշուն, ապա ներկայումս այն անցնում է 4.5 մլն-ից: Միայն 2016-2020 թթ. ընթացքում աճը կազմել է ավելի քան 400 հազ թև կամ 10%:

Մեղվաբուծությունը: Դեռ հին ժամանակներից Հայաստանից արտահանվող ապրանքատեսակների մեջ իր տեղն ուներ նաև մեղրը: Տարածքի ռելիեֆի առանձնահատկությունները, վեգետացիայի երկար տևողությունը, բուսականության բազմազանությունը և ուղղաձիգ գոտիականությունը բարենպաստ հնարավորություններ են ստեղծում ՀՀ-ում մեղվաբուծության զարգացման համար: Այս ճյուղի զարգացումը նախադրյալներ է ստեղծում այլ մեղվամթերքի (մեղվակաթ, ծաղկափոշի, ակնամու) ստանալու համար, որոնք լայն կիրառություն ունեն դեղագործության մեջ:

Անկախության առաջին մեկուկես տասնամյակում այս ենթաճյուղը ևս գտնվում էր ծանր վիճակում: Վերջին երկու տասնամյակներին ՀՀ-ում մեղվաբուծությունը նշանակալից զարգացում է ունեցել: «**Մոլտի Ազրո**» գիտարտադրական միավորման շնորհիվ մեղվաբուծությունը պահպանել է ճյուղի զարգացման

զիտական ներուժը, և կազմակերպչական աշխատանքներ են տարվում ՀՀ-ում այս ճյուղի գարգացման ու ընդլայնման համար: ՀՀ-ում մեղվաբուծության գարգացման առավել բարենպաստ նախադրյալներ կան Սյունիքում, Կոտայքում, Արագածոտնում, Լոռիում, Վայոց ձորում և Շիրակում:

Բնակչությանն անհրաժեշտ պարենամթերքի ապահովման գործում կարևոր դեր ունի **Ճկնաբուծությունը**: Այն ՀՀ-ում սկսել է գարգանալ խորհրդային տարիներին: **Երկար ժամանակ ՀՀ-ում ապրանքային ճկնաբուծության միակ ջրավազանը եղել է Սևանա լիճը**: Այնուհետև Սևանի մակարդակի իջեցման պատճառով նվազեցին ճկնային պաշարները, իսկ որոշ արժեքավոր տեսակներ նույնիսկ վերացան: Դեռևս 1920-ական թթ. ՀՀ-ում աշխատանքներ են տարվել ճկնատեսակների բազմացման և պաշարների ավելացման ուղղությամբ: Այդ նպատակով Սևանի տարբեր հատվածներում ստեղծվել են **Ճկնաբուծարաններ** (Կարձադրյուր, Գավառ, Սևան, Լիճը), որոնք տարեկան միլիոնավոր ճկնիկներ են բաց թողել լիճ [28]:

1970-ական թվականներից Արարատյան դաշտում հիմնվեցին Արմաշի, Սուրենավանի և Երասխի ճկնաբուծական տնտեսությունները: Դրանցում 1980-ական թթ. տարեկան արտադրվում էր մինչև 6 հազ. տ ձուկ [նույն տեղում]: Ճկնաբուծության գարգացումը ՀՀ-ում նոր թափ է ստացել 1990-ական թվականներից հետո: Եղածներից բացի՝ հիմնադրվեցին մի քանի խոշոր ճկնաբուծական տնտեսություններ Արարատի և Արմավիրի մարզերում, այլ վայրերում ստեղծված արհեստական լճակներում:

ՀՀ-ում արտադրվող ճկան մի զգալի մասը իրացվում է տեղական շուկայում, իսկ մյուս մասը սառեցված կամ վերամշակվող ձևով արտահանվում է: Վերջին մի քանի տարիներին Արարատյան արտեզյան ավազանի ջրային պաշարների նվազման և այդ ջրերը ճկնաբուծական տնտեսությունների կողմից օգտագոր-

ծելու հետևանքով առաջացել են որոշակի խնդիրներ: Այդուհանդերձ, ձկնաբուծությունը ՀՀ-ում հեռանկարային գարզացող ճյուղ է, մանավանդ, որ այն ունի արտահանման նշանակություն:

Անասնաբուծության այլ ճյուղերի նշանակությունը ՀՀ-ում դեռևս մեծ չէ: Դեռ իին ժամանակներից Հայաստանում ավանդաբար զբաղվել են շերամապահությամբ, և Հայաստանից շատ այլ ապրանքների հետ միասին արտահանվել են նաև մետաքսի հումք ու մետաքսյա գործվածքներ: Ներկայումս ՀՀ-ում շերամապահությամբ չեն զբաղվում, սակայն այս ճյուղի վերականգնումը կնպաստի ինչպես նոր հողատարածքների օգտագործման, այնպես էլ տեքստիլ արդյունաբերության զարգացմանը:

ՀՀ տնտեսության ավանդական ճյուղերից է եղել նաև ձիաբուծությունը: Գյուղատնտեսության տեխնիկական առաջընթացի պատճառով ձիաբուծությունը 1960-ական թվականներից հետո աստիճանաբար անկում է ապրել:

Քանի որ ՀՀ կտրտված մակերևույթ ունեցող փոքր հողակտորներում գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործումը ծախսատար է, նպատակահարմար է այս ճյուղի զարգացմանն առավել մեծ ուշադրություն դարձնել: **ՀՀ-ում ձիերի գլխարքանակի 78.5 %-ը բաժին է ընկնում Լոռու, Սյունիքի, Տավուշի և Գեղարքունիքի մարզերին, իսկ միայն Տավուշի և Լոռու մարզերում՝ 47 %-ը:** 2020 թ. ՀՀ-ում ձիերի գլխարքանակը կազմել է 11.4 հազ.: Խորհրդային տարիներին ՀՀ-ում զբաղվում էին նաև **զազանաբուծությամբ**, որը ներկայացված էր Լերմոնտովոյի աղվեսաբուծական ու Մեծամորի կուտրաբուծական պետական մասնագիտացված տնտեսություններով: Բայց նշվածներից՝ ՀՀ-ում որոշ չափով զբաղվում են **ձագարաբուծությամբ** ու **ջայլամարուծությամբ**:

Հարցեր և առաջադրանքներ

1. Բնութագրե՛ք ՀՀ-ում գյուղատնտեսության զարգացման բնառե-սուրսային նախադրյալները:
2. Կատարե՛ք վերջին հարյուրամյակում ՀՀ-ում գյուղատնտեսու-թյան զարգացման ցուցանիշների վերլուծություն:
3. Վերլուծե՛ք ՀՀ բուսաբուծության տեղաբաշխումը և ճյուղային կառուցվածքը:
4. ՀՀ բուսաբուծության ո՞ր ճյուղերի զարգացումն եք համարում ա-ռավել հեռանկարային և ինչո՞ւ:
5. Գնահատե՛ք ՀՀ-ում անասնապահության զարգացման բնառե-սուրսային նախադրյալները:
6. Ինչպիսի՞ն է ՀՀ-ում անասնապահության զարգացման նյութա-տեխնիկական բազան:
7. Կատարե՛ք ՀՀ անասնապահության ճյուղային կառուցվածքի վերլուծություն:
8. Անասնապահության զարգացման ի՞նչ խնդիրներ կան ՀՀ-ում:

4.13. Տրանսպորտը

Տարածքի տրանսպորտային ուղիների երկարությունը, տրանսպորտային ցանցի խտությունը և տրանսպորտային համակարգը բնութագրող այլ ցուցանիշներ տվյալ շրջանի (Երկրի) սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը բնութագրող կարևոր բնութագրիչներ են: Տրանսպորտի զարգացումը պայմանավորված է միմյանց հետ փոխադարձաբար կապված գործուներով՝ աշխատանքի տարածքային բաժանումով և ինտեգրումով, հասարակական արտադրության զարգացման մակարդակով, շրջանների արտադրական մասնագիտացման խորությամբ, արտաքին ու ներքին տնտեսական կապերի ինտենսիվությամբ [28]: Տրանսպորտի զարգացման վրա անմիջական ազդեցություն են թռղնում տարածքի աշխարհագրական դիրքը, մեծությունը և ուրվագիծը:

Նախախորհրդային Հայաստանում փոխադրումների հիմնական միջոցներն էին սայլը և գրաստը: Իր աշխարհագրական դիրքի շնորհիվ Հայաստանն ունեցել է բանուկ ճանապարհներ և կատարել է ապրանքներ փոխադրող միջանկյալ երկրի դեր:

ՀՀ ժամանակակից տրանսպորտային ցանցի ձևավորման վրա իրենց ազդեցությունն են թռղել վերջին մոտ 1.5 դարի ընթացքում տեղի ունեցած աշխարհաքաղաքական ու տնտեսական գործընթացները: Անդրկովկասում իր դիրքերն ամրապնդելու և այստեղից այլ տարածաշրջաններ դուրս գալու համար Ռուսաստանի կողմից 1860-1870-ական թթ. կառուցվեցին կամ բարեկարգվեցին Թիֆլիս-Երևան-Զուլֆա և Երևան-Մարգարա խճուղային ճանապարհները: XIX դարի վերջին սկսվեց նաև երկաթուղու շինարարությունը Հայաստանում:

ՀՀ-ում տրանսպորտային համակարգի զարգացման համար միանգամայն բարենպաստ պայմաններ ստեղծվեցին խորհրդա-

յին տարիներին: Յոթ տասնամյակի ընթացքում ամբողջովին վերափոխվեց հանրապետության տրանսպորտային համակարգը: ՀՀ-ում ձևավորվեց տրանսպորտի հիմնական ճյուղերի մեկ ամբողջություն կամ հանրապետական մասշտաբով տրանսպորտային համակարգ: ՀՀ-ում տրանսպորտի առանձին տեսակների զարգացումն առավել ակնհայտ է դարձել 1945 թվականից հետո: Դա պայմանավորված էր ինչպես տնտեսության մնացած ճյուղերի աճի տեսակների մեծացմամբ, այնպես էլ բուն տրանսպորտի համակարգի կատարելագործմամբ և զարգացմամբ: 1940-1985 թթ. երկարգծով առաքվող բեռների ընդհանուր ծավալը հանրապետությունում աճել է գրեթե 14 անգամ՝ հասնելով 19.3 մլն տոննայի, իսկ ավտոմոբիլներով կատարված բեռնափոխադրումների ծավալը՝ 73 անգամ՝ հավասարվելով 300 մլն տոնննայի [28]:



Քարտեզ 23. ՀՀ տրանսպորտային ուղիները

Այդ ժամանակաշրջանում հանրապետությունում կատարվող բեռնափոխադրումների մեջ առավել մեծ քաժին են ունեցել բնական հանքային շինանյութերը (որմնաքար, խիճ, ավագ, պեղլիտ, կրաքար, պեմզա), ցեմենտը, բետոններ, երկաթբետոննե շինարարական դետալները և այլ շինանյութեր, մետաղային և քիմիա-

կան հանքանյութերը, նավթամթերքը, հացահատիկը, անտառանյութը, քարածուխը, սև մետաղները [նույն տեղում]:

1980-ական թթ. կեսերին մեր երկրում բեռնաշրջանառության ընդհանուր ծավալում տրանսպորտի գիշավոր տեսակների մասնաբաժինն ունեցել է հետևյալ պատկերը՝ երկաթուղային՝ 52 %, ավտոմոբիլային՝ ավելի քան 47 %, օդային՝ 0.4 % [24]:

ՀՀ տրանսպորտային ցանցի աշխարհագրական պատկերի վերլուծությունը ցույց է տալիս, որ երկաթուղագծերն հիմնականում անցնում են Դեբեղի, Աղստևի, Ախուրյանի, Արաքսի, Հրազդանի հովիտներով, իսկ ավտոմոբիլային ճանապարհները տարբեր ուղղություններով ծածկում են հանրապետության տարածքը: Մայրաքաղաք Երևանից հովիարաձև տարածվում են միջպետական, հանրապետական ու ներիանրապետական նշանակության ավտոճանապարհներ:

Աղյուսակ 49

*Հաղորդակցության ուղիների խոռորդունը ՀՀ տարածքում
(կմ/1000 կմ², 2013-2019 թթ.)/[17]*

	2013	2015	2019
Երկաթուղային գծեր, ընդամենը	28.5	27.6	26.6
Ավտոմոբիլային ճանապարհներ	338.1	348.6	364.0
որից՝ ընդհանուր օգտագործման	254.4	254.5	257.1


1. Երևան–Սևան–Դիլիջան–Իջևան–Վրաստանի սահման,
2. Երևան–Արտաշատ–Եղեգնաձոր–Գորիս–Ստեփանակերտ (մեկ այլ ուղղությամբ՝ Գորիս–Կապան–Քաջարան–Մեղրի),
3. Երևան–Աշտարակ–Գյումրի–Բայլրա–Վրաստան,
4. Երևան–Ապարան–Սպիտակ–Վանաձոր–Ալավերդի,
5. Երևան–Մարտունի–Վարդենիս–Սոթք–ԱՀ,

6. Երևան–Արմավիր–Գյումրի:

2008-2019 թթ. ՀՀ-ում փոխադրվող բեռների ծավալն ավելացել է ավելի քան 1.5 անգամ: Բեռնափոխադրումների մեջ մոտ 1.2 անգամ ավելացել է երկաթուղային տրանսպորտի և մայրուղային խողովակաշարով փոխադրվող բեռների մասնաբաժինը: Այդ ընթացքում օդային տրանսպորտով փոխադրվող բեռների մասնաբաժինը մնացել է նույնը (0,1 %), իսկ ահա ավտոմոբիլային տրանսպորտի մասնաբաժինը 54 %-ից հասել է 65.6 %-ի (Աղ. 51): Նույն այդ ժամանակահատվածում (2008-2019 թթ.) ընդհանուր օգտագործման տրանսպորտի տեսակների բեռնաշրջանառությունն ավելացել է ավելի քան 1,5 անգամ: Բեռնաշրջանառության կառուցվածքում 5.3 տոկոսային կետով նվազել է երկաթուղու մասնաբաժինը, մոտ 3.5 անգամ ավելացել է ավտոտրանսպորտի տեսակարար կշիռը: Եթե 2008 թ. խողովակաշարային տրանսպորտին բաժին էր ընկնում բեռնաշրջանառության 70,2 %-ը, ապա 2019 թ.՝ 61 %-ը: 2008-2019 թթ. ՀՀ-ում ուղևորափոխադրումների ծավալը նվազել է մոտ 53 մլն-ով: ՀՀ-ում իրականացվող ուղևորափոխադրումների մոտ 85 %-ը բաժին է ընկնում ավտոտրանսպորտին, 13.3 %-ը՝ կեկտրատրանսպորտին:


Գծապատկեր 15

Բեռնավորխաղումների կառուցվածքն ըստ տրանսպորտի տեսակների
2020 թ. հունվար-դեկտեմբերին, % [43]




Գծապատկեր 16

Բեռնաշրջանառության կառուցվածքն ըստ տրանսպորտի տեսակների
2020 թ. հունվար-դեկտեմբերին, % [43]




Գծապատկեր 17

Ուղևորակիոխաղումների կառուցվածքն ըստ էլեկտրատրանսպորտի տեսակների 2020 թ. հունվար-դեկտեմբերին, % [43]



Գծապատկեր 18

Ուղևորաշրջանառության կառուցվածքն ըստ ընդհանուր օգտագործման տրանսպորտի տեսակների 2020 թ. հունվար-դեկտեմբերին, % [43]



Աղյուսակ 50

*ՀՀ ընդհանուր օգտագործման միջպետական, հանրապետական և
տեղական նշանակության ավտոճանապարհների երկարությունը
(կմ, 2008-2019 թթ.)/[17]*

	2008	2013	2019
Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհ- ներ	7749	7792	7648.1
Միջպետական նշանակության	1730	1735	1753.1
Հանրապետական նշանակու- թյան	1748	4040	2000.1
Տեղական նշանակության	4271	2017	3894.9

Աղյուսակ 51

*ՀՀ ընդհանուր օգտագործման տրանսպորտի հիմնական ցուցանիշները
(2008-2019 թթ.)/[17]*

	2008		2013		2019	
	1000 տ	%	1000տ	%	1000տ	%
Փոխադրվել են քեռ- ներ, այդ թվում՝	9389.3	100	12315.5	100	14722.2	100
երկաթուղային տրով	2755.1	29.3	3275.2	26.6	3212.6	21.8
ավտոմոբիլային տրով	5065.3	54.0	7319.6	59.4	9651.6	65.6
օդային տրով	10.8	0.1	10.4	0.1	20.7	0.1
մայրուղային խո- ղովակաշարով	1558.1	16.6	1710.3	13.9	1837.3	12.5
Բեռնաշրջանառու- թյունը, մին տոննա կմ	3015.0	100	4247.5	100	4774.7	100
երկաթուղային տրանսպորտ	705.0	23.4	851.0	20.0	863.8	18.1
ավտոմոբիլային տրանսպորտ	179.4	6.0	641.1	15.1	995.7	20.9

օղային տրանս-պորտ	13.1	0.4	5.6	0.1	0.3	0.0
մայրուղային խո-դովակաշարային	2117.5	70.2	2749.8	64.8	2914.9	61.0
Փոխադրվել են ուղևորներ, մըն ուղևոր	247.5	100	241.3	100	194.6	100
Երկաթուղային տր-ով	0.7	0.3	0.4	0.2	0.4	0.2
ավտոմոբիլային տրով	222.6	89.9	217.8	90.3	164.8	84.7
օդային տրով	1.5	0.6	1.8	0.7	3.6	1.8
այլ միջոցներով (Էլելտրատրանս-պորտ)	22.7	9.2	21.3	8.8	25.7	13.3
Ուղևորաշրջանա-ռությունը, մըն ուղևոր կմ	3982.9	100	2858.4	100	2745.6	100
Երկաթուղային տր-ի	26.6	0.7	55.1	1.9	69.5	2.5
ավտոմոբիլային տր-ի	2741.7	68.8	2598.7	91.0	2284.2	83.2
օդային տր-ով	1127.1	28.3	120.4	4.2	290.3	10.6
այլ միջոցների (Էլելտրատրան-սպորտ)	87.5	2	84.2	2.9	101.6	3.7

Այդ ընթացքում ուղևորաշրջանառության մեջ կտրուկ բարձրացել է ավտոտրանսպորտի բաժինը (68.8-83.2 %), փոխարենը մոտ 6 անգամ նվազել է օդային տրանսպորտի բաժինը:

Երկաթուղային տրանսպորտը: ՀՀ երկաթուղային ցանցն հիմնական գծերով ձևավորվել է նախախորհրդային տարիներին,

երբ կառուցվեց Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Երևան-Զուլֆա երկարուղագիծը: Երկրում տեղի ունեցած տնտեսական զիսավոր տեղաշարժերին համապատասխան՝ կատարվել է նաև երկարուղային նոր ուղիների շինարարություն: 1925 թ. սկսվեց Գյումրի-Արթիկ-Պեմզաշեն (32 կմ), հետագայում՝ Մարալիկ և Անի-Անիպեմզա (7 կմ) գծերի կառուցումը: 1930-ական թթ. սկզբներին ավարտվեց Կապան-Մինջևան 39 կմ երկարությամբ երկարգծի կառուցումը [1]: Վերջինս հնարավորություն տվեց երկարուղով իրար կապելու հանքարդյունաբերական Լոռին և Զանգեզուրը: 1950-ական թթ. իրականացվեց Երևան-Հրազդան-Սևան գծի շինարարությունը: Այնուհետև այս գիծը շարունակվեց Սևանի հյուսիսարևելյան ափագծով, հասավ Սոթքի ոսկու հանքավայր և շահագործման հանձնվեց 1976 թ. [28]: Սա հնարավորություն տվեց Սոթքի ոսկու հանքանյութը հացնելու Արարատի ոսկու կորզման ֆաբրիկա: Մայրաքաղաքից անցնող բեռնահոսքերը թեթևացնելու համար 1970-ական թթ. կառուցվեց Մասիս-Նուռնուս 43 կմ երկարությամբ երկարգիծը, որը մայրաքաղաքը շրջանցում է հարավարևմտյան հատվածից:

Աղյուսակ 52

ՀՀ արտահանված, ներկրված և ներհանրապետական բեռնափոխադրումների տեսակաբար կշիռներն ըստ ընդհանուր օգտագործման տրանսպորտի տեսակների (%, 2013-2020 թթ.) [17,43]

	2013	2015	2020
Երկարուղային	100	100	100
այդ թվում՝ արտահանվել են	13.9	12.7	15.1
ներկրվել են	38.5	37.5	21.7
ներհանրապե- տական	47.6	49.8	63.2
Ավտոմոբիլային, այդ թվում՝	100	100	100

արտահանվել են	4.0	5.7	7.5
ներկրվել են	12.3	20.9	31.0
ներհանրապե- տական	83.7	73.4	61.5
Օդային, այդ թվում՝	100	100	100
արտահանվել են	58.7	65.7	66.2
ներկրվել են	41.3	34.3	33.8

Հայկական ատոմակայանի շինարարությանը զուգահեռ կառուցվեց նաև Արմավիր-ՀԱԷԿ 13 կմ երկարությամբ երկաթգիծը [2]:

Հայաստանի տնտեսական կյանքում խոշորագույն իրադարձություն էր Հրազդան-Դիլիջան-Իջևան-Աղստաֆա երկաթգծի շինարարութան իրականացումը, որն սկսվեց 1970-ական թթ. և ավարտվեց 1986 թ. [28]: Այս գժի շահագործմամբ Հայաստանի կենտրոնական շրջանները և մայրաքաղաքն ավելի կարճ ճանապարհով կապվեցին Բաքու-Թբիլիսի զիսավոր մայրուղուն, և էականորեն բարելավվեց ՀՀ տրանսպորտաաշխարհագրական դիրքը: ՀՀ-ում երկաթուղիների շահագործվող երկարությունը հասավ 831 կմ-ի և 1913 թ. ցուցանիշը (362 կմ) գերազանցեց ավելի քան 2 անգամ: Երկաթուղային ցանցի խտությունը հասավ 2.7 կմ/100 կմ², իսկ ՀՀ տարածքի մեծ մասի ֆիզիկական հեռավորությունը ուղիղ գծով երկաթուղուց չէր անցնում 25 կմ-ից [28]:

Որևէ տարածքի երկաթուղային ցանցով ապահովածության վերաբերյալ առավել իրական պատկերացում է տալիս տնտեսական հեռավորության ցուցանիշը: Վերջինս գոյություն ունեցող այն ճանապարհներն են, որոնք հնարավորություն են տալիս տվյալ բնակավայրը կապելու երկաթուղու հետ: Խորհրդային վերջին տասնամյակում մեր երկրի բնակչության 90 %-ից ավելին ապրում էր երկաթուղուց մինչև 15 կմ հեռավորության գոտում [28]: Սիսիանի, Գորիսի, Վայքի, Մարտունու, Եղեգնաձորի և Տա-

շիրի տարածաշրջանների մոտ 150 գյուղ գտնվում էր Երկաթուղուց ավելի քան 50, իսկ դրանցից 20-ը՝ ավելի քան 100 կմ հեռավորության վրա: ՀՀ քաղաքային բնակավայրերի 1/3-ից ավելին անմիջականորեն գտնվում են Երկաթուղու վրա: Դրանցից միայն մի քանիսի տնտեսական հեռավորությունն անցնում է 50 կմ-ից: Երկաթուղուց առավել մեծ տնտեսական հեռավորություն ունեն Վայք (75 կմ), Սիսիան (98 կմ), Ջերմուկ (108 կմ) քաղաքները [նույն տեղում]:

Խորհրդային տարիներին, բացի նոր Երկաթուղագծերի կառուցումից, կապիտալ մեծ ներդրումներ են կատարվել հին գծերի վերակառուցման ու բարեկարգման ուղղությամբ, կատարվել է գծերի էլեկտրիֆիկացում, արդիականացվել են շարժակազմը, ուղևորը: 1988 թ. Հայաստանում Երկաթուղային տրանսպորտի բեռնաշրջանառությունը կազմեց 4803 մլն տ կմ և 1940 թ. մակարդակը գերազանցեց 12.8 անգամ [2]:

Աղյուսակ 53

ՀՀ ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով բեռների առաքումն ըստ տեսակների (1000 տ., 2013-2020 թթ.) [17,43]

	2013		2015		2020	
	տ	%	տ	%	տ	%
Ընդամենը	2014.5	100	1582.7	100	3201.0	100
հանքային շինարարական նյութեր	133.6	6.6	90.3	6.7	233.2	7.3
ցեմենտ	110.2	5.5	9.0	0.6	1.4	0.0
սև մետաղների ջարդոն	-	-	-	-	-	0.0
անտառային բեռներ	-	-	0.1	0.0	-	-
հացահատիկ և աղացվող մթերք	40.0	2.0	32.4	2.0	137.9	4.3
քիմիական և հանքային պարարտանյութեր	0.4	0.0	-	-	22.4	0.7
գունավոր մետաղների հանքարա	1359.0	67.5	1113.1	70.3	2003.3	62.6
այլ բեռներ	371.3	18.4	337.8	21.4	802.8	25.1

Երկաթուղով ԽՍՀՄ և այլ հանրապետություններ են առար-վել հանածո շինանյութեր, փոքր քաշի քիմիական, մեքենաշինա-կան, թեթև և սննդի արդյունաբերության արտադրանքներ, ներկրվել են շինանյութեր, նավթամթերք, անտառանյութ, սև մե-տաղներ, քարածուխ, կոսք, հացահատիկ և այլն:

1980-ական թթ. վերջերից մեր տարածաշրջանում տեղի ու-նեցած իրադարձությունները, իսկ այնուհետև ԽՍՀՄ փլուզումն իրենց անմիջական ազդեցությունն ունեցան մեր երկրի ՏԱԴ-ի վրա: Աղբեջանի կողմից տրանսպորտային շրջափակման պատճառով արդեն շուրջ 30 տարի է՝ չի գործում այդ երկրի տա-րածքով անցնող և Հայաստանը Ռուսաստանի հետ կապող, հիմ-նական բեռնափոխադրումներ իրականացնող երկաթուղին, իսկ 1992 թ. օգոստոսից՝ Արխազիայի փաստացի անկախացումից հե-տո՝ նաև Հայաստանից Վրաստան և Անծովյան ափերով դեպի Ռուսաստան տանող գիծը: Ներկայումս ՀՀ երկաթուղային տրանսպորտը Վրաստանի սևծովյան նավահանգիստներից վա-ռելանյութը, հացահատիկը և այլ ապրանքատեսակներ ներկրում է մեր երկիր:

Լեռնային տարածք և փոքր չափեր ունեցող երկրներում, ինչ-պիսին նաև ՀՀ-ն է, բացառիկ դեր ունի ավտոմոբիլային տրանս-պորտը: Դա բացատրվում է ՀՀ տարածքի երկաթուղային ցանցի ոչ մեծ խտությամբ և երկրի տարածքի փոքրությամբ: Վերջինիս պատճառով տեղական բեռնափոխադրումների որոշ տեսակների իրականացման համար միջին հեռավորություններն այնքան էլ մեծ չեն, և նպատակահարմար է իրականացնել ավտոմոբիլային ճանապարհով: Ուստի համեմատաբար փոքր հեռավորություն-ների վրա ՀՀ ներսում տարբեր տեսակի բեռնափոխադրումների համար ավտոմոբիլն ավելի ձեռնոտ է, քան երկաթուղին:

Աղյուսակ 54

ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների երկարությունն ըստ ծածկույթի տեսակների (կմ, 2013-2019 թթ.)[17]

	2013	2015	2019
Ճանապարհներ, ընդամենը, այդ թվում՝	7792	7570	7648.1
կապիտալ	3917	4717	4757.0
թերևսացած	1769	1236	1277.2
անցողիկ	2106	1617	1631.9

ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների հիմնական մասը կառուցվել է խորհրդային տարիներին: Դրանց ընդհանուր երկարությունը 2018 թ. կազմում էր 110743 կմ, որից 7575-ը՝ ընդհանուր, 3168-ը՝ ոչ ընդհանուր օգտագործման:

Խորհրդային 70 տարիների ընթացքում Հայաստանում արմատապես փոխվեց ավտոճանապարհների ցանցը: Կառուցվեցին բոլորովին նոր ճանապարհներ, վերակառուցվեցին և բարեկարգվեցին նախկին խճուղիները: Երկրում ստեղծվեց ավտոմոբիլային ճանապարհների միասնական ցանց, որն էականորեն բարեկարգվեց հանրապետության ծայրամասային, սահմանամերձ և լեռնային գոտիներում գտնվող բնակավայրերի տրանսպորտային մատչելիությունը: **Ավտոճանապարհները հասան ամենահեռավոր գյուղական բնակավայրեր:**

ՀՀ-ում ավտոմոբիլային տրանսպորտի զարգացման համար կարևոր դեր են ունեցել նաև **Պուշկինի** (Բազումի լեռնաշղթայի) և **Սևանի** լեռնանցքների տակով անցկացված թունելները: Ավտոճանապարհներ են անցնում նաև ՀՀ համեմատաբար բարձրադիր համարվող Որոտանի, Սիսիանի, Վարդենյաց, Փամբակի, Թուխմանուկի, Զաջուռի, Շիրակի (Քերիի) և այլ լեռնանցքներով: Հանրապետությունում ավտոճանապարհների միասնական ցանցի ձևավորման համար մեծ դեր ունեցավ Երասխ-Զանգակատուն-

Եղեգնաձոր–Սիսիան և Բերդ–Իջևան ավտոճանապարհների կառուցումը: Դրանց միջոցով երկրի ավտոճանապարհների միասնական ցանցին միացան Սյունիքը և Տավուշի (նախկին Շամշադինի) տարածաշրջանը:

Իրենց տնտեսական նշանակությամբ և հարորդակցության ապահովման գործառույթով ՀՀ ավտոմոբիլային ճանապարհները միջպետական, հանրապետական և տեղական նշանակության են: Միջպետական են Վրաստանի և Իրանի հետ կապ ապահովող ավտոմայրուղիները: Այդպիսիք են Երևան–Աշտարակ–Թալին–Գյումրի–Բայրս–Նինտժմինդրա–Ախալքալաք, Երևան–Սևան–Դիլիջան–Իջևան–Նոյեմբերյան–Վրաստան, Երևան–Եղեգնաձոր–Սիսիան–Գորիս–Կապան–Քաջարան–Մեղրի–Ազարակ–Իրան, Երևան–Մարտունի–Վարդենիս–Սոթք–ԱՀ, Երևան–Վայր–Գորիս–Բերձոր–Ստեփանակերտ ավտոճանապարհները:

Պակաս դեր չունեն նաև **հանրապետական նշանակության** ճանապարհները, որոնք կարևոր զարկերակներ են և մայրաքաղաքային ռեզինը միացնում են մյուս մարզերին կամ կապ են հաստատում տարբեր մարզերի միջև: Այդպիսի դեր ունեն Երևան–Էջմիածին–Արմավիր–Քարավագերտ–Գյումրի, Երևան–Աշտարակ–Ապարան–Սայիտակ–Վանաձոր–Ստեփանավան–Տաշիր–Գոզավան–Վրաստան, Երևան–Արտաշատ–Արարատ, Երևան–Զրվեծ–Գառնի, Երևան–Աբովյան–Արգենի, Երևան–Հրազդան–Ծաղկաձոր, Երևան–Սևան–Մարտունի–Վարդենիս և այլ ճանապարհները:

ՀՀ-ում երրորդ կարգի ավտոմոբիլային ճանապարհները, այսպես կոչված, **ներմարզային**, տեղական նշանակության ավտոճանապարհներն են, որոնք ապահովում են կապ ոչ միայն մարզի տարբեր բնակավայրերի միջև, այլև հնարավորություն են տալիս ելք ապահովելու հանրապետական և միջպետական նշանակության ճանապարհներ:



Նկ.11. Հատված Դիլիջանի ոլորտաններից

ՀՀ ավտոմոբիլային ճանապարհների ընդհանուր երկարության ավելի քան 62 %-ն ունի ամուր ծածկ, 16.5 %-ը՝ թեթևացած, մնացածը՝ անցողիկ: Ավտոճանապարհների միջին խտությունը հանրապետությունում կազմում է 363 կմ/ 1000 կմ²:

Խողովակաշարային տրանսպորտը մեր երկրում սկսել է ձևավորվել 1960 թվականից, եթե ՀՀ մուտք գործեց բնական գազը: Այդ տարեթվին շահագործվեց Աղստաֆա-Երևան գազամուղը, և վերջինիս երկայնքով ընկած Իջևան, Դիլիջան, Սևան, Հրազդան, Աբովյան քաղաքները ու մի շարք այլ բնակավայրեր սկսեցին օգտագործել վառելիքի այդ տեսակը:

Գազամուղների ցանցն էլ ավելի ընդլայնվեց, եթե Հայաստան մտնող գլխավոր գազամուղները միացվեցին Իրանի և Հյուսիսային Կովկասի գազի հանքավայրերին, ավելի ուշ՝ նաև Թուրքմենիայից եկող գազամուղին: Խորհրդային տարիներին Հայկական ԽՍՀ-ն թեև չուներ սեփական բնական գազ, սակայն համարվում էր երկրի առավել գազաֆիկացվածներից մեկը:

ՀՀ-ում գազամուղների ցանցն կ ավելի ճյուղավորվեց և տարածվեց 1990-ական թթ. վերջերից և շարունակվում է նաև այժմ: Ներկայումս ՀՀ-ում գազամուղների միջոցով են կատարվում բեռնափոխադրումների 12.5 %-ը և բեռնաշրջանառության մոտ 61 %-ը:

Օդային տրանսպորտը: Յուրաքանչյուր երկրում տրանսպորտային միասնական համակարգի ձևավորման և զարգացման համար առանձնահատուկ դեր է խաղում օդային տրանսպորտը: ՀՀ-ի դեպքում օդային տրանսպորտի դերը կարևորվում է նաև այն հանգամանքով, որ այն ցամաքային երկիր է:

ՀՀ-ում օդային տրանսպորտի դերն կ ավելի է մեծացել վերջին շուրջ երեք տասնամյակի ընթացքում՝ պայմանավորված տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրավիճակով, Արքեզանի և Թուրքիայի կողմից Հայաստանի տրանսպորտային շրջափակմամբ:

ՀՀ-ում օդային տրանսպորտը թեև սկսել է ձևավորվել դեռևս 1920-ական թթ. վերջերից, սակայն այն առավել արագ տեմպերով զարգացել է 1950-ական թվականներից: Սկզբնական շրջանում Երևանն օդային ուղիով կապվել է Գյումրու և հանրապետության մի քանի այլ քաղաքների և Մոսկվայի, Թբիլիսիի ու Բաքվի հետ: Հետագա տասնամյակների ընթացքում զգալիորեն ընդարձակվել է ՀՀ օդային տրանսպորտով կապերի աշխարհագրությունը: Երևանն օդային ուղիներով կապվել է նախկին ԽՍՀՄ հանրապետությունների մայրաքաղաքների, Սանկտ Պետերբուրգի և բազմաթիվ այլ քաղաքների հետ: Այն դարձել է միջազգային օդանավակայան և կապ հաստատել Բեյրութի, Ամմանի ու Հալեպի հետ: Խորհրդային վերջին տասնամյակներին Երևանը օդային կապ ուներ նաև ԱՄՆ-ի (Կալիֆորնիայի) և Փարիզի հետ:

Հանրապետության ներսում օդային տրանսպորտային կապ կար 15 ուղղությամբ, և մայրաքաղաքից հեռու գտնվող խոշոր քաղաքներն ու շրջկենտրոնները կապված էին Երևանի հետ:

Օդային տրանսպորտը բացարիկ դերակատարություն է ունեցել ՀՀ-ում անկախության առաջին տարիներին, եթե տրանսպորտային շրջափակման և հարեան Վրաստանում քաղաքական անկայունության պատճառով ՀՀ վարելիքի, հացահատիկի և կենսական նշանակություն ունեցող այլ ապրանքատեսակների ներկրումը որոշակիորեն իրականացվել է նաև օդային տրանսպորտի միջոցով։ Անցած ավելի քան երկուսուկես տասնամյակի ընթացքում ՀՀ օդային տրանսպորտը զարգացման նոր խթաններ ստացավ։ ՀՀ արտաքին դիվանագիտական հարաբերությունների ընդլայնումը, տնտեսական ինտեգրման խորացումը, միջազգային գրոսաշրջության զարգացումը և այլ գործընթացներ զգալիորեն ընդլայնել են մեր երկրի օդային հաղորդակցության ուղիների աշխարհագրությունը։ Ներկայումս ՀՀ-ն օդային տրանսպորտով կապված է ոչ միայն նախկին ԽՍՀՄ հանրապետությունների մեծ մասի, այլ նաև աշխարհի տասնյակ այլ երկրների հետ։ Այդ գործին նպաստել են նաև «Զվարթնոց» օդանավակայանի նոր համալիրի շինարարությունը, որը համապատասխանում է միջազգային ժամանակակից չափորոշիչներին, և միջազգային գրոսաշրջային հոսքերի աշխարհագրության ընդլայնումը։ Բացի Երևանից՝ գործում է նաև Գյումրիի օդանավակայանը, որտեղից իրականացվում են թոփշքներ, հիմնականում՝ դեպի Մուկուա։ Վերջին տարիներին ՀՀ-ում աշխատանքներ են տարվում մի քանի այլ օդանավակայանների (Կապանի, Ջերմուկի, Գորիսի) վերաբերձարկման համար։ Վերջիններս հնարավորություն կտան զարգացնելու ինչպես ներգնա, այնպես էլ ներքին գրոսաշրջությունը։

Տրասպորտի բոլոր տեսակներով իրականացվող բեռնափոխադրումների մեջ ՀՀ օդային տրասպորտի մասնաբաժինը 0.1 % է, բեռնաշրջանառության կառուցվածքում՝ 0,0 % (2019 թ.): Ընդհանուր օգտագործման տրասպորտի տեսակներով փոխադրվող ուղևորների թվաքանակում օդային տրասպորտին բաժին է ընկնում 1.6 %-ը, իսկ ուղևորաշրջանառության կառուցվածքում՝ 4.8 %-ը:

2018-2019 թթ. ՀՀ-ում ներգնա ու արտագնա զբոսաշրջության աճի համեմատաբար բարձր տեմպերի շնորհիվ ավելացել են նաև օդային տրասպորտով կատարված ուղևորափոխադրումների և ուղևորաշրջանառության ցուցանիշները: 2020 թ. մարտից մինչև 2021 թ. մարտ ամիսը, համավարակով պայմանավորված, օդային տրասպորտի վերը նշված ցուցանիշները զգալիորեն նվազեցին:

Հարցեր և առաջարրանքներ

1. Գնահատե՛ք տրանսպորտի դերը աշխատանքի հասարակական ու տարածքային բաժանման համակարգում:
2. Կատարե՛ք ՀՀ տրանսպորտային համակարգի ձևավորման և գարզացման տարածաժամանակային վերլուծություն:
3. Բնութագրե՛ք տրանսպորտի առանձին տեսակների դերը ՀՀ ժամանակակից տնտեսության մեջ:
4. Ինչպիսի՞ն եք տեսնում ՀՀ-ում տրանսպորտային համակարգի գարզացման հեռանկարը:

4.14. Տնտեսության ոչ արտադրական ոլորտը

Վերջին տասնամյակներին ընթացքում համաշխարհային տնտեսության ճյուղային և տարածքային կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունները հանգեցրել են տնտեսության երրորդային ու չորրորդային հատվածների կամ ոչ արտադրական ոլորտի առաջանցիկ զարգացմանը: Տնտեսության ոչ արտադրական ոլորտում ներառված ճյուղերը կամ անմիջականորեն սպասարկում են բնակչությանը (սպասարկման ոլորտ), կամ ապահովում են հասարակության ընդհանուր գոյությունը (կառավարում, գիտություն, մշակույթ, կադրերի պատրաստում, հասարակական կարգի պահպանություն և այլն): Ոչ արտադրական ոլորտի բաղադրիչներից է սպասարկումը կամ ծառայությունների մատուցումը:

Տնտեսության ոչ արտադրական կամ ծառայությունների ոլորտն ընդգրկում է բնակարանային-կենցաղային տնտեսությունը, մանրածախ առևտուրը և հասարակական սնունդը, կենցաղային սպասարկման ճյուղերը, կապի ծառայությունները, վարկաֆինանսական սպասարկումը, մշակութային, ռեկրեացիոն, երեխաների դաստիարակության և կրթության, բնակչության առողջապահական կամ բժշկական և տրանսպորտային սպասարկումները: Ոչ արտադրական ոլորտի կարևոր բաղադրիչներ են նաև գիտությունը, արվեստը, սպորտը, պետական և հասարակական կառավարումը, ապահովագրությունը և այլն:

Մեզ նման լեռնային տարածք և մակերևույթի բնույթ ունեցող երկրներում ոչ արտադրական ոլորտի զարգացման ու հասկապես տարածքային կազմակերպման համար առանձնահատուկ նշանակություն ունեն տարաքանակեցման բնույթը և տրանսպորտային համակարգի զարգացման մակարդակը, քանի որ տարածքի լեռնային բնույթն իր անմիջական ու միջնորդավորված ազդե-

ցությունն է թողնում ինչպես տարաբնակեցման, այնպես էլ ձևավորված տրանսպորտային ցանցի և վերջինիս զարգացման վրա: Կամ բնակչության բացարձակ թիվը և դրանում տարիքային հիմնական խմբերի տարբեր հարաբերակցությունները տարբեր պահանջներ են ներկայացնում ծառայությունների տարբեր տեսակների զարգացման ու տարածքային կազմակերպման նկատմամբ:

Ոչ արտադրական ոլորտի հաստատությունների տեղաբաշխումը պայմանավորված է տվյալ ծառայության նկատմամբ բնակչության պահանջարկով: Դրանց մի մասի (որոնք ամենօրյա են) տեղաբաշխումը հիմնականում կրկնում է բնակչության տեղաբաշխման կամ տարաբնակեցման պատկերը, օրինակ՝ հանրակրթական, առողջապահական և առևտրային սպասարկման հաստատություններ կան ՀՀ բնակչայրերի գերակշիռ մասում: Ինչքան բարձր է պահանջարկի հաճախականությունը, այնքան ծառայություններ մատուցող հաստատությունները պետք է մոտիկ լինեն բնակչությանը:

Խորհրդային տարիներին ՀՀ-ում ոչ արտադրական ոլորտի զարգացման տեմպերն ավելի բարձր են ենի հետպատերազմյան տարիներին, հատկապես 1950-ական թվականներից հետո: 1940-1985 թթ. ընթացքում Հայկական ԽՍՀ-ում ոչ արտադրական ոլորտում զբաղվածների տեսակարար կշիռն ավելացել է շուրջ 2.7 անգամ և 10.9 %-ից հասել է 29 %-ի [28]: Խորհրդային տարիներին մեր երկրի տնտեսության զարգացմանը համապատասխան ձևավորվեց նաև ոչ արտադրական ոլորտը: Այս ոլորտի առանձին ուղղություններով Հայկական ԽՍՀ-ն դարձավ միջազգային չափանիշի երկիր: Առանձնապես նշանակալից էին նվաճումները կրթության ու գիտության բնագավառներում:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում տնտեսության կառուցվածքում տեղի ունեցած փոփոխությունների պատճառով ոչ արտադրական ոլորտի աճի տեմպերը բարձրացել են: Դրա

հետ միաժամանակ զգալիորեն ավելացել է նաև երկրի ՀՆԱ-ում ոչ արտադրական ոլորտի տեսակարար կշիռը: Հարկ է նաև նկատել, որ ծառայությունների ծավալների աճի տեմպերն առավել բարձր են եղել Երևանում, քան միջին հանրապետականն է: 2020 թ. ՀՀ-ում ծառայությունների ծավալի 86.9 %-ը բաժին էր ընկնում մայրաքաղաք Երևանին, մնացած 13.1 %-ը՝ բոլոր մարզերին միասին: 2020 թ. ՀՀ-ում մատուցվող ծառայությունների կառուցվածքում հաշվվում էր 11 ուղղություն (ձև): Ծառայությունների ծավալով երկրորդը Կոտայքի մարզն է՝ 3.1 %, Արարատի, Արմավիրի, Շիրակի և Սյունիքի մարզերում այն տատանվում է 1.4-1.5 %-ի սահմաններում, Լոռիում՝ 1.2 %, մնացած մարզերում՝ 0.5-0.9 %-ի սահմաններում [43]:

Աղյուսակ 55

*ՀՀ առևտրի շրջանառությունը և ծառայությունների ծավալը
(2016-2020 թթ.)[17; 43]*

	Ընդամենը, մլն դրամ			Ընդամենի նկատմամբ, %		
	2016	2017	2019	2016	2017	2020
Առևտրի շրջանառություն, ընդամենը	234376.3	2605972.0	3249220.5	100	100	100
այդ թվում՝						
մանրածախ առևտրի շրջա- նառություն	1243637.0	1335742.8	1548903.8	55.7	51.2	45.3
մեծածախ առևտրի շրջա- նառություն	895883.6	1156517.6	1577651.4	40.1	44.4	51.3
ավտոմեքենա- ների առևտուր	94855.7	113711.6	122665.3	4.2	4.4	3.4


2020 թ. ՀՀ-ում մատուցված ծառայությունների ծավալը բարձակ ցուցանիշով կազմել է 1708450 մլրդ դրամ, որը, պայմա-

Նավորված համավարակով, 2019 թ. համեմատ նվազել է ավելի քան 1.2 անգամ:

Կրթությունը: Իր բազմադարյան պատմության ընթացքում կրթության կազմակերպումը, տարածումը հայ ժողովրդի գոյատևման, հոգևոր-մշակութային ժառանգության ստեղծման և պահպանման կարևոր խնդիրներից են եղել: Նույնիսկ պետականության երկարատև կորուստը չի կարողացել խոչընդոտել կրթության հանդեպ հայ ժողովրդի առանձնահատուկ վերաբերմունքը:


Գծապատկեր 19

Ծառայությունների կառուցվածքը 2020 թ. [43]



Գծապատկեր 20

Ծառայությունների ծավալների կառուցվածքը՝ ըստ ք. Երևանի և
ՀՀ մարզերի (ընդհանուրի նկատմամբ %) [43]



ՀՀ ներկայիս տարածքի սահմաններում 1914/1915 ուսուարում կային տարբեր տիպի 459 դպրոցներ՝ 34.7 հազ. աշակերտով։ Դրանցից ընդամենը 7-ն էր միջնակարգ և ոչ լրիվ միջնակարգ [28]։ Խորհրդային հենց առաջին տարիներից ՀՀ-ում աշխատանքներ են տարվել բնակչության անզրագիտության վերացման ուղղությամբ։ 1921 թ. ռեկրեատ ընդունվեց հասուն տարիքի բնակչության անզրագիտությունը վերացնելու մասին։ 1929 թ. երկրում սկսվեց 8-10 տարեկանների ընդհանուր պարտադիր տարրական ուսուցումը։ 1940 թ. ընդունվեց 7-ամյա ընդհանուր պարտադիր կրթության անցնելու վերաբերյալ որոշում, իսկ 1970-ական թվականներից սկսած՝ Հայկական ԽՍՀ-ում իրականացվում էր համբնդիանուր միջնակարգ (10-ամյա) պարտադիր կրթություն [նույն տեղում]:

1980-ական թթ. կեսերին ՀՀ-ում գործում էին 1479 հանրակրթական դպրոցներ, որոնցում սովորում էր 601 հազ. աշա-

կերտ [28]: Բացառությամբ փոքր զյուղերի՝ մնացած բնակավայրերում գործում էին միջնակարգ դպրոցներ:

Խորհրդային տարիներին կրթական համակարգի զարգացման գործում կարևոր դեր են ունեցել նաև նախադպրոցական հաստատությունները՝ մտուր-մանկապարտեզները: **1980-ական թթ. ՀՀ-ում հաշվվում էր ավելի քան 1200 նախադպրոցական հաստատություն:**

Տնտեսության զարգացման համեմատաբար բարձր տեմպերը և ճյուղային կառուցվածքի բազմազանացումը խորհրդային տարիներին նոր պահանջներ և խնդիրներ էին դնում կրթական համակարգի առջև: Դրանց լրացման համար երկրում ստեղծվել էին տնտեսության տարբեր ոլորտների և ուղղությունների համար մասնագետներ պատրաստող ուսումնարաններ, տեխնիկումներ (քոլեջներ), միջնակարգ մասնագիտական հաստատություններ:

Կրթական ինքնատիպ հաստատություններ էին խոշոր ձեռնարկություններում գործող արտադրական կոմբինատները, որոնք պատրաստում էին կարրեր՝ ձեռնարկության անընդհատ աճող աշխատանքային ռեսուրսների հերթափոխը լրացնելու համար: Խորհրդային վերջին տասնամյակում միայն միջնակարգ պրոֆտեխնիկական ուսումնարանների թիվը ՀՀ-ում 95-ն էր, որտեղ սովորում էր շուրջ 40 հազ. ուսանող: Նույն այդ ժամանակ երկրում գործում էր 66 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն, որոնք ունեին 48 հազ. ուսանող [28]:

Դեռևս Առաջին հանրապետության ժամանակ (1919 թ. մայիսին) բացվեց Հայաստանի պատմության մեջ առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Երևանի պետական համալսարանը՝ Մայր բուհը, որի առանձին ֆակուլտետների հիման վրա հետագա տասնամյակների ընթացքում ստեղծվեցին մասնագիտական ուղղվածության բարձրագույն ուսումնական այլ

հաստատություններ: Խորհրդային վերջին տարիներին երկրում գործում էին 13 բուհեր, որոնցում սովորում էր ավելի քան 55 հազ. ուսանող: Բայց մայրաքաղաքից՝ բուհեր կային նաև Գյումրիում և Վանաձորում: Խ. Աբրվյանի անվան ՀՊՄՀ-ը և Ճարտարագիտական համալսարանն ունեին իրենց մասնաճյուղերը Գորիսում, Գյումրիում, Վանաձորում:

Խորհրդային վերջին տասնամյակում Հայկական ԽՍՀ-ն 10 հազ. բնակչին բաժին ընկնող միջնակարգ մասնագիտական և բուհերում սովորողների թվով ԽՍՀՄ-ում գրաղեցնում էր միջին տեղ և այդ ցուցանիշով զիջում էր Միության միջին ցուցանիշներին (բուհերում ՀՀ ցուցանիշը 163 էր, միջին միութենականը՝ 190 ուսանող) [28]: Սակայն պետք է նկատի ունենանք այն հանգամանքը, որ առանձին մասնագիտությունների գծով Հայաստանից հազարավոր պատանիների և աղջկների սովորել են Մոսկվայի, Լենինգրադի (Սանկտ Պետերբուրգի), Կիևի և խորհրդային երկրի մի շարք այլ քաղաքների բուհերում:

Խորհրդային տարիներին միջնակարգ մասնագիտական կրթական հաստատությունների շարքում առանձնահատուկ տեղ էին գրաղեցնում արվեստի և գեղարվեստի (Երաժշտական, պարի) դպրոցները: Առանձնակի կարևորություն ունեին նաև սպորտային դպրոցները: Երևանից բացի՝ այդպիսիք կային նաև գրեթե բոլոր քաղաքներում, շրջկենտրոններում, ինչպես նաև զյուղական խոշոր բնակավայրերում:

Խորհրդային տարիներին մեր երկրում կրթական համակարգի կազմակերպման առավել սուր խնդիրներից էր բուհական և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների խիստ կենտրոնացվածությունը մայրաքաղաքում (13 բուհերից 11-ը գտնվում էին Երևանում):

Անկախության անցած ժամանակահատվածում ՀՀ կրթական համակարգը կրել է ինչպես կառուցվածքային, այնպես էլ տարա-

ծական կազմակերպման զգալի փոփոխություններ: Համապատասխան օրենսդրական փոփոխություններից հետո, բացի պետական հաստատություններից, ինչպես հանրակրթության, այնպես էլ բուհական համակարգում սկսեցին գործել մասնավոր հանրակրթական դպրոցներ (վարժարաններ) և բուհեր:

2019 թ. ՀՀ-ում գործում էին մոտ 906 նախադպրոցական հաստատություններ, 1400 հանրակրթական դպրոց՝ 390.5 հազ. աշակերտով: Զգալի թիվ են կազմում նաև երաժշտական, արվեստի, գեղարվեստի, սպորտի և շախմատի դպրոցները: Վերջին երկու տասնամյակում ՀՀ բնակչության թվաքանակի նվազման, ինչպես նաև ծննդիության մակարդակի անկման պատճառով զգայիռեն կրծատվել է հանրակրթական դպրոցներում ու բուհերում սովորողների թիվը:

Գիտությունը: Գիտության մեջ կատարված տեղաշարժերն ապահովում են ԳՏԱ, վերջինս կ՝ ԳՏՀ: Ժամանակակից ինդուստրիալ և հետինդուստրիալ հասարակություններում գիտությունը դարձել է անմիջական արտադրողական ուժ:

Մեր երկրում գիտության զարգացման հիմքերը դրվել են Առաջին հանրապետության տարիներին, իսկ խորերդային տարիներին այն դարձել է Հայկական ԽՍՀ ոչ արտադրական ոլորտի առավել զարգացած ճյուղերից մեկը:

Աղյուսակ 56

*Հանրակրթության հիմնական ցուցանիշները ՀՀ-ում տարեկերպին
(2008-2020 թթ.)/[17; 49]*

	2008	2013	2020
1. Նախադպրոցական հաստատությունների քանակը	628	697	910
դրանցում երեխաների քանակը, 1000 երեխա	53.7	69.8	56.1
%-ով՝ համապատասխան տարի-	24.2	27.3	24.3

քի երեխաների քանակից			
ապահովածությունը տեղերով (100 տեղի հաշվով)	75.4	86.6	91.5
2. Հանրակրթական դպրոցների քանակը	1475	1434	1402
դրանցում սովորողներ, 1000 մարդ	414.8	360.4	3909.3
3. Նախնական մասնագիտական (արհեստագրքական) ուսումնա- կան հաստատությունների թիվը	28	45	48
դրանցում ուսանողներ (1000 մարդ)	4.6	7.4	6.8
ընդունվել են ուսանողներ (1000 մարդ)	2.1	3.4	2.8
4. Միջին մասնագիտական ու- սումնական հաստատությունների քանակը	104	99	95
դրանցում ուսանողներ (1000 մարդ)	31.8	30.1	28.3
ընդունվել են ուսանողներ (1000 մարդ)	11.9	9.8	10.4
պատրաստվել են մասնագետներ (1000 մարդ)	8.6	7.0	6.6
10000 բնակչի հաշվով	26.6	23.3	19.3
5. Բուհերի քանակը	90	63	55
դրանցում սովորողներ (1000 մարդ)	114.4	85.9	69.0
ընդունվել են ուսանողներ (1000 մարդ)	27.7	19.0	17.0
պատրաստվել են մասնագետներ (1000 մարդ)	26.1	21.9	15.6
10.000 բնակչի հաշվով	80.6	72.7	53.4

ՀՀ գիտական կյանքում շրջադարձային դեր ունեցավ 1943 թ. բացված Գիտությունների ազգային ակադեմիան: Հայկական ԽՍՀ-ում գիտության բուռն զարգացում տեղի է ունեցել հետպատերազմյան տարիներին, երբ ԳԱԱ-ի կազմում մեկը մյուսի հետևից բացվեցին գիտության տարբեր ուղղությունների գծով ինստիտուտներ, հիմնարկ-ձեռնարկություններ, գիտարտադրական միավորումներ: Գիտական աշխատանքներ էին իրականացվում նաև հանրապետության բուհերի մի քանի հարյուրից անցնող ամբիոններում: Խորհրդային վերջին տարիներին ՀՀ-ում գիտական աշխատանքներ էին իրականացվում 104 կազմակերպությունում (որոնցից 65-ը՝ ԳԱԱ կազմում): Գիտաշխատողների թիվը հասնում էր 23 հազարի: Ոչ միայն խորհրդային երկրում, այլ նաև աշխարհի մասշտարով Հայկական ԽՍՀ-ն առաջատար տեղ էր զբաղեցնում 10.000 բնակչին բաժին ընկնող գիտնականների թվով: Ավելի քան յոթ հազար գիտաշխատողների ունեին գիտությունների դոկտորի և թեկնածուի գիտական աստիճան [28]: Աստղաֆիզիկայի, հայագիտության, մաթեմատիկայի, տեսական և կիրառական ֆիզիկայի, կենսաքիմիայի և գիտության մի քանի այլ ճյուղերի գծով Հայկական ԽՍՀ-ն դարձել էր միութենական ու համաշխարհային ճանաչում ունեցող կենտրոն:

Գիտության տարածքային կազմակերպման առանձնահատկություններից է նրա կենտրոնացվածության բարձր աստիճանը: Խորհրդային տարիներին Երևանում էին գտնվում Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիան, ճյուղային գիտական հիմնարկների և բուհերի ամբիոնների շուրջ 80 %-ը: Մայրաքաղաքից բացի՝ գիտական հիմնարկներ կային նաև Գյումրիում, Վանաձորում, Բյուրականում, Էջմիածնում, Կապանում, Աշտարակում և մի քանի այլ բնակավայրերում:

1990-ական թթ. ՀՀ-ում ստեղծված տնտեսական խորը ճգնաժամն իր անմիջական ազդեցությունն ունեցավ գիտության զար-

գացման վրա: Էականորեն կրծատվեցին պէտքուջեկից ֆինանսավորվող գիտահետազոտական թեմաները, երկրից սկսվեց «ուղղեղների հոսք»: ՀՀ ժամանակակից աշխարհաքաղաքական իրավիճակը, սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական խնդիրների լուծումը հրամայական պահանջ են դարձել վերականգնելու մեր երկրի գիտական ներուժի նախկինում ունեցած մակարդակը: Վերջին տասնամյակում ՀՀ-ում գիտության զարգացման մասին ամփոփ պատկերացում են տալիս ստորև բերվող տվյալները: 2019 թ. ՀՀ-ում հետազոտություններ և մշակումներ էին իրականացնում 63 գիտական կազմակերպություններ: Հետազոտությունների և մշակումների վրա կատարված ներքին ծախսերը 2008 թ. կազմել են 7425.1 մլն դրամ, 2019 թ.՝ 11682.5 մլն դրամ: Այդպիսի աշխատանքներում ներգրավված հետազոտողների և տեխնիկների թիվը 2008 թ. կազմել է 5671, 2019 թ.՝ 3512 մարդ: Դրանցից 2008 թ. գիտությունների դոկտորներ էին 532-ը, թեկնածուներ՝ 2031-ը, 2019 թ.՝ համապատասխանաբար 425 և 1378 մարդ:

Գիտության զարգացման կարևոր նախադրյալներից են երիտասարդ կադրերի պատրաստումը և գիտական կադրերի սերնդափոխության ապահովումը: Եթե 2014 թ. ՀՀ-ում ասպիրանտների ընդհանուր քանակը կազմում էր 1223, ապա՝ 2019 թ.՝ 935, որից 813-ը՝ բուհական, 123-ը՝ գիտական հաստատություններում: Ըստ գիտության ճյուղերի՝ ՀՀ-ում ասպիրանտներ էին պատրաստվում քսան մասնագիտություններով: 2019 թ. առավել մեծ թիվ էին կազմում տնտեսագիտական (194), տեխնիկական (107), քանասիրական (121), ֆիզմաթ (73), իրավաբանական (61), պատմական (78) մասնագիտություններով ասպիրանտները: Եթե 2014 թ. գյուղատնտեսական գիտությունների գծով ՀՀ-ում եղել է 23 ասպիրանտ, ապա 2019 թ.՝ ընդամենը 4, իսկ անասնաբուժական մասնագիտության գծով՝ 4 և 0:

Առողջապահությունը: Յուրաքանչյուր երկրի ազգային անվտանգության պահպանման կարևորագույն խնդիրներից են առողջապահական համակարգի զարգացումն ու կատարելազոր-ծումը:

Առողջապահական համակարգի գլխավոր խմբիրներն են բնակչության առողջության պահպանումը, հիվանդությունների կանխարգելումն ու բուժումը: Երկրի առողջապահական համակարգի զարգացումը պայմանավորված է մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մեծությունից և պետության կողմից մեկ շնչի հաշվով առողջապահական համակարգին հատկացվող գումարից:

ՀՀ ժամանակակից տարածքում առողջապահական առաջին հիմնարկներն ի հայտ են եկել XIX դարի երկրորդ կեսերից: Չնայած՝ դրան՝ դարեր շարունակ մեր ժողովուրդը լայնորեն կիրառել է ժողովրդական բժշկության նվաճումները: Նախախորհրդային Հայաստանում գրեթե 1 մյն բնակչությանը սպասարկել է ընդամենը 73 բժիշկ, գործել է 6 հիվանդանոց՝ 272 մահճակալով [28]: ՀՀ-ում առողջապահական համակարգի աննախադեպ զարգացում տեղի ունեցավ խորհրդային իշխանության տարիներին: Հիվանդանոցներ և առողջապահական այլ կարգի հաստատություններ ստեղծվեցին հանրապետության վարչական բոլոր շրջկենտրոններում, բուժկետեր՝ գյուղական բնակավայրերի մեծ մասում:

Հայկական ԽՍՀ-ն Խորհրդային Միությունում առանձնանում էր բժշկագիտական առանձին ուղղությունների գծով իրականացվող գիտահետազոտական աշխատանքների բարձր մակարդակով: Երևանը դարձել էր ԽՍՀՄ մասշտաբով բժշկագիտական հայտնի կենտրոն: Այստեղ, բացի ՀՀ բնակչությունից, բուժում էր ստանում նաև հարևան հանրապետությունների հատկապես հայազգի բնակչությունը: Երևանում էին կենտրոնացված երկրի հիվանդանոցային մահճակալների ավելի քան 40 և բժիշկների ընդհանուր թվի 60 %-ը, բժշկագիտական, առողջապահա-

կան և բժշկական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների մեծամասնությունը [նույն տեղում]:

Անկախության հատկապես առաջին տասնամյակում ՀՀ առողջապահության ոլորտը ևս հայտնվեց ձգնաժամային իրավիճակում: Ծանր վիճակում հայտնվեցին նախկին շրջկենտրոնների բժշկական հիմնարկները: Անկախության տարիներին ՀՀ-ում հիվանդանոցային մահճակալների թիվը կրծատվել է ավելի քան երկու անգամ: 2019 թ. դրանց թիվը կազմում էր 11778 կամ 10.000 բնակչի հաշվով մոտ 39.8: ՀՀ-ում գործում էին 125 հիվանդանոցային հիմնարկներ: Բոլոր մասնագիտությունների գծով բժիշկների թիվը կազմում էր շուրջ 14 հազ.(10 հազ. բնակչի հաշվով՝ 47.2):

ՀՀ առողջապահական համակարգում կարևոր դեր ունեն առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցող հաստատությունները, որոնց թիվը 2019 թ. կազմում էր 494, կանանց կոնսուլտացիաների, մանկական պոլիկլինիկաների, մանկական բաժանմունք ունեցող հիմնարկների և ընտանեկան բժշկության կարինետների թիվը՝ 462: ՀՀ ամբողջ տարածքում գործում է շտապ բուժօգնության ծառայությունը, որոնց կայանների թիվը հասնում է 72-ի:

Առողջապահության տարածքային կազմակերպման մեջ առանձնանում է Երևանը, որտեղ կենտրոնացված են հանրապետական նշանակության բժշկական ծառայություններ մատուցող հիմնարկների գերակշիռ մասը, մասնագիտացված հիվանդանոցները: Մայրաքաղաքին բաժին են ընկնում ՀՀ հիվանդանոցային մահճակալների մոտ 65 %-ը, բժիշկների թվի 72.5%-ը, միջին բուժանձնակազմի 51 %-ը:

ՀՀ առողջապահական համակարգի տարածքային կազմակերպման ու զարգացման հիմնախնդիրներից մեկը տարածաշրջանային կենտրոններում, Երևանից բացի, մասնագիտաց-

ված ծառայություններ մատուցող առողջապահական հիմնարկների ստեղծումն է, որը նաև կթեթևացնի Երևանի հիվանդանոցային հիմնարկների բեռնվածությունը, մյուս կողմից կնպաստի մայրաքաղաքի հեռու ընկած մարզերի ու տարածաշրջանների բժշկական սպասարկման մակարդակի բարձրացմանը։ Վերջինս իր դերը կունենա նաև ՀՀ տարածքային համաշափ զարգացման գործում։

Հոգևոր մշակությունը: Մեր երկրում բնակչության մշակութային սպասարկման ձևավորման ու զարգացման համար քիչ թե շատ բավարար պայմաններ ստեղծվել են խորհրդային տարիներին, երբ ամբողջ հանրապետության տարածքում ստեղծվեց գրադարանների, ակումբների, թանգարանների, թատրոնների, կինոդահլիճների, համերգասրահների լայն ցանց։ Այս իմաստով բացառիկ դեր են ունեցել Ա. Մյասնիկյանի անվան ազգային գրադարանը, Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը, Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնը, Գ. Սունդուկյանի անվան պետական ուրամատիկական թատրոնը, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տունը, Կ. Դեմիքյանի անվան մարզահամերգային համալիրը, Հայաստանի և Երևանի պատմության թանգարանները, հանրապետական նշանակության մի շարք այլ թատրոններ, թանգարաններ, համերգասրահներ ու գրադարաններ։

Եթե XX դարի սկզբներին ՀՀ ներկայիս տարածքում գործում էին ընդամենը **13 ոչ մեծ գրադարաններ՝** մոտ 9 հազ. կտոր գրքային ֆոնդով, ապա 1985 թ. ոչ մասնագիտական (բնակչության լայն շերտերի համար) գրադարանների թիվը հասնում էր 1400-ի, որոնք ունեին շուրջ 22 մլն կտոր գիրք [28]։ Այդ տարիներին աննախադեպ զարգացում ունեցավ նաև **գրահրատարակչական գործը**, որի հիմնական կենտրոնը Երևանն էր։

ՀՀ-ում մշակութային սպասարկման և տարածքային կազմակերպման գործում մեծ դեր ունեցավ գրեթե բոլոր բնակչայրերում ակումբային հիմնարկների, մշակույթի պալատների և կինոթատրոնների ստեղծումը: 1980-ական թթ. Վերջերին երկրում կային ավելի քան 1250 ակումբային հիմնարկ և շուրջ 900 կինոտեղակայում [նույն տեղում]: Այդ ժամանակ Հայկական ԽՍՀ 8 քաղաքում (Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Արտաշատում, Կապանում, Գորիսում, Գավառում, Հրազդանում՝ չգործող) կային 14 պետական թատրոն, բազմաթիվ ժողովրդական թատրոններ ու թատերական խմբեր [նույն տեղում]: Մշակութային ինքնատիպ սպասարկում էին իրականացնում գյուղական բնակավայրերում ձևավորված ինքնազործ գեղարվեստական խմբերը:

Հանրապետության բնակչության մշակութային սպասարկման գործում ուրույն դեր է ունեցել Հ. Բեկնազարյանի անվան «Հայֆիլմ» կինոստուդիան, որի նկարահանած հարյուրավոր կինոնկարներ այժմ ել հայ կինոարվեստի անգնահատելի արժեքներից են:

1990-ական թթ. ՀՀ-ում տիրող սոցիալ-տնտեսական ծանր պայմաններն էականորեն ազդեցին նաև մշակութային սպասարկման վրա: Այդ ոլորտի աշխատողները և մշակութային գործիչները հայտնվեցին սոցիալական ծանր պայմաններում, և նրանց մի մասը բռնեց արտազաղթի ճանապարհը:

ՀՀ-ում մշակութային կյանքի և սպասարկման աշխուժացում վերսկսվեց 2000-ական թթ. սկզբներից, երբ երկրում նկատվեց ընդհանուր տնտեսական իրավիճակի քիչ թե շատ բարելավում: 2008 թ. ՀՀ-ում գործում էր 1034 գրադարան, 2019 թ.՝ 673: Դրանցից 154-ը գտնվում է քաղաքներում, 519-ը՝ գյուղերում: Դրանց գրքային ֆոնդը կազմում է 17.9 մլն (14.1-ը՝ քաղաքներում, 3.8-ը՝ գյուղերում): Վերջին տասը տարում ՀՀ-ում գործող թանգարանների թիվն ավելացել է 4-ով (2008 թ.՝ 96, 2019 թ.՝ 100): Դրանցից

34-ը՝ պատմական են, 21-ը՝ հուշային, 10-ը՝ երկրագիտական, 34-ը՝ արվեստագիտական ու գրականագիտական, 1-ը՝ այլ ուղղվածության:

Խորհրդային տարիների համեմատությամբ մոտ երկու անգամ ավելացել է ՀՀ-ում գործող պետական թատրոնների թիվը (14-26՝ 2019 թ.): Դրանցից 18 թատրոնները դրամատիկական, կամերային և երաժշտական են, 6-ը՝ մանկական և պատանի հանդիսատեսի, 1-ը՝ օպերային և բալետի, 1-ը՝ մարիոնետների:

ՀՀ-ում մշակութային հիմնարկների տեղաբաշխման գլխավոր առանձնահատկություններից մեկը թանգարանների և թատրոնների կենտրոնացվածությունն է մայրաքաղաքում և ավելի խոշոր քաղաքներում, որը պայմանավորված է այդպիսի օբյեկտների առավելապես քաղաքային բնակվայրերում տեղաբաշխման բնույթով: Զարկ է նաև կարևորել այն խնդիրը, որ ՀՀ-ում զբուաշրջության զարգացման գերակա խնդիրը պահանջում է ազրու և գյուղական ապրելակերպին բնորոշ թանգարանների ստեղծում հենց գյուղական բնակվայրերում:

Բնակարանային ֆոնդը և կենցաղային սպասարկումը: Յուրաքանչյուր երկրում բնակչության կենսամակարդակի կարևոր ցուցանիշներից են բնակարանային ֆոնդով ապահովվածությունը և մեկ չնչին բաժին ընկնող բնակելի տարածքի չափը: 1980-ական թթ. վերջերին մեր երկրում բնակելի ընդհանուր ֆոնդը կազմում էր շուրջ 46 մլն մ², որը մոտավորապես հավասար չափով բաշխված էր հանրային և քաղաքացիների անձնական սեփականություն համարվող ֆոնդերի միջև [28]: Անկախության հենց առաջին տարիներից հանրային բնակարանային ֆոնդը գրեթե ամբողջությամբ սեփականաշնորհվեց բնակչության կողմից:

Հանրապետության բնակարանային ֆոնդին զգալի վնաս հասցրեց 1988 թ. երկրաշարժը: Երկրաշարժից հետո առաջին եր-

կու տարիների ընթացքում այն նշանակալիորեն վերականգնվեց, սակայն Գյումրիում ու Վանաձորում բնակչության որոշակի հատված մինչև այժմ է ապրում է վագոն-տնակներում:

Վերջին տարիներին ՀՀ բնակչության բնակարանային ֆոնդով ապահովածության շարժմանցն ունի հետևյալ պատկերը՝ 2015 թ.՝ 95 մլն մ², 2020 թ.՝ 98.6 մլն մ²: **Բնակարանային ֆոնդի 55.7 %-ը բաժին է ընկնում քաղաքային, մնացածը՝ զյուղական բնակչությանը:** 2019 թ. դրությամբ ՀՀ-ում բազմաբնակարան շենքերի բնակարանների քանակը կազմել է 444095, որից 91132-ը՝ մեկսենյականոց, 150171-ը՝ երկուսենյականոց, 159673-ը՝ երեսենյականոց, 43119-ը՝ 4 և ավելի: Դրանցից 233895-ը (52.6%) բաժին է ընկնում Երևանին: 2019 թ. բազմաբնակարան շենքերի բնակարանների քանակն ու ընդհանուր մակերեսը քաղաքային բնակավայրերում կազմել է համապատասխանաբար 444095 բնակարան՝ 28487819 մ² ընդհանուր մակերեսով: Գյուղական վայրերում բնակելի տների ու բազմաբնակարան շենքերի բնակարանների քանակն ու ընդհանուր մակերեսը 2019 թ. կազմել են 25107 բնակարան՝ 17957742 մ² ընդհանուր մակերեսով:

Աղյուսակ 57

Երևան քաղաքի և մարզերի պայմանական 10.000 բնակչի հաշվով մեկ բնակչի ապահովածությունն ընդհանուր բնակմակերեսով (մ², 2019 թ.)/[16]

թ. Երևան	23.2		
Արագածոտն	45.1	Կոտայք	38.3
Արարատ	34.1	Շիրակ	31.6
Արմավիր	32.6	Սյունիք	31.2
Գեղարքունիք	32.7	Վայոց ձոր	40.3
Լոռի	42.1	Տավուշ	48.6

ՀՀ սպասարկման ոլորտի համակարգում իր ուրույն տեղն ունի բնակչության կենցաղային սպասարկումը: Այն աչքի է ընկ-

նում մատուցվող ծառայությունների ծավալով և բազմազանությամբ: Դեռևս խորհրդային վերջին տասնամյակում բնակչությանը ցույց տրվող կենցաղային ծառայությունների տեսակներն անցնում էին 400-ից: Եթե նախկինում այդպիսի ծառայություններն առավելապես տեղաբաշխված էին մայրաքաղաքում, խոշոր քաղաքներում և շրջկենտրոններում, ապա ներկայումս նման ծառայություններ ձևավորվել են նաև մեծ թվով գյուղական բնակավայրերում:

Առևտուրը: Առևտուրի բնութագրման հիմնական ցուցանիշներն են առևտուրի շրջանառությունը (գնվող և վաճառվող ապրանքների ծավալն արժեքային արտահայտությամբ), առևտուրային մակերեսները և առևտուրային օբյեկտների քանակը: Առևտուրի շրջանառությունը ներառում է մանրածախությունը և առևտուրի շրջանառությունը և ավտոմեքենաների առևտուրը: **Մանրածախ առևտուրի շրջանառությունը** վերջնական սպառման կամ տնային տնտեսությունների կողմից օգտագործվող սպառողական ապրանքների վաճառքն է արժեքային արտահայտությամբ: **Մեծածախ** է առևտուրային այն գործունեությունը, երբ գնորդը մեծ խմբաքանակով ապրանքներ է ձեռք բերում՝ դրանք հետագայում վերավաճառելու համար այլ վաճառողներին, վերամշակողներին, բայց ոչ վերջնական սպառողներին:

2020 թ. ՀՀ-ում առևտուրի շրջանառությունը կազմել է 2858057.8 մլն դրամ: Մանրածախ առևտուրի շրջանառության կառուցվածքում 80.2 %-ը բաժին էր ընկնում խանութներին, 4.4 %-ը՝ սպառողական ապրանքների շուկաներին, 2 %-ը՝ կրաքաներին, 0.8 %-ը՝ գյուղատնտեսական շուկաներին, 12.6 %-ը՝ առևտուրի այլ օբյեկտներին: Մանրածախ առևտուրի շրջանառությունը ՀՀ մեկ շնչի հաշվով 2013 թ. կազմել է մոտ 481 հազ. դրամ, 2020 թ.՝ 438,0 հազ. դրամ: 2013-2020 թթ. ՀՀ-ում մանրածախ առևտուրի շրջանառու-

թյունն ըստ մարզերի և Երևան քաղաքի ունեցել է հետևյալ պատկերը (Աղ. 58):

Ինչպես ցույց են տալիս Աղյուսակ 58-ում բերված տվյալները, վերջին տարիներին տեղի են ունենում մանրածախ առևտրի շրջանառության կառուցվածքում Երևանի տեսակարար կշռի աստիճանական նվազում (2013-2020 թթ.՝ 14.2 տոկոսային կետով), մարզերի՝ աստիճանական ավելացում: Այդուհանդերձ, պետք է նկատել, որ մայրաքաղաքին բաժին են ընկնում երկրի բնակչության 36.6 %-ը, մանրածախ առևտրի շրջանառության մոտ 70 %-ը, այսինքն՝ բնակչության տեսակարար կշռի համեմատությամբ՝ ավելի քան 1.9 անգամ ավելին:

Աղյուսակ 58
Մանրածախ առևտրի շրջանառությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի (ընդհանուրի նկատմամբ %)[16, 43]

	2013	2014	2015	2016	2017	2020
ՀՀ	100	100	100	100	100	100
Ք. Երևան	83.9	82.6	76.4	74.0	74.1	69.7
Արագածոտն	1.0	1.2	1.3	1.2	1.3	1.7
Արարատ	2.1	2.0	2.7	3.1	3.3	4.4
Արմավիր	2.0	2.2	3.8	3.6	3.3	4.4
Գեղարքունիք	1.3	1.5	1.7	1.7	1.7	2.5
Լոռի	1.6	1.5	3.6	5.2	4.6	2.6
Կոտայք	3.1	2.9	3.5	5.2	4.6	5.3
Շիրակ	2.0	2.5	3.5	3.8	3.9	4.3
Սյունիք	1.4	1.9	1.2	1.3	1.5	2.0
Վայոց ձոր	0.3	0.3	0.4	0.4	0.5	0.7
Տավուշ	1.3	1.4	1.9	2.0	2.5	2.4

Սա ևս վկայում է մայրաքաղաքի և մարզերի միջև սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակների զգալիորեն մեծ տարբերությունների մասին:

Ֆինանսավարկային սպասարկումը: Յուրաքանչյուր պետության տնտեսության զարգացման համար բացառիկ նշանակություն ունեն բանկային համակարգը և վերջինիս միջոցով իրականացվող ֆինանսավարկային սպասարկումը: **Բանկերի միջոցով տվյալ երկրի տնտեսությունն ինտեգրվում է համաշխարհային և առանձին երկրների տնտեսությանը, իսկ կոնկրետ երկրի ներսում իրականացվում է տնտեսվարող սուբյեկտների ու անհատ քաղաքացիների ֆինանսավարկային սպասարկումը:**

ՀՀ բանկային համակարգն ունի 100 տարվա պատմություն: Այդ համակարգում առանցքային մարմինը **ՀՀ կենտրոնական բանկն** է, որն իրականացնում է երկրում վարկաֆինանսական սպասարկման վերահսկողություն, բողարկում է ազգային դրամը: Գործում են նաև տասնյակ **առևտրային բանկեր**, ինչպես նաև աշխարհում հայտնի մի քանի բանկերի մասնաճյուղեր: Վերջիններիս գլխամասային գրասենյակները գտնվում են Երևանում և բացի Երևանից՝ մասնաճյուղեր են ստեղծել **ՀՀ բոլոր մարզենտրոններում**, խոշոր քաղաքներում, սահմանային անցակետերում, առողջարաննային և գրոսաշրջային կենտրոններում:

Բնակչության վարկաֆինանսական սպասարկման մակարդակի բարձրացմանն էապես նպաստեց նաև բանկային համակարգում համացանցի ներդրումը: Սա հնարավորություն տվեց աշխարհի տարբեր երկրներից ֆինանսական փոխանցումներ կատարելու մեր երկիր և հակառակը: **Առևտրային բանկերն իրականացնում են տնտեսավարող սուբյեկտների և անհատ քաղաքացիների վարկաֆինանսական սպասարկում, բնակչությունից ընդունում են ավանդներ, տրամադրում են վարկեր և կատարում բանկային այլ գործառույթներ:**

Վերջին ավելի քան երկու տասնամյակի ընթացքում **ՀՀ-ում բանկային համակարգի տարածական ընդլայնումն իր նշանակալից դերն է ունեցել մարզերի զարգացման գործում:**

Վերջին տասնամյակում ՀՀ-ում արագ տեմպերով զարգանում են **ապահովագրական ծառայություններ** իրականացնող կազմակերպությունները: Դրանք ՀՀ-ում յոթն են: Վերջիններիս գլխամասային գրասենյակները ևս գտնվում են Երևանում, որոնք իրենց մասնաձյուղերն են ստեղծել նաև մարզերում: Առավել խոշոր ապահովագրական ընկերություններն են «**Օռոգոստրախը»** և «**Ինգոարմենիան»»:**

Ժամանակակից ինդուստրիալ և հետինդուստրիալ հասարակություններում տնտեսության կառուցվածքում արագ տեմպերով զարգանում են **կապի և տեղեկատվության ճյուղերը**: Կապը և տեղեկատվությունը ԳՏՀ-ի շնորհիվ դարձել են կարևորագույն ապրանք և նշանակալից ազդեցություն են թողնում տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման վրա: Կապի ավանդական միջոցներին ավելացել են ժամանակակից ձևերը (տեսակապ, բջջային հեռախոս, համացանց և այլն): Վերջին երկու տասնամյակում տեղի է ունենում ընդհանուր օգտագործման հեռախոսային ցանցից օգտվողների թվաքանակի նվազում: 2008 թ. հիմնական հեռախոսային սարքավորումների քանակը ՀՀ-ում կազմում էր 625, 2019 թ.՝ 441 հազ.: Առավել արագ տեմպերով նվազում է զյուղական բնակավայրերում ընդհանուր օգտագործման հիմնական հեռախոսային սարքավորումների քանակը: Մյուս կողմից, բարձր տեմպերով ավելացել է ոչ լարային հեռախոսային բաժանորդների թիվը: Բջջային կապի ակտիվը բաժանորդների քանակը 2001 թ. 25 հազարից 2019 թ. հասել է շուրջ 3.5 մլն-ի: Արագ տեմպերով աճել է նաև համացանցի բաժանորդների թիվը՝ 2001 թ. 7 հազ., 2019 թ.՝ 2.6 մլն: Բայց նշվածներից՝ բնակչության համար կապի և տեղեկատվության աղբյուր են նաև **մալուխային հեռուստառեսություններ** (բաժանորդների թիվը 2013 թ. 70.2-ից 2019 թ. հասել է 127 հազարի), 211 **հեռուստակայանները**, պարբե-

բական տպագրական մամուլը (թերթեր, ամսագրեր և այլն) և գանգվածային լրատվության այլ միջոցները:

Հանրապետության ոչ արտադրական կամ սպասարկման ոլորտի առանձին ճյուղերի վերը բերված նկարագիրը ցույց է տալիս, որ ի տարբերություն արտադրական ոլորտի՝ այն առանձնանում է կենտրոնացվածության առավել բարձր աստիճանով: Եթե մայրաքաղաքին բաժին է ընկնում հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքի **40.8 %**, ապա մանրածախ առևտուրը և ծառայությունները կազմում են համապատասխանաբար **69.7** և **86.9 %**: Զգալի է տարբերությունը ՀՀ քաղաքային և գյուղական բնակչության (կամ բնակավայրերի) միջև սպասարկման ոլորտի տարբեր ծառայություններից օգտվելու առումով: Նշված հիմնախնդիրն առավել սուր է հանրապետության սահմանամերձ, ծայրամասային, լեռնային և բարձրլեռնային բնակավայրերում:

4.15. Զբոսաշրջային ինդուստրիան

Զբոսաշրջությունն իրականացնում է մարդկանց ռեկրեա-
շիոն, հանգստի, ժամանցային, զվարձանքի, հոգևոր մշակու-
թային այլ պահանջմունքների բավարարում և սերտ կապեր ունի
տնտեսության արտադրական ոլորտի հետ: Այն հանդես է գալիս
ոչ միայն որպես ծառայությունների մատուցող, այլ նաև սպա-
սարկման առանձին տարրերի սպառող: Սպառման միջոցով զբո-
սաշրջությունը նպաստում է առանձին երկրների և տարածա-
շրջանների տնտեսական զարգացմանը, ստեղծում է լրացուցիչ
աշխատատեղեր, խթանում է սպասարկող ճյուղերի զարգացու-
մը: Զբոսաշրջությունն արտացոլում է հասարակության էվոլյու-
ցիայի որոշակի փուլ, որն ուղեկցվում է քաղաքային բնակչության
աճով, կյանքի միջին տևողության աճով, հասարակական հարս-
տության և բարեկեցության ավելացմամբ, տնտեսության ճյու-
ղային կառուցվածքի կատարելագործմամբ և տեխնոլոգիական
նորամուծություններով: Զբոսաշրջությունը որոշակիորեն ար-
տացոլում է նաև մարդու էվոլյուցիան, ավելի կոնկրետ՝ նրա պա-
հանջմունքների էվոլյուցիան, որոնք արտահայտվում են զբո-
սաշրջության ձևերի բազմազանությամբ:

Հաշվի առնելով ՀՀ տարածքում առկա զբոսաշրջային և ռեկ-
րեացիոն բացառիկ ռեսուրսների առկայությունը, խաչմերու-
կային աշխարհագրական դիրքը, զբոսաշրջության ինչպես ա-
վանդական, այնպես էլ նոր ուղղությունների զարգացման համար
բավարար ներուժի առկայությունը՝ ՀՀ կառավարության կողմից
զբոսաշրջությունը հայտարարվել է տնտեսության զարգացման
գերակա ուղղություն:

Երկրի տնտեսական առաջընթացի և զբոսաշրջային ին-
դուստրիայի զարգացման համար առաջնահերթ նշանակություն
ունի ներգնա զբոսաշրջության զարգացումը, որն ապահովում է
ֆինանսական ռեսուրսների ներհոսք և ՀՆԱ-ի աճ: ՀՀ-ն

անդամակցել է Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությանը, որը հնարավորություն է տալիս ինտեգրվելու միջազգային գրոսաշրջային գործընթացներին, ՀՀ-ն ներկայացնելու միջազգային գրոսաշրջային տոննավաճառներում և փառատոններում:

Մեր երկրում գրոսաշրջային տնտեսության և բնակչության հանգստի կազմակերպման հիմքերը դրվել են 1950-ական թվականներից հետո: ՀՀ տարբեր շրջաններում սկսեցին ձևավորվել բնակչության հանգստի կազմակերպման համար բազաներ՝ պրոֆիլակտորիաներ, դպրոցականների համար հանգստի ճամբարներ, պանսիոնատներ, առողջարաններ և այլն: Կուրորտներ և առողջարաններ ստեղծվեցին բնառեկրեացիոն ներուժով աշքի ընկնող Ձերմուկում, Ծաղկաձորում, Արգնիում, Աղվերանում, Հանքավանում, Ստեփանավանում, Դիլիջանում, Սևանի ափին և այլ տարածքներում: Բնական և ճարտարապետական հուշարձաններով առավել հարուստ տարածքներում ձևավորվեցին գրոսաշրջային բազաներ: 1980-ական թթ. վերջերին ՀՀ-ում կային ուրուկերեացիոն շրջան և 11 կուրորտային գոնա [28]:



Նկ.12. Խնձորեսկի կախովի ճոճվող կամուրջը

ՀՀ-ում գործում էին 105 առողջարան և հանգստի հիմնարկ՝ շուրջ 22 հազ. տեղով: Այնտեղ տարեկան իրենց հանգիստն էր անցկացնում 580 հազ. մարդ: Գործում էին նաև 23 գրոսաշրջային հանգրվան՝ 5600 տեղով, և 7 հանգստի բազա [28]: Նշված գործընթացներից բացի՝ ՀՀ-ում, 1960-ական թվականներից սկսած, աշխատանքներ են տարվել ներգնա գրոսաշրջության զարգացման համար: Կառուցվել են համապատասխան չափորոշիչներով հյուրանոցներ, սննդի ծառայություններ: Աշխատանքներ են տարվել գրոսաշրջության ոլորտի մասնագետների պատրաստման ուղղությամբ: Այդ նպատակով 1977 թ. ԵՊՀ-ում բացվեց հայրենագետ-էքսկուրավարի մասնագիտությունը:

Խորհրդային վերջին տարիներին մեր երկիր էր տարեկան այցելում միջին հաշվով 100 հազ. գրոսաշրջիկ արտասահմանից, 300 հազ.[՝] ԽՍՀՄ այլ հանրապետություններից: Անկախությունից հետո առաջին 5-6 տարիների ընթացքում կտրուկ նվազեց ներգնա գրոսաշրջիկների թիվը:

Զրոսաշրջային ներգնա հոսքերի ու ներքին գրոսաշրջության աստիճանական աշխուժացում սկսվեց 1990-ական թթ. վերջինից տնտեսության մեջ տեղի ունեցած դրական տեղաշարժերի ու առաջընթացի շնորհիվ: Ինչպես արտասահմանյան, այնպես էլ ներքին կապիտալ ներդրումների շնորհիվ արագ տեմպերով սկսեցին զարգանալ գրոսաշրջային ենթակառուցվածքի առանձին բաղադրիչները: Կառուցվեցին միջազգային չափորոշիչներին համապատասխանող հյուրանոցներ, վերակառուցվեցին հները: Ստեղծվեցին գրոսաշրջային ենթակառուցվածքի նոր շինություններ, գրոսաշրջային գործունեություն իրականացնող կազմակերպություններ: Տեղի է ունեցել հյուրանոցների ու հյուրանոցային տնտեսության օբյեկտների կտրուկ աճ: Եթե 2011 թ. այդպիսիք 338-ն էին, ապա 2019 թ.՝ 702 (413-ը՝ Երևանում): Վերջին 6-7 տարիների ընթացքում հյուրանոցային տնտեսության և հյուրանոց-

ների թվի աճ է տեղի ունեցել ոչ միայն մայրաքաղաք Երևանում, այլ նաև մարզերում: Այդ առումով առավել աշքի են ընկնում Կոտայքի, Տավուշի, Սյունիքի, Շիրակի և Վայոց ձորի մարզերը: 2019 թ. ՀՀ հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանել են 550.3 հազ. գրոսաշրջիկ, որի 89 %-ը՝ Երևանի հյուրանոցներում:

Բացի հյուրանոցային տնտեսությունից՝ ՀՀ-ում վերջին երկու տասնամյակում գրոսաշրջության զարգացմանը նպաստել են նաև ծառայությունների մատուցման մակարդակի բարձրացումը, ավտոճանապարհների բարեկարգումը և նորերի կառուցումը, «Զվարքնոց» օդանավակայանի նոր համալիրի կառուցումը, գրոսաշրջային նշանակություն ունեցող առանձին պատմամշակութային հուշարձանների վերանորոգումը, դրանց հարակից տարածքների բարեկարգումը, «Տարեկ թեր» ճոպանուղու կառուցումը, գրոսաշրջության ոլորտում օգտագործվող տրանսպորտային միջոցների թվի ավելացումը, առավել հարմարավետ ավտոբուսների և ավտոմեքենաների օգտագործումը, ոլորտի համար մասնագետ կադրերի պատրաստումը: 2019 թ. ՀՀ-ում բարեկարգվել և վերանորոգվել են 330 կմ միջանական և հանրապետական, 300 կմ՝ միջմարզային և համայնքային նշանակության ավտոճանապարհներ:

Ներքնա ու ներքին գրոսաշրջության զարգացման համար խթանիչ գործընթացներ են համարվել նաև 2018 թվականից հետո ՀՀ տարբեր մարզերում, Երևանում, Գյումրիում, Վանաձորում, Սևանում, Ձերմուկում, Ծաղկաձորում, Արենիում, Օշականում և բազմաթիվ այլ բնակավայրերում անցկացվող տարաբնույթ փառատոնները, բնակավայրերի հոբելյաններին նվիրված տոնակատարությունները, միջազգային համաժողովները, համահայկական միջոցառումները, գիտաժողովները, ամենամյա «Ավրորա» մրցանակաբաշխությունը և այլ միջոցառումներ:

Աղյուսակ 59

ՀՀ հյուրանոցները և հյուրանոցային տնտեսության կառույցները [16, 50]

	Հյուրանոցների քանակը					
	2007	2011	2011*	2015	2017	2020
ՀՀ-ում	101	143	338	474	556	842
Ք. Երևան	45	46	195	274	320	480
Արագածոտն	2	3	8	5	4	7
Արարատ	-	-	9	8	7	8
Արմավիր	-	-	4	4	3	16
Գեղարքունիք	9	4	4	5	9	40
Լոռի	4	7	8	17	15	30
Կոտայք	10	26	35	41	57	91
Շիրակ	6	7	15	25	24	33
Սյունիք	6	12	19	32	35	38
Վայոց ձոր	7	10	11	16	19	26
Տավուշ	12	27	30	47	63	76

- Հյուրանոցային տնտեսության կառույցները ներառում են հյուրանոցները, հյուրանոցատիպ հանգրվանները, առողջարանները, հանգստյան տները և այլն:

Վերը նշված գործընթացների շնորհիվ վերջին երկու տասնամյակում ՀՀ-ում նշանակալից տեղաշարժեր են կատարվել ներգնա ու ներքին գրուաշրջիկների թվի շարժընթացն ունի հետևյալ պատկերը. 2017 թ.՝ 1.5, 2018 թ.՝ 1.6, 2019 թ.՝ 1.9 մլն: 2020 թ. մարտից մինչև 2021 թ. ապրիլ-մայիս ամիսները, համավարակով պայմանավորված, ինչպես ներգնա այնպես էլ ներքին գրուաշրջային ցուցանիշները զգալիորեն նվազեցին:

Աղյուսակ 60

*ՀՀ հյուրանոցայի տնտեսության օբյեկտներում հանգրվանած
ներգնա զրոսաշրջիկների թվաքանակը (մարդ, 2019 թ.) [16]*

ՀՀ-ում	550289	Լոռի	1702
Ք. Երևան	489019	Կոտայք	5778
Արագածոտն	13	Շիրակ	11868
Արարատ	11	Սյունիք	689
Արմավիր	-	Վայոց ձոր	11008
Գեղարքունիք	5662	Տավուշ	24559

2020 թ. ՀՀ է ժամանել 375.2 հազար զրոսաշրջիկ: 2021 թ. կան-խատեսվում է 1.2 մլն զրոսաշրջիկների այցելություն ՀՀ:

Համաշխարհային զրոսաշրջային կազմակերպության կողմից հրապարակված բարոմետրի համաձայն՝ 2019 թ. ՀՀ զրոսաշրջության ոլորտում ամենարազ զարգացող ուղղությունների շարքում զրադեշնում էր 12-րդ տեղը:

ՀՀ զրոսաշրջիկներ են ժամանում աշխարհի ավելի քան 90 երկրներից: Եթե նախկինում այցելուների մեջ բավական մեծ էր մեր հայրենակիցների տեսակարար կշիռը, որոնք ժամանում էին Ռուսաստանից, ԱՄՆ-ից, Ֆրանսիայից, Իրանից և հայաշատ այլ երկրներից, ապա վերջին տարիներին կականորեն ավելացել է ոչ հայազգի զրոսաշրջիկների այցելությունը ՀՀ Ռուսաստանից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Չինաստանից, Եվրոմիության տարբեր երկրներից: Վերջին տարիներին նկատվում է ևս մեկ միտում. նկատվում է ասիական երկրներից զրոսաշրջիկների թվի աճ (Չինաստանից, Ճապոնիայից և այլն):



Նկ. 13. «Օշեն» հյուրանոցը

ՀՀ-ից **արտագնաա զբոսաշրջային** հոսքերում առավել մեծ քածին ունի հարևան Վրաստանը, որը բացատրվում է վերջինիս հարևանային դիրքով, հանգստի կազմակերպման համար քիչ թե շատ բավարար պայմանների առկայությամբ և համեմատաբար մատչելի գներով: **Զգալի թիվ են կազմում նաև դեպի Եգիպտոս, ԱՄԷ, Չունաստան, Բաղանիա և Կիրովական այլ երկրներ այցելողները:**

ՀՀ տնտեսության և մարզերի համաշափ զարգացման առումով առանձնահատուկ դեր և նշանակություն ունի ներքին զբոսաշրջության զարգացումը: Վերջին տարիներին արագ տեմպերով զարգանում է նաև զբոսաշրջության այս բնագավառը: ՀՀ տարբեր մարզերի և տարածաշրջանների ռեկրեացիոն ու զբոսաշրջային նշանակություն ունեցող գեղատեսիլ վայրերը, պատմամշակութային հուշարձանները և այլ ռեսուրսներ լիարժեք հնարավորություններ են ապահովում բնակչության հանգստի, ռեկրեացիայի ու ժամանցի կազմակերպման համար: ՀՀ **քաղա-**

քացիների հանգստի կազմակերպման համար հիանալի նախադրյալներ կան Սևանի մերձափնյա տարածքներում և թերակղում, Ծաղկաձորում, Գառնի-Գեղարդում, Աղվերանում, Արգնիում, Բջնիում, Հանքավանում, Մարմարիկի և Աղստևի հովիտներում, Ջերմուկում, Դիլիջանում, Ստեփանավանում, Գորիսում, Հալիծանում, Վանաձորում, Գյումրիում, Լեռնանիստում, Կալավանում, Ենոքավանում և նոր ձևավորվող գրոսաշրջային այլ կենտրոններում:

ՀՀ գրոսաշրջային հիմնական կենտրոնը եղել և մնում է մայրաքաղաք Երևանը: Այն իր պատմական անցյալով, ճարտարապետական ինքնատիպությամբ, թանգարաններով, գեղատեսիլ վայրերով և տեսարաններով, գրոսաշրջային զարգացած ենթակառուցվածքներով, բարձրակարգ հյուրանոցներով, ՀՀ տարածքի նկատմամբ կենտրոնական աշխարհագրական դիրքով և քիչ թե շատ նպաստավոր կլիմայական պայմաններով ՀՀ այլ տարածքների համեմատ առավել մեծ հնարավորություններ և ներուժ ունի ներգնա գրոսաշրջիկների պահանջմունքների բավարարման համար:

ՀՀ ներգնա գրոսաշրջության ծավալների մեծացման համար առանձնահատուկ դեր ունեն հետևյալ հանգամանքները:

1. Քրիստոնեական մշակույթի բազմաթիվ հուշարձանների առկայությունն ու պահպանումը մեր երկրում: Այդպիսի գրավչություն են Էջմիածնի Մայր տաճարը, Գայանե և Հոփիսիմե եկեղեցիները, Հաղպատի և Սանահինի վանական համալիրները, Խոր Վիրապը, Տաթևի վանական համալիրը, Նորավանքը, Մակարավանքը, Վահանավանքը, Գեղարդի և Կեչառիսի վանքերը, Հաղարծնի վանական համալիրը, Գոշավանքը, Սուլնու Սուրբ Գևորգ եկեղեցին, Օհանավանքը, Սաղմոսավանքը և այլն:

2. ՀՀ տարածքում դեռևս հնագույն ժամանակներում ստեղծված և մինչև մեր օրերը մասսամբ կամ ամբողջովին պահպանված

բերդերը, ամրոցները, բնակատեղիները և այլն: (Գառնիի հեթանոսական և Զվարթնոցի տաճարները, Արին բերդը, Կարմիր բլուրը, Չորաց քարերը, Հին Խնձորեսկը, Հալիձորի բերդը և այլն):

3. Հանքային բուժիչ ջրերի առկայությունը, առողջարար կլիման, սառնորակ աղբյուրները, մաքուր օդը և գեղատեսիլ լանդշաֆտները հիանալի նախադրյալներ են ստեղծում ռեկրեացիոն-բուժիչ զբոսաշրջության զարգացման համար (Արգնին, Չերմուկը, Դիլիջանը, Հանքավանը, Ստեփանավանը, Աղվերանը, Ծաղկաձորը և այլ բնակավայրեր):

4. Հայկական ավանդական զյուտերն իրենց բազմադարյան անցյալով, ծեսերով, սովորույթներով, կենցաղի կազմակերպման առանձնահատկություններով, Էկոլոգիապես մաքուր սննդամբերի տարբեր տեսակների արտադրությամբ զբոսաշրջային մեծ գրավչություններ են: Հայկական ավանդական մի շարք կերակրատեսակների և մթերքների արտադրության մշակույթը, դրանց նվիրված փառատոնները, Էկոզբուսաշրջային, արկածային և էքստրեմալ զբոսաշրջության համար աշխարհագրական բազմազան նախադրյալների առկայությունը:

5. ՀՀ տարբեր շրջաններում ձմեռային զբոսաշրջության զարգացման համար ռեսուրսային մեծ ներուժի առկայությունը:

6. Մեր երկրում տեղի ունեցած հասարակական-քաղաքական գործընթացները՝ միջազգային զբոսաշրջային շուկայում Հայաստանի նկատմամբ հետաքրքրության մեծացումը:

ՀՀ զբոսաշրջառեկրեացիոն ռեսուրսային ներուժի վերուծությունը ցույց է տալիս, որ մեր երկրում առավել նպատակահարմար և արդյունավետ կարող են համարվել ձանաշողական, ռեկրեացիոն-առողջարանային, պատմամշակութային, զյուղական և ազրոզբուսաշրջության, Էկոլոգիական, կրթական, կրոնական, գործարար, արկածային և էքստրեմալ զբոսաշրջության ձևերի զարգացումը: Միաժամանակ պետք է նկատի ունենալ որ միջազ-

գային զբոսաշրջային շուկայում անընդհատ տեղի ունեցող փոփոխությունները, զարգացման միտումները և մեր երկրում իրականացվող սոցիալ-տնտեսական բարեփոխումները և տնտեսական առաջընթացը հնարավորություններ են ստեղծում զբոսաշրջային շուկայի դիվերսիֆիկացման, նոր ձևերի և ուղղությունների առաջացման համար:

Վերջին մի քանի տարիներին ՀՀ կառավարության կողմից իրականացվում են համալիր միջոցառումներ, որոնց շնորհիվ արտերկրում էապես կրաքարանա մեր երկրի նկատմամբ զբոսաշրջային խմբը, ինչն էլ իր հերթին կնպաստի դեպի ՀՀ ներգնա զբոսաշրջային հոսքերի ավելացմանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ի՞նչ դեր ունի ոչ արտադրական ոլորտը ՀՀ տնտեսության մեջ:
2. Ի՞նչ զարգացում է ունեցել ոչ արտադրական ոլորտը Հայաստանում խորհրդային տարիներին:
3. Բնութագրե՛ք ՀՀ ոչ արտադրական ոլորտի առանձին ճյուղերի զարգացումը և տեղաբաշխումը:
4. Վերլուծե՛ք ՀՀ զբոսաշրջային ինդուստրիայի կառուցվածքը և տեղաբաշխման բնութը:
5. Ոչ արտադրական ոլորտի զարգացման ի՞նչ խնդիրներ կան ՀՀ-ում:
6. Ինչպիսի՞ն եք տեսնում ոչ արտադրական ոլորտի զարգացման հեռանկարը ՀՀ-ում:

ԳԼՈՒԽ 5

ՀՀ ՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5.1. ՀՀ սոցիալ-տնտեսական շրջանացումը

Թեև ՀՀ ունի համեմատաբար փոքր տարածք, սակայն աշխարհագրական պայմանների խիստ բազմազանության պատճառով այստեղ շրջանագրյացման գործընթացներն առավել տիպիկ են արտահայտված: Եթե ֆիզիկաաշխարհագրական շրջանների առաջացման համար պատճառ են հանդիսացել մեր երկրի տարածքի բարձրաչափական նիշերի մեծ տարբերությունները, կլիմայական ցուցանիշների ու լանդշաֆտների բազմազանությունը, ապա սոցիալ-տնտեսական շրջանների ձևավորման համար վերը նշված բնաաշխարհագրական առանձնահատկություններին ավելանում է նաև ՀՀ տարբեր տարածքներում տնտեսության ձևավորման, զարգացման և տարածքային կազմակերպման համար առկա ռեսուրսների ու գործոնների տարբերությունները:

Դարերի ընթացքում ՀՀ տարածքի տարբեր հատվածների տնտեսական յուրացումը և զարգացումն իր վրա է կրել պատմական, սոցիալ-տնտեսական և տվյալ տարածքի աշխարհագրական պայմանների ու ռեսուրսների ազդեցությունը: ՀՀ տարածքում հստակորեն կարելի է առանձնացնել բնատնտեսական հետևյալ շրջանները կամ միավորները՝ Արարատ (Այրարատ), Շիրակ, Գուգարք (Լոռի), Ուտիք (Տավուշ), Վայք (Վայոց ձոր), Զանգեզուր (Սյունիք): Դրանց սահմանները հիմնականում անցնում են խոշոր լեռնաշղթաների և զանգվածների շրբաժաններով: Արարատ բնատնտեսական շրջանը մասնակի շեղումներով համընկնում է ՀՀ ժամանակակից Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերի տարածքին, մնացածները հիմնակա-

նում համապատասխանում են Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերի տարածքներին: Նշված շրջաններից յուրաքանչյուրը դեռևս հարյուրամյակներ առաջ միմյանցից տարբերվել է պատմապատճենական, տարածքի յուրացման և տնտեսական գործունեության ինքնատիպ գծերով: Այդպիսի տարբերությունների բազմաթիվ տարբեր պահպանվում են մինչև մեր օրերը:

Հարյուրամյակներ շարունակ ՀՀ տարածքի տնտեսության զարգացումն ընթացել է շատ դանդաղ, և մինչև XX դարի 20-30-ական թվականները գոյություն ունեցող մանր արդյունաբերական կետերը և տնտեսության զարգացման ընդհանուր մակարդակը դեռևս ի վիճակի չէին հիմք հանդիսանալ տնտեսության տարածքային կազմակերպման համար: ՀՀ տարբեր տարածքների և շրջանների միջև բացակայում էին, կամ դեռևս շատ քոյլ էին տնտեսարտարական կապերը:

1930-ական թվականներից ՀՀ տնտեսության մեջ նոր ճյուղերի ձևավորումն ու զարգացումը նպաստեցին մի կողմից տնտեսության ընդլայնական տարածմանը և զարգացմանը, մյուս կողմից՝ տնտեսության քիչ թե շատ կենտրոնացմանը (տնտեսական կենտրոնների ձևավորմանը՝ Երևան, Գյումրի, Վանաձոր, Կապան, Արարատ և այլն): Այդպիսի արմատական փոփոխությունների, ինչպես նաև ՀՀ առանձին տարածքներում տեղական տարբեր տեսակի ռեսուրսների օգտագործումը և արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծումը նպաստեցին ՀՀ-ում միասնական արտադրական համալիրի կազմավորմանը: Միասնական տարածքային համալիրի սահմաններում էլ ավելի խորացավ և զարգացավ ԱԱԲ-ը, որն իր հերթին նպաստում էր առանձին տարածքներում տնտեսության տարբեր ճյուղերի միջև փոխկապակցվածության և ամբողջականության ձևավորմանը, ի վերջո՝

սոցիալ-տնտեսական տարածքային միավորների կամ շրջանների ձևավորմանը:

ՀՀ-ում սոցիալ-տնտեսական շրջանների ձևավորմանը և գարգացմանը նպաստել են [6, 28].

1. Երկրի առանձին տարածքների ՏՍԴ-ի առանձնահատկությունները,

2. տնտեսության առանձին ձյուղերի գարգացման համար ռեսուրսների մեծ տարբերությունները,

3. պատմական գարգացման ընթացքը,

4. տարաբնակեցման բնույթի տարբերությունները,

5. ներշրջանային և միջնաշրջանային արտադրատնտեսական կապերի գարգացման հնարավորությունները,

6. տարբեր տարածքների միջև արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների գարգացածության տարբերությունները,

7. արտաքին տնտեսական կապերի հաստատման հնարավորությունները և այլ գործուներ:

ՀՀ-ում տնտեսական շրջանացման աշխատանքներն սկսվել են 1920-ական թվականներից: Շրջանացման հանձնաժողովը՝ Գ. Քոչարյանի գլխավորությամբ, որը գործում էր ՀՀ պետպլանին կից, հենվելով ԽՍՀՄ տնտեսական շրջանացման մեթոդաբանական դրույթների վրա և հաշվի առնելով մեր երկրի աշխարհագրական յուրահատուկ պայմաններն ու տնտեսության գարգացման առկա վիճակը, մի քանի տարվա ընթացքում կատարված հսկայածավալ աշխատանքների հիման վրա ներկայացվեց վարչատնտեսական շրջանացման մի սխեմա, որը դրվեց 1929-1930 թթ. անցկացված վարչատարածքային բաժանման ռեֆորմի հիմքում: Այդ ռեֆորմի հիմքում տրված էր «տնտեսական» սկզբունքը. վարչատարածքային միավորները դիտվում էին որպես տնտեսական միավորներ: Այդ սխեմայով ՀՀ-ն, բացի վարչական միավորներից, բաժանվում էր նաև 5 տնտեսական շրջանների [6]:

Հայկական ԽՍՀ-ում տնտեսական շրջանացման աշխատանքներն առավել ակտիվությամբ իրականացվել են 1945 թվականից հետո: Շրջանացման սիեմաներ են առաջարկվել Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտի և ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի աշխարհագրության ինստիտուտի մի խումբ աշխատակիցների կողմից (1955 թ.): Մեկ տարի անց նոր սիեմա է առաջարկել Գ. Քոչարյանը՝ ելակետ ունենալով Ն. Կոլոսվակու արտադրական ցիկլերը: 1957 թ. շրջանացման ինքնուրույն սիեմա է առաջարկել Ս. Հ. Խրիմյանը, 1961 թ.՝ ՀԽՍՀ ատլասի գիտախմբագրական խորհուրդը, 1966 թ.՝ Լ. Վալեյանը: Վերջինս ժամանակագրական առումով ամենավերջինն է, առանձնանում է շրջանացման սկզբունքների մշակման առավել խորը գիտականությամբ և ամբողջականությամբ: Ըստ այդ սիեմայի՝ **ՀՀ տարածքում առանձնացվում էր վեց սոցիալ-տնտեսական շրջան՝ Արարատյան, Շիրակի, Լոռի-Փամբակի, Սևանի, Սյունիքի և Աղստևի:** Դրանց տարսունումիական համակարգը բաղկացած է **չորս աստիճանից՝**

1. հանրապետական ինստեգրալ սոցիալ-տնտեսական շրջաններ,

2. սոցիալ-տնտեսական ենթաշրջաններ,

3. վարչական-տնտեսական շրջաններ,

4. տնտեսական միկրոշրջաններ: ՀՀ-ում հանրապետական սոցիալ-տնտեսական շրջաններ կարող են լինել այն տարածքային միավորները, որոնք ունեն հետևյալ հատկանիշները [28].

1. առկա է (Են) տարածքն համախմբող, նրա համար կազմակերպիչ կորիգի դեր կատարող բավարար հզորության տնտեսական կենտրոնը (կենտրոնները),

2. ձևավորվել և զարգանում է ներքին տրանսպորտային, տնտեսական, արտադրական, կուլտուր-կենցաղային, աշխատանքային կապերի շատ թե քիչ կայուն համակարգ,

3. աշխատանքի ներհանրապետական բաժանման համակարգում ունի իր որոշակի տնտեսական գործառույթները, շրջանային մասնագիտացումը,

4. առկա են միասնական տրանսպորտային կողմնորոշումը և ներքին տրանսպորտային ուղիների ցանցը,

5. զարգացման տվյալ փուլում ունի առաջնահերթ լուծում պահանջող ուրույն սոցիալ-տնտեսական խնդիր:

Հարկ է նկատել, որ վերը թվարկած հատկանիշները կոնկրետ շրջանում չեն կարող նույն կարևորությունն ու զարգացման մակարդակն ունենալ: Դրանք տարբեր շրջաններում զարգացման տարբեր մակարդակ ունեն: Այդուհանդերձ, այդպիսի հատկանիշների միաժամանակյա գոյությունը և դրանց զարգացման միտումների առկայությունը հիմք են հանդիսանում այս կամ այն տարածքում սոցիալ-տնտեսական շրջանների ձևավորման ու զարգացման համար:

ԽՍՀՄ փլուզումից հետո ՀՀ միասնական տնտեսաարտադրական համալիրը զգալի փոփոխություններ են կրել, որոնք իրենց ազդեցությունն են թողել տնտեսության ձյուլային ու տարածքային կառուցվածքի, ինչպես նաև սոցիալ-տնտեսական շրջանների արտադրական ողջ համալիրի վրա: Սակայն վերջին երկու տասնամյակում նախկին մի շարք ձյուղերի վերականգնումն ու զարգացումը, նոր ձյուղերի ձևավորումը և զարգացման միտումները ցույց են տալիս, որ առաջիկա տարիներին ՀՀ տնտեսությունը ձեռք կբերի միասնական արտադրական համալիրին բնորոշ նախկինում ունեցած հատկանիշները, սոցիալ-տնտեսական շրջանները՝ տնտեսության տարածքային կառուցվածքի իրենց բնորոշ գծերն ու առանձնահատկությունները:

Քանի որ ՀՀ տարածքային կառավարման համակարգում ներկայումս հիմնական միավորներ են համարվում մարզերը, և պաշտոնական վիճակագրությունը դրանց վերաբերյալ հրապա-

բակում է սոցիալ-տնտեսական տվյալներ, ուստի ՀՀ տնտեսության տարածքային կառուցվածքը կներկայացնենք ըստ մարզերի: Միաժամանակ նպատակահարմար ենք համարում համառոտակի ներկայացնել Արարատյան տնտեսական շրջանը՝ հաշվի առնելով վերջինիս բացառիկ դերը ՀՀ տնտեսության մեջ:

Արարատյան շրջանն ընդգրկում է Երևան քաղաքը, Կոտայքի Նախրիի, Ապարանի, Աշտարակի, Բաղրամյանի, Արմավիրի, Էջմիածնի, Մասիսի, Արարատի, Արտաշատի նախկին վարչական շրջանները կամ՝ Արարատի, Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերը՝ բացառությամբ Հրազդանի, Թալինի, Արագածի նախկին վարչական շրջանների: **Այն գրադեցում է 6.1 հազ. կմ² տարածք,** բնակչության թիվը 2020 թ. կազմում էր 1852.2 հազ. մարդ: Բնաաշխարհագրական առումով ընդգրկում է Արարատյան միջլեռնային գոգավորության ձախափնյա հատվածի մեծ մասը: Շրջանի տարածքում բարձրաշափական նիշերը տատանվում են 800-4090 մ-ի սահմաններում: **Այսուեղ միմյանց** են հաջորդում ՀՀ-ում հանդիպող գրեթե բոլոր ուղղաձիգ լանշաֆտային գոտիները՝ կիսաանապատներից մինչև հավերժական ձյան գոտին, որի պատճառով շրջանն աչքի է ընկնում տնտեսության զարգացման համար բնառեսուրսային նախադրյաների խիստ բազմանությամբ: Ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ ներկայումս, սա ՀՀ մնացած տարածքներից առաջ է անցել արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքի ծավալներով, տնտեսության մասնագիտացման և համալիրային զարգացման ցուցանիշներով, ենթակառուցվածքների զարգացման մակարդակով: Շրջանն իր ընդհանուր տնտեսական ներուժով գերազանցում է ՀՀ մնացած սոցիալ-տնտեսական շրջաններին՝ միասին վերցրած:

Արարատյան սոցիալ-տնտեսական շրջանի արտադրական դեմքը որոշում են կեկտրակներգետիկան, սննդի, շինանյութերի

և ռազմական արդյունաբերության ճյուղերը, խաղողագործությունը, պտղաբուծությունը, բանջարաբոստանայինների մշակությունը, տարատեսակ ծառայությունների մատուցումը: Խորհրդային վերջին տարիներին շրջանին բաժին էին ընկնում ՀՀ ԱՀԱ-ի 60 %-ը, արդյունաբերության մեջ զբաղվածների՝ 58 %-ը, ԳՀԱ-ի 47 %-ը, ոռոգովի հողատարածքների 44 %-ը, խաղողի այգիների 76 %-ը [28]: 2019 թ. շրջանի մեջ մտնող չորս մարզերին և Երևան քաղաքին միասին բաժին էին ընկնում ՀՀ ԱՀԱ-ի 67 %-ը, ԳՀԱ-ի 49.5 %-ը, շինարարական աշխատանքների 75 %-ը, մատուցված ծառայությունների 91 %-ը:

Խորհրդային տարիներին այստեղ ձևավորվել և զարգացել է ՀՀ ամենախոշոր՝ Երևանի արդյունաբերական հանգույցը: Շնորհիվ արտադրական հզոր ներուժի, ինչպես նաև մայրաքաղաքային կարգավիճակի Երևանն իր ձգողական դաշտով աստիճանաբար իր շուրջն է համախմբել գրեթե ամբողջ Արարատյան սոցիալ-տնտեսական շրջանի տնտեսական ներուժը՝ դառնալով հզոր կազմակերպիչ կորիգ տնտեսական շրջանի համար: Աստիճանաբար սկսեցին զարգանալ նաև ազլումերացիայի մեջ մտնող մյուս քաղաքները. Արտաշատը, Էջմիածինը, Աշտարակը, Արմավիրը, Արարատը: Ձևավորվեցին նոր արբանյակ քաղաքներ Արփվանը, Մասիսը, Նոր Հաճնը, Բյուրեղավանը, Մեծամորը:

Արարատյան շրջանը, ինչպես նախկինում այնպես էլ ներկայում ՀՀ-ում, աչքի է ընկնում տնտեսության բազամաճյուղ կառուցվածքով: Արդյունաբերության մեջ այն արտահայտվում է վերամշակող արդյունաբերությամբ, իսկ գյուղատնտեսության մեջ՝ ՀՀ մնացած տարածքների համեմատ առավել աշխատատար, եկամտաբեր և ինտենսիվացման առավել բարձր մակարդակ ունեցող ճյուղերի գերակշռությամբ: Խորհրդային տարիներին Արարատյան շրջանը համարվում էր ՀՀ-ում մերենաշինական և քիմիական արդյունաբերության առավել բարձր տեսակա-

բար կշիռ ունեցողը: Արարատը ՀՀ մյուս սոցիալ-տնտեսական շրջաններից առանձնանում է նաև տնտեսական կենտրոնների միջև առավել բազմազան տնտեսական-արտադրական կապերով: Շրջանագոյացնող առավել մեծ դեր ունեն հումքի, Էներգիայի, կիսաֆարբիկատների և կոմպլեկտավորող մասերի, այսպես կոչված, արտադրական և աշխատանքային կապերը [28]: **Շրջանի սահմաններում դեռևս 1970-ական թթ, ձևավորվել և զարգացել է աշխատումի ճռճանակային միզգրացիան, որն հիմնականում դրսուրվում է շրջանի մնացած տարածքներից դեպի Երևան բնակչության ճռճանակային միզգրացիայով: Այդ երևույթն առավել ինտենսիվ է դրսուրվում Երևանից 25-30 կմ շառավղով գոտում՝ հասնելով մինչև 40-50 կմ-ի: Պակաս դեր չունեն նաև զյուրատնտեսական արտադրանքի մշակության շրջանների ու դրանց վերամշակման արդյունաբերական կենտրոնների միջև ձևավորված արտադրական կապերը: Շրջանի տարածքում ձևավորվել են խաղողի, մրգի, բանջարեղենի և այլ մթերքների հումքի վերամշակման և պատրաստի արտադրանքի թողարկման բազմաթիվ ձեռնարկություններ:**

Խորհրդային վերջին 2-3 տասնամյակների ընթացքում Արարատյան շրջանը ՀՀ տնտեսության մեջ մենաշնորհային դիրք ուներ սինթետիկ կառչուկի, արհեստական խեժերի, ավտոդրոդերի, քիմիական ռեակտիվների, դեղորայքի, կառւստիկ սողայի, պոլիվինիլացետատային մի շարք միացությունների, ավտոբեռնիչների և ավտոմոբիլների, վերամբարձ կոռունկների, հաշվիչ մեքենաների, էլեկտրալարերի, շարժական էլեկտրակայանների, ժամացույցների, մետաղահատ հաստոցների, չափիչ սարքերի և այլն արտադրություններով [28]:

Արարատյան շրջանը ՀՀ տնտեսության տարբեր ոլորտների համար կայրերի պատրաստման հիմնական կենտրոնն է: Այստեղ են գտնվում ՀՀ բարձրագույն, միջնակարգ մասնագիտական

և մասնագիտական կրթական հաստատությունների գերակշիռ մասը, ՀՀ ԳԱԱ-ն՝ իր շուրջ 100 գիտահետազոտական ինստիտուտներով, հանրապետական նշանակության մշակութային օջախների մեծ մասը, տասնյակ թանգարաններ, գրադարաններ: Հասկանալի է, որ Արարատյան սոցիալ-տնտեսական շրջանի այս մի շարք բացառիկ ցուցանիշները նախնառաջ պայմանավորված են մայրաքաղաք Երևանով: Այստեղ է գտնվում նաև համայն հայության սրբավայրերից ամենանշանավորը՝ Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը՝ իր համապատասխան կառույցներով:

Արարատյան սոցիալ-տնտեսական շրջանը ՀՀ-ում աշքի է ընկնում նաև տրանսպորտային համակարգի զարգացման առավել բարձր մակարդակով: Այստեղից են սկսվում միջպետական նշանակության ավտոմոբիլային գլխավոր մայրուղիները՝ ձգվելով տարբեր ուղղություններով: Շրջանի տարածքում տրանսպորտային գլխավոր ուղիները հանգուցվում են Երևանում: Վերջին տարիներին առանձնակի կարևորություն է տրվում նաև ներշրջանային ավտոճանապարհների բարեկարգմանը և նորերի կառուցմանը:

Արարատյան շրջանի տնտեսության մեջ, ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս առանձնահատուկ տեղ և դեր ունեն ծառայությունների ոլորտը, գրոսաշրջությունը և ռեկրեացիան: ՀՀ մյուս շրջանների համեմատ Արարատն աշքի է ընկնում զբոսաշրջային ինդուստրիայի ենթակառուցվածքների զարգացման առավել բարձր մակարդակով: Բացի Երևանից՝ գրոսաշրջային հայտնի գրավչություններ կան նաև շրջանի մեջ մտնող մարզերում: Վերջին մեկուկես տասնամյակում զբոսաշրջային նշանակալից գրավչություններ են դարձել նաև շրջանի տարբեր բնակավայրերում կազմակերպվող տարարքնույթ փառատոններն ու միջոցառումները:

Հարցեր և առաջադրանքներ

1. Շրջանագոյացման ի՞նչ առանձնահատկություններ ունեն լեռ-նային տարածքները:
2. Ի՞նչ պայմաններ և գործոններ են նպաստել ՀՀ տարածքում բնատնտեսական շրջանների ձևավորմանը:
3. Ինչպե՞ս է տեղի ունեցել տարածքարտադրական համալիրի ձևավորման գործընթացը ՀՀ-ում:
4. Ի՞նչ հատկանիշներ պետք է ունենան ՀՀ-ում հանրապետական կարգի սոցիալ-տնտեսական շրջանները:
5. Ի՞նչ սկզբունքներ են հաշվի առնվել Հայկական ԽՍՀ սոցիալ-տնտեսական շրջանացումն իրականացնելիս:
6. Ո՞րն է սոցիալ-տնտեսական շրջանացման դերը ՀՀ տնտեսական զարգացման գործում:

5.2. Արագածոտնի մարզը

Տնտեսության զարգացման նախադրյալները: Արագածոտնի մարզը ձևավորվել է Աշտարակի, Ապարանի, Արագածի և Թալինի նախկին վարչական շրջանների միավորումից և զբաղեցնում է 2756 կմ² տարածք: Մարզն իր անունը ժառանգել է Այրարատ աշխարհի Արագածոտն գավառից: Արագածոտնին բաժին են ընկնում ՀՀ տարածքի 9.3 %-ը, բնակչության 4.2 %-ը: 2020 թ. մարզն ուներ գյուղական 117 և քաղաքային 3 բնակավայր: Մարզն արևմտաքում պետական սահման ունի Թուրքիայի հետ (35 կմ): Սահմանակցում է Շիրակի, Կոտայքի և Արմավիրի մարզերին: ՀՀ տարածքի նկատմամբ ունի կենտրոնական դիրք, որն էական նշանակություն ունի մարզի տնտեսական զարգացման համար:

Արագածոտնը առանձնանում է բնական պայմանների բազմազնությամբ: **Այստեղ առկա են ՀՀ-ում հանդիպող գրեթե բոլոր վերընթաց լանդշաֆտային գոտիները, որոնք ընկած են 950-4090 մ բարձրությունների վրա:** Տնտեսության զարգացման համար առավել նպաստավոր համարվող մինչև 1500մ բարձրություն ունեցող շրջանները զբաղեցնում են տարածքի 36, մինչև 2000 մ տարածքները՝ ավելի քան 64 %-ը: 2000-2500 մ բացարձակ բարձրություն ունեցող շրջաններին բաժին է ընկնում տարածքի 19 %-ը, իսկ 2500 մ-ից բարձր շրջաններին՝ 17 %-ը: **Մարզի տարածքը Արարատյան գոգավորության արևմտյան լեռնալանջն է, որի շնորհիվ սառնամանիքներն ավելի թույլ են, քան Արարատյան դաշտում:** Ամռանը լանջերի և հարթավայրերի միջև առաջանում են լեռնահովտային քամիներ: **Մարզի լանդշաֆտները կրում են ինչպես մերձարևադարձային, այնպես էլ բարեխառն կլիմայական պայմանների ազդեցությունը:** Մինչև 1600 մ բարձրության գոտում ամառը տաք է և չորային (հուլիսյան միջին ջերմաստիճանը՝ 25°C), ձմեռը՝ չափավոր ցուրտ (հունվարի միջին ջերմաս-

տիճանը՝ 5-8-ից մինչև -12°C): Մարզի տարածքում, ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության, միմյանց են հաջորդում չոր ցամաքային, չափավոր տաք-չոր, բարեխառը՝ տաք ամառով, չափավոր ցուրտ և ցուրտ լեռնային կիմյայական տիպերը: Լանջերն ի վեր փոխվում է մթնոլորտային տեղումների քանակը՝ 350-1000 մմ: Մարզի գետային ցանցը խիտ չէ: Գլխավոր գետը Քասաղն է՝ Գեղարոտ, Ամբերդ, Շաղվերդ ու Քարաղբյուր վտակներով: Կան ժամանակավոր հոսք ունեցող գետակներ, որոնցից ամենամեծը Մաստարայի սելավատարն է:

Մարզի 1000-1500 մ բարձրություններում ընկած են Կարմրաշենի, Թալինի և Շամիրամի սարահարթերը, որոնք ունեն չոր տափաստանային լանդշաֆտներ: Դրանց ջերմային բավարար պայմանները և շագանակագույն հողերը բարենպաստ հնարավորություններ են ստեղծում խաղողագործության և պտղաբուծության զարգացման համար: **Բարձրադիր՝ 2200 մ-ից բարձր շրջաններում տարածված են ալյան ու մերձալյան մարգագետիններն ու արոտավայրերը**, որոնք ունեն լավագույն պայմաններ անասնապահության զարգացման համար: Մարզում կան նաև անտառապատ տարածքներ (8.4 հազ. հա):

Բնակեցման, բնակավայրերի ցանցի ձևավորման և տնտեսության զարգացման համար պակաս կարևոր չեն մարզի հանքահումքային ռեսուրսային նախադրյալները: Այստեղ առկա բազմագույն տուֆերը, բազալտի, պեղիտի և հրաբխային խարամի պաշարները որակյալ շինարարական ռեսուրսներ են ոչ միայն Արագածոտնի մարզի, այլ նաև ՀՀ-ի համար: Մարզում շատ են նաև լավային ծածկույթների տակից բխող սառնորակ աղբյուրները, որոնք ունեն տնտեսական կարևոր նշանակություն:

Արագածոտնի ազրոկիմյայական ռեսուրսները հնարավորություն են տալիս տարածքի ստորին գոտում զբաղվելու խաղո-

դագործությամբ և այգեգործությամբ, միջին գոտում՝ հացահատիկայինների մշակությամբ և անասնապահության տարբեր ճյուղերով, վերին գոտում՝ արոտային անասնապահությամբ։ Մարզի տնտեսության համար առանձնահատուկ նշանակություն ունեն նաև տարածքի մեծ մասը զբաղեցնող լեռնային սևահողերը, իսկ բարձրլեռնային մասերում՝ մերձալպյան ու ալպյան մարգագետինները։

Արագածոտնը աչքի է ընկնում նաև բնածին և մարդածին ռեկրեացիոն ռեսուրսներով։ Դրանց դերն առավել կարևորվում է ժամանակակից պայմաններում, երբ զբոսաշրջությունը դառնում է ՀՀ տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը։ Մայրաքաղաքի մոտիկության շնորհիվ մարզի զբոսաշրջային-ռեկրեացիոն ռեսուրսները գնալով ավելի մեծ չափով կարող են օգտագործվել բնակչության կարձատն հանգստի կազմակերպման համար։ Ռեսուրսային այդպիսի պայմաններով աչքի են ընկնում Քասարի ձորի տարբեր հատվածները, Քարի լճի մերձակա տարածքը և այլն։ Մարզում կան եզակի նշանակության հուշարձաններ՝ Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը Օշականում, Ամերոյի ամրոցը, Աշտարակի հին կամուրջը, Դաշտադեմի քարավանատունը, Սաղմոսավանքը, Օհանավանքը, Մուղնու Սուրբ Գևորգ եկեղեցին, Աշտարակի Կարմրավոր և Ծիրանավոր եկեղեցիները, Բաշ Ապարանի ճակատամարտի հուշահամալիրը, Հայոց տառերի հուշահամալիրը և Միջնադարյան ժամանակաշրջանի բազմաթիվ կառույցներ։ Այստեղ են գտնվում նաև Բյուրականի աստղադիտարանը, ՀՀ ԳԱԱ Արագածի բարձր լեռնային հատվածում գտնվող գիտահետազոտական ինստիտուտը և այլն (թվով 6 գիտահետազոտական ինստիտուտ և նախագծային բյուրո)։

Արագածոտնի համար առանձնահատուկ դերն ունեն նաև Արգնի-Շամիրամի և Թալինի մայր ջրանցքները, դրանցից սնվող ոռոգման ողջ համակարգը։ Վերջիններս մարզի գուղական տա-

բածքների գոյատևման և տնտեսական զարգացման համար կարևորագույն գործոններ են: Արագածոտնի տարածքում են գտնվում Ապարանի, Հալավարի, Ագարակի, Ծիլքարի, Ներքին Սասնաշենի, Դավթաշենի, Թալինի, Վերին Բազմաբերդի, Կարավաճորի, Շենիկի և Աշնակի ջրամբարները: Ամենախոշորը Ապարանի ջրամբարն է՝ 91 մլն մ³ ծավալով: Մարզով են անցնում Երևան-Աշտարակ-Թալին-Գյումրի, Երևան-Աշտարակ-Սպիտակ և Երևան-Արմավիր-Քարավերտ-Գյումրի ավտոճանապարհները: Մարզի ծայրարևմտյան հատվածով անցնում է ՀՀ գլխավոր երկաթուղին և էական ազգեցություն չի թողնում Արագածոտնի տնտեսական զարգացման վրա:

Տարածքի բնակեցումը, բնակչությունը և բնակավայրերը: Արագածոտնը ՀՀ տարածքի առավել վաղ բնակեցված շրջաններից մեկն է: Արտենի լեռան մոտ է գտնվում մարդու ամենահնագույն բնակավայրը Հայկական լեռնաշխարհում, որտեղ հայտնաբերված քարե գործիքներն ունեն շուրջ մեկ միլիոն տարվա հնություն: Մարզի տարածքը մասամբ համապատասխանում է պատմական Արագածոտն գավառին: Պատմական երկարատև ժամանակաշրջան մարզի ներկայիս տարածքի զգալի հատվածներ յուրացված չեն եղել և մշտական բնակչություն չեն ունեցել: Առկա բնակչությունը և բնակավայրերն առավելապես կենտրոնացված են եղել Քասաղի ու նրա վտակների միջին հոսանքի շրջաններում:

1829 թ. Ապարանի, Թալինի, Արագածի և Աշտարակի ներկայիս տարածաշրջաններում Մուշից, Սասունից, Մանազկերտից, Ալաշկերտից, Վանից և Խոյից վերաբնակեցվել են մեծ թվով հայ գաղթականներ: Ներգաղթի երկրորդ մեծ հոսքն այստեղ տեղի է ունեցել 1915-1922 թթ., երբ Արևմտյան Հայաստանի վերը նշված շրջաններից Մեծ եղեռնից փրկվածներից մի մասը վերա-

բնակեցվեցին ներկայիս Արագածոտնի մարզում: Բայց հայ բնակչությունից՝ այդ նույն ժամանակաշրջանում Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններից այստեղ ներգաղթել են նաև եզրիներ, որոնք հաստատվել են առավելապես Արագածի և Թալինի տարածաշրջաններում:

1831 թ. մարզում ապրող բնակչության թիվը կազմում էր 15645 մարդ, բնակավայրերինը՝ 88, բնակչության միջին խտությունը՝ 5.8 մարդ/քկմ: Առավել մարդաշատ գյուղերից էին Աշտարակը (826 մարդ), Օշականը (611 մարդ), Կարբին (694 մարդ), Քուչակը (531 մարդ), Մաստարան (561 մարդ): Համեմատաբար խիստ էին բնակեցված Աշտարակի (8.2 մարդ/քկմ) և Ապարանի (9.1 մարդ/քկմ) տարածաշրջանները, նոսր՝ Թալինի տարածաշրջանը (1.7 մարդ/քկմ):

Մինչև XIX դարի վերջը 1831 թ. համեմատությամբ Արագածոտնում բնակչության թիվն ավելացել է հինգ անգամ, իսկ բնակավայրերի թիվը գրեթե կրկնապատկվել է: Հետագա մոտ երեք տասնամյակի ընթացքում (1897-1926 թթ.) մարզի բնակչության թիվը մնացել է գրեթե նույնը, որի հիմնական պատճառն Առաջին համաշխարհային և քաղաքացիական պատերազմի տարիներին բնակչության թվաքանակի զգալի կորուստն էր: Արագածոտնում խորհրդային տարիներին դիտվել են բնակավայրերի թվի նվազում և հետագա կայունացում, բնակչության թվի կայուն աճ: Մարզի բնակչությունն ավելի արագ է աճել հատկապես խորհրդային վերջին երեք տասնամյակում. 1959-1988 թթ. այն գրեթե կրկնապատկվել է (ավելացել է 97.6 %-ով), իսկ 1988-2001 թթ.՝ 10.8 %-ով: 2001-2020 թթ. մարզի բնակչության թիվը նվազել է 15.5 հազարով կամ 5.7 %-ով:



Քարտեզ 24. Արագածոտնի մարզը

Արագածոտնը ՀՀ թույլ ուրբանացված մարզերից է: Այստեղ գյուղական բնակչության թիվն ավելի քան 3.6 անգամ զերազանցում է քաղաքային բնակչության թվին:

Քաղաքային բնակավայրերում ապրում է մարզի բնակչության ընդամենը 21.5 %-ը: Այստեղ մինչ 1963 թվականը չի եղել ոչ մի քաղաքային բնակավայր: 1970-1988 թթ. մարզում քաղաքային բնակչության թիվն ավելացել է ավելի քան 97 %-ով, իսկ 1988-2020 թթ. նվազել է 32 %-ով: Արագածի տարածաշրջանում քաղաքային բնակավայր չկա, իսկ մնացածներում այդպիսիք նախկին վարչական շրջանների կենտրոններն են Ապարանը և Թալինը, որոնք ներկայում են համապատասխան տարածաշրջանների գյուղական բնակավայրերի համար որոշակի ծառայությունների իրականացման կետրոններ են:

Աղյուսակ 61

Արագածոտնի մարզի բնակավայրերի և բնակչության թվի
շարժընթացք(1831-2020թթ.)/8,12,14,15,16,26,29,40/

Տարեթվեր	Բնակավայրերի թիվը		Բնակչության թիվը			- ըստ դրույժությունից	- ըստ դրույժությունից	- ըստ դրույժությունից
	քա- ռա- քային	գյուղա- կան	ընդա- մենք	քաղա- քային	գյու- ղա- կան			
1831	-	88	15645	-	15645	5,8	5,8	178
1897	-	166	78255	-	78255	28,4	28,4	471
1926	-	142	78841	-	78841	28,6	28,6	555
1959	-	122	90320	-	90320	32,8	32,8	740
1970	3	103	106380	20026	86284	38,6	31,5	838
1979	4*	104	114184	31249	82935	41,4	30,3	797
1988	4*	106	133149	39520	93629	48,3	34,2	883
2001	3	117	138301	32864	105437	50,2	38,3	901
2011	3	117	133.300	30800	102500	48,4	37,2	876
2015	3	117	131.300	29900	101400	47,6	36,8	867
2020	3	117	124700	26800	97900	45,3	35,5	859

Մարզկենտրոն Աշտարակն իր ՏՏՀ-ի շնորհիվ մշտապես կրել է Երևանի ազդեցությունը և զարգացել է որպես Երևանի արդյունաբերական հանգույցի ու Երևանի արքանյակ քաղաք: Այստեղ դեռևս խորհրդային տարիներին ստեղծվել են գիտահետազոտական հիմնարկներ, որոնց գործունեությունը վերջին երեք տասնամյակում ոչ ամբողջ ծավալով է իրականացվում: Մարզկենտրոն դառնալուց հետո մեծացել են ոչ միայն քաղաքի վարչական գործառույթները, այլև այն մարզի տարածաշրջանների համար դարձել է տնտեսական, կրթամշակութային, առողջապահա-

կան, սոցիալ-կենցաղային և այլ կարգի ծառայությունների սպասարկման կենտրոն: Աշտարակի արտադրական ձեռնարկությունների մեջ առավել մեծ տեղ ունի սննդամթերքի և խմիչքների արտադրությունը: Մարզում քաղաքի կարգավիճակ ունեն ևս երկու բնակավայր՝ **Ապարան և Թալինը**:

Արագածոտնի մարզի բնակչության կազմի բնորոշ կողմերից մեկն ազգային հաստկանիշն է: Ի տարբերություն այլ մարզերի՝ այստեղ հայ բնակչության տեսակարար կշիռը համեմատաբար ցածր է: 1989 թ. մարդահամարի տվյալներով մարզով բնակչության մոտ 8 %-ը կազմում էին եգիիները (ընդհանուր թվով 10551 մարդ): 2011 թ. մարդահամարի ժամանակ այդ ցուցանիշը կազմել է 4% (5474 մարդ):

Մակերևույթի բազմազանության և բարձրաշափական նիշերի ու տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունների պատճառով մարզի տարածքի տարբեր հատվածներում բնակչության խտության ցուցանիշները նկատելիորեն տարբեր են: **Բնակչության խտությամբ Արագածոտնը մոտ երկու անգամ զիջում է ՀՀ միջին ցուցանիշին:** Աշտարակի տարածաշրջանում այդ ցուցանիշն ավելի քան 3 անգամ մեծ է, քան Թալինի տարածաշրջանում, իսկ Ապարանի և Արագածի տարածաշրջաններին գերազանցում է 2.5-2.6 անգամ: Բնակչության մոտ 61 %-ը տեղաբաշխված է 1000-1600 մ, 31 %-ը՝ 1801-2200 մ բարձրության գոտում:

Արագածոտնում բնակեցվածությամբ հստակորեն առանձնանում են բարձրության 1001-1200 և 1801-2000 մ գոտիները, որոնց բաժին է ընկնում մարզի զյուղական բնակչության շուրջ 44 %-ը: Մարզի զյուղական բնակչության 28 %-ը տեղաբաշխված է 1201-1600 մ բարձրություններում, 16 %-ը՝ 2000 մ-ից բարձր շրջաններում, և ընդհամենը 1.7 %-ն է ապրում մինչև 1000 մ բարձրության գոտում:

Մարզի գյուղական բնակավայրերի 32 %-ից ավելին միջին մեծության գյուղեր են (501-1000 մարդ), որոնցում ապրում է Արագածոտնի գյուղական բնակչության 21 %-ը: Թվաքանակով երկրորդը մեծ գյուղերն են (1001-3000 մարդ), որոնց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության գրեթե 40 %-ը: Մարզում մեծ, խոշոր և գերխոշոր գյուղերում է ապրում գյուղական բնակչության մոտ 72 %-ը, որոնք կազմում են գյուղերի ընդհանուր թվի ընդամենը 33 %-ը: Մինչև 500 բնակիչ ունեցող գյուղերին (39 գյուղ) բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության ընդամենը 7.5 %-ը:

Անցած տասնամյակներում Արագածոտնում տեղի է ունեցել մինչև 1400 մ բարձրության տարածքներում ապրող գյուղական բնակչության ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական ցուցանիշների էական ավելացում: 1926 թ. նշված տարածքներին բաժին էր ընկնում մարզի գյուղական բնակչության 26 %-ը, 2019 թ.՝ ավելի քան 47 %-ը: Այդ ընթացքում տոկոսային 23 կետով նվազել է մարզի լեռնային ու բարձրլեռնային շրջանների (1801-2250 մ) բաժինը գյուղական բնակչության թվաքանակում: Վերջին տասնամյակներին Արագածոտնում տեղի են ունեցել գյուղերի խոշորացում և ըստ գերակշռող մարդաբանակի՝ գյուղական բնակավայրերի խմբերի նկատելի փոփոխություններ:

Տնտեսությունը: 2019 թ. Արագածոտնի տնտեսության հիմնական հատվածներն ՀՀ-ում ունեին հետևյալ պատկերը՝ արդյունաբերություն՝ 2.2 %, գյուղատնտեսություն՝ 9.3 %, շինարարություն՝ 3.0 %, մանրածախ առևտուր՝ 1.5 %, ծառայություններ՝ 0.7 %: **Տնտեսության կառուցվածքում** հիմնական նշանակություն ունեցող ճյուղերն են գյուղատնտեսությունը և արդյունաբերությունը: Վերջիններիս զարգացման ու տարածքային կազմակերպման վրա, բացի բնաշխարհագրական պայմանների բազմազանությունից և պատմական գործոններից, էական ազդեցու-

թյուն է թողնում նաև մարզի ՏԱԴ-ը՝ հարեանությունը մայրաքաղաք Երևանին, ինչպես նաև ՀՀ մասշտաբով սոցիալ-տնտեսական զարգացման համեմատաբար բարձր մակարդակ ունեցող Արմավիրի ու Կոտայքի մարզերին:

Արագածոտնի տնտեսության առաջատար ճյուղը **գյուղատնտեսությունն** է, որը մասնագիտացված է, հացահատիկայինների և կարտոֆիլի մշակության, պտղաբուծության ու խաղողագործության ուղղություններով և անասնապահությամբ: Մարզի գյուղատնտեսական հողատարածքները կազմում են 218.2 հազ. հա, որից 54.ը՝ վարելահողերն են, 68.5-ը՝ արոտավայրերը: Մարզի երկրագործության ճյուղային կառուցվածքը և տարածքային կազմակերպումն ունեն վառ արտահայտված ուղղաձիգ տեղաբաշխում: Աշտարակի և Թալինի տարածաշրջանների ցածրադիր շրջաններում զարգացած են պտղաբուծությունն ու խաղողագործությունը, նույն տարածաշրջանների բարձրադիր շրջաններում և Ապարանի ու Արագածի տարածաշրջաններում՝ հացահատիկի, կարտոֆիլի, կաղամբի և բանջարաբոստանայինների մշակությունը:

Արագածոտնի գյուղատնտեսության առաջատար ճյուղը վերջին տարիներին դարձել է անասնաբուծությունը: Վերջինիս 2019 թ. բաժին էր ընկնում ԳՀԱ-ի մոտ 57 %-ը: Առավել բարձրադիր տարածք ունեցող Ապարանի և Արագածի տարածաշրջանների գյուղատնտեսության կառուցվածքում անասնաբուծության տեսակարար կշիռն ավելի բարձր է: Դա պայմանավորված է ոչ միայն նշված տարածքների բնակչիմայական պայմաններով, այլ նաև բնակչության ազգային կազմով, եղի բնակչության առկայությամբ, որոնց համար ոչխարաբուծությունը ազգային-ավանդական զբաղմունք է:

Բնակչիմայական պայմանների բազմազանության պատճառով մարզն առանձնանում է գյուղացիական տնտեսությունների

արտադրական մասնագիտացման տարբերություններով: Աշտարակի տարածաշրջանի Կարբի, Օհանավան և Ուշի գյուղերն ունեն պտղաբուծական մասնագիտացում՝ խնձորենու մշակություն, Ոսկեվազ, Բյուրական, Աղձք գյուղերը՝ գետնաելակի և պտղաբուծության, Աշտարակ, Սասունիկ, Կոշ, Ուշան, Նոր Եղեսիա, Արուճ գյուղերը՝ խաղողագործական մասնագիտացում: Տարածաշրջանի մնացած գյուղերն առավելապես ունեն անասնապահական և երկրագործական տարրեր ճյուղերի գուգակցմամբ ձևավորած արտադրական մասնագիտացումներ: **Աշտարակի տարածաշրջանի** ցածրադիր և միջին բարձրությունների գյուղացիական տնտեսություններին բնորոշ է տնտեսության վարման ինտենսիվ եղանակը, մնացած գյուղական համայնքներում դեռևս գերակշռում է էքստենսիվ ուղղությունը: **Ապարանի տարածաշրջանի** գյուղական բնակավայրերի մեծ մասը գրադարձում են կարտոֆիլի մշակությամբ և անասնապահությամբ, Շենավան, Հարթավան, Ափնա, Արագած, Ծաղկաշեն, Քուչակ և այլ գյուղերում՝ նաև բանջարաբուծությամբ և սակավ ջերմասեր պտղաբուծությամբ: **Արագածի տարածաշրջանի** գյուղացիական տնտեսություններում գրադարձում են տավարաբուծությամբ (ոչխարաբուծությանը գուգակցված) և հացահատիկի (գարու) մշակությամբ: **Թալինի տարածաշրջանի** ցածրադիր գոտու (Արտենի, Արագածավան, Լուսակն, Աշնակ գյուղերում) տնտեսական գործունեության հիմնական ուղղությունները խաղողագործությունն ու պտղաբուծությունն են, Դաշտադեմ, Թալին և Ակունք բնակավայրերում՝ պտղաբուծությունը, իսկ մնացած գյուղերում՝ հացահատիկի մշակությունն ու անասնապահությունը:

Մարզում ռողոման համակարգի հիմքը կազմում են Արգնի-Շամիրամի և Թալինի (Ախուրյանի ջրամբարից սնվող) ջրանցքները, Ապարանի և 28 փոքր ու միջին մեծության արհեստական ջրամբարները, Քասաղ և Գեղաձոր գետերի ջրերը:

Մարզում գյուղացիական տնտեսությունների եկամտաբերության ավելացման ուղիներից են ներկայումս ոռոգման առկա համակարգի վերակառուցումն ու բարեկարգումը, նոր ջրագծերի անցկացումը, գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման մակարդակի բարձրացումը: Խնդրի լուծմանը կնպաստի նոր ջրամբարների կառուցումը:

Արդյունաբերությունը: Հստ արտադրության բաժինների՝ մարզի արդյունաբերության կառուցվածքում մոտ 90 %-ը բաժին է ընկնում մշակող արդյունաբերությանը, 8.1 %-ը՝ էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարմանը, 0.2 %-ը՝ ջրամատակարարմանը, կոյուղու, թափոնների կառավարմանը և վերամշակմանը, 2.1 %-ը՝ հանքագործական արդյունաբերությանը և բացահանքերի շահագործմանը [16]: **Արագածոտնի մշակող արդյունաբերության ճյուղերից առավել զարգացած են սննդամթերքի ու խմիչքների (72 %) և ուկերչական իրերի արտադրությունը (26 %):** Առավել զարգացած են մսի և մսամթերքի մշակումն ու պահածոյացումը, մրգերի և բանջարեղենի մշակումն ու պահածոյացումը, կաթնամթերքի և լմպելիքի արտադրությունները: **Մարզում կան խաղողի հումքի մշակման, գինու և կոնյակի արտադրություններ:** Արդյունաբերական հիմնական ձեռնարկությունները գտնվում են Աշտարակի, Ապարանի և Թալինի տարածաշրջաններում: Հայտնի ձեռնարկություններից են «Հայասի գրուպը», «Թամարա Ֆրուտը», «Աշտարակի գինիները», «Գրեյթ Վելին», «Աշտարակձուն», «Ապարանի պանրի գործարանը», «Աշտարակ կաթը» և այլն:

Մարզի տարածքով անցնող **միջանակության նշանակության** (Աշտարակ-Լանջիկ, Աշտարակ-Ապարան-Սպիտակի լեռնանցք) մոտ 144 և հանրապետական նշանակության 160 կմ ձանապարհահատվածները կարենու դեր ունեն դրանց մերձակայքում կամ անմիջապես ձանապարհի վրա գտնվող **գյուղական**

բնակավայրերի գարզացման համար: Մարզային նշանակության ձևադրանքների ընդհանուր էրկարությունը կազմում է մոտ 389 կմ, որոնք ապահովում են զյուղական համայնքների տրանսպորտային կապը մարզկենտրոնի, նախկին վարչական շրջանների և տարբեր զյուղերի միջև:

Արագածոտնի մարզում գործում են առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցող 23 հաստատություն, կամ մարզին բաժին է ընկնում ՀՀ-ում առկա այդպիսի օբյեկտների 4.6 %-ը: Արագածոտնը 10 հազար բնակչին բաժին ընկնող բժիշկների թվաքանակով (18.2) 2.5 անգամ զիջում է ՀՀ միջին ցուցանիշին, միջին բուժանձնակազմով (43.4)՝ 1.3 անգամ, եկվանդանոցային մահճակալների թվով (12.1)՝ 3.4 անգամ, առողջության առաջնային ծառայություն մատուցող հաստատությունների թվաքանակով՝ 1.8 անգամ: Արագածոտնը ՀՀ-ում առաջններից է բնակչությամբ ապահովվածությամբ. ՀՀ միջինին մարզը գերազանցում է մոտ 1.5 անգամ (46,5 քմ): Արագածոտնում 2019 թ. գործում էին 32 նախակրթական, 120 հանրակրթական, 12 երաժշտական, գեղարվեստի, արվեստի և մանկապատանեական ստեղծագործական կենտրոններ, 3 նախնական մասնագիտական, 1 միջին մասնագիտական, 54 գրադարան, 2 գործող թանգարան, 4 տուն-թագարան, 5 մարզական հաստատություն և 781 մանրածավական առևտություն օբյեկտ: Մարզի տարածքում կա հյուրանոցային ուժ օբյեկտ: Արագածոտնը մյուս մարզերի համեմատ ՀՀ-ում հայտնի է զիտության ոլորտում զբաղվածության բարձր ցուցանիշով: Մարզի տարածքի Երևան-Թալին և Աշտարակ-Ապարան հատվածներում վերջին տասնամյակում արագ զարգանում են զբուաշրջային սպասարկման ծառայությունները: Մարզում են գտնվում զիտահետազոտական մի քանի ինստիտուտներ և Բյուրականի աստղադիտարանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Կատարե՛ք Արագածոտնի մարզի սահմանների և ՏԱԴ-ի վերլու-
ծություն և գնահատում:
2. Բնութագրե՛ք Արագածոտնի բնառեսուրսային ներուժը:
3. Կատարե՛ք Արագածոտնի բնակեցման պատմաշխարհագրա-
կան վերլուծություն:
4. Բակչության ու բնակավայրերի տեղաբաշխման ի՞նչ առանձնա-
հատկություններ կան Արագածոտնում:
5. Վերլուծե՛ք Արագածոտնի տնտեսության ճյուղային կառուցված-
քը և տեղաբաշխումը:
6. Ինչպիսի՞ զարգացում և տեղաբաշխում ունեն ենթակառուցված-
քային տարրերը Արագածոտնի մարզում:
7. Կազմե՛ք Արագածոտնի մարզի սոցիալ-տնտեսական զարգաց-
ման հիմնախնդիրների Ձեր տարրերակը:

5.3. Արարատի մարզը

Տնտեսության զարգացման նախադրյալները: Արարատի մարզը զբաղեցնում է համանուն ֆիզիկաաշխարհագրական շրջանի հարավարևելյան կեսի հարթավայրային ու լեռնային հատվածները: Հարթավայրային շրջանների բարձրությունը տատանվում է ծովի մակարդակից 800-1000 մ-ի սահմաններում: Մարզի լեռնային տարածքի մեծ մասը զբաղեցնում են Գեղամա լեռների լանջերը, Ուրծի և Երանոսի լեռները: Դրանց նախալեռնային շրջաններում շատ են երկրագործության և բնակեցման համար ոչ պիտանի «վատահողերը» (բեղլենդները):

Մարզը ձևավորվել է Արարատի, Մասիսի և Արտաշատի նախկին վարչական շրջանների միավորումից: Զբաղեցնում է 2090 կմ² տարածք: Տարածքի մեծությամբ այն գերազանցում է միայն Արմավիրին: Մարզի նտրոն Արտաշատը գտնվում է Երևանից 30 կմ հեռավորության վրա: Մարզին բաժին են ընկնում ՀՀ տարածքի 7.0 %-ը և բնակչության 8.6 %-ը:

Բնակեցման և տնտեսական գործունեության համար առավել նպաստավոր ու նպաստավոր պայմաններ ունեցող տարածքները կազմում են մարզի ավելի քան 68 %-ը: Մարզն առանձնանում է **համեմատաբար նպաստավոր կլիմայական պայմաններով**: Հարթավայրային շրջաններին բնորոշ է տևական (4-5 ամիս) շոգ ամառը, կարճատև գարունը և ձմեռը, տևական աշունը: Նշված տարածքներում կլիման խիստ ցամաքային է, մթնոլորտային տեղումների քանակը տատանվում է 205-300 մմ-ի սահմաններում: **Այստեղ լինում են ՀՀ-ի համար առավելագույն ջերմաստիճանները՝ +42-43°C**: Լեռնային մասերում կլիման չափավոր լեռնային է, Գեղամա լեռների բարձրադիր մասերում՝ ցուրտ լեռնային: Ազրոկլիմայական նշված պայմանները հնարավորություն են տվել ոռոգելի երկրագործության զարգացման համար,

ինչի շնորհիվ մարզի տարածքում բնական, հումուսից աղքատ գորշահողերը վեր են ածվել կուլտուրոռոգելի հողերի, կիսաանապատային բուսականությունը փոխարինվել է ծաղկուն այգիներով ու մշակելի դաշտերով:

Մարզի ավելի բարձրադիր վայրերում գերիշխում են լեռնատափաստանային և մերձալպյան լանդշաֆտները, որոնք օգտագործվում են անասնապահության զարգացման համար: Արարատի ցածրադիր առանձին հատվածներում առաջացել են ճահճացած տեղամասեր, որոշ տեղերում՝ աղուտներ: Արարատի նախալեռնային առանձին հատվածներում՝ 1400-2200 մ բարձրություններում, կան անտառներ ու թփուտներ: Այդպիսիք տարածված են Խոսրովի արգելոցի տարածքում:

Արարատի մարզն աղքատ է ջրային ռեսուրսներով: Մարզի տարածքով հոսում են Հրազդանը (ստորին հոսանքի հատվածով), Ազատ ու Վեդի գետերը և թափվում են Արաքսի մեջ: Տնտեսության համար անհրաժեշտ ջրային ռեսուրսների պակասը լրացվում է արտեղյան ջրերի պաշարներով: Առանձնահատուկ նշանակություն ունեն Ազատի ջրամբարը, Արտաշատի ու Երասխի ջրանցքները: Կառուցվում է Վեդու ջրամբարը: ՀՀ մարզերի մեջ Արարատը համարվում է առավել շատ ջուր օգտագործողը (ՀՀ-ում օգտագործվող ջրերի ծավալի մոտ 1/3-ը): Բացի երկրագործությունից՝ մարզում խոշոր ջրօգուագործող է նաև ձկնաբուծությունը, որի զարգացումը իրականացվում է բազմաթիվ արհեստական ջրավազաններում: Վերջին տարիներին դրանց քանակի ավելացումը և օգտագործվող ջրի ծավալների մեծացումը իշեցրել են արտեղյան ջրերի մակարդակը՝ անդրադառնալով արտեղյան ավազանի ջրերի պաշարների գոյացման վրա:

Արարատում է գտնվում ՀՀ-ում կրաքարի ամենախոշոր հանքավայրերից մեկը՝ Արարատի հանքավայրը: Կան նաև մարմարի, ֆուֆորիտների, կավի և հանքային ջրերի պաշարներ:


Արարատի տնտեսության զարգացման համար իրենց դերն ունեն նաև զբոսաշրջային ռեսուրսները: Տարեկան հազարավոր զբոսաշրջիկներ այցելում են Խոր Վիրապի վանքային համալիր, Պարյուր Սևակի տուն-թանգարան և այլ վայրեր: Էկոզբուաշրջության զարգացման համար բավարար նախադրյալներ կան Խոսրովի արգելոցում, Դաշտաքարում:

Արարատն առանձնանում է մայրաքաղաքին հարևանությամբ, ՀՀ հյուսիսային և հարավարևելյան մարզերի ու տարածաշրջանների միջև տարամացիկ ՏԱՐ-ով: Դրանք իրենց անմիջական ազդեցությունն են թողել Արարատի մարզի ժամանակակից տարածքի բնակեցման ու տնտեսության զարգացման վրա: Մարզի զարգացման համար առանձնահատուկ դեր ունեն Երևան-Արտաշատ-Երասխ-Եղեգնաձոր միջպետական և հանրապետական նշանակության Արտաշատ-Վեդի-Ուրցաձոր-Շաղափ-Զանգակատուն, Մասիս-Վաղարշապատ ավտոճանապարհները: Մարզի տնտեսության զարգացման համար կարևոր դեր է խաղացել նաև Երկարության, մասնավորապես՝ Երևան-Մասիս-Արտաշատ-Արարատ-Երասխ հատվածը:

Տարածքի բնակեցումը, բնակչությունը և բնակավայրերը: Արարատի մարզը պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Ոստան գավառի մի մասն է, որը միջնադարում հայտնի էր որպես մայրաքաղաքների զավառ: Հայաստան աշխարհում տնտեսական ու քաղաքական վերելքներն այստեղ ուղեկցվել են քաղաքային ու գյուղական բնակավայրերի առաջընթացով, հարյուրավոր նոր բնակավայրերի առաջացմամբ: Այստեղ էին գտնվում միջնադարյան Հայաստանի Արտաշատ և Դվին մայրաքաղաքները՝ իրենց հարակից գյուղական բնակավայրերով: Ժամանակակից բնակավայրերի հենքի և տնտեսության ձևավորման ու զարգացման համար առանձնահատուկ դեր է ունեցել Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին, երբ 1830-ական թվականներից տասնյակ հազարավոր

հայեր Պարսկահայքի Սալմաստի և Խոյի գավառներից ներգաղթեցին Արևելյան Հայաստան և վերաբնակեցվեցին նաև Արարատի տարածաշրջաններում:

1831 թ. Արարատի մարզում բնակչության թիվը կազմում էր ավելի քան քսան երկու հազար մարդ, որը բաշխված էր 90 գյուղերում: Բնակչության միջին խտությունը կազմում էր 11 մարդ/կմ²: Առավել խոշոր գյուղերից էին Վեդին (1244 մարդ), Արարատը (661 մարդ), Ազատավանը (534 մարդ), Այգեգարդը (353 մարդ), Վ. Արտաշատը (370 մարդ), Ոստանը (352 մարդ), Աղամազլուն (435 մարդ) և այլն:



Քարտեզ 25. Արարատի մարզը

1831-1987 թթ. մարզի բնակչության թվաքանակն ավելացել է ավելի քան 3.6, հետագա մոտ երեք տասնամյակում՝ նվազել 1.5 անգամ: Մարզի բնակչության թվաքանակի կայուն աճ է դիտվել խորհրդային տարիներին: 1926-1988 թթ. մարզի բնակչության թիվն

ավելացել է ավելի քան չորս, իսկ զյուղական բնակչության թիվը՝ 2,8 անգամ: Խորհրդային վերջին երեք տասնամյակում՝ 1959-1988 թթ., մարզի բնակչության թիվը կրկնապատկվել է, իսկ 1988-2001 թթ.՝ ավելացել ընդամենը 10.8 %-ով:

Արարատը ՀՀ այն մարզերից է, որտեղ անկախացումից հետո առաջին տասնամյակի ընթացքում դիտվել է ինչպես ընդհանուր, այնպես էլ զյուղական բնակչության թվաքանակի աճ (համապատասխանաբար՝ 10,8, և 15,5 %-ով): 2001-2020 թթ. մարզի բնակչության թվաքանակը նվազել է 15.5 հազարով կամ 5.7 %-ով: Արարատի մարզի ժամանակակից տարածքում առավել մեծ թվով զյուղական բնակավայրեր եղել են 1897 թ. (179): Հետագա ժամանակաշրջանում աստիճանաբար տեղի է ունեցել մարզի զյուղերի թվաքանակի նվազում, որը հիմնականում պայմանավորված էր լեռնային ու նախալեռնային շրջաններում, այսպես կոչված, «ոչ հեռանկարային բնակավայրերի» վերացմամբ:

Տարածքի ագրոկլիմայական ռեսուրսները, ձևավորված ոռոգման համակարգը բավարար նախադրյալներ են ստեղծում Արարատի ցածրադիր-հարթավայրային շրջաններում խոշոր ու գերիտշոր զյուղերի ձևավորման համար: Արարատը 2020 թ. բնակչության թվաքանակով երկրորդն էր ՀՀ-ում, զյուղական բնակչության թվով՝ առաջինը: Բնակչության մոտ 72 %-ը ապրում է զյուղական բնակավայրերում:

Մարզի քաղաքային բնակավայրերից Արտաշատը, Արարատը և Մասիսը Երևանի արդյունաբերական հանգույցի կարևոր օլակներից են: Դրանցից առաջին երկուսը խորհրդային տարիներին դասվում էին հանրապետական ենթակայության քաղաքների շարքին: Արտաշատ, Արարատ և Մասիս քաղաքները բնակչության թվով զրեթե հավասար քաղաքներ են: Արարատը դեռևս խորհրդային տարիներին դարձել էր հայտնի արդյունաբերական կենտրոն: Արտաշատը, բացի վարչական գործառույթից, հայտնի

Է նաև որպես բազմաձյուղ վերամշակող արդյունաբերական կենտրոն (մրգի և բանջարեղենի պահածոների, ալկոհոլային խմիչքների, երեսպատման նյութերի, հախճապակու, աղյուսի և կղմինդրի արտադրություն և այլն):

Աղյուսակ 62

*Արարատի մարզի բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացը
(1831-2020 թթ.) [8, 12, 14, 15, 16, 26, 29, 40]*

Տեղական Տարբերակում	Բնակա- վայրերի թիվը	Բնակչության թիվը			- Աւելացած բնակչության թիվը	- Դրաֆունքսի դաշտավայր նշանակության մեջ	- Վերաբերություն բնակչության գումարին	- Վերաբերություն բնակչության գումարին
		Նվազանքնը	Գումարանը	Բնակչության թիվը				
1831	-	90	22123	-	22123	10.6	10.6	246
1897	-	179	89356	-	89356	42.8	42.8	499
1926	-	159	59906	-	59906	28.7	28.7	377
1959	2	116	124270	12689	111581	59.5	53.4	962
1970	4	95	178369	35124	143245	85.3	68.5	1508
1979	4	89	205191	52085	153106	98.2	73.2	1720
1988	4	90	245532	79149	166383	117.4	79.6	1849
2001	4	95	272016	79885	192131	130.2	92.0	2044
2011	4	95	260367	74103	186264	124.6	89.1	1982
2015	4	95	260102	73976	186126	124.5	89.1	1980
2020	4	95	256500	72100	184400	123	882	1962

Մասիսը ՀՀ խոշոր երկարուղային հանգույցներից է և սպա-սարկում է մայրաքաղաքին: Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը սննդամթերքի տարրեր տեսակների արտադրությունն է: **Վեղին** բնակչության թվով զգալիորեն զիջում է նախորդ երեքին: Այն միջև 1996 թվականը համարվում էր Արա-

բատի վարչական շրջանի կենտրոնը և ներկայումս էլ հարակից գյուղական բնակավայրերի համար որոշակի ծառայությունների սպասարկման կենտրոն է: Քաղաքում կան սննդի ու շինանյութերի արտադրության ձեռնարկություններ, կարևոր դեր ունի նաև գյուղատնտեսական գործունեությունը:

Գյուղական բնակչության խտությամբ՝ 88 մարդ/քլմ, Արարատը զիջում է միայն Արմավիրին, գյուղական բնակավայրերի խտությամբ միջին տեղ է զբաղեցնում ՀՀ-ում: **Սարգն առաջիններից է ՀՀ-ում գյուղերի միջին մարդաքանակով:**

Արարատի մարզին առավել բնորոշ է շղթայաձև տարարնակեցումը: Գյուղական բնակավայրերի հիմնական մասը տեղաբաշխված են մարզի հարթավայրային մասում՝ գլխավոր ավտոմոբիլային ճանապարհի և երկաթուղու երկայնքով, իսկ սահմանափակ թվով գյուղեր՝ նախալեռնային և լեռնային շրջաններում: Գյուղական բնակավայրերի 86 %-ից ավելին տեղաբաշխված են ծովի մակարդակից 801-1000 մ բարձրություններում: Մարզի ընդամենը 6 գյուղ գտնվում են ծովի մակարդակից 1601-2000 մ բարձրության շրջաններում, որոնց բաժին է ընկնում Արարատի գյուղական բնակչության ընդամենը 1,3 %-ը:

Ըստ մարդաքանակի՝ Արարատի մարզին առավել բնորոշ են մեծ (1001-3000 մարդ) գյուղերը, որոնց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության մոտ 55 %-ը:

Թեև Արարատում գյուղական բնակչությունը և բնակավայրերն առավելապես տեղաբաշխված են եղել մարզի ցածրադիր-հարթավայրային շրջաններում, սակայն այստեղ ևս անցած տասնամյակների ընթացում տեղի են ունեցել գյուղական բնակավայրերի և բնակչության՝ ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության բաշխվածության որոշակի փոփոխություններ: 1926 թ. համեմատությամբ 2020 թ. մարզի 1600 մ-ից բարձր շրջաններում գտնվող գյուղական բնակավայրերի բացարձակ թիվը նվազել է

32-ով կամ 17 տոկոսային կետով: Եթե 1926 թ. նախալեռնային և լեռնային շրջաններում (1200 մ-ից բարձր) ապրում էր մարզի գյուղական բնակչության 10 %-ը, ապա՝ 2020 թ.՝ ընդամենը 1,9 %-ը: Այդ տարիներին տեղի է ունեցել մարզի հիմնական բնակեցված գոտու (մինչև 1000մ բարձրության շրջանների), ինչպես գյուղերի թվի, այնպես էլ բնակչության թվաքանակի հարաբերական մեծությունների ավելացում:

ՀՀ ազգային փոքրամասնություններից մարզի Դիմիտրով ու Վ. Դվին գյուղերում ապրում են ասորիներ:

Տնտեսությունը: Արարատը ՀՀ տնտեսապես առավել զարգացած մարզերից է: 2019 թ. արդյունաբերական արտադրանքի ծավալի ցուցանիշով (296.8 մլրդ դրամ) Արարատը զիջում էր միայն մայրաքաղաք Երևանին ու Սյունիքի մարզին: 2019 թ. մարզում գյուղատնտեսական արտադրանքի ծավալը կազմել 127.2 մլրդ դրամ է, որը կազմում էր ՀՀ ԳՆԱ-ի 14.9 %-ը: Այս ցուցանիշով Արարատը զիջում էր միայն Արմավիրին (20.9 %, 2019 թ.):

Արդյունաբերությունը: Մարզի արդյունաբերությունն ըստ արտադրության բաժինների ունի հետևյալ կառուցվածքը՝ հանքագործական արդյունաբերություն՝ 0.4, մշակող արդյունաբերություն՝ 95.0, էկոկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում՝ 4.1, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում՝ 0.5 %: Վերամշակող արդյունաբերության կառուցվածքում առավել զարգացած են պահածոների, հյութերի, գինու, կոնյակի ու ծխախոտի արտադրության ճյուղերը: Թողարկվող արտադրանքի արժեքային արտադրությամբ առաջատարը հիմնային մետաղների (ոսկու) արտադրությունն է, որը կենտրոնացված է Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում: **Սննդի արդյունաբերությունը զարգանում է տեղական խաղողի, պտուղների և բանջարեղենի վերամշակման հիման վրա:** Վերջինիս հայտնի կենտրոններ են Արտաշատը, Արարա-

տը, Վեդին և Մասիսը: Մննդարդյունաբերական այլ գործարաններ տեղաբաշխված են նաև մարզի գյուղական բնակավայրերում: Մարզի տարածքում կա նաև ալրադաց կոմբինատ (Արմաշ2): Մասիսում գործում է, «**Խնտերնեյշնլ Մասիս տորակո» ծխախոտի գործարանը: Մարզի արդյունաբերական ձեռնարկությունների ընդհանուր թիվն անցնում է 80-ից:**

Արարատում է գտնվում ՀՀ ցեմենտի երկու ձեռնարկություններից մեկը՝ «Արարատ ցեմենտը», որն աշխատում է Արարատի կրաքարի պաշարների հիման վրա: Մարզի արդյունաբերության կառուցվածքում իրենց տեղն ունեն նաև թղթի ու թղթե արտադրատեսակների, երկաթբետոնե հավաքովի կոնստրուկցիաների (Արարատում և Արտաշատում), փայտանյութի վերամշակման, կենցաղային իրերի (ձենապակ), բնական քարերի մշակման, Էլեկտրական ու հսկիչ սարքերի արտադրությունները:

Գյուղատնտեսությունը: Արարատը մեր երկրի գյուղատնտեսական առավել զարգացած մարզերից մեկն է: 2019 թ. մարզում գյուղատնտեսական հողատարածքները կազմել են 156.6 հազ. հա, որից վարելահողերը՝ մոտ 25 հազ. հա:

Մարզի ԳՀԱ-ի կառուցվածքում բուսաբուծությունը 2019 թ. ցուցանիշներով ավելի քան 3 անգամ զերազանցել է անասնապահությանը: Գտնվելով Երևանյան ազլումերացիայի ազդեցության գոտում՝ մարզի գյուղատնտեսությանը բնորոշ է նաև **մերձքաղաքային մասնագիտացման ուղղվածությունը**: Մարզի հազարավոր գյուղացիական տնտեսություններ իրենց արտադրանքն իրացնում են առավելապես Երևանի շուկաներում:

Մարզի երկրագործությունը գրեթե ամբողջովին ոռոգովի է, որն ապահովում են Արտաշատի ու Արաքսից սկզբանավորվող ջրանցքները, արտեզյան տասնյակ ջրհորները, պոմպակայանները (Մխչյանի և այլ), Ազատի ջրամբարը: **Բուսաբուծության առաջատար ճյուղերն են բանջարաբուծությունը, պտղաբուծությունը**

և խաղողագործությունը, բոստանայինների մշակությունը: Բան-ջարաբնականային ցանքատարածքները մարզում 2019 թ. կազմել են 4928 հա, միջին բերքատվությունը՝ 399ց/հա: Դրանց համախառն արտադրանքով մարզը զիջում է միայն Արմավիրին: Բոստանային ցանքատարածքներով Արարատը 2019 թ. ավելի քան 2.7 անգամ զիջում էր Արմավիրի մարզին՝ նկատելիորեն առաջ անցնելով ՀՀ մյուս մարզերից, իսկ դրանց միջին բերքատվության ցուցանիշով Արարատը 2015-2019 թթ. ընթացքում առաջ է եղել Արմավիրից: 2014-2019 թթ. մարզում նվազել են ինչպես բանջարանցային, այնպես էլ բոստանային մշակաբույսերի ցանքատարածքները, ինչի հետևանքով նվազել է դրանց համախառն բերքը:

Պտղի և հատապտղի ցանքատարածքներով Արարատի և Արմավիրի մարզերի միջև տարբերությունը մեծ չէ: 2015-2019 թթ. բերքատվության միջին ցուցանիշի տատանման պատճառով դրանցում համախառն բերքը ևս տարբեր է եղել: Արարատն Արմավիրին զիջում է նաև խաղողի տնկարկների տարածքներով (4.6 հազ. հա և 5.9 հազ. հա): **2015-2019 թթ. մարզում խաղողի բերքատվությունն ավելի բարձր է եղել, քան Արմավիրում, ինչի շնորհիվ մարզն առանձին տարիների ավելի շատ խաղողի բերքը է ստացել, քան Արմավիրի մարզը: 2019 թ. մարզում արտադրվել է 80 հազ. տ պտուղ և խաղող:**

Մարզի երկրագործության կառուցվածքում իրենց դերն ունեն նաև վաղահաս կարտոֆիլի, հացահատիկային և հատիկարնդեղենային մշակաբույսերի աճեցումը: Հացահատիկի ու հատիկարնդեղենների ցանքատարածքները մարզում 2018 թ. կազմել են 3.3 հազ. հա, համախառն բերքը՝ 12.4 հազ. տ, վաղահաս կարտոֆիլի ցանքատարածքները՝ 619 հա, համախառն բերքը՝ 16.4 հազ. տ:

Մարզի տարածաշրջաններից Արարատը և Արտաշատը առավել շատ մասնագիտացված են պտղաբուծությամբ ու խաղո-

դագործությամբ, Մասիսի տարածաշրջանը՝ բանջարարուտանայինների մշակությամբ, ջերմոցային տնտեսություններում՝ նաև ծաղկաբուծությամբ:

Արարատի մարզի գյուղատնտեսության մեջ անասնապահության տեսակարար կշիռը համեմատարար փոքր է արոտավայրերի և խոտհարքների փոքր մակերեսների պատճառով։ Մարզին բաժին է ընկնում ՀՀ անասնապահության համախառն արտադրանքի մոտ 7 %-ը։ Արարատին բաժին են ընկնում ՀՀ ԽԵԱ-ի գլխաքանակի 7 %-ը, խոզերի գլխաքանակի 11.4 %-ը, ոչ խարների և այծերի 13.2 %-ը։

Մարզում անասնաբուծական առավել զարգացած շրջաններն են Արարատի ու Արտաշատի տարածաշրջանների լեռնային հատվածները, որտեղ կան արոտավայրերի ու խոտհարքների զգալի տարածքներ։

Մարզում կան ձևավորված ֆերմերային խոշոր տնտեսություններ և ջերմատներ։Վերջին մեկ տասնամյակում մարզի գյուղացիական տնտեսություններում նկատվելու է նկատմամբ կրծատվել են հացահատիկայինների ցանքատարածքները, և գյուղական բնակավայրերն իրենց արտադրական մասնագիտացմամբ գրեթե ամբողջությամբ կրկնում են նախկինում (մինչև 1990-ականների սկիզբը) ունեցած ուղղությունները (այգեպտղաբանջարաբուծական տնտեսություններ՝ անասնապահությանը զուգակցված)։

Մարզի գյուղական որոշ բնակավայրերի համար եկամտի լրացուցիչ աղբյուր է արհեստական լճակներում իրականացվող ձկնաբուծությունը, իսկ նախապեհնային և լեռնային գոտու գյուղերի համար՝ մեղվապահությունը։

Արարատի մարզի տրանսպորտային գլխավոր ուղիները հանգուցային դեր են կատարում ՀՀ հյուսիսից հարավ ձգվող տրանսպորտային մայրուղիներում։ Թեև մարզի տարածքով ձգվում է Երևան-Արտաշատ-Արարատ-Երասխ-Նախիջևան-

Մերի-Միջնավան-Կապան երկաթուղին, սակայն Աղբբեզանի կողմից ՀՀ տրանսպորտային շրջափակման պատճառով այն կորցրել է իր նախկին նշանակությունը, և այժմ գործում է միայն Երևան-Երասխ հատվածը: **Մասիս կայարանը** ՀՀ երկաթուղային խոշորագույն հանգույցներից մեկն է: Առանձնակի կարևորություն ունի Երևան-Երասխ- Եղեգնաձոր-Վայք-Գորիս-Կապան-Մերի միջպետական նշանակության ավտոմայրուղին:

Արարատի մարզի տնտեսության մեջ իրենց ուրույն տեղն ունեն շինարարությունը և ոչ արտադրական ոլորտը: 2019 թ. մարզում իրականացվել է ՀՀ-ում կատարված շինարարական աշխատանքների 5.6 %-ը, մանրածախ առևտրի 4,1 %-ը և ծառայությունների 1.7 %-ը: Մարզում գործում ավելի քան 1890 մանրածախ առևտրի օբյեկտ, պետական նախադպրոցական 81, հանրակրթական 112, երաժշտական արվեստի, գեղարվեստի դպրոցներ ու մանկապատենական ստեղծագործական 22 կենտրոն, 3 նախնական մասնագիտական (արհեստագործական) և 4 միջին մասնագիտական ուսումնական հաստատություն: Արտաշատում գործում է պետական քատրոն, մարզում կան գործող երկու թանգարան, 88 գրադարան, 6 մարզական կազմակերպություն: 2019 թ. մարզն ուներ 457 բժիշկ և 986 միջին բուժանձնակազմ, հիվանդանոցային մահճակալների թիվը կազմել է 488 հատ: Մարզում գործում է 60 առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցող հաստատություն: 10.000 բնակչին բաժին են ընկնում 18 բժիշկ, 38 միջին բուժանձնակազմ, 19 հիվանդանոցային մահճակալ:

Արարատի մարզի գյուղական բնակավայրերը ՀՀ-ում առանձնանում են սոցիալ-մշակութային և կենցաղային սպասարկման համեմատաբար բարձր մակարդակով: Բացառությամբ Սուրենավան, Արմաշ, Պարույր Մելքոնյան գյուղերի՝ մնացածները զազաֆիկացված են: Բազի Մասիսի տարա-

ծաշրջանի Սիփանիկ, Ռանչպար և մի քանի այլ գյուղերից՝ մարզի մնացած բոլոր գյուղերն ունեն կենտրոնացված ջրամատակարարում:

Հարցեր և առաջադրանքներ

1. Կատարե՛ք Արարատի մարզի բնառեսուրսային ներուժի վերլուծություն և գնահատում:
2. Հայաստան աշխարհում Արարատի տարածքը բնակեցման ի՞նչ դերակատարություն է ունեցել:
3. Բնութագրե՛ք Արարատի տարաբնակեցման համակարգը: Կատարե՛ք մարզի գյուղական բնակավայրերի խմբավորում և դասակարգում:
4. Ի՞նչ դեր ունեն ենթակառուցվածքային տարրերը Արարատի սոցիալ-տնտեսական զարգացման գործում:
5. Կատարե՛ք Արարատի գյուղատնտեսության մասնագիտացման և տարածքային կազմակերպման վերլուծություն:
6. Բնութագրե՛ք Արարատի արդյունաբերության ձյուղային կառուցվածքն ու տեղաբաշխումը:
7. Առաջիկա տարիներին գրոսաշրջության ի՞նչ ուղղություններ կարող են ձևավորվել և զարգանալ Արարատի մարզում:
8. Շրջակա միջավայրի պահպանության ի՞նչ հիմնախնդիրներ կան Արարատի մարզում:

5.4. Արմավիրի մարզը

Տնտեսության զարգացման նախադրյալները: Արմավիրի մարզը գտնվում է ՀՀ արևմտյան հատվածում: Այն կազմավորվել է Արմավիրի, Բաղրամյանի և Էջմիածնի նախկին վարչական շրջանների միավորումից: Մարզի հարավային և արևմտյան մասով անցնում է Թուրքիայի հետ ՀՀ պետական սահմանը: Արաքսի միջին հոսանքում (Մարզարա գյուղի մոտ) կառուցված է ավտոճանապարհային կամուրջ, որը ՀՀ-ն կապում է Թուրքիայի հետ: Հյուսիսից սահմանակցում է Արագածոտնի, արևելքից՝ Արարատի մարզերին, հյուսիսարևելյան մասում՝ մայրաքաղաքին:

Արմավիրը ՀՀ-ում տարածքով ամենափոքր մարզն է, զբաղեցնում է 1242 կմ² տարածք (ՀՀ տարածքի 4.2 %-ը): ՀՀ առավել խտաբնակ մարզն է և բնակչության քանակով ամենամեծը: Այստեղ 2020 թ. ապրում էր ՀՀ մշտական բնակչության 8.9 %-ը, զյուղական բնակչության՝ 17.0 %-ը: Արարատից հետո երկրորդն է ՀՀ-ում զյուղական բնակչության թվաքանակով:

Արմավիրն զբաղեցնում է Արարատյան գոգավորության արևմտյան հատվածը և ունի հիմնականում հարթավայրային մակերևույթ (800-1100 մ բարձրությամբ): Հյուսիս-արևմուտքից մարզը եզրավորված է Կարմրաշենի ու Շամիրամի լավային սարավանդներով, որտեղ տեղանքի առավելագույն բարձրությունները հասնում են մինչև 1300 մ: Մարզի տարածքի մոտ 81 %-ը գտնվում է ծովի մակարդակից մինչև 1000, մնացածը՝ 1001-1300 մ բարձրություններում: Մարզում մինչև 3⁰ թեքություն ունեցող շրջանները կազմում են տարածքի 83 %-ը, մինչև 5⁰ թեքություն ունեցող շրջանները՝ 92 %-ը: Դրանք առանձնանում են բնակեցման ու տնտեսության զարգացման համար ռելիեֆային առավել նպաստավոր պայմաններով:

Ի տարբերություն Արարատի՝ Արմավիրի մարզի գրեթե ամ-

բողջ տարածքին բնորոշ են տևական, շոգ ամառը, կարճատև զարունը և ձմեռը, տևական աշունը: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը տատանվում է 250-300 մմ սահմաններում, որոնք թափվում են առավելապես գարնանն ու աշնանը: Առանձին տարիների ձմռանը մարզում դիտվում է ջերմատիճանային շրջադասություն: Այստեղ ևս իշխողը կուտուր-ռոռզելի հողերի վրա ձևավորված մարդածին լանդշաֆտներն են: Ազրոկ-լիմայական ռեսուրսների բերված նկարագիրը ևս խոսում է մարդի տարածքի բնակեցման ու տնտեսության զարգացման համար նպաստավոր պայմանների մասին:

Արմավիրն առանձնապես հարուստ չէ շրային ռեսուրսներով: Այստեղ է գտնվում ՀՀ ամենացածրադիր Ակնա (Այդր) լիճը, որն ունի ստորերկրյա սնում, գրաղեցնում է 50 հա մակերես: Լճից սկիզբ է առնում Մեծամոր (Սևոռուր) գետը:

Տնտեսության առանձին ճյուղերի ձևավորման, դրանց տնտեսական բազայի ամրապնդման և սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացների վրա իրենց դրական ազդեցությունն են ունեցել նաև մարզի համեմատարար նպաստավոր ՏԱԴ-ը և ձևավորված արտադրական ենթակառուցվածքները: Արմավիրը սահմանակցում է մայրաքաղաքին: Մարզով անցնում են տարանցիկ նշանակության Երևան-Վաղարշապատ-Արմավիր-Քարակերտ-Արագածավան-Գյումրի-Բավրա-Վրաստան ավտոճանապարհը և երկաթուղի: Բացահիկ դեռ ունեն նաև Արաքսից սնվող Արմավիրի Մեծ, Հրազդանից սնվող Էջմիածնի և Ախուրյանի ջրամբարից սնվող Թալինի ջրանցքներն ու դրանցից սկզբնավորվող ռոռզման ողջ համակարգը, ինչպես նաև Արարատյան արտեզյան ավազանը:

Արմավիրի համար կարևոր նշանակություն ունեն նաև այստեղ հայտնաբերված տուֆերի, հրաբխային խարամի և կերակրի աղի պաշարները: Մնացած օգտակար հանածոներով մարզն

առանձնապես հարուստ չէ: Մարզում չկան բնական անտառապատ տարածքներ: Այստեղ է գտնվում ՀՀ-ում միակ «Որդան կարմիր» արգելավայրը (Արազափ և Զրառատ գյուղերի վարչական տարածքում):

Արմավիրն աղքատ է բնածին ռեկրացիոն-զբոսաշրջային ռեստորաններով: **Սակայն այստեղ է գտնվում Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը:** Վերջինս նպաստում է մարզում հոգևոր-մշակութային զբոսաշրջության զարգացմանը: Պակաս նշանակություն չունեն նաև «Զվարթնոց» տաճարը, Սարդարապատի ազգագրական թանգարանը, «Սուսակե» և «Սարդարապատ» հուշահամալիրները, Մեծամորի և Զվարթնոցի հնագիտական թանգարանները, Սուրբ Հոհիսիմե, Սուրբ Գայանե և Սուրբ Շողակաթ եկեղեցիները: **Տարածքի բնակեցումը, բնակչությունը և բնակավայրերը:**

Արմավիրի մարզի տարածքը Հայաստան աշխարհում պետականության ձևավորման օրրաններից է: Այստեղ են գտնվել հայոց առաջին մայրաքաղաք Արմավիրը և Երվանդունիների թագավորության վերջին մայրաքաղաքը՝ Երվանդաշատը, որոնք դարեր շարունակ եղել են պետական և մշակութային խոշոր կենտրոններ: Մեծամորի բլրի լանջին հայտնաբերված հինգհազարամյա մետաղաձուլարանը, ուրարտական քաղաք Արգիշտիխինիի ավերակները, Զվարթնոց տաճարի ավերակները, Վաղարշապատի վանական համալիրները և բազմաթիվ այլ պատմական հուշարձաններ վկայում են մարզի տարածքի հազարամյակներ առաջ բնակեցման մասին: Այդուհանդերձ, պատմական ճակատագրի բերումով Արմավիրում ևս ժամանակակից բնակավայրերի ցանցի հենքը ձևավորվել է Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո: 1831 թ. մարզի տարածքում կար 52 գյուղական բնակավայր, որոնք միասին ունեին 14517 բնակչությունը, Արմավիրը՝ 22 (5140 բնակչություն), Բաղրամյանը՝ ընդամենը

Յ բնակավայր (692 բնակչով): Էջմիածնի տարածաշրջանն այդ ժամանակ (1831թ.) բնակչության թվաքանակով ՀՀ ժամանակակից տարածաշրջանների մեջ զիջում էր միայն Ախուրյանին ու Մասիսին: Բնակչության քանակով առավել խոշոր գյուղերից էին Էջմիածինը (2175 մարդ), Հոկտեմբերը (1487 մարդ), Չոբանքարան (951 մարդ), Ներքին Խաթունարինը (870 մարդ), Ջրառատը (885 մարդ), Արշալույսը (419 մարդ), Նալբանդյանը (630 մարդ), Ալաշկերտը (413 մարդ) և այլն:

1831-1897 թթ. Արմավիրի բնակչությունն ավելացել է ավելի քան 3.6, գյուղական բնակավայրերի քանակը՝ 1.6 անգամ (52-ից դարձել է 81): 1897-1926 թթ. իրադարձությունների պատճառով մարզում ընդհանուր բնակչության թվաքանակը մնացել է գրեթե նույնը: Խորհրդային տարիներին մարզի ինչպես ընդհանուր, այնպես էլ գյուղական բնակչությունն ունեցել է կայուն աճ:

1926 թ. համեմատությամբ 1988 թ. մարզի բնակչության ընդհանուր թիվն ավելացել է ավելի քան 4.8, իսկ գյուղական բնակչության թիվը՝ 3.4 անգամ:

1926-1988 թթ. մարզում քաղաքային բնակչությունն ավելացել է ավելի քան 12.5 անգամ, 1988-2020 թթ.՝ նվազել 1.3 անգամ: Իր նշանակությամբ բացարիկ դեր ունի **Վաղարշապատ** քաղաքը, որը համայն հայության հոգևոր-մշակութային զինավոր կենտրոնն է: Վաղարշապատի տեղում հնում եղել է Վարդգեսավան քաղաքը, որը Ք.ա. 140 թ. կոչվել է Վաղարշապատ: Այն III-IV դարերում եղել է Հայաստանի մայրաքաղաքը: 1924 թ. հաստատվել է որպես շրջանային ենթակայության քաղաք:



Քարտեզ 26. Արմավիրի մարզը

Երկրորդ անգամ քաղաք է հաստատվել 1938 թ.: Վաղարշապատը բնակչության թվով ՀՀ 4-րդ քաղաքն է: Քաղաքի տնտեսության հիմքն են կազմում սննդի արդյունաբերությունը, սպասարկման ոլորտը և զբուսաշրջությունը: Մարզկենտրոն Արմավիրը քաղաքային բնակավայր է դարձել 1947 թ.: Այն թեև կորցրել է նախկին արդյունաբերական ներուժի զգալի մասը, սակայն առաջիկա տարիներին իրականացվող ծրագրերի շնորհիվ աստիճանաբար կվերականգնի իր երթևմնի արդյունաբերական ներուժի զգալի մասը: Բացի վարչական գործառույթից՝ մարզի զյուղերի համար համարվում է տարատեսակ ծառայությունների սպասարկման կենտրոն: **Արմավիրով են անցնում Երևան-Գյումրի երկարգիծը և Երևան-Արմավիր-Արագածավան-Գյումրի ավտոճանապարհը:**

ՀՀ-ում բացառիկ դեր ունի նաև ՀԱԷԿ-ի բանավան Մեծամոր քաղաքը, որը ձևավորվել և զարգացել է ատոմակայանի շինարարությանը զուգընթաց: Եթե ՀՀ մնացած մարզերում մինչև 1970-ական թվականները տեղի է ունեցել զյուղական բնակավայրերի թվաքանակի նվազում, ապա Արմավիրում զյուղերի թվաքանակն ավելացել է: Արմավիրում խորհրդային տարիներին ստեղծվել են

առավել մեծ թվով գյուղական տիպի նոր բնակավայրեր, քան որևէ այլ մարզում: Միայն 1980-ական թթ. այստեղ ստեղծվել է 7 նոր գյուղ նորաստեղծ Բաղրամյանի տարածաշրջանում:

Արմավիրը բացառիկ է նաև մեկ այլ ցուցանիշով: Այստեղ անկախացումից հետո դիտվել է գյուղական բնակչության թվաքանակի կայուն աճ (բացառությամբ վերջին տարիների):

2020 թ. Արմավիրի մարզի բնակչության մոտ 69 %-ը ապրում էր գյուղական բնակավայրերում: Մարզի գյուղական բնակչության գրեթե 48 %-ը բաժին էր ընկնում միայն Էջմիածնի տարածաշրջանին, որն այս ցուցանիշով ՀՀ նախկին վարչական շրջանների մեջ առաջինն է:

Մարզում գերակշռում են բնակչության թվով մեծ (1001-3000 մարդ) գյուղերը (գյուղերի ընդհանուր թվի 65 %-ը), որոնց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության 55.4 %-ը: **Խոշոր ու գերխոշը գյուղերում է ապրում Արմավիրի գյուղական բնակչության 42 %-ը:**

Արմավիրի գյուղական բնակչության գրեթե 96 %-ը տեղաբաշխված է ծովի մակարդակից 801-1000 մ, 3.7 %-ը՝ 1001-1200 մ և ընդամենը 0.3 %-ը՝ 1201-1400 մ բարձրության գոտիներում: Անցած տասնամյակների ընթացքում Արմավիրում տեղի է ունեցել գյուղական բնակավայրերի խոշորացման գործընթաց: Մարզին բնորոշ է **մեծ, խոշոր և գերխոշը գյուղային տարաբնակեցումը:** Վերջին երկու տասնամյակում (2001-2020 թթ.) մարզի բնակչության թիվը նվազել է մոտ 4.5 %-ով, քաղաքային բնակչությունը՝ ավելի քան 23 %-ով:

Տնտեսությունը: Արմավիրը ՀՀ տնտեսապես առավել զարգացած մարզերից մեկը: Այն առանձնանում է զարգացած գյուղատնտեսությամբ ու արդյունաբերությամբ: Արմավիրը 2019 թ. տվել է ՀՀ ԱՀԱ 5,2 %-ը, ԳՀԱ-ի՝ 20,9 %-ը: Մարզում 2019 թ. իրականացվել է ՀՀ-ում կատարվող շինարարական աշխատանքների

8.2 %-ը: Արմավիրին բաժին են ընկնում ՀՀ մանրածախ առևտրի 3.5 %-ը և ծառայությունների՝ 1.6 %-ը: 2015-2019 թթ. մարզի արտադրական համալիրում մեծացել է գյուղատնտեսության մասնաբաժինը: Եթե 2015 թ. մարզը տալիս էր ՀՀ ԳՀԱ-ի 18.9 %-ը, ապա՝ 2019 թ.՝ 20.9 %-ը:

Աղյուսակ 63

*Արմավիրի մարզի բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացը
(1831-2020 թթ.) [8, 12, 14, 15, 16, 26, 29, 40]*

Մշտեղում	Բնակա-վայրերի թիվը		Բնակչության թիվը			-առողջ դուրսնականություն	-մայր դվնդվյան վեցլուսմբ	
	-տառկանի	ԱՎ	ԱՎ	-տառկանի	ԱՎ			
1831	-	52	14517	-	14517	11,7	11,7	279
1897	-	81	53046	-	53046	42.7	42.7	655
1926	1	82	53558	8436	45122	43.1	36.3	550
1959	2	89	119187	34631	84556	96.0	68.0	950
1970	3	84	180743	57700	123043	145.5	99.0	1465
1979	3	86	220274	83706	136568	177.4	110.0	1588
1988	3	91	258961	107438	151523	208.5	122.0	1665
2001	3	95	276233	98292	177941	222.4	143.3	1873
2011	3	95	265770	85050	180720	214.0	145.5	1902
2015	3	95	267002	84995	182007	215.0	146.5	1916
2020	3	95	263900	82500	181400	212.5	146.0	1909

Մարզի ՀՆԱ-ի կառուցվածքում գյուղատնտեսությունն ավելի քան 2 անգամ գերազանցում է արդյունաբերությանը:

Արմավիրի արդյունաբերությունը մասնագիտացված է կեկտրականերգետիկայի, սննդի արդյունաբերության և շինանյու-

թերի հանքավայրերի շահագործման ուղղություններով: Խորհրդային տարիներին մարզի Վաղարշապատ ու Արմավիր քաղաքներում գործում էին կահույքի, պլաստմասաների, հաստոցաշինական, շինանյութերի և այլ ճյուղերի գործարաններ, սակայն դրանց մի մասը ներկայումս չի գործում:

Մարզի **արդյունաբերական** արտադրանքն ըստ արտադրության բաժինների ունի հետևյալ պատկերը՝ հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում՝ 0.6 %, մշակող արդյունաբերություն՝ 69.8 %, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում՝ 28.9 %, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում՝ 0.7 %. Մարզի վերամշակող արդյունաբերությունը զարգանում է տեղական գյուղատնտեսական հոմաքի հիման վրա ձևավորված սննդի արդյունաբերությամբ: Հիմնական ձեռնարկությունները տեղաբաշխված են ոչ միայն Արմավիր ու Վաղարշապատ քաղաքներում, այլ նաև մարզի մի շարք գյուղերում: Վերջին տասնամյակում Բաղրամյանի տարածաշրջանում հիմնված խաղողի նոր այգիների բազայի հիման վրա ձևավորվել է կոնյակի ու գինու նոր գործարան արգենտինահայ գործարաք է. Էռնելյանի ներդրումների շնորհիվ: Բաղրամյանի տարածաշրջանի Լեռնազոգ բնակավայրում գործում են ալրադաց կոմբինատ և համակցված կերերի գործարան: Սննդի արդյունաբերության խոշոր ձեռնարկություններից են «ՍԱՊ» ընկերությունը, Վանանդի «Նոյան» պտուղ-բանջարեղենի վերամշակման գործարանը, «Արաք» թոշնաֆաբրիկան, «Ֆիեռաս գե Արմենիա» (Հայաստանի հողեր) ընկերությունը: Հայտնի է նաև Շենիկի խոտայուրի ֆաբրիկան:

Ոչ միայն Արմավիրի, այլ նաև ՀՀ Էկոնոմիկայի համար առանձնահատուկ տեղ և դեր ունի Մեծամորի ատոմակայանը, որը միակն է Հարավկովկայան տարածաշրջանում: Մինչև ՀՀ-ում նոր ատոմակայանի կառուցումը Մեծամորի ատոմակայանի շա-

հազործման ժամկետը երկարացվել է մինչև 2026 թվականը համապատասխան տեխնիկական և տեխնոլոգիական վերազինման շնորհիվ: Մարզի Բաղրամյանի ու Արմավիրի տարածաշրջաններում գործում են շինանյութերի արդյունաբերության ձեռնարկություններ, որոնք զբաղվում են տուֆի և հրաբխային խարամի արդյունահանման ու երկաթքետոնե կոնստրուկցիաների արտադրությամբ:

Վերջին տարիներին աշխատանքներ են տարվում մարզի արդյունաբերության ձյուղային կառուցվածքի դիվերսիֆիկացման ուղղությամբ: Դա հնարավորություն կտա առավել լիարժեք և արդյունավետ օգտագործելու մարզի արդյունաբերական ներուժի առկա նախադրյալները և աշխատանքային ռեսուրսները: Մարզում ստեղծվել է այլընտրանքային արեգակնային էլեկտրակայան:

Գյուղատնտեսությունը: ԳՀԱ-ի մասնաբաժնով Արմավիրի մարզը 2015-2019 թթ. եղել է առաջնոր ՀՀ-ում (մինչև այդ առաջինը Գեղարքունիքն էր): Մարզում գյուղատնտեսական նշանակության հողատարածքները կազմում են ավելի քան 97 հազ. հա (41.2-ը՝ վարելահողեր), որը կազմում է մարզի ընդհանուր տարածքի ավելի քան 78 %-ը: **Վարելահողերի մասնաբաժինը գյուղատնտեսական հողատարածքներում** 42.4 % է, բազմամյա տնկարկներինը՝ 7 %: Այս ցուցանիշով Արմավիրը ՀՀ-ում առաջնորդից է: Գյուղատնտեսական նշանակության հողերի մոտ 6 %-ը կազմում են խաղողի այգիները, 22 %-ը՝ արոտավայրերը, 0.3 %-ը՝ խոտհարքները, 22.5-ը՝ այլ հողատեսքեր: Արմավիրի գյուղատնտեսության կառուցվածքում բուսաբուծությունն արտադրանքի ծավալով ավելի քան 2.5 անգամ գերազանցում է անասնաբուծությանը: **Երկրագործական զարգացած ուղղություններ** են պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբուծությունը և բուսանայինների աճեցումը, որոնք ամբողջ-

վին հիմնված են արհեստական ոռոգման վրա: Մարզում զյուղատնտեսությունը զարգանում է նաև մերձքաղաքային մասնագիտացմամբ:

Թեև վերջին տարիներին մարզում նվազել են բանջարաբուտանային մշակաբույսերի ցանքատարածքները, սակայն դրանց մակերեսով (8.9 հազ. հա) ՀՀ-ում Արմավիրը առաջինն է: Այստեղ է գտնվում ՀՀ բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածքների ավելի քան 41 %-ը: Մարզում արտադրվում է բանջարանոցային մշակաբույսերի ՀՀ համախառն բերքի ավելի քան 45-50 %-ը: Դրանց ցանքատարածքներն առավելապես գտնվում են Արմավիրի ու Էջմիածնի տարածաշրջաններում:

Արմավիրին բաժին է ընկնում ՀՀ-ում մշակվող բոստանային մշակաբույսերի (ձմեռուկ, սեխ և այլն) ցանքատարածքների ավելի քան 66 %-ը: Դրանք առավել մեծ մակերես են զբաղեցնում Բաղրամյանի ու Էջմիածնի տարածաշրջաններում: Արմավիրի մարզում արտադրվում է բոստանային մշակաբույսերի ՀՀ համախառն բերքի 60 %-ը: Արմավիրն առաջինն է ՀՀ-ում նաև պտղի ու հատապտղի տնկարկների տարածքներով (ՀՀ 22 %-ը), իսկ դրանց համախառն արտադրանքով գրեթե հավասար է Արարատի մարզին:

Արմավիրը ՀՀ հիմնական խաղողագործական շրջանն է: Մարզին բաժին է ընկնում ՀՀ խաղողի այգիների ավելի քան 43 %-ը (6.9 հազ. հա): Այստեղ արտադրվում է ՀՀ խաղողի ընդհանուր բերքի 45-48 %-ը: Խաղողի տնկիների առավել մեծ մակերեսներով առանձնանում են Արմավիրի ու Էջմիածնի տարածաշրջանները: Երիտասարդ այգիներ են հիմնվել Բաղրամյանի տարածաշրջանում:

Արմավիրի երկրագործության մեջ պակաս նշանակություն չունեն նաև հացահատիկային և հատիկաբնդեղենային մշակաբույսերը: Այստեղ տարեկան արտադրվում է այդպիսի պարենա-

մթերքի ՀՀ համախառն արտադրանքի 4.5-5.5 %-ը: Մարզում վերջին տարիներին նկատվում են դրանց ցանքատարածքների կրծատում ու առավել եկամտաբեր մշակաբույսերի ցանքատարածքների ավելացում: Վաղահաս կարտոֆիլի ցանքատարածքները մարզում տատանվում են 1.3-1.4 հազ. հա-ի, համախառն բերքը՝ 45-55 հազ. տ-ի սահմաններում:

Խորհրդային տարիներին մարզի շուրջ 10 գյուղերում մշակում էին խորդենի: Վերջինիս վերականգնումը տնտեսապես հիմնավոր էր և նպատակահարմար:

Արմավիրում անասնաբուծության զարգացման հնարավորությունները սահմանափակ են. քիչ են արոտավայրերը և խոտհարքները: Սակայն այն որոշակի դեր ունի մարզի գյուղատնտեսության կառուցվածքում և տալիս մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքի 25-29 %-ը, ՀՀ անասնապահական արտադրանքի՝ 9-10 %-ը: **ԽԵԿ-ի գլխաքանակով մարզն ունի միջին տեղ ՀՀ-ում (2019 թ.՝ 51 հազ. գլուխ), իսկ ՄԵԱ-ի գլխաքանակով առաջինն է ՀՀ-ում:** Մարզին բաժին է ընկնում ՄԵԱ-ի գլխաքանակի ավելի քան 15.7 %-ը (2019 թ.): Արմավիրն առաջինն է ՀՀ-ում նաև խողերի գլխաքանակով (25.2 հազ.): Մարզին բաժին է ընկնում դրանց գլխաքանակի 14 %-ը: ՄԵԱ-ի և խողաբուծության զարգացմամբ առավել հայտնի է Բաղրամյանի տարածարքանը (նախկին համալիրն ուներ 54 հազ. գլուխ խող): Արմավիրը ՀՀ-ում հայտնի է նաև զարգացած թռչնաբուծությամբ: Մարզում արտադրվում է ՀՀ թռչնի ձվի 18 %-ը: Մարզը ՀՀ-ում հայտնի է նաև բրդի արտադրությամբ (ՀՀ 17.5 %-ը):

Մարզի գյուղերն ունեն այգեպտղաբանչարաբուծական արտադրական մասնագիտացման ուղղություն, որը, ըստ տարածաշրջանների, ունի հետևյալ պատկերը՝ **Արմավիրի տարածաշրջան՝ խաղողագործություն, պտղաբուծություն և բանջարաբուծություն, Էջմիածնի տարածաշրջան՝ բանջարաբուծություն և**

խաղողագործություն, Բաղրամյանի տարածաշրջան՝ բուտանայինների (առավելապես՝ ձմերուկ և սեխ) մշակություն, խաղողագործություն ու պտղաբուծություն: Մարզի գրեթե բոլոր գյուղերում երկրագործության վերը նշված ձյուղերը գուգակցվում են կաթնային տավարաբուծության, առանձին գյուղերում՝ ոչխարաբուծության հետ:

Բնակչության թվաքանակի և տնտեսական զարգացման մակարդակին համապատասխան՝ մարզի մասնաբաժինը շինարարության, ծառայությունների ու մանրածախ առևտրի ոլորտներում ՀՀ միջին ցուցանիշների համեմատ բավական ցածր է, ինչը բացատրվում է մայրաքաղաքի մոտիկությամբ և վերջինիս՝ շրջակա մարզերի վրա ազդեցությամբ: Մարզում ծառայությունների ծավալը մեկ շնչի հաշվով մոտ 5, իսկ մանրածախ առևտրինը՝ 4.5 անգամ փոքր են ՀՀ միջին ցուցանիշներից: Մարզում գործում են մանրածախ առևտրի ավելի քան 758 օբյեկտ, պետական նախադպրոցական 105, պետական հանրակրթական 118, ոչ պետական հանրակրթական 2, մշակութային 21, միջին մասնագիտական՝ 5 հաստատություն, 11 մշակույթի պալատ, 5 թանգարան, 2 մարզադաշտ, տուն-թագարան և պատկերասրահ:

Մարզի զարգացման ժամանակակից հիմնախնդիրների շարքում առաջնային են համարվում.

1) արտահանման նշանակություն ունեցող գյուղատնտեսության ձյուղերի ինտենսիվացումը և արտահանման ծավալների ավելացումը,

2) սննդարդյունաբերության արտահանման ծավալների մեծացումը,

3) արդյունաբերության դիվերսիֆիկացումը՝ նոր ձյուղերի ձևավորումը և զարգացումը,

4) ագրոկլիմայական ներուժի առավել արդյունավետ օգտագործումը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Կատարե՛ք Արմավիրի մարզի ՏՍԴ-ի վելուծություն և գնահատում:
2. Բնութագրե՛ք Արմավիրի բնառեսուրսային ներուժը:
3. Բնառեսուրսային ներուժի օգտագործման ի՞նչ հիմնախնդիրներ կան Արմավիրի մարզում:
4. Կատարե՛ք Արմավիրի մարզի բնակեցման պատմաաշխարհագրական վերլուծություն: Բնութագրե՛ք մարզի քաղաքային բնակավայրերը:
5. Ի՞նչ գործոններ են նպաստել Արմավիրում խորհրդային տարիներին նոր բնակավայրերի առաջացմանը: Առանձնացրե՛ք մարզի խոշոր, գերխոշոր և հայտնի զյուղերը:
6. Վերլուծե՛ք Արմավիրի տնտեսության ճյուղային կառուցվածքը և տեղաբաշխումը:
7. Մատնանշե՛ք Արմավիրի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ժամանակակից հիմնախնդիրները:

5.5. Շիրակի մարզը

Տնտեսության զարգացման նախադրյալները: Շիրակի մարզը կազմավորվել է Ախուրյանի, Ամասիայի, Անիի, Արթիկի և Աշոցքի նախկին վարչական շրջանների միավորումից: Զբաղեցնում է 2680 կմ² տարածք (ՀՀ տարածքի 9 %-ը): Մարզը հիմնականում համապատասխանում է Շիրակի սոցիալ-տնտեսական շրջանին: Շիրակն ընդգրկում է գերազանցապես Ախուրյանի ավազանի ձախափնյակը՝ միջին հոսանքի սահմաններում, վերին հոսանքում՝ նաև նրա աջափնյա մի հատվածը: 2020 թ. այստեղ ապրում էր ՀՀ 7.8, քաղաքային 7.2, գյուղական բնակչության 8.9 %-ը: Շիրակում է գտնվում ՀՀ մշտական բնակչություն ունեցող գյուղերի 13.6 %-ը: Երկրորդն է ՀՀ-ում գյուղական բնակավայրերի թվաքանակով (127 գյուղ):

Շիրակի տնտեսության զարգացման ու տարածքային կազմակերպման համար առաջնային նշանակություն ունի **տարածքի ընդհանուր բարձրադիր դիրքը**: Մարզում ծովի մակարդակից 1500 մ-ից բարձր գոտում է ընկած տարածքի 88.4, իսկ 1500-2500 մ բարձրության գոտում՝ 75.4 %-ը: Բնակեցման ու տնտեսական գործունեության համար առավել բարենպաստ պայմաններ ունի Շիրակի տարածքի 50 %-ը:

Շիրակում շատ ավելի բարենպաստ են տափարակ և մեղմաթեք հարթությունները (մինչև 3°), ինչպես նաև մեղմաթեք լանջերը (3-8°), որոնք զբաղեցնում են տարածքի 80 %-ը: Չնայած դրանց որոշ մասն ընկած է 2200 մ-ից բարձր շրջաններում, այդուհանդերձ մակերևույթի թեքությունները Շիրակում տնտեսության զարգացման խոշընդոտող գործոն չեն: Մարզին բնորոշ է համեմատաբար հարթ և սակավ մասնատված տարածքների գերակշռությունը: Հյուսիսում ընկած է **Աշոցքի բարձրադիր սարահարթը**, հարավում՝ համեմատաբար ցածրադիր, հարթ և թույլ մաս-

նատված **Շիրակի սարահարթը**: Մեծ մասնատվածություն ունեցող և զառիթափ լանջերով ընդարձակ տարածքներն ընկած են մարզը եզրավորող լեռնալանջերում: Հյուսիս-արևմուտքից Եղ-նախաղի, հյուսիս-արևելքից Զավախիքի հրաբխային լեռնավահաններով եզրավորվում է **Աշոցքի բարձրադիր սարահարթը**:

Սարգի կլիման բարեխատն է, աչքի է ընկնում ցամաքայնությամբ և ըստ բարձրության՝ դառնում է խիստ: Բնակեցման համար աննպաստ են մարզի հյուսիսային և հյուսիսարևմտյան հատվածի՝ Աշոցքի սարահարթի կլիմայական պայմանները: Վերջինս առանձնանում է կարճատև, զով ամառներով և երկարատև ու ցուրտ ձմեռներով, որն իր անմիջական ազդեցությունն է թողնում տարածքի յուրացման վրա: Այստեղ է գտնվում ոչ միայն ՀՀ, այլ նաև Հայկական լեռնաշխարհի «ցրտի բնեոր»: **Պաղակնում գրանցվել է մեր լեռնաշխարհի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝ -42°C** : Մարզի հարավում ամառը տաք է ու չոր ($+22^{\circ}$), հյուսիսում՝ զով՝ $+15^{\circ}$: Շիրակը ՀՀ առավել ձնառատ շրջաններից է: Աշոցքի սարահարթում հունվարյան միջին ջերմաստիճանը -10°C է, հարավում՝ -5°C : Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը հարավում 550-600 մմ է, հյուսիսում՝ 700 մմ: **Շիրակի մարզի Արագածի մերձգագաթային շրջանները համարվում են ՀՀ ամենախոնավ շրջաններից, որտեղ տարեկան թափվում են 900-1100 մմ տեղումները:** Նույնքան տեղումներ թափվում են նաև Զավախիքի լեռների բարձրադիր հատվածներում:

Շիրակի ջրագրական ցանցի հիմնական միավորը **Ախուրյան գետն** է, որը սկիզբ է առնում Արփի լիճ-ջրամբարից: Գետի ակունքի շրջանում ամբարտակի կառուցման պատճառով լիճը վերածվել է ջրամբարի, և մակերեսը մեծացել է ավելի քան 7 անգամ՝ կազմելով մոտ 22 կմ²: Ախուրյանի վտակներից Մանթաշը, Գյումրիգետը և Զաջուողգետը ամռանը գրեթե ցամաքում են: **Խորհրդային տարիներին Թուրքիայի հետ միասին Ախուրյանի**

Վրա կառուցվել է ջրամբար, որն ունի 525 մ³ ծավալ և առաջմն խոշորագույնն է ՀՀ-ում: Այսուրյանի միջին հոսանքի շրջանից սկսվում և Գյումրին արևելքից շրջանցելով՝ անցնում է Շիրակի ջրանցքը:

Շիրակն առավել հարուստ է հրաբխածին շինանյութերի (տուֆի, պեմզայի, բազալտի, հրաբխային խարամի) և կրաքարի պաշարներով: Միայն Արթիկի տարածաշրջանում կան երկուսուկես տասնյակ տուֆի հանքավայրեր, Զաջուռում՝ կրաքարեր և տեղական նշանակության ածիսի, Անիպեմզայում ու Պեմզաշենում՝ պեմզայի պաշարներ և այլն:

Շիրակի համար բացառիկ կարևորություն ունեն բերրի սևա-հողերը, որոնք ՀՀ-ում հացահատիկի մշակության հիմնական տարածքներից են: Նշանակալի տեղ ունեն ալպյան և մերձալ-պյան մարգագետինները, որոնք բազա են անասնապահության գարգացման համար: Մարգում բնական անտառային տարածքները բացակայում են:

Շիրակի տարածքն աչքի է ընկնում գրոսաշրջային-ռեկրեա-ցիոն ռեսուրսներով: Այդպիսիք են նախևառաջ Վահրամարերի ուրարտական ամրոցը, Մարմաշենի և Հառիճի վանքերը, Երե-րույքի եկեղեցին: Զրոսաշրջային գրավչությամբ աչքի է ընկնում Գյումրի քաղաքը՝ իր ճարտարապետական կառույցներով, եկե-ղեցիներով, թանգարաններով, արհեստագործության և արվեստի ոլորտի օբյեկտներով (Գյումրի արգելոց-թանգարանը): Բացառիկ դեր ունեն Շիրակի բնածին ռեկրեացիոն ռեսուրսները՝ մաքուր օդը, գեղատեսիլ վայրերը, լեռնատափաստանային լանդշաֆտները, կազդուրիչ կլիման, ձմեռային սպորտաձևերի և հանգստի կազմակերպման բացառիկ հնարավորությունները և այլն («Ար-փի լիճ-ջրամբար» ազգային պարկը):

Մարգում գերակշռող լեռնատափաստանային ու ալպյան բնական լանդշաֆտներն են՝ լեռնային սևահողերի և լեռնամար-

գագետնային հողածածկով:

Չնայած եզրային դիրքին՝ Շիրակի ՏԱԴ-ը կարելի է համարել նպաստավոր: Մարզն ունի կարևոր տարանցիկ նշանակություն ՀՀ տրանսպորտային ցանցում և հանգուցային դեր է կատարում: Այստեղով են անցնում Հայաստանը Վրաստանին կապող զիսավոր երկարությին և ավտոճանապարհներից մեկը: Հաղորդակցության նշված ուղիները վերջին ավելի քան 120 տարվա ընթացքում իրենց դրական դերն են ունեցել Շիրակ աշխարհի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Մայրուղիների երկայնքով և դրանց ազդեցույթյան շրջաններում ձևավորվել են բնակավայրեր, յուրացվել են հազարավոր հեկտար հողատարածքներ: Վրաստանի հետ պետական սահմանը և սահմանամերձ գոտում նորմալ տնտեսական գործունեությունը սահմանամերձ առևտուրի և տարանցիկ փոխադրումների շնորհիվ սահմանային այդ հատվածում գտնվող մի շարք բնակավայրերի համար ներկայումս ևս զարգացման բարենպաստ նախադրյաներ կարող են համարվել:

Տարածքի բնակեցումը, բնակչությունը և բնակավայրերը: Շիրակի բնակեցման համար կարևոր դեր է խաղացել պատմական գործոններ: Այն ՀՀ հնագույն հայաբնակ տարածքներից է: Շիրակի ներկայիս տարածքը կազմում է պատմական Շիրակ գավառի արևելյան մասը: Նրա ներկայիս բնակչության նախնիներն այստեղ հաստատվել են XIXդարի առաջին տասնամյակներից, երբ Շիրակը մտավ Ռուսական կայսրության կազմի մեջ: Ներզադարձների թվում գերակշռում էին Կարսից, Կարինից, Բիթլիսից, Սուշից, Վանից, Դիարբեքիրից, Բասենից և Սասունից տեղափոխված հայ ընտանիքները: Կարճ ժամանակամիջոցում նոր բնակեցված տարածքը շենացավ: 1837 թ. հնագույն Կումայրի գյուղից արևմուտք՝ Ախուրյանի ձախափնյակում, հիմնադրվեց նոր քերդաքաղաք և կոչվեց Ալեքսանդրապոլ, որը դարձավ ոռուսական զորանիստ-կենտրոն:

1831 թ. Շիրակի մարզում կար 73 գյուղական բնակավայր, որոնց բնակչության թիվը կազմում էր 19743 մարդ: Գերակշռում էին մանր և միջին մեծության գյուղական բնակավայրերը: Հազարից ավելի բնակչություն ուներ ընդամենը երկու բնակավայր՝ **Կումայրին (Գյումրին)՝ 3444 և **Ազատանը**՝ 1450 բնակիչ: Բնակչության միջին խտությունը կազմում էր 7.5 մարդ/քկմ: Խիս էին բնակեցված ներկայիս Ախուրյանի և Արթիկի տարածաշրջանները:**

Շիրակի բնակչության թիվը 1831թ. համեմատությամբ 1897 թ. ավելացել է ավելի քան 4 անգամ, իսկ բնակավայրերի թվաքանակը՝ կրկնապատկվել: Այդ ընթացքում գյուղական բնակչության թիվն ավելացել է մոտ 4.7 անգամ: Բնակչության և բնակավայրերի թվաքանակի նման աճը պայմանավորված էր ինչպես բնական շարժով, այնպես էլ շարունակվող ներգաղթով:

Շիրակի մարզում խորհրդային տարիներին տեղի է ունեցել բնակչության թվաքանակի համեմատաբար կայուն աճ: Այն 1926-1979 թթ. ավելացել է մոտ 2.5 անգամ: Հետագա 10 տարիների ընթացքում ևս տեղի է ունեցել բնակչության թվաքանակի ավելացում: 1988 թ. երկրաշարժը զգալի ազդեցություն թողեց մարզի բնակչության թվի հետագա շարժնթացի վրա:

1989-2001 թթ. մարզում մշտական բնակչության թիվը նվազել է ավելի քան 36 հազարով, 2001-2020 թթ.՝ գրեթե 52.2 հազարով: Խորհրդային տարիներին Շիրակում առավել արագ տեմպերով աճել է քաղաքային բնակչությունը: Մարզի ներկայիս տարածքում 1897 թ. գյուղական բնակչության թվաքանակը 3.1 անգամ գերազանցում էր քաղաքային բնակչությանը, իսկ 1926 թ.՝ 2.2 անգամ: Շիրակը XIX դարի վերջերին ՀՀ առավել ուրբանացված տարածքն էր: **Դեռևս 1897 թ. Գյումրին բնակչության թվով (30616) գերազանցում էր Երևանին:** 1926-1989 թթ. մարզում քաղաքային բնակչության թիվն ավելացել է ավելի քան 5 անգամ: **Երկրաշար-**

Ժիշ առաջ Գյումրու բնակչության թիվն անցնում էր 230 հազարից: Երկրաշարժի պատճառած նյութական հսկայական վնասը և ԽՍՀՄ վերացումից հետո տնտեսական ներուժի մեծ մասի կորուստը պատճառ դարձան մարզի, մասնավորապես Գյումրու քաղաքային բնակչության թվաքանակի կտրուկ նվազման:

1988-2020 թթ. ընթացքում Գյումրու բնակչության թիվը նվազել է գրեթե 130 հազարով: 1989 թ. համեմատ մարզում ուրանագման մակարդակը նվազել է ավելի քան 8 տոկոսային կետով:

Աղյուսակ 64

Ծիրակի մարզի բնակչության և բնակավայրերի թվի շարժընթացք
(1831-2020 թթ.) [8, 12, 14, 15, 16, 26, 29, 40]

Տարբերակ	Բնակչավայրերի թիվը		Բնակչության թիվը			Բնակչության դաշտական խոսք	Գլուխացման դաշտական խոսք	Ամսագույն գլուխացման դաշտական խոսք
	զյուղ	քաղաք	ընդամենը	քաղաքային	զյուղական			
1831	73	-	19743	-	19743	7.5	7.5	270
1897	147	1	125475	30616	94859	47.0	36.0	645
1926	148	1	135130	42313	92817	50.4	35.0	627
1959	139	4	214294	122235	92059	80.0	35.0	662
1970	128	5	286241	184932	101309	207.0	39.0	791
1979	128	5	332606	229650	102956	124.0	39.0	8
1989	122	5	319643	213415	106228	119.0	41.0	870
2001	128	3	283389	182460	100929	106,0	38,0	788
2011	128	3	282300	169500	112800	105,0	42,0	881
2015	128 ²	3	246400	143500	102900	99.0	41.0	829
2020	127	3	231200	135400	95800	86.2	36.0	780

Գյումրին մարզի տարածքում գրաղեցնում է կետրոնական դիրք և դարձել է ոչ միայն մարզի վարչական, այլ նաև տնտեսական, մշակութային ու տրանսպորտային խոշոր կենտրոնը: Մինչ 1991 թվականը քաղաքի հայտնի արդյունաբերական ձեռնարկություններից էին տեքստիլ կոմբինատը, բամբակամանվածքային ֆաբրիկան, կեկտրաչարժիշների և քարհատ հաստոցների գործարանները, մսի կոմբինատը և այլն: Գյումրիի արդյունաբերական բազայի վրա խորհրդային տարիներին ձևավորվեց և զարգացավ Գյումրիի արդյունաբերական հանգույցը, որն ընդգրկում էր նաև Արթիկ, Մարալիկ Պեմզաշեն, Անփակեմզա քաղաքները և կից շրջանների գյուղերը: **Արդեն 30 տարի է, ինչ Գյումրիի արդյունաբերական ձեռնարկությունների մեծ մասը չի աշխատում:** Աշխատանքներ են տարվում քաղաքի արտադրական ներուժի վերականգման և առկա սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղղությամբ: Գյումրիում գործում են մի քանի բուհեր, բազմաթիվ մշակութային օջախներ: Այն նաև հայտնի տրանսպորտային հանգույց է, ՀՀ մշակութային մայրաքաղաքը և **հոչակվել է ԱՊՀ մշակութային մայրաքաղաքներից մեկը:** Շիրակի մարզի մյուս երկու քաղաքներից առավել մեծը և տնտեսական առումով հայտնին **Արթիկն է:**

Շիրակին առանձնանում է բնակչության անհավասարաչափ տեղաբաշխմամբ: Չնայած մարզը բնակչության խտությամբ (86 մարդ/կմ²) մոտ է ՀՀ միջին ցուցանիշին, սակայն դա չի արտահայտում մարզի տարածքի իրական բնակեցվածության ու տարածքային ռեսուրսների օգտագործման աստիճանը: **Գյումրին իր շրջակա բնակավայրերի հետ միասին գրաղեցնում է մարզի տարածքի մոտ 23 %-ը, սակայն այստեղ կենտրոնացված է Շիրակի բնակչության ավելի քան 65 %-ը:** Այստեղ բնակչության խտությունը կազմում է 300 մարդ/կմ², իսկ առանց Գյումրիի՝ 75 մարդ/կմ²: Եթե մինչև 1980-ական թվականները Շիրակին, ըստ գերակշռող մարդաքանա-

կի, բնորոշ էր մեծ, միջին և փոքր գյուղային տարաբնակեցումը, ապա՝ ներկայումս՝ մեծ, միջին ու խոշոր գյուղային տարաբնակեցումը: Շիրակում վերջին շուրջ 100 տարվա ընթացքում տեղի է ունեցել բարձրադիր լեռնային գոտու բնակչության ու բնակավայրերի թվաքանակի նվազում և ցածրադիր գոտու բնակչության և՝ բացարձակ թվաքանակի, և՝ տեսակարար կշռի ավելացում: Այդ տարիներին մարզի ծովի մակարդակից 2000 մ-ից բարձր շրջաններում գյուղական բնակչության բացարձակ թիվը ոչ միայն չի ավելացել, այլև 2020 թ. համեմատությամբ նվազել է մոտ 1.8 անգամ, իսկ գյուղերի թիվը նվազել է 7-ով:

Մարզի գյուղական բնակչության մոտ 40 %-ը բաժին է ընկնում Ախուրյանի տարածաշրջանին, 72 %-ը՝ Ախուրյանի և Արքիկի տարածաշրջաններին:

Մարզի 43 %-ը գրադեցնող Ամասիայի ու Աշոցքի տարածաշրջաններում ապրում է գյուղական բնակչության ընդամենը 14 %-ը: Չնայած գյուղատնտեսական հողահանդակների մասնաբաժինը ՀՀ միջին ցուցանիշից բարձր է 1.3 անգամ, սակայն գյուղերի միջին մարդաշատությամբ (780 մարդ) Շիրակը մոտ 1.5 անգամ զիջում է ՀՀ միջին ցուցանիշին:

Շիրակի բնակչության գրեթե 70 %-ը տեղաբաշխված է մինչև 1600 մ բարձրության գոտում: Նոր է բնակեցված 1800-2200 մ բարձրության գոտին: Գյուղական բնակչության թվաքանակի նվազումն առավել բնորոշ է 1801-2000 մ բարձրության գոտուն: Այստեղ են գտնվում մարզի գյուղերի մոտ 50 %-ը, 2001-2200 մ բարձրության գոտում՝ ավելի քան 19 %-ը: Բարձրադիր այդ գոտում գյուղական բնակավայրերի միջին մարդաշատությունն ավելի քան 2,8 անգամ զիջում է մարզի միջին ցուցանիշին: Շարժընթացի նման միտումների պահպանումը կարող է հանգեցնել այդ գոտում տասնյակ գյուղերի աստիճանաբար բնազրկմանը և տարածքային ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործմանը:



Քարտեզ 27. Շիրակի մարզը

Տնտեսությունը: ԽՍՀՄ տարիներին Շիրակն իր տնտեսական ներուժով ՀՀ-ում գրավում էր երկրորդ տեղը՝ Արարատյան տնտեսական շրջանից հետո։ 1988 թ. ավերիչ երկրաշարժի և դրան հաջորդած ԽՍՀՄ փլուզման հետևանքով առաջացած

տնտեսական ճգնաժամը վերջին 30 տարում էապէս փոխել են մարզի տեղն ու դերը ՀՀ-ում: **2019 թ. ՀՀ-ում արդյունաբերության արտադրանքի ծավալով Շիրակը վեցերորդն էր մարզերի մեջ, զյուղատնտեսական արտադրանքով՝ չորրորդը:** Նախկին տնտեսական ներուժի այդպիսի կտրուկ անկումն իր անմիջական ազդեցությունն է թողել մարզի հասարակական կյանքի ու սոցիալ-տնտեսական զարգացման տարբեր կողմերի վրա:

ԽՍՀՄ փլուզումը կիսատ թողեց մարզի տնտեսության վերականգնման աշխատանքները, և մինչև այժմ էլ ՀՀ կառավարության առաջնահերթություններից մեկը Աղետի գոտում առկա խնդիրների լուծումն է:

Խորհրդային տարիներին մարզի արտադրական դեմքը բնորշում էին թերևն և սննդի արդյունաբերությունը, մերենաշինությունը: Այս ոլորտում համախառն արտադրանքի մոտ կեսը բաժին էր ընկնում տեքստիլ-տրիկոտաժեղենի և կոշկեղենի արտադրություններին: **ԽՍՀՄ-ում և ՀՀ-ում հայտնի ձեռնարկություններ էին Գյումրու տեքստիլ կոմբինատը և Մարալիկի բամբակամանվածքային ֆաբրիկան:** Գյումրիի մերենաշինական ձեռնարկությունները թողարկում էին տարբեր տեսակի հաստոցներ, էլեկտրատեխնիկական սարքեր ու գործիքներ, հեծանիվներ: **Խնապէս Գյումրին, այնպէս էլ մարզի մյուս երկու քաղաքները հիմնականում կորցրել են իրենց արտադրական ներուժի նախկին հզորությունները:** Բազմաթիվ գործարաններ չեն աշխատում:

Շիրակի տնտեսության հիմնական հատվածների բաժինը ՀՀ համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում բավական փոքր է: **Մարզին 2019 թ. բաժին էին ընկենում ՀՀ արդյունաբերության 3.3 %-ը, զյուղատնտեսության 10,4 %-ը, շինարարության 6.3 %-ը, մանրածախ առևտության 3.9 %-ը և ծառայությունների 1.6 %-ը:** 2014-2019 թթ. մարզի տեսակարար կշիռը ՀՀ արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում նվազել է 1.4 տոկո-

սային կետով:

Շիրակի արդյունաբերական ձեռնարկությունների թիվը անցնում է 80-ից, և դրանց մեծ մասը գտնվում է Գյումրիում: Արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ արտադրության բաժինների ունի հետևյալ պատկերը՝ հանքագործական արդյունաբերություն՝ 0.3 %, մշակող արդյունաբերություն՝ 89.6 %, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում՝ 8.3 %, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում ու վերամշակում՝ 1.8 %: Վերամշակող արդյունաբերության ճյուղերից մարզում առավել զարգացած է սննդամթերքի ու խմիչքների արտադրությունը: Դրանց բաժին են ընկնում մշակող արդյունաբերության համախառն արտադրանքի 91.5 %-ը և միայն սննդամթերքի արտադրությանը՝ 86 %-ը: Երրորդն իր նշանակությամբ այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունն է՝ 4.5 %, չորրորդը՝ հագուստի արտադրությունը՝ 2.5 %:

Մինչև Սպիտակի ավերիչ երկրաշարժը Շիրակի մարզում արտադրված շաքարի ճակնդերն օգտագործվում եր Սպիտակի շաքարի գործարանում: Ախուրյան գյուղում կառուցված շաքարի նոր գործարանը լրիվ հզորությամբ գործելու դեպքում կդառնա մարզի սննդի արդյունաբերության խոշոր ձեռնարկություններից մեկը, միաժամանակ կնպաստի մարզի տարածքում շաքարի ճակնդերի մշակության նախկին ծավալների վերականգնմանը:

Նախկինի համեմատությամբ նվազել է նաև մարզում բնական շինանյութերի (տուֆի, պեմզայի) արդյունահանումը: Մարգին բաժին է ընկնում ՀՀ-ում արդյունահանվող տուֆի ավելի քան 45 %-ը: Առավել խոշորն Արթիկի տուֆի արդյունահանման ձեռնարկությունն է: Անիպեմզայում և Պեմզաշենում կատարվում է պեմզայի արտադրություն: Մարզում աշխատանքներ են տարվում արդյունաբերության նոր ճյուղերի ու ձեռնարկությունների

ստեղծման, հների վերականգնման ուղղությամբ: Առաջին քայլերից մեկը Մարզական բանբարձրային ֆադրիկայի վերագործարկումն էր:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքով Շիրակը միջին տեղ է գրադարանում ՀՀ-ում: Այն այժմ մարզի տնտեսության հիմնական ճյուղն է: 2019 թ. մարզում համախառն արտադրանքի ծավալով գյուղատնտեսությունը 1.3 անգամ զերազանցում էր արդյունաբերությանը: Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում բուսաբուծության ու անասնաբուծության հարաբերակցությունը 2019 թ. կազմել է 36.4 % և 63.6 %: 2015-2019 թթ. մարզի բուսաբուծության համախառն արտադրանքը նվազել է 20.8 մլրդ դրամով, իսկ անասնապահական արտադրանքի ծավալը՝ աճել մոտ 4.2 մլրդ դրամով: Մարզում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 210.9 հազ. հա, որից 78.2-ը՝ վարելահոները: Չնչին մակերես են գրադարանում բազմային տնկարկները:

Շիրակի մշակովի հողատարածքների ոռոգումն իրականացվում է Արփի լիճ-ջրամբարի, Կառնուտի, Մանթաշի, Վարդաքարի, Սառնաղբյուրի և Թավշուտի ջրամբարների, ինչպես նաև Շիրակի ու Աջափնյա ջրանցքների ջրերով: Մարզի ոռոգելի հողատարածքների ընդհանուր մակերեսը կազմում է 20 հազ. հա, որը մշակելի հողատարածքների 25,5 %-ն է:

Հացահատիկայինների ցանքատարածքները թեև 2015-2019 թթ. նվազել են, սակայն դրանք գրադարանում են մարզի վարելահոների հիմնական տարածքները (2019 թ.՝ 43.9 հազ. հա): Այդ ընթացքում նվազել են նաև կարտոֆիլի ցանքատարածքները: Հացահատիկի և հատիկաբնդեղենների արտադրությամբ Շիրակն առաջինն է ՀՀ-ում և տալիս է ՀՀ արտադրանքի 25-32 %-ը:

Մարզը ՀՀ-ում առաջատար է նաև կարտոֆիլի համախառն բերքով: Այս ցուցանիշով այն մոտ 2-2.5 անգամ զիջում է Գեղարքունիքին: Մարզում արտադրվում է ՀՀ-ում կարտոֆիլի համա-

խառն բերքի մոտ 17 %-ը: Շիրակում բուսաբուծության մեջ կարևոր դեր և տեղ ունի նաև **բանջարանոցայինների** մշակությունը:

Շիրակի բուսաբուծական առավել զարգացած շրջանը Շիրակի դաշտն է, որտեղ ոռոգման պայմաններում զարգացած ուղղություն է հացահատիկի ու կարտոֆիլի մշակությունը:

Շիրակը ՀՀ առավել զարգացած անասնապահական շրջաններից է: ԽԵԿ-ի գլխաքանակով, մսի և կաթի արտադրությամբ Գեղարքունիքից հետո այն երկրորդն է ՀՀ-ում: Մարզին 2019 թ. բաժին էին ընկնում ՀՀ ԽԵԿ-ի գլխաքանակի ավելի քան 15 %-ը, խոզերի՝ 10 %-ը, ոչխարների և այծերի 12 %-ը: Շիրակը տալիս է ՀՀ-ում արտադրվող մսի ավելի քան 13, կաթի՝ 16, ձվի 6 և բրդի՝ 10 %-ը: Անասնաբուծական առավել զարգացած շրջաններ են Աշոցքի, Ամասիայի և Արթիկի տարածաշրջանների բարձր լեռնային տարածքները, որոնք ունեն փարթամ արոտավայրեր ու խոտհարքներ:

Հստ տարածաշրջանների՝ մարզի գյուղական տարածքների արտադրական մասնագիտացումն ունի հետևյալ պատկերը՝ Ախուրյանի տարածաշրջան՝ հացահատիկայինների ու կարտոֆիլի մշակություն, բանջարաբուծություն ու անասնապահություն, Անիկի տարածաշրջան՝ հացահատիկայինների ու կերային մշակաբույսերի աճեցում, անասնապահություն, Աշոցքի տարածաշրջան՝ անասնապահություն, կերային մշակաբույսերի և հացահատիկայինների (գարի, վարսակ) աճեցում, Ամասիայի տարածաշրջան՝ անասնապահություն, կերային մշակաբույսերի աճեցում, ցածրադիր հատվածի մի քանի գյուղերում՝ նաև ցորենի մշակություն, Արթիկի տարածաշրջան՝ հացահատիկայինների ու կերային մշակաբույսերի աճեցում, անասնապահություն, միշարք գյուղերում՝ նաև բանջարաբուծություն:

Շիրակի տրանսպորտային համակարգի առանցքը երկաթուղային և ավտոմոբիլային ուղիներն են: Գյումրիից երկաթուղա-

գծերը ձգվում են դեպի մայրաքաղաք Երևան, Վրաստան և Թուրքիա: Գյումրին ՀՀ ամենահին երկաթուղային հանգույցն է: Գյումրիից երկաթուղային բազուկ է ձգվում Արթիկ և Պեմզաշեն-Մարալիկ: Մարզի տարածքով է անցնում միջավետական նշանակության Գյումրի-Բաքրա-Նինոծմինդա ավտոմայրուղին: Գործում է Գյումրիի օդանավակայանը, որտեղից թռիչքներ են իրականացվում Ռուսաստանի Դաշնություն:

Շիրակի տնտեսության ոչ արտադրական ոլորտը ՀՀ միջինի համեմատությամբ թույլ է զարգացած: 2019 թ. գործում էին մանրածախ առևտուրի 1280 օբյեկտ, պետական նախադարուցական 115, պետական հանրակրթական 159, ոչ պետական հանրակրթական 5, մշակութային ոլորտի 30, նախնական մասնագիտական 4, միջին մասնագիտական 9, պետական բարձրագույն ուսումնական 1 հիմնարկ, պետական բարձրագույն ուսումնական հաստատության 5 մասնաճյուղ: Գյումրիում գործում են 2 թատրոն, 8 թանգարան և տուն-թանգարաններ: Մարզում գործում է առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող 32 հաստատություն: Մարզի 10,000 բնակչին բաժին են ընկնում 25 բժիշկ, 56 միջին բուժանձնակազմ, 36 հիվանդանոցային մահճակալ: Այս ցուցանիշներով մարզերի մեջ առաջինն է և զիջում է միայն Երևանին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Կատարե՛ք Շիրակի մարզի ՏՍԴ-ի վերլուծություն և գնահատում:
2. Գնահատե՛ք Շիրակի բնառեսուրսային ներուժը: Բնութագրե՛ք մարզի բնառեկրեացիոն ռեսուրսները:
3. Վերլուծե՛ք Շիրակի բնակեցման պատմական ընթացքը:
4. Կատարե՛ք Շիրակի տարաքնակեցման համակարգի վերլուծություն: Բնութագրե՛ք մարզի քաղաքները և խոշոր ու հայտնի գյուղերը:

5. Ի՞նչ տեղ և դեր ուներ Շիրակը ՀՀ տնտեսության մեջ մինչև ԽՍՀՄ փլուզումը:

6. Կատարե՛ք Շիրակի մարզի տնտեսության վերլուծություն: Մատնանշե՛ք առավել սուր հիմնախնդիրները:

7. Կատարե՛ք Շիրակի տրանսպորտային համակարգի վերլուծություն:

8. Ինչպիսի՞ն եք տեսնում Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացումն առաջիկա տարիներին:

5.6. Լոռու մարզը

Տնտեսության զարգացման նախադրյալները: Լոռու մարզը կազմավորվել է Գուգարքի, Թումանյանի, Ստեփանավանի, Սպիտակի և Տաշիրի նախկին վարչական շրջանների միավորումից և գրաղեցնում է 3799 կմ² տարածք (ՀՀ 12.8 %-ը): Մարզում 2020 թ. ապրում էին ՀՀ բնակչության 7.2 %-ը, գյուղական բնակչության 8.2 %-ը և քաղաքային բնակչության 6.7 %-ը: Մարզն ունի 8 քաղաք և 122 գյուղ:

Լոռին հյուսիսից սահմանակցում է Վրաստանին, արևմուտքից՝ Շիրակի, արևելքից՝ Տավուշի, հարավից Արագածոտնի ու Կոտայքի մարզերին: Այն ընդգրկում է Դեբեղի ավագանը և բնական սահմաններով (Զավախքի, Վիրահայոց, Գուգարց և Փամբակի լեռնաշղթաներով) բաժանված է հարևան տարածքներից: Մարզի կենտրոնական մասով ձգվում են համեմատաբար ցածրադիր Բազումի լեռները: Վերջինիս վրա գտնվող Պուշկինի լեռնանցքի տակով անցնող թունելով Վանաձորը կապվում է Ստեփանավանին: Մարզի կենտրոնական մասով անցնում է ՀՀ զինավոր երկաթուղին՝ ստեղծելով նպաստավոր ՏՏՄ մարզի համար: Դա հնարավորություն է տալիս մարզին կապվելու հարևան Վրաստանի, Շիրակի մարզի, Երևանի, անհրաժեշտության դեպքում՝ Թուրքիայի հետ: Առաջիկա տարիներին ՀՀ արտաքին տնտեսական կապերի ընդլայնման ու զարգացման պայմաններում էլ ավելի է մեծանալու մարզի ՏՏՄ-ի դերը:

Լոռին առանձնանում է մակերևույթի սուր հակադրություններով: Մակերևույթը ծալքաբեկորավոր լեռների, հրաբխային զանգվածների, բարձրադիր հարթավայրերի ու սարավանդների, միջլեռնային գոգավորությունների, նեղ ու խորը գոգահովիտների մի համակցություն է: Տեղանքի բացարձակ բարձրությունները տատանվում են 380-3196 մ-ի միջև: Բազումի լեռնաշղթայով և

Դեքեղի հովտով մարզի տարածքը բաժանվում է երկու մասի՝ Լոռի սարահարթի ու Փամբակի հովտի: Լոռու մակերևույթի նման բնույթն իր անմիջական և միջնորդավորված ազդեցությունն է թողել տարածքի բնակեցման, տնտեսության ու բնակավայրերի զարգացման վրա:

Լոռիում առավել մեծ բաժին ունեն ծովի մակարդակից 1500-2000 մ բարձրության շրջանները, որոնք կազմում են տարածքի գրեթե 43 %-ը: Այդ սահմաններում է գտնվում նաև մարզի տարածքի առավել ընդարձակ և բնակեցման ու տնտեսական զարգացման համար նպաստավոր պայմաններ ունեցող Լոռի սարավանդը: Մինչև 2000 մ բացարձակ բարձրություն ունեցող տարածքներին բաժին է ընկում մարզի ավելի քան 72 %-ը: Համեմատաբար փոքր է ծովի մակարդակից մինչև 1000 մ բարձրություն ունեցող տարածքների բաժինը (5.1 %): Բնակեցման և տնտեսական գործունեության համար առավել նպաստավոր պայմաններ ունեցող մինչև 8⁰ թեքություն ունեցող տարածքները Լոռիում կազմում են տարածքի 25.8 %-ը, ոչ բարենպաստ (16⁰-ից բարձր թեքության) տարածքները՝ 42.5 %-ը, իսկ բավարար պայմաններ ունեցող շրջանները (8-16⁰)՝ 31.7 %-ը: Մակերևույթի խիստ կտրատվածության, տարբեր ուղղությամբ ձգվող լեռնաշղթաների և դիրքադրությունների տարբերությունների պատճառով Լոռիում կլիմայական տիպերի ավելի մեծ բազմազանություն է նկատվում, քան հարևան Շիրակում: Մարզի տարածքի մեծ մասի համար բնորոշ են չափավոր ցուրտ, չափավոր ցամաքային, չափավոր տաք, համեմատաբար խոնավ և չոր մերձարևադարձային կլիմայական տիպերը: Մարզի միջին և բարձրադիր գոտում կլիման բարեխառն լեռնային է՝ տևական, ցուրտ ձմեռներով: Տարվա ընթացքում ձևավորվում է կայուն ձնածածկույթ: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Նախալեռներում կլիման մերձարևադարձային է (ձմեռը մեղմ է և կարատև, ամառը՝ շոգ ու երկարատև): Մարզում մթնոլորտային տեղումների տարեկան քա-

նակը տատանվում է 500-800 մմ-ի սահմաններում: Կլիմայական նշված պայմանները բավարար նախադրյալներ են ստեղծում հացահատիկայինների, կարտոֆիլի, շաքարի ճակնդեղի, բանջարանոցային առանձին մշակաբույսերի և այգեգործության որոշ ճյուղերի գարգացման համար:

Մարզի տարածքին առավել բնորոշ են **անտառների**, **լեռնային** (մարզագետնային) **տափաստանների** և ալպյան մարզագետինների լանդշաֆտները: Անտառածածկ է մարզի մոտ 27 %-ը: Այստեղ է գտնվում **ՀՀ անտառային ծածկույթի 30 %-ը**: Անտառապատվածությունը մեծ է Թումանյանի, Ստեփանավանի ու Գուգարքի տարածաշրջաններում: Տարածված ծառատեսակներից են հաճարենին, կաղնին, բոխին և սոճին: Կան նաև լորենի, կեչի, թեղի և հացենի: Մարզում են գտնվում «Գյուղազարակի», «Մարզահովտի» և «Կովկասյան մրտավարդի» արգելավայրերը, մեկ բուսաբանական այգի և 2 դենդրոպարկ:

Լոռուն բաժին է ընկնում ՀՀ գյուղատնտեսական հողատարածքների 12.3 %-ը: Դրանք կազմում են մարզի տարածքի 66 %-ը: Գյուղատնտեսական նշանակության հողատարածքների 16.8 %-ը վարելահողեր են, 58 %-ը՝ արոտավայրեր, 14 %-ը՝ խոտհարքներ, 0.2 %-ը՝ բազմամյա տնկարկներ, 11 %-ը՝ այլ հողատեսքեր: Դրանց ընդհանուր մակերեսը կազմում է 251 հազ. հա: Մարզում ոռոգելի հողատարածքները կազմում են մոտ 9.6 հազ. հա:

Օգտակար հանածոների պաշարներով Լոռին երկրորդն է ՀՀ-ում: Շատ են ինտրուզիվ ծագման քարտեսակները, պղինձը, մոլիբդենը և ոսկին: **Շահագործվում են Շամկուլի պղնձի, Թեղուտի պղնձամոլիբդենային, Մղարթի ու Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը:**

Լոռու տարածքը գտնվում է սեյսմիկ վտանգավորության գոտում: Սողանքավտանգ են Վանաձոր քաղաքին հարող Փամբակի լեռնաշղթայի լանջերը:

Լոռին հարուստ է զբոսաշրջային-ռեկրեացիոն բացառիկ ռեստորաններով: Գեղատեսիլ բնության հետ միասին կան **3000**-ից ավելի պատմամշակութային կոթողներ և հուշարձաններ: Դրանց թվում են **Սանահինի** և **Հաղպատի** վանական համալիրները, որոնք ընդգրկված են **ՅՈՒՆԵՍԿՕ**-ի համաշխարհային մշակութային ժառանգության ցանկում:

Լոռու մարզի բնաաշխագրական պայմանները նպաստավոր են հացահատիկայինների, կարտոֆիլի և կերային մշակաբույսերի աճեցման համար: Լեռնային խոտհարքներն ու հյութալի արոտավայրերը ծառայում են բազա տակարաբուծության ու ոչխարաբուծության զարգացման համար:

Տարածքի բնակեցումը, բնակչությունը և բնակավայրերը:

Թեպետ Լոռին բնակեցված է եղել քարեղարյան ժամանակներից, սակայն իրադարձությունների բերումով բնակավայրերի ցանցի ձևավորումը կատարվել է XIX դարի 20-ական թվականներից: **Մարզի բնակչության հիմնական մասը տեղաբնիկներ՝ արմատական հայ բնակիչներ են, որոնք հաստատվել են այստեղ պատմական հնագույն ժամանակներից: Լոռեցիներն իրենց ինքնատիպ էթնիկաբարբառային հատկանիշներով հիմնականում պահպանվել են անաղարտ, կարողացել են դիմագրավել և փրկել երկիրն օտար նվաճողների ասպատակություններից:**

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միանալուց հետո Արևմտյան Հայաստանից և Պարսկահայքից այստեղ ներգաղթեց հայ բնակչության ստվար մի զանգված: XVIII դարի երկրորդ կեսերից (1763 թ.) Լոռի են զաղթել **հուլներ** (Ալավերդի, Ախթալա և այլն) Գյումուշիաններ (Տրապիզոնի վիլայեթ): **1840 թվականից Լոռիում ապրում են նաև ռուս աղանդավորներ** (մոլոկաններ), որոնք այստեղ հիմնել են ազգագրական ինքնատիպ առանձնահատկություններով աշքի ընկնող մի շարք գյուղական բնակավայրեր: Քանի որ Լոռին կապող օղակ էր Հայաստանի մնացած

տարածքների և Ռուսաստանի միջև, ապա ռուսների բնակեցումը հիմնականում տեղի էր ունենում ռազմավարական և տնտեսական նշանակություն ունեցող ձանապարհների երկայնքով:

Լոռու բնակչությունը 1831 թ. կազմում էր 11130 մարդ, բնակավայրերի թիվը՝ 54, բնակչության միջին խտությունը՝ 2.9 մարդ/կմ²: Գերակշռում էին բնակչության թվով մանր և փոքր (մինչև 200 մարդ) գյուղերը: Հինգ հարյուր մարդուց ավելի բնակիչ ունեին Օձունը, Շնողը և Մեծ Պարնին: Համեմատաբար խիտ էին բնակեցված Գուգարքի ու Սպիտակի, նոսր՝ Տաշիրի ու Թումանյանի տարածաշրջանները:

1877-1878 թթ. թուրքերի կազմակերպած ջարդերի պատճառով հատկապես Մուշից, Բասենից, Ալաշկերտից, Խնուսից, ինչպես նաև Ղարաբաղից և Շուլավերից ներգաղթած հայ բնակչության մի մասը հաստատվել էն նաև Լոռիում: Լոռու տարածքում բնակչության թվի ավելացման գործում մեծ դեր է խաղացել XIX դարի երկրորդ կեսին մարզում արհեստների, առևտրի և արդյունաբերության որոշ ճյուղերի զարգացումը: Այդ տարիներին մարզում գյուղական բնակավայրերի ձևավորման համար վճռորոշ դեր է խաղացել նաև հաղորդավայրերի ստեղծումը: Երևան-Մեծ Ղարաբիլիսա-Թիֆլիս երկաթուղու և Երևան-Ապարան-Ղարաբիլիսա-Դիլիջան խճուղիների անցկացումը խթանեցին նոր գյուղերի ձևավորումն ու մինչ այդ գոյություն ունեցող գյուղերի խոշորացումը:

Աղյուսակ 65

Լոռու մարզի բնակավայրերի ու բնակչության թվի
շարժընթացք (1831-2020 թթ.) [8, 12, 14, 15, 16, 26, 29, 40]

Տարե-թվեր	Բնակչութեան թիվը		Բնակչութեան թիվը			Բնակչութեան տառաշրջանը	Գումարին բնակչութեան գումարը	Ազգային միջնական գումարը
	գյուղա-կան	քաղաքային	ընդամենը	քաղաքային	գյուղա-կան			
1831	54	-	11130	-	11130	2.9	2.9	209
1897	118	-	88823	-	88823	23.5	23.5	753
1926	162	1	130207	8640	121567	34.0	33.0	750
1959	128	8	217916	94210	123706	57.6	33.4	966
1970	119	9	296088	170367	125721	78.2	34.0	1056
1979	119	9	339326	215540	123786	90.0	33.5	1040
1989	113	9	309518	198521	110997	82.0	30.0	982
2001 թ. մարդա-համ.	122	8	286408	169953	116455	76.0	31.5	945
			253351	148684	104667	67.0	28.8	858
2011	122	8	235537	137784	97753	64.0	26.4	801
2015	122	8	227999	134310	93689	61.6	25.3	768
2020	122	8	213200	126000	87200	56	23.0	71.5

1831-1989 թթ. մարզի բնակչության թիվն ավելացել է ավելի քան 35 անգամ: XX դարի 20-ական թվականներից առավել բարձր տևմաբերով աճել է քաղաքային բնակչությունը (1926-1989 թթ. 23 անգամ): Այդ տարիներին գյուղական բնակչության թիվը նվազել է ավելի քան 10.5 հազարով: **1989-2020 թթ. Լոռու մարզի բնակչության թիվը նվազել է ավելի քան 31 %-ով կամ 96.3 հազարով:** Առավել մեծ շափով նվազել է քաղաքային բնակչության թիվը՝ 36.5 %-ով կամ 72.5 հազարով: Այդ բնակչության մարզի գյուղական բնակչության թիվը նվազել է ավելի քան 31.5 %-ով կամ 10.3 հազարով:

թյան թիվը պակասել է 23.8 հազարով կամ 21.4 %-ով: Լոռին ուրբանացման մակարդակով (59.2 %, 2020 թ.) Սյունիքից հետո երկրորդն է ՀՀ-ում: **Մարզկենտրոն Վանաձորը բնակչության թվով և արտադրական ներուժով ՀՀ երրորդ քաղաքն է:**


1988 թ. երկրաշարժին հաջորդած ավելի քան երեք տասնամյակի ընթացքում քաղաքի բնակչության թիվը նվազել է մոտ 2.2 անգամ: Վանաձորը տնտեսական արագ զարգացում է ունեցել 1950-ական թվականներից հետո, եթե մեկը մյուսից հետևից շահագործման են հանձնվել արդյունաբերական մի քանի խոշոր ձեռնարկություններ: Դրանց շնորհիվ Վանաձորը դարձավ մեր հանրապետության արդյունաբերական և տնտեսական խոշոր կենտրոններից մեկը: Խորհրդային վերջին չորս տասնամյակի ընթացքում այստեղ ձևավորվեց և զարգացավ Վանաձորի արդյունաբերական հանգույցը՝ ներառելով նաև Սպիտակ քաղաքը, Զորագետ քաղաքատիպ ավանը և դրանց միջև ընկած բնակավայրերը: **Անկախության տարիներին վերջինս կորցրել է իր արդյունաբերական ներուժի զգալի մասը:** Դեռևս խորհրդային տարիներին Վանաձորում կային բուհական, մշակութային և գիտահետազոտական հիմնարկներ, ռեկրեացիոն և զրոսաշրջային հաստատություններ: Քաղաքն ունի նպաստավոր ՏՏԿ: Այստեղով են անցնում Երևան-Գյումրի-Թրիլիսի երկաթգիծը, միջազետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներ: Մշակվել և աստածանաբար իրականացվում են տարբեր ծրագրեր քաղաքի տնտեսական ներուժի վերականգնման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական առկա խնդիրների լուծման ուղղությամբ: **2020 թ. Վանաձորին բաժին էին ընկնում Լոռու մարզի մոտ 37 %-ը, ՀՀ քաղաքային բնակչության 4.1 %-ը և ամբողջ բնակչության 2.6 %-ը:**

Ոչ միայն Լոռիում, այլ նաև ՀՀ-ում իրենց տնտեսական նշանակությամբ հայտնի են նաև Ալավերդի, Սպիտակ, Ստեփանավան, Ախթալա, Տաշիր, Թումանյան և Շամլուդ քաղաքները:

Լոռու մարզում բնակչությունը տեղաբաշխված է խիստ անհավասարաշափ: Միջին խտությունը կազմում է 56, գյուղական բնակչության խտությունը՝ 23 մարդ/կմ²: Մարզի բնակչության 70-75 %-ը կենտրոնացված է Փամբակ, Չորագետ և Դեբեդ գետերի ավազաններում: Գյուղական բնակչության խտությունն ավելի բարձր է Սպիտակի ու Գուգարքի տարածաշրջաններում:

Մարզի բնակչավայրերի գերակշռող մասը կենտրոնացված են Երևան-Վանաձոր-Թբիլիսի երկաթուղու մերձակա տարածքներում:

Սպիտակի, Գուգարքի և Թումանյանի տարածաշրջանների գյուղերի 71 %-ը գտնվում է կամ երկաթուղու անմիջական հարևանությամբ, կամ նրանից մինչև 3 կմ հեռավորության վրա: Ունենալով ծովի մակարդակից բարձրությունների մեծ տարբերություններ և մասնատված լինելով Փամբակ, Չորագետ և Դեբեդ գետերի ու նրանց վտակների հովիտներով՝ Լոռին աչքի է ընկնում նաև գյուղական բնակչավայրերի խիստ անհավասարաշափ տեղաբաշխմամբ: Մշտական բնակության տարածքը մարզում տատանվում է ծովի մակարդակից 505-1930 մ բացարձակ բարձրությունների միջև: Մարզի գյուղական բնակչավայրերի շուրջ 80 %-ն ընկած է 1200-1800մ բացարձակ բարձրություններում: Նշված գտուում ապրում է Լոռու գյուղական բնակչության ավելի քան 76 %-ը: Եթե 1926 թ. մարզի համար առավել բնորոշ էր մեծ և միջին մեծության գյուղական տարաբնակեցումը, ներկայում՝ **մեծ և գերիշոր գյուղային տարաբնակեցումը: Վերջիններիս թեև բաժին է ընկնում գյուղերի թվի ընդամենը 33 %-ը, սակայն գյուղական բնակչության՝ 65 %-ը:**



Քարտեզ 28. Լոռու մարզը

Տնտեսությունը: Լոռու մարզը համապատասխանում է Լոռի-Փամբակի սոցիալ-տնտեսական շրջանի տարածքին (բացառությամբ Վերջինիս մեջ մտնող Արագածի տարածաշրջանի): Իր տնտեսական ներուժով և ինդուստրիալ զարգացման աստիճանով Լոռին Շիրակի հետ միասին խորհրդային վերջին տարիներին գտնվում էր մոտավորապես նույն մակարդակի վրա: Դրանց երկուսին էլ բաժին էր ընկնում Հայկական ԽՍՀ-ի հասարակական ընդհանրական արդյունքի և ազգային եկամտի 11-ական %-ը: Արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության մասնաբաժնով (11-12 %) գրեթե հավասար էին և 2-3 անգամ գերազանցում էին Սյունիքի ու Աղստևի շրջաններին:

Լոռին ևս ՀՀ անկախացումից հետո կորցրել է արդյունաբերական ներուժի առկա կարողությունների մեծ մասը: Հանրապետության արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում

մարզի տեսակարար կշիռը վերջին տարիներին կրել է կտրուկ փոփոխություններ (2015 թ.՝ 5.8%, 2016 թ.՝ 9.1 %, 2019 թ.՝ 4.2 %): Դա բացատրվում է Ալավերդու և Թեղուտի մետաղաձուլական ձեռնարկություններում 2018-2019 թթ. առաջացած խնդիրներով: Խորհրդային տարիների ձևավորված **Ալավերդու արդյունաբերական հանգույցը** չունի նախկին արտադրական հզորությունները:

2019 թ. մարզի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների ուներ հետևյալ պատկերը՝ հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում՝ 1.8 %, մշակող արդյունաբերություն՝ 62.8 %, եկեղեցականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում՝ 10.4 %, ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում ու վերամշակում՝ 1.4 %:

Մարզում արդյունաբերական ձեռնարկությունների թիվն անցնում է 100-ից: Առավել մեծ թվով ձեռնարկություններ կան Վանաձորում, սակայն դրանց զգալի մասը, ինչպես և մարզի մյուս քաղաքներում, կա և չեն գործում, կա և կ գործում են փոքր հզորություններով: **Առավել հայտնի արդյունաբերական ձեռնարկություններից** են Վանաձորի Զեկը, Զորագետի Զրեկը, Ալավերդու «Մանես» պղնձաձուլական գործարանը, Շամլուղի և Ախրալյի պղնձի ու բազմամետաղների հանքահարստացուցիչ կոմբինատները: Վերջիններիս արտադրանքը հումք է ծառայում Ալավերդու պղնձաձուլարանի համար, իսկ հումքի որոշ մասն էլ ստացվում է Սյունիքի մարզից և ԱՀ-ից: Վերջին տարիներին շահագործման հանձնվեց Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը, որն արդեն երկու տարի է՝ բնապահպանական խնդիրների պատճառով չի շահագործվում: Մարզում գործող ձեռնարկությունների շարքում հայտնի են նաև Վանաձորի «Գլորիա» և «Սարտոն» կարի ֆաբրիկաները, «Թեղուտ» ՓԲԸ-ն, Վանաձորի «Ավտոգեն Ս» ՍՊԸ-ն, բետոնյա կոնստրուկցիաների արտադրու-

թյան բազան, «Դիետ» ՄՊՀ-ն, Տաշիրի կաթի վերամշակման ձեռնարկությունը:

Խորհրդային տարիներին մարզի քիմիական ձեռնարկությունները թողարկում էին քիմիական պարարտանյութեր, քիմիական թելեր, պղնձարջասպ, կալցիումի կարբիդ, ծծմբական թթու և այլ նյութեր: Դրանց ձեռնարկությունները գտնվում էին Վանաձորում ու Ալավերդիում: Մարզի քիմիական արտադրատեսակների գգալի մասը արտահանվում էր ԽՍՀՄ այլ հանրապետություններ և արտասահման: Ներկայումս մարզի քիմիական արդյունաբերության ձեռնարկություններն աշխատում են ոչ լիիվ հզորությամբ: Վանաձորի քիմիական կոմբինատի բազայի հիման վրա ստեղծվել է «Վանաձոր Քիմպրոս» ձեռնարկությունը:

Խորհրդային տարիներին Լոռու տարածքում ձևավորվել և գարզանում էին նաև մեքենաշինական, սննդի ու թեթև արդյունաբերության, փայտամշակման, կահույքի և այլ արտադրություններ: Հայտնի էին Վանաձորի «Ավտոմատիկա» և «Ավտոգենմաշ» մեքենաշինական, Սպիտակի վերելակների և շաքարի, Թումանյանի հրակայուն աղյուսների, Վանաձորի մորթի-մուշտակեղենի և Մեծավանի գորգագործական ձեռնարկությունները: Թվարկածների մեծ մասը ներկայումս չեն գործում, դրանց գգալի վնաս հասցրեց Սպիտակի երկրաշարժը: Մարզի Տաշիրի տարածաշրջանում և այլ քաղաքներում գործում են կաթի վերամշակման ձեռնարկություններ (Տաշիրում, Ստիփանավանում, Կաքնառատում և այլն):

Գյուղատնտեսությունը: Մարզի գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի, մասնագիտացման և տարածքային կազմակերպման վրա իրենց անմիջական ազդեցությունն է թողնում տարածքի ագրոկիմայական ռեսուրսների բազմազանությունը: Լոռիում բարենպաստ նախադրյալներ կան ինչպես երկրագործության, այնպես էլ անասնապահության տարբեր ճյուղերի զար-

գացման համար: Գյուղատնտեսության համախառն արտադրանքով Լոռին միջին տեղ է զբաղեցնում ՀՀ մարզերի թվում: 2015-2019 թթ. տարիներին մարզի միջին ցուցանիշը ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքում կազմել է ավելի քան 8 %: Գյուղատնտեսական արտադրանքի մեջ անասնապահության տեսակարար կշիռը երկրագրծության համեմատ ավելի է 2-2.2 անգամ: **Մարզի Տաշիրի և Ստեփանավանի տարածաշրջանները, ՀՀ տոհմային տավարաբուծության հիմնական ու զարգացած շրջաններն են:** 2017-2019 թթ. մարզում ԽԵԿ-ի գլխաքանակը նվազել է (81-67.8 հազ.), ինչի պատճառով նվազել է նաև կրվերի գլխաքանակը (39.8-33.3 հազ.): Այդ ընթացքում նվազել է նաև ոչխարների ու այծերի գլխաքանակը (37.4-26.5 հազ.): Մարզը ՀՀ-ում առաջիններից է (Տավուշի հետ) ձիերի գլխաքանակով (ՀՀ 22.4 %-ը):

Լոռին Գեղարքունիքից և Շիրակից հետո ՀՀ-ում երրորդն է մսի ու կաթի արտադրությամբ: Վերջին տարիներին մարզը տալիս էր ՀՀ-ում արտադրվող մսի 11-12, կաթի՝ 12-12.5 %-ը: Վերջին տարիներին նկատվում է նաև ձվի արտադրության ավելացում: Լոռուն բաժին է ընկնում ՀՀ խոզերի գլխաքանակի մոտ 7.5 %-ը: Մարզն առաջիններից է ձիերի գլխաքանակով:

Երկրագրծության զարգացած ճյուղերից են **հացահատիկային տնտեսությունը** և **կարտոֆիլի մշակությունը:** Հացահատիկայինների ցանքատարածքները 2015-2019 թթ. կազմել են 12.5-13 հազ. հա, միջին բերքատվությունը՝ 28-30 ց/հա: Դրանց համախառն բերքով մարզը 3-4-րդ տեղում է ՀՀ-ում: **Գեղարքունիքից ու Շիրակից հետո երրորդն է ՀՀ-ում կարտոֆիլի համախառն բերքով (55-75 հազ. տ):** Մարզի երկրագրծության կառուցվածքում իր նշանակությամբ երրորդը պտղաբուծությունն է: Դրանց տնկարկները մարզում կազմում են մոտ 2.3-2.4 հազ. հա: 2017-2019 թթ. պտղաբուծության համախառն արտադրանքը մարզում

կազմել է ՀՀ համապատասխան արտադրանքի մոտ 2 %-ը: Մարզում արտադրվում է բանջարանոցայինների՝ ՀՀ համախառն բերքի 2.5-3.2 %-ը:

Լոռու տարածաշրջանների գյուղացիական տնտեսությունները մասնագիտացված են **Գուգարքի տարածաշրջանում՝** խոշոր և մանր եղերավոր անասնապահություն, կարտոֆիլի և հացահատիկի մշակություն, բանջարաբուծություն, **Ստեփանավանի,** **Տաշիրի ու Սպիտակի տարածաշրջաններում՝** կարտոֆիլի և հացահատիկի մշակություն, տավարաբուծություն և սպառողական նշանակության բանջարաբուծություն, **Թումանյանի տարածաշրջանում՝** պտղաբուծություն, անասնապահություն, բանջարաբուծություն:

Լոռիում սոցիալական ոլորտի ճյուղերից առավել զարգացած է **առողջապահությունը:** Մարզը ՀՀ-ում երկրորդն է 10,000 բնակչին բաժին ընկնող բժիշկների (24), չորրորդը՝ միջին բուժանձնակազմի թվաքանակով: Մարզում գործում են պետական նախադպրոցական 94, պետական հանրակրթական 163, մշակութային ոլորտի 24, նախնական մասնագիտական 4, միջին մասնագիտական 9, բարձրագույն 1 կրթական հաստատություններ, բուհի 2 մասնաճյուղ: **Երևանից և Գյումրիից հետո Լոռին ՀՀ մշակութային առումով առավել զարգացած մարզն է:** Վանաձորում գործում են 3 թատրոն, 8 թանգարան, տուն-թանգարան և 74 գրադարան, պատկերասրահ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Աշխարհագրական դիրքի, մակերևույթի բնույթի և բնառեսուրսային ներուժի ի՞նչ առանձնահատկություններ ունի Լոռու մարզը:

2. Վերլուծե՛ք և գնահատե՛ք Լոռու ՏԱԴ-ի առանձին բաղադրիչները:

3. Կատարե՛ք Լոռու և Շիրակի մարզերի բնակեցման ու տարաբնակեցման համակարգերի համեմատական-աշխարհագրական վերլուծություն:

4. Կատարե՛ք Լոռու քաղաքների տնտեսաաշխարհագրական համալիր վերլուծություն և գնահատում:

5. Վերլուծե՛ք Լոռու տնտեսության ձյուղային և տարածքային կառուցվածքը: Առանձնացրե՛ք զարգացման առավել հեռանկարային ձյուղերը:

6. Բնօգտագործման և շրջակա միջավայրի պահպանության ի՞նչ առաջնահերթ հիմնախնդիրներ կան Լոռու մարզում:

7. Գնահատե՛ք Լոռու մարզի տեղն ու դերը ՀՀ միասնական տնտեսական համակարգում:

5.7. Կոտայքի մարզը

Տնտեսության զարգացման նախադրյալները: Կոտայքը զբա-
ղեցնում է 2086 կմ² տարածք (ՀՀ 7%-ը): Այն կազմավորվել է
ՀՀ Հազարանի, Արտվանի և Նահիբի նախկին վարչական շրջանների
միավորումից: Ներառում է ՀՀ Հազարան գետի միջին հոսանքի ավա-
զանը և Մարմարիկի ջրհավաք ավազանն ամբողջությամբ: Մար-
զի տարածքը հիմնականում համապատասխանում է պատմա-
կան Այրարատ աշխարհի Կոտայք, Մազար, Նիգ, Վարածնունիք
և Արագածոտն գավառների տարածքներին: Դարսկական տիրա-
պետության տարիներին մարզի տարածքը կազմել է Երևանի
խանության մաս, իսկ մինչև 1930 թ. վարչատարածքային բաժա-
նումը մտնում էր Նոր Բայազետի, Էջմիածնի և Երևանի գավառ-
ների մեջ: 2020 թ. մարզին բաժին էին ընկնում ՀՀ բնակչության
8.5 %-ը, զյուղական բնակչության 10.7 %-ը, քաղաքային բնակչու-
թյան 7.2 %-ը:

Կոտայքի տարածքը բնակեցման և տնտեսական գործունեու-
թյան տեսանկյունից գնահատելիս պետք է նախեառաջ նկատի
ունենալ մարզի նպաստավոր ՏԱԴ-ը: Այն կենտրոնական դիրք է
զբաղեցնում ՀՀ տարածքում, և միակ մարզն է, որը չունի արտա-
քին սահմաններ: Ունի ընդարձակ սահմանագիծ մայրաքաղաքի
հետ: Մարզի կենտրոնական մասով են անցնում ՀՀ-ի համար ա-
ռանցքային նշանակության Երևան-Հրազդան-Սևան-Դիլիջան-
Խօսան ավտոմայրուղին և Արարատ-Երևան-Հրազդան-Սևան-
Սոբք երկաթգիծը: ՏԱԴ-ի նշված կողմերը հատկապես խորհրդա-
յին վերջին 4-5 տասնամյակներին նպաստել են Կոտայքի տա-
րածքի բնակեցմանը և սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Կոտայքի մակերևույթի բացարձակ բարձրությունները տա-
տանվում են 1060-ից (Մրգաշեն գյուղի մոտակայքում) 3597 մ-ի
(Աժդահակ լեռ) սահմաններում: Ծովի մակարդակից մինչև

2000 մ բարձրություն ունեցող շրջանները կազմում են տարածքի մոտ 48 %-ը, 2001-2500 մ-ը՝ 30 %-ը, 2500 մ-ից բարձր՝ 22 %-ը: Բնակեցման և տնտեսական գործունեության համար նպաստավոր պայմաններ ունեն Եղվարդի, Կոտայքի և Հրազդանի սարավանդները: Առաջին երկուսն ունեն ծովի մակարդակից 1350-1550 մ բարձրություն և հյուսիսից եզրավորում են Արարատյան գոզավորությունը: Կոտայքի կենտրոնական հատվածը զբաղեցնում է Հրազդանի սարահարթը, որն ունի ծովի մակարդակից 1700-1800 մ բարձրություն: Մարզի տարածքն արևելքից եզրավորվում է Գեղումա, հյուսիսից՝ Փամբակի, հյուսիս-արևմուտքից՝ Ծաղկունյաց լեռնաշղթաներով:

Կոտայքի հարավային շրջաններին (Կոտայքի և Եղվարդի սարավանդներին) բնորոշ է չոր ցամաքային, միջին բարձրություններին՝ բարեխառն լեռնային, ավելի բարձրադիր շրջաններին՝ ցուրտ կլիման: Ցածրադիր վայրերում ամռանը շոգ է, առավելագույն ջերմաստիճանը հասնում է +40-41^o, միջին բարձրություններում՝ չափավոր տաք, լեռներում՝ զով: Մարզի տարածքում արևափայլը տարեկան տևողությունը տատանվում է 1900-2400 ժամի սահմաններում: Տարեկան գումարային ջերմաստիճանները ցածրադիր սարավանդային շրջաններում հասնում են 2800-3000^o-ի, նախալեռնային և լեռնային շրջաններում՝ նվազում մինչև 1500-1000^o: Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը տատանվում է 550-900 մմ-ի միջև:

Կոտայքը բացառիկ հարուստ է ջրային ռեսուրսներով: Մարզում հրաբխային ապարների մեջ ներծծվող ջրերն աղբյուրների տեսքով դուրս են զալիս լեռների ստորոտներում՝ Հրազդան և Ազատ գետերի կիրճներում: Հայտնի են Քառասունակնի, Արգնիի և Գառնիի, Կաթնաղբյուրի, Սոլակի, Ալափարսի, Նուռնուսի, Արգականի, Արգելի, Մաքրավանի աղբյուրները: Կարևոր նշանակություն ունեն նաև տեղական (Հրազդան գետի ու նրա վտակնե-

թի) և տարանցիկ ջրային ռեսուրսները: Կան նաև հանքային ջրերի մի շարք (Արգնու, Բջնիի, Արզականի, Մարմարիկի, Հանքավանի և այլն) աղբյուրներ, որոնք ունեն տնտեսական և ռեկրեացիոն բացարձիկ նշանակություն: Մարզի ջրագրական ցանցի առանցքը **Հրազդանն է**, որի վտակներից են **Մարմարիկը, Աղվերանը, Դալարը, Բջնին**: Հայտնի են նաև **Գետառ** ու **Ազատ** գետերը: Մարզի գետերն ունեն արդյունաբերական, էներգետիկ, ոռոգիչ, ինչպես նաև ռեկրեացիոն նշանակություն: Հրազդանի ջրերից սնվող **Արգնի-Շամիրամի** և **Կոտայքի** ջրանցքները Կոտայքի սարավանդում և Արարատյան գոգավորության նախալեռնային շրջանում ոռոգելի են դարձել մոտ 100 հազ. հա տարածք: Հրազդանի վրա կառուցված են մի քանի ջրամբար, որոնցից խոշորը **Ախարակի** ջրամբարն է՝ 6 մլն մ³ ծավալով: Հայտնի է նաև **Արգելի** (**Գյումուշի**) ջրամբարը: Նշված ջրամբարներն ունեն կարգավորող էներգետիկ նշանակություն: **Իր տնտեսական նշանակությամբ մարզի երկրորդ գետը Մարմարիկն է**, որի ջրերը Հրազդան քաղաքի արդյունաբերական հանգույցի ձևավորման գլխավոր նախապայմաններից են: Այդ նպատակով դեռևս խորիրդային տարիներին **Մարմարիկի վրա կառուցվել էր 30 մլն մ³ ծավալով ջրամբար**: Վերջինս, սակայն, շահագործման չհանձնվեց նախագծային ու շինարարական թերությունների պատճառով: Ներկայումս ջրամբարը վերակառուցվել է 15 մլն մ³-ի սահմաններում և բացի էներգետիկ նշանակությունից՝ ունի նաև ռեկրեացիոն արժեք: Կոտայքի մարզի ջրագրական ցանցի բաղկացուցիչ մասն են կազմում նաև **Գեղամա լեռների հրաբխային խառնարաններում առաջացած լճերը**: Դրանց ջրերն օգտագործում են ինչպես խմելու, այնպես էլ ամառային արոտավայրերի ջրարբիացման համար: Առավել հայտնի է 3032 մ բարձրության վրա գտնվող **Ակնալիճը**:

Կոտայքի ընդերքը հարուստ է բազմատեսակ օգտակար հա-

Նածոներով: Մետաղայիններից հայտնաբերված է բարձր որակի, 28-30 % մետաղի պարունակությամբ երկարի հանքաքար (Կապուտան), որի հաստատված պաշարները կազմում են շուրջ 244 մլն տ, հեռանկարայինը՝ 400 մլն տ: **Երկաթաքար** կա նաև Հրազդան քաղաքի մերձակայքում: Գունավոր մետաղային ռեսուրսներից արդյունաբերական նշանակություն ունի **Մեղրածորի ոսկու** հանքավայրը: Հայտնաբերվել են նաև **պղնձամոլիբդենային** պաշարներ: Այլումինի հումքի՝ **նեֆելինային** սիենիտների մեծ պաշարներ կան Հրազդանի արդյունաբերական հանգույցին հարող շրջանում (**Թեժ լեռ**): Մարզի տարածքը շատ հարուստ է ոչ մետաղային բազմապիսի օգտակար հանածոներով: Ամենուրեք տարածված են բազալտի, լիթոլիդային պեմզայի (պեղլիտներ), անդեղիտարբազալտների, հրաբխային խարամների հանքավայրեր: Դրանցից խոշորներն են **Ջրաբերինը** (Աբովյանի տարածաշրջան) և **Չարենցավանինը**: Մարմարի պաշարներ կան **Արզական-Աղվերանի** և **Մայմելսի** շրջանում: Հանքավանի գոտում՝ Երևան-Սևան խճուղու երկու կողմում, հայտնի է **Դամլիկի օրսիդիանի հանքավայրը**:

Մարզի տարածքը հարուստ է ինչպես բնական, այնպես էլ մարդածին **ռեկրեացիոն ռեսուրսներով**: Առանձնանում են Ազատ ու Հրազդան գետերի հովիտները: Ազատ գետի հովիտը (Գառնիի ձորում) առանց հավելումների բնական և պատմական հուշարձանների թանգարան է բաց երկնքի տակ: Այստեղ է գտնվում աշխարհահռչակ **«Քարերի և իմֆոնիան»**՝ կազմված ռումբածել և սյունածել բազալտներից: Ազատի հովտի այս հատվածում են դուրս գալիս Գեղամա լեռներում ներծծված ու հրաբխային ապարներով գտված **Գառնիի սատորակ ու բարձրորակ աղբյուրները**: Նման պատկեր կա նաև Հրազդանի կիրճում (Արգնի-Բջնի տեղամասը): Այստեղ մեկ ընդհանրություն են կազմում լավային գոյացումները, քաղցրահամ ու սառնորակ և հանքային տաք աղ-

բյուրները:

Կլիմայական, լանդշաֆտային և հանքային ջրերի ռեկրեացիոն մեծ ներուժ ունի Ծաղկաձոր-Մեղրաձորի գոտին: Այդ ռեսուրսների բազայի վրա գործում են ՀՀ և միջազգային նշանակության հանգստի տարրեր օբյեկտներ: Դեռևս քիչ օգտագործվող ռեկրեացիոն մեծ ներուժ կա Գեղամա, Արայի և Ծաղկունյաց լեռներում (հրաբխային լճերը և կրները, գագաթները, լեռնային և ձմեռային տուրիզմի զարգացման բացառիկ հնարավորությունները):

Մարզի տարածքը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով: Այստեղ գրանցված են ավելի քան 2024 պատմամշակութային օբյեկտներ և հուշարձաններ: Դրանց մի մասը ոչ միայն լոկ հուշարձան են, այլև մեր երկրի համար կարևոր զբուսաշրջային ռեսուրս: Մեծ արժեք է ներկայացնում Հայկական հելլենիստական մշակույթի գլուխգործոցը՝ Արևի աստված Միհրին նվիրված, չորս կողմից սյունազարդ Գառնիի տաճարը: Քրիստոնեական շրջանի հայկական վիմափոր ճարտարապետության եզակի և բարձրարվեստ կոթող է Այրիվանք-Գեղարդը: Հայտնի են նաև Եղվարդի հոյակերտ երկհարկանի եկեղեցին, Կապուտանի երկհարկանի եկեղեցին, Կեչառիսի (Ծաղկաձոր) վանական համալիրը, Բջնիի Սուրբ Աստվածածին եկեղեցին, Բջնիի բերդը: Մարզի երկրաբանական, ձևաչափական և կլիմայական պայմանները հիմք են հանդիսացել խայտաբղետ հողային և բուսական ծածկույթի ձևավորմանը: Սարավանդերում գերակայում են շագանակագույն բերի հողերը և արիդ տափաստանային լանդշաֆտները: Մարզում սևահողերը տարածվում են լեռնալանջերին, որտեղ տարածված են ալպյան և մերձալպյան փարթամ բուսականությամբ ամառային արոտավայրերն ու խոտհարքները:

Կոտայքը երկրագործության զարգացման համար նպաստավոր հողածածկույթով համեմատաբար նվազ ապահովվածու-

թյուն ունի (0,15 հա/մարդ): Առավել արգավանդ հողերը տարածված են Եղվարդի և Կոտայքի սարավանդներում: Անտառապատվածությամբ մարզը ՀՀ-ում միջին ցուցանիշ ունի: Անտառները գրաղեցնում են մոտ 23 հազ. հա, որից 405 հա-ը արգելոցապուրակային է: Հիմնական ծառատեսակներ են լորենին, թխկին, կաղնին, արոսենին և այլն: Անտառային գոտին գրաղեցնում է հիմնականում Մարմարիկի հովտի և Ծաղկաձորին հարող տարածքների մինչև 1900 մ բարձրությունները: Կենդանական աշխարհը մարզում համեմատաբար լավ է պահպանվել անտառային գոտում:

Կոտայքի մարզի անտառային գոտին ՀՀ-ում հայտնի է որպես առավել ակտիվ ռեկրեացիոն շրջաններից մեկը:

Տարաքնակեցումը, բնակչությունը և բնակավայրերը: Կոտայքը ևս մեր երկրի վաղ բնակեցված շրջաններից է, որի մասին են վկայում այստեղ առկա բազմաթիվ հուշարձաններ: Տարածքի տարբեր շրջաններում կան երեքհազարամյա կենդանակերպ քարե հսկաներ՝ «վիշապներ»:

Մարզի բնակչության ձևավորման վրա մեծ դեր է ունեցել 1828-1830 թթ. պարսկահայքից և Արևմտյան Հայաստանից (Բայազետից, Ալաշկերտից, Սուրմալուից, Էրզրումից, Մուշից և այլ շրջաններից) բնակչության ներգաղթը Կոտայքի մարզի տարածք: Ըստ առկա սկզբնաղբյուրների տվյալների՝ այստեղ 1831 թ. եղել է 53 գյուղական բնակավայր, որոնք բոլորը միասին ունեցել են 7964 բնակիչ: Առավել խտաբնակ էր Հրազդանի տարածաշրջանը: Մինչև XIX դարի վերջը (1831-1897 թթ.) մարզի տարածքում բնակչության թիվն ավելացել է 6.8 անգամ, իսկ գյուղերի թիվը 53-ից հասել է 94-ի:

Կոտայքը ՀՀ այն մարզերից է, որտեղ 1950-ական թվականներից եետո տեղի է ունեցել արդյունաբերության բուռն զարգացում, որը հանգեցրել է դեպի մարզ բնակչության մեծ ներհոսքի ՀՀ այլ

շրջաններից, հարևան Վրաստանի և Ադրբեյջանի հայաբնակ շրջաններից: 1926-1988 թթ. մարզի բնակչության թիվն ավելացել է 4.6 անգամ: **Միայն 1959-1988 թթ. մարզի քաղաքային բնակչության թիվն ավելացել է 8.8 անգամ:** Եթե մինչև 1950-ական թթ. կեսերը մարզում չկար քաղաքի կարգավիճակ ունեցող ոչ մի բնակավայր, ապա 1988 թ. այդպիսիք ուրին էին: Ավելի քան 60 տարում (1926-1988 թթ.) մարզի գյուղական բնակչության թիվն ավելացել է ընդամենը 1.7 անգամ: 1950-ական թթ. քաղաքի (կամ քաղաքատիպ ավանի) կարգավիճակ են ստացել Հրազդանը (ներառելով նաև շրջակա մի քանի այլ գյուղեր), Արգնին, Չարենցավանը (նախկինում՝ Լուսավան), Լուսակերտը (Արգել), Նոր Հաճնը: **1961 թ. Էլար գյուղի տեղում հիմնադրվել է Արովյան քաղաքը:** Այնուհետև կազմավորվել են նաև Բյուրեղավան քաղաքը, քաղաքի կարգավիճակ է ստացել Շաղկաձորը: 1996 թ. քաղաքի կարգավիճակ է ստացել նաև Եղվարդը, իսկ Արգնին և Արգելը նորից դասվել են գյուղերի շարքը: ՀՀ անկախացումից հետո մարզում դադարեցին գործել տասնյակ արդյունաբերական ձեռնարկություններ, ինչի պատճառով կտրուկ մեծացավ գործազրկության մակարդակը: 1988 թվականից հետո մարզի բնակչության թիվը ոչ միայն չի ավելացել, այլև 2020 թ. դրությամբ նվազել է ավելի քան 20.6 հազարով (7.6 %-ով): Մարզում բնակչության թվի նվազումը տեղի է ունեցել առավելապես քաղաքային բնակչության հաշվին (1988-2020 թթ. այն նվազել է ավելի քան 34000-ով կամ 20 %-ով): Այդ տարիներին մարզում դիտվել է գյուղական բնակչության թվի 13.4 % աճ: 2020 թ. Կոտայքը բնակչության ընդհանուր թվով երրորդն էր ՀՀ-ում՝ Արմավիրից և Արարատից հետո, իսկ գյուղական բնակչության թվով՝ չորրորդը:

Աղյուսակ 66

**Կոտայքի մարզի բնակավայրերի և բնակչության թվի շարժնորացը
(1831-2020 թթ.) [8, 12, 14, 15, 16, 26, 29, 40]**

Տպիթելություն	Բնակա-վայրերի թիվը		Բնակչության թիվը			Արդարացման դրամական տոկոսը	Արդարացման դրամական տոկոսը	Արդարացման դրամական տոկոսը
	Դվյունիքական	Պարկագույն	Արդարացման դրամական տոկոսը	Արդարացման դրամական տոկոսը	Արդարացման դրամական տոկոսը			
1831	-	53	7964	-	7964	3,8	3,8	151
1897	-	94	54118	-	54118	26,0	26,0	576
1926	-	82	59528	-	59528	28,5	28,5	726
1959	6	69	78615	19356	59259	37,7	28,4	859
1970	7	59	149580	75415	74165	71,7	35,6	1257
1979	8	59	213682	124869	88813	102,4	42,6	1505
1988	8	61	271588	170985	100603	130,2	48,2	1649
2001	7	62	272469	153981	118489	130,6	56,8	1911
2011	7	62	254397	137481	116916	122,0	56,0	1886
2015	7	62	254990	138465	116525	122,2	55,9	1879
2020	7	62	250900	136800	114100	120,0	54,7	1840

Կոտայքն առաջինն է ՀՀ-ում քաղաքային բնակչության բացարձակ թվով (ուրբանացման մակարդակը՝ 54,5 %): Իրենց տնտեսական ներուժով և նշանակությամբ ՀՀ-ում հայտնի արդյունաբերական կենտրոններ են Հրազդանը, Արտվանը և Չարենցավանը: Ռեկրեացիոն ներուժով և զբուսաշրջային զբավականությամբ ինչպես ՀՀ-ում, այնպես էլ արտերկրում մեծ ճանաչում ունի Ծաղկաձորը:

Մարզն առանձնանում է զյուղերի համեմատաբար մեծ միջն մարդաքանակով (1840 մարդ): Այս ցուցանիշով Կոտայքը եր-

բորդն է ՀՀ-ում Արարատից և Արմավիրից հետո: Մարզում առավել մեծ թիվ են կազմում բնակչության թվով մեծ (1001-3000 մարդ) գյուղերը, որոնց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության ավելի քան 44 %-ը, խոշոր և գերխոշոր գյուղերին՝ մոտ 50 %-ը:


Կոտայքում բնակչությունը տեղաբաշխված է ծովի մակարդակից 1100-2040 մ բարձրության շրջաններում: **Ամենացածրադիրը Զռվունի գյուղն է (1100 մ), բարձրադիրը՝ Սևաբերդը (2040 մ):** Գյուղական բնակավայրերի 63 %-ը տեղաբաշխված է ծովի մակարդակից 1201-1600 մ բարձրության շրջաններում: Մինչև 1200 մ բարձրության տարածքներում կա ընդամենը հինգ գյուղ, որոնց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության 16 %-ը, 2000 մ-ից բարձր շրջաններում՝ երեք գյուղ:

1926-2020 թթ. մարզում կտրուկ նվազել են մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղերի թիվ ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական մեծությունները: Մյուս կողմից՝ տեղի է ունեցել մեծ, խոշոր ու գերխոշոր գյուղերի թվի և դրանց բնակչության մասնաբաժնի կտրուկ ավելացում:

Տնտեսությունը: Կոտայքը ՀՀ առավել զարգացած տնտեսություն ունեցող մարզերից է: Մարզի տնտեսության մեջ առաջատարն արդյունաբերությունն է, որի համախառն արտադրանքի ծավալով վերջին տարիների 2.5-3.0 անգամ գերազանցում էր գյուղատնտեսությանը: 2019 թ. Կոտայքի բաժինը ՀՀ տնտեսության հիմնական հատվածների մեջ ուներ հետևյալ պատկերը՝ արդյունաբերություն՝ 10.5 %, գյուղատնտեսություն՝ 8.3 %, շինարարություն՝ 5.9 %, մանրածախ առևտուր՝ 4.6 %, ծառայություններ՝ 6.1 %: Մարզի արդյունաբերության առաջատար ճյուղը կեկտրահներգետիկան է, որին բաժին է ընկնում ճյուղի համախառն արտադրանքի 35 %-ը: Այստեղ են գտնվում կեկտրահներգիայի արտադրության երկու խոշոր կազմակերպություններ՝

«Հրազդան ջէկը» և «Հրազդան-5» Էներգաբլոկը: Կոտայքում է կենտրոնացած ՀՀ ջերմաէներգետիկ հզորությունների 66 %-ը (1580 հազ. կՎտ): Այն ոչ միայն էլեկտրաէներգիայի արտադրության, այլև էլեկտրաէներգիայի բաշխման գլխավոր հանգույցն է ՀՀ-ում: Մարզի տարածքում գործում են Հրազդանի, Արգելի և Արգնիի ջրէկները և 16 փոքր ջրէկներ: 1960-ական թվականներից Կոտայքի և Գեղարքունիքի տարածքում ձևավորվեց և զարգացավ Հրազդան-Սևանի արդյունաբերական հանգույցը, որի առանցքը Էներգետիկ տնտեսությունն էր: Այն ընդունվում էր Հրազդան, Սևան և Չարենցավան քաղաքները և հարակից գյուղերը: Ներկայումս այս հանգույցը ևս չունի նախկին արտադրական հզորությունները:

Մարզի ԱՀԱ-ի 63 %-ը տալիս է մշակող արդյունաբերությունը, 2 %-ը բաժին է ընկնում արդյունահանող արդյունաբերությանն ու ջրամատակարարմանը, կոյուղուն, թափոնների կառավարմանը և վերամշակմանը: Կոտայքի մշակող արդյունաբերության զարգացած ուղղություններից են մսի, մսամթերքի մշակումը և պահածոյացումը, մրգերի և բանջարեղենի մշակումն ու պահածոյացումը, կաթնամթերքի, այլուրի ու ըմպելիքի արտադրությունը, ապակու և դրանից պատրաստվող իրերի, ցեմենտի արտադրությունը, պողպատի ու թուղի ձուլումը, կահույքի ու ոսկերչական արտադրատեսակների արտադրությունը: Մշակող արդյունաբերության մեջ առաջատար դեր ունեն Չարենցավանի, Հրազդանի, Արովյանի և Նոր Հաճնի մեքենաշինական ձեռնարկությունները:



Քարտեզ 29. Կոտայքի մարզը

Շինանյութերի արդյունաբերության մեջ մեծ մասնաբաժին ունեն Հրազդանի ցեմենտի, Բյուրեղավանի քարի մշակման և Զրաբերի լիթոփիդային պեմզայի արդյունահանման, Աբովյանի ապակե տարաների ձեռնարկությունները: 2018-2019 թթ. մարզում շահագործման են հանձնվել թեթև, տեքստիլ և կերամիկական իրերի արտադրության ձեռնարկություններ:

Մարզի սննդի արդյունաբերության մեջ առաջատար տեղ են գրահեցնում «Արզնի» և «Բջնի» հանքային ջրերի շալցումը, ինչպես նաև Արովյանի, Լուսակերտի, Արզնու և Գետամեջի թռչնամսի արտադրության ձեռնարկությունները: Կարի վերամշակման կենտրոններ են Հրազդանը (պանրի) և Արովյանը (կաթնամթերքի): Գառնի գյուղը հայտնի է մրգահյութերի նախնական մշակմամբ: Արովյանը հայտնի է գարեջրի արտադրությամբ:

Գյուղատնտեսությունը: Մարզի ազգովկիմայական ռեսուրսները նպաստավոր են ինչպես ջերմասեր (խաղող, ծիրանենի, դեղձենի և այլն), այնպես էլ բարեխառն գոտու մշակաբույսերի աճեցման ու անասնապահության զարգացման համար: Այս ամենը գուգակցվում է **մերձքաղաքային գյուղատնտեսության** մասնագիտացման հնարավորություններով, որը պայմանավորված է ոչ միայն Երևանի շուկայի պահանջով, այլև սեփական քաղաքային բնակչությանը և մարզի ռեկրեացիոն գոտուն թարմ մթերքներով ապահովելու անհրաժեշտությամբ:

Կոտայքը ԳՀԱ-ի տեսակարար կշռով միջին տեղ է զբաղեցնում ՀՀ-ում: Ճյուղի արտադրանքի մեջ **առավել բարձր է անասնապահության մասնաբժինը (71.4 %, 2019 թ.):** Հացահատիկի և հատիկարնդենային մշակաբույսերի ցանքատարածքները մարզում տատանվում են 11.5-12 հազ. հա-ի սահմաններում, միջին բերքատվությունը 20-25 ց/ հա է: Մարզը տալիս է ՀՀ-ում արտադրյալի հացահատիկայինների 6.5-8 %-ը: Դրանց մշակության հիմնական տարածքներն ընկած են սարավանդային ու լեռնատափաստանային շրջաններում: Մշակվող հիմնական հացահատիկայիններից են **աշնանացան և զարնանացան ցորենը, գարին, հաճարը և վարսակը:** Կարտոֆիլի ու բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածքները մարզում համեմատաբար փոքր մակերես են զբաղեցնում: Կոտայքի երկրագործության մեջ առավել զարգացած ճյուղը պատճի ու **հատապտղի** արտադրությունն է:

Մարզը տալիս է ՀՀ-ում պտողի ու հատապտղի 10 %-ը: Այստեղ տարեկան արտադրվում են 20-35 հազ. տ պտող ու հատապտուղ: Տարածման հիմնական շրջանները մինչև 1500 մ բարձրության տարածքներն են (Նախրիի և Արովյանի տարածաշրջաններում):

Կոտայքին բաժին են ընկնում ՀՀ ԽԵԿ-ի գլխաքանակի ավելի քան 9 %-ը (53 հազ. գլուխ, 2019 թ.), խոզերի գլխաքանակի 1.2 %-ը և ոչխարների ու այծերի գլխաքանակի 6 %-ը: Զարգացած է կաթնատու և կաթնամսատու տավարաբուծությունը: Մարզը տալիս է ՀՀ-ում արտադրվող կաթի 10 %-ը, մսի 10.5 %-ը, ձվի ավելի քան 17 %-ը: Այստեղ գործում են Լուսակերտի, Արգնու և Գետամեջի ՀՀ մասշտարով խոշոր թռչնաֆարբիկաները: Դրանց արտադրանքի որոշ մասը արտահանվում է:

2017-2019 թթ. մարզում ՄԵԱ գլխաքանակը նվազել է մոտ 6 հազարով: Անասնապահության այս ճյուղն առավել զարգացած է Կոտայքի բարձր լեռնային գյուղական բնակավայրերում:

Կոտայքը գյուղատնտեսական մի շարք ցուցանիշներով և մթերքների արտադրությամբ ՀՀ-ում զբաղեցնում է առաջնակարգ տեղ, մասնավորապես ձվի և խոզի մսի արտադրությամբ և խոզերի գլխաքանակով: Պատղատու այգիների տարածքով Կոտայքը զիջում է Արմավիրի, Արարատի ու Արագածոտնի մարզերին:

Կոտայքի ազրոկիմայական ռեսուրսները, ՏԱԴ-ի և տնտեսության մեջ զբոսաշրջության ու ռեկրեացիայի նշանակալից դերն իրենց ազդեցությունն են թողել գյուղերի արտադրական մասնագիտացման վրա: Արովյանի տարածաշրջանի բարձրադիր գոտու գյուղերն ունեն առավելապես տավարաբուծական մասնագիտացում (երկրագործությանը զուգակցված), միջին և ցածրադիր գոտու գյուղերը մասնագիտացված են այգեգործության ու բանջարաբուծության ուղղություններով: Հրազդանի տարածաշրջանում բարձրադիր գյուղերն ունեն անասնապահական մաս-

նազիտացում, ցածրադիր գոտում՝ հացահատիկայինների (աշ-նանացան ցորենի, զարու և հաճարի)՝ անասնապահությանը զուգակցված: **Նախրիի տարածաշրջանում** Արագյուղը և Բուժականը, որոնք բարձրադիր են, ունեն անասնապահական (Երկրագործությանը զուգակցված), մնացածները՝ այգեգործական ու բանջարաբուծական մասնագիտացում:

Վերջին 25 տարում մարզի գյուղացիական տնտեսությունների արտադրական մասնագիտացման մեջ վերացել է ծխախոտի մշակությունը, և ձևավորվել են ջերմատնային տնտեսություններ:

Կոտայքն ունի զարգացած տրանսպորտային համակար: Այն ապահովում է ոչ միայն բեռների և ուղևորների տեղափոխումը մարզի բնակավայրերի ու հանգստյան տների միջև, այլև տարանցիկ դեր ունի ինչպես ՀՀ այլ տարածքների, այնպես էլ հարևան Վրաստանի ու Իրանի հետ տրանսպորտային հաղորդակցության տեսանկյունից: Առաջիկայում նման նշանակություն կստանա մարզի տարածքով անցնող Իրանից դեպի Հայաստան-Վրաստան-Շուսաստանի Դաշնություն բարձրավոլտ (400 հազ. կՎտ) էլեկտրահաղորդման գիծը:

Մայրաքաղաքի մոտիկությունը ազել է Կոտայքի սպասարկման ոլորտի զարգացման վրա: Այստեղ 10 հազ. բնակչի հաշվով բժիշկների քանակը 1.4 անգամ պակաս է միջին հանրապետականից (56), հիվանդանոցային մահճակալների թիվը՝ ավելի քան 2 անգամ: Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող օբյեկտների քանակով գերազանցում է ՀՀ միջին ցուցանիշը (1.9 և 1.7): 2019 թ. գործում էին մանրածախ առևտրի 1317 օբյեկտ, նախադպրոցական 54, հանրակրթական 101, նախնական մասնագիտական 7 մշակութային 25, միջին մասնագիտական 6 հաստատություններ: Կոտայքում կան մասնագիտացված 2 պետական թատրոն, 5 թանգարան, 57 գրադարան: **Մարզի սպասարկման ոլորտում բավականին մեծ է բանկային ծառայությունների դերը:**

Հարցեր և առաջադրանքներ

1. Վերլուծե՞ք և գնահատե՞ք Կոտայքի մարզի սահմանները և ՏԱԴ-ի բաղադրիչները:

2. Կատարե՞ք Կոտայքի բնառեսուրսային ներուժի վերլուծություն և գնահատում:

3. Ի՞նչ առանձնահատկություններ ունի Կոտայքի տարաբնակեցման համակարգը: Կատարե՞ք մարզի բաղադրների գործառութային դասակարգում և վերլուծություն:

4. Կոտայքի տնտեսության ո՞ր ճուղերն ունեն հանրապետական նշանակություն: Հիմնավորե՞ք պատասխանը: Առանձնացրե՞ք առավել խոշոր և հայտնի արտադրական ձեռնարկությունները:

5. Ի՞նչ պայմաններ և գործոններ են նպաստել Կոտայքի ինդուստրացմանը:

6. Կատարե՞ք Կոտայքի բնառեկրեացիոն ներուժի վերլուծություն: Ի՞նչ դեր ունի գրոսաշրջային ինդուստրիան մարզի տնտեսության մեջ:

7. Շրջակա միջավայրի պահպանության ի՞նչ հիմնախնդիրներ կան Կոտայքի մարզում:

8. Կոտայքի մարզի հեռանկարային զարգացման ի՞նչ առաջնահերթություններ կառանձնացնեք:

5.8. Գեղարքունիքի մարզը

Տնտեսության զարգացման նախադրյալները: Տարածքի մակերեսով՝ Գեղարքունիքն ամենամեծն է ՀՀ-ում (5349 կմ², 1280 կմ²-ը՝ Սևանա լիճը): Մարզին բաժին է ընկնում ՀՀ տարածքի մոտ 18 %-ը: 2020 թ. մարզին բաժին էին ընկնում ՀՀ բնակչության 7.7 %-ը, գյուղական բնակչության 15.1 %-ը, քաղաքային բնակչության 3.5 %-ը: Գեղարքունիքում է գտնվում ՀՀ մշտական բնակչություն ունեցող գյուղերի 9.6 %-ը (89 գյուղ): Մարզում կան մշտական բնակչություն չունեցող 4 գյուղ (այդ թվում՝ նաև Արծվաշենը):

Գեղարքունիքն ընդգրկում է Գավառի, Մարտունու, Կրասնոսելսկի, Սևանի և Վարդենիսի տարածաշրջանները և հիմնականում համապատասխանում է Սևանի սոցիալ-տնտեսական շրջանի տարածքին: Արևելյան մասում սահման ունի Աղրբեջանի (Կրասնոսելսկի հատվածում) հետ, հյուսիսից սահմանակցում է Տավուշի, հարավից՝ Վայոց ձորի, արևմուտքից՝ Կոտայքի, հարավ-արևմուտքից՝ Արարատի մարզերին: Սևանի, Վարդենյաց և Սոթքի լեռնանցքներով՝ Գեղարքունիքը տրանսպորտային կապ է հաստատում հարևան մարզերի և ԱՀ-ի հետ, Դիլիջանի թունելով կապված է Տավուշին: Մարզի տարածքի ձգվածությունը հյուսիսարևմուտքից հարավ-արևելք 115 կմ է, արևմուտքից արևելք՝ 85:

Մարզի տարածքը եռանկյունաձև գոգավորություն է, որի հատակը զբաղեցնում է Սևանա լիճը, որի հայելու մակերեսը գտնվում է ծովի մակարդակից 1900.57 մ բարձրության վրա: Սևանա լճի թափվող գետերից առավել հայտնի են Արգիծին, Գավառագետը, Մասրիկը, Զկնագետը: Մարզում հայտնի են Աժդահակի և Արմադանի խառնարանային լճերը, որոնք ունեն մինչև 50 մ տրամագիծ և 15 մ խորություն:

Գեղարքունիքում մեծ տարածք են զբաղեցնում Սևանա լիճը

Եզրավորող տափարակ դաշտերը և մեղմաթեք լանջերը, որոնք աչքի են ընկնում բնակեցման ու տնտեսության զարգացման համար համեմատաբար նպաստավոր պայմաններով: Գեղարքունիքը ՀՀ ամենաբարձրադիր մարզն է: Գոզավորության հատակը Արարատյան հարթությունից բարձր է մոտ 1000 մ: Մինչև 1500 մ բարձրության տարածքները կազմում են մարզի 2.4 %-ը, 1501-2000 մ-ը՝ 21.1 %-ը, 2001-2500 մ-ը՝ 46.8 %-ը և 2500 մ-ից բարձր՝ 29.7 %-ը: Մարզում մինչև 8⁰ թերությունները կազմում են տարածքի շուրջ 48 %-ը, իսկ 20⁰-ից բարձր՝ 10.8 %-ը: Տարածքի նման ուղղաձիգ բաշխվածության պատճառով էլ Գեղարքունիքում տիրապետող լեռնատափաստանային ու ալպյան լանդշաֆտներն են՝ բերրի սևահողերով, որոնք բարձր լեռնային գոտում փոխարինվում են մարգագետնային հողերով:

Մարզում Արեգունու և Սևանի լեռնաշղթաների դեպի լիձն ուղղված լանջերը զարիթափ են, ժայռոտ, խիստ կտրտված են ձորերով: Գեղարքունիքի արևմտյան մասում լանջային տարածքները մեղմաթեք են: Մարզի ամենահարթ տեղամասերը գտնվում են հարավային և հարավարևելյան մասում՝ 1900-2200 մ բարձրություններում, որոնք ունեն բնակեցման և տնտեսության զարգացման համար լավ ու նպաստավոր պայմաններ: Այստեղ լճի և լեռնազանգվածի միջև ընկած է Մասրիկի եռանկյունաձև դաշտը, որը ծածկված է լճային հզոր, ալյուվիալ ու պրոյուվիալ նստվածքներով, որոնք օգտագործվում են կամ որպես վարեկահողեր, կամ որպես արոտավայրեր: Տնտեսության զարգացման համար բարենպաստ պայմաններ ունեն նաև Արգիծի և Գավառագետի դաշտերը, որոնք ծածկված են արգավանդ հողերով: ՀՀ-ում հողային ռեսուրսներով Գեղարքունիքն առավել ապահովված մարզերից է: Մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական հողատարածքները կազմում են 1.5, վարեկահողերը՝ 0.35 հա:

Գեղարքունիքի կլիմայական պայմանները բավական խիստ

Են և ձմեռային ամիսներին միջնակավայրային տրանսպորտային կապի որոշակի խնդիրներ են առաջացնում: Լճի ափամերձ հատվածում միջին հունվարյան ջերմաստիճանը -5° - -6° C է, մարզի տարածքի մեծ մասում գերակայում են մինչև -8° C ջերմաստիճանները: Ամառը բավականին տաք է, հուլիսան միջին ջերմաստիճանը $+18$ - 20° է: **Գեղարքունիքն ՀՀ-ում առանձնանում է արևափայլքի տարեկան միջին տևողության առավելագույն բարձր ցուցանիշով (2700 ժամ):** Վերջինս կարող է օգտագործվել ինչպես էներգետիկ, այնպես էլ ռեկրեացիոն նպատակներով: Տեղումների տարեկան քանակը մարզի մեծ մասում տատանվում են 350-600 մմ-ի սահմաններում՝ Գեղամա և Վարդենիսի լեռներում հասնելով մինչև 900մմ-ի: **Առավել ցուրտ ձմեռներին Սևանա լիճը սառցակալում է:**

Մարզի տարածքը հարուստ է **ոսկու** (Սոռթ), **քրոմիտի** (Շորժա), **բազալտի** տարբեր տեսակների, **պետխտի**, **հրակայուն կավերի**, շինանյութերի այլ տեսակների, **հանքային ջրերի** (Լիճը, Գավառ, Սևան) պաշարներով: ՀՀ-ի համար բացառիկ նշանակություն ունեն **Սևանա լճի քաղցրահամ ջրի պաշարները** (ավելի քան 34 մլրդ խմ), ինչպես նաև Սևանի ավազանի **գեղատեսիլ բնությունը**, լողափերը, խառնարանային լճերը, չինգիլները, Նորատուսի խաչքարերը, նախառարարտական և ուրարտական ժամանակաշրջանի բերդերի, ամրոցների, բնակավայրերի մնացորդները: Լճաշեն գյուղի մերձակայքում լճից ազատված տարածքներում հայտնաբերվել են 5000-ամյա դամբարաններ և այլ առարկաներ:

Տարաբնակեցումը, բնակչությունը և բնակավայրերը: Գեղարքունիքը բնակեցված է պատմական հնագույն ժամանակներից: Այդ մասին են վկայում մարզում հայտնաբերված կիկլոպյան ամրոցները, Ուրարտական ժամանակաշրջանի բերդերը, **Ռուսա թագավորի սեպագիր** արձանագրությունները և հարյուրավոր այլ հուշարձաններ:

Ոուսաստանին միանալուց հետո Ալաշկերտից, Մուշից, Բայզետից, Խզիրից, Բուլանրից և Պարսկահայրից (հիմնականում Սակուից) հարյուրավոր հայ ընտանիքներ հիմնադրվեցին այստեղ: 1831 թ. Գեղարքունիքի ներկայիս տարածքում գոյություն ուներ 69 գյուղական բնակավայր, որոնց բնակչության թիվը կազմում էր 17915 մարդ: Համեմատաբար խիստ էին բնակեցված Սևանի և Գավառի տարածաշրջանները: Դրանցում էլ գտնվում էին առավել մարդաշատ գյուղական բնակավայրերը (Նոր Բայզետ՝ 1346, Կարմիրգյուղ՝ 709, Նորատուս՝ 605, Սարուխան՝ 700, Ծովագյուղ՝ 845 մարդ): Նոսր էին բնակեցված Մարտունու և Վարդենիսի տարածաշրջանները: 1897 թ. մարզի բնակչության թիվն անցնում էր 101 հազարից: 1850 թ. լինելով նոր կազմավորված Երևանի նահանգի վարչական միավորներից մեկի կենտրոն՝ Նոր Բայզետը դարձել էր գավառական քաղաք: Գեղարքունիքի մեջ մտնող տարածաշրջանների բնակավայրերը ավանդաբար աշքի ևն ընկել բնակչության համեմատաբար բարձր բնական աճով: 1959-1989 թթ. ընթացքում մարզում բնակչության թիվն ավելացել է մոտ 92.5 հազարով կամ ավելի քան 57 %-ով: Հետագա ավելի քան երեք տասնամյակի ընթացքում տեղի է ունեցել մարզի բնակչության թվի նվազում, որը բացարձակ թվով կազմել է 26.6 հազար կամ 10.5 %: Ինչպես ամբողջ ՀՀ-ում, այստեղ ևս բնակչության թվի նվազման հիմնական պատճառն այդ տարիներին եղել է գործազրկության մակարդակի բարձրացմամբ պայմանավորված արտագաղթողների թվի ավելացումը: Բացի այդ՝ նվազել է նաև բնական հավելածի ցուցանիշը: Որոշակի դեր է ունեցել նաև մարզին բնորոշ, դեռևս խորհրդային տարիներին ձևավորված արտագնա աշխատանքի մեկնողների համեմատաբար բարձր տեսակարար կշիռը, որի հետևանքով դրանց որոշակի մասը հիմնական արտագաղթել է:

Բնակչության խտությամբ Գեղարքունիքը 1.8 անգամ զիջում

Է ՀՀ միջին ցուցանիշին, գյուղական բնակչության խտությամբ մոտ է ՀՀ միջինին: Բնակչության խտության տարրերությունները բավական մեծ են: Խիս են բնակեցված Սևանի արևմտյան ու հարավարևմտյան մերձակային տարածքները, նոսր՝ լճի հարավարևելյան ու արևելյան շրջանները:

Աղյուսակ 67

**Գեղարքունիքի մարզի բնակչության և բնակավայրերի թվի
շարժնորացը (1831-2020 թթ) [8, 12, 14, 15, 16, 26, 29, 40]**

Տարբերվեր	Բնակավայրերի թիվը		Բնակչության թիվը			Բնակչության խտությունը	Գյուղական բնակչությունը	Գյուղակավայրերի միջ. մարդարանակը
	քաղաքային	գյուղական	ընդամենը	քաղաքային	գյուղական			
1831	-	69	17915	-	17915	4.4	4.4	260
1897	1	107	101169	8486	92683	24.8	22.7	866
1926	1	115	121701	8447	113254	29.9	27.8	985
1959	1	122	161872	8751	153121	39.7	37.6	1255
1970	5	96	209276	48789	160486	51.4	39.4	1672
1979	6	89	238145	71902	166243	58.4	40.8	1868
1989	6	89	254363	90287	164076	62.4	40.2	1844
2001	5	93	237650	78957	158693	58.3	39.0	1783
2011	5	93	235075	71423	163662	57.7	40.0	1839
2015	5	93	232988	70194	16274	57.0	40.0	1829
2020	5	93	227700	66600	161100	56.0	39.6	1831

Գեղարքունիքը ՀՀ առավել թույլ ուրբանացված մարզերից է: Մինչև 1961 թվականը մարզում քաղաքային միակ բնակավայրը Գավառն էր: Ուրբանացման առավել բարձր մակարդակ մարզն ունեցել է 1980-ական թթ. վերջերին (1989 թ.՝ 35.5 %): Վերջին երեք տասնամյակի ընթացքում մարզում տեղի է ունեցել քաղաքաբնակների ինչպես բացարձակ թվի, այնպես էլ հարաբերական

մեծության նվազում: **1989-2020 թթ. մարզում քաղաքային բնակչության բացարձակ թիվը նվազել է մոտ 23.7 հազարով կամ ավելի քան 26 %-ով:** Մարզի ներկայիս 5 քաղաքները մինչև 1995 թ. վերջը համարվում էին համապատասխան վարչական շրջանների կետրոններ: Բացի վարչականից՝ դրանք իրականացնում էին նաև տնտեսաբարտադրական, սոցիալ-կենցաղային, առողջապահական, մշակութային, կրթական և այլ կարգի ծառայություններ վարչական տարածքի գյուղական բնակավայրերի համար: Դրանց զգալի մասը ներկայում ևս իրականացվում է այդ քաղաքների կողմից: Մինչ 1995 թ. վերջը քաղաքատիպ ավանի կարգի համարվածակ ունեցող **Գագարին** բնակավայրը դարձել է գյուղական բնակավայր և ինչպես նախկինում, մտնում է Սևան քաղաքի վարչական ենթակայության տակ: Իրենց տնտեսական նշանակությամբ, ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ հիմա, ոչ միայն Գեղարքունիքի մարզում, այլ նաև հանրապետությունում հայտնի են մարզկենտրոն Գավառը և Սևան քաղաքը: Մարզկենտրոն Գավառը նախախորհրդային ժամանակաշրջանի ՀՀ 5 քաղաքներից մեկն է: Գեղարքունիքում բնակչությունը տեղաբաշխված է ծովի մակարդակից 1201-2350 մ բարձրություններում: **Բնակչության ավելի քան 79 %-ը ապրում է 1801-2000 մ բարձրության գոտում:** Այստեղ են ընկած, բացի **Ճամբարակից**, մնացած բոլոր քաղաքային բնակավայրերը և մշտական բնակչություն ունեցող գյուղական բնակավայրերի 51 %-ը, որոնց բաժին է ընկնում մարզի գյուղական բնակչության ավելի քան 73 %-ը: **Գեղարքունիքի տարածքի 1801-2000 մ բարձրության գոտին հանրապետության առավել խիտ բնակեցված շրջաններից մեկն է:** Այստեղ բնակչության խտությունը կազմում է 195, գյուղական բնակչության խտությունը՝ մոտ 100 մարդ/կմ²:



Քարտեզ 30. Գեղարքունիքի մարզը

Վերջինս ՀՀ գյուղական բնակչության միջին խտությունից բարձր է մոտ 2.5 անգամ: Գյուղական բնակչության քանակով հաջորդը ծովի մակարդակից 2001-2200 մ բարձրությամբ գտնին է, որտեղ ապրում է մարզի ամբողջ գյուղական բնակչության մոտ 25 %-ը: Այստեղ է գտնվում մարզի մշտական բնակչություն ունեցող գյուղերի 36 %-ը: Չնայած գյուղական բնակչության խտությամբ այս գտնին զգալիորեն զիջում է նախորդ գտտուն, սակայն ՀՀ տարածքում 2001-2200 մ բարձրության գոտու առավել խիտ բնակեցված շրջաններից է (փոքր մեծությամբ զիջում է Արագածոտնի մարզի համապատասխան գտտուն):

Մարզի գյուղական տարածքների ու բնակավայրերի ցանցի ձևավորման վրա իր ազդեցությունն է թողել Սևանա լիճը: Այստեղ բնակավայրերը տեղաբաշխված են հիմնականում մերձլճային հարթություններում: Առանձին շրջաններում գյուղերի միջև եղած հեռավորությունը չի անցնում 3-4 կմ-ից, գերակշռում են բնակչության թվով մեծ ու խոշոր գյուղերը: **Գեղարքունիքում գերխոշոր գյուղերում ապրում է մարզի գյուղական բնակչության գրեթե 40 %-ը, իսկ մարզի խոշոր ու գերխոշոր գյուղական բնակավայրերին (3000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերին) բաժին է ընկնում գյուղական բնակչության ավելի քան 70 %-ը:** Ոչ միայն Գեղարքունիքի մարզի, այլ նաև հանրապետության գերխոշոր գյուղերից են Վարդենիկը, Սարուխանը, Ներքին Գետաշենը, Զոլարքը, Նորատուսը և այլն:

1926-2020 թթ. Գեղարքունիքում գյուղական բնակչության բաշխումն ըստ ծովի մակարդակից ունեցած բարձրության գոտիների էական փոփոխություններ չի կրել: Եթե նախկինում, ըստ գերակշռող մարդաքանակի, Գեղարքունիքին բնորոշ էր մեծ ու խոշոր, ապա ներկայումս՝ գերխոշոր, խոշոր ու մեծ գյուղային տարաբնակեցումը:

Իրենց արտաքին տեսքով, բարեկարգվածության աստիճանով և սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով Գեղարքունիքի գյուղերն (մասնավորապես՝ Մարտունու և Գավառի տարածաշրջանների) ակնառու տեղ են գրավում ՀՀ-ում: Նախկին խարիսուլ գյուղերն արմատապես վերափոխվել են, դարձել բարեկարգ բնակավայրեր: Բացի տեղային ռեսուրսներից (Սևանա լճի ձկնային հարստությունները եկամտի լրացուցիչ աղբյուր են եղել ավագանի բազմաթիվ գյուղերի համար), այդ գործընթացում էական դեր են ունեցել նաև դեռևս խորհրդային տարիներին ձևավորված և այժմ ավելի մեծ ծավալների հասած արտագնա աշխատանքից ստացված բնակչության եկամուտները: Գեղարքունի-

քում հստակորեն առանձնանում են տարաբնակեցման արեալներ, որոնք համընկնում են լեռնային գոգահովիտների հետ (Արգիճի, Ծակքար, Գավառագետ, Գեղարքունիջուր, Մասրիկ և այլ գետերի) և տարածված են գոգավորության առավել հարթ շրջաններում, որտեղ կան մշակելի հողերի խոշոր զանգվածներ: Գեղարքունիքին առավել բնորոշ է **տարաբնակեցման խմբային ձևը**: Հանդիպում են նաև շղթայաձև ու գծային տարաբնակեցման ձևերը:

Տնտեսությունը: Մարզի տնտեսության կառուցվածքում առաջատարը գյուղատնտեսությունն է: Վերջինիս համախառն արտադրանքով մարզը 2014 թ. առաջինն էր հանրապետությունում (18.1 %), 2019 թ.՝ երրորդը (13.2 %)¹ Արմավիրից և Արարատից հետո: 2109 թ. Գեղարքունիքին բաժին էին ընկնում ՀՀ ԱՀԱ-ի 3.3 %-ը, ԳՀԱ-ի 13.2 %-ը, շինարարական աշխատանքների 5 %-ը, մանրածախ առևտրի 1.8 %-ը, ծառայությունների 0.8 %-ը:

Գյուղատնտեսությունը: Մարզի գյուղատնտեսության մեջ առաջնային նշանակություն ունեն **հացահատիկային տնտեսությունը**, կարտոֆիլի, բանջարեղենի և անասնաբուծական մթերների արտադրությունը: Վերջին հինգ տարիներին ազրոկլիմայական պայմանների ոչ կայուն վիճակի պատճառով մարզի բուսաբուծական և անասնաբուծական համախառն արտադրանքների հարաբերակցությունը ԳՀԱ-ի կառուցվածքում կրել են փոփոխություններ: 2014 թ. երկրագործության տեսակարար կշիռը մարզի գյուղատնտեսության մեջ կազմել է շուրջ 66 %, 2019 թ.՝ 35 %: Հացահատիկի և հատիկաքննիկների ցանքատարածքները թեև վերջին հինգ տարիներին նվազել են մոտ 15 հազ. հա-ով, սակայն դրանց մակերեսով մարզը ՀՀ-ում զիջում է միայն Շիրակին: **Գեղարքունիքը տալիս է ՀՀ հացահատիկային և հատիկաքննիկներին մշակաբույսերի համախառն բերքի մոտ 15-16 %-ը:** Երկրագործության այս ճյուղի գլխավոր խնդիրը բերքատվության մի-

զին ցուցանիշի բարձրացումն է: Այս ցուցանիշով Գեղարքունիքը զիջում է ՀՀ մարզերի մեծ մասին: Դրանց մշակության առավել ընդարձակ տարածքներն ընկած են Մարտունու, Վարդենիսի և Գավառի տարածաշրջաններում: Գեղարքունիքը **ՀՀ-ում առաջինն է կարտոֆիլի ցանքատարածքներով**, սակայն սրանց ցանքատարածքները ևս 2015-2019 թթ. նվազել են մոտ 9 հազ. հա-ով: Մարզին բաժին է ընկնում **ՀՀ կարտոֆիլի ցանքատարածքների և համախառն բերքի մոտ 40 %-ը**, իսկ միջին բերքատվությամբ զիջում է Արարատին, Արմավիրին, Շիրակին ու Արագածոտնին:

Գեղարքունիքի ագրոկլիմայական պայմաններում առավել զարգացած է քիչ թե շատ **ցրտադիմացկուն կաղամքի և զազարի մշակությունը**: Դրանց թե՛ ցանքատարածքներով, թե՛ համախառն բերքով Գեղարքունիքը զիջում է Արմավիրի ու Արարատի մարզերին (առանձին տարիներին՝ նաև Շիրակին): Մարզում արտադրվում է **ՀՀ բանջարանցային մշակաբույսերի համախառն արտադրանքի 5.6 %-ը**:

Գեղարքունիքում զբաղվում են նաև **ցրտադիմացկուն պտուղների** (տանձի, խնձորի) աճեցմամբ: Մարզին բաժին են ընկնում **ՀՀ պտղի և հատապտղի տնկարկների տարածքների 3.4 %-ը** և համախառն բերքի **3.5-4.5 %-ը** (Արարատյան դաշտում ցրտահարության տարիներին՝ մինչև 9-10 %-ը): **Մարզի համեմատարար բարենպաստ կլիմայական պայմաններ ունեցող տարածքներում հիմնվել են նաև ծիրանի այգիներ**: Խաղողի և բուտանային մշակաբույսերի աճեցումը մարզում բացակայում է:

Գեղարքունիքում վերջին տարիներին աշխատանքներ են տարվում մարզի ազրոկլիմայական ռեսուրսների և զյուղատնտեսության զարգացման առկա ներուժի առավել արդյունավետ օգտագործման ու տնտեսության այս ճյուղի դիվերսիֆիկացման ուղղությամբ: Մարզը մեծ հնարավորություններ ունի նաև ջերմոցային տնտեսության զարգացման համար:

Մարզի գյուղական բնակավայրերի ցանքատարածքների ոռոգման համար օգտագործվում են տեղական ջրային ռեսուրսները (Մասրիկի ջրանցք, գետերի ջրեր, պոմպակայաններով Սևանից ջրի օգտագործում և այլն): Նախատեսվում է կառուցել նոր ջրամբար Արգիձի գետի վրա, որը հնարավորություն կտա ոռոգելու Գեղիովիտ, Մաղինա, Վ. Գետաշեն, Ն. Գետաշեն գյուղերի և Մարտունի քաղաքի հողատարածքները:

Գեղարքունիքի լճափյա գյուղական բնակավայրերի համար եկամտի լրացուցիչ աղբյուր են Սևանի ձկնային պաշարները և ուկերեացիոն ռեսուրսները, գյուղական և ագրոգրոսաշրջության զարգացման նախադրյալները:

Գեղարքունիքին բաժին է ընկնում **ՀՀ-ում ԽԵԿ-ի գլխաքանակի մոտ 18 %-ը** (2019 թ.): Այս ցուցանիշով Գեղարքունիքն առաջինն է ՀՀ-ում, ոչխարների և այծերի գլխաքանակով զիջում է միայն Սյունիքի ու Արմավիրի մարզերին, երրորդն է ձիերի գլխաքանակով (1.3 հազ.): **Անասնաբուժական հիմնական արտադրանքների արտադրությամբ** (մսի և կաթի) **Գեղարքունիքը 2019 թ. առաջինն էր ՀՀ-ում:** Մարզը տախս է ՀՀ-ում արտադրվող մսամթերքի շուրջ 16 %-ը և կաթի 18-19 %-ը, բրդի մոտ 14 %-ը:

Տասնամյակներ շարունակ Գեղարքունիքը եղել և մնում է ՀՀ-ում **թարմ ձկան մատակարարման հիմնական շրջանը:** 1990-ական թթ. ՀՀ բնակչությանը պարենամթերքով ապահովելու և մարզի բնակչության սոցիալական խնդիրների լուծման նպատակով Սևանի ձկնային պաշարները զգալիորեն կրծատվեցին, վտանգվեց առանձին ձկնատեսակների վերաբռնադրության կանոնավոր ցիկլը: Այդ երևույթը շարունակվեց նաև հետագա շուրջ մեկուկես տասնամյակի ընթացքում (մինչև 2014-2015 թվականները): **Վերջին տարիներին նկատվում են լճում ձկնային պաշարների ավելացման միտում ու արժեքավոր ձկնատեսակների պաշարների ավելացում:**

Մարզի գյուղացիական տնտեսությունների արտադրական մասնագիտացման մեջ անկախացումից հետո տեղի ունեցած հիմնական փոփոխությունը Վարդենիսի և Մարտունու տարածաշրջաններում ծխախոտազործության փոխարեն կարտոֆիլի ու հացահատիկի մշակության ընդայնումն է:

Արդյունաբերությունը: Մարզի արդյունաբերության կառուցվածքում առաջատարը **հանքագործական ուղղությունն** է: Կարևոր դեր ունի նաև մշակող արդյունաբերությունը, որտեղ առավել մեծ տեսակարար կշիռ ունի **սննդամթերքի արտադրությունը:** 2015-2019 թթ. մարզում արդյունաբերական արտադրանքի ծավալն ավելացել է շուրջ 33 %-ով, սակայն դրա մասնաբաժինն ՀՀ-ում արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում ավելացել է ընդամենը 0.2 %-ով: Մարզի արդյունաբերական արտադրանքի կառուցվածքը, ըստ արտադրության բաժինների, 2019 թ. ուներ հետևյալ պատկերը՝ հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում՝ 33.3 %, մշակող արդյունաբերություն՝ 57.8 %, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում՝ 7.9 %, ջրամատակարարում, կոյուղի, թափոների կառավարում և վերամշակում՝ 1.0 %:

Սովորում հանքանյութի արդյունահանման ծավալներն առայժմ ամենամեծն են ՀՀ-ում: Դրանք վերամշակվում են **Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայում:** Այս ոլորտում մնացած ձյուղերի բաժինը զգալիորեն պակաս է:

Մշակող արդյունաբերության ձյուղերից մարզում առավել զարգացած են տեղական հումքի բազայի վրա զարգացող կաթնամթերքի և մսամթերքի արտադրությունը, հանքային ջրերի շշալցումը, այսուրի արտադրությունը, հացաբուլկեղենի, գարեջրի և այլ արտադրությունները:

Մարզի արդյունաբերական հայտնի և եզակի կառույցներից է **Սևան-Հրազդան կասկադի ջրէկներից Սևանի ստորգետնյա ջրհեր:**

Դեռևս խորհրդային տարիներին մարզի աշխատանքային ռեսուրսների ու արդյունաբերական հոլմքի պաշարների արդյունավետ օգտագործման նպատակով Գեղարքունիքի բոլոր քաղաքներում և մի շաքր գյուղական բնակավայրերում ստեղծվել ու գործում էին Երևանի և այլ քաղաքների մերենաշինական ձեռնարկությունների մասնաճյուղեր, շինանյութերի, թեթև և սննդի արդյունաբերության ձեռնարկություններ (գորգագործական, կարի, սարքաշինական և այլն): Հայտնի պատճառներով դրանց զգալի մասը ներկայումս չի գործում, մի մասն էլ գործում է շատ փոքր հզորություններով:

Գեղարքունիքի համար առաջնահերթ խնդիրներ են մարզի նախկինում ունեցած արդյունաբերական ներուժի վերականգնումը, տեղական ռեսուրսների բազայի վրա վերամշակող արդյունաբերության ձյուղերի ընդլայնումն ու զարգացումը:

Գեղարքունիքի տնտեսության զարգացման համար բացառիկ դեր կարող են ունենալ տրանսպորտային համակարգի զարգացումն ու կատարելազործումը: Մարզի տարածքով անցնող միջպետական 283 և հանրապետական նշանակության 113 կմ ավտոմայրուղիների բարեկարգումը, ինչպես նաև նորերի ստեղծումն էլ ավելի կմեծացնեն Գեղարքունիքի ՏԱՆ-ի ներուժը և բարենպաստ հնարավորություններ կստեղծեն տնտեսության զարգացման համար, ինչն էականորեն կավելացնի նաև դեպի Գեղարքունիքի մարզ զբոսաշրջային այցելությունների թիվը և զբոսաշրջային տնտեսության զարգացման հնարավորությունները: Մարզի տարածքով է անցնում Երևան-Սոթք երկաթուղին, որն ունի կարևոր նշանակություն:

Մարզի տարածքում է գտնվում «Սևան ազգային պարկ»: Գեղարքունիքը, իր բնակչության թվաքանակին համապատասխան, սոցիալական ոլորտի առանձին ուղղություններում ՀՀ-ում ունի զգալիորեն փոքր ցուցանիշներ: Մարզին բաժին են ընկնում

ՀՀ-ում ծառայությունների 0.9 %-ը և մանրածախ առևտրի 2 %-ը: Մարզում գործում են մանրածախ առևտրի շուրջ 757 օբյեկտ, պետական նախադպրոցական 49, հանրակրթական 125, մշակութային ոլորտի 19, նախնական մասնագիտական 4, միջին մասնագիտական 7, բարձրագույն 1 կրթական հաստատություններ: 10 հազ. բնակչին բաժին ընկնող հիվանդանոցային մահճակալների քանակով (730) Գեղարքունիքը զիջում է միայն Շիրակին, իսկ թժիշկների ու միջին բուժանձնակազմի ցուցանիշով՝ մնացած մարզերին: Մարզում գործում են առողջության առաջնային պահպանման ծառայություն մատուցող 40 հաստատություն: Այսուել գործում են պետական 1 թատրոն, երկրագիտական 2 թանգարան, պատկերասրահի մասնաճյուղ, 55 գրադարան, մարզական 8 կազմակերպություն, մշակույթի բազմաթիվ պալատներ:

Առաջիկա տարիներին Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթ խնդիրներից են առկա տնտեսական ներուժի ու մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործումը, Սևանի ավազանի և լճի էկոլոգիական հավասարակշռության պահպանումը: Մարզն ունի բոլոր հնարավորություններն արդյունաբերության ու գյուղատնտեսության ձյուղերը դիվերսիֆիկացնելու, ինտենսիվացնելու և զբոսաշրջային-ռեկրեացիոն ռեսուրսներն առավել արդյունավետ օգտագործելու համար:

Հարցեր և առաջադրանքներ

1. Սահմանների, մակերևութիւնի բնութիւն և ՏԱԴ-ի ի՞նչ առանձնահատկություններ ունի Գեղարքունիքի մարզը:
2. Գնահատե՛ք Գեղարքունիքի բնառեսուրսային ներուժը, ինչպե՞ս է այն օգտագործվում:
3. Կատարե՛ք Գեղարքունիքի բնառեկրեացիոն ռեսուրսների վելուծություն:

4. Ո՞րն է Մեանա լճի հիմնախնդրի եռթյունը, և դրա լուծման ի՞նչ ուղիներ եք տեսնում:

5. Վերլուծե՛ք Գեղարքունիքի բնակեցման ընթացքը: Ի՞նչ առանձնահատկություններ ունի մարզի տարաբնակեցման ժամանակակից համակարգը:

6. Կատարե՛ք Գեղարքունիքի քաղաքների համեմատական աշխարհագրական վերլուծություն:

7. Ի՞նչ գործոններ են նպաստել Գեղարքունիքում խոշոր և գերիշշոր գյուղերի ձևավորմանը:

8. Վերլուծե՛ք Գեղարքունիքի տնտեսության ձյուղային և տարածքային կառուցվածքը, առանձնացրե՛ք մասնագիտացման նշանակություն ունեցող ձյուղերը:

9. Ի՞նչ տեղ և դեր ունեն ենթակառուցվածքները Գեղարքունիքի տնտեսության մեջ:

10. Սոցիալ-տնտեսական զարգացման և բնապահպանական ի՞նչ առաջնահերթություններ կառանձնացնեք Գեղարքունիքի մարզում:

5.9. Սյունիքի մարզը

Տնտեսության զարգացման նախադրյալները: Սյունիքն ընկած է ՀՀ հարավարևելյան մասում, զբաղեցնում է 4506 կմ² տարածք (ՀՀ 15.1 %-ը): Հյուսիսից սահմանակցում է Վայոց ձորին, հարավում ՀՀ պետական սահմանն է Իրանի հետ (42 կմ), արևելքից սահմանակից է Ադրբեյջանին(272 կմ), արևմուտքում՝ Ադրբեյջանի Նախիջևանի Ինքավար Հանրապետությանը (110 կմ): **Զանգեզուրի լեռնաշղթայի վրա գտնվող լեռնացքներով Սյունիքը կապվում է Վայոց ձորին (Որոտանի լեռնացք) և Նախիջևանին (Միսիանի լեռնացք):**

Մարզի հյուսիսարևելյան մասում ընկած է Սյունիքի հրաբխային բարձրավանդակը, որի ստորոտներին ընկած են Միսիանի, Գորիսի և Եռաբլրի բերրի սևահողային սարավանդերը: Սյունիքն ընդգրկում է Որոտան և Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանները և Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերը: Այն համընկնում է «Զանգեզուր» բնաաշխարհագրական միավորին, պատմական առումով՝ **Սյունիք (Միսալան) նահանգի** մի հատվածին: Կազմավորվել է Գորիսի, Կապանի, Մեղրու և Սիսիանի նախկին վարչական շրջանների միավորումից: Այստեղ 2020 թ. ապրում էր ՀՀ մշտական բնակչության 4.6 %-ը, զյուղական բնակչության՝ 4.1 %-ը, քաղաքային բնակչության՝ 4.9 %-ը: Գյուղերի թվով առաջինն է ՀՀ-ում (131 գյուղ):

Սյունիքը բնության հակադրությունների երկիր է: Այն ՀՀ առավել մասնատված մակերևույթ ունեցող տարածքներից է: Ըստ հորիզոնական մասնատվածության՝ առանձնացվում են չմասնատված (21 %), թույլ (5.3 %), միջին (14.1 %), ուժեղ և խիստ (53.5 %) մասնատված մակերևույթ ունեցող տեղանքներ [10]: Գյուղատնտեսական օգտագործման ու բնակեցման համար նպաստավոր համարվող 0-16⁰ թեքություն ունեցող հողահան-

դակներն այստեղ կազմում են տարածքի 44, ոչ պիտանի (30° -ից բարձր) հողահանդակները՝ 13.6% -ը: Տարածքի 77 %-ն ընկած է ծովի մակարդակից 1500 մ-ից բարձր, իսկ 2000 մ-ից բարձր տարածքը զբաղեցնում է մարզի 53.6% -ը: Տարածքի ընդամենը 6.4% -ն ունի ծովի մակարդակից մինչև 1000 մ բարձրություն [26]: Մակերևույթի բարձրաշափական նիշերի տարբերությունն անցնում է 3500 մ-ից: Տարածքի միջին բարձրությունը ծովի մակարդակից 2200 մ է, որը ՀՀ միջին ցուցանիշից ավելի է 350 մ-ով:

Ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության՝ Սյունիքում միմյանց են հաջորդում չոր մերձարևադարձային, չափավոր տաք, չափավոր ցուրտ կիսախոնավ, բարեխառն կիսաչոր, չափավոր տաք լեռնային, լեռնատունդրային կամ ալպյան և ցուրտ կլիմաները: Մեղրու, Կապանի և Գորիսի տարածաշրջանների ցածրադիր-հովտային տարածքներն ունեն մերձարևադարձային չոր կլիմայական պայմաններ: Միջին բարձրություններում կլիման համեմատաբար տաք և չափավոր խոնավ է, հյուսիսային լեռնատափաստանային շրջաններում՝ ցուրտ, բարեխառը լեռնային, Սյունիքի բարձրավանդակի և Զանգեզուրի լեռնաշրջայի բարձրադիր հատվածներում՝ ցուրտ լեռնային: **Արևափայլիքի** տարեկան տևողությունը մարզում տատանվում է 2120 (Գորիս)-2700 ժամի (Մեղրի) սահմաններում: Տարվա ամպամած օրերի միջին թիվը կազմում է 40 օր: Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը մարզում տատանվում է 260 (Մեղրի)-830 մմ-ի (Սիսիանի լեռնանցք) սահմաններում: Ցածրադիր հովտային շրջաններում հովհայան միջին ջերմաստիճանը $+25-26^{\circ}$ է, հունվարյան միջինը՝ $0-+1$, լեռնային շրջաններում հունվարյան միջինը -9.8° (Գորիայք), հովհայանը՝ $+14$: Մարզի ցածրադիր հովտային տարածքներում կայուն ձնածածկույթ չի առաջանում: **Մեղրու տարածաշրջանում 1998 թ. օգոստոսին դիտվել է ՀՀ-ի համար առավելագույն բարձր ջերմաստիճանը՝ $+43.6^{\circ}\text{C}$:** Մեղրու մերձարաբայան

հատվածը ՀՀ ամենատաք վայրն է: Զմունը լեռնային և բարձր լեռնային տարածքներում հաճախակի են ձնաբքերը, որոնք երբեմն փակում են լեռնանցքները:

Սյունիքում ծովի մակարդակից մինչև 900 մ բարձրության տարածքներում տարածված են լեռնաշագանակագույն, հրաբխային սարավանդներում՝ լեռնային սևահողերը, բարձրադիր լեռնային շրջաններում՝ լեռնամարզագետնային, անտառապատ շրջաններում՝ լեռնային դարչնագույն հողերը:

Տարածքի մասնատվածությունը, մայրական ապարների, ռելիէֆի, կլիմայի և դիրքադրությունների մեծ տարրերությունները հիմք են հանդիսացել մարզում լանդշաֆտների և կենսաբազմազանության ձևավորմանը: Մարզի ցածրադիր շրջաններից մինչև **2200-2400** մ բարձրություններում տարածված են անտառներ, որոնք զբաղեցնում են Սյունիքի տարածքի մոտ 20 %-ը: Դրանցում հիմնական ծառատեսակներն են արաքայան կաղնին, հածարենին, բոխին, հացենին, լորենին, սոսին, հունական ընկուզենի, արաքայան կաղնին, հունական շրջահույսը, թավշային իլենին և այլ տեսակներ: Անտառներում շատ են ընկուզենու, խնձորենու, կեռասի, տանձենու, զկետի, սալորի և տկողնու վայրի պտղատու ծառերը: Կան նաև մոշի ու մասրենու թփուտներ: Մարզի կենդանական աշխարհը հարուստ է էնդեմիկ անողնաշարավորների տեսակներով:

Կապանից հարավ-արևելք՝ **Ծավ գետի հովտում**, գտնվում է «**Սոսու պուրակ**» պետական արգելավայրը (64.2 հա): Սա Կովկասում արևելյան բնական սոսիների ամենախոշոր ռելիկտային պուրակն է: Այստեղ կան մինչև 3 մ բնի հաստություն և 30-35 մ բարձրության հասնող մի քանի հարյուր տարեկան ծառեր: Սոսու պուրակը սահմանակից է թափուտ անտառներով **«Շիկահողի»** պետական արգելոցի տեղամասին: Սյունիքում են գտնվում նաև **«Խուստուփ»** պետական արգելավայրը՝ 6.9 հազ. հա մակերեսով,

և «Արևիկ» ազգային պարկը: Հայտնի են նաև «Բողաքար» (Զանգեզուրի լեռնաշղթայի 1400-2000 մ բարձրություններում), «Զանգեզուր» և «Սև լիճ» արգելավայրերը:

Մյունիքը ՀՀ ջրային ռեսուրսներով համեմատաբար ապահոված մարզերից է: Մարզում կան շուրջ 170 մեծ և փոքր գետեր: Այն մեկ շնչի հաշվով ջրային ռեսուրսներով զիջում է միայն Վայոց ձորին: Մարզի ջրային ռեսուրսներն առավել մեծ չափով օգտագործվում են արդյունաբերության մեջ: Այստեղով է հոսում ՀՀ առավել ջրառատ և էներգետիկ ռեսուրսներով հարուստ Որոտան գետը, որի վտակներից են Սիսիանը, Վարարակը և Շարին: Որոտանի հովտում է գտնվում ՀՀ ամենախորը կիրճը (մինչև 800մ): Կապույտ լճից սկիզբ է առնում Մերքի գետը և անցնելով Մերքի քաղաքով՝ թափվում է Արաքսի մեջ: Կապուտջուղի հալոցքաջրերից սկիզբ է առնում Կապուտջուղ գետը: Վերջինիս և Քաջարանց գետի միախառնումից ձևավորվում է Ողջին, որն անցնում է Քաջարան և Կապան քաղաքներով՝ իր մեջ ընդունելով Գեղի վտակը: Մարզում հայտնի են Սև, Աղ և Կապույտ լճերը, որոնք ընկած են բարձրադիր լեռնային գոտում: Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով կառուցվել են Սպանդարյանի, Տոլորսի, Շամբի, Անգեղակողի և Գեղիի ջրամբարները: Որոտանի ջրերը Սպանդարյանի ջրամբարից Որոտան-Կեչուտ ջրանցքով հասնում են Կեչուտի ջրամբար:

Մյունիքը հողային ռեսուրսներով ՀՀ-ում առավել ապահովված մարզերից է: Դրանց ընդհանուր մակերեսով այն զիջում է միայն Գեղարքունիքին, իսկ մեկ շնչի հաշվով՝ Վայոց ձորին: Վառելահողերի ապահովածությամբ մարզը միջին տեղ է գրադացնում ՀՀ-ում (0.3 հա՝ մեկ շնչի հաշվով): Դրանց ընդարձակ տարածքներն ընկած են Գորիսի ու Սիսիանի տարածաշրջաններում:

ՀՀ-ում Մյունիքը մետաղային օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Առավել հայտնի են Քաջարանի և Ազար-

կի պղնձամոլիրդենային և Կապանի պղնձի հանքավայրերը: Սվարանցում կան երկաթաքարի պաշարներ: Հայտնի են նաև Լիճքի ու Դաստակերտի մետաղային հանքավայրերը, Շվանիձորի նեֆելինային սիենիտները: Մարզն աչքի է ընկնում նաև շինարարական և երեսպատման քարերի, բազալտների, կրաքարի, այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի, պեղյիտի, դիատոմիտների և կավի պաշարներով: Առանձնակի կարևորություն ունեն Միսիանի ու Գորիսի տարածաշրջաններում գտնվող բազալտի և երաբխային խարամի պաշարները:

Սյունիքի համար բացառիկ դեր ունեն ռեկրեացիոն-զբոսաշրջային ռեսուրսները: Առանձնանում են Որոտանի և Ողջի հովիտները՝ իրենց զբոսաշրջային գրավություններով, անտառային լանշաֆտները, կազմուրիչ կլիման, լեռնագրական գեղատեսիլ վայրերը: Հայտնի են նաև Գորիսի և Խնձորեսկի բուրգերն ու քարայրները, Շաքիի ջրվեժը (18 մ), «Սատանի կամուրջը» և այլն: Մարդածին ռեկրեացիոն-զբոսաշրջային ռեսուրսներից մարզում առավել հայտնի են Տաթևի վանական համալիրը, «Զորաց քարեր» հուշարձանախումբը, Բաղարերդի, Հալիձորի, Որոտնաբերդի ամրոցները, Որոտնա և Բղենո վանքերը, Վահանավանքի և Երիցավանքի վանական համալիրները, «Տաթև» ձոպանուղին, Զին Խնձորեսկի կախովի կամուրջը («Ճոճվող կամուրջը») և այլն:

ՀՀ տարածքում Սյունիքն ունի ռազմավարական և աշխարհաքարական կարևոր նշանակություն ունեցող դիրք: Մարզի հարևանանությունը Արցախի, Իրանի և Նախիջևանի հետ կարևորում և մեծացնում է Սյունիքի ՏԱԴ-ի և ՔԱԴ-ի դերը, ինչպես բուն մարզի, այնպես էլ ՀՀ-ի համար, քանի որ այստեղով է անցնում ՀՀ Արցախի հետ կապող ռազմավարական նշանակության Գորիս-Մատեվանակերտ ավտոմայրուղին, ինչպես նաև Իրանի հետ ցամաքային հաղորդակցության ուղին:

Տարաքնակեցումը, բնակչությունը և բնակավայրերը: Մակերևույթի մասնատվածությունը, մեծ թեքություններն ու դիրքադրությունները, ինտենսիվ երողիոն և սելավային գործընթացները, ինչպես նաև մարդու տնտեսական գործունեությունը պայմանավորել են Սյունիքի տարաքնակեցման առանձնահատկությունները: Մարզի բնակավայրերի մեծ մասը կենտրոնացած է Որոտան, Շաքի, Վարարակ, Սիսիան, Դարբաս, Գորիս, Մեղրի, Գեղի և Ողջի գետերի հովիտներում, որոնք աչքի են ընկնում զյուղատնտեսության զարգացման համար առավել նպաստավոր պայմաններով:

Սյունիքը ՀՀ ամենավաղ բնակեցված տարածքներից է: Այն համեմատաբար քիչ է ենթարկվել օտար նվաճողների հարձակումներին և ավերածություններին, ինչը բացատրվում է մարզի աշխարհագրական դիրքով ու լեռնային բարդ ռելիեֆով:

Սյունիքի բնակավայրերի ներկայիս ցանցը հիմնականում ձևավորվել է XIX դարի երկրորդ կեսին: Գյուղական բնակավայրերի և բնակչության կայուն աճ է սկսվել միայն 1830-ական թթ., երբ Պարսկաստանից և Թուրքիայից Արևելյան Հայաստան տեղափոխված բազմաթիվ հայեր բնակություն հաստատեցին Սյունիքում: Մարզի բնակչության թիվը 1831-1897 թթ. աճել է մոտ 6 անգամ: Այդ տարիներին էլ արագ զարգացում են ունեցել տարածաշրջանային, առևտրային և մշակութային կենտրոն Գորիս քաղաքը և պյունապարդունաբերական կենտրոն Կապանը: 1831-1897 թթ. մարզում զյուղական բնակավայրերի թիվն ավելացել է 97-ով: Վերջին շուրջ հարյուր տարում այստեղ զյուղական բնակավայրերի թիվը զգալիորեն նվազել է: Այդ գործընթացն առավել ինտենսիվ է եղել հատկապես 1950-1970 թթ., երբ մարզում մեծ վերելք էր ապրում արդյունաբերությունը: Բացառությամբ 1831-1897 թթ. ընկած ժամանակահատվածի՝ հետագա տասնամյակների ընթացքում Սյունիքում զյուղական բնակչության թիվը մշտապես նվազել է:

Աղյուսակ 68

*Սյունիքի մարզի բնակավայրերի և բնակչության թվի շարժնորացը
(1831-2020 թթ., հազ. մարդ) [8, 12, 14, 15, 16, 26, 29, 40]*

Տարեթվեր	Բնակավայրերի թիվը		Բնակչության թվը			Բնակչության խտությունը	Գյուղական բնակչությունը	Գյուղերի միջ. մարդաքանակը
	քաղաքային	գյուղական	ընդամենը	քաղաքային	գյուղական			
1831	-	116	14032	-	14032	3.1	3.1	121
1897	-	213	87252	-	87252	19.4	19.4	410
1926	1	206	77883	2690	75193	17.3	16.7	365
1959	7	160	117385	51941	65444	26.0	14.5	409
1970	7	126	138476	72058	66418	30.7	14.7	527
1979	7	126	140136	81103	59033	31.1	13.1	469
1989	7	122	147441	98650	48791	32.7	10.8	400
2001	7	127	152684	104147	48537	33.9	10.8	418
2011	7	127	141771	95170	46601	31.5	10.3	402
2015	7	127	140182	94430	45752	31.1	10.2	394
2020	7	131	137300	93200	44100	30.5	9.8	368

Եթե 1926 թ. Սյունիքի մարզում ապրում էր մեր երկրի գյուղական բնակչության 10.5 %-ը, ապա՝ 2020 թ.՝ ընդամենը 4.1%-ը: Մարզի գյուղական բնակչության ժողովրդագրական իրավիճակի վրա, ինչպես նախկինում, այնպես էլ այժմ մեծ ազդեցություն են թողնում բնակչության միզրացիոն շարժերը: Արդյունաբերության զարգացման ոչ բավարար մակարդակը, աշխատուժի օգտագործման սահմանափակ հնարավորությունները, մշակելի հողերի սակավությունը և ծայրամասային աշխարհագրական դիրքը, XIX դարի վերջերից սկսած, պայմանավորել են Սյունիքի գյուղական բնակչության արտահոսքը նախ դեպի Բաքվի արդյունաբերական շրջան, խորհրդային տարիներին՝ Երևան և նրա մերձակա արդյունաբերա-

կան կենտրոններ: Գյուղատնտեսության զարգացման ոչ բարձր մակարդակի և օգտագործվող հողատարածությունների փոքր շափերի պատճառով Սյունիքում գերակշռում են փոքր գյուղերը: Գյուղական բնակավայրերի առավել փոքր մարդաքանակով առանձնանում են Կապանի ու Մեղրու տարածաշրջանները: Կապանի տարածաշրջանում չկա հազարից ավելի բնակիչ ունեցող ոչ մի գյուղ: Տարածաշրջանը ոչ միայն Սյունիքի, այլ նաև ՀՀ-ում գյուղական բնակավայրերի ամենափոքր միջին մարդաքանակ ունեցողն է: Մարզում գյուղերի յմեծ մարդաքանակ ունեն Գորիսի ու Սիսիանի տարածաշրջանները: Ներկայումս մարզում գերակշռում են մինչև 200 բնակիչ ունեցող գյուղական բնակավայրերը: Համեմատաբար խոշոր գյուղերից են Շինուհայրը, Վերիշենը, Տեղը, Բռնակոթը, Անգեղակոթը և Խնձորեսկը: Դրանք բոլորն ել գտնվում են մարզի հյուսիսում՝ առավել հարթավայրային հատվածներում, հարավային լեռնային մասում զգալի են մինչև 200 բնակիչ ունեցող գյուղերը:



Քարտեզ 31. Այունիքի մարզը

Այունիքը Հայաստանի ամենանոր բնակեցված մարզն է (35 մարդ/կմ²): Միաժամանակ աչքի է ընկնում բնակչության խիստ անհավասարաշափ տեղաբաշխմամբ: Բնակչությունը տեղաբաշխված է 620-2150 մ բարձրությունների միջև: Գյուղերի ճնշող

մեծամասնությունն (մշտական բնակչություն ունեցող զյուղերի 36 %-ը) ընկած է 1001-2000 մ բարձրության գոտիների միջև, որտեղ ապրում է մարզի զյուղական բնակչության մոտ 92 %-ը:

Գյուղերի մարդաքանակը մեծ է 1401-1800 մ բարձրության գոտում և վյուս բոլոր գոտիներին զերազանցում է 1.3-1.7 անգամ: Բարձրության այդ գոտին աշխի է ընկնում անասնապահության և երկրագործության զարգացման համար համեմատաբար նպաստավոր պայմաններով և ընդարձակ մակերեսով: Ցածրադիր գոտում ռելիեֆի մասնատվածության, մեծ թեքությունների և հողակտորների փոքր չափերի պատճառով զյուղերն հիմնականում փոքր են:

Սյունիքը ՀՀ ամենաուրբանացված մարզն է: Քաղաքներում է ապրում մարզի բնակչության մոտ 68 %-ը: Մարզի տնտեսական, կրթական, մշակութային և սպասարկման ոլորտում առանձնահույզ դեր և տեղ ունեն մարզկենտրոն Կապանը և Գորիսը: **Կապանը ՀՀ լեռնահանքային արդյունաբերության և գունավոր մետաղագույթյան առավել հին ու խոշոր կենտրոնն է:** **Գորիսը** ոչ միայն կրթական և մշակութային հայտնի կենտրոն է, այլև մոտակա հեռանկարում այն կղանա ՀՀ զբուղչային հայտնի կենտրոններից մեկը: Պակաս դեր չունեն նաև ՀՀ հարավային դարպասներ Մեղրին և Ազարակը, ինչպես նաև տարանցիկ նշանակություն ունեցող Սիսիանը:

Տնտեսությունը: 2019 թ. ՀՀ տնտեսության մեջ Սյունիքին բաժին էին ընկնում ԱՀԱ-ի 16.6 %-ը, ԳՀԱ-ի 6.9 %-ը, շինարարության 4.3 %-ը, մանրածախ առևտության 1.5 %-ը, ծառայությունների 1.3 %-ը: Մարզում առանձնակի դեր ունեն **հանքարդյունաբերությունը, սննդամթերքի և կեկտրակներգիայի արտադրությունները:** Զարգացած են **հացահատիկայինների, կարտոֆիլի և մերձարևադարձային պտուղների մշակությունը, խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունը:** Մեկ շնչի հաշվով **ԱՀԱ-ով Սյունիքի տնտեսության մասնակիությունը կազմում է 1.3 %:**

Նիքը մոտ 2.9 անգամ զերազանցում է ՀՀ միջինը, իսկ ԳՀԱ-ով՝ 1.5 անգամ:

Արդյունաբերությունը: 2019 թ. Սյունիքի մարզում հանքագործական արդյունաբերությանը և բացահանքերի շահագործմանը բաժին էր ընկնում 81.6 %-ը, մշակող արդյունաբերությանը՝ 9.7 %-ը, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարմանը՝ 8.4 %-ը, ջրամատակարարմանը, կոյուղու, թափոնների կառավարմանը և վերամշակմանը՝ 0.3 %-ը: Մարզի արդյունաբերությունն աճի առավել բարձր տեմպեր է ունեցել խորհրդային տարիներին, երբ տեղական մետաղական հոսմքերի ու ջրաէներգետիկ ռեսուրսների հիման վրա ստեղծվում են արդյունաբերական նոր ձեռնարկություններ, վերակառուցվում են նախկինում գոյություն ունեցող արտադրական հզորությունները: Խորհրդային տարիներին ստեղծված արդյունաբերական հայտնի ձեռնարկություններից են Զանգեզուրի (Քաջարանի) և Ազարակի պղնձամոլիրդենային կոմբինատները, Որոտանի կասկադի ջրէկները և այլն:

Մինչև 1936 թվականը Սյունիքում գունավոր մետաղաձուլությունը ներկայացված էր Կապանի պղնձամոլական գործարանով: Ներկայումս այն ներկայացված է Քաջարանի և Ազարակի պղնձամոլիրդենային հանքանյութի հանքահարստացուցիչ կոմբինատներով, Կապանի պղնձի լեռնահարստացուցիչ կոմբինատով: Դեռևս խորհրդային տարիներին այստեղ ձևավորվել և զարգացել է Կապան–Քաջարանի արդյունաբերական հանգույցը, որը հանքապետությունում առանձնանում էր խիստ արտահայտված նեղ մասնագիտացումով՝ գունավոր մետաղաձուլությամբ և տնտեսության ոչ համալիր զարգացմամբ: Մարզի տարածքում հարստացած պղնձի հանքանյութը մշակվում է Ալավերդու կոմբինատում: Սոլիբրենի խտանյութի մի մասը արտահանվում է, մյուս մասը մշակվում է տեղում, և Երևանի փոշեմետալուրգիա-

կան կոմբինատում արտադրվում է **ֆերոմոլիբդեն**: Մարզում օգտակար հանածոների արդյունահանում իրականացվում է 4 մետաղական և 17 ոչ մետաղական հանքերից, ընթացքի մեջ են ևս 4 մետաղական հանքի շահագործման աշխատանքները:

Բացի գունավոր մետաղաձուլությունից՝ Սյունիքում զարգացում է ունեցել նաև **մեքենաշինությունը**, Կապանում և Սիսիանում գործում էին Երևանի Էլեկտրալամպերի գործարանի մասնաճյուղեր, Գորիսում կար միկրոտրանսֆորմատորների գործարան: Խորհրդային տարիներին մարզում աննախադեպ զարգացում է ունեցել **էլեկտրաէներգետիկ տնտեսությունը**՝ ստեղծվել է Որոտանի ջրհեների կասկադը՝ 400 հազ. կՎտ գումարային հզորությամբ: Մարզի տնտեսության համար պակաս դեր չունեն նաև **տեղական հումքի վրա զարգացող շինանյութերի արդյունաբերության ճյուղերը** (Կապանում, Գորիսում և Սիսիանում բազալտի վերամշակման ձեռնարկությունները, խարամի արդյունահանումը, երկարթետոնե կոնստրուկցիաների արտադրությունը և այլն):

Սյունիքում սննդի արդյունաբերությունը զարգանում է տեղական գյուղատնտեսական հումքի վերամշակման հիման վրա: Հայտնի են Սիսիանի, Գորիսի և Կապանի տարածաշրջաններում կաթնամթերքի (հատկապես պանրի) արտադրության ձեռնարկությունները, Կապանի ու Մեղրիի տարածաշրջաններում՝ պահածոների ու չոերի, Մեղրիում՝ գինու արտադրությունը:

Գյուղատնտեսությունը: Սյունիքում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են տարածքի մոտ 68 %-ը, որից վարելահողերը կազմում են գյուղատնտեսական հողատարածքների մոտ 14.4 %-ը: **Բնական պայմանների բազմազանությունը պայմանավորել է Սյունիքի գյուղատնտեսության բազմաճյուղ կառուցվածքը:** Ազրովկիմայական ռեսուրսներն առավել մեծ հնարավորություններ են տալիս մարզում **արոտային անասնապա-**

հության ու հացահատիկային տնտեսության զարգացման համար: Յածրադիր-հովտային շրջաններում բավարար նախադրյալներ կան պտղաբուծության, խաղողագործության ու բանջարաբուծության առանձին ճյուղերի զարգացման համար: ԳՀԱ-ի կառուցվածքում 2019 թ. բուսաբուծության ու անասնաբուծության ճյուղերի հարաբերակցությունը կազմել է 23.4 և 76.6 %: 2015-2019 թթ. մարզում տեղի է ունեցել բուսաբուծության համախառն արտադրանքի կայուն կերպով նվազում: Այդ ընթացքում անասնաբուծության համախառն արտադրանքն աճել է ավելի քան 10 %-ով: Վերջին տարիներին Սյունիքում հացահատիկային ու հատիկարնդեղենային մշակաբույսերի ցանքատարածքները կրծատվել են ավելի քան 38 %-ով (24.3-15.1 հազ. հա), որի պատճառով կրծատվել է նաև դրանց համախառն բերքը: Այս մշակաբույսերի համախառն բերքով Սյունիքը գերազանցում է Տավուշի, Վայոց ձորի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին՝ միջին տեղ զբաղեցնելով ՀՀ-ում: Այդ տարիներին մարզում նվազել են նաև կարտոֆիլի ցանքատարածքները և համախառն բերքը: Մարզում բանջարանցային մշակաբույսերի ցանքատարածքները վերջին տարիներին տատանվել են 1000-750 հա-ի սահմաններում, համախառն բերքը նվազել է ավելի քան 1.8 անգամ (17.6-9.6 հազ. տ): Սյունիքում վերջին տարիներին պտղի ու հատապտղի տնկարկների տարածքները էական փոփոխություններ չեն կրել (2.5-2.6 հազ. հա), սակայն նկատվել է համախառն բերքի նվազում: Ագրոկիմայական կայուն տարիներին մարզում արտադրվում է ՀՀ պտղի և հատապտղի 4.5-5 %-ը: Խաղողի տնկարկները Սյունիքում կազմում են մոտ 180 հա, և այդտեղ արտադրվում է ՀՀ բերքի 0.5-1 %-ը:

Սյունիքին բաժին են ընկնում ՀՀ ԽԵԿ-ի գլխաքանակի 24.5 %-ը (49.4 հազ. գլուխ), ոչխարների և այծերի 16.6 %-ը, ձիերի 19 %-ը, խոզերի 8.8 %-ը: Մարզը տալիս է ՀՀ ում արտադրվող մսի

10-11 %-ը, կաթի 10-10.5 %-ը, ձվի 6-6.2 %-ը, բրդի 15.5 %-ը:

Ըստ առանձին տարածաշրջանների՝ մարզի գյուղացիական տնտեսությունների արտադրական մասնագիտացումն ունի հետևյալ պատկերը՝ **Սիսիանի տարածաշրջանը** մասնագիտացած է մանր ու խոշոր եղջերավոր անասնապահության, խոզաբուծության, մեղվաբուծության, հացահատիկի (աշնանացան ցորեն և հաճար), կարտոֆիլի ու կաղամբի մշակության ուղղություններով: Գետահովիտներում առկա է նաև այգեգործություն՝ հիմնականում խնձորի և ուշահաս կեռասի մշակությամբ: Ըստարձակ վարելահողային տարածքներ հատկացված են կերաբույսերին: **Գորիսի տարածաշրջանին** գյուղատնտեսության մասնագիտացումը նման է Սիսիանին: Տարածաշրջանի ընդհանուր պատկերից տարբերվում է նրա մի փոքր մաս կազմող Որոտանի առափնյա հատվածը, որն ինչ-որ տեղ համանման է Մեղրու ու Կապանի ցածրադիր հատվածներին: **Կապանի տարածաշրջանի** գյուղացիական տնտեսություններն առավելապես էքստենսիվ, սպառողական մանր տնտեսություններ են, որոնք զբաղված են խոշոր ու մանր եղջրավոր անասնապահությամբ, խոզաբուծությամբ, բանջարաբուծությամբ, պտղաբուծությամբ: Զնավորվել են թռչնաբուծական երկու և անասնաբուծական մեկ համալիրներ: **Մեղրու տարածաշրջանը** ՀՀ ամենասակավահող, ամենատաք ու չոր հատվածն է: Գյուղատնտեսության հիմնական ուղղություններից է խաղողի սեղանի տեսակների և մերձարևադարձային պտուղների (նուռ, թուզ, արքայանարինջ) մշակությունը:

Տրանսպորտ: Խորհրդային վերջին տասնամյակներից Այունիքի սոցիալ-տնտեսական զարգացման խնդիրների շարքում առանձնակի կարևորություն ուներ տրանսպորտային համակարգի զարգացման հարցը: Այստեղ տրանսպորտային համակարգի զարգացմանը խոչընդոտող ազդեցիկ գործոնները մասնատված ուղիելիքային պայմաններն են: Մարզի տարածքով անցնում է միջ-

պետական Երևան-Վայք-Սիսիան-Գորիս-Մեղրի-Իրան ավտոմայրուղին: Գորիսից այս մայրուղին հասնում է նաև Քերձոր-Շուշի և Ստեփանակերտ: Չեն գործում մարզում առկա երկարուղագծերը (Երևան-Նախիջևան-Մեղրի-Միջնավան-Վապան): Վերագրծարկվել է Կապանի օդանավակայացանը: Առաջմ չի գործում Գորիսի և Սիսիանի համատեղ օդանավակայացանը: Օդային հաղորդակցության վերականգնումը բացառիկ դեր կունենա մարզի տնտեսական, հատկապես տուրիզմի զարգացման համար: Մարզում կառուցվել է նաև ռազմավարական նշանակության այլընտրանքային ավտոմայրուղի՝ Կապան-Ծավ-Մեղրի:

Սյունիքի տարածքում կան նաև էլեկտրահաղորդման ու գազամուղների ցանցեր: Ազարակում ստեղծվել է ազատ տնտեսական գոտի՝ Իրանի հետ իրականացվող առևտուրի մաքսային կենտրոն: Մարզի և հանրապետության հեռանկարային զարգացման համար կարևոր դեր կունենա նաև Իրանի հետ Արարսի վրա համատեղ ջրեկի շինարարությունը:

Մարզում առկա տրանսպորտային ուղիների բարեկարգումը, ներմարզային նոր ուղիների ստեղծումը և տրանսպորտային համակարգի առաջնության կարգացումը կարևոր դեր կունենան ինչպես ՀՀ-ի, այնպես էլ մարզի արտաքին տնտեսական կապերի ու զբուաշրջային ինդուստրիայի զարգացման համար:

Սոցիալական ոլորտի զարգացման մակարդակով Սյունիքը միջին տեղ է զբաղեցնում ՀՀ-ում: Մանրածախ առևտուրի ու ծառայությունների ոլորտները ՀՀ տնտեսության համապատասխան հատվածներում ունեն համեմատաբար փոքր մասնաբաժններ՝ 1.6 % և 2.5 %: Մեկ բնակչին բաժին ընկնող մանրածախ առևտուրի շրջանառությունը 4, ծառայությունների ծավալը 3 անգամ փոքր են ՀՀ միջին ցուցանիշներից: Մարզում 2019 թ. կային 510 մանրածախ առևտուրի օբյեկտ, պետական նախադպրոցական 51, հանրակրթական 117, մշակութային ոլորտի 17, նախնական մասնա-

զիտական 5, միջին մասնագիտական 7, պետական բարձրագույն 1 ուսումնական հաստատություններ և, 1 բուհի 1 մասնաճյուղ: Մարզում գործում է առողջության առաջնային պահպանման 17 հաստատություն: Տասը հազար բնակչի հաշվով բժիշկների քանակը մարզում 19-ն է (միջին տեղ է զբաղեցնում ՀՀ-ում), միջին բուժանձնակազմը՝ 54 (այս ցուցանիշով զիջում է Երևանին և Շիրակի մարզին), իսկ հիվանդանոցային մահճակալների ցուցանիշով (31) մարզերից զիջում է միայն Շիրակին (35) և Գեղարքունիքին (32): Սյունիքում գործում են պետական 2 թատրոն, պատմական և երկրագիտական 2-ական թանգարան, 72 գրադարան:

Հաշվի առնելով Սյունիքի մարզի տարանցիկ աշխարհագրական դիրքը, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման համար բազմազան ռեսուրսների առկայությունը՝ ՀՀ տարածքային զարգացման առաջնահերթ խնդիրներից մեկը պետք է դառնա Սյունիքի մարզի ռեսուրսային ողջ ներուժի օգտագործումն ինչպես մարզի, այնպես էլ ՀՀ հեռանկարային զարգացման համար:

Հարցեր և առաջարրանքներ

1. Աշխարհագրական դիրքի ի՞նչ առանձնահատկություններ ունի Սյունիքի մարզը: Գնահատե՛ք մարզի ՏՏ-ը միկրոմակարդակում և մեզոմակարդակում:

2. Կատարե՛ք Սյունիքի մակերևութիւն տնտեսական գնահատում:
3. Վերլուծե՛ք Սյունիքի բնակչության ներուժն ըստ առանձին տարրերի:

4. Ի՞նչ ընթացք են ունեցել Սյունիքի բնակեցումը և տարաբնակեցման համակարգի ձևավորումը:

5. Ի՞նչ յուրահատուկ գծեր ունեն Սյունիքի բնակչության ու բնակավայրերի տեղաբաշխումն ու տարաբնակեցման համակարգը:

6. Կատարե՛ք Սյունիքի քաղաքների ՏՏ-ի վերլուծություն:

7. Ի՞նչ դեր է ունեցել հանքագործական արդյունաբերությունը Սյունիքի տնտեսության ձևավրման ու զարգացման գործում:

8. Ճյուղային կազմի և մասնագիտացման ի՞նչ առանձնահատկություններ ունի Սյունիքի գյուղատնտեսությունը:

9. Շրջակա միջավայրի պահպանության ի՞նչ խնդիրներ կան Սյունիքում:

10. Գնահատե՛ք Սյունիքի դերը ՀՀ արտաքին տնտեսական կապերի զարգացման գործում:

5.10. Վայոց ձորի մարզը

Տնտեսության զարգացման ռեսուրսային նախադրյալները: Վայոց ձորի մարզը կազմավորվել է նախկին Վայքի և Եղեգնաձորի վարչական շրջանների միավորումից: Այն ընդգրկում է Արփա գետի վերին ու միջին հոսանքների ավազանները և Նախիջևան գետի Զահոռկ վտակի վերնագավառը, զբաղեցնում է 2308 կմ² մակերես: Մարզին բաժին են ընկնում ՀՀ տարածքի 7.8 %-ը և բնակչության 1.6 %-ը: Այն երեք կողմից շրջապատված է բարձր լեռներով, ջրբաժան լեռնաշղթաներով, որոնք, յուրահատուկ բնական պատնեշներ հանդիսանալով մարզի և հարևան տարածքների միջև, այն դարձնում են աշխարհագրական մի ամբողջություն: Հյուսիսից և հյուսիս-արևմուտքից սահմանակցում է Գեղարքունիքի, արևմուտքից՝ Արարատի, արևելքից՝ Սյունիքի մարզերին, հյուսիս արևելքից՝ Աղրբեջանին, հարավից՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետությանը: Հարևան մարզերի հետ կապված է Վարդենյաց, Թում մանուկի և Որոտանի լեռնանցքներով, Նախիջևանի հետ՝ Արփայի հովտով, Մարտիրոսի ու Սիսիանի լեռնանցքներով:

Վայոց ձորի տարածքն առանձնանում է մակերևույթի խիստ կտրտվածությամբ: Այն խորը ձորերի և բարձր լեռների երկիր է: Շատ են լերկ ժայռերը: Տարածքի ծովի մակարդակից ունեցած բարձրությունների տարբերությունները հասնում են 2600 մ-ի: Վայոց ձորի տարածքի ընդամենը 16,5 %-ն է ընկած ծովի մակարդակից մինչև 1500 մ բարձրություններում, 2000 մ-ից բարձր շրջանները կազմում են 53 %-ից ավելին: Մակերևույթում գերակշռում են 8-20^ο թեքություն ունեցող տարածքները (մոտ 60 %): Բարձրաշափական նիշերի մեծ տարբերություններից բացի՝ մարզի ռելիեֆին բնորոշ են նաև ուղղաձիգ ու հորիզոնական մասնատվածությունը, ինտենսիվ էրոզիան ու դենուդացիան, ինչպես

նաև ակտիվ սելավային երևույթները:

Մարզի կլիման ընդհանուր առմամբ ցամաքային է՝ ցուրտ կամ չափավոր ցուրտ ձմեռներով և շոգ կամ տաք ամառներով: Առավել բարձրադիր վայրերում կլիման ցուրտ լեռնային է: Զմռանը մարզի բարձրադիր տարածքներում տեղում է առատ ձյուն, որի շերտի հզորությունը երբեմն հասնում է 1մ-ի: **Օդի արավելագույն ջերմաստիճանը հարավային շրջաններում հասնում է +41° C-ի, բացարձակ նվազագույնը՝ -35°C-ի:**Տեղումների տարեկան քանակը տատանվում է 300-700 մմ-ի սահմաններում: Արևափայլի տարեկան միջին տևողությունը 2400-2700 ժամ է, անարև օրերի թիվը՝ 30-40 օր:

Մարզի տարածքում հստակորեն առանձնանում են ուղղաձիգ լանդշաֆտային գոտիներ: Մինչև 1500 մ բարձրություններում կիսաանապատային լանդշաֆտային են, որոնք ձևավորվել են չոր ցամաքային կլիմայի պայմաններում: 1500-1800 մ բարձրություններում տարածված են չոր լեռնատափաստանային լանդշաֆտները՝ դարչնագույն հողերով և չորասեր (ֆրիզանոխ) բուսականությամբ: 1800-2300 մ բարձրության շրջաններում առանձին հատվածներով հանդիպում են լեռնատափաստանային լանդշաֆտներ, ավելի բարձրադիր տարածքներում՝ լեռնամարգագետնային: Վերջիններս ունեն ալպյան բուսականություն և հիմք են արոտային անասնապահության զարգացման համար:

Մարզում ամենախոշոր գետը **Արփան** է, որը 92 կմ հատվածով անցնում է Վայոց ձորի տարածքով: Հայտնի վտակներից են **Եղեգիսը և Դարբը:** Մարզի տարածքով հոսող գետերն ունեն մեծ թեքություն և անկում, աչքի են ընկնում ջրահներգետիկ ռեսուրսներով: Արփայի ջրերի մի մասը **Արփա-Սևան ջրատար թունելով** հասնում են Սևանա լիճ (տարեկան մինչև 250 մ³): Արփայի ջրերը մեծ չափով օգտագործվում են նաև ոռոգման նպատակով:

Վայոց ձորը մակերևութային ջրերի ապահովածությամբ ա-

ռաջինն է ՀՀ-ում: Այս ցուցանիշով այն 6 անգամ գերազանցում է ՀՀ միջինը: Դրան հակառակ՝ մարզը ջրօգտագործման ցուցանիշով վերջին տեղն է ՀՀ-ում: Ջրօգտագործման 90 %-ից ավելին բաժին է ընկնում գյուղատնտեսությանն ու ձկնաբուծությանը:

Վայց ձորք հարուստ է բազմապիսի հանքային ռեսուրսներով: Մետաղային ռեսուրսներից հայտնի են Ղազմայի (Եղեգնաձորի տարածքում) և Ամուլսարի ոսկու հանքավայրերը: Կան նաև ֆելզիտային տուֆի (Մարտիրոսի հանքավայրը), բազալտի, կրաքարի, գրանիտի, մարմարի, կվարցային ավազի (ապակու հումք), երարիսային խարամի պաշարներ: Մարզը ՀՀ-ում և Հարավային Կովկասում նախնառաջ հայտնի է Զերմուկի հանքային բուժիչ ջրերով: Դրանք ունեն նաև ռեկրեացիոն կարևոր նշանակություն: Մարզի ռեսուրսային ներուժի կառուցվածքում առանձնակի կարևորություն ունեն նաև Արփայի և Եղեգիսի հովիտների գեղատեսիլ վայրերը, Սոգոռվի, Մազիլի քարանձավները և անձավայի բնակավայրերը, զուլալ ու սառնորակ աղբյուրերը, Զերմուկի ջրվեժը:

Մարզն առանձնանում է ՀՀ-ի համար հազվագյուտ ու էնդեմիկ բուսատեսակների ու կենդանիների առկայությամբ՝ բեզոարյան այծ, վայրի ոչխար (մուֆլոն), վայրի խոզ, գորշ արջ, կարմրախայտ, բեղլու, կողակ, արծեքավոր դեղաբույսեր: Այստեղ են գտնվում Հերիերի գիհու նոսրանտառային և Զերմուկի անտառային արգելավայրերը: Հարուստ բնառեկրեացիոն ռեսուրսների հետ միասին մարզն աչքի է ընկնում նաև պատմամշակութային հարուստ ժառանգությամբ: Մարզում են գտնվում համաշխարհային ճանաչում ունեցող Նորավանքի ու Գնդեկանքի պատմաճարտարապետական համալիրները, Գլաձորի միջնադարյան համալսարանը, Սելիմի քարավանատունը, Պոռշաբերդը, Սոգ բնակավայրի ավերակները, բազմաթիվ բերդերի, կամուրջների ավերակներ կամ մնացորդներ, խաչքարեր և այլն:

Տարաբնակեցումը, բնակչությունը և բնակավայրերը:

Դարեր շարունակ Վայոց ձորի բարձր լեռնալանջերում գտնվող կարստային ու վիմափոր քարանձավները ծառայել են ժամանակավոր պաշտպանական բնակավայրեր: Քարանձավային զառիթափ լանջերի ստորոտներում և ձորակների հարմարավետ հատվածներում կառուցվել են բազմաթիվ գյուղակներ՝ մի քանի տասնյակ բնակչով, որոնք հաղորդակցվել են իրար հետ թշնամու համար անմատչելի լեռնային կածաններով: Արփայի դարավանդներում եղել են ծաղկուն բնակավայրեր՝ կառուցված Զաքարյանների ու Օքքեյանների կողմից: Մրանք հետագայում՝ օտարերկրյա տիրապետության տարիներին, պարբերաբար լքվել են բնակչության կողմից:

Վայոց ձորի ներկայիս բնակավայրերը հիմնականում վերականգնվել և բնակեցվել են XVII դարի երկրորդ կեսից սկսած, առավել ինտենսիվ՝ 1830-ական թվականներից Խոյից, Սալմաստից և Թավրիզից ներգաղթածների շնորհիվ: 1831 թ. Վայոց ձորում կար 70 գյուղ, որոնցում ապրում էր 6728 մարդ: 1926 թ. մարզի գյուղերի մոտ կեսն ունեցել է մինչև 200 բնակիչ, դրանց մասնաբաժինը գյուղական բնակչության ընդհանուր թվում կազմել է մոտ 12 %: Վայոց ձորը գյուղական բնակչության և բնակավայրերի թվով ՀՀ-ում ամենափոքր մարզն է: 2020 թ. այստեղ ապրում էր ՀՀ գյուղական բնակչության ընդամենը 3.0 %-ը, որը բաշխված էր մշտական բնակչություն ունեցող 45 գյուղում: Սյունիքից հետո Վայոց ձորը ՀՀ ամենանոսր բնակեցվածն է: Տարածքի խիստ կտրտվածության, լեռնալանջերի մեծ թեքությունների, հողմահարված տարածքների գերակշռության պատճառով մարզում մշակովի հողակտորներն շատ փոքր են, որի հետևանքով սահմանափակ են նաև գյուղական տարածքների ու բնակավայրերի ընդարձակման, խոշորացման ու զարգացման հնարավորությունները: Գերակշռում են բնակչության թվաքանակով փոքր ու

Միջին մեծության գյուղերը: Մարզի գյուղական տարածքներն աչքի են ընկնում ծովի մակարդակից ունեցած բացարձակ բարձրությունների մեջ տարբերություններով (1000-2250 մ): Գյուղերի հիմնական մասն (74.5%) ընկած է ծովի մակարդակից 1401-2000 մ բարձրության գոտում: 2000 մ-ից բարձր շրջաններում կա մշտական բնակչություն ունեցող ընդամենը չորս գյուղ: Հստ գերակշռող մարդաքանակի՝ մարզին բնորոշ է **մեծ, խոշոր և միջին մեծության** գյուղային տարաբնակեցումը:

Աղյուսակ 69

*Վայց ձորի մարզի բնակավայրերի և բնակչության թիվի շարժնթացը
(1831-2020 թթ.) [8, 12, 14, 15, 16, 26, 29, 40]*

Տարբերակ	Բնակավայրերի թիվը		Բնակչության թիվը			Բնակչության խտությունը	Գյուղական բնակչությունը	Գյուղերի միջ. մարդաքանակը
	քաղաքային	գյուղական	ընդամենը	քաղաքային	գյուղական			
1831	-	70	6728	-	6728	2.9	2.9	96
1897	-	112	42080	-	42080	18.2	18.2	376
1926	-	81	30074	-	30074	13.0	13.0	371
1959	2	55	39659	3225	36434	17.2	15.8	662
1970	3	54	53154	12032	41122	23.0	17.8	761
1979	3	50	54800	15897	38816	23.7	16.8	776
1989	3	49	64472	23960	40512	28.0	17.6	827
2001	3	52	55997	19605	36392	24.3	15.8	791
2011	3	52	52324	18449	33875	22.7	14.7	736
2015	3	52	51406	18090	33316	22.3	14.4	724
2020	3	52	48500	17100	31400	21.0	13.6	698

Չնայած զբաղեցրած փոքր տարածքին՝ մակերևույթի մասնատվածության և բարձրաշահական նիշերի մեծ տարերությունների պատճառով մարզում գյուղերի մորֆոլոգիական տիպերը, տարաբնակեցման ձևերը և համալիրային տիպերը բազմազան են: Մի շարք գյուղեր տեղադրված են խորը ձորերի և ձորակների ցածրադիր մասերում, որտեղ կան մշակելի հողատարածություններ և ռոռոգման հնարավորություններ: Մարզի տարածքի բնակեցվածության աստիճանը բարձր չէ:

Առանձնանում են Արփայի և Եղեգիսի գոգավորությունները, որտեղ էլ գտնվում են գյուղերի մեծամասնությունը: Վայոց ձորում ևս վերջին 30 տարում ստեղծված իրավիճակի պատճառով թուլացել է գյուղերի արտադրատնտեսական ու սոցիալական բազան, նվազել է բնակչության թիվը, ստեղծվել է բնակչության սեռատարիքային կառուցվածքի ու բնական շարժի ոչ բարենպաստ իրավիճակ: Մարզի քաղաքային երեք բնակավայրում 2020 թ. մշտական բնակչության թիվը կազմել է 17.1 հազ. մարդ (մարզի բնակչության 35.3 %-ը): 2001-2020 թթ. քաղաքաբնակների բացարձակ թիվը նվազել է ավելի քան 2.5 հազարով կամ 12.8 %-ով:

Տնտեսությունը: Վայոց ձորը ՀՀ-ում տնտեսական զարգացման մակարդակով և ՀՆԱ-ով զբաղեցնում է վերջին տեղը: ՀՀ տնտեսության տարածքային կառուցվածքում մարզը 2019 թ. ուներ հետևյալ ցուցանիշները՝ արդյունաբերություն՝ 1.3 %, գյուղատնտեսություն՝ 2.5 %, շինարարություն՝ 1.5 %, մանրածախ առևտուր՝ 0.5 %, ծառայություններ՝ 0.6 %: Մարզի տնտեսության համախառն արտադրանքի ծավալում գերակշռողը **արդյունաբերությունն** է: Մարզի արդյունաբերության կառուցվածքը 2019 թ. ուներ հետևյալ պատկերը՝ հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում՝ 1.4 %, մշակող արդյունաբերություն՝ 75.4 %, էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում՝ 22.0 %, ջրամատակարարում, կոյու-

դի, թափոնների կառավարում և վերամշակում՝ 1.1 %: Խորհրդային տարիներին **Եղեգնաձոր** քաղաքը ուներ զարգացած արդյունաբերություն: Նախկիններից գործում է միայն ռելիեֆ գործարանը՝ իր հնարավորությունների 30 %-ի չափով: Քաղաքում կան կահույքի, քարերի և շինանյութերի, գինու տակառների, գինիների և պահածոների արտադրության ձեռնարկություններ: **Վայրում** գործում են հանքային ջրերի, ոչ ավկոհոլային խմիչքների, շինանյութերի և քարերի արտադրական ձեռնարկությունները: Կան նաև սպասարկման ոլորտի ձեռնարկություններ (հյուրանոցներ, ուսուորաններ, սրճարաններ և այլն): **Ջերմուկը** դեռևս 1970 թ. համամիութենական նշանակության առողջարանային քաղաք էր: Քաղաքի արդյունաբերության հիմնական ճյուղերն են հանքային ջրերի շահագումը և ձկնաբուծությունը:

Մարզում թողարկվող արդյունաբերական արտադրանքի մոտ 70 %-ը բաժին է ընկնում սննդի արդյունաբերությանը, կարևոր են նաև ձեռագործ գորգերի, կաթնամթերքի և էսերգիայի արտադրությունները: Մարզը հայտնի է նաև որակյալ գինիների («Արենի», «Վերնաշեն») արտադրությամբ: Մարզում գործում են 30 փոքր ջրեկ, կառուցվում է ևս 12-ը:

Գյուղատնտեսությունը: Մարզի տարածքի 82.5 %-ը կազմում են գյուղատնտեսական հողատարածքները: Մշակելի հողատարածքների բաժինը գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի մեջ կազմում է ընդամենը 8.5%: Առավել մեծ բաժին ունեն արոտավայրերը (մոտ 49 %) և այլ հողատեսքեր (39.2 %), քաղմամյա տնկարկները կազմում են 0.7 %, իսկ խոտհարքները՝ 2.6 %:



Քարտեզ 32. Վայոց ձորի մարզը

Վայոց ձորը գյուղացիական տնտեսությունների թվով ամենափոքրն է ՀՀ-ում: Տարածքի ազգույթիմայական ռեսուրսների բազմազանությունը պայմանավորել է գյուղացիական տնտեսությունների արտադրական գործունեության մեջ տարբեր ուղղությունների առկայությունը: Այդ տարբերություններն առկա են ինչպես տարածաշրջանների, այնպես էլ ծովի մակարդակից բարձրության տարբեր գոտիների միջև: Մարզի գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացված է տավարաբուծությամբ, պտղի և խաղողի մշակությամբ: ԳՀԱ-ի մեջ անասնապահությունը մոտ 3.3 անգամ գերազանցում է բուսաբուծությանը: 2019 թ. մարզում ԽԵԿ-ի գլխաքանակը կազմել է 19.4 հազ., որից 8.1-ը՝ կովեր: Մարզին բաժին են ընկնում ՀՀ ԽԵԿ-ի 3.4 %-ը, ոչխարների

և այծերի 2.3 %-ը, ձիերի 4.7 %-ը: Այն տալիս է ՀՀ-ում արտադրվող մսամթերքի 3 %-ը, կաթնամթերքի 3.5 %-ը, բրդի 2.4 %-ը, ձվի 3.2 %-ը: Անասնապահության զարգացման հիմնական շրջաններն են մարզի լեռնային ու բարձր լեռնային տարածքները, որտեղ բավարար պայմաններ կան ինչպես ոչխարաբուծության, այնպես էլ տավարաբուծության զարգացման համար: Զարգանում են նաև մեղվաբուծությունն ու ձիաբուծությունը:

Վայոց ձորում պտղի, հատապտղի և խաղողի մշակությունն ունի հազարամյակների պատմություն: Այդ մասին են վկայում այստեղ հայտնաբերված գինու հնձանները, մառանները և այն: Մարզին բաժին են ընկնում ՀՀ պտղի և հատապտղի տնկարկների 5.9 %-ը և դրանց համախառն բերքի 1.3-2.2 %-ը: Դրանց բերքատվությամբ մարզը զգալիորեն (2.5-3.5 անգամ) զիջում է Արմավիրի, Արարատի և Արագածոտնի մարզերին: Մշակող հիմնական պտուղներից են ծիրանը, դեղձը, սալորը, խնձորը, կեռասը, ընկույզը:

Վայոց ձորն ՀՀ-ում առավել բարձր մասնաբաժին ունի խաղողի տնկարկներով ու համախառն բերքով: Մարզին են ընկնում դրանց տնկարկների 7.2 %-ը և համախառն բերքի 2.5-3 %-ը: **Խաղողի միջին բերքատվությամբ** ևս ՀՀ-ում **Վայոց ձորը** զիջում է (2.5-3 անգամ) Արարատյան դաշտի տարածքներին: **Խաղողագործական հիմնական շրջաններն ընկած են Արփայի հովտում:**

Մյուս մարզերի համեմատությամբ այստեղ զգալիորեն փոքր են հացահատիկի ու հատիկարնդեղենայինների, կարտոֆիլի և բանջարանցային մշակաբույսերի ցանքատարածքները:

Եղեգնաձորի տարածաշրջանն առավել մեծ չափով մասնագիտացված է խաղողագործության, այգեգործության և անասնապահության ճյուղերով: **Վայքի տարածաշրջանի** ցածրադիր գոտու (մինչև 1700 մ) մի քանի գյուղեր ունեն այգեգործական և անասնապահական մասնագիտացում, մնացած գյուղերը, որոնք

ընկած են ծովի մակարդակից 1700-2100 մ բարձրությունների վրա, ունեն անասնապահական, հացահատիկայինների մշակության և այգեգործության մասնագիտացում: Գնդեվազ գյուղում կանալ թռչնաբուծական ֆաբրիկա, որը թռչնամիս և ձու է մատակարարում Զերմուկ առողջարանային քաղաքին:

Ոռոգման համար օգտագործվում են մարզի տարածքով հոսող Արփայի և նրա վտակների ջրերը, որոնք գործող մեկ տասնյակից ավելի ջրհան կայանների միջոցով մղվում են ավելի բարձրադիր շրջաններում գտնվող տարածքներ և բաշխվում մշակելի հողատարածքներին: Այդ նպատակին են ծառայում նաև Հերեմերի և Կեչուտի ջրամբարները:

Մարզի գյուղատնտեսության զարգացման գլխավոր խնդիրը անասնապահության մթերատվության և մշակաբույսերի բերքատվության բարձրացումն է՝ ինտենսիվացումը, ինչպես նաև անմշակ հողատարածքները գյուղատնտեսական շրջանառության մեջ մտցնելը: Մարզի ազրով լիմայական ռեսուրսները թույլ են տալիս նաև հիմնել ջերմոցային տնտեսություններ:

Վայոց ձորի տնտեսության առավել արագ զարգացող ոլորտներից է **գրոսաշրջությունը**: Վերջին տարիներին մարզում նկատվում է անցում պասիվ հանգստի ձևերից ակտիվ ձևերին: **Բացի** առողջարանային-ռեկրեացիոն և պատմամշակութային տուրիզմից՝ մեծ հնարավորություններ կան նաև գյուղական և ազրովրաշրջության, Էկոգրոսաշրջության, գիտական, արկածային ու անձավագիտական տուրիզմի, լեռնային տարածքներով ձիավարության ու հետիոտն երթուղիների անցկացման համար: Դրանց զարգացումն առավել խթանելու համար անցկացվում են ամենամյա փառատոններ:

2019 թ. մարզում գործում էին մանրածախ առևտրի 361 օբյեկտ, պետական նախադպրոցական 33, հանրակրթական 48, մշակութային 8, նախնական մասնագիտական 1, միջին մասնա-

զիտական 1 կրթական հաստատություններ և բուհի 1 մասնաճյուղ: Մարզում կա առողջության առաջնային պահպանման 8 օբյեկտ: 10000 բնակչին բաժին են ընկնում 21 բժիշկ, 44 միջին բուժանձնակազմ և 17 հիվանդանոցային մահճակալ: Մարզում գործում են պատկերասրահի մասնաճյուղեր ու թագարաններ:

Հարցեր և առաջադրանքներ

1. Կատարե՛ք Վայոց ձորի մարզի սահմանների և ՏՍԴ-ի վերլուծություն:

2. Վերլուծե՛ք Վայոց ձորի բնառեսուրսային ներուժը՝ ըստ առանձին տարրերի:

3. Գնահատե՛ք Վայոց ձորի բնառեկրացիոն ներուժը: Պատմական և հոգևոր-մշակութային ի՞նչ կառույցներ կան մարզում:

4. Ի՞նչ առանձնահատկություններ ունի Վայոց ձորի տարաբնակեցման համակարգը:

5. Ի՞նչ պայմաններ և գործոններ են պայմանավորել Վայոց ձորի մարզի տնտեսության զարգացումն ու տեղաբաշխումը:

6. Կատարե՛ք Վայոց ձորի տնտեսության առանձին ճյուղերի զարգացման և տեղաբաշխման վերլուծություն:

7. Բնօգտագործման և բնապահպանության ի՞նչ հիմնախնդիրներ կան Վայոց ձորի մարզում:

5.11. Տավուշի մարզը

Տնտեսության զարգացման նախադրյալները: Տավուշի մարզը ընկած է ՀՀ հյուսիս-արևելքում և գրաղեցնում է 2704 կմ² տարածք (ՀՀ 9.1 %-ը): Կազմավորվել է Խջևանի, Տավուշի (նախկին Շամշադինի) և Նոյեմբերյանի վարչական շրջանների միավորումից: Արտաքին պետական սահման ունի Աղրբեջանի (300 կմ) և Վրաստանի (50 կմ) հետ: Հարավում սահմանակից է Գեղարքունիքի և Կոտայքի, արևմուտքում՝ Լոռու մարզերին: Մարզին բաժին են ընկնում ՀՀ բնակչության 4.1 %-ը, գյուղական բնակչության 6.6 %-ը և քաղաքային բնակչության 2.7 %-ը:

Խորհրդային տարիներին Տավուշի տարածքը ՀՀ-ի համար գլխավոր դարպասի դեր է կատարել: Այստեղով էին Հայաստան մուտք գործում գլխավոր երկաթուղիները, ավտոմայրուղին, զագատարը: Մարզով էր անցնում ՀՀ Անդրկովկասի միասնական Էներգահամակարգին կապող Էլեկտրահաղորդման գիծը: Աշխարհագրական դիրքով պայմանավորված ենթակառուցվածքային նշված տարրերի ստեղծումը, անշուշտ, իր դրական դերն է ունեցել մարզի տարածքի սոցիալ-տնտեսական զարգացման համար: Արդեն 30 տարի է՝ Աղրբեջանի կողմից ՀՀ տրանսպորտային շրջափակման և միջպետական հաղորդակցության բացակայության պայմաններում Տավուշի մարզի ՏՍԴ-ի վերը նշված հնարավորությունները, ըստ էության, սառեցված են և չեն ծառայում մարզի տնտեսական զարգացմանը: ՀՀ անկախացումից հետո մարզի տնտեսության զարգացմանը խոչընդոտող գործոն է դարձել Աղրբեջանի հետ սահմանակից լինելը, որն առաջացնում է հավելյալ անվտանգության ռիսկեր մարզի հողերի, ընդերքի, ջրային պաշարների օգտագործման և բնակության համար: Ներկայումս Տավուշի պետական սահմանը Վրաստանի հետ կատարում է միավորման գործառույթը. սահմանամերձ բնակավայրերը

առևտրի և տարանցիկ փոխադրումների շնորհիվ աճի նախադրյաներ են ստանում, **Աղբքեջանի հետ՝ բաժանաբար:** Մարզի բնակավայրերից 47-ը սահմանամերձ է: Դրանցում ապրում է մարզի բնակչության կեսից ավելին, գյուղական բնակչության՝ 72 %-ը:

Տավուշը ՀՀ ամենալեռնոտ և մասնատված մակերևույթ ունեցող մարզերից է: Մարզի ռելիեֆին բնորոշ են զարդարված լանջերով խորը ձորերն ու կիրճերը, ուղղորդ քարափային լանջերն ու սեղանաձև լեռնակատարները: Այստեղ, ըստ հորիզոնական մասնատվածության, աստիճանի առանձնացվում են թույլ (0.2-0.6 կմ/կմ²), միջին (0.6-10 կմ/կմ²) և ուժեղ մասնատված (1.0-1.6 կմ/կմ²) տարածքներ [41]: Տարածված են 12°-ից բարձր թեքություն ունեցող լանջերը, և միայն հովիտների հատակային, ոչ ընդարձակ տարածքներն են պիտանի բնակեցման համար: Տավուշում մշակության համար պիտանի հողատարածքները և գրեթե ամբողջ բնակչությունը կենտրոնացված են գետահովիտներում: Ծովի մակարդակից մինչև 1000 մ բարձրություն ունեցող շրջանները կազմում են տարածքի մոտ 29 %-ը, իսկ մինչև 1500 մ-ը՝ շուրջ 60 %-ը: 2000 մ-ից բարձր է մարզի տարածքի ընդամենը 7-8 %-ը:

Տավուշի տարածքում են գտնվում Փոքր Կովկասի արտաքին շարի մաս կազմող, 2000-3000 մ բարձրության հասնող **Գուգարաց**, **Միափորի**, **Արեգունու** և **Փամբակի** լեռնաշղթաները: Տարածքը, ըստ բարձրության, հարավից հյուսիս ցածրանում է (2993-380 մ): Մարզի համար բնական սահման են համարվում արևմուտքում և հյուսիս-արևմուտքում Գուգարաց լեռները, հարավում և հարավ-արևմուտքում՝ Փամբակ-Արեգունու լեռնային համակարգը: Տավուշն ընդգրկում է հիմնականում Աղստևի, ինչպես նաև Կուրի վտակներ Ոսկեպար, Հախում և Տավուշ գետերի վերին ու միջին հոսանքների ավազանները: Մարզի մակերևույթն առանձնանում է էրոզիոն ներգործության հետևանքով առաջա-

ցած ոելիեֆի ձևերով: Առանձին տարածքներում հանդիպում են ոելիեֆի կարստային ձևեր և սոլանքային տեղամասեր: Սողանքներն առավել ակտիվ են Հաղարձնի, Գոշի, Վազաշենի, Աշաջրի, Գետահովտի, Ակնաղբյուրի, Այրումի, Գանձաքարի գոտիներում: Տավուշի տարածքում կարևոր տեղ ունի Աղստևի հովիտը, որտեղով անցնում է ՀՀ-ի համար առանձնահատուկ նշանակություն ունեցող Դիլիջան-Իջևան-Նոյեմբերյան-Վրաստան միջպետական ավտոմայրուղին:

Մարզի տարածքի մեծ մասն ունի բարեխառն տաք և չափավոր խոնավ կլիմա: Ցածրադիր տարածքներում կլիման մերձարևադարձային է: Տարածքի մեծ մասում հունվարյան միջին ջերմաստիճանը -2°C -ից չի իջնում և միայն սահմանային լեռնաշղթաների մերձկատարային հատվածներում հասնում է -6°C -ի: Արևափայլքի տարեկան տևողությունը 1900-2100 ժամ է: Տավուշը ՀՀ-ում առաջինն է ամպամած օրերի թվով (Իջևանում՝ 67 օր): Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է $+18\text{-}22^{\circ}\text{C}$ -ի, մթնոլորտային տեղումների տարեկան քանակը՝ 450-800 մմ-ի սահմաններում:

Տավուշն ունի գետային խիտ ցանց: Խոշոր գետն Աղստևն է՝ Գետիկ վտակով: Մարզի հյուսիսային մասով անցնում է Դեբեդ գետը, հայտնի է նաև Հախում գետը: Նշանավոր լճերից են Պարզ և Գոշ լճերը: Դեռևս 1970-1980-ական թթ. մարզի ջրային ռեսուրսներն արդյունավետ օգտագործելու նպատակով կառուցվել են Ոսկեպարի, Հախումի, Տավուշի, Այգեձորի և Խաչթառակի ջրամբարները (մոտ 66 մլն մ³ ընդհանուր ծավալով): Հայտնի են Բլդանի հանքային ջրերը:

Տավուշում մեծ տարածում ունեն լեռնաանտառային հողերը: Ցածրադիր հովիտներում գերիշխում են չոր տափաստանների լեռնաշագանակագույն, բարձրադիր հովիտներում՝ լեռնաանտառային տափաստանացված հողերը: Նախկին անտառապատ ա-

ուանձին հատվածներ հատվել են և դարձել մշակելի հողատարածքներ: Լեռների բարձրադիր մասերում հողերը լեռնամարզագետնային դարչնագույն են, իսկ ժայռոտ տեղամասերում դրանք լրիվ բացակայում են:

Տավուշը ՀՀ ամենաանտառապատ մարզն է՝ մոտ 38 %: Հիմնական ծառատեսակներն են **հաճարենին** և **կաղնին**, որոնք տարածվում են 900-1600 մ բարձրությունների վրա: Տիրապետողը հաճարենին է: Հանդիպում են նաև **թեղի**, **բոխի**, ինչպես նաև **սոճու** փոքրիկ պուրակներ:

Հողակլիմայական համեմատարար բարենպաստ պայմանների ու անտառային հարուստ ռեսուրսների համեմատ մարզն առքատ է հանքահումքային ռեսուրսներով: **Տավուշը ՀՀ-ում առանձնանում է բազմազան ռեկրեացիոն-զբոսաշրջային ռեսուրսներով:** Բնառեկրեացիոն ներուժի մեջ առանձնակի կարևորություն ունեն **առողջարար մերլ կյիման**, **թթվածնով հարուստ մաքուր օդը**, անտառապատ լանդշաֆտները, **հանքային բուժիչ ջրերը**, **գեղագիտական արժեք ներկայացնող բնապատկերները**, **երասրիմի ու զվարճանքների կազմակերպման համար տարածքների առկայությունը** և այլն: **Էկոլոգիական զբոսաշրջության կազմակերպման համար լիարժեք հնարավորություններ կան Դիլիջանի ազգային պարկում և Թօնանի անտառային այգում (Դենդրոպարկում):** Մարզի տարածքը հարուստ է նաև պատմաճարտարապետական և հոգևոր մշակութային արժեքներով: Միջազգային ճանաչում ունեն հատկապես **Հաղարծնի, Գոշավանքի Աղավնավանքի և Մակարավանքի** վանական համալիրները: Տավուշում արդյունաբերական նշանակություն ունեն **բենտոնիտային կավը**, կրաքարերը, վիմագրական քարերը, դոլոմիտը, բազալտը, ֆելզիտը, ցեղիտը և այլն: Ոսումնասիրման կարիք ունեն մարզում առկա **ոսկու**, **մանգանի**, **պղնձի** և **քարածխի** պաշարները: Աղստևի հովտում կան հանքային ջրերի պաշարներ:

Տարաբնակեցումը, բնակչությունը և բնակավայրերը: Տավուշում հարյուրամյակներ շարունակ ավերվել և կործանվել են բազմաթիվ բնակավայրեր, նվազել են բնակավայրերի թիվը և մարդաքանակը, փոփոխություններ է կրել բնակչության ազգային կազմը: Մինչև XVIII դարի վերջը Հայաստանի հյուսիսարևելյան գավառները եղել են ռազմատենչ ցեղերի ու աշխարհակալ տերությունների արյունալի ընդհարումների և անվերջանալի ասպատակությունների բատերաբեմ: XVIII դարի երկրորդ կեսից Արցախից արտագաղթած տասնյակ հազարավոր հայերի մի զգալի մասը հաստատվել է նախարդ տասնամյակների ընթացքում հայազգի բնակչության մեծ մասը կորցրած Տավուշի տարածքներում: Մարզի բնակեցման նոր ալիքը կապված է 1828-1830 թթ. ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմների հետ, որոնք առաջացրին բնակչության զանգվածային ներգաղթ նաև դեպի Տավուշի մարզ: XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին ռազմավարական բնույթի ճանապարհների շինարարությունը (Երևան-Սևան-Դիլիջան-Խջևան-Թիֆլիս, Վանաձոր-Դիլիջան-Խջևան-Նոյեմբերյան-Այրում), ինչպես նաև բազմաթիվ այլ բանուկ ճանապարհների վերակառուցումը մեծ դեր են խաղացել մարզի բնակեցման, բնակավայրերի ձևավորման ու զարգացման գործում: Մեծ դեր ունեցան նաև երկաթուղագծերի շինարարությունը: Դրանց կառուցման բանավանները և կիսակայարանները հետագայում վերածվեցին կայարանամերձ ավանների: Մարզի բնակեցման ու զարգացման համար առանձնահատուկ դեր է խաղացել նաև նրա ՏՄ-ը: Բնակչության միջին խտությամբ (45 մարդ/կմ²) Տավուշն ավելի քան 2.1 անգամ զիջում է ՀՀ միջին ցուցանիշին: Բնակչության 42 %-ը ապրում է քաղաքներում: Խջևան և Դիլիջան քաղաքներին բաժին են ընկնում քաղաքաբնակների մոտ 74 %-ը, մարզի բնակչության 31 %-ը: Մինչև 1970-ական թվականները Տավուշում, ըստ մարդաքանակի, մեծ թիվ էին կազմում

մանր և փոքր (մինչև 500 մարդ) գյուղական բնակավայրերը: 1970-2020 թթ. գյուղական բնակչության թիվը նվազել է ավելի քան 14.8 հազարով: Ներկայում մարզում առավել ընդգծված է դաշնում մեծ ու խոշոր գյուղերի դերի մեծացումը՝ ըստ գերակշռող մարդաքանակի:

Աղյուսակ 70

*Տավուշ մարզի բնակավայրերի և բնակչության թվի շարժընթացը
(1831-2020 թթ.) [8, 12, 14, 15, 16, 26, 29, 40]*

Տարբերակը	Բնակավայրերի թիվը		Բնակչության թիվը			Բնակչության խտությունը	Գյուղական բնակչությունը	Գյուղերի միջ. մարդաքանակը
	քաղաքացին	գյուղական	ընդամենը	քաղաքացին	գյուղական			
1831	-	36	12201	-	12201	4.5	4.5	339
1897	-	62	43401	-	43401	17.5	16.0	700
1926	-	100	62620	-	62620	23.2	23.2	626
1959	2	112	99124	19051	80073	36.7	29.6	715
1970	5	63	127436	42574	84862	47.1	31.4	1347
1979	6	64	135305	53686	81619	50.0	30.2	1275
1989	6	61	137527	61902	75625	50.9	30.0	1240
2001	4	61	134376	50721	83655	49.7	30.9	1417
2011	5	62	128609	54186	74423	47.6	27.5	1240
2015	5	62	126677	53536	73141	46.9	27.0	1219
2020	5	61	121500	51400	70100	44.9	25.9	1188

ՀՀ-ում մինչև 800 մ բարձրություններում ապրող գյուղական բնակչության մոտ 77 %-ը և գյուղերի թվի 67 %-ը գտնվում են Տավուշի մարզում: Տավուշին առավելապես բնորոշ է գետահովտային և ավագանային տիպի տարաբնակեցումը: Բնակավայրերը կուտակված են լեռնահովիտներում և գետահովիտների ավելի ցածրադիր հատվածներում, ինչպես նաև՝ ձանապարհների եր-

կայնքով: Գետահովիտներում ձևավորվել են տարաբնակեցման խմբային ձևեր:

Տնտեսությունը: Տավուշը ՀՀ-ում տնտեսական զարգացման համար առավել փոքր ներուժ և սոցիալ-տնտեսական զարգացման ցածր մակարդակ ունեցող մարզերից մեկն է: Մարզի մեկ բնակչին բաժին ընկնող ՀՆԱ-ն կազմում է ՀՀ միջին ցուցանիշի 50 %-ը: Տավուշի տնտեսության հիմնական հատվածները ՀՀ տնտեսության մեջ 2019 թ. ունեն հետևյալ մասնաբաժինները՝ արդյունաբերություն՝ 1.5 %, գյուղատնտեսություն՝ 4.4 %, շինարարություն՝ 3.8 %, մանրածախ առևտուր՝ 2.4 %, ծառայություններ՝ 1.0 %: Մեկ շնչի հաշվով ԳՀԱ-ի և շինարարության գծով մարզի ցուցանիշները մոտ են ՀՀ միջինին, մանրածախ առևտուրի գծով ցածր է կրկնակի, իսկ արդյունաբերության և ծառայությունների գծով պակաս է մոտ 4 անգամ:

Տավուշի տնտեսական ներուժին և զարգացմանը չափազանց մեծ վնաս հասցրին շուրջ 10 հազ. աշխատատեղ ապահովող արդյունաբերական համալիրի քայլայումը, 1990-ական թթ. պատերազմական գործողությունները, ականապատված հողերի առկայությունը և հաճախակի դարձած բնական աղետները:

Չնայած մարզում գյուղատնտեսական հողատարածքների սակավությանը և մակերևույթի խիստ մասնատվածությանը՝ **Տավուշը ՀՀ առավել ազրարային մարզերից մեկն է:** Թեև 2015-2019 թթ. մարզում ԳՀԱ-ի ծավալը նվազել է ավելի քան 19 %-ով, իսկ ԱՀԱ-ի ծավալն ավելացել է 54 %-ով, այդուհանդերձ 2019 թ. մարզի ԳՀԱ-ի ծավալն արդյունաբերության ցուցանիշին զերազանցում էր ավելի քան 1.2 անգամ: Մարզի արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են հանվում գինիները, հանքային ջուրը, պահածոները, կարի արտադրանքը:



Քարտեզ 33. Տավուշի մարզը

Արդյունաբերության մեջ առաջատարը մշակող արդյունաբերության ձյուղերն են: Դրանց 2019 թ. բաժին էր ընկնում մարզի ԱՀԱ-ի մոտ 82 %-ը: Առավել զարգացած են **սննդի արդյունաբերությունն ու փայտամշակումը:** Արտադրում են բենտոփիոշի, երեսպատման սալիկներ, գինիներ և այլ խմիչքներ, պահածոներ, կարի արտադրանք: Արդյունաբերական հիմնական ձեռնարկությունները գտնվում են Իջևանում («Քարատ» Բենտոփիտ, օղու, գինու և պահածոների գործարաններ), Դիլիջանում (հանքային ջրեր, վերջին տարիներին՝ նաև գործարան), Բերդում: Բերդում գործում է Երևանի կոնյակի գործարանի մասնաճյուղ, Չորաթան

գյուղում՝ կարի ֆաբրիկա («Տավուշ տեքստիլ»): Վերջին տարիներին սկսել է աշխատել Այրումի պահածոների նախկինում հայտնի գործարանը: Մարզում գործում են 15 փոքր ջրէկներ (24 հազ. կՎտ հզորությամբ) և տարեկան արտադրում են մինչև 80 մլն կՎտ/ժ էլեկտրաէներգիա, որը կազմում է ՀՀ փոքր ջրէկների կողմից արտադրվածի մոտ 8 %-ը:

Տավուշի գյուղատնտեսության համախառն արտադրանքի կառուցվածքում վերջին տարիներին տեղի է ունեցել փոփոխություն: Եթե 2015-2016 թթ. բուսաբուծության և անասնապահության հարաբերակցությունը կազմում էր 48 /52, 2019 թ.՝ 27/73 %: Գյուղատնտեսության ձյուղերի միջև հարաբերակցության այդպիսի փոփոխությունը պայմանավորված է վերջին տարիների մարզում հացահատիկային և հատիկալընդեղենային մշակաբույսերի ցանքատարածքների 2.2 անգամ նվազմամբ:

Տավուշը տախի է ՀՀ-ում արտադրվող պտղի և հատապտղի 3-4 %-ը: Դրանց տնկարկները վերջին տարիներին ավելացել են մոտ 170 հա-ով: Պտուղներից մարզում առավել շատ մշակում են դեղձ, սալորի տեսակներ, արքայանարինջ: Մարզում խաղողի տնկարկները վերջին տարիներին կազմել են մոտ 1.4 հազ. հա: **Տավուշին բաժին է ընկնում ՀՀ-ում արտադրվող խաղողի բերքի 5-5.5 %-ը:** Խաղողի մշակությամբ աչքի են ընկնում Իջևանի և Տավուշի տարածաշրջանները: Բանջարանոցային և բուստանային (դդում) մշակաբույսերի մասնաբաժինը մարզի բուսաբուծության համախառն արտադրանքում շատ փոքր է:

Խորհրդային տարիներին Տավուշի երկրագործության մեջ առաջատարներից էր **ծխախտագործությունը:** Վերջինս 1990-ական թթ. զգալի անկում ունեցավ, իսկ վերջին երկու տասնամյակում վերականգնվում է՝ պայմանավորված ՀՀ-ում ծխախոտի արդյունաբերության վերականգնմամբ: Ծխա-

խոտի մշակությամբ առավելապես զբաղվում են Տավուշի տարածաշրջանի գյուղերում:

Տավուշում ԽԵԿ-ի գլխաքանակը կազմում է ավելի քան 30 հազ., որից 13.3 հազարը կովկերն են: 2019 թ. մարզին բաժին էին ընկնում ՀՀ-ում ԽԵԿ-ի գլխաքանակի 5.3 %-ը, մսի արտադրանքի 5.5 %-ը, կաթի արտադրանք՝ 5.7 %-ը: Տավուշը ՀՀ-ում հայտնի է խոզաբուծությամբ: Վերջին տարիներին դրանց գլխաքանակը մարզում կազմել է 16.5-17.7 հազ. (ՀՀ մոտ 9 %-ը): 2017-2019 թթ. մարզում ոչխարների և այծերի գլխաքանակը նվազել է 2.7 հազարով (16.9-14.2 հազ.): Մարզին բաժին էր ընկնում ՀՀ-ում ՄԵԱ-ի գլխաքանակի 2.2 %-ը: ՀՀ-ում Տավուշը Լոռու մարզի հետ առաջատար է ձիերի գլխաքանակով (2.4 հազ.): Տավուշին բաժին է ընկնում ՀՀ-ում ձիերի գլխաքանակի 22 %-ը: Մարզի անասնաբուծության կարևոր ճյուղերից է նաև թռչնաբուծությունը, որն ապահովում է ՀՀ-ում արտադրվող ձվի մոտ 7 %-ը:

Տավուշում, հատկապես վերջին տասնամյակում, աճի բարձր տեմպեր ունեն գրոսաշրջությունը և ռեկրեացիան: Դիլիջանում, Իջևանում, Ենոքավանում և մարզի այլ բնակավայրերում ստեղծվել են բազմաթիվ հյուրանոցներ, սննդի օբյեկտներ, հանգստյան տներ, առողջարաններ, ժամանցի և զվարճությունների վայրեր:

Մարզի տրանսպորտային համակարգում առանձնահատուկ դեր ունի ավտոմոբիլային տրանսպորտը: Աղստևի հովտով անցնող Իջևան-Հրազդան երկարությին չի գործում: Մարզի տարածքով Հայաստան է մուտք գործում Հյուսիսային Կովկաս-Վրաստան-Հայաստան գազատարը: Ճանապարհային ցանցը բաղկացած է 153 կմ միջակատական, 337 կմ հանրապետական և 300 կմ մարզային նշանակության ուղիներից: Մարզում է գտնվում Այրում երկարությային կայարանը, որը մարզի տնտեսության ակտիվացման ժամանակ կարող է մեծ դեր ունենալ բեռնափոխադրություններում:

բումների իրականացման գործում: Այրումի և Բագրատաշենի փոքր օդանավակայաններն առաջմ չեն գործում:

Զբոսաշրջության զարգացման հետ կապված՝ մարզում ստեղծվել են մանրածախ առևտություններ (ավելի քան հազար), զյուղատնտեսական և սպառողական ապրանքների շուկաներ, տարբեր ծառայություններ:

Մարզն ապահովված է նաև նախակրթական, հանրակրթական և մշակութային, միջին մասնագիտական, կրթական հաստատություններով: Այստեղ գործում է բուհերի 2 մասնաճյուղ: Առողջապահական հաստատությունների ցուցանիշներով մարզը միջին տեղ է զբաղեցնում հանրապետությունում: Մարզն ունի առաջնակարգ մարզադաշտ, երկրագիտական 2 թանգարան, պատկերասրահի մասնաճյուղ:

Տավուշում առկա է տնտեսական զարգացման խիստ անհամաշափություն: Զարգացման առավել բարձր տեմպեր ունի Դիլիջան քաղաքը: Այստեղ են կենտրոնացված մարզի հիմնական հյուրանոցային կառույցները, ստեղծվել են ֆինանսական կառույցների մասնաճյուղեր, ՀՀ կենտրոնական բանկի ուսումնական բազա, զբոսաշրջային կազմակերպություններ և այլն:

Մարզի սոցիալ-տնտեսական զարգացման առավել իրատապ խնդիրներից են սահմանամերձ բնակավայրերի ամրապնդումը, դրանց տնտեսաարտադրական ներուժի հզրացումը, ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, բնակչության սոցիալ-ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և արտագաղթի դադարեցումը: Այդ ամենը կնպաստեն սահմանամերձ բնակավայրերի զարգացմանը և ՀՀ եյտախարենքյան սահմանների պաշտպանունակության ամրապնդմանը:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ո՞րն է Տավուշի մարզի ՏԱԴ-ի առանձնահատկությունը և կարևորությունը ՀՀ-ի համար:
2. Բնական պայմանների ի՞նչ առանձնահատկություններով է աչքի ընկնում Տավուշ մարզը:
3. Բնառեսուրսային ի՞նչ ներուժ ունի Տավուշը:
4. Գնահատե՛ք Տավուշի տրանսպորտաաշխարհագրական դիրքը:
5. Վերլուծե՛ք Տավուշի տարաբնակեցման համակարգը:
6. Որո՞նք են Տավուշի մարզի տնտեսության մասնագիտացման հիմնական ճյուղերը: Հիմնավորե՛ք պատասխանը:
7. Բնօգտագործման և բնապահպանության ի՞նչ առաջնահերթություններ կան Տավուշի մարզում:

5.12. Մայրաքաղաք Երևանը

Տնտեսության զարգացման նախադրյալները: Երևանը ՀՀ խոշորագույն վարչաքաղաքական, տնտեսական, գիտական և մշակութային կենտրոնն է: Մայրաքաղաք է դարձել 1918 թ.: Հայաստանի 13-րդ մայրաքաղաքն է:

Երևանը զբաղեցնում է 223 կմ² տարածք (ՀՀ 0.7 %-ը) [16]: Այն գտնվում է Արարատյան գոգավորությունում և եզրավորող սարավանդներում՝ Հրազդանի ափերին՝ ծովի մակարդակից 860-1390մ բարձրությունների վրա: **Երևանն ունի համեմատաբար նպաստավոր աշխարհագրական դիրք՝ ՀՀ մնացած տարածքների համեմատ:** Ընկած է ՀՀ տարածքի երկրաչափական կենտրոնից ոչ մեծ հեռավորության վրա՝ Արարատյան դաշտից նախալեռնային սարավանդների անցման գոտում՝ ամֆիթատրոնաձև, հյուսիսից հարավ իջնող Երևանյան գոգավորությունում: Երևանի տարածքն ընդարձակվել է հատկապես 1950-ական թվականներից հետո, երբ տնտեսական արագ աճի պատճառով այն տարածվեց դեպի Արարատյան դաշտի համեմատաբար ցածրադիր մասերը, հյուսիս, հյուսիսարևելք և հյուսիս-արևմուտքի բարձունքները: Զևավորվեցին քաղաքի Նոր Նորք, Ավան-Սրբինչ, Արաբկիր, Հարավարևմտյան, Դավթաշեն, Շենգավիթ, Աջափնյակ և այլ թաղամասերը: Երևանի սահմանները հասան Եղվարդի և Կոտայքի սարավանդներին, քաղաքն ընդգրկեց Նորքի բարձունքները, ինչպես նաև հարակից այլ տարածքներ [9]: **Երևանի առավելագույն ձգվածությունը հյուսիսից հարավ շուրջ 20 կմ է, արևմուտքից արևելք՝ 19 կմ:**

Տնտեսական արագ զարգացումը, ինչպես նաև մայրաքաղաքային գործառույթի իրականացումը զգալի դեր են ունեցել Երևանի ՏՏ-ի բարելավման և հետագա զարգացման համար (քննակավայրերը կամ տարածքները պատմական զարգացման ընթացքում կերտում են իրենց ՏՏ-ը): ՀՀ տարածքի նկատմամբ կենտ-

բոնական դիրքը, տնտեսական, վարչական, գիտակրթական և սոցիալ-մշակութային սպասարկման առումով ձգողական մեծ ներուժն ապահովել են Երևանի տարածամանակային մատչելիությունը ՀՀ գրեթե բոլոր տարածքների և բնակչության համար: **Քաջի միկրոյից՝ Երևանն ունի նաև բարենպաստ մեզո ՏԱՐ:** Այն կարող է դարնալ ցամաքային և օդային տարանցիկ կարևոր կետ Մերձավոր ու Միջին Արևելքի, Արևմուտքի և Արևելքի, ինչպես նաև Հյուսիսի և Հարավի միջև: Այդ գործընթացին կարող է նպաստել նաև ԵԱՏՄ շրջանակներում ՀՀ դերի մեծացումը՝ որպես ԵԱՏՄ և այլ երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը նպաստող տարանցիկ երկիր կամ տարածք:

Երևանի տարածքի մակերևույթը կազմված է երիտասարդ հրաբխային ու նստվածքային ապարներից: Քաղաքի զգալի հատվածների ընդերքում կան բազալտային շերտեր, իսկ Ավան և Զրվեծ թաղամասերում՝ տուֆի ու հրաբխային խարամի պաշարներ, Ավան թաղամասի և հարակից տարածքների ընդերքում՝ կերակրի աղի հարուստ և բարձրակարգ պաշարներ, որոնք արդյունահանվում են, իսկ առաջացած ստորգետնյա տարածքներն օգտագործվում են որպես բուժարաններ թոքային առանձին հիվանդությունների բուժման համար: Քաղաքի ծայրամասային առանձին՝ հարավային և հարավարևմտյան տարածքներում իրականացվում է նաև բազալտի արդյունահանում:

Երևան քաղաքի ռեկլեմքը բավական բարդ և կտրտված է, որը քաղաքաշինական առումով ստեղծում է լրացուցիչ ծախսեր ու դժվարություններ, սակայն ձիշտ լուծումների միջոցով քաղաքը ձեռք է բերում առավել գրավիչ տեսք և կենսագործունեության կազմակերպման համար բավարար պայմաններ: **Ժամանակակից պայմաններում ներգնա զրուաշրջության համար առանձնահատուկ գրավչություն** է համարվում նաև բնակավայրի տեղա-

դիրքը՝ արտաքին ձևաբանական նկարագիրը կամ բնակավայրի կառուցապատման ու քաղաքաշինական տարրերի «հարմակածությունը» ռելիեֆի տարրերի հետ: Երևանն այս առումով բավական շահեկան դիրքերում է և ապահովում է ներգնա գրոսացրացային հոսքեր տարբեր երկրներից:

Երևանի տարածքին բնորոշ են բարեխառն ցամաքային և մերձարևադարձային կիսաչոր կիմայական պայմանները: Այստեղ պարզ արտահայտվում են կիմայական չորս եղանակները: Առավել երկարատև է ամառ՝ մայիսի կեսերից մինչև հոկտեմբերի 10-15-ը: Ամռանը հիմնականում շոգ է, միջին ջերմաստիճանը տատանվում է 23.7-25.8-ի սահմաններում, առավելագույն բարձր ջերմաստիճանը գրանցվել է մոտ 42°C : Ամենացուրտ ամիսը հունվարն է, որի միջին օրեկան ջերմաստիճանը -3.6°C է, բացարձակ նվազագույնը՝ -28.2°C : Միջին տարեկանը՝ 11.9 [48]: Տեղումների միջին տարեկան քանակը մոտ 300 մմ է, որոնք առավել շատ թափվում են գարնանը, մասսամբ՝ աշնանը: Զմռանը հիմնականում առաջանում է կայուն ձնածածկույթ: Որոշ տարիների դեկտեմբերի վերջին տասնօրյակից մինչև հունվարի վերջերը լինում են մառախլապատ ցուրտ եղանակներ, և դիտվում է ջերմաստիճանի շրջադասություն (ինվերսիա): Գարունը համեմատաբար կարճատև է և տաք: Հաճախակի լինում են ցրտաշունչ ձմեռներ: Օդի հարաբերական խոնավության միջին տարեկան ցուցանիշը 62 % է: Այն առավել բարձր է նոյեմբերից փետրվար ամիսներին (73, 79, 81 և 74 %՝ ըստ ամիսների), առավել ցածր՝ հուլիս-օգոստոս ամիսներին (47 %): Արևափայլից միջին տարեկան տևողությունը 2696 ժամ է, հուլիս ու օգոստոս ամիսներին այն կազմում է 359 և 352, իսկ դեկտեմբեր և հունվար ամիսներին՝ 89 և 90 ժամ [10]:

Հարակից տարածների ռելիեֆով պայմանավորված՝ գարնան վերջերից և ամբողջ ամռան ընթացքում Գեղամա լեռներից և

Արագածից դեպի Երևան են փշում **լեռնահովտային զով քամիներ**, որոնք երեկոյան ու զիշերային ժամերին յուրահատուկ միկրոկլիմա են առաջացնում՝ ցերեկային ժամերի շոգերից հետո:

Տարածքի ռելիէֆային պայմանների բազմազանության և տարբեր հատվածների միջև շուրջ 550 մ բացարձակ բարձրությունների տարբերությունների պատճառով քաղաքի ցածրադիր և բարձրադիր շրջանների միջև տարվա տարբեր սեզոններին նկատելի են եղանակային տարրերի, ինչպես նաև **միկրոկլիմայական պայմանների տարբերություններ**: Քաղաքի տարբեր հատվածներում միկրոկլիմայական պայմանների տարբերություններ են առաջանում՝ կախված շրջակա միջավայրի բնույթից, ինչպես նաև կառուցապատման խտությունից և մարդածին այլ ազդակներից:

Երևանի տարածքով է անցնում Հրազդան գետը: Վերջինիս Գետառ, Զրվեծ և Մուշադրյուր (Շոռբուլաղ) վտակներն ունեն **սելավավտանգավորություն** և վերցվել են արհեստական հուների մեջ: Հրազդանի վրա կառուցվել է (1967 թ.) արհեստական ջրամբար («Երևանյան լիճ» ջրամբար), որն օգտագործվում է ոռոգչական նպատակով, ինչպես նաև կարգավորում է Հրազդան գետի հոսքը: Երևանի տարածքում կան նաև բնական կամ արհեստական այլ լճակներ, որոնց մի մասը սնվում է ստորգետնյա արտեղյան աղբյուրներից: Այդպիսին է օրինակ Էրեբունի թաղամասում գտնվող «Աղի» լճակը: Վերջինիս ջուրն ունի նաև բուժիչ նշանակություն:

Երևանը գրեթե ամբողջությամբ ապահովված է խմելու ու ոռոգման ջրագծերով: Քաղաքի ջրամատակարարումը իրականացվում է Գառնու ու Ապարանի բարձունքներից և Արարատյան արտեղյան ավազանից քաղաք հասնող սննման աղբյուրների միջոցով: Քաղաքի տարբեր հատվածներում ստեղծվել են բազմաթիվ շատրվաններ և հարյուրավոր ցայտաղբյուրներ:

Երևանի տարածքի հողային ծածկույթում տիրապետում են կրաքարային, կավային քարքարոտ հողատիպերը: Քաղաքի հողային ծածկույթը զգալի փոփոխություններ է կրել մարդու գործունեության պատճառով: Կատարվել են հողաբարելավման աշխատանքներ, ստեղծվել են արհեստական բուսածածկ տարածքներ, գրոսայզիններ, կանաչ տարածքներ, արհեստական անտառաշերտեր և այլն: Այժմ աշխատանքներ են տարվում 1990-ական թթ. քաղաքի վերացված անտառաշերտերի վերականգնման ուղղությամբ: Կարելի է ասել, որ Երևան քաղաքի գրեթե բոլոր կանաչ տարածքները մարդածին լատաշաբաններ են:

Պատմաաշխարհագրական ակնարկ: Հնագիտական աղբյուրները վկայում են, որ Երևանը ներկայումս աշխարհում առկա քաղաքների մեջ ամենահներից մեկն է:



Նկ.14. Երևանի համայնապատկերը

Այն հիմնադրվել է Ք.ա. 782 թ. Արգիշտի թագավորի կողմից և անվանվել **Էրեբունի:** Մարդը Երևանի տարածքում ապրել է տասնյակ հազարավոր տարիներ առաջ: Այստեղ տարբեր ժամանակներում առաջացել և կործանվել են բազմաթիվ բնակավայրեր (Երևանյան քարայրը, Շենգավիթը և այլն): Զնայած հազարամյա պատմությանը և տարածքի վաղ բնակեցմանը՝ Երևանը սկսել է առավել հայտնի դառնալ 1440 թվականից, երբ այն դարձել է **Հայաստանի վարչաքաղաքական, առևտրական և արհեստագործական կենտրոններից մեկը:** Այնուհետև՝ 1500-ական թվականներից մինչև 1918 թվականը, Հայաստան աշխարհում տեղի ունեցած քաղաքական ու տնտեսական փոփոխություններին զուգընթաց Երևանն ունեցել է տարբեր կարգավիճակներ՝ լինելով Երևանի կուսակալության, Երևանի խանության, Հայկական մարզի, Երևանի նահանգի վարչաքաղաքական կենտրոնը (մանրամասն տե՛ս Թ. Հակոբյանի և ուրիշների «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանի» «Երևան» հոդվածը): 1918 թ. Մայիսյան հերոսամարտերից հետո վերականգնվեց Հայաստանի անկախությունը, և Երևանը դարձավ նորանկախ ՀՀ մայրաքաղաքը:

Երևանի հազարամյա պատմության մեջ առանձնահատուկ տեղ է գրաղեցնում խորհրդային շրջանը: Այդ տարիներին Երևանը դարձավ բազմագործառութային և աճի բարձր տեսակեր ունեցող քաղաք: Այն ոչ միայն Անդրկովկասի, այլ նաև ԽՍՀՄ մասշտարով վարչաքաղաքական, արդյունաբերական, գիտական, ուսումնական, մշակութային հայտնի կենտրոն էր, տրանսպորտային խոշոր հանգույց: Երևանի տնտեսական արագ զարգացումն իր արտացոլումը գտավ նաև քաղաքի բնակչության թվի աճի մեջ (1897-2020 թթ. ընթացքում Երևանի բնակչության թվի աճի մասին մանրամասն տե՛ս Աղ. 24-ը): Այդ տարիներին Երևանի բնակչության թվաքանակի կտրուկ աճը պայմանավորված էր ոչ

միայն մայրաքաղաքային գործառույթներով, այլ նաև տնտեսության արագ աճին համապատասխան ստեղծվում էին նոր աշխատատեղեր, ինչը նպաստում էր ՀՀ այլ քաղաքներից ու շրջաններից դեպի Երևան բնակչության ներհոսքին: Երևանի աճին նպաստում էին նաև Վրաստանից ու Աղրբեջանից հայ բնակչության ներհոսքը, 1920-ական թվականներից սկսված և հետագայում շարունակվող հայրենադարձությունը, ինչպես նաև ուրբանացման գործընթացները: Եթե մինչև խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանից զգալի թվով հայ բնակչություն աշխատանք և ապրուստի միջոցներ էին որոնում Թիֆլիսում, Բաքվում, Մոսկվայում, Պետերբուրգում և այլ քաղաքներում ու երկրներում, ապա 1920-ական թվականներից Հայաստանն ու մայրաքաղաք Երևանը դարձան արտասահմանյան տարբեր երկրներում ապրող տասնյակ հազարավոր հայերի համար հուսալի ապաստան: 1924-1926 և 1932-1936 թթ. Ֆրանսիայից, Հունաստանից, Իրանից և այլ երկրներից Հայաստան են վերադարձել մոտ 75 հազար հայեր, որոնց մեծ մասը տեղափոխվել է Երևանում [2]: Այդ նպատակով Երևանի շուրջը հիմնվեցին Նոր Արարկիր, Նոր Մալաթիա, Նոր Սեբաստիա և այլ ավաններ, որոնք հետագայում դարձան Երևանի առանձին թաղամասեր: 1946-1949 թթ. Սիրիայից, Իրաքից, Լիբանանից, Ֆրանսիայից, Հունաստանից, Իրանից և այլ երկրներից ՀՀ ներգաղթած ավելի քան 96 հազ. հայերի զգալի մասը բնակչություն է հաստատել Երևանում [1,2,9]: **Երևանի շուրջը հիմնվեցին Նոր Արեշ, Կիլիկիա, Ջերզուն թաղամասերը:** Խորհրդային տարիներին Երևանի բնակչության աճի գործում իր դերն է ունեցել նաև **բնական հավելաճը:** Բնական և մեխանիկական բարձր աճի շնորհիվ 1979 թ. մարդահամարի տվյալներով Երևանի բնակչության թիվն անցավ մեկ միլիոնից: Հարկ է նկատել, որ բնակչության այդպիսի քանակ Երևանը, ըստ գիլավոր հատակագծի, պետք է ունենար 2000 թ.: 1970-ական թթ. մայրա-

բաղաքի բնակչության միջին տարեկան աճը կազմել է մոտ 30 հազ., իսկ 1980-ական թթ.՝ մոտ 17 հազ.: Խորհրդային տարիներին Երևանի բնակչության թիվն ավելացել է մոտ 40 անգամ: Երևանի բնակչության թվաքանակի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 1992 թ.՝ 1254.3 հազ. մարդ:

1992-2012 թթ. Երևանի բնակչության թիվը նվազել է ավելի քան 193 հազարով: Դա պայմանավորված էր երկրում ծայր առած տնտեսական խորը ճգնաժամով: Արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկությունների փակման կամ ոչ լիարժեք հզորությամբ աշխատելու հետևանքով տարեցտարի մեծանում էր գործազրկության մակարդակը, ինչը հանգեցրեց բնակչության արտահոսքի դեպի արտերկիր:

Եթե նկատի ունենանք, որ ԽՍՀՄ վերջին տասնամյակում Երևանի բնակչության թիվը տարեկան աճել է միջին հաշվով 17.0 հազարով, ապա իրադարձությունների բնականոն ընթացքի դեպքում մեր մայրաքաղաքը 2000 թ. պետք է ունենար առնվազն 1.370 հազ. բնակիչ, 2020 թ.՝ ավելի քան 1.8 մլն: 2013 թվականից սկսած՝ Երևանի բնակչության թվաքանակը, չնայած դանդաղ, բայց կայուն կերպով աճել է և 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 1091.7 հազ. մարդ:

մարդ: Վերջին տարիներին մայրաքաղաքի բնակչության թվաքանակի աճը պայմանավորված է տնտեսական իրավիճակի քիչ թե շատ բարելավմամբ, մարզերի համեմատությամբ գրադադարության առավել բարձր մակարդակով, մարզերից դեպի մայրաքաղաք բնակչության միգրացիայի դրական մնացորդով: Չնայած այդ ամենին, ինչպես ՀՀ-ից, այնպես էլ մայրաքաղաքից շարունակվող արտագաղթի պատճառով միգրացիայի մնացորդը դեռևս բացասական է, և Երևանի բնակչության թվի ավելացման գործում ներկայումս առավել մեծ դեր ունի բնական հավելածը: Երևանում, հատկապես վերջին տարիներին, բնակչության բնական հավելածն ավելի բարձր է, քան մարզերում:

Խորհրդային վերջին տարիներին Երևանին բաժին էր ընկնում Հայկական ԽՍՀ-ի բնակչության մոտ 35 %-ը (ներկայումս՝ 36.6 %-ը): Ավելացել է նաև մայրաքաղաքի բնակչության բաժինը ՀՀ քաղաքային բնակչության ընդհանուր թվաքանակում: **Եթե 1980-ական թթ. վերջերին մայրաքաղաքին բաժին էր ընկնում քաղաքային բնակչության մոտ 52 %-ը, ապա՝ 2021 թ.՝ 57.6 %-ը:** Բնակչության թվի այդպիսի կենտրոնացումը մայրաքաղաքում և քաղաքային բնակչության մեջ այդպիսի բարձր մասնաբաժինը հազվադեպ երևույթ են աշխարհում (բացառությամբ գաճաճ պետությունների): Այդպիսի իրավիճակ չկա հետխորհրդային ոչ մի երկրում:

Խորհրդային առաջին մի քանի տասնամյակներին բնակչության թվի արագ աճը և Երևանի տնտեսական, գիտակրթական, մշակութային և այլ բնագավառներում առավել արագ զարգացումն ինչ-որ առումով արդարացված էին ու նպաստում էին երկրի մասշտարով միասնական տնտեսաարտադրական համալիրի ձևագործմանը: 1970-ական թվականներից մայրաքաղաքում բնակչության թվաքանակի այդպիսի համակենտրոնացումը երկրի մասշտարով սկսեց ծնել տնտեսական, սոցիալական, էկոլոգիական և այլ հիմնախնդիրներ: Խնդիր դրվեց սահմանափակելու Երևանի բնակչության թվի մեխանիկական աճը, ապահովելու հանրապետության մնացած քաղաքների ու վարչական շրջանների տնտեսության առավել արագ զարգացումը և բնակչության թվի ավելացումը: Այդ հիմնախնդիրները խիստ արդիական են նաև մեր օրերում:

2007-2019 թթ. Երևան քաղաքում բնակչության ծնելիության գործակիցը տատանվել է 12.4-15.1, մահացության գործակիցը՝ 7.9-8.7 %-ի սահմաններում: 2007-2019 թթ. մայրաքաղաքում բնական հավելածն ավելի բարձր է եղել, քան ՀՀ միջինն է: 2017 և 2019 թթ. ՀՀ-ում այն կազմել է 3.5 և 3.4 %, մայրաքաղաքում՝ 5.2 և

4/9 %օ: Հարկ է նկատել, որ 2014-2019 թթ. ոչ միայն ընդհանուր, այլ նաև քաղաքային բնակչության կտրվածքով մայրաքաղաքն ունեցել է բնական հավելաձի ավելի բարձր ցուցանիշ:

Մայրաքաղաքում բնակչության թվով ամենախոշոր վարչական շրջանը Շենգավիթին է, որտեղ 2021 թ. բնակչության թիվը կազմել է 141.9 հազ. մարդ, հաջորդը՝ Մալաթիա-Սեբաստիան է՝ 140.6 հազ. մարդ, երրորդը՝ Նոր Նորքը՝ 134.0 հազ. մարդ, չորրորդը՝ Էրեբունին՝ 130.0, հինգերրորդը՝ Կենտրոնը՝ 126.2 հազ. մարդ: Բնակչության թվոր փոքր վարչական շրջաններն են՝ Նորբարաշենը՝ 9 հազ. մարդ, Նորք Մարաշը՝ 11.9 հազ. մարդ, Դավիթաշենը՝ 43.1 հազ. մարդ, Ավանը-Առինջը՝ 53.2 հազ. մարդ, և Քանաքեռ-Զեյթունը՝ 74.9 հազ. մարդ [42]:

Մայրաքաղաքի բնակչության բաշխումը՝ ըստ հիմնական տարիքային խմբերի, 2019 թ. ուներ հետևյալ պատկերը՝ 0-15 տարեկան՝ 222294 մարդ (20.5 %), 16-62 տարեկան՝ 682472 մարդ (63.1 %) և 63 ու ավելի տարեկան՝ 177108 (16.4 %): **Ըստ սեռային կազմի՝ Երևանի բնակչության 46.2 %-ը կազմում են տղամարդիկ, մենացածը՝ կանայք:** Տղամարդ բնակչության 23.4 %-ը կազմում են 0-15 տարեկանները, 62.3-ը՝ 16-62 տարեկանները, 14.3-ը՝ 63 և ավելի տարեկանները: Կանանց բաշխումը՝ ըստ տարիքային հիմնախան խմբերի, ունի այսպիսի պատկեր՝ 0-15 տարեկաններ՝ 18.1, 16-62 տարեկաններ՝ 63.7 և 18.2 %-ը՝ 63 և բարձր տարիքի: **Այսպիսով՝ Երևանի մինչաշխատունակ բնակչության մեջ տղամարդիկ տոկոսային 5.3 կետով ավելի են, քան կանայք (բացառակ թվով այն կազմում է շուրջ 11.2 հազ. մարդ):** Տարիքային հաջորդ խմբում (16-62 տարեկաններ) կանայք 1.4 տոկոսային կետով գերազանցում են տղամարդկանց (59.6 հազարով), իսկ 63 և ավելի տարիքային խմբում կանայք շուրջ 1.5 անգամ գերազանցում են տղամարդկանց կամ տոկոսային 3.9 կետով ավելի են տղամարդկանցից:

2019 թ. Երևանի բնակչության մեջ աշխատանքային ռեսուրսների մասնաբաժինը կազմել է մոտ 60 %: Երևանում աշխատանքային ռեսուրսների մասնաբաժինը բնակչության թվաքանակում տոկոսային 7.7 կետով փոքր է ՀՀ միջին ցուցանիշից (ՀՀ-ում՝ 67.5 %): Երևանի աշխատանքային ռեսուրսների մոտ 59 %-ը կազմում է աշխատուժը, 41.5 %-ը՝ աշխատուժից դուրս բնակչությունը:

Տնտեսությունը: Երևանը նախախորհրդային շրջանից ժառանգել էր քայլայված գինու-կոնյակի գործարաններ, մի քանի տասնյակ տնայնագործական ու արհեստագործական ձեռնարկություններ և 4-5 այլ կարգի մանր «գործարաններ»: Արդեն 1925-1926 թթ. քաղաքի արդյունաբերությունը ոչ միայն վերականգնված էր, այլև իր արտադրանքով գերազանցում էր նախապատերազմյան մակարդակը: 1926 թ. գործարկվեց Երևանի առաջին ջրհեղը, իսկ 1927-1929 թթ.՝ կարբիդի գործարանը, կարի ֆաբրիկան, հացի գործարանը, մեխանիկական նոր գործարանը, ծխախոտի և կոշիկի ֆաբրիկանները և այլ ձեռնարկություններ: 1930-ական թթ. Երևանում դրվեցին քիմիական և մեքենաշինական արդյունաբերության հիմքերը: Հիմնվեցին շինանյութեր արտադրող մի քանի գործարաններ, արագ տեմպերով զարգանում էին սննդի և թեթև արդյունաբերության ճյուղերը, վերակառուցվում էին հները, ստեղծվում՝ նորերը: 1941-1945 թթ. ևս Երևանում ստեղծվել են արդյունաբերական նոր ձեռնարկություններ:

Երևանի տնտեսությունը բուռն վերելք է ապրել Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո: Արագ տեմպերով զարգանում էին մեքենաշինությունը, գրւնավոր մետաղաձուլության, քիմիական, թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերը: Երևանի ձեռնարկություններում թողարկվում են կարելներ, այլումին, այլումին է իրեր և առարկաներ, ավտոմեքենաներ, գեներատորներ, ԷՀՄ-եր, հիդրոտուրբիններ, գեներատորներ,

տրանսֆորմատորներ, մետաղահատ հաստոցներ, կեկտրալամպեր, ավտոդրոդեր և ավտոպահեստամասեր, ներկեր, լաքեր, պլաստմասաներ, կահույք, ժամացույցներ, կեկտրաչափիչ սարքեր, շինանյութեր, թեթև և սննդի արդյունաբերության զանազան արտադրատեսակներ և այլն:

1960-ական թվականներից հետո Երևանի տնտեսական արագ զարգացումը հանգեցրեց ՀՀ մասշտաբով տնտեսական կամ արդյունաբերական խոշոր հանգույցի ձևավորմանը, որը խոշորներից մեկն էր նաև Անդրկովկասում: Այն ընդգրկում էր ՀՀ հզորագույն արդյունաբերական կենտրոն Երևանը, խոշոր ու միջին կենտրոններ և կետեր Արովյանը, Արզնին, Նոր Հաճնը, Բյուրեղավանը, Էջմիածինը, Արմավիրը, Արտաշատը, Մասիսը, Աշտարակը և դրանց հետ միասին՝ տարաբնակեցման միասնական համակարգ կազմող քաղաքատիպ ավաններն ու գյուղերը՝ Երևանից մինչև 40-50 կմ հեռավորության վրա: Երևանի արդյունաբերական հանգույցը ավելի քան 300 կոմբինատների, գործարանների, ֆաբրիկաների, հանքերի, կեկտրակայանների մի հզոր համալիր էր, որն ուներ կեկտրակներգիալի, գազի, մասամբ՝ ջրի միասնական մատակարարում, տրանսպորտային ուղիների միասնական ցանց [28]: Երևանի արդյունաբերական հանգույցին բաժին էր ընկնում Հայկական ԽՍՀ բնակչության մոտ 45-46 %-ը (1.5 մլն մարդ): Այն տալիս էր մեր երկրի արդյունաբերական արտադրանքի 75 %-ից ավելին: Եթե մինչև 1940-ական թվականները Երևանում զարգանում էին առավելապես հումքատար ու ջրատար, հետագա տարիներին՝ աշխատատար ու գիտատար արտադրությունները:

Խորհրդային առաջին տասնամյակներին Երևանի մասնաբաժինը ՀՀ արդյունաբերության համախառն արտադրանքում բավական բարձր էր, իսկ 1960-1970 թթ. այն կազմում էր 40-45 %: Դա պայմանավորված էր Երևանի նպաստավոր ՏԱԴ-ով, զարգա-

ցած ենթակառուցվածքներով, բարձրորակ աշխատուժով, բազմաթիվ գիտական ու նախագծային ինստիտուտների, նախագծային բյուրոների առկայությամբ և այլ գործոններով:

Խորհրդային վերջին երեք տասնամյակի ընթացքում Երևանը ոչ միայն Հայաստանի, այլ նաև ԽՍՀՄ մասշտաբով դարձել էր արդյունաբերական նշանավոր կենտրոն: Այն հեկտարատեխնիկական մեքենաշինության, հաստոցաշինության, սարքաշինության, քիմիական, թեթև և սննդի արդյունաբերության հայտնի կենտրոն էր ոչ միայն ԽՍՀՄ-ում, այլ նաև Մերձավոր և Միջին Արևելքում: Քաղաքի բազմաթիվ ձեռնարկություններում արտադրվում էին ԽՍՀՄ պաշտպանության նախարարության համալիրի ապահովման համար տարբեր սարքավորումներ, դետալներ և հանգույցներ: Երևանն արտադրական սերտ կապերի մեջ էր ԽՍՀՄ հարյուրավոր արտադրական ձեռնարկությունների և միութանական մյուս հանրապետությունների հետ:

1980-ական թթ. ՀՀ տարածաշրջաններում արդյունաբերության համեմատաբար բարձր տեմպերով աճի և նոր ձեռնարկությունների ստեղծման պատճառով Երևանի տեսակարար կշիռը մեր երկրի արդյունաբերության մեջ որոշակիորեն նվազեց: 1990-ական թթ. երկրում ստեղծված տնտեսական ճգնաժամն առավել մեծ հարված հասցեց շրջանների արդյունաբերական ձեռնարկություններին (հատկապես Գյումրուն և Վանաձորին), ինչի հետևանքով Երևանի մասնաբաժինը Հայկական ԽՍՀ արդյունաբերության մեջ նորից բարձրացավ: 1998 թ. այն կազմել է 43.5 %, 1999 թ.՝ 46 %, 2001 թ.՝ 49.3 %: 2019 թ. Երևանին բաժին էին ընկերում ՀՀ արդյունաբերական արտադրանքի 37.7 %-ը, զյուղատնտեսության՝ 1.2 %-ը, շինարարության՝ 53.2 %-ը, մանրածախ առևտուրի՝ 73.3 %-ը, ծառայությունների՝ 83.4 %-ը [16]:

Երևանի արդյունաբերության հիմնական ուղղությունները սննդամթերքի, ծխախոտի, խմիչքի տարբեր տեսակների և հիմ-

նային մետաղների արտադրություններն են: Հատ արտադրության բաժինների Երևանի արդյունաբերության 84.7 %-ը կազմում են մշակող արդյունաբերության ճյուղերը, 12 %-ը բաժին է ընկնում կեկտրակներգիայի, գազի, ջրի արտադրությանը և բաշխմանը, 2.4 %-ը՝ ջրամատակարարմանը, կոյուղուն, թափոնների կառավարմանը և վերամշակմանը, 0.9 %-ը՝ հանքագործական արդյունաբերությանը:

Վերջին տարիներին մայրաքաղաքում աշխատանքներ են տարվում արդյունաբերության նորագույն ճյուղերի ստեղծման և գարգացման ուղղությամբ: Դեռևս խորհրդային վերջին տասնամյակներին, ինչպես նաև անկախության անցած տասնամյակների ընթացքում ՀՀ-ում ստեղծվել են նախադրյալներ արդյունաբերության գիտատար, աշխատատար ու բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված ճյուղերի գարգացման համար: Այս առումով Երևանը գտնվում է առավել շահեկան վիճակում: Այստեղ են կենտրոնացված ՀՀ գիտահետազոտական հաստատությունների մեծամասնություննը, գիտակրթական կենտրոնները և ՀՀ որակյալ աշխատուժի մեծ մասը: Ծրագրեր են մշակվում մայրաքարաքում բարձր տեխնոլոգիաների վրա հիմնված արտադրությունների կազմակերպման (արտասահմանյան ներդրումների հիման վրա), ինչպես նաև Երևանի և ՀՀ-ի համար բացառիկ նշանակություն ունեցող առանձին արտադրությունների վերաբացման ուղղությամբ: Այդ առումով բացառիկ նշանակություն կունենա «Նախիթի» վերագործարկումը:

Մայրաքաղաքի տարածքում առավել արդյունաբերական հատվածը Շենգավիթ վարչական շրջանն է: Այստեղ կենտրոնացված է Երևանի արտադրական ներուժի ավելի քան 25 %-ը: 2019 թ. այս վարչական շրջանին բաժին էր ընկնում մայրաքաղաքի արդյունաբերական արտադրանքի ծավալի ավելի քան 37 %-ը: Երկրորդը Կենտրոն վարչական շրջանն է՝ ավելի քան 18 % ցու-

ցանիշով [16]: Այս առումով հայտնի են նաև Արաբկիր, Մալաթիա-Սեբաստիա և Էրեբունի վարչական շրջանները: Հասկանալի է, որ առաջիկա տարիներին ինչպես ՀՀ, այնպես էլ Երևանի արդյունաբերության կառուցվածքում տեղի են ունենալու փոփոխություններ, որոնց հետևանքով կձևավորվեն մայրաքաղաքի արդյունաբերության ճյուղային կառուցվածքի նոր համամասնություններ: Փոփոխություններ կլինեն նաև մայրաքաղաքի արդյունաբերության տեղաբաշխման ու տարածքային կազմակերպման մեջ:

Երևանի տարածքում դեռևս խորհրդային տարիներին ձևավորվել էին նաև **գյուղատնտեսական արտադրական ձեռնարկություններ**: Ճիշտ է, որանց մեծ մասը ներկայումս չկան, սակայն մայրաքաղաքի տարածքում կան **3349 հա գյուղատնտեսական նշանակության հողեր**, որոնցից **945 հա-ն վարելահողեր** են [16]: Դրանք հիմնականում նախկինում գյուղական բնակավայրի կարգավիճակ ունեցող Հաղթանակ, Ներքին Զարբախ, Ջրաշեն, Սուշավան Սպանդարյան (այժմ՝ Երևանի Սիլիկյան թաղամաս) գյուղերի և Նուբարաշեն վարչական շրջաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերն են: 2019 թ. Երևանին բաժին էր ընկնում ՀՀ ԳՀԱ-ի 1.2 %-ը: Երևանը նշանակալից բաժին ունի խոզարուծության և թռչնարուծության բնագավառներում: 2019 թ. մայրաքաղաքին բաժին էր ընկնում ՀՀ խոզերի գլխարնակի 8.6 %-ը:

Երևանը ՀՀ խոշորագույն տրանսպորտային հանգույցն է: Այստեղից դուրս են զալիս գլխավոր երկաթուղագծերը, հանրապետական և միջազգային նշանակության ավտոմոբիլային ճանապարհները: Երկաթուղին Երևան մոտք է գործել 1902 թ.: Խորհրդային տարիներին երկաթուղով Երևան էին հասնում անհրաժեշտ հացահատիկը, վառելիքի տարրեր տեսակներ, տարբեր տեսակի մեքենաներ և սարքավորումներ, այստեղից

արտահանվում էին արդյունաբերական տարբեր տեսակի ապրանքներ: Անկախության տարիներին Աղրբեջանի կողմից ՀՀ տրանսպորտային շրջափակման պատճառով Երևան մուտք գործող և Երևանից դուրս եկող երկաթուղագծերը աշխատում են ոչ լիարժեք ծանրաբեռնվածությամբ և կատարում են տեղական նշանակության բեռնափոխադրումներ և ուղևորափոխադրումներ: **Զբոսաշրջային սեզոնին աշխատում** է նաև Երևան-Բաթումի ուղևորատար երկաթգիծը: Սևծովյան նավահանգիստներից երկաթուղով Հայաստան և Երևան են հասցվում բենզին, կերոսին, տարբեր տեսակի բեռներ և հացահատիկ: **Գործում** են նաև Երևան-Գյումրի, Երևան-Մասիս-Արարատ-Երասխ ուղևորատար գծերը: Երևանից դուրս եկող ավտոմոբիլային ճանապարհներով ՀՀ-ն կապվում է Վրաստանի, Իրանի, ԱՀ-ի և Ռուսաստանի հետ: Առավել մեծ դեր ունեն Երևան-Ապարան-Վանաձոր-Ալավերդի, Երևան-Սևան-Դիլիջան-Ֆջումրեյան, Երևան-Արտաշատ-Վայք-Գորիս-Ստեփանակերտ (Գորիս-Կապան-Մեղրի), Երևան-Թալին-Գյումրի-Բավրա ավտոճանապարհները: Երևանը ՀՀ գլխավոր օդային դարպան է, միաժամանակ տարածաշրջանում օդային տրանսպորտի խոշոր հանգույցներից մեկը: «**Զվարթնոց**» օդանավակայանը վերակառուցվել է և համապատասխանում է միջազգային չափորոշիչներին: Այսուղից ՀՀ-ն կապ է հաստատում աշխարհի տասնյակ երկրների ու քաղաքների հետ:

Երևանի տրանսպորտային համակարգի կարևոր մասն են կազմում **մետրոպոլիտենը** և **տրոլեյբուսային ուղիները**, որոնք զգալիորեն թերևսացնում են ներքաղաքային ուղևորափոխադրումները և հիոլոգիական առումով անվնաս են: Առաջիկա տարիներին ներքաղաքային տրանսպորտի այս երկու տեսակները ավելի մեծ տեղ են ունենալու Երևանի ուղևորափոխադրումների

մեջ, քանի որ նախատեսված է կառուցել մետրոպոլիտենի նոր կայարան Աջափնյակ թաղամասում:

Անցած հարյուրամյակի ընթացքում Երևանի աննախադեպ գարգացման շնորհիվ այն դարձել է նաև մեր երկրի **գիտակրթական, առողջապահական և մշակութային օջախների խոշորագույն կենտրոնը**: Երևանում են գտնվում ՀՀ ԳԱԱ-ն՝ իր ճյուղային, մասնագիտական մի քանի տասնյակ ինստիտուտներով, 46 բուհեր, որից 15-ը՝ **պետական**, միջազգային բուհեր: Վերջիններս, բացի տարբեր մասնագիտությունների գծով կադրերի պատրաստումից, զբաղվում են նաև գիտահետազոտական գործունեությամբ: Այս առումով առաջատարը Երևանի **պետական համալսարանն է**, որի 100-ամյակը լրացավ 2019 թ. մայիսին: Երևանում գործում են 253 հանրակրթական դպրոցներ, որոնցից 215-ը՝ **պետական**, 38-ը՝ մասնավոր, 220 նախադպրոցական կրթօջախներ (170-ը՝ **պետական**), 50 երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, միջին մասնագիտական 32 և արհեստագործական 10 հաստատություններ [16]:

Երևանը ՀՀ խոշորագույն **առողջապահական** կենտրոնն է: Այստեղ գործում են առողջապահական առաջնային ծառայություն մատուցող ՀՀ 501 հաստատություններից 144-ը: Մայրաքաղաքի 10.000 բնակչի հաշվով բժիշկների թիվը կազմում է 90 (ՀՀ-ում միջինը 46 է), միջին բուժանձնակազմինը՝ 78.5, հիվանդանոցային մահճակալների քանակը՝ 73 (ՀՀ-ում՝ 41):

Երևանում են գտնվում մեր երկրի մշակութային առավել հայտնի օջախները, որոնցից շատերն ունեն նաև միջազգային ճանաչում (Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ակադեմիական թատրոնը, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տունը, Ա. Մյասնիկյանի անվան ազգային գրադարանը, Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտա-

կան ինստիտուտը (Մատենադարանը) և այլն): Երևանում են գտնվում ՀՀ-ում գործող 23 թատրոններից 18-ը, 104 թանգարաններից՝ 67-ը:

Դեռևս խորհրդային տարիներին մայրաքաղաքի տարբեր վարչական շրջաններում ստեղծվել են գրադարաններ, ստեղծագործական կենտրոններ, մարզական կազմակերպություններ, ժամանցի օբյեկտներ, գրուայգիներ և բնակչության հոգևոր-մշակութային և կենցաղային սպասարկման այլ հաստատություններ: Մայրաքաղաքի սպասարկման ոլորտի կարևորագույն մասն են կազմում մեծածախ ու մանրածախ առևտրի հազարավոր օբյեկտները, զյուղատնտեսական շուկաները, տոնավաճառները, հասարակական սննդի տարբեր կարգի օբյեկտները: Երևանում գործում են մանրածախ առևտրի շուրջ 9100 օբյեկտներ (իսանութներ և կրապակներ):

Երևանում են գտնվում ՀՀ նախագահի, կառավարության, օրենտդրական և դատական իշխանության բարձրագույն մարմինների նստավայրերը, արտասահմանյան դեսպանատները, ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպությունների գրասենյակները, ՀՀ կենտրոնական բանկը, առևտրական բանկերի և ապահովագրական ընկերությունների գլխամասային գրասենյակները:

Մայրաքաղաքի կառուցապատման հիմքերը դրվել են 1920-ական թվականների կեսերից նշանավոր ճարտարապետ Ա. Թամանյանի կազմած գլխավոր հատակագծի հիման վրա: Հետագայում քաղաքի կառուցապատման աշխատանքներում հիմնականում պահպանվել են քաղաքի՝ Ա. Թամանյանի կողմից առաջ քաշված հեռանկարային զարգացման մտահղացումները: Մայրաքաղաքում պահպանվել են հին Երևանից որոշ թաղամասեր՝ Կոնդը, Սարի թաղը, Նորքը, Զորագյուղը, ինչպես նաև քաղաքի կենտրոնական հատվածում առանձին շենքեր ու շինություններ:

Երևանի Հանրապետության հրապարակից (որի տակ հայտնաբերվել են իին Երևանի առանձին կառույցներ) ճառագայթալն դուրս են գալիս քաղաքի տրանսպորտային հիմնական ուղիները: Հանրապետության հրապարակից 1-1.5 կմ շառավղով ընկած է Երևանի «Փոքր Կենտրոն» կոչված քաղաքաշինական հատվածը: Այստեղ են գտնվում մայրաքաղաքի կարևորագույն մի շարք կառույցներ, բուհեր, բանկային և ապահովագրական հիմնարկների գլխամասեր, նախարարություններ, համապետական նշանակության այլ օբյեկտներ: Մայրաքաղաքի բազմաթիվ թաղամասեր ձևավորվել և քաղաքաշինական-ճարտարապետական զարգացում են ստացել 1930-ականներից հետո, առավել ինտենսիվ՝ 1980-ական թվականներից: Այդպես են ձևավորվել **Նոր Արեգ, Մալաթիա-Սեբաստիա, Արաքիր, Մարաշ, Գեղթուն, Աջափնյակ, Ավան-Առինջ, Նոր Նորք, Դավիթաշեն, Հարավարևմտյան, Նոյ** և այլ թաղամասերը:

Մայրաքաղաքին առանձին շուրջ են տալիս բազմաթիվ զբուայգիները, շատրվանները և ցայտաղյուրները: Արարատյան գոգավորության և Մասիսների համանապատկերը կարելի է վայելել Ծիծեռնակաբերդի բարձունքից, որտեղ կառուցված է **Մեծ Եղեռնի զոհերին նվիրված հուշահամալիրը**: Երևանի տարբեր հատվածներ, որոնք ընկած են քաղաքով անցնող Հրազդան գետի տարբեր ափերին, միմյանց հետ կապված են «Հաղթանակ», «Հրազդան Մեծ», «Դավիթաշեն» կամուրջներով: Երևանի գիշերային համայնապատկերին առանձնակի շուրջ են տալիս «Մայր Հայաստան» հուշարձանը, Ծիծեռնակաբերդի բարձունքում կառուցված **Վ. Դեմիքյանի անվան մարզահամերգային համալիրը**, Նորքի բարձունքում վեր խոյացող հեռուստատեսության աշտարակը (318 մ), Հանրապետության հրապարակի շատրվանները, Երևանի 2800-ամյակին նվիրված նորակառույց զբոսայգին, ճարտարապետական այլ կառույցներ ու շինուայիլներ: Այդ ամենի

շնորհիվ Երևանը դարձել է ՀՀ գրոսաշրջային հիմնական կենտրոնը՝ իր բազմաթիվ հյուրանոցներով, հյուրընկալության ու ժամանցի վայրերով և գրոսաշրջային այլ գրավչություններով:

Հարցեր և առաջադրանքներ

1. Կատարե՛ք Երևանի աշխարհագրական դիրքի բաղադրիչների վերլուծություն ու գնահատում՝ միկրոմակարդակով, մեզոմակարդակով և մակրոմակարդակով:

2. Կատարե՛ք Երևանի ժամանակակից քաղաքաշինական պատկերի ձևավորման վերլուծություն:

3. Ի՞նչ գործոններ են նպաստել Երևանի ՏՍԴ-ի քանակական ներուժի մեծացմանը:

4. Կատարե՛ք Երևանի տարածքի բնառեսուրսային ներուժի վերլուծություն:

5. Կատարե՛ք Երևանի՝ որպես վարչական, տնտեսական և քաղաքական կենտրոնի պատմաաշխարհագրական վերլուծություն:

6. Ի՞նչ դեր է ունեցել մայրաքաղաքային գործառույթը Երևանի զարգացման համար:

7. Կատարե՛ք Երևանի բնակչության թվի շարժընթացի վերլուծություն:

8. Ի՞նչ գործոններ են նպաստել Երևանի բնակչության թվի արագացն խորհրդային տարիներին:

9. Կատարե՛ք Երևանի բնակչության կառուցվածքի վերլուծություն:

10. Կատարե՛ք Երևանի տնտեսության զարգացման վերլուծություն՝ ըստ փուլերի՝ 1. նախախորհրդային, 2. 1920-1940 թթ., 3. 1945-1970 թթ.,

4. 1970-1990 թթ., 5. 1990-2020 թթ.:

11. Բնութագրե՛ք Երևանը որպես արդյունաբերական հանգույց:

12. Բնութագրե՛ք Երևանը որպես գիտակրթական և մշակութային կենտրոն:

13. Բնութագրե՛ք Երևանը որպես վարչարարական կենտրոն:

14. Բնութագրե՛ք Երևանը որպես տրանսպորտային հանգույց:

15. Բնութագրե՛ք Երևանը որպես ՀՀ տարաբնակեցման ենթակարգային համակարգի կենտրոն:
16. Բնութագրե՛ք Երևանը որպես տարաբնույթ ծառայությունների և առևտությունների կենտրոն:
17. Բնութագրե՛ք Երևանը որպես զբոսաշրջային կենտրոն:
18. Ինչպիսի՞ն է Երևանի տնտեսարտադրական միասնական համակարգի տարածքային կառուցվածքը:
19. Տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական և Էկոլոգիական զարգացման ի՞նչ հիմնախնդիրներ ունի Երևանը:
20. Ինչպէ՞ս եք տեսնում Երևանի զագացման տեսլականը մոտակա հեռանկարում:

ԳԼՈՒԽ 6

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՎՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Համաշխարհային տնտեսության ձևավորման ու կայացման գործում առանձնահատուկ տեղ և դեր է ունեցել աշխատանքի տարածքային կամ աշխարհագրական բաժանումը, մասնավորապես՝ աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանումը (ԱՄԱԲ): Վերջինս ձևավորվել ու զարգացել է աշխատանքի հասարակական բաժանմանը, արտադրության մասնագիտացմանը, տնտեսական կապերի զարգացմանն ու խորացմանը զուգահեռ: Առանձին երկրների, տարածաշրջանների և մայրցամաքների միջև կանոնավոր տնտեսական ու առևտրային կապերի զարգացման ու խորացման շնորհիվ վերջ տրվեց ազգային տնտեսական մեկուսացվածությանը, ձևավորվեց և զարգացավ **աշխատանքի միջազգային աշխարհագրական բաժանումը**: Այն առանձին երկրների մասնագիտացման և մասնագիտացված ապրանքներով ու ծառայություններով փոխանակություն կատարելու գործընթացն է: ԱՄԱԲ բաղկացուցիչներն են մասնագիտացումը (յուրաքանչյուր երկրում միջազգային մասնագիտացման ճյուղերի ձևավորումը) և ապրանքների ու ծառայությունների միջազգային փոխանակությունը՝ միջազգային առևտրի և միջազգային տնտեսական կապերի այլ ձևերով: Միջազգային տնտեսական կապերի զարգացումն ու խորացումը տեղի են ունենում երկկողմանի տնտեսական օգուտի դեպքում, որի հիմքում ընկած է ապրանքի գնի տարբերությունն արտադրության ու սպառման երկրներում: Ընդ որում՝ այդ տարբերությունը պետք է մեծ լինի տեղափոխման

ծախսերից: Մաթեմատիկորեն այն արտահայտվում է հետևյալ կերպ՝ $CV > CP+t$, որտեղ CV -ն ապրանքի գինն է սպառման երկրում, CP -ն՝ ապրանքի գինն է արտադրող երկրում, t -ն՝ տրանսպորտային ծախսերը [38]: ԱՄԱԲ-ը ձևավորվում և զարգանում է, երբ.

ա) տվյալ երկիրն արտահանում է այնպիսի ապրանքներ, որոնց արտադրությունը շահավետ է,

բ) երկիրը ներմուծում է ապրանքներ, որոնց արտադրությունը այս կամ այն պատճառներով անհնար է տեղում կազմակերպել,

գ) երկիրը ներմուծում է այնպիսի ապրանքներ, որոնց արտադրությունը տեղում շահավետ չէ կամ տնտեսապես ձեռնտու չէ,

դ) ապրանքների փոխանակման համար երկրների միջև գործում են էժան ու հարմար տրանսպորտային ուղիներ:

Հայաստան իր խաչմերուկային դիրքի շնորհիվ հարյուրամյակներ շարունակ հանգուցային դիրք է ունեցել եյուսիսից հարավ և արևմուտքից արևելք տանող առևտրային ճանապարհների վրա և առևտրատնտեսական հարաբերությունների մեջ է եղել Չինաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի, Միջազգետքի, Եգիպտոսի, Ռուսաստանի, Եվրոպական շատ երկրների հետ: Արևելքի երկրների շատ ապրանքատեսակներ Եվրոպան ստանում էր Հայաստանով անցնող «Մետաքսի ճանապարհով»:

Երկարատև ժամանակաշրջան պատմական Հայաստանից արտահանվել են հացահատիկ, չորացրած մրգեր, բամբակ, մետաղատեսակներ, աղ, ձկնատեսակներ, ձիեր, կտորեղեն և այլ ապրանքատեսակներ:

Աղյուսակ 71

*ՀՀ արտահանման կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին ունեցող
ապրանքատեսակները (%-ով)[17]*

Ապրանքատեսակները	2016	2017	2019
1. Հանքաքար, խարամ և մոխիր	22,4	26.8	25.1
2. Ոգելից և ոչ ոգելից խմիչքներ, քացախ	9,8	10,8	11.1
3. Բնական կամ արհեստական մարզարիտ, թանկարժեք քարեր կամ կիսաթանկարժեք իրեր, թանկարժեք մետաղներ	8,8	13.0	15.7
4. Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարկիչներ	11.7	10.6	11.0
5. Տեքստիլ հագուստ և հարակից իրեր	4.3	4.3	4.7
6. Սև մետաղներ	3.5	3.8	5.7
7. Պղինձ և դրանից պատրաստված իրեր	3.6	3.4	0.3
8. Ալյումին և դրանից պատրաստված իրեր	4,7	4.6	3.8
9. Հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիոսումային միջոցներ, մոմանյութեր	3.7	3.2	2.6
10. Կերային հատապտուղներ, ընկույզ, ցիտրուսներ և այլ բուսանային մշակաբույսեր	1,7	1.1	2.1
11. Ժամացույցներ և դրանց մասեր	1.3	1.1	1.5
12. Բանջարեղեն, կերային այլ արմատապտուղներ և հատապտուղներ	1.6	0.6	1.5
13. Բանջարեղենի, պտուղների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	1.1	1.1	1.0
14. Վիրաբուժական սարքեր և պարագաներ	-	0.7	2.1

Արտաքին աշխարհի հետ Հայաստանի առևտրատնտեսական հարաբերություններն կ ավելի են զարգացել, եթե տարածաշրջանում ձևավորվել են շուկայական տնտեսական հարաբերություններ, բարեկարգվել են հաղորդակցության ուղիները, ստեղծվել են նորերը: Դրանք առավել ինտենսիվ սկսել են զարգանալ XIX դարի վերջին քառորդից, եթե ՀՀ ներկայիս տարածքում տեղի էր ունենում պղնձաձուլության, գինեգործության, կոնյակագործության, պանրայուղագործության և այլ ճյուղերի ապրանքային արտադրանքի ծավալների աճ: Բացի այդ՝ XIX դարավերջին և XX դարի սկզբներին երկարութին մուտք գործեց Հայաստանի տարածքը: Այս ժամանակաշրջանում մեր երկրից արտահանվող հիմնական ապրանքատեսակներից էին կոնյակը, գինին, սև պղինձը, օլին, ցորենը, գարին, սալիրտը, բուրդը, բամբակը, տեսակային պանիրները, չրերը, գորգերը, կենդանի անասունները, քիչ քանակությամբ՝ պահածոները: Հայաստան ներմուծվում էին տարբեր տեսակի գործիքներ, գործվածքներ, շաքար, թուզ, պողպատ, քարածուխ, ցեմենտ, փայտանյութ, քիմիական նյութեր, թուղթ, ապակեղեն, լուցկի և այլ ապրանքներ [24]:

Աղյուսակ 72

ՀՀ ներմուծման կառուցվածքն ըստ առավել մեծ մասնաբաժին ունեցող ապրանքատեսակների (%-ով) [17]

	2016	2017	2019
1. Միս և մսամթերք	1.4	1.7	1.5
2. Կաթ, կաթնամթերք, թոշնի ձու, բնական մեղր և այլն	1.0	1.1	0.9
3. Հացահատիկներ	2.2	1.9	1.3
4. Կենդանական և բուսական ծագման յուղ	1.3	1.2	0.9
5. Շաքար և հրուշակեղեն՝ շաքարից	1.1	1.4	0.6
6. Կակաո և դրանից պատրաստված իրեր	1.3	1.1	0.9
7. Ոգելից խմիչք	1.9	1.6	1.0
8. Ծխախոտ	3.1	1.8	2.7

9. Դեղագործական մթերք	3.5	4.5	3.8
10. Պարարտանյութեր	1.3	0.7	0.8
11. Եթերային յուղեր, օծանելիք և այլն	1,5	1.4	1.1
12. Պլաստմասա և դրանից պատրաստված իրեր	2.8	2.7	2.7
13. Կառչուկ, ռետին	1.2	1.5	1.1
14. Փայտ	1.1	1.0	1.1
15. Թուղթ և ստվարաթուղթ	1,8	1.7	1.6
16. Տեքստիլ հագուստ	1,8	1,9	1,3
17. Բնական կամ արհեստական մարզարիտ, քանկարժեք քարեր	4.9	5.7	5.4
18. Իրեր՝ սև մետաղներից	1,9	2.0	1,7
19. Միջուկային ռեակտոր, կաթսաներ, տրանսֆորմատորներ, և մեխանիկական մասեր	7,6	9.1	8.9
20. Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, ձայնագրող ապարատներ, դրանց մասեր	6.7	6.3	6.7
21.Վերգետնյա տրանսպորտային միջոցներ	4.9	6.0	13.5
22. Օպտիկական, լրտանկարչական սարքավորումներ, բժշկական և վիրարուժական սարքեր	1,8	1,8	2.0
23. Կահույք	1.3	2.0	2.2
24. Հանքային վառելանյութ, նավթամթերք, բիոնումային միջոցներ, մոմանյութեր	-	15.3	13.8
25. Կերային հատապտուղներ, ընկույզ, ցիտրուսներ և բուստանային մշակաբույսեր	-	1.0	1.2
26. Ալյումին և դրանցից պատրաստված իրեր	-	2.0	2.0
27. Տրիկոտաժե հագուստ և հարակից իրեր	-	1.3	1.6

Խորհրդային տարիներին ՀՀ տնտեսությունը զարգանում էր ԽՍՀՄ-ում ձևավորված տնտեսական միասնական համակարգի սահմաններում: Մեր երկիրն այդ տարիներին ԱՍԱԲ-ին մասնակցում էր առավելապես սոցիալիստական երկրների միջև ձևավորված տնտեսական փոխօգնության խորհրդի շրջանակում (որի կազմում, ԽՍՀՄ-ից բացի, միավորված էին Եվրոպայի նախկին սոցիալիստական երկրները՝ բացի Հարավսլավիայից և Ռումինիայից, ինչպես նաև Կուրքան, Մոնղոլիան, Վիետնամը), ինչպես նաև ԽՍՀՄ հանրապետություններ՝ ապրանքների արտահանմամբ ու ներմուծմամբ: Մինչև 1960-ական թվականները Հայկական ԽՍՀ առևտրաշրջանառության կառուցվածքում ներմուծումը գերազանցել է արտահանմանը: Հետագա տասնամյակների ընթացքում (1960-1990 թթ.) մերենաշինության, քիմիական, սննդի և թերև արդյունաբերության, գունավոր մետաղաձուլության աճի բարձր տեմպերի շնորհիվ արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքում զգալիորեն ավելացավ արտահանման բաժինը: Հայկական ԽՍՀ-ն մինչև 1990-ական թթ. սկիզբն արդյունաբերական արտադրատեսակների մեծ մասն արտահանում էր ԽՍՀՄ մյուս 14 հանրապետություններ և 80-ից ավելի արտասահմանյան երկրներ (այդ թվում՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Կանադա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Ճապոնիա, Գերմանիա և զարգացած այլ երկրներ) [24]: Հայաստանից արտահանվող արտադրատեսակների թիվն անցնում էր 200-ից:

Խորհրդային տարիներին Հայաստանից արտահանվող ապրանքատեսակների մեջ գերակշռում էին բարձրարժեք ճշգրիտ մեքենաները, սարքավորումները, գունավոր մետաղները, զինին, կոնյակը և քիմիկատները: Ներմուծման մեջ գերակշռում էին վառելիքի տարբեր տեսակները, փայտանյութը, հացահատիկը, կիսաֆարբիկատները:

1980-ական թթ. տարեկան միջին հաշվով ՀՀ-ն ներմուծում էր ավելի քան 1 մլն տոննա սև և գունավոր մետաղներ, նույնքան էլ նավթամթերք, շուրջ 1 մլն մ³ փայտանյութ, ավելի քան 1.2 մլն տոննա հացահատիկ [24], հսկայական քանակությամբ պարարտանյութեր, քիմիական, թեթև, սննդի և շինանյութերի արդյունաբերության ճյուղերի զարգացման համար հանքատեսակներ, տրանսպորտային բոլոր տեսակի մեքենաներ, տրակտորներ, գյուղատնտեսական մեքենաներ, տարբեր տեսակի տեխնոլոգիական սարքավորումներ, կենդանական ու բուսական յուղ, շաքար, ձևնամթերք, կահույք, հագուստ և գործվածքներ:

Աղյուսակ 73

ՀՀ արտահանումն ու ներմուծումն ըստ երկրների (մլն ԱՄՆ դոլար) [17; 43]

	2016		2017		2020	
	Արտահանում	Ներմուծում	Արտահանում	Ներմուծում	Արտահանում	Ներմուծում
Հնդամենք	1891.7	3273.5	2237.7	4097.1	2544.5	4559.4
ԱՊՀ երկրներ	412.9	1120.7	595.1	1348.8	739.8	1690.5
ՌՀ ԱՊՀ երկրներ	1378.8	2152.7	1642.6	2749.3	-	-
ԵՄ երկրներ	478.8	739.3	633.8	903.8	4289.8	847.5
Այլ երկրներ	-	-	-	-	1375.7	2021.4
Մնացած երկրներ	-	-	-	-	138.1	647.1

Խորհրդային տարիներին ՀՀ արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքում ներմուծման ավելի քան 51 %-ը և արտահանման 52 %-ը բաժին էին ընկնում Ռուսաստանի Դաշնությանը [24]: Ռուսաստանից Հայաստան ներկրվում էին սև և գունավոր մետաղներ, փայտանյութ, տրանսպորտային միջոցներ,

հացահատիկ, ձկնամթերք, գյուղատնտեսական մեքենաներ և սարքավորումներ: Հայկական ԽՍՀ արտաքին առևտրաշրջանառության մեջ երկրորդ տեղում Ուկրաինան էր: Վերջինիս բաժին էին ընկնում մեր երկրի ներմուծման 19 %-ը և արտահանման 20 %-ը [նույն տեղում]: Ուկրաինայից Հայաստան ներկրվող ապրանքատեսակների մեջ կարևոր տեղ էին զբաղեցնում քարածուխը, սև մետաղները, բուսական և կենդանական յուղերը, շաքարը, քիմիական հումքատեսակները, ապակին, աղը: Հայաստանի արտաքին առևտրաշրջանառության մեջ կարևոր տեղ ունեին նաև Բելառուսը, Վրաստանը, Ադրբեյչանը, Մերձավալյան երկրները, Բուլղարիան, Հունգարիան, Չեխոսլովակիան, Գերմանիայի Դեմոկրատական Հանրապետությունը: ԽՍՀՄ վիլուգումից հետո ստեղծված տնտեսական համագործակցության նոր պայմաններում արմատապես փոխվել է ՀՀ արտահանման ու ներմուծման կառուցվածքը, ինչպես նաև աշխարհագրությունը: Քանի որ նախկինում Հայաստանը ԽՍՀՄ միասնական տնտեսական օրգանիզմի բաղկացուցիչ մասերից մեկն էր, տնտեսական կապերի կառուցվածքը և աշխարհագրությունը նախօրոք կազմվում ու հաստատվում էին ԽՍՀՄ պետականով:

Ստեղծված նոր իրավիճակում ՀՀ արտաքին տնտեսական կապերը պետք է ձևավորվեին և զարգանային շուկայական տնտեսական հարաբերությունների պայմաններում ձևավորված տնտեսագիտական օրենքներով ու օրինաչափություններին համապատասխան՝ շուկայական հարաբերությունների և մրցակցության պայմաններում: Խորհրդային վերջին տարիներին ՀՀ ունեցած արտադրական ներուժի կտրուկ նվազման պատճառով անկախության առաջին տարիներին զգալիորեն կրծատվեց նաև ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը:

1995 թ. այն կազմել է 944861 հազ. ԱՄՆ դոլար, որից արտահանման բաժինը կազմել է 28.7 %: Տասը տարի անց՝ 2005 թ., ՀՀ

արտաքին առևտրաշրջանառության ծավալը կազմել է 2 մլրդ 775 մլն 656 հազ. ԱՄՆ դոլար, որից արտահանմանը բաժին էր ընկնում 35 %-ը [17, 24]:

Աղյուսակ 74

Հիմնական գործընկեր երկրների տեսակարար կշիռը ՀՀ արտահանման մեջ [17;43]

	2016	2017	2020
1. ՌԴ	20.9	24.9	26.6
2. Շվեյցարիա	4,2	11,7	18.4
3. Բուլղարիա	8,5	12.6	5.9
4. Իրաք	7,7	5,2	6.4
5. Գերմանիա	7.8	5.9	2.2
6. Նիդերլանդներ	2,8	4.0	3.8
7. Չինաստան	5,4	5.3	11.4
8. Իրան	4.2	3.8	3.3
9. ԱՄԷ	3.6	4,6	3.8
10. Վրաստան	8.2	6.8	2.3
11. Սիրիա	1.6	2.2	-
12. Ռումինիա	1.5	0.2	0,0
13. Իտալիա	1,8	1,9	1.6
14. Բելգիա	2.3	2.0	1.4
15. ԱՄՆ	2.2	3.0	2.7
16. Կանադա	7,8	0.7	0.1
17. Ուկրաինա	0,4	0.5	1.0
18. Բելառուս	0.7	0.3	1.3
19. Ղազախստան	0.3	0.2	0.0
20. Ֆրանսիա	0.2	0.2	0.2
21. Խորվաթիա	0.2	0.3	-

Ինչպես ցույց են տալիս ներմուծման և արտահանման վերը թերված ցուցանիշները, ՀՀ արտաքին առևտրաշրջանառության

խորհրդային տարիների ակտիվ ցուցանիշներն անկախության տարիներին դարձել են խիստ պասիվ: 2005 թվականից հետո ՀՀ առևտրաշրջանառության պասիվ հաշվեկշիռն էլ ավելի է խորացել: 2015 թ. առևտրաշրջանառության ընդհանուր ծավալում ներմուծմանը բաժին էր ընկնում 68 %-ը, կամ ներմուծման ծավալներն ավելի քան 2.1 անգամ գերազանցել են արտահանմանը: Հարկ է նաև նկատել, որ 2001-2012 թթ. ներմուծման ծավալներն արտահանմանը գերազանցել են ավելի քան երեք անգամ:

Յուրաքանչյուր երկրի արտաքին տնտեսական կապերի ընուրագրական հիմնական ցուցանիշներն են արտահանման և ներմուծման կառուցվածքը ինչպես նաև դրանց աշխարհագրությունը: Վերջին տարիներին ՀՀ արտահանման կառուցվածքում առավել մեծ մասնաբաժին են ունեցել հետևյալ 13 ապրանքատեսակները և ապրանքների խումբը (Աղ. 71), որոնց բաժինն է ընկել արտահանման ծավալի 84 %-ը:

2019 թ. ՀՀ առևտրաշրջանառության ծավալը կազմել է 8154.1 մլն ԱՄՆ դոլար, 2020 թ.՝ 7103.9 ԱՄՆ դոլար: 2019 թ. արտահանմանը բաժին է ընկել 32.4 %-ը, 2020 թ.՝ 35.8 %-ը: 2020 թ. ՀՀ արտահանման 29 %-ը բաժին էր ընկնում ԱՊՀ երկրներին, միայն ԵԱՏՄ երկրներին՝ 27.7%-ը, ՌԴ-ին՝ 26.6 %-ը: 2020 թ. ՀՀ ներմուծման 40.7 %-ը բաժին էր ընկնում ԱՊՀ երկրներին, միայն ԵԱՏՄ երկրներին՝ 37.5 %-ը: Ռուսաստանի Դաշնությանը բաժին էր ընկնում ՀՀ ներմուծման 35.9 %-ը: Այդ նույն ժամանակ ԵՄ երկրներին բաժին էր ընկնում ՀՀ արտահանման 16.9 և ներմուծման՝ 20.3 %-ը[43]:

ՀՀ-ն ներմուծում է մի քանի տասնյակ տեսակի ապրանքներ և ապրանքատեսակների խմբեր: Դրանց մեջ առավել մեծ մասնաբաժին ունեն (արժեքային արտահայտությամբ) միջուկային ռեալտորները, կաթսաները և մեխանիկական սարքերը, հեկտրական մեքենաները, սարքավորումները, վերգետնյա տրանս-

պորտային միջոցները, բնական կամ արհեստական մարզարիտը, քանկարծեք քարերը, դեղագործական մթերքները և այլն: ՀՀ ներմուծվող բոլոր ապրանքատեսակների շուրջ 62 %-ը 2019 թ. բաժին էր ընկնում քսան ապրանքի ու ապրանքատեսակների խմբին (Աղ. 72):

Աղյուսակ 75

*Հիմնական գործընկեր երկրների տեսակարար կշիռը
ՀՀ ներմուծման մեջ [17;43]*

	2016	2017	2020
ՌԴ	30.1	28.6	26.9
Չինաստան	11.2	11,7	9.6
Գերմանիա	5,7	4,9	5,2
Իրան	5,0	4,3	6.9
Թուրքիա	5,0	5,4	4,0
Իտալիա	3.9	3.9	3.7
ԱՄՆ	2.5	3.3	1,7
Ուկրաինա	3.1	2.8	2.8
Շվեյցարիա	1,4	2.4	0,7
Ֆրանսիա	1,6	1.8	1.5
ԱՍԷ	1,7	2.4	2,2
Ճապոնիա	1.6	2.0	0,3
Հնդկաստան	2.2	1.1	-
Վրաստան	3.0	2.1	7,1
Հոնդուրաս	0.6	1.2	0.4
Բրազիլիա	1.6	1,5	0.8
Նիդերլանդներ	0,9	0,8	1,4
Վիետնամ	0,7	0.8	-
Լեհաստան	1,1	1.2	1.0
Չեխիա	0.5	0.7	0.9
Բելգիա	1,8	1,1	1.1
Միացյալ թագավորություն	0.8	0.8	0,5

Բելառուս	0,7	1.0	0.9
Իսպանիա	0,8	0.9	0.7
Կորեայի Հանրապետություն	-	0.5	0,6
Շվեյցարիա	-	2.4	1.1
Կանադա	-	1.9	0.2
Բուլղարիա	-	1.0	0.6

Հարցեր և առաջադրանքներ

- Ի՞նչ տեղ և դեր ունի ԱՄՄԲ-ը երկրների և համաշխարհային տնտեսության զարգացման գործում:
- Բնութագրե՛ք պատմական Հայաստանի տեղն ու դերը միջազգային տնտեսական կապերում:
- Վերլուծե՛ք Հայկական ԽՍՀ արտաքին առևտրի կառուցվածքն ու աշխարհագրությունը:
- Վերլուծե՛ք ՀՀ արտաքին առևտրաշրջանառության կառուցվածքն ու աշխարհագրությունը:
- Առաջիկա տարիներին ՀՀ արտաքին տնտեսական կապերն ի՞նչ հիմնական ուղղություններով պետք է զարգանան:
- Զեր տարածաշրջանը, բնակավայրը արտաքին տնտեսական կապերի զարգացման ի՞նչ նախադրյալներ ունեն:
- Վերլուծե՛ք ԱՄՄԲ համակարգում ՀՀ-ն ներկայացնող հիմնական ուղղությունները: Ի՞նչ նախադրյալներ կան դրանց ընդլայնման ուղղությամբ:

Օգտագործված գրականություն և սկզբնաղբյուրներ

1. Ավագյան Գ. Ե., Սովետական Հայաստանի տնտեսական աշխարհագրություն, Երևան, 1981, 328 էջ:
2. Ավագյան Գ. Ե., Հայաստանը 1920-1990 թթ., Երևան, 1995, 417 էջ:
3. Ավագյան Գ. Ե., Հայկական ՍՍՀ բնակչությունը, Երևան, 1975, 303 էջ:
4. Գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման հանրագումարները 2019 թ. հունվարի 1-ի դրությամբ, նույնը՝ նաև 2020 թ. համար, <https://www.armstat.am/am/?nid=82&id=2140>: <https://armstat.am/am/?nid=82&id=2366>:
5. Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը, 2019 թ., <https://www.armstat.am/am/?nid=82&id=2141>:
6. Դուլյան Ս. Մ., Վալեսյան Լ. Հ., Հայկական ՍՍՀ տնտեսական աշխարհագրության ակնարկ, Երևան, 1967, 230 էջ:
7. Խոջարելյան Վ. Ե., Հայաստանի բնակչության վերաբտադրությունը և տեղաշարժերը 19-20 դդ դարերում, 21-րդ դարի շեմին, Երևան, 2001, 480 էջ:
8. Կորկոտյան Զ., Խորիրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում, 1831-1931 թթ., Երևան, 1932, 186 էջ:
9. Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ս., Բարսեղյան Հ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, Երևան, 1998, 992 էջ:
10. Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1971, 469 էջ:
11. Հայաստանի ազգային ատլաս, Ա. հատոր, Երևան, 2007:

12. Հայաստանի Հանրապետության 2001 թ. մարդահամարի արդյունքները (ՀՀ ցուցանիշները), Երևան, 2003, 542 էջ:
13. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2019 թ. հունվար-դեկտեմբերին, <https://www.armstat.am/-am/?nid=82&id=2236>:
14. ՀՀ մշտական բնակչության թիվը 2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ, <https://www.armstat.am/am/?nid=82&id=2256>:
15. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու 2020, <https://www.armstat.am/am/?nid=82&id=2347>:
16. ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով 2020, <https://www.armstat.am/am/?nid=82&id=2324>:
17. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2000, 2005, 2010, 2020, <https://www.armstat.am/am/?nid=586&year=2020>:
18. Հայաստանի բնապահպանական վիճակագրությունը 2018 թ. և 2014-2018 թթ. շարժմանքացը, <https://www.armstat.am/am/-nid=82&id=2205>:
19. Հայկական ՍՍՀ վարչատերիտորիալ բաժանումը (առ 1988 թ. մայիսի 1-ը), Երևան, 1988, 207 էջ:
20. Մանասյան Մ., Գրիգորյան Ա., Պոտոսյան Ա., Սյունիքի մարզ: Բնությունը, բնակչությունը, տնտեսությունը, Երևան, 2002, 158 էջ:
21. Մանասյան Մ., Գրիգորյան Ա., Պոտոսյան Ա., Շիրակի մարզ: Բնությունը, բնակչությունը, տնտեսությունը, Երևան, 2002, 132 էջ:
22. Մանասյան Մ., Գրիգորյան Ա., Եղյան Գ., Լոռու մարզ: Բնությունը, բնակչությունը, տնտեսությունը, Երևան, 2002, 208 էջ:
23. Մանասյան Մ. Գ., ՀՀ տարաբնակեցման համակարգը, Երևան, 2005, 400 էջ:

24. Մելքոնյան Ս. Ա., Հայաստանի Հանրապետության և Լեռ-նային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալա-կան աշխարհագրություն, Երևան, 2007, էջ 445:

25. Շքակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2018 թ., <https://www.armstat.am/am/?nid=8-2&id=2202>:

26. Պոտոպյան Ա. Հ., Հայաստանի Հանրապետության գյու-ղական բնակչությունը և բնակավայրերը, Եր., 2017, 466 էջ:

27. Պոտոպյան Վ. Ա., Տարաբնակեցման զարգացման հիմ-նախնդիրները ՀՀ սահմանամերձ, լեռնային ու բարձր լեռնային տարածքներում, աշխ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2019, 159 էջ:

28. Վալեյան Լ. Հ., Հայկական ՍՍՀ տնտեսական և սոցիա-լական աշխարհագրություն, Երևան, 1988, 456 էջ:

29. 1989 թ. համամիութենական մարդահամարի արդյունք-ները Հայկական ԽՍՀ-ում, Երևան, 1991, 182 էջ:

30. Ֆակրայյան Մ. Վ., Բնակչության կառուցվածքի և վերար-տադրության տարածաշրջանային հիմնախնդիրները ՀՀ-ում, Երևան, 2010, 495 էջ:

31. Վալեյան Լ. Հ., Աշխարհագրական գիտությունների մե-թոդաբանական և տեսական հիմունքներ, Երևան, 2004, 264 էջ:

32. Սուցյան Ս. Ա., Քաղաքական աշխարհագրություն և աշ-խարհաքաղաքականություն, Երևան, 2019, 228 էջ:

33. Նազարյան Խ., Վալեյան Լ., Հայաստանի աշխարհագ-րություն, Երևան, 2002, 207 էջ:

34. Հայկական ԽՍՀ ժողովրդական տնտեսությունը 1989 թվականին, վիճակագրական տարեգիրք, Երևան, 1991, 260 էջ:

35. Հակոբյան Թ., Հայաստանի պատմական աշխարհագրու-թյուն, Երևան, 2007, 520 էջ:

36. Հակոբյան Թ., Պատմական Հայաստանի քաղաքները, Երևան, 1987, 256 էջ:
37. Սարգսյան Հ., Մարկոսյան Ա., Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Երևան, 2014, 552 էջ:
38. Баранский Н. Н., Избранные труды, становление советской экономической географии, Москва: «Мысль», 1980, с. 96-128.
39. Голубчик М. М., Файбусович Э. Л., Носонов А. М., Макар С. В., Экономическая и социальная география: основы науки, Москва, 2003, с. 85-117, 240-263.
40. Населенные пункты и населенение Армянской ССР за 1831-1959 годы (статистический сборник), Арм. гос. изд., Ереван, 1962, 133 с.
41. Погосян Д. А., Сельскохозяйственная оценка природных ресурсов территории Армянской ССР, Ереван, 1986, 221 с.
42. ՀՀ մշտական բնակչության թիվը 2021 թ. հունվարի 1-ի դրությամբ, <https://www.armstat.am/am/?nid=82&id=2380>:
43. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թ. հունվար-դեկտեմբերին, <https://armstat.am/am/?nid=82&id=2359>:
44. Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում 2019 թ., նոյնը՝ նաև 2020 թ. համար, <https://armstat.am/am/?nid=82&id=2420>,
<https://armstat.am/am/?nid=82&id=2301>:
45. Հայաստանի բնապահպանական վիճակագրությունը 2019 թ. և ցուցանիշների 2015-2019 թթ. շարժնկար, <https://armstat.am/am/?nid=82&id=2309>:
- 46.Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն թերքը և միջին բերքատվությունը 2020 թ., <https://armstat.am/am/?nid=82&id=2368>:

47. Ժողովրդագրական տվյալների բազաներ, ՀՀ բնակչության բնական շարժի ցուցանիշները, <https://armstat.am/am/?nid=209>:

48. Կլիմայական տեղեկագիր, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայություն, «Հայպետհիդրոմետ», Եր., «Լուսաբաց», 2011, I մաս: Օդի և հողի ջերմաստիճանը, 150 էջ:

49. Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2020 թ., <https://armstat.am/am/?nid=82&id=2414>:

50. ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2021 թ.:

**ԱԿՍԵԼ ՊՈՏՈՍՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

(Բուհական դասագիրք «Աշխարհագրություն»
մասնագիտությամբ սովորողների համար)

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի, Ս. Քոյլյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիայանի

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ-ում:
Ք. Երևան, Խորենացի 4-րդ նրբ., 69 տուն

Ստորագրված է տպագրության՝ 16.04.2022:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլ՝ 34.25:
Տպարանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ystu.am



ԵՐԵՎԱՆԻ ՊԱՌՀԱՅՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2022
publishing.ystu.am